ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ

ՐԱՏԸՆՏԻՐ

Հրատարակիչ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԴՏՀ 1/14
ԳՄԴ 87.3
Ա 732

Ասատրյան Հ.
Ա 732 Հատընտիր. – Եր., Ամարաս, 2004թ. 412 էջ

Ժողովածուն ներկայացնում է 20-րդ դարի հայ ազգային մտածող, իմաստասեր Հայկ Ասատրյանի տեսական մեծարժեք ժառանգության հիմնական մասը:

Սույն ժողովածուն Հ. Ասատրյանի գործերի՝ մինչ այսօր եղած առավել ամփոփ հրատարակությունն է:

Ա $\frac{0301030000}{0029(01)2004}$ 2004թ. ԳՄԴ 87.3

ISBN 99930-1-057-X

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, 2004թ.

Նվիրվում է Հայկ Ասատրյանի
ծննդյան 105-ամյակին

Ծուի՛ր այրուող թղթի պէս եւ գալարուիր որքան ուզում ես, մարմնի մոխիր եւ ոգու ստուեր կը դառնաս դու, եթէ յաւիտենականը իր ողջ խանդով չի արձագանքում մէջդ - «Գոյ ես, որովհետեւ այնքան ես հին, որքան՝ նոր»:

Ունայնութեան մնացորդ է որեւէ երամակ, նախիր կամ ժողովուրդ, եթէ դա իր գոյութեան պատճառներից դէպի ճակատագրի հարցերը չի անցնում նպատակի կամուրջով, եթէ արշալոյսին չի զգում, որ կեանքն աւելի՛ խոր իմաստ ունի, քան ապրելու հաճոյքն ու մահւան ցաւը, եւ վերջալոյսին չի գիտակցում՝ հենց նրա համար կրկին պէտք է արթնանալ, որ վաղւայ մէջ նո՛յնքան իմաստ կայ, որքան երէկւայ:

Հազարամեակների ձայնով մենք կանչում ենք -
«Արթնացի՛ր, հա՛յ մարդ»:

Հ. Ա.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ժողովածուն ներկայացնում է 20-րդ դարի հայ ազգային մտածող, իմաստասեր Հայկ Ասատրյանի տեսական մեծարժեք ժառանգության հիմնական մասը:

Գրքում զետեղված գիտական-ճանաչողական, պատմական-իմաստասիրական, հրապարակախոսական եւ այլաբնույթ նյութերն ամբողջական պատկերացում են տալիս հեղինակի գիտական հարուստ մտապաշարի, ամրակուռ աշխարհայացքի, երեւույթները էաբանորեն վերլուծելու կարողության մասին:

Գրքում տեղ գտած մի քանի հոդվածներ, որոնք ժամանակին գրվել են իբրեւ խմբագրականներ, բնագրում անստորագիր են, սակայն ակնհայտորեն պատկանում են Հ. Ասատրյանի գրչին:

Թեեւ Հ. Ասատրյանի անունը վերջին տարիներին հայտնվել է մեր մի քանի մտավորականների ու հասարակական գործիչների շուրթերին, սակայն, ցավալիորեն, նա դեռեւս մնում է իբրեւ «անհայտ» հեղինակ, իսկ իր գաղափարական բարձրարժեք ժառանգությունը, նույնիսկ գիտական շրջանակներում, չմարսված ու չարժեւորված:

Սույն ժողովածուն Հ. Ասատրյանի գործերի՝ մինչ այսօր եղած առավել ամփոփ հրատարակությունն է:

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ[1]

(կենսագրական ակնարկ)

«Իբրեւ գիտության եւ տեսական խղճմտանքի մարդ՝ [դոկտ. Հայկ Ասատրյանը] իր խոսքը ծառայեցրել է ճշմարտության, իսկ փրկարար ճշմարտությունը՝ իր անիրավված ժողովրդին»:

Գ. Նժդեհ

20-րդ դարի 30-ական թվականների Հայկական ցեղային շարժման գաղափարական գործիչների մեջ իր հզոր իմացականությամբ եւ վառ արտահայտված անհատականությամբ առանձնանում է Հայկ Ասատրյանը՝ «Նժդեհի գլխավոր, գուցեեւ միակ խորհրդատուն»[2], որին Կարո Գեւորգյանը բնորոշում է՝ «գիտական մտապաշարով հարուստ եւ իր փիլիսոփայատիպ խառնվածքով հանրածանոթ...»[3]:

Հայկ Ասատրյանը ծնվել է 1900թ. փետրվարի 5-ին, Ալաշկերտի գավառի Երից գյուղում[4]: Արմատները Տարոնից են: 8 տարեկանում կորցնում է հորը (հայրը՝ Կիրակոսը, գյուղապետն էր) եւ քրոջ ու եղբոր հետ մնում է մոր խնամքին:

Նախնական կրթությունը ստացել է տեղի վարժարանում, որն ավարտելուց հետո մտնում է Հ.Յ.Դ. Աշակերտական միության շարքերը: Այնուհետեւ, ուսումը շարունակում է Երեւանի թեմական դպրոցում: Հայաստանի Հանրապետության օրերին Հայկ Ասատրյանը՝ որպես պատգամավոր Աշակերտական կազմակերպությունից, մասնակցում է Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովին: 1918-1919 թվականներին, նրա խմբագրությամբ, Երեւանում լույս է տեսնում Հ.Յ.Դ. Աշակերտական միության օրգան «Շանթ» թերթը[5]:

Իր մասնակցությունն է բերում 1921թ. փետրվարյան ապստամբությանը, որի ճնշումից հետո, ձերբակալությունից խուսափելու համար, ստիպված, հրաժեշտ տալով հարազատներին, անցնում է Թավրիզ (այստեղ ստանում է պարսկահպատակի անձնագիր): Շատ չանցած Թավրիզ է գալիս նաեւ Գ. Նժդեհը եւ միասին անցնում են Եվրոպա: Եվրոպայում նա ուսանում է նախ Բեռլինի բարձրագույն քաղաքական դպրոցում, ապա՝ Պրագայի համալսարանի փիլիսոփայության

բաժնում, որն ավարտում է 1930թ.՝ ստանալով դոկտորի աստիճան: Իր հետ ուսանած Անդրե Ամուրյանը հետագայում հիշում էր. «Հայկ մեծ եռանդով նվիրվեցավ փիլիսոփայության ճյուղին: Կարդալու եւ պարապելու հետաքրքրական եւ ինքնօրինակ կերպ մը ուներ: Նախ՝ վերարկուն երբեք չէր հագներ, այլ՝ կնետեր ուսերուն: Հաճախ կնստեր հատակին ու Նիցշեի եւ կամ Կանտի գիրքը առջեւ դրած՝ կկարդար եղանակով, ճիշտ դերվիշի տպավորություն ձգելով: Արդեն կենցաղով ալ Հայկը դերվիշ էր, աննյութասեր, կյանքի հաճույքներուն վրա քամահրանքով նայող. կատեր սուտն ու կեղծիքը, շողոքորթությունն ու քծնանքը, մարդոց թերությունները կըսեր իրենց ճակտին»[6]:

Ուշագրավ են Ասատրյանին նվիրված հիշողություններում Բուլղարիայի նրա կուսակիցներից Կարո Մեհյանի (որ հանդես է գալիս «Սօսեաց տղան» ծածկանունով)՝ իր իմացականությունը բնորոշող վկայությունները: *«Մղված իր սերեն, ինչպես եւ նպաստավորված իր արտակարգ հիշողութենեն, ան (իմա՛ Հ. Ասատրյանը – Մ.Լ.) ուսումնասիրած էր Հայաստանի աշխարհագրությունը մանրամասնորեն: Հայերեն թե օտար լեզուներով գրված բոլոր գործերը, որոնք կխոսին մեր երկրի մասին, ծանոթ էին անոր: Նաեւ մեր մատենագրության մեջ չկար տող մը, որուն վրա ան տքնած չըլլար: Նարեկացիեն երկար հատվածներ կարտասաներ գոց: Իսկ առհասարակ հայերեն լեզուն ան իրեն համար վերածած էր տեսակ մը մասնագիտության: Տեւապես «կխուզարկեր» բառերը, կբաղդատեր օտար բառերու հետ ու չէր հանդարտեր, մինչեւ որ չլուծեր անոնց ծագման կամ արմատի հանգույցը: Սեղմ՝ իր մտածումներուն մեջ եւ ատկե՝ քիչ մը «թանձր» արտահայտվելու իր ձեւով, Հ. Ասատրյան հարկադրվա՞ծ կըլլար, թե՞ կնախասիրեր նոր բառեր կերտել: Իր փոքրաթիվ գրքերուն եւ բազմաթիվ հոդվածներուն մեջ ունի մեծ թիվով բառեր, որոնք «իրն» են, եւ զորս կարժե «լույսին բերել», տրված ըլլալով, որ անոնցմե շատերը արտահայտիչ են, հեշտալուր եւ մեր լեզվին օրենքներուն համապատասխան: Որովհետեւ այս «դերվիշը» ո՛չ միայն հասկացողություն եւ հմտություն, այլե՛ւ ճաշակ ուներ: Ճաշակ՝ ամեն բանի մեջ ու գեղեցկագիտական ըմբռնումով»[7]:*

Այնուհետեւ, Հ. Ասատրյանը անցնում է Բուլղարիա, ուր մնում է Գ. Նժդեհի մոտ եւ գործում նրա հետ: Բուլղարիայի հետ է կապված նրա ազգային-քաղաքական գործունեության ամենաբեղուն եւ եռանդուն շրջանը: Հ. Ասատրյանը ուսուցչություն էր անում Սոֆիայի Գեւորգ Մեսրոպ ճեմարանում եւ, միաժամանակ, Հ.Յ.Դ. տեղի ԿԿ քարտուղարն էր:

Հ. Ասատրյանը եղավ Նժդեհի ամենամոտ գործակիցը՝ 30-ական թվականների Հայկական ցեղային շարժումը ծավալելու եւ հիմնավորելու գործում: «...Հայկը աջ բազուկն էր Նժդեհին, երբ «Ցեղակրոնություն» գաղափարաբանությունը կխմբագրեր»[8]: Հ. Ասատրյանը խորապես ընկալեց Նժդեհի ուսմունքը եւ, մի տեսակ, մեկնիչ (թերեւս չգերազանցված) հանդիսացավ նրա գաղափարների: Վերջինիս երկու մենագրությունների՝ «Ցեղի ոգու շարժը», «Ամերիկահայությունը - Ցեղը եւ իր տականքը», վերաբերյալ Հ. Ասատրյանի մեկնաբանություններն ու խորհրդածությունները լավագույնս ա՛յդ են վկայում:

1932թ., Սոֆիայում, Հ. Ասատրյանի նախաձեռնությամբ եւ խմբագրությամբ լույս է տեսնում «Խռովք» իմաստասիրական-գիտական ամսագիրը, որը, սակայն, կուսակցության կողմից աջակցություն չի ստանում եւ փակվում է: 1935թ., Բուլղարիայի Հ.Յ.Դ. ԿԿ ներսում ունեցած տարաձայնությունների պատճառով, կուսակցության հետ իր կապերը փաստացիորեն խզում է: Դրանից հետո, 1936թ., կրկին Սոֆիայում, Ներսես Աստվածատուրյանի[9] հետ լույս են ընծայում «Ցեղ եւ Հայրենիք» կիսամսյան, որը նույնպես երկար կյանք չի ունենում:

1937թ. Հ. Ասատրյանը պաշտոնապես Հ.Յ.Դ. Բյուրոյի կողմից հեռացվել է կուսակցությունից[10]: Ի դեպ, Ասատրյանը Հ.Յ.Դ.-ից հեռացվել է մի փոքր շուտ, քան Նժդեհը, եւ ոչ առանց հիմքի. այս կապակցությամբ, «Ամրոցը» իր 1937թ. թիվ 20-ի խմբագրականում Հայկին համարում էր քավության նոխազ Նժդեհի «մեղքերին»:

Մեզ հայտնի են 1933թ. Սոֆիայում հրատարակված նրա երկու գրքույկները՝ **«Ցեղանենգ շեյթանը» եւ «Մտածումներ հայկական ճգնաժամի, Հայ հեղափոխության եւ Մայիս 28-ի մասին»:**

1937թ. Նժդեհի հետ հիմնում եւ մինչեւ 1944թ. հրատարակում են «Ռազմիկ» հասարակական-քաղաքական կիսաշաբաթաթերթը, որը, փաստորեն, Բուլղարիայի Ցեղակրոն կազմակերպության թերթն էր: Խմբագիրը, որոշ ընդմիջումներով, Հայկ Ասատրյանն էր:

Եղել է Տարոնական շարժման հիմնադիրներից ու գաղափարախոսներից մեկը եւ 1938–1939թթ. Ն. Աստվածատուրյանի հետ խմբագրել է Սոֆիայում հրատարակվող «Տարոնի Արծիվ»-ը, որը Տարոն-Տուրուբերանի Հայրենակցական Միության պաշտոնաթերթն էր:

1942թ. Հ. Ասատրյանն ավարտում է Հայկական հարցին եւ արժեքներին նվիրված իր **«Հայաստան - Արիական նախադիրք Առաջաւոր Ասիայում»** գրքի Ա մասը (գրքի առաջաբանը գրել է Գ. Նժդեհը) եւ շտապ մեկնում Բեռլին՝ դա գերմաներեն թարգմանել տալու եւ անմիջապես հրատարակելու համար: Այդ գործի կարեւորությունը պայմա-

նավորված էր նրանով, որ մի շարք եւրոպացի գիտնականներ սխալ տեղեկություններ էին տվել Հայ ցեղի ծագման մասին (կասկածի տակ էր դրվում հայերի արիական ծագումը), եւ այս ապատեղեկատվության հիման վրա նացիստական կուսակցության մեջ ձեւավորվել էր մի թեւ՝ Ռոզենբերգի ղեկավարությամբ, որը հայերին վերագրում էր սեմական ծագում: Վտանգի տակ էր գերմանական տիրապետության տարածքում բնակվող շուրջ 400 հազար հայերի գոյությունը: Հետեւաբար, անհրաժեշտ էր գործնական ու գիտական-քարոզչական միջոցներով վերացնել այդ վտանգը:

Կապված Հ. Ասատրյանի Բեռլին մեկնելու հետ, 1943թ. սկզբին Գ. Նժդեհի կողմից Բուլղարիա է հրավիրվում Կարո Գեւորգյանը (որը Սալոնիկում 1928-1937թթ. խմբագրում էր «Հորիզոն» թերթն ու եղել է տեղի Ցեղակրոն Ուխտերի ղեկավարը), որն առժամանակ խմբագրում է «Ռազմիկը»:

1943թ. վերջին Հ. Ասատրյանը վերադառնում է Բուլղարիա եւ կրկին անցնում «Ռազմիկ» թերթի խմբագրության գործին, ինչպես նաեւ ավարտում իր գրքի Բ մասը, որը սակայն լույս չի տեսնում:

Երբ 1944թ. համայնավարները գրավեցին Բուլղարիան, իրար ետեւից ձերբակալվեցին Գ. Նժդեհը, Հ. Ասատրյանը (ձերբակալվել է 1945թ. հունվարի 27-ին) եւ Ն. Աստվածատուրյանը: Հ. Ասատրյանը, դատապարտվելով 10 տարվա ազատազրկման, նախ ուղարկվում է Քիշնեւի, այնուհետեւ՝ Ուրալի բանտ, ուր գտնվում էր նաեւ Ն. Աստվածատուրյանը: Վերջինս կարճ ժամանակ անց մահանում է: Իր սիրելի ընկերոջ մահվան լուրը Ասատրյանն առնում է անկողնում ծանր հիվանդ պառկած եւ հազիվ կարողանում է տեսնել միայն նրա դիակը՝ բանտից դուրս հանելիս:

1952թ. Ասատրյանին Ուրալից փորձում են տեղափոխել Երեւան (Նժդեհի մոտ)՝ Դաշնակցության եւ Թուրքիայի հետ կապված խնդիրներում օգտագործելու համար: Սակայն, իր առողջական ծանր վիճակի պատճառով, դա տեղի չի ունենում:

Հ. Ասատրյանի ձերբակալումից հետո հալածվում են նաեւ նրա ընտանիքի անդամները. կնոջն ու երկու աղջիկներին (Հեղինե և Արածանի) աքսորում են Պավլիկենի քաղաքը, ուր աքսորվել էր նաեւ Նժդեհի ընտանիքը: Նրանց ստիպում են ամեն առավոտ ու երեկո ստորագրություններ տալ՝ ներկայության համար, իսկ տիկնոջը նույնիսկ արգելում են աշխատել: 1947թ. Ասատրյանի կինը (Սիրանուշ Խանջիկյան) Չեկայի կողմից ստանում է կեղծ երկտող՝ իր ամուսնու մահվան մասին, որից հետո նրան խրատում են ամուսնանալ, քանզի, հակա-

ռակ դեպքում, աշխատանքի իրավունք չի ունենա եւ կդիտվի որպես հակակառավարական անձ: 1951թ. տիկին Ասատրյանը ամուսնանում է մի բուլղարացու հետ՝ այդպես փորձելով պահել իր երկու աղջիկներին:

1955թ. ընդհանուր ներման շնորհիվ ազատվելով բանտից, Հ. Ասատրյանը ծանր հիվանդ վիճակում վերադառնում է Սոֆիա եւ ցավով իմանում իր ընտանիքի ու հատկապես կնոջ նկատմամբ՝ Չեկայի խարդավանքների մասին: Սակայն ստիպված է լինում հաշտվել իրականության հետ եւ մնում է իր մեծ աղջկա՝ Հեղինեի մոտ (ի դեպ, Հեղինեի կնքահայրը Նժդեհն էր):

Սարգիս Սարունու վկայությամբ, բանտարկության տարիներին *«թերթի լուսանցքներում վրա, Հայկ գրած էր ընդարձակ դյուցազներգություն մը, որով կուտար հայ ժողովուրդին ամբողջ պատմությունը, սկիզբեն մինչեւ մեր օրերը»*[11], որը, ցավոք, կորել է: Ասատրյանի՝ աքսորի վերջին տարիներին գրած անավարտ, «հանգավոր մեկ վեպի» մասին է վկայում նաեւ նրա բանտակից Կարո Մեհյանը[12]:

1956թ. հունվարի 13-ին Հայկ Ասատրյանը վախճանվում է սրտի կաթվածից: Մահվան պահին, երկինք նայելով, երեք անգամ բացականչում է. *«Ա՜խ, Հայաստա՜ն...»:*

Այսպես է ընդհատվում ցեղադրոշմ կյանքը հայաշունչ մտավորականի, որի դեռեւս քիչ հայտնի տեսական ժառանգությունը կգա անշուշտ լրացնելու հայ, թերեւս ոչ այնքան հարուստ, ազգայինիմաստասիրական միտքը:

ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆ

Ծանոթագրություններ

1. Տեղեկությունների մի մասը քաղել ենք Ավոյի «Տոքթ. Հայկ Ասատրեան» հոդվածից՝ զետեղված «Հեղափոխական Ալբոմ»-ի (Բեյրութ) 1971թ. թիվ 11-ում:

2. Ավո, «Նժդեհ», էջ 457:

3. «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1957թ., 11 օգոստոսի, էջ 3:

4. Ասատրյանի հարցաքննության արձանագրությունից արված քաղվածքում իբրեւ ծննդավայր նշված է Թավրիզը (ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ թիվ 11278, հտ. 3): Սակայն իր քննչական գործի հիման վրա գրված

տեղեկանքում որպես ծննդավայր բերված է Ալաշկերտի շրջանի Երից գյուղը («Гарегин Нжде и КГБ», Ер. 2001, ст. 82): Կարծում ենք, իբրեւ ծննդավայր Թավրիզի նշումը շփոթմունք է՝ կապված իր պարսկահպատակ լինելու հետ: Հ. Ասատրյանի պարսկահպատակ լինելու մասին է վկայում նաեւ Կարո Մեհյանը (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1958թ., թիվ 5, էջ 83):

5. Գ. Լեւոնյան, «Հայոց պարբերական մամուլը», Երեւան, 1934թ., էջ 94: Մեզ հայտնի են «Շանթ»-ի 1919թ. (Բ. տարվա) թիվ 1, 2, 4-7, 9 համարները:

6. «Հեղափոխական ալբոմ», թիվ 11, 1971թ., էջ 286:

7. «Հայրենիք» ամսագիր, 1958 թ., թիվ 5, էջ 81:

8. «Հեղափոխական ալբոմ», թիվ 11, 1971թ., էջ 291:

9. ***Ներսես Աստվածատուրյանը*** *30-ական թվականների հայկական ցեղային-վերանորոգչական շարժման գործուն մասնակիցներից է, Ցեղակրոն եւ Տարոնական շարժումների սյուներից:*

Ծնվել է Սկյուտարում (Կ.Պոլիս), ծագումով տարոնցի է: Եղել է Հ.Յ.Դ. անդամ, Հ.Յ.Դ.-ի հովանավորած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության Բուլղարիայի շրջանի պատասխանատու գործիչներից: Վարել է առեւտրական լայն գործունեություն՝ նյութական զգալի օժանդակություն բերելով ազգային-հասարակական կյանքին: Նրա մասին Կ. Գեւորգյանը գրում է. «Բուլղարահայ բոլոր խավերեն սիրված, ազնվական խառնվածքի մարմնացում, անձնվեր ու հայրենապաշտ..., որի համար իր առեւտրական փայլուն գործեն շատ ավելի կենսական էին մեր ազգային-քաղաքական շահերը եւ որի մոտ այնքան նրբորեն բյուրեղացած էին հայրենասիրական զգացումներն ու ըմբռնումները» («Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1957թ., 11 օգոստոսի, էջ 3):

Հ. Ասատրյանի հետ Սոֆիայում խմբագրել ու հրատարակել են «Ցեղ եւ Հայրենիքն» ու «Տարոնի Արծիվը»: 1944թ. ձերբակալվել է համայնավարների կողմից եւ տարվել Ուրալի բանտ, ուր եւ մահացել է:

Իր մասին մեզ հայտնի շատ թե քիչ խոսուն գրությունը տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1958 թ., թիվ 7, էջ 107-109:

10. ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ թիվ 11278, հտ. 3: Կարո Գեւորգյանը, Հայկ Ասատրյանի մահագրության մեջ եւս, նրան հիշատակում է իբրեւ նախկին դաշնակցականի (Կ. Գեւորգյան, «Ամենուն տարեգիրքը», Բեյրութ, 1957թ., էջ 642):

11. «Հեղափոխական ալբոմ», թիվ 11, 1971թ., էջ 291:

12. «Հայրենիք» ամսագիր, 1958թ., թիվ 5, էջ 83:

ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ*

(«Խռովք»-ի առաջադրութիւնները)

...զի ոչ սիրեն Հայքս իմաստ կամ գիտութիւն,
այլ ծոյլք են եւ ձանձրացողք:
ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Դեռեւս Ե. դարում հայ մտաւորական ընտրանին անհրաժեշտութիւն զգաց իր ստեղծագործական ճիգերի մէջ մտցնել իմաստասիրական գիծը: Այդ եւ յաջորդ մի քանի դարերի հայ մտաւորականները հպարտանքն ունէին իրենց անւան կցել «փիլոսոփոս» կամ «իմաստասէր» մակդիրը:

Դրանք կարողանում էին ժամանակի գիտական ոգին կայտառ պահել՝ Հայաստանում:

Յետնական դարերում, սակայն, երբ «դպրոցապաշտութեան» (սխոլաստիցիզմ) կապանքներից ազատագրուած եւրոպական մտածումն իմաստասիրութեան մարզում բռնեց նոր եւ վիթխարի նւաճումների ուղին - Հայաստանի պատմութիւնը մեզ պարտադրեց հոգեւոր կեանքի անկման մի շրջան:

Մենք չօգտուեցինք Վերածնութեան (Ռենէսանս) եւ լուսաւորութեան դարաշրջանների գիտական ոգորումներից, այլ զարկ տւինք ոչ-գիտական կամ կիսագիտական գրական սեռերին եւ աստիճանաբար խորթացանք իմաստասիրելու արւեստին: Եւ այդ ա՛յն չափով, որ առանց այն էլ վիպապաշտութեան խոր ազդեցութեամբ դրոշմւած, 19-րդ դարում սկսւած մեր վերածնութիւնը, չկարողացաւ յօգուտ գիտական-իմաստասիրական մտածման արդիւնքների որդեգրման՝ մի ուղեփոխութիւն առաջ բերել: Միւս կողմից՝ հենց նոյն վերածնութեան շնորհիւ, ասպարէզից վտարւած գրաբարի հետ, հների ստեղծած արժէքներն էլ դարձան, գրեթէ, մեռեալ տառ:

Նախնեաց մտաւոր արդեանց ստորագնահատման զուգահեռ՝ գերագնահատւեց «առօրեան» եւ գործնականում անտեսւեց ա՛յն ճշմարտութիւնը, թէ ժողովուրդների պատմութիւնն ուժական մի առաջընթաց է (դինամիկական մի պրոցես), յորում ամեն «ներկայ» պայմանաւորւում է «անցեալ»-ով, ամեն «լինելի»՝ մի «եղեալ»-ով: «Առօրեան» մի

դատարկութիւն է, որ ուզում է լեցուել պատմագործ «ես»-ի ինքնարձանացմամբ, դառնալ յաւիտենարժէք «ներկայ»:

Թէպէտեւ, հայ իմաստասիրութիւնը 15 դարու պատմութիւն ունի, բայց այսօր ողբալի է մեր գիտական պաշարը եւ ամօթալիօրէն աղքատ՝ մեր փիլիսոփայական գրականութիւնը:

* * *

Պատճառները, որոնց հետեւանքով հայ մտածումն իմաստասիրութեան մարզում, գրեթէ, անպտուղ մնաց, բաժանւում են երկու կարգի.

ա) Առարկայական-պատմական.

բ) Ենթակայական-հոգեբանական:

Պատճառների առաջին խմբակցութիւնը պայմանաւորւում է Հայաստանի բնութեան ներանջատական նկարագրով եւ մեր քաղաքական ճակատագրով:

Իմաստասիրութիւնը յօրինւածների (սիստեմների) մի գիտութիւն է, իսկ երկրի անմիածոյլ նկարագիրը, պատմական աղիտաւոր ցնցումները, անկանոն եւ ընդհանրապէս աննպաստ քաղաքական ելեւէջները զրկելով ժողովուրդը սեփական կեանքն յօրինւածաբար կազմակերպելու կարելիութիւնից - նրան անընդունակ պիտի դարձնէին զարգացնել մտածումի այնպիսի բարդ մի հիւսւածք, որպիսին է իմաստասիրութիւնը:

Ինչո՞վ բացատրել, ուրեմն, ա՛յն փաստը, որ Հայկական «ես»-ը չկարողացաւ բնական իրողութիւններն ու պատմական անցքերը պատշաճեցնել իր կենսական շահերին կամ ուրիշ խօսքով, ի՞նչպէս եղաւ, որ մեր գոյութեան կռւում, «առարկայական իրականութիւնները» յաղթահարեցին մեզ:

Որո՞նք էին արգելիչ պատճառները - արդեօ՛ք, միայն թշնամիների քանակական գերազանցութի՞ւնը, միայն երկրի եւ շրջապատի աննպաստ պայմանն՞երը: Բայց ոյժերի տնտեսութեան օրէ՞նքը - ժողովրդական կամ ազգային կազմակերպեալ կորովի (էնէրգիա) նպատակայարմարօրէն սակաւ սպառումով շատ արդիւնքներ ձեռք բերելու արւե՞ստը: Մեր բարձրաւանդակի իրաւամբ անառիկ դի՞րքը:

Առա՛նց ժխտելու արտաքին ծանր պայմանների եւ գործօնների դերը, չենք կարող (եւ պէտք չէ՛) ուրանալ մեր ենթակայական մեղքերը:

Բարոյական մեղքերը քաւելու համար, քրիստոնէական եկեղեցին յանձնարարում է զղջում: Պատմա-քաղաքական մեղքերը քաւելու համար, գիտութիւնը յանձնարարում է անցեալի աննախապաշար վերագնահատում, այսինքն՝ հին ճշմարտութեանց թօթափում եւ նոր ճշմարտութեանց որդեգրում:

Վերագնահատելով մեր անցեալը՝ պիտի խոստովանուենք, որ ենթակայական մեր անթիւ մեղքերը սրուեցին, դարձան անյաղթելի չարիք նաեւ այն պատճառով, որ մեր կեանքի ու գործի մեջ գիտականութիւն չմտցրինք:

Եւ չմտցրինք, շնորհիւ մասամբ ա՛յն թերութեան, որ արդէն 13 դար առաջ, մատնանշում է Շիրակացին. «...զի ո՛չ սիրեն Հայքս իմաստ կամ գիտութիւն, այլ ծոյլք են եւ ձանձրացողք»:

Ցայսօր էլ սրբագրումի փորձ չարեցինք եւ հետեւանքն ա՛յն եղաւ, որ հոգեւոր ծուլութեամբ պայմանաւորուած մտաւոր մակերեսայնութիւնը, ահա՛, խեղդում է մեզ:

* * *

Այսօր, մեր կեանքի ո՛ր կողմն էլ վերցնենք՝ գիտականութեան փոխարէն հանդիպում ենք բանդագուշանքի, մտածումի փոխարէն՝ յոյզի, ձեւի փոխարէն՝ քաոսի, կազմակերպութեան փոխարէն՝ անկանոնութեան:

Միայն գաղութներում հրատարակում ենք հարիւրի չափ թերթ-պարբերաթերթեր, որոնց 90 տոկոսը ծառայում է տգիտութեան եւ հոգեւոր պառակտումի գործին: Ունինք հարիւրաւոր «վարժարաններ», բայց հազիւ 1-2 կանոնաւոր դպրոցներ: Ունինք հազարից աւելի «վարժապետներ», բայց մանկավարժութեան սկզբունքներին ծանօթ, հազիւ, 1-2 տասնեակ ուսուցիչներ:

Աւելի՛ն:

Ունինք ահռելիօրէն սրած գոյութեան կնճիռ-թափառական ժողովուրդ եւ քաղաքականապէս յօշոտուած հայրենիք: Բայց վերակազմական, վերանաճողական համազգային ճի՞գ... Մեր մտաւորականութեան մի մասն է միայն երկնում: Միւսը՝ նստած ռուսական տակառում, երերւում է հայոց խռովայոյզ լճակի ալիքներին եւ թմբուկ զարկում՝ «աշխարհի մէկ վեցերորդականի» համար: Երրորդը՝ բացել է երախը եւ խօսքի ցեխ է թափում: Չորրորդը՝ փակել է ոգու դուռը եւ սեփական տկարութիւնն է որոճում: Իսկ թո՞ւրքը - նա քշում է իր երիվարը հայոց ամայացած դաշտերով, բարձրանում մեր հպարտ լեռները, տրորում նրանց զգայուն կուրծքը եւ մնում... անպատիժ:

«Արթնացի՛ր, Հայաստա՜ն», անհրաժեշտ, բայց տարաժամ կոչ, անհրաժեշտ՝ որովհետեւ, ահարկու է մեր կեանքի խռովքը, տարաժամ՝ որովհետեւ, ճշմարիտ գիտութեան համար անասելիօրէն խուլ են մեր ականջները եւ զարհուրելիօրէն կոյր՝ մեր աչքերը: Ուրիշ ժողովուրդներ ոտքի են ելնում վտանգից առաջ, մենք՝ մրափում ենք աղէտից յետոյ էլ:

Ինչո՞վ բացատրել այս երեւոյթը. կենսաբանական տկարութեա՞մբ: Բայց ինչե՞ր կարող էր անել իր ճակատագրի խռովքը գիտակցօրէն ապրող 2-3 միլիոնանոց ժողովուրդը:

«Իրապաշտական» սոփեստութիւնները, «առարկայական» փարիսեցիութիւնները չեն անցնում՝ այլեւս:

Երեւոյթը բարոյագիտապէս բացատրւում է ա՛յն փաստով, որ հայ մտաւորականութիւնը հակառակ սքանչելի բացառութիւնների, ո՛չ ցեղի ամօթանքն ապրելու առաքինութիւն ունի, ո՛չ էլ՝ ինքնափրկութեան հաւատ:

Եւ չունի մասամբ շնորհիւ հոգեւոր ծուլութիւնից, մտաւոր մակերեսայնութիւնից ծագած չարիքների:

Ունի՛նք մի հայրենիք - վեհակառոյց մի բարձրաւանդակ - վերծանե՞լ ենք նրա բնութեան խորհուրդները:

Ունի՛նք մերթ փառքով օծւած, մերթ մրով ծեփւած մի պատմութիւն. իմաստասիրե՞լ ենք նրա մասին, ծանոթացե՞լ նրա ընթացքի յատկորոշ ելեւէջներին, նրա զարգացման ներքին օրէնքներին, ղեկավար սկզբունքներին:

Ունի՛նք կենսական եւ հոգեկան բարձր կարողութիւններով օժտւած մի ժողովուրդ - կենսաբանական ուժականութեան (բիոլոգիական դինամիկա) անսպառ մի շտեմարան - ուսումնասիրե՞լ ենք նրա մարդա-հոգեբանական իւրայատուկ գծերը, փորձե՞լ ենք գիտական լոյսի տակ դնել նրա առաքինութիւններն ու մոլութիւնները, սրբագրել նրա հոգեբանական թերիները, մշակել՝ դրական կողմերը:

Ինչո՞ւ զարմանալ, որ չկարողացանք մեր բարձրաւանդակի ռազմագիտական անառիկ կէտերն օգտագործել մեր ինքնապաշտպանութեան համար, կամ՝ մեր ժողովրդի կենսա-հոգեկան կարողութիւնները վերածել դիմադրական եւ ստեղծագործ ոյժի, կամ՝ մեր մտաւորականութեան պարտադրել ազգայնօրէն ձեւակերպեալ մի աշխարհայեցողութիւն, գէթ, համահայկական եւ համահայաստանեան զգացում:

Ինչո՞ւ դժգոհել աշխարհից, երբ ինքներս խորշելով իմաստասիրելու արւեստից՝ զրկւեցինք մեր հոգեւոր եւ մարմնական ոյժերը գիտականօրէն կազմակերպելու կարելիութիւնից, դարձանք անոյժ եւ անսկզբունք մի հօտ, խաբւեցինք քաղաքական բոլոր «առեւտուրներ»-ի մէջ եւ ճշմարտօրէն հերոսական մեր պայքարների պատմութիւնը փակեցինք պարտութեամբ:

* * *

Ձեռնարկելով այս «փիլիսոփայական-գիտական» ամսագրի հրատարակման՝ ամէնից առաջ, պիտի ջանանք դարմանել այս թերի-

ները, այսինքն՝ վերացնել ա՛յն պատճառները, որոնք մեզ պահում էին մտաւոր մակերեսայնութեան շրջագծում:

Դրա համար, հոգեփոխութեան փորձերին զուգահեռ՝ մենք պիտի կատարենք յօրինուածական աշխատանք, ճգնելով իրականացնել հետեւեալ առաջադրութիւնները.

ա) Յօրինուածի (սիստեմ) վերածել հայ մտածման արդիւնքները, այսինքն՝ ցուցահանել հայ փիլիսոփայութեան գծերը, մշակել նրա պատմութեան եւ ներածութեան տարրերը: Ուսումնասիրել նաեւ այժմու հայ կեանքի հոգեւոր խմորումները եւ վերլուծել որոշ աշխարհայեցողութիւն ունեցող հայ հոսանքների գաղափարաբանութիւնը:

բ) Լոյս սփռել հայոց հոգեբանական առանձնայատկութեանց վրայ, միջոցներ առաջարկել մեր հոգեբանական թերիները սրբագրելու եւ առաւելութիւնները համացեղային ստեղծագործ կորովի խթանն ու խարիսխը դարձնելու: Հոգեբանօրէն կազմակերպել մեր ցեղի ինքնապաշտպանութեան եւ վերափրկումի գործը:

գ) Մշակել հայոց պատմութեան փիլիսոփայութիւնը: Գիտական ուսումնասիրութեան նիւթ դարձնել մեր պատմական կեանքի միջավայրը -Հայկական Բարձրաւանդակը - իր բնական, աշխարհագրական, ցեղագրական, մարդաբանական, տնտեսական, կրօնական եւ այլ առանձնայատկութիւններով:

դ) Լոյս սփռել հայոց պատմական կեանքի, ընկերաբանական կառոյցի եւ սրա հոլովոյթների վրայ: Արժէքաւորել մեր կեանքի հնագոյն եւ նորագոյն յեղափոխութիւնները, գտնել կամ որոնել մեր պատմ. կեանքի զարգացման տրամաբանական կապն ու տարերային ցնցումների շղթայակցութիւնը, ինչպէս նաեւ՝ մատնանշել մեր քաղաքական-հասարակական վերածնութեան ուղիներն ու կարելիութիւնները:

Սակայն, յօրինուածական այս աշխատանքով, մենք ձգտում ենք ո՛չ թէ մեր «արւեստ»-ն ու «մշակոյթ»-ը շքեղազարդելու, այլ մեր կեանքի խռովքը ստեղծագործ ոյժի վերածելու նպատակին:

Ըստ այսմ՝ մենք էլ հայ մամուլի մի քանի ընտիր ներկայացուցիչների հետ՝ պիտի հետապնդենք հիմնական մի նպատակ - մեր ցեղային «ես»-ի յաղթական ինքնարձանացումը՝ հայոց պատմական կեանքի բնամարզում: Միայն թէ խնդիրներին մօտենալու եղանակով, որով մեր առաջարկելիք միջոցներով, մենք պիտի տարբերւենք նրանցից:

Մենք ելակէտ ունենք հոգեբանական ա՛յն կենսագործ ճշմարտութիւնը, թե առա՛նց ինքնայաղթահարման անկարելի է որեւէ այլայաղթահարում: Այս ասել է՝ արտաքին թշնամու պարտութեան էական պայմանը՝ մեր ներքին տկարութեանց ոչնչացումն է:

Որով՝ մեր առաջին նշանաբանն է՝ «Մա՛հ ներքին տկարութեան»:

Պայքարելով մեր ներքին տկարութեանց դէմ, մենք յոյս ունենք կազմաւորել հոգեբանական ա՛յն նախատեալները, որոնք ցեղական, ասել է՝ ինքնական դարձած զանգուածներին անխուսափելիօրէն պիտի մղեն մեր առաջադրած երկրորդ նշանաբանի հարազատման՝ «Մա՛հ արտաքին թշնամուն»:

Այս նպատակները նւաճելու համար անհրաժեշտ է.

ա) Շտապեցնել մեր պայքարի վերսկսումը:

բ) Գիտականութիւն մտցնել մեր ընդհանուր գործունէութեան եւ հոգեճանաչութիւն՝ մեր վաղւայ ռազմարւեստի մէջ:

Պահանջներ են սրանք, որոնք առա՛նց հոգեբանելու, առա՛նց իմաստասիրելու կը մնան անիրականանալի բաղձանքներ:

Սովորական փորձառութիւնից գիտենք, որ առա՛նց մեր նպատակներն իմաստաւորելու, նրանք կը մնան՝ աղօտ, իսկ առա՛նց յօրինւածական աշխատանքի՝ մեր ճիգերը կ'անցնեն՝ ապարդիւն:

Փիլիսոփայութիւնը ձգտելով աշխարհի իրականութիւնները քննութեան առնող գիտութիւնների արդիւնքներն ընդհանրական յօրինւածի վերածել եւ իմաստաւորել՝ ընձեռում է մեզ կենսագործ եւ ընդհանրարժէք ճշմարտութիւններ:

Այս ճշմարտութիւնները վերացական ըմբռնումներ չեն, այլ կեանքում յաղթանակներ նւաճելու գործնական միջոցներ:

Որդեգրել այս միջոցները - նշանակում է՝ սպառազինւել հոգեբանօրէն, իսկ սպառազէն հոգեբանութեամբ պայքարի մտնել - նշանակում է՝ քայլել դէպի յաղթանակ:

Մեզ մնում է... արմատախլել հոգեւոր ծուլութեան եւ մտաւոր մակերեսայնութեան չարիքները, լծւել հայ իմաստասիրութեան շէնքը վերա - եւ նորա - կառուցելու աշխատանքին: Ոչի՛նչ կարող է վտանգւած մի ժողովուրդի մտաւորականութեան աւելի՛ բարձր երջանկութիւն պատճառել, քան հոգեբանօրէն կազմակերպւած ներոյժ աշխատանքը՝ նրան, այդ ժողովուրդին ստեղծագործելու եւ յաղթելու արւեստին վարժեցնելու:

Որ իմաստասիրութիւնն այդպիսի մի արւեստ է - այդ գիտեն իրենց գոյութեան պայքարը գիտութեան օրէնքներին եւ զէնքերին պատշաճեցնող մեծ ազգերը, այդ կռահել էին հին դարերի հայ բարձր մտաւորականները, այդ պիտի գիտնանք նաեւ մենք՝ ստեղծագործելու եւ յաղթելու կարօտից տառապողներս:

---

* *Հոդվածը, որ 1932թ. իբրեւ խմբագրական գրվել է «Խռովք» ամսագրում, որոշ փոփոխումներով, նշված վերնագրով, արտատպվել է «Տարօնի Արծիւ»-ի 1939թ. թիվ 8-ում:*

ՈՒԺԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ*

Նիցշէն իմաստասիրութեան մէջ մտցրեց կենագործ ա՛յն ըմբռնումը, թէ ճշմարտութիւնը մի տեսակ մոլորութիւն է, առա՛նց որի, սակայն, որեւէ էակ անկարող է կենսաբանօրէն նպատակայարմար մի քայլ առնել:

Ելնելով այս վճռից՝ կենսաբան իմաստասէրները եւ գործնապաշտութեան (պրագմատիզմ) հետեւող մտածողները զարգացրին եւ ընդլայնեցին ա՛յն տեսակէտը, թէ ճշմարտութիւնը գործունէութեան մի միջոց է, աշխատելու եւ նւաճումներ անելու մի եղանակ (մեթոդ):

Ըստ «գործիական ճշմարտութեան» (ինստրումենտալ ճշմարտութիւն) այս ըմբռնումի՝ էակները եւ նրանց խմբաւորումները ձախողում կամ յաջողում են, շնորհիւ իրենց որդեգրած ճշմարտութեանց կենագործ կամ կենասպան ներբնակ յատկութեան:

Ըստ այսմ՝ մարդիկ եւ մարդկային խմբաւորումները - ցեղ, ազգ, ժողովուրդ - ապրում են իրենց կառուցած ճշմարտութեանց ոյժով եւ մեռնում՝ սրանց անուժական, անգործնական նկարագրի հետեւանքով:

Կան առաջատար ճշմարտութիւններ, որոնք դրդում են ենթակային՝ օրհնել անցեալը, սիրել՝ ներկան եւ այսել՝ ապագան, եւ, ընդհակառակն, այնպիսիներ, որոնք անցեալը դարձնում են անէծքի, ներկան՝ ցաւի եւ ապագան՝ սարսափի աղբիւր:

Առաջինները լաւատեսութեան, ասել է՝ յաղթանակի հոգեւոր զէնքեր են, երկրորդները՝ յոռետեսութեան, պարտուողականութեան նախադրեալներ:

Ամէ՛ն վերելքի կամ անկման մէջ, սակայն, դեր ունեն ո՛չ միայն մեր որդեգրած ճշմարտութեանց բովանդակութիւնները - «ի՛նչ»-ը - այլեւ մեր ըմբռնելակերպը նրանց մասին - «որպէ՛ս»-ը:

Ըստ գործնապաշտ մտածողների-Ջէյմս եւ համախոհներ-«ճշմարտութիւններն ապրում են վարկով», իսկ ամեն «վարկ» նախատեսում է վարկաւորող մի աղբիւր, արժէքաւորող մի «ես»:

Ինչպէս որ առա՛նց արժէքաւորման՝ չկայ արժէք, այդպէս էլ՝ առա՛նց ճշմարտագրման՝ չկայ ճշմարտութիւն, իսկ ամէ՛ն ճշմարտագրում արդիւնք է «ես»-ի, ենթակայի, ճշմարտագրողի ներհոգեւոր ոգորումների, դեգերումների, գործունէութեան:

Ճշմարտութիւնը խտացեալ մի յօրինոյթ է, իսկ առա՛նց կառու-

ցումի չկայ յօրինոյթ, որով՝ ճշմարտութիւնը կառուցւում է - նա կառոյց է, իսկ ամեն կառոյց հնարաւոր է մի կառուցողի միջոցով:

Ճշմարտագրելիս՝ իւրաքանչիւր ոք վարւում է այնպէս, ինչպէս Նարեկացին՝ իր «Ողբերգութեան Մատեան»-ը կազմելիս («Ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, դիզի, բարդեցի, կառուցի, ցուցի»):

Ինչպէս ամէ՛ն երկ, այնպէս էլ ամէ՛ն ճշմարտութիւն, նախ մեր էութեան դրսեւորումն է: Բայց երկասիրելիս՝ մենք ազատւում ենք ներքին տանջանքից, մինչ ճշմարտագործելիս՝ կապւում ենք մեր կռահումների ձեւին եւ բովանդակութեան: Երկասիրելիս՝ մենք թօթափում ենք անցեալը, ճշմարտագործելիս՝ սպառազինւում ենք ապագայի համար:

Մենք ենք ստեղծում, կառուցում մեր ճշմարտութիւնները, ապա՝ դրանք դարձնում մեր գլխին պատուհաս կամ օրհնաբեր նաւաճումների միջոց:

Ճշմարտութիւնները մի՛շտ էլ ընդհանրացումներ են, այսինքն՝ բանականութեան ընձեռած բանաձեւումներ: Նրանց ճակատագիրը, սակայն, որոշւում է ա՛յն դրդապատճառներով, որոնց ներազդեցութեամբ կամ պարտադրումով բանականութիւնը մղւում է վերացման, ընդհանրացման, բանաձեւումի, կարճ՝ ճշմարտագործման:

Ճշմարտութեանց կազմաւորման խնդրում վճռական դեր են խաղում յատկապէս երկու տարբերորակ ազդակներ: Դրանցից մէկը կերպզգացութեան գործօն միտքն է, միւսը՝ գոյզգացութեան զինակիր կամքը: Առաջինով պայմանաւորւում է մեր ճշմարտութեանց ձեւական կողմը, երկրորդով՝ բովանդակայինը:

Ըստ այսմ՝ ճշմարտութիւնը մտային եւ կամային որակների փոխադարձ ազդեցութեամբ եւ կապակցութեամբ առաջ եկած մի համադրոյթ է:

Առաջատար եւ կենագործ են ա՛յն ճշմարտութիւնները, որոնց համադրոյթը տեղի է ունեցած մտային եւ կամային որակների - ձեւի եւ բովանդակութեան - բնաչափ ներգործութեամբ, չափի զգացումով, որոնցում առանց միակողմանի չափազանցումի հաշւի առնւած են ճշմարտագործ ենթակայի բանական իրաւունքներն եւ կենսաբանական շահերը, եւ վերջապէս՝ որոնք ո՛չ սոսկական մտորոշումներ են, ո՛չ էլ՝ սոսկական կամավճիռներ, այլ վճռորոշումներ:

Նման ճշմարտութիւնները մենք անւանում ենք ամբողջականութեան ճշմարտութիւններ, որովհետեւ նրանցով միա՛յն ենթական հրապարակ է գալիս իբր ամբողջական անձնաւորութիւն, իբր «բանական» եւ «կենսաբանական» էակ, միաժամանակ:

Կենսաբանական մի էակ մի՛շտ էլ շահեր է որոնում, որով՝ նրա

ճշմարտութիւններն անխուսափելիօրէն օգտապաշտական (ուտիլիտարիստական) նպատակադրութիւն ունեն:

Որքան էլ մարդկային մեր բանականութիւնը յաճախ «գերերկրային»-ի սնապարծութեամբ է համակում մեզ, այնուամենայնիւ, մեր ճշմարտութիւնների գործնական արժէքը չափորոշւում է նրանով, թէ ի՞նչքան եւ ո՞րպէս նրանք ծառայում են մեր կենսաբանական նպատակներին:

Արժէքաւոր է ամէ՛ն ճշմարտութիւն, որ կենսաբանօրէն նպատակայարմար է: Անարժէք եւ անիմաստ է ամէ՛ն ճշմարտութիւն, որ կենսաբանօրէն նպատակայարմար չէ:

Կենսաբանօրէն նպատակայարմար ճշմարտութեանց ամենացայտուն յատկանիշն ա՛յն է, որ նրանք կրում են բարձր խառնուածքի (տեմպերամենտ) եւ ներքին ուժականութեան (դինամիկա) դրոշմը:

Ուժական ճշմարտութեանց հեղինակը մի հանճար է, որ ինչպէս Նիցշէն է ասում՝ «դարերի սիրտը բռնում է ձեռքը եւ ճմլում՝ մեղրամոմի պէս»:

* * *

Դաւիթ Անյաղթը հերքելով Պիւռհոն «իմաստակ»-ի թերհաւատութիւնը՝ յանգեց իմացաբանական լաւատեսութեան - կարելիապաշտութեան: Ըստ նրա՝ իմաստունը նա է, ո՛վ ընդունում է կարելիութիւնը, այսինքն՝ լաւատեսօրէն ձգտում է հնարաւորի իրականացման:

Դարեր յետոյ՝ Դաւիթ Անյաղթի ժողովուրդը կանգնած իր գոյութեան ահարկուօրէն սրուած կնճիռի առջեւ, այլ մի դատելակերպ որդեգրեց - մեծապէս բացարձակապաշտական:

Այսօր, մեր կեանքի գերագոյն կնճիռը մեր հայրենիքի վերանաւաճման խնդիրն է:

Բայց ի՞նչ ենք մտածում այդ մասին -

- Մեր ճակատագիրը կախուած է միմիայն Ռուսաստանից, իսկ մեծամասնականների ճակատագիրը՝ կ'որոշւի միմիայն Մոսկւայում: Ինչո՞ւ:

- Մեր ճակատագիրը կախուած է միմիայն թուրքական եղելոյթներից: Ինչո՞ւ:

Այս «ինչո՞ւ»-ները կարեւոր չեն, որովհետեւ բացարձակապաշտը միակողմանիօրէն կոյր է եւ հասկացողութիւն չունի կարելիութիւնների մասին. նա չի ըմբռնում, որ, օրինակ՝ մեծամասնականների բախտը կարող է որոշւել մի աննշան լերան ստորոտում, մի գետակի ափին, մի լճի եզրին, մի մարդու մահով, աղիտաւոր մի արկածով, ռուսական գիւ-

ղում ծայր տուած մի շարժումով, արտաքին մի պատերազմով, իսկ հայկական խնդիրը կարող է լուծուել մեծամասնականների քաղաքականութեան փոփոխմամբ, Թուրքիոյ դէմ պայթող արտաքին մի պատերազմով, հայերի մի ընդվզումով եւ այլն, եւ այլն:

Դրա հանդէպ անչափելիօրէն նշանակալից է խնդրի հոգեբանական կողմը: Եթէ, իրօք, մեր ճակատագիրը կախուած է Ռուսաստանից կամ թուրքական եղելոյթներից, էլ ինչո՞ւմն է մեր հայկական գործօնի դերը: Ի՞նչ արժէք ունենք մենք իբր պատմագործ ոյժ: Ոչի՞նչ: Կամ, եթէ մեծամասնականների ճակատագիրը միմիայն Մոսկուայում պիտի որոշուի, ի՞նչ արժէք ունեն մեր սէրն ու ատելութիւնը, մեր հիացումն ու դժգոհութիւնը՝ նրանց նկատմամբ: Ոչի՞նչ:

Այս ապրումները ներհոգեւոր բովանդակութիւններ են, իսկ նման ամէն բովանդակութիւն խտացեալ մի ոյժ է եւ հակամէտ պատմական ձեւ ստանալու: Սակայն, բացարձակապաշտն ասում է, որ այս ձեւը տալիս է մի ուրիշը, անդրզգացական մի ոյժ, բայց ո՛չ ինքը, տառապող, յուսացող ու մարտնչող «ես»-ը:

Ծուլութեան իմաստասիրութիւնն է սա: Դրա կրողները նրանք են, որոնք օրինակ թուրքական եղելոյթների մասին խորհրդածելիս ասում են.

- Թուրքիան անյաղթահարելի է, մանաւանդ որ բարենորոգումները նրան անհրաժեշտօրէն կազդուրում են:

Կամ՝

- Թուրքիան անխուսափելիօրէն գնում է դէպի կործանում, բարենորոգումներն էլ աւելի պիտի խախտեն նրա դիրքը եւ նա անհրաժեշտօրէն պիտի ենթարկուի քայքայումի:

Ծոյլի մտածումը մի՛շտ էլ նենգ է եւ գիտէ բացարձակապաշտական բանդագուշանքներով ինքնամխիթարուել կամ արդարացնել սեփական «ես»ի տկարութիւնները:

Ո՞վ ասաց, թէ մի ժողովուրդ անյաղթահարելի է, ո՞վ՝ թէ որոշ օրէնքների կիրարկմամբ նա անպայման ուժեղանում է, կամ ո՞վ՝ թէ բնական որոշ օրէնքների պարտադրումով նա անխուսափելիօրէն գնում է դեպի անկում:

Սո՛ւտ է, թէ ծնունդների նւազումը կամ յաւելումը տեւական երեւոյթներ են, կամ թէ նրանց հետեւանքով մի ժողովուրդ կարող է սպառուել կամ անբնականոն չափով աճել, սո՛ւտ է, թէ տնտեսական տագնապի կամ փարթամութեան հետեւանքով մի ազգի քաղաքական կառոյցը կարող է իսպառ փլչել կամ յաւիտենապէս ամրապնդուել, սո՛ւտ է, թէ բարենորոգումները կարող են մի երկրի անթիւ

բարիքներ տալ եւ ո՛չ մի չարիք կամ անթիւ չարիքներ եւ ո՛չ մի բարիք:

Ճի՛շդ է միայն մի բան - ա՛յն, որ քաղաքականօրէն մենք բացարձակապաշտ ենք, միայն նրա համար, որ գործելու, մարտնչելու տրամադրութիւն չունենք:

- Թուրքիան անհրաժեշտօրէն հզօրանում է:

- Թուրքիան անհրաժեշտօրէն կործանւում է:

Ի՞նչ է այս բանաձեւումների հոգեբանական աստառը - ո՛չ այլ ինչ, քան՝

ա) Եթէ Թուրքիան անհրաժեշտօրէն հզօրանում է - ապա՝ ինչո՞ւ կռւել, ինչո՞ւ մաքառել, ինչո՞ւ նորանոր զոհեր տալ, երբ նա անյաղթահարելի պիտի մնայ:

բ) Եթէ Թուրքիան անհրաժեշտօրէն կործանւում է - ապա՝ ինչո՞ւ աճապարել, ինչո՞ւ աւելորդ արիւն թափել, ինչո՞ւ չսպասել իրերի բնական ընթացքին, մինչեւ որ նա տրամաբանական օրէնքով բոլորովին կը քայքայւի:

Աղաչո՛ւմ ենք, հայրենակիցնե՜ր, խռովքոտ այս օրերին, ձեզ պահէք ձեր իմաստութիւնները եւ եթէ կարող եք, տւէք մեզ երկաթ, վառօդ, ցեղի ցաւից ցնցւած վրիժառու ոգիներ, նրա գոյութեան հրամայականով առաջնորդւող կամքեր, ինքնափրկումի հաւատով սպառազէն սրտեր եւ մենք կը դառնանք կարօտի սլաք, յաղթանակի նետ, բացարձակապաշտութեան օրէնքները խորտակող ոյժ, պատմութեան անիւը դարձնող գործօն:

---

* *Հոդվածը 1932թ. «Բացարձակապաշտության եւ կարելիականության տեսության գործնական նշանակությունը» վերնագրով՝ ընդարձակ կերպով տպագրվել է «Խռովք» ամսագրում:*

Այն, թեեւ բավականին կրճատված, սակայն պահպանելով հիմնական էությունը՝ 1939թ. «Ուժական ճշմարտություն» վերնագրով արտատպվել է «Տարօնի Արծիւ»-ում (թիվ 12):

ՑԵՂԸ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԻԲՐ ԱՆԲԱՆԱԿԱՆ ՈՅԺԵՐ

Դեռեւս չի զարգացել այն գիտութիւնը, որ պիտի կոչւի աշխարհիմաստութիւն (գէոսոֆիա): Հոգեբանութիւնն էլ մինչեւ հիմա չկարողացաւ յղկւել իբրեւ հոգեիմաստութիւն (պսիխոսոֆիա):

Բնազանցութիւնը սկզբից ցայսօր լծւեց գոյութեան հանելուկը մեկնաբանելու գործին, ուզեց հասկանալ Ես-ի եւ բնութեան, ոգու եւ նիւթի, կեանքի եւ առարկայի իմաստը: Գիտական մի շարք սիստեմներ ահագին վարկածներ, գործնական նշանակութիւն ունեցող «ճշմարտութիւններ» կուտակեցին եւ սակայն հարցը, թէ ի՞նչ է գոյը, ի՞նչ է կեանքը, ի՞նչ է սրանց իմաստը, դեռեւս սպասում է իր պատասխանին:

Ընդհանուր առմամբ ա՛յն գիտութիւնները, որոնք բնազանցութեան օգնելու յաւակնութեամբ գործի լծւեցին, իրենց պրպտումների ընթացքին պարզեցին մի բան - թէ «ես»-ի եւ «ոչ ես»-ի, ոգու եւ նիւթի փոխյարաբերութիւնը շատ աւելի բարդ է, քան միարմատական (մոնիստական) մտածողներն ենթադրում են, թէ նրանց միջեւ եղած կապն ու անկապը շատ աւելի խորհրդաւոր է, քան երբեւէ կարող է ըմբռնել այսպէս կոչւած «մարդկային առողջ հասկացողութիւնը», քան կարող են սահմանել սովորական «ճշգրիտ» գիտութիւնները:

Աստւածաբանութիւնը, գաղափարապաշտ մտածողների զարգացրած տիեզերածնութիւնը (կոսմոգոնիա), տիեզերաբանութիւնը (կոսմոլոգիա), բարոյագիտութիւնը, պատմա-փիլիսոփայութիւնը եւն., որոնք ա՛յնքան յուզիչ հաւատով հետապնդում էին նպատակի եւ նպատակադրութեան խնդիրը եւ հոգեբանութիւնը, որ այնքան խնամոտ կերպով երեւան հանեց իմացութեան բանական եւ զգայական տարրերի այլազանութիւնը, անգամ նոր վիտալիստների իր խորութեան մէջ այնքան նշանաւոր կենսաբանութիւնը, եւ վերջապէս դրանց հետ ողջ իմաստասիրութիւնը՝ հանդիպեցին բանապէս անըմբռնելի եւ անբացատրելի խորհրդաւոր մի ոյժի, բնատարերային մի Մեֆիստոֆելի, որ ոգին եւ սրա յայտնութիւնը հանդիսացող պատմութիւնը յաճախ շեղում է նպատակի գծից:

Այս ոյժը կոչւում է անգիտակցական, տարերային, անբանական եւ սովորաբար անսպասելիօրէն ազդու է դառնում պատմականօրէն

ճակատագրական վայրկեաններին եւ յաճախ որոշում դէպքերի բախտը, անկախ մեր իմացական ըմբռնումներից, մեր բարոյագիտական սկզբունքներից եւ բարոյական զգացումներից:

Դրա շնորհիւ է, որ շատ յաճախ կեանքում անբացատրելի են մնում հետեւեալ տիպի հարցեր.

Ի՞նչպէս է լինում, որ աշխարհում յաճախ անբարոյականը յաղթում է բարոյականին, թզուկը՝ հսկային, մանրօրէն նենգը՝ ոգու մեծութեան:

Ի՞նչպէս է լինում, որ յաճախ մեր որդեգրած գաղափարները, մեր բանականութիւնը, մեր զգացումները դաւաճանում են մեզ:

Ի՞նչպէս է լինում, որ յաճախ բարին ենք կամենում եւ չարը գործում:

Ի՞նչպէս է լինում, որ յաճախ սրտի խորագոյն յուզումով, նւիրումով եւ վճռականութեամբ մեր նպատակին ձգտելիս՝ հեռանում ենք նրանից:

Ի՞նչպէս է լինում, որ օրինա՛կ Հայաստանում, գրեթէ ամեն քաղաքական աղէտից յետոյ տեղի է ունենում ե՛ւ երկրաշարժ:

Ի՞նչպէս է լինում, որ օրինա՛կ, մի կին, մի կապիկ, մի այծ, մի ծառ կամ մի քար յաճախ պատճառ են դառնում, որ «ճակատագիրը» տարբեր մի բան տնօրինի, քան կարող է բանական թւալ:

Ի՞նչպէս է լինում, որ միեւնոյն պատճառը յաճախ տարբեր հետեւանքներ է ունենում:

Ի՞նչպէս է լինում, ուր «նպատակ»-ը շատ անգամ զոհ է գնում մի «պատահականութեան», մի «արկած»-ի:

Ի՞նչ է այս «նպատակ»-ը: Եթէ դա Ես-ի գոյութեան կռահումն է եւ կարօտը, ապա դա ո՛չ միայն խտացած միտք է, այլեւ զգացում, ո՛չ միայն «բան», այլեւ զգայական տարերք: Այդ դէպքում ի՞նչպէս է լինում, որ ճակատագիրը, պատճառը, հետեւանքը, պատահականութիւնը, արկածը յաճախ կարողանում են փոխել Ես-ի զգայական տարերքով (կամք) եւ բանական կարողութիւններով (միտք) պայմանաւորուած նպատակների ուղղութիւնը եւ անգամ բախտը: Ի՞նչ ոյժեր են դրանք - արտաեսայի՞ն, թէ՞ ներեսային, ոգուն բոլորովին անմատչելի՞, թէ՞ միայն «դեռեւս» մութ ու անծանօթ: Եթէ բոլորովին արտաեսային՝ նրանք չէին կարող ամէն անգամ յայտնուել մեր գործունէութեան եւ մտածումների ճամբին, եթէ միայն ներեսային՝ նրանք պէտք է որ հպատակուէին մեր կամքին: Նրանք գտնւում են մեր եւ աշխարհի միջեւ, որով աշխարհի հետ գործ ունենալիս, նախ դրանք է, որ պիտի յաղթահարուեն: Հենց սրանում է ենթակայականի բախտորոշ դերը պատմութեան մարզում: Ե՞րբ է պատմութիւն ստեղծւում - ա՛յն դէպ-

քում միայն, երբ պատմագործ ոյժը՝ ենթական մի բան յաղթահարում է: Ենթակայօրէն ե՞րբ է այս յաղթահարումը հնարաւոր - այնժամ միայն, երբ միտքն ու կամքը, Ես-ի բանական կարողութիւնները եւ զգայական տարերքը ներդաշնակ են: Ամբողջական «Ես»-ը միայն կարող է գործել «բանականօրէն» եւ իշխել «տարերքին»:

Մենք գիտենք նաեւ մի այլ բան - որ մեր «Ես»-ը միանպատակ չէ, որ աշխարհում կայ նպատակների բազմազանութիւն: Այս ասել է՝ որ պատմութեան նպատակներն էլ փոփոխական են, որ պատմութիւնը նպատակի յաւիտենականութիւն ունի, բայց յաւիտենական նոյնանպատակութիւն չունի: Ո՞րն է նպատակի այս յաւիտենականութիւնը. առաջադիմութի՞ւնը: Բայց ո՞վ կը ձգտէր դրան, եթէ դա մի քիչ երջանկութիւն չխոստանար: Պատմութեան մղիչ ոգին ապերջանկութեան զգացումն է եւ երջանկութեան կարօտը: Պատմութիւնը ոգու ինքնափրկումի տենչ է: Եթէ այս տենչը յաւիտենական է - այդ նշանակում է, որ պատմութիւն յղացող ոգու առջեւ կայ անբացատրելիօրէն մութ, անբանական, անգիտակցական մի խոչընդոտ, մի հակաոգի, որ իր հակազդեցութեամբ յաւիտենական է:

Ըստ այսմ՝ պատմութեան նպատակի յաւիտենականութիւնը պայմանաւորուում է անգիտակցականի յաւիտենականութեամբ:

Ի՞նչ է այս անգիտակցականը: Հոգեբանութիւնը բնազդների աշխարհը զատելով զուտ բանականութիւնից, նրան սահմանեց «ենթագիտակցական» բառով: Ենթագիտակցականը գիտակցականից տարբերւում է նրանով, որ ո՛չ թէ ուսուցւում է, այլ ժառանգականօրէն փոխանցւում, ո՛չ թէ իմացական երեւոյթ է, այլ կենսաբանական, ո՛չ թէ անհատական մտորում է, այլ տեսակի խառնուածք, ո՛չ թէ մտքի ընդունակութիւն է, այլ արիւնի, ո՛չ թէ անցանելի է անհատի հետ, այլ զուգահեռ՝ սեռի յաւիտենականութեան:

Այս «ենթագիտակցականը» աւելի ազգակից է բնութեան, քան բանականութիւնը. նա զգայական որակ է, տարերային զօրոյթ. նա բնատարերքի շարունակութիւնն է կենսաբանական էակների մէջ:

Այս կենսաբանական «ենթագիտակցական»-ը անօրգանական բնատարերքի հետ կազմում է ա՛յն խորհրդաւոր ոյժը, որ կոչւում է անբանական՝ «իրրացիոնալ»:

Մարդկային ոգու հզօրանքի գաղտնիքը եւ նրա ճակատագրի ողբերգութիւնը հենց նրանում է, որ նա թէ՛ իր ոյժերն է ստանում անբանականից, թէ՛ չի կարող ազատուել նրա տիրապետութիւնից:

Հզօրութեան գաղտնիքը հասկացել են մարդկային ա՛յն խմբակցութիւնները, որոնք ճակատագրի դէմ ոգորելիս՝ զգում են, որ պէտք չէ

հակասութեան մէջ դնել բանականը եւ բնազդականը, որոնք գիտեն, թէ նաւաճունակ մտքի բուն աղբիւրը առողջ բնազդն է:

Զուր չէ, որ անգլեւգերման մի շարք մտածողներ կամքը համարում են տարերային կոյր տենչանք, իսկ բանականութիւնը՝ նրա գործիքը:

Ո՞րն է կամքի աղբիւրը. այս հարցը էութեան հարց է, իսկ էութիւնները կազմւում են ոգուց եւ բնութիւնից:

Եթէ հարց տանք. ո՞րն է կամաստեղծ բնութիւնը, աշխարհիմաստութիւնը պիտի պատասխանի - Հայրենի՛քը:

Եթէ հարց տանք. ո՞րն է կամաստեղծ ոգին, կենսաբանութիւնը պիտի պատասխանի - Ցեղը:

Հայրենիք ու ցեղ - դրանք երկուսն էլ անբանական ոյժեր են, որով աւելի՛ յաւիտենական, քան այլ որեւէ բան՝ երկնքի տակ:

Այդ է պատճառը, որ մարդկային պատմութեան բոլոր ոգորումները, վերջին հաշւով դառնում են դրանց շուրջը:

«Ցեղ եւ Հայրենիք», 1936թ., թիվ 1

.

ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՑԵՂԻ ՄԱՍԻՆ

Ա) ՑԵՂԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.- Ցեղը բնագիտական-մարդաբանական ըմբռնում է: Դրանով մարդաբանութեան մէջ հասկացւում է ժառանգական ընդհանուր ստացուածքով օժտուած մարդկային որեւէ խմբակցութիւն: Ժառանգականութիւնը կենսաբանական զօրութենականութեամբ պայմանաւորուած այն օրէնքն է, որով տեսակները բնօրէն ձգտում են յաւիտենականացնել իրենց գոյութիւնը: Գոյութեան ինքնայաւիտենականացման այս մղումը օրգանապէս բարդ կառոյց ունեցող էակների մօտ բաւարարութիւն է ստանում անուղղակի ձեւով: Ո՛չ թէ անհատ էակն է յաւիտենականանում, այլ տեսակը: Այս առաջընթացը տեղի է ունենում սերնդագործման միջոցով: Սերնդագործումն ա՛յն երեւոյթն է, որի մասին մեր իմաստասէրներից Յովհան Օձնեցի կաթողիկոսն ասում է. «...ստուգապէս ծնունդ այնմ ասի, ուր յաւելու անձն, նոյն մնալով բնութիւնն»: Այս «բնութիւն»-ը ինքը՝ ցեղն է: Որով՝ ցեղը նախ եւ առաջ բնութեան պահպանման զօրութենականութիւն է, նկարագիր է եւ խառնուածք: Այս պահպանումը հնարաւոր է դառնում անհատների միջոցով, որոնք կրում են տւեալ ցեղը յատկորոշող մարմնական եւ հոգեկան բնածին գծերը: Որով՝ ցեղը առանձնատիպ ոգի է եւ արիւն:

Այս առանձնատիպ ոգու եւ արեան ներդաշնակութեան շնորհիւ մարդկային խմբակցութիւնները խստօրէն տարբերւում են միմեանցից:

Ըստ Հանս Գիւնթէրի, մի ցեղ ներկայանում է մարդկային ա՛յն խմբակցութեան մէջ, որ իրեն յատուկ մարմնական նշանակների եւ հոգեկան որպիսութիւնների միութեամբ տարբերւում է մարդկային իւրաքանչիւր այլ խմբակցութիւններից եւ միշտ իրեն նմանն է սերնդագործում: Ըստ այսմ՝ ցեղը ինքնանմանը սերնդագործելու զօրութենականութիւն է:

Էապէս տարբեր բան չի ասում Շայդտը, որ ցեղը համարում է «ժառանգական ընտրեալ յատկութիւնների» խմբաւորում:

Այս յատկութիւնների բնական ընտրութիւնը նախատեսում է կենսաբանական նպատակայարմարութեան մի առաջընթաց: Որով՝ ցեղը գոյութեան մարզում կենսաբանօրէն նպատակայարմարը ստեղծելու եւ խնամելու զօրոյթ է: Այդ է պատճառը, որ պատմութեան մարզում ցեղը հանդիսանում է ժողովուրդների գոյութեան պայքարի առաջնորդը եւ զէնքը:

Ցեղի ըմբռնումը պէտք է խստօրէն զատել ժողովուրդի ըմբռնու-

մից: Ցեղը գոյութեան ընթրանում է, ժողովուրդը՝ պատմական-ընկերային: Երբ երկու կամ աւելի ցեղեր ձուլւում են եւ ստեղծում մարդկային նոր մի տիպ - առաջ է գալիս ազգութիւնը: Երբ ազգը ընկերային մի հաւաքականութիւն է կազմում - առաջ է գալիս ժողովուրդը:

Ժողովուրդների եւ ազգերի կեանքի երեւոյթները սերտօրէն կապուած են իրենց ցեղային բաղկացութեան: Ինչպէս մարդաբան Ֆիշէրն է ասում, ժողովուրդների եւ պետութեանց ճակատագիրը ամենաուժեղ եւ ամենավճռական կերպով գտնւում է իրենց ցեղային բնութեան ազդեցութեան ներքոյ:

Ցեղը կենսաբանական ընթրանում է, ազգութիւնը՝ պատմական, ժողովուրդը՝ ընկերային: Որով՝ ցեղն է ազգութեան եւ ժողովուրդի գոյութեան նախապատճառը եւ հիմքը:

Ցեղը ուժածին գործօն է, ազգութիւնը եւ ժողովուրդը՝ նրա արդիւնքներն են:

* * *

Ցեղի ընթրնման այս սահմանումը մեզ մղում է մի քանի կարճ խորհրդածութիւնների: Պետութիւն ստեղծում են այն ազգերը, որոնց ցեղային բաղկացութեան գծերը յանգում են ներդաշնակութեան: Այս ներդաշնակութիւնը հնարաւոր է այն դէպքում, երբ ազգութիւնը բաղկացնող խմբակցութիւններից մէկը կարողանում է իր ցեղային խառնուածքը պարտադրել եւ հարազատել տալ միւսներին: Հայաստանի ներանջատական բնութեան շնորհիւ այս առաջընթացը մեզանում չափազանց դանդաղ կերպով տեղի ունեցաւ: «Արմեններ»-ը չկարողացան իսպառ նուաճել «հայեր»-ին: Հայաստանում ապրեցին քաղաքական տարբեր զգացումներ: «Արմեններ»-ը մահը նախընտրեցին ստրկութիւնից, «հայեր»-ը հացի աշխատանքը՝ ազատութիւնից: Մէկը հետապնդեց ազատութեան իդէալը, միւսը՝ շինարարութեան եւ հենց դրա շնորհիւ էլ հայոց մշակութային եւ քաղաքական «ես»-ը մնաց պառակտուած:

Հայաստանում միայն բանապէս եւ ո՛չ թէ զգացումների ողջ խորութեամբ տիրեց ա՛յն համոզումը, թէ ազատութիւնը եւ մշակութային ստեղծագործութիւնը պայմանաւորւում են միմեանցով:

Երբ մի ազգի մէջ ցեղի ոգու բացարձակ տիրապետութիւնը չկայ - նրա առաքինութիւնները չեն կարող ներդաշնակ լինել: Իսկ ուր չկայ առաքինութիւնների ներդաշնակութիւն - այնտեղ չկայ ուրախ կեանքի ստեղծագործութիւն, այլ մտային - կամային տագնապ եւ ողբերգութիւն:

Սեբէոսը պատմում է, որ Բիւզանդիոնի կայսերապաշտական նպա-

տակներին ծառայող հայրենասէր հայ իշխանները մի անգամ Մօրիկ կայսեր դառնութեամբ յիշեցրել են, թէ պատմութիւնը հայերին երբե՛ք շնորհ չարեց ապրել ու մեռնել իրենց սեփական պետութեան համար:

Հայոց պատմութեան այս ցաւոտ կանչը դեռեւս երկար ժամանակ կարող է անարձագանք մնալ, քանի դեռ չի գտել մեր սրտի ճամբան:

Սիրտը՝ դա է ցեղի ոգու խառնարանը, որում գործում է ճակատագիրը տնօրինող տարերքը:

Ցեղի ոգին՝ դա հայրենաստեղծութեան յաւիտենական ճիգն է. դա ե՛ւ հայկականութիւն է, ե՛ւ արմենականութիւն, ե՛ւ աշխատանքի կարօտ, ե՛ւ ազատութեան կռիւ:

Բ) ՑԵՂԻ ԾԱԳՈՒՄԸ.- Գոյութեան (ի մասնաւորի կենսաբանական) խորհուրդներից մէկն անհատականացման, այսինքն՝ օրգանապէս անբաժանելի ամբողջականութիւն դառնալու երեւոյթն է: Գոյութիւն եւ անհատականացում իբր ըմբռնումներ անխուսափելիօրէն կապւած են միմեանց: Դրանց յարաբերութիւնը աւելի օրգանական է, քան տրամաբանութիւնը սովորական իմաստով սահմանում է «բովանդակութեան եւ ձեւի» աղերսը: Առանց գոյութեան ոչինչ կարող է անհատականանալ, առանց անհատականացման ոչինչ կարող է ըմբռնւել իբր գոյութիւն:

Մեր իմաստասէր կաթողիկոսը՝ Յովհ. Օձնեցին, ճշդօրէն նկատում է. «...ո՛չ գոյ բնութիւն անանձն եւ ո՛չ գոյութիւն առանց դիմաց, վասնզի յանձինս եւ ի դէմս տեսանին գոյութիւն եւ բնութիւն»:

Այո՛, աշխարհում ամենայն ի՛նչ անձնաւորւում է, ամենայն ի՛նչ դիմագծւում է, ամենայն ի՛նչ անհատականանում է: Մի բան գոյութիւն է ստանում ա՛յն ժամ միայն, երբ նա մտնում է անհատականանալու առաջընթացում: Գոյացութիւնը, էապէս, անհատականացման առաջընթաց է:

Անհատականացմամբ է պայմանաւորւում տեսակաւորումը: Տեսակը ոչ այլ ինչ է, քան ինքնատիպութիւնը յաւերժացնելու բնաճիգ: Ցեղի գոյութիւնը նախ եւ առաջ պայմանաւորւում է այս բնաճիգով: Այս բնաճիգը նախատեսում է բազմազանութեանց բնական անհրաժեշտութիւնը: Եթէ բազմազանութիւնը բնական անհրաժեշտ առաջընթաց չլինէր - բնութեան մէջ չէր կարող գոյութիւն ունենալ ինքնատպութիւն, որով ե՛ւ տեսակ պահելու բնաճիգ:

Մարդկային սերունդների բազմակերպութիւնը, այսինքն՝ ցեղային բազմազանութիւնը Ֆիշէրը բացատրում է «ընտանեցման ազդեցութեամբ»:

Ըստ Շայդտի, ցեղի կազմաւորումը պատկերւում է հետեւեալ կերպով. Ժառանգական տարբեր գծերով անհատներից կազմւած մի

բնակչութիւն ապրում է որոշ մի միջավայրում: Այս միջավայրը մարդիկ ձեւաւորում են ըստ իրենց ճաշակի (մշակութային աշխատանք): Իւրաքանչիւր անհատ ընտրում է միջավայրի այն գիծը, որ ամենից շատ պատշաճում է իր էութեան: Ըստ այսմ՝ ցեղը նախ եւ առաջ պատշաճեցման բնաճիգ է: Ոչնչանալու են դատապարտուած բոլոր այն անհատներն ու խմբակցութիւնները, որոնք ընդունակ չեն իրենց մշակութային կամքը պարտադրել իրենց միջավայրին:

Սակայն մարդիկն էլ ձեւակերպւում են միջավայրից: Միջավայրի պատճառած այս ձեւակերպումները ժառանգելի չեն, բայց նրանք ոչնչացուցիչ անդրադարձում ունեն այն անհատների եւ խմբակցութիւնների վրայ, որոնք յարմարուելու ընդունակութիւնից զուրկ են: Յարմարումի այս երկու կողմերը - ներգործական յարմարում կամ պատշաճեցում՝ մշակութային աշխատանքով եւ կրաւորական յարմարում՝ միջավայրի ազդեցութեամբ - աստիճանաբար (3-ից մինչեւ 10 եւ 20 սերունդ) առաջ են բերում կենսաբանօրէն կարեւոր ժառանգական տեւալներով օժտւած միացեալ մի բնակչութիւն:

Ամբողջութիւնը բնական ընտրութեամբ ձեռք բերուած այս ինքնատիպ ունակութիւնների՝ կազմում է ցեղը:

Կենդանիների, բոյսերի եւ մարդոց բովանդակ ժառանգութիւնը բաղկանում է ցեղային եւ անհատական յատկանիշներից: Ցեղային յատկանիշները ժառանգական տեւալներ եւ ընդունակութիւններ են, որոնք փոխանցւում են ընտրութեան միեւնոյն եւ որոշ նախընթացին ենթակայ նախորդներից:

Ըստ Ֆրից Լենցի, ցեղը փոփոխութեան ենթակայ մի երեւոյթ է, որովհետեւ ցեղերի զարգացման ընթացքին մի՛շտ էլ ժառանգօրէն անկանոն զարտուղիութիւններ են հրապարակ գալիս, որոնցից կենսաբանօրէն յարմարագոյններն ընտրւում են, միւսները՝ ոչնչանում: Անփոփոխելի է միայն առանձին օրգանիզմների ցեղային յատկութիւնը, բայց ոչ նոյնը՝ մի ժողովրդի:

Այս նշանաւոր մարդաբանների սահմանումները դեռեւս մեզ սպառիչ մի բան չեն ասում ցեղի ծագման մասին:

Ցեղը միայն «ընտանեցման կերպ» չէ, ինչպէս Ֆիշէրն է ասում: Ո՛չ էլ դա միշտ այնպէս է կազմաւորւում, ինչպէս Շայդտն է ուզում ապացուցանել: Վերջապէս Լենցի մատնանշած փոփոխութիւնները չեն վերաբերում առանձին օրգանիզմների ցեղային յատկութեան:

Մեր խորին համոզումով «ընտանեցումը», «պատշաճեցումը» եւ «յարմարումը» ո՛չ թէ ցեղածագման պատճառներն են, այլ ցեղային յատկութեան հետեւանքներ:

Ցեղը կենսաբանական երեւոյթ է, բայց նրա ծագումը կապւած է

գոյի ընդհանուր խնդրին: Պատճառների շղթայակցութեամբ նա մեզ տանում է մինչեւ բնազանցութեան մարզը: Ցեղը որքան բնութիւն է, նոյնքան եւ ոգի: Որով նրա կնճիռը կը լուծուի բնագիտութեան եւ պատմութեան տուեալների բնազանցական ընդհանրացումով:

Այս նկատումով էլ ցեղի ծագման մասին դեռեւս ասելիք կայ:

* * *

Ցեղի ծագման շուրջը արուած այս խորհրդածութիւնները կարող են մասամբ լոյս սփռել Հայաստանի ողբերգութեան բնական պատճառների վրայ:

Ապրում են ա՛յն ժողովուրդները, որոնք ցեղօրէն օժտուած են միջավայրը իրենց պատշաճեցնելու եւ նրան յարմարուելու ընդունակութեամբ:

Կարողացա՞ն հայերը պատմական անցեալում նպատակայարմար կերպով լրացնել կենսաբանական այս պահանջները:

Ո՛չ:

Ռաֆֆին դառնութեամբ նկատում է, որ մեր ճակատագիրը այլ կը լինէր, եթէ վանքերի փոխարէն հայերը բերդեր շինած լինէին:

Իրականում հայերը վանքերի հետ կառուցել են ե՛ւ բերդեր - ստեղծել են բերդային մի սիստեմ: Եղել են հայեր, որոնք հայրենիքի պաշտպանութիւնը համարել են կրօնական պարտականութիւն, հանդերձեալում աստուածային գթութիւն հայցելու միջոց:

Անի քաղաքի պարիսպների վրայ մենք կարդացել ենք մի արձանագրութիւն, որ մեր ցեղի յաւիտենականութեան ճամբին բոցավառուող մի լոյս է:

Հայ մի իշխանուհի (ուրեմն՝ այն էլ մի կին) վերակառուցել եւ ամրացրել է հայրենի քաղաքի պարիսպների մի մասը՝ Աստուծոյ ողորմութեամբ եւ իր հարազատների հոգու փրկութեան համար:

Ցեղի ինքնապաշտպանութեան գործը երկնքի ողորմութեան եւ սիրոյ դուռը բացող, աստուածահաճոյ եւ յաւիտենավայել աղո՜թք... այո՛, հայկական միջնադարը մեզ թողել է ե՛ւ այս սրտաճմլիկ յիշատակը:

Բայց ինչո՞ւ զուր անցան սերունդների յուզումները, խռովքը, նւիրումը: Ինչո՞ւ հայոց հերոսականը չկնքուեց յաղթանակով: Արդեո՛ք միայն նրա՞ համար, որ հայերն աւելի վանագործ եղան, քան բերդաշէն:

Այդ չէ բուն պատճառը, այլ՝ աւելի խոր մի երեւոյթ:

Հայերը վատ կերպով միայն կարողացան յարմարուել իրենց հայրենիքին: Նկատելի է, որ հայոց բերդերի եւ վանքերի հետքերը մեծ մա-

սամբ գտնուում են մինչեւ 2000 մետր բարձրութեան սահմաններում: Հայերը չեն հասկացել իրենց լեռների խորհուրդը եւ խուսափել են բնակութեան կայաններ հաստատել նրանց ձիւնամերձ բարձունքներում: Իրենց չքնաղ լեռնաշխարհում նրանք յամառօրէն պահել են հովտական ժողովրդի կենցաղ եւ հոգեբանութիւն: Եւ հենց այս պատճառով էլ չեն կարողացել օգտուել իրենց անառիկ լեռների ռազմագիտական արժէքից: Դեռ հնուց ի վեր նրանք թոյլ են տուել, որ իրենց լեռներից օգտուեն օտար վաչկատունները (Ղարաբաղի այժմեան «քոչ»-ի երեւոյթը մնացորդն է այդ դրութեան), որոնք աստիճանաբար տիրացել են երկրի այդ բնական բերդերին: Ծանօթ է նոյնպէս, որ հայերն իրենց պատմութեան բախտորոշ ճակատամարտերը տուել են աւելի հովտային մարզերում, քան լեռներում: Հենց դրանով էլ պիտի բացատրել Տիգրան Մեծի պարտութիւնը՝ Տիգրանակերտի դաշտում եւ Վարդան Մամիկոնեանի ողբերգութիւնը՝ Աւարայրում:

Վատ կերպով միայն յարմարուելով իրենց միջավայրին՝ հայերը չկարողացան նաեւ դրսեւորել իրենց մշակութային ողջ կորովը: Խուսափելով լեռներից՝ նրանք չկարողացան նաեւ յաղթահարել իրենց գետերը: Երկրի ջրառատութիւնն անհրաժեշտ չդարձրեց ոռոգման սիստեմի զարգացումը, իսկ գետերի կատաղընթացութիւնը խանգարեց որեւէ նաւագնացութիւն: Հայաստանի գետերը ո՛չ թէ հաղորդակցութեան միջոցներ էին, այլ՝ խափանիչներ: Նրանց յաղթահարումը անհնարին համարուելով՝ հայերի մէջ չզարգացաւ պատշաճեցումի կամք: Այս կամքի բացակայութիւնը մէկ կողմից պիտի պատճառէր համահայկական կորովի ցրում, որով պիտի ընծայէր տեղական, բեկորային մի մշակոյթի կարելիութիւն, միւս կողմից՝ ժողովուրդը պիտի համակէր ինքնապաշտպանողական եւ ո՛չ թէ յարձակողական հոգեբանութեամբ: Հայոց պատմութիւնն էապէս ինքնապաշտպանութեան մի ճիգ է, իսկ հայոց բերդային սիստեմը՝ այս ճիգի մի արտայայտութիւնը:

Չհասկացանք մեր լեռների խորհուրդը եւ չկարողացանք յաղթահարել մեր գետերի քմահաճոյքը:

Յարմարուելու մէջ ապիկար եղանք եւ պատշաճեցումի նւազ կորով յայտնաբերեցինք: Դրա համար էլ թէ՛ հայրենիքը կորցրինք, թէ՛ հայոց հազարամեակների հերոսականի ողբերգական վախճանը տեսանք:

Ի՞նչը կը փրկի մեզ - մեր ցեղային թերութիւնների սրբագրումը, կենսաբանօրէն ասած՝ ցեղային վերաշինութիւնը:

«Ցեղ եւ Հայրենիք», 1936թ., թիվ 1, 2

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայկական Բարձրաւանդակը Խաղաղականից մինչեւ Ատլանտեան Ովկիանիոս երկարող եւ ասիական ու եւրացամաքամասերի կենտրոնական մարզերն ընդգրկող «Մեծ Սարահարթ»-ի իւրաբնոյթ մի հանգոյցն է:

Գէոսոֆիական, աշխարհագրական եւ մարդաբանական տեսակէտներով, հսկայ այս սարահարթը ճակատագրական իր կնիքն է դրել բովանդակ աշխարհի բնութեան եւ պատմութեան վրայ:

Դա է մեր մոլորակի երկրաբանական դինամիկայի ամենահուժկու մարզը - հրաբխային ցնցումների, երկրաշարժերի մեծ գիծը:

Դա է Հին Աշխարհի «այրեցեալ» եւ «սառուցեալ» գօտիների բնական բաժանիչը, դա է ընդհանուր իմաստով ինքը՝ «բարեխառն» գօտին:

Դա է բնական օրրանը սպիտակ ցեղի: Դա է ընդհանուր կերպով իրարից բաժանում դեղինների եւ սեւերի ցեղաշխարհները:

Այս սարահարթում բացառիկ դիրք է գրաւում մեր երկիրը - Հայոց Աշխարհը:

Երկրաբանական ուժական տեսակէտով, Հայկական Բարձրաւանդակը Մեծ Սարահարթի կենտրոնական հնոցն է: Նա գտնւում է Մեծ Սարահարթի ծայրամասային հրաբխական երկու մարզերի - Ճաբոնական կղզիների եւ Իսլանդիայի - գրեթէ մէջտեղում:

Երկրաբանօրէն՝ նա աշխարհի ամենաերիտասարդ մի մասն է, որի բնական լինելիութիւնը դեռ շարունակւում է:

Աշխարհագրօրէն՝ նա ընդհանրապէս կենտրոնն է Մեծ Սարահարթի, որի արեւելքից արեւմուտք ձգւող լեռնապատերը ծայրամիտելով ու զօդւելով, կազմում են, իրարից գրեթէ հաւասար հեռաւորութեան վրայ ընկած, լեռնային երեք բաւիղներ - Կարակորում, Արարատ, Մոն-Բլան:

Դրանցից ամենամեծը - Հինդուկուշ-Պամիրի Կարակորումը - ունի ցայտուն ասիական բնութիւն եւ իր շուրջը համախմբում է Ասիան: Ամենից փոքրը - ալպեան Մոն-Բլանը - մարմնացնում է Եւրոպայի բնութեան առանձնայատկութիւնները եւ ընդհանրապէս ձեւացնում Եւրոպան: Սրանց մէջտեղում կարկառւում է հայկական Արարատը - բովան-

դակ աշխարհի ամենամեծ միազանգ կոնը - ուր մեղմանում են Կարակորումի խիստ եւ շեշտւում են Մոն-Բլանի մեղմ բնագծերը:

Միւս կողմից՝ Հայկական Բարձրաւանդակում Մեծ Սարահարթը խաչաձեւում են հիւսիսից հարաւ իջնող ա՛յն լեռները, որոնք որոշում են Եւր-Ասիայի եւ Աֆր-Ասիայի բնութիւնները:

Այս իրողութիւնները, շատ տեսակէտներով, կնքում են Արարատի շուրջը տարածւող Հայկական Բարձրաւանդակի բնանկարը, ինչպէս նաեւ պայմանաւորում իրերի տրամաբանութեան ազդեցութիւնը՝ այստեղ արտայայտութիւն ստացած պատմական հոլովոյթների վրայ:

Մեր բարձրաւանդակը ներկայացնում է մի բնամարզ, ուր համադրւելով՝ անճանաչելի դառնալու աստիճան կերպարանափոխւում են եւ հակադրւելով՝ սպառւելու աստիճան աղօտւում են զուտ եւրոպական, ասիական կամ Եւր-Ասիական ու Աֆր-Ասիական բնագծերը:

Հայաստանն այս բոլորի նկատմամբ ե՛ւ կամուրջ է, ե՛ւ վիհ: Նա ե՛ւ համաձուլում է այս բնագծերը, ե՛ւ դրանք բաժանում իրարից, ե՛ւ տարբերւում դրանցից:

Իր այսորակ տրոհական, միացուցիչ եւ անջատական դերն ու դիրքը՝ Հայաստանը պահում է նաեւ շրջակայ երկրամասերի նկատմամբ:

Հայաստան են թափանցում փոքր-ասիական եւ իրանական սարահարթերի եւ միջագետեան ու մերձ-կասպեան հարթաշխարհների որոշ բնագծերը: Մեր հայրենիքը մի մարզ է, ուր ինչպէս Լինչն է նկատում՝ «միանում են շրջակայ երկիրների բնական իրականութիւնները»:

Աշխարհի չորս կողմերից արշաւող այս «իրականութիւններ»-ը մէկ կողմից զիրար խաչաձեւելով կամ միմեանց դէմ մաքառելով երկրին տալիս են խայտանկարային մի պատկեր, միւս կողմից, իրար հակազդելով կամ ենթարկւելով Հայաստանի բնութեան իւրայատուկ քմահաճոյքին՝ սերտօրէն համաձուլւում են բնականի մի ամբողջականութեան մէջ:

Իր բնութեան ներծուլողական վիթխարի կարողականութեան շնորհիւ՝ մեր երկիրը ինքնարձանանում է իբր հակադիր բազմազանութեանց ներդաշնակումի իւրատիպ մի մարզ: Այս ինքնուրոյն ներդաշնակութիւնը մեր երկրին պարգեւում է ամբողջական ու միացեալ մի նկարագիր:

Արդէն իր յարաբերական բարձրութեամբ - 500 - 1000 մետր - փոքրասիական եւ իրանական սարահարթերի նկատմամբ, իր տանիքակերպ կարկառումով ընդդէմ Միջագետեան եւ մերձկասպեան հարթաս-

տանների՝ Հայաստանն երկրաբանօրէն, աշխարհագրօրէն, կլիմայով եւ տնտեսապէս խստօրէն զատորոշւում է իր շրջապատից:

Մեր Բարձրաւանդակը հրաբխային մեծ կոների եւ հանգոյցների, փարթամօրէն ճիւղաւորւող զուգընթաց լեռնապարերի եւ աշխոյժ տարհովտումի մի աշխարհ է: Նա զուրկ է մեծ հարթավայրերից եւ ջրային ընդարձակ մակերեսներից: Նրա բնանկարը դիմորոշում են չափաւոր մեծութեան բարձրադիր հովիտները, պատշաճաւոր վեհութեան հասնող գագաթները, խոր կիրճերը, մանր լճերի ցանցերը եւ ոչ-հսկայահոս, բայց բազմաթիւ ու կայտառավազ ջրերակները:

Երկու բան, յատկապէս, խորհրդաւորում են մեր երկրի բնութիւնը - հրաբխային կոնը եւ աղբիւրը, որոնցից մէկի վեհութիւնը եւ միւսի քաղցրութիւնը միայն Հայաստանում կարելի է տեսնել եւ զգալ:

* * *

Խտացնելով ասենք.

ա) Հայկական Բարձրաւանդակը ներկայացնում է Մեծ Սարահարթի երկրաբանական ուժականութեան կենտրոնական մարզը:

բ) Նա գտնւում է մի կողմից եւրոպական եւ ասիական բնութիւնները մարմնացնող Ալպերի եւ Պամիրի, միւս կողմից՝ Աֆր-Ասիան եւ Եւր-Ասիան կերպարանաւորող Եթովպիական Բարձրաւանդակի եւ Ուրալի միջեւ:

գ) Իր բնական առանձնայատկութիւններով՝ նա տարբերւում է աշխարհագրական բոլոր այս միջավայրերից:

դ) Արեւելքից արեւմուտք նա իրար է կցում իրանական արիների եւ արմենօիդ-դինարեան-ալպեան ցեղի հայրենիքները, հիւսիսից հարաւ՝ նա միմեանցից բաժանում է զուտ կովկասեան եւ միջերկրականեան ցեղերի, մանաւանդ մոնգոլների եւ սեմական ժողովուրդների աշխարհները:

Այս ասել է.

ա) Երկրաբանական իմաստով մեր երկիրը հաւասարապէս պատկանում է ե՛ւ Ասիային, ե՛ւ Եւրոպային:

բ) Իր բնութեամբ նա ո՛չ զուտ Ասիա է, ո՛չ Եւրոպա, ո՛չ մանաւանդ Աֆր-Ասիա (ուրիշ եզրով՝ Մերձաւոր Արեւելք), ո՛չ էլ Եւր-Ասիա:

գ) Իր աշխարհագրական դիրքով նա սահմանաւորում է Մերձաւոր Արեւելքը, որ սպառւում է Հայկական Տաւրոսի արտաքին պատերի տակ եւ Եւր-Ասիան, որ վերջանում է Հայկական Կովկասի հիւսիսային լանջերի առջեւ: Միւս կողմից նա իրար է զօդում Մեծ Սարահարթի ա-

սիական եւ եւրոպական մասերը, որով՝ հանդիսանում է այս ցամաքամասերից մէկի ծայրը եւ միւսի՝ սկիզբը: Աշխարհագրական կոպիտ եւ միակողմանի հասկացողութեամբ միայն Հայաստանը կարելի է դասել ասիական երկրների շարքում: Երկրաչափական ըմբռնումով՝ նա ընկնում է Եւր-Ասիական եւ Աֆր-Ասիական գծի վրայ, բնութեամբ՝ նա աւելի Ալպերին է մօտ, քան Պամիրին, աւելի Բալկաններին, քան Իրանական Սարահարթին, Կովկասին, Լիբանանին եւ Միջագետքին:

Հայաստանն որոշ իմաստով միայն Ասիա է եւ որոշ՝ Եւրոպա. իրականում՝ նա ո՛չ նրան է պատկանում, ո՛չ սրան: Իր բնութեամբ եւ աշխարհագրական դիրքով նա յաւիտենական մի կռւախնձոր է Ասիայի եւ Եւրոպայի միջեւ, բայց նաեւ՝ բնական անհատականութեան ինքնատիպ մի մարզ, ցցւած ե՛ւ մէկի, ե՛ւ միւսի դէմ:

դ) Հայկական բարձրաւանդակի բնիկները չունեն ուղիղ գծի ցեղակցութիւն շրջակայ երկիրների ժողովուրդների հետ: Նման իրենց երկրի բնութեան, նրանք ցեղային մի գծով կապւում են Եւրոպային, միւսով՝ իրանական արիներին: Հայերը ցեղակիցներ ունեն, ազգակիցներ չունեն: Իբրեւ ազգութիւն մենք էլ մեր բարձրաւանդակի պէս մնացինք ինքնատիպ անհատականութիւն, Եւրոպայի եւ Ասիայի հակամարտ ազդեցութիւնների միջեւ, մերթ ընդվզեցինք երկուսի դէմ՝ միաժամանակ, մերթ նրա հետ եղանք, մերթ սրա, բայց ո՛չ մենք յաջողեցինք դրանց ծունկի բերել, ո՛չ էլ դրանցից մէկն ու մէկը կարողացաւ մեզ կլանել:

Այդ յաւիտենական պայքարը - պայքար աշխարհագրական իրականութիւնների, պայքար ցեղերի, հոգեբանութիւնների - այսօր ընթանում է մեզ համար աննպաստ պայմաններում:

«Տարօնի Արծիւ», 1938թ., թիվ 1

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ԿԵՐՊԱՏՈՒ ԳՈՐԾՕՆՆԵՐԸ ԵՒ ԿԵՐՊԱՐԱՆԸ

Իրանական եւ Փոքր-ասիական սարահարթերի նկատմամբ բարձրադիր եւ հիւսիսանիստ, Ռիոն-Կուրի հովիտների եւ Միջագետ-Սիրիական հարթաստանների հանդեպ վիթխարակարկառ տանիք, Խորենացու բնորոշումով՝ իրո՛ք «հանուրց հիւսիսականաց վեհագոյն» մեր բարձրաւանդակը, կազմւած է խտօրէն խմբւած լեռնածալքերից:

Հայաստանն այնտեղ է, ուր երկրաբանական ահարկու դինամիկան Մեծ Սարահարթի ամենասեղմւած պատերը պարոյկաձեւ մի գալարումով շուռ է տւել դէպի հիւսիս եւ ընծայել- համասարահարթային իմաստով՝ մի «լեռնապարանոց», առաջաւոր ասիական տեսակէտով՝ կիսալուսնակերպ մի «լեռնակղզի»:

Լեռնագօտիներու իրար հեծնելու, իրարու վրայ թափւելու մոլուցքը եւ շրջակայ իրականութիւնների - Սեւ ու Կասպից ծովերը, Ռիոնն ու Կուրը իրենց հովիտներով՝ հիւսիսից, Հնդկաց Ովկիանոսի եւ Միջերկրականի ցռուկները եւ սրանց միջեւ ընկած Սիրիական բնութիւնը եւ Միջագետեան հարթաշխարհը՝ հարաւից - ճնշման օղակը, անկասկածօրէն մեր բարձրաւանդակը լեռնային վայրի մի բաւիղի կը վերածէին, եթէ ասպարէզ չգար ընդդիմադիր մի ոյժ:

Այդ ոյժը Հայաստանի բնութեան ահարկու հրաբխականութիւնն է: Դա այնպէս է ցնցել իր մարզը, որ այնտեղ երկրաբանական խաւերի կանոնաւոր դասաւորում ի զուր է փնտռել: Իրար են խառնւած իրենց ծագումով երկրաբանական տարբեր ժամանակների պատկանող, իրենց հանքային բաղկացութեամբ անհամասեռ խաւերը:

Յաճախ է պատահում, որ ո՛չ միայն ամբողջական եւ միազանգ մի գօտու հատւածներից, այլեւ սրանց մասերից ոմանք կրում են եռախաւեան շրջանի ծալագծերի կնիքը, ոմանք՝ աւելի հին, ոմանք՝ աւելի նոր: Նոյնանման անկանոն յարաբերութիւններն են ներկայացնում նաեւ հանքային շերտաւորումները:

Ահարկուօրէն տարերախառն է եղել Հայոց Աշխարհի բնայեղափոխութիւնը:

Բարձրաւանդակի հուժկու գօտիները, որոնք սկզբնական շրջանում, գրեթէ, համաձոյլ էին, մասնատումի ենթարկւեցին միջախաւեան (միոթենական) մինչեւ նոր ժամանակների հրաբխականութեամբ, նո-

րոգահողեան (պլիոթենական) մինչեւ վերջնագոյն շրջանների կեղեւների շարժմամբ ու կծկումներով:

Երկրաբանական երրորդական խաւի (եռախաւ, տերցիէր) շրջանում յատկապէս, լեռնածալքերը կրկին եւ կրկին խորտակւեցին եւ նրանց կեղեւները՝ ուժգնօրէն նետւեցին այս ու այն կողմ:

Այն ժամանակներում Հայաստանը նման էր վիթխարի մի հնոցի, որում գալարւում էին կրակէ սիւներ՝ ո՛չ միայն շարժելով լեռները, այլեւ պայթած ռումբի կտորների նման ցրելով նրանց մասերը:

Հայաստանն ա՛յն աշխարհն է, ուր երկրաբանական դինամիկան լեռներ է շարժել:

Ա՛յն տեղերում, ուր փխրւում էին երկրի կեղեւի ներքուստ ճնշւող մասերը՝ բղխում էին հրահոսի (լաւա) ահռելիօրէն տիեզերայորդ շատրւաններ, որոնք նախ հրացայտում էին որոտացող գագաթներից վեր, ապա վիշապահոս կրակէ գետերի պէս՝ թափւում ցնցումներից դողացող լեռների լանջերից:

Ահարկու բնայեղափոխութեան վերջի շրջաններում, երբ նւազել էր կրակի մոլեգնութիւնը, որոշ պատռւածքներ լեցւելով ջրով՝ ձեւացրեցին բազմաթիւ լճեր, որոնք տակաւին որոտացող հրաբերանների հետ՝ երկրին տւին ճշմարտօրէն «հրոյ եւ ջրոյ» մի աշխարհի նկարագիր:

Նորանոր ցնցումների հետեւանքով - հաւանաբար, ա՛յն ժամանակներում, երբ երկրի ընդերքից սկսեցին արտավիժել հսկայաքանակ հրաբխանիւթեր եւ կարկառել մեր աշխարհի մեծափառ կոները՝ Մասիս, Արագած, Սիփան, Սուկաւ, Նեբրովթ, եւն.- այս լճերից շատերի պատերը ճեղքւեցին եւ անդնդախոր պատռւածքների միջով, յատկապէս այժմեան մեծ ջրերակներից Արածանի, Եփրատի եւ Արաքսի գծերով, նրանց, այդ լճերի բովանդակութիւնն արտահոսեց երկրից դուրս՝ հեղեղելով Միջագետքն ու մերձ-կասպեան հարթաշխարհը, սրանց պարգեւելով կենսատու ջուր եւ արգասաբեր տիղմ:

Երկրաբանական վերջնախաւի շրջանում միայն, մեր աշխարհը կարողացաւ ստանալ իր այսօրւան կերպարանը՝ պահելով լռած կամ դեռեւս որոտացող վկաները փոթորկալից այն ժամանակների - հրաբխային հսկայ կոներն ու հանգոյցները: Անգամ պատմական մերձաւոր ժամանակներում, մի շարք հրաբերաններ մերթ ընդ մերթ բորբոքւում էին: Նշանաւոր մի հնոց - Թոնդրակը - որոտում է դեռ այսօր:

Հայկական Բարձրաւանդակի երկրաբանական լինելիութիւնը դեռ շարունակւում է: Դեռ հիմա էլ մեր երկրի կուրծքը հսկայական մի ամբար է բնաւուժական զօրոյթի: Բայց եւ այնպէս, նա այլեւս հրահոսների մարզ չէ, այլ՝ խաւերի ճնշումներով ու կծկումներով պայմանաւորւող

երկրաշարժերի: Նոյնինքն զարզանդորոտ Թոնդրակը բաւարարում է ծծմբախառն գոլորշի կամ եռման աստիճանի ցայտաղբիւրներ արտավիժելով:

Հայաստանը - դա հրահոսների եւ երկրաշարժերի, երկրաբանական անհուն դինամիկայի ա՛յն աշխարհն է, որի բնութեան բնորոշիչը, իսկական կերպատուն հրաբխային ներբնակ ոյժն է:

Այս գործօնի դերն աւելի մեծ է մեր երկրում, քան Նեղոսինը՝ Եգիպտոսում:

Հայաստանը պարգեւն է իր բնութեան հրաբխականութեան:

Դրա պարգեւն է նաեւ Միջագետքը՝ բնական ստեղծարժէք իր գծերով, հին բոլոր իր քաղաքակրթութիւններով:

Հրաբխային զօրոյթը - դա զարդանկարեց մեր երկիրը զմայլելի իր խորա - եւ բարձրաքանդակներով, գեղանի հովիտներով եւ վեհափառ գագաթներով:

Ի՞նչ կը լինէր Հայաստանն առանց Արարատեան, Բագրեւանդի, Տարօնի եւ կենսարժէք մշակումների ու բարձր մշակոյթի կարելիութիւն ընծայող միւս դաշտերի ու հովիտների: Իսկ դրանք՝ ցնցումների հետեւանքով երկրից արտահոսած լճերի յատակներ են:

Որքա՜ն աղօտ պիտի լինէր նրա կերպարանը առանց Արարատի, Արագածի, Սուկաւի, Սիփանի, Բիւրակնի, Նեմրութի եւ միւս վսեմական կոների ու հանգոյցների: Դրանք սակայն, հրաբխային հսկայական կարկառումներ են, հրաբխանիւթերի ահռելի շեղջաւորումներ:

Հովիտների եւ գագաթների հետ՝ երկրի բնանկարը լրացնում են լճային եւ գետային հարուստ ցանցերը: Բայց լճերը, ջրային մեծ արտահոսումի ժամանակ, փրկեցին շնորհիւ իրենց խոռոչների խորութեան, որոնք հրաբխային խառնարաններ են, հրաբերանային սկաւառակներ: Լեռնային անթիւ աղբիւրներն էլ, որոնք մեծ բնայեղափոխութիւնից յետոյ, փոխարինեցին հրահոսի երակներին՝ վտակներ եւ մանաւանդ գետային ցանցեր կազմելու հնարաւորութիւն գտան, մեծ մասամբ ցնցումների պատճառած պատռուածքների շնորհիւ:

Պատկերօրէն՝ մեր բարձրաւանդակը կարելի է նմանեցնել Միջագետքի ալեւոր գլխին ծնկաչոք բազմած եւ բազկատարած մի հսկայի: Հսկան հագել է լայնաթեզանի մի պատմուճան, որի գորշ հիմնագոյնի վրայ փողփողում են մերթ յաւիտենօրէն սպիտակափառ, մերթ կանաչ, մերթ խայտերանգ գոհարներ - մեր աշխարհի հրաբխային վեհաշուք հանգոյցները եւ փառատեսիլ կոները: Մէջքին կապել է քառածալ եւ բազմածոպ մի գօտի - չորս մեծ լեռնապարերը եւ դրանց կայտառօրէն ճիւղաւորուող բազուկները: Պատմուճանի անհունօրէն երիզուող ծալքերից անցնում են արծաթագոյն անթիւ ժապաւէններ - հայաշխարհի լեռ-

ներից խուճապահար օձերի պէս իջնող, հովիտներում՝ վիշապօրէն ուռչող եւ կիրճերում՝ կայծակնօրէն ժայթքող փարթամ ջրերակները: Ուսերի վրայ եւ լանջքերին խայտում են բազմաթիւ կապոյտ պիտակներ - մեր երկրի անհանգիստ լճակները, որոնցից ոմանց ցամաքակեաց ժողովուրդը արժանացրել է «ծով» տիտղոսին:

Պատմուճանը խնամքով ասեղնագործուած է մերթ խայտաբղէտ, մերթ միայն կանաչ նկարներով - մեր երկրի զմայլանքից խենթացնող ծաղկաստանները եւ շքեղ մարգերը:

Հսկան գլխին դրել է կանաչ մի պսակ - Գուգարաց անտառը, գողտրիկ Լոռին - որի հիւսկէնները կախւում են մինչեւ ուսերը եւ մինչեւ կուրծքը - Մեծրանց հոյափառ անտառը, Սիւնեաց ծմակները, Տաւրոսի պուրակները:

Պատկերն իր ամբողջութեան մէջ ներկայացնում է բնական արարչութեան մի հրաշակերտը: Նրա առանձին դրւագներից շատերը, սակայն, աւելի՛ են տպաւորիչ: Արարատ լեռը, Սեւանի լիճը, Արածանի գետը, օրինակ, վեհութեան եւ խորհրդաւորութեան յաւիտենական ներշնչարաններ են:

Ամփոփենք.

ա) Հայկական Բարձրաւանդակն իբր բնա-աշխարհագրական իրականութիւն արդիւնք է երկրաբանական դինամիկայի հսկայաոյժ գործունէութեան, բովանդակ աշխարհում բացառիկ թափ ունեցող հրաբխականութեան:

բ) Ներբնակ այս հրաբխականութիւնն է մեր երկրի բնութեան իսկական դիմանկարիչը, նրան իր առանձնատիպ կերպարան տւող գործօնը:

գ) Հայաստանը կերպարանաւորւել է երկրաբանական վերջնախաւի շրջանում - նորածին աշխարհ է, թարմ բնութիւն, օժտւած լինելիական անհուն կարելիութիւններով:

դ) Իր այս գծի շնորհիւ, մեր երկրի բնութիւնը համակւած է տիեզերական ապագայատենչութեամբ - նա խորհրդազդու պատկեր է, բնաշունչ իրականութիւն:

Ի՞նչպէս են ազդել այս երեւոյթները մեր ցեղի հոգե-մարմնական կառոյցին վրայ.

ա) Հայը, նախեւառաջ, ոգու մարդ է, օժտւած կենսաբանական գերաստիճան դինամիկայով - յղութիւններով հարուստ ցեղ, որի մէջ յայտնութեան ոյժը գործում է զգացումների տարերային պոռթկումով - նա իմացական էակի ցայտուն տիպար չէ, այլ՝ զգացա-իմացական:

բ) Ցեղատիպ հայի մարմնակերպութիւնը կրում է իր երկրի բարձրաւանդակային բնութեան կնիքը - նա տիպար լեռնա-հովտական

մարդ է: Իր մարմնական կազմով նա գրեթէ նոյնն է, ինչ ալպեան տիպի մարդը, մի քիչ աւելի լայնակուրծ եւ հաստաբուն, մի քիչ աւելի դանդաղկոտ, բայց աւելի տոկուն:

գ) Նա հին ցեղ չէ. յամենայն դէպս նա իր արեան շաղախը եւ ոգու բնագծումը ստացել է Հայկական Բարձրաւանդակում. ունի լինելիական նկարագիր եւ իր բոլոր մեծ յղացումները կրում են դրա դրոշմը (յիշել Վահագնածնութեան երգը, Սասմայ ծռերը, Նարեկացու «առուղեկան յաւիտենականը», Ջիւանու «Ձախորդ օրեր»-ը եւն., որոնց բոլորի մէջ լինելիական յաւիտենականի ստեղծագործ կարօտը կայ):

դ) Հովտական ապրումը հային պարգեւել է իդէալիստական ոգեաշխարհի կիրճերի եւ լեռների զգացումը՝ դրան միացրել է խորհրդապաշտական երանգը: Հայ ոգում իդէալիստական եւ խորհրդապաշտական գծերն այնպէս են խառնուել իրար, ինչպէս մեր աշխարհում միմեանցով պայմանաւորող հովիտը, կիրճը եւ լեռը: Այս հոգեգծերը դեռ խառն են. դեռ չկայ ներդաշնակօրէն համաձուլուած, ներքուստ ամբողջացած հայը: Այստեղից՝ հայ էութեան մէջ ա՛յնքան շեշտուած «երկու ոգիների պայքար»-ի պատճառը: Ինչպէս մեր բարձրաւանդակի բնութիւնը, այդպէս էլ մեր ոգին դեռ լինելիութեան մէջ է: Եւ հասկանալի է, թէ ինչո՛ւ հայն ա՛յնքան մեծ զգացում ունի անմահութեան համար: Անմահական «ջրեր-ի եւ «խնձորներ»-ի դասական առասպելների աշխարհ է Հայաստանը, եւ զարմանալի չէ, որ նրա մարդը - հայը - ամենից շուտ պիտի կառչէր Յիսուսի «հանդերձեալ»-ին: Հայը ներշնչական տիպ է, իսկ անմահութեան զգացումը՝ տիեզերական յաւիտենականի մեծագոյն ներշնչումը:

Գոյութեան ի՜նչ ահաւոր վտանգ, երբ հայը դեռ հոգեգծային ներդաշնակումի չյանգած, դեռ «երկու ոգիների պայքար»-ի ներքին տագնապի մէջ՝ դուրս նետուեց իր բնական միջավայրից, իր լինելիատիպ հայրենիքից, ուր անմահութեան առասպելը կենդանի ապրում էր, ուր բարձրաւանդակային երազկոտ բնութիւնը մարդուն անվերջ խօսեցնել էր տալիս ճակատագրի, երկրի թովչանքի, երկնքի, յաւիտենականութեան զգացումի հետ:

Օտարութեան մէջ ի՞նչը կարող է մեզ փրկել ոգու եւ արիւնի վատասերումից, եթէ չգործէ մեր լինելիական էութիւնը - ցեղը: Եւ ի՞նչը կարող է մեզ կրկին առաջնորդել դէպի երկիր, եթէ չվերայայտնուեն այն ոյժերը, որոնք մեր անցեալը դրոշմեցին հերոսականի կնիքով - ցեղը եւ իր հոգեւոր մեխանիզմ տարօնականութիւնը:

«Տարօնի Արծիւ», 1938թ., թիվ 2

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ԲՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Հայկական Բարձրաւանդակ եւ պատմական Հայաստան - միեւնոյն բաները չեն դրանք: Առաջինը զուտ բնա-աշխարհագրական ըմբռնում է, որով՝ բնօրէն որոշ ու անփոփոխ, երկրորդը՝ պատմա-ազգագրական, որով՝ ենթակայ սեղմումի եւ ընդլայնումի, ինչպէս ինքը՝ կեանքի յարափոփոխ հոլովոյթը:

Անցեալում մեր քաղաքական կեանքն ու ոյժն այնքան անկայուն եւ ելեւէջային են եղել, որ այսօր դժւար է առանց վերապահումի մատնանշել պատմական Հայաստանի սահմանները: Ո՛չ միայն օտարներն են յաճախ քաղաքականապէս մասնատել մեր երկիրը, այլեւ հայոց պետական դրօշը մերթ իր ազդեցութիւնը ծաւալելով (օրկ. Տիգրան Մեծի ժամանակ), մերթ վասալային մանրապետութեանց խորհրդանշան դառնալով (Արշակունիների անկումից յետոյ), մերթ տարագրւելով (Կիլիկեան շրջան), մերթ իսպառ չքանալով՝ պատճառել է այլազան սահմանագծումներ: Շփոթիչ դեր են խաղում նաեւ հին պատմիչների՝ հայերի Թրակիայից գալու եւ որոշ մարդա-պատմաբանների՝ հայոց փոքր-ասիական ծագման տեսութիւնները, որոնցից հետեւացւում է, թէ մեր ազգի նախօրորանը Փոքր Հայքն է: Հները պատմական Հայաստան ասելով՝ ընդհանրապէս հասկանում են Մեծ Հայքը եւ Փոքր Հայքը: Առաջինը մեր երկիրն ուսումնասիրող գերմանացի գիտնականների «Հայկական Բարձրաւանդակ» անւանած աշխարհագրական միաւորն է, բնական Հայաստանը, որ ըստ մարդաբանական նորագոյն տւեալների, հայ ցեղի եւ ազգութեան կազմաւորման բնական միջավայրն է, այսինքն՝ հայոց յաւիտենական Հայրենիքը:

Բնօրէն սահմանագծւած այս բարձրաւանդակն է Հայոց պատմութեան գլխաւոր թատերավայրը եւ դա է պատկերւում ու զգացւում իբր մեր ամբողջական Հայրենիքը՝ անկախ ազգագրական պայմաններից եւ ժամանակների քաղաքական սահմանագծումներից: Այս հայրենըմբռնումն արդիւնք է ո՛չ միայն մեր ենթակայական տրամադրութիւնների, այլեւ՝ բնական գործօնների առարկայական անդրադարձումի-աշխարհագրօրէն ամբողջական երկիրն է պարտադրում օրգանական հայրենասիրութիւն, հայրենիքի յաւիտենական զգացում, հայրենազգացութիւն: Արարատը սրբազան է բոլոր հայերի համար, որովհետեւ

դա կենտրոնական բաւիղն է Հայկական Բարձրաւանդակը ձեւացնող լեռների, բնական խորհրդանշանը Հայոց Հայրենիքի ամբողջականութեան:

Այսօր, Պարսկաստանն իր թաթարաբնակ Ատրպատականով երկարում է մինչեւ Արարատ: Թուրքիան արդէն ոտքը դրած Արարատեան դաշտում՝ սպառնալից կերպով սեղմել է խորհրդային «բեկոր-Հայաստան»-ը: Արաքսի ձախ ափի որոշ կէտերում ռուս զինուորն է պահակում: Թուրքիոյ քաղաքական դրօշի տակ՝ Հայկ. Տաւրոսն ազգագրօրէն ստացել է զուտ քրտական նկարագիր: Հայկական Պարն ու Ծաղկանցն օրըստօրէ մերկանալով քրտութիւնից՝ նաեւ ազգագրօրէն ստանում են թուրք-թաթարական կերպարան: Հայկական Կովկասի այլեւայլ մասերում աչքի են զարկում թաթարական ազդեցիկ գծեր: Մեծրանցը ե՛ւ քաղաքականապէս, ե՛ւ ազգագրապէս ստացել է թուրքական դրոշմ: Մեր երկիրը կազմող հինգ լեռնագօտիներից չորսը անցել են թուրքերի ձեռքը, մէկը՝ վիճելի դարձել հայերի եւ թաթարների միջեւ: Թուրքերը տիրում են մեր բարձրաւանդակի տարածութեան 4/5-երորդականին, թաթարները եւ վրացիները՝ 1/10-երորդականին: Ազգագրօրէն՝ Հայկական Բարձրաւանդակը հազիւ իր 1/10-երորդականով պահում է հայկական կերպարան: Այս իրողութիւնները, որքան էլ նշանակալից Առաջաւոր Ասիոյ պատմութեան եւ մանաւանդ Հայաստանի, հայ ազգի գոյութեան, լինել-չլինելու կնճիռի տեսակէտով, այնուամենայնիւ, ի զօրու չեն Հայկական Բարձրաւանդակի բնական միութիւնը պառակտել: Հայկական Բարձրաւանդակը բնական մի միաւոր է, աշխարհագրական անբաժանելի մի ամբողջականութիւն է:

Ճիշդ է նկատում աշխարհագիր էվալդ Բանզէն, թէ «աշխարհագրական առանձին բնութեամբ մի Քիւրտիստան գոյութիւն չունի», այսինքն՝ ոչ միայն այսր, այլեւ՝ անդր-տիգրիսեան լեռնաշխարհը պատկանում է Հայկական Բարձրաւանդակին:

Հայաստանն իրանական եւ փոքր-ասիական աւելի ստորանիստ սարահարթների եւ Միջագետքի, Ասորիքի ու Կովկասի դաշտագետինների միջեւ տարածւած ամենակարկառուն բարձրաւանդակն է:

Հանրածանօթ է սահմանային այս ընբռնումը, բայց շատ ընդհանուր, վերացական, իրական մանրամասնութիւնների մէջ՝ չբաւարարող: Ո՞ւր են վերջանում Իրանը, Փոքր Ասիան, Կովկասը, Միջագետքը. ո՞րտեղից են սկսում Հայկական Բարձրաւանդակի բնական սահմանները: Անհրաժեշտ է այս մասին յստակ գաղափար կազմել: Կենսաբանօրէն եւ գործնական քաղաքականութեան տեսակէտից ահագին նշանակութիւն ունի լիազգաց հայրենընբռնումը: Դա ասել է՝ նպատակի

առարկայական եւ ամբողջական դիմագծումը: Դա ասել է՝ քաղաքական ուշադրութեան եւ ձգտումների կենտրոնացում: Դա կարող է լոյս սփռել էական այնպիսի հարցերի վրայ, որպիսիք են.

ա) Ո՞րն է բուն մեր Հայրենիքը, որից դուրս այլ «օջախ»-ներ որոնելը բանդագուշանք է միայն, անհայրենազգաց քաղաքաբանութիւն, անստեղծագործ դեգերում, ուշադրութեան եւ կամքի ցրում, անկենսաբանական ցնորք:

բ) Կարո՞ղ է ներկայ Խ. Հայաստանը գոյութեան հաւատ եւ մանաւանդ վտանգի ժամանակ ինքնապաշտպանուելու յոյս ներշնչել:

գ) Հնարաւո՞ր է Հայաստանից դուրս հոգեւոր հայրենիք ստեղծել, անհող պետութիւն:

դ) Բնական ինչպիսի՞ սահմաններում հայերը կարող են իբրեւ ազգութիւն եւ պետութիւն օրգանապէս զարգանալ, այսինքն՝ տնտեսապէս, քաղաքականապէս, ռազմագիտօրէն յարաբերաբար ապահով դիրք նուաճել:

Հայը նախ ազգակիցներ չունեցող ժողովուրդ է: Եւ հենց դրա համար էլ նա սովորականից աւելի կարիք ունի երկու բանի - ցեղային ներկարողական ոյժերի յարատեւ լարումի եւ բնօրէն ամբողջական հայրենիքի:

Աշխարհագրօրէն ամբողջական որեւէ միջավայրի սահմանները ճշդորոշող հիմնական գործօններն են - երկրաբանական կազմը, լեռնա- եւ ջրագրական դրութիւնը, կլիմայական, կենդանական եւ բուսական առանձնայատկութիւնները:

Հայկական Բարձրաւանդակն իր սեպօրէն իջնող կողերով, իր արտակարգօրէն ցցուած եւ քառսային երկրաբանական խաւերով, խստօրէն կտրտուած եւ բարձրակարկառ լեռնագօտիներով, մերթ հանգուցաւոր, մերթ միազանգ հրաբխային վիթխարի կոներով, բացառապէս հրաբխային ծագման լճային ցանցով, իր բարձրաւանդակային գետերի անմիապաղաղ - առաւելապէս կատաղընթաց - հոսանքով, աստիճանաբար դէպի արեւելք կամ արեւմուտք խոնարհուող ներքին հովիտներով, դէպի հիւսիս կամ հարաւ երկարող կիրճերով եւ եզերական դաշտերով, իր կլիմայական հակադրութիւններով եւ խայտաբղէտ բուսականութեան (յատկապէս ալպեան) փարթամութեամբ ներկայացնում է բնական բազմազանութեանց իւրայատուկ մի ներդաշնակութիւն:

Հայաստանի բնական սահմանները հասնում են մինչեւ այնտեղ, ուր այս բնորոշիչ ներդաշնակութիւնն աչքի է զարկում:

Կան դժուարութիւններ, եւ դրանք ծագում են այն տեղերը, ուր այս

ներդաշնակութիւնը պայմանաւորող բնագծերը կամ աղօտւում են, կամ խառնւում շրջակայ երկիրների բնութեան երանգներին:

Այդ դժւարութիւնները շեշտւում են յատկապէս արեւելքում եւ արեւմուտքում եւ առաջին հերթին պայմանաւորւում են ջրային որոշ երակների ընթացքով: Որեւէ բարձրաւանդակի բնական սահմաններն ամենահատու կերպով որոշում են լեռնաշղթաները եւ գետերը: Նշանակալից է, որ մեր երկրի բարձրագոյն սարահարթը եւ գլխաւոր ջրամբարը տեղագրօրէն նոյնանում են Բարձր Հայքում:

Սակայն, այստեղից բղխող Եփրատն ու Արաքսը հակահոս իրենց ընթացքով Բարձրաւանդակի ներքին մարզում պառակտիչ դեր են խաղում, իսկ դրսից՝ լրիւ կերպով չեն եզրաւորում նրա սահմանները: Աւելի ապերախտ դեր է խաղում նոյն ջրամբարից բղխող Ճորոխը, որ Սպերի մօտից աստիճանաբար դէպի հիւսիս հակւելով՝ ի վերջոյ բռնում է շեշտւած հիւսիսընթաց ուղղութիւն եւ դուրս գալիս բարձրաւանդակից, զլանալով Հայաստանին բնական ելք եւ սահմանագծում՝ Սեւ ծովի վրայ: Շփոթ է ստեղծում եւ Կուրը, որի աղբիւրները նոյնպէս կապ ունեն Բարձր Հայքի մեծ ջրամբարի հետ: Հայկական մեծ գետերին յատուկ արեւելեան կամ արեւմտեան ընթացքից շուտ խոտորելով՝ Կուրը շտապում է հակւել դէպի հիւսիս եւ Ջաւախքը Հայաստանի ու Վրաստանի միջեւ վիճելի դարձնելով՝ ստանում է զուտ վրացական գետի բնոյթ, ապա թեքւելով դէպի հարաւ՝ Խրամն ընդունելու կէտից բռնում է ուղղորոշ արեւելեան ընթացք եւ սկսում բնօրէն սահմանագծել Հայկական Բարձրաւանդակի հիւսիսը:

Ուղղընթաց են Հարաւային Հայաստանի (Տաւրոսի) ջրամբարից սնուող գետերը (Արեւմտեան եւ Արեւելեան Տիգրիսներ): Դրանք էլ, սակայն, լրիւ սահմանագծում չեն ընծայում: Արեւմտ. Տիգրիսը, որ կրում է նաեւ «Արղնի ջուր» անունը, վերին հոսանքում բռնում է հարաւահակ ուղղութիւն եւ երկրի բնական սահմանագծման նպաստելու փոխարէն՝ ներքուստ պառակտում է նրա բնութիւնը: Տիգրանակերտի հարաւից միայն նա ստանում է արեւելեան ուղղութիւն եւ համեմատաբար յաջող կերպով դառնում եզերական գետ, չնայած որ բարձրաւանդակի բնութեան գծերը թափանցում են նրա աջ ափից այն կողմը: Դրա հանդէպ՝ Արեւլ. Տիգրիսը (Ջերմ, Բոհդան) վայրագ իր ընթացքով եւ ահռելի կիրճերով պարզապէս կտրում է Հայաստանի բնութեան պատկանող Կորդուաց լեռնաշխարհը եւ դիւրութիւն ընծայում Ջաբին եւ սրա օժանդակներին՝ այդ լեռնավայրը կապել Ասորեստանին կամ վիճելի դարձնել Հայաստանի եւ Միջագետքի միջեւ: Հետաքրքրական է, որ Արեւլ. Տիգրիսին Քսենոփոնը տալիս է «Կենտրիտէս» անունը, որ ըստ Մարք-

ւարտի, ծագում է հայերէն «կտրիչ» բառից եւ համապատասխանում է այս գետի Հայաստանն ազգագրօրէն «կարդուխ»-ների, որով՝ քիւրտերի աշխարհից կտրող, բաժանող դերին:

Շա՛տ աւելի բարդ է Կապուտան լճի եւ սրա աւազանի պարագան: Մինչ այս լիճը իր երկրաբանական ծագումով պատկանում է Հայաստանին, նրա աւազանի այլեւ այլ մասերում, ինչպէս Աջի գետի հովիտում, յաճախ իրանական բնութեան գծերը շա՛տ աւելի ազդու են: Միւս կողմից նշանակալից է, որ Կապուտանի աւազանի եւ իրանական Ամարդոս գետի (Կըզըլ-Ուզուն) ջրբաժան գօտին կազմող Սոհուն եւ Վազբուշ լեռնաշղթաները միայն բնօրէն յարմար կերպով սահմանագծում են Հայկական Բարձրաւանդակն ընդդէմ Իրանի:

Միւս կողմից իրանական Զագրոսն է իր ցռուկը խրում Կապուտանի եւ Հայկ. Տաւրոսի միջեւ, իսկ իրանական հիւսիսային գօտու բազուկները Գիլան-Մազանդարանից երկարելով՝ ձգտում են հարաւից հիւսիս կտրել արեւելեան Ատրպատականը եւ հասնել Արաքսի աւազանը: Հենց այս իրողութիւններն են պատճառը, որ Հայկական Բարձրաւանդակի եւ Իրանական սարահարթի սահմանագծումը ա՛յնքան դժւարանում է: Իրականում Ատրպատականը այն մարզն է, ուր Հայկական Բարձրաւանդակի եւ Իրանի բնագծերը զիրար խաչաձեւելով, չէզօքացնում են, եւ իբր փոխանցման գօտի ծառայող այս երկրին՝ ինքնուրոյնութեան քմահաճոյք պատճառում, որքան էլ նրա խարիսխը կազմող լեռնագօտիներից երկուսը - հարաւից հիւսիս երկարողները - Իրանական սարահարթի երկու պատերի շարունակութիւնն են, իսկ արեւմուտքից արեւելք տարածւող շղթաները՝ հայկական լեռների մասերը:

Ինչպէս տեսնւում է, ջրագրական իրականութեանց պատճառած դժւարութիւններին միանում են՝ լեռնագրականները: Եթէ Ատրպատականում իրանական լեռնագօտու հիւսիսային պատը Հայկ. Կովկասին է զարկւում, հարաւայինը՝ Հայկ. Տաւրոսին, ապա Ճորոխի ստորին հոսանքի եւ Կուրի ակունքների մարզերում էլ իրար են խառնւում Հայկ. Կովկասի, Մեծրանցի, Պոնտեան լեռների եւ Ռիոնի հովիտները հարաւից եզերող շղթաների բազուկները, որոնք որքան էլ երկրաբանօրէն Հայկ. Բարձրաւանդակին խորթ չեն, կլիմայական եւ բուսական առանձնայատկութիւններով, սակայն, տարբերւում են նրանից: Նոյնանման դժւարութիւններ կան նաեւ Եփրատի Փինկեանի ծունկից մինչեւ Ճորոխի շրջանը, ուր Եփրատի եւ փոքր-ասիական Գայլ գետի (Լիկոս) ջրբաժան գօտիները կազմող, Ճորոխի մարզը Պոնտոսից բաժանող եւ Անտիտաւրոսի, Պոնտեան ու Բարձր Հայքի լեռներին պատկանող

շղթաները մոլեգնօրէն խաչաձեւում են իրար: Վերջապէս շփոթ կայ Տաւրոսը պատռող Եփրատի եւ Արեւել. Տիգրիսի աւազանի հարաւ-արեւմտեան մասը կազմող մարզի միջեւ, ուր Հայկ. Տաւրոսի հուժկու բազուկները Միջագետքի դռների մօտ՝ տեղի են տալիս լեռնաբլուրների:

Շփոթաստեղծ դեր են խաղում ե՛ւ կիրճերը-բարձրաւանդակի ներքին հովիտների եւ եզերական հարթաշխարհների բնական դռները: Եթէ մի կողմից մեծ գետերը բարձրաւանդակի բնութեան գծերը տանում են դէպի շրջակայ աշխարհները, վերջիններն էլ իրենց նկարագրի որոշ յատկութիւնները հոսանքների հուները կազմող կիրճերի հետ, մխրճում են դէպի երկրի ներքին հովիտները:

Տիգրիսի օժանդակների հետ Միջագետքը իրեն յիշեցնել է տալիս մինչեւ Բաղէշի կոնքը եւ անգամ զգալի դառնում Տարօնի դրան մօտ, Գրգուռի ստորոտը: Տիգրանակերտի դաշտում աւելի ցայտուն կերպով աչքի են զարկում միջագետեան որոշ գծեր, որոնք նոյնիսկ յամառում են մօտենալ Արածանու հովիտներին: Արաքսի ատրպատականեան օժանդակների շնորհիւ, իրանական բնութեան մէկ քանի երանգները թափանցում են մինչեւ Արարատի ստորոտը: Բնորոշիչ է մանաւանդ բարձրաւանդակի կենտրոնական հովիտը, այնքան հետաքրքրօրէն Հայաստանի բնութեան երկու ամենայիշատակելի հրաբխային զանգուածների - Մասիս եւ Արագած - միջեւ ընդլայնուած Արարատեան դաշտը, ուր Արաքսի ակունք Բարձր Հայքի սարաւանդային եւ նոյն գետի ստորին հոսանքը կազմող Մուխանքի դաշտային-անապատային բնութեան գծերը իրար են խառնւում: Աւելորդ է յիշել Կապուտանի աւազանի մասին, ուր հայաստանեան եւ իրանական բնութեանց ազդեցութիւնները, գրեթէ, հաւասարազօր են: Վերջապէս, Կուրի եւ Ճորոխի օժանդակների միջոցով Կովկասի եւ Պոնտոսի անտառային բնութիւնն աւելի քան տպաւորիչ կերպով աչքի է ընկնում Հիւս. Հայաստանի այլեւայլ մասերում, յատկապէս Լոռիում եւ Մեծրանց լեռներում:

Որքան էլ այս իրականութեանց մանրամասնութիւնները խանգարում են բարձրաւանդակի բնօրէն հատու սահմանագծմանը (եւ հենց այդ իրականութիւններն են մեր պատմա-քաղաքական ճակատագրի բնական-առարկայական պատճառները), այնուամենայնիւ, պակաս նշանակալից չեն այն առանձնայատկութիւնները, որոնց շնորհիւ մեր երկիրը իր ինքնուրոյն կերպարանքով զատորոշւում է շրջակայ աշխարհներից: Ծանոթանա՛նք դրանցից մի քանիսին.

Ա) Հայաստանն արտաքուստ կենտրոնացեալ մի բարձրաւանդակ է, սեպօրէն իջնող պատերով, որոնք հսկայ տանիքների պէս կարկառ-

ւում են հարաւից Միջագետեան հարթաշխարհի, հիւսիսից՝ Ռիոն-Կուրի հովիտների դէմ: Իր բարձր դիրքը Հայաստանը շեշտում է նաեւ արեւմուտքում՝ փոքր-ասիական, արեւելքում՝ Իրանական Սարահարթերի նկատմամբ: Ըստ այսմ՝ Հայկական Բարձրաւանդակի սահմանները հասնում են մինչեւ ա՛յն կէտերը, ուր այս ցցւածքը նկատելի է:

Բ) Արտաքուստ կենտրոնացեալ թւացող մեր բարձրաւանդակի լեռները ներքուստ բաժանւում են արեւելքից արեւմուտք երկարող չորս գօտիների, որոնք կազմում են Հայաստանի բնութեան ողնաշարը: Հայաստանը, անառարկելիօրէն, տարածւում է մինչեւ ա՛յն բոլոր կէտերը, ուր հասնում են այս գօտիների բազուկները:

Գ) Երկրի լեռնագրական իրականութիւնների պարտադրանքով Հայկ. Բարձրաւանդակի մայր ջրերակները հոսում են ընդհանրապէս արեւելքից արեւմուտք կամ արեւմուտքից արեւելք: Բոլոր այն վայրերը, ուր մեծ գետերը պահում են այս ուղղութիւնները, անառարկելիօրէն պատկանում են Հայաստանին, իսկ ուր նրանք ստանում են հիւսիսային կամ հարաւային ընթացք, այնտեղ վերջանում է Հայաստանը:

Դ) Դարձեալ, այս մայր գետերի բարձրաւանդակային օժանդակները հոսում են ընդհանրապէս հիւսիսից հարաւ կամ հարաւից հիւսիս: Բոլոր այն դէպքերում, երբ սրանք խոտորւում են այս ընթացքից եւ բարձրաւանդակից իջնելով նաեւ դաշտային ջրերակների բնոյթ ստանում, իրենց այս վերջին հուներում Հայաստանի բնութիւնը դարձնում են կասկածելի լինելու աստիճան աղօտ:

Ե) Գետերը եւ ո՛չ մէկ դէպքում բարձրաւանդակին հարազատ արեւելահակ եւ արեւմտահակ հոսանքով չեն ուղղւում դէպի իրենց աւազանները, որով եւ Հայաստանը չեն առաջնորդում դէպի ծով: Անգամ Արաքսը, որ իր միջին հոսանքում նախ հարաւահակ եւ ապա հիւսիսահակ ընթացքով մի աղեղ է քաշում Հայկական Կովկասի շուրջը, ի վերջոյ անցնում է այնպիսի մի մարզով, որ իր անապատային բնութեամբ, մակերեսի խոնարհութեամբ եւ կլիմայով հակադրութեան մէջ լինելով բարձրաւանդակի հետ, փաստօրէն խանգարում է Հայաստանի բնական ելքը Կասպից ծովի վրայ: Միւս կողմից, Պարխարի հուժկու կողերն իրենց դէմ մաքառող Ճորոխին Հայաստանից դուրս վանելուց յետոյ միայն, կարելիութիւն են տալիս՝ նետւել Սեւ ծովի գիրկը: Իսկ Հայաստանի բնութեան ամենահարազատ գետ Արածանու ահագին ջրով ուռճացող Եփրատի՝ Տաւրոսը պատռելու եւ Միջերկրական թափելու բոլոր փորձերը, իրենց ահռելի կատաղութեան մէջ մնում են ապարդիւն: Իջնելով Միջագետք՝ Եփրատն իրեն վիճակում է անապատային տխուր գետի, իսկ Հայաստանին՝ անծով աշխարհի ճակատագիրը:

Հայկական Բարձրաւանդակը, էապէս, բնական ելք չունի դէպի ծովերը եւ հայերը՝ կարծես մխիթարուելու համար, երկրի մի շարք լճերին տուել են «ծով» տիտղոսը:

* * *

Ասուեց, որ Հայկական Բարձրաւանդակի բնական սահմանները հասնում են մինչեւ այնտեղերը, ուր դեռ աչքի է զարկում լեռնա-ջրագրական առանձնայատկութիւնների ներդաշնակութիւնը:

Ըստ այսմ՝ մեր երկրի սահմաններն են.

Արեւելքից՝ Արաքսի աղեղը եւ Արաքսի ու Կապուտանի ջրբաժան գծերը (եւ միայն յարաբերականօրէն՝ Կասպից ծովը եւ Կապուտան-Ամարդոսի ջրաբաշխ գօտին):

Հարաւից՝ Տիգրիսի, Զաբի եւ Խապուրի ջրաբաշխական գծերը (եւ միայն յարաբերականօրէն՝ Զաբի աւազանը):

Արեւմուտքից՝ Եփրատը՝ Տաւրոսից դուրս գալու կէտից մինչեւ Պինգանի ծունկը եւ այստեղից՝ Եփրատ, Ալիս, Գայլ եւ Ճորոխ գետերի ջրաբաշխական աղեղնագիծը (եւ միայն յարաբերականօրէն՝ Եփրատի Պիւռամոսի ջրբաժան գիծը):

Հիւսիսից՝ Ճորոխի, Ռիոնի եւ Կուրի ջրբաժան մարզը, Խրամ գետը եւ սրա Կուրին միանալու կէտից, այս վերջին գետը:

Հայկական Բարձրաւանդակը, լայնագոյն իմաստով, այսինքն՝ յարաբերականօրէն իրեն պատկանող մարզերով, ունի շուրջ 380,000 քռ. քլմ. տարածութիւն:

Բուն բարձրաւանդակը, այսինքն՝ այն երկիրը, որ յաւելւածական մասերի կտրումով կրկին կը պահէ բնական իր ամբողջականութիւնը, տարածւում է Տաւրոսը կտրող Եփրատի, Հայկ. Կովկասն աղեղող Արաքսի, Ճորոխի, Զաբի, Կապուտանի աւազանի, Կուրի եւ զոյգ Տիգրիսների միջեւ:

Սա է հայոց բնօրէն անհատանելի եւ յաւիտենական Հայրենիքը, լեռնագրօրէն համախմբւած Արարատ կենտրոնական բաւիղի, ջրագրօրէն՝ սրա բազուկները հանդիսացող գօտիների աղբիւրների (առաւելապէս Բարձր Հայքի ջրամբարի) շուրջը:

«Տարօնի Արծիւ», 1938թ., թիվ 3-4

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԸ

Հայերը չկարողացան ազգագրօրէն միացեալ մի ամբողջականութիւն ստեղծել իրենց բարձրաւանդակում: Արտաշէս Ա.ի եւ Տիգրան Մեծի հայացման քաղաքականութիւնը համաբարձրաւանդակային չափանիշով թերի մնաց: Իրանական վաչկատուն ցեղերն աստիճանաբար նստակեաց դարձան յատկապես երկրի հարաւ-արեւելեան շրջաններում: Որքան էլ հայ պատմագիրները մինչեւ Թովմաս Մեծոփեցի (ԺԴ.-ԺԵ. դար) Հայաստանի սահմաններում չեն ուզում քիւրտերի գոյութեան մասին յիշատակութիւն անել, այնուամենայնիւ աշխարհագրական մի շարք անուններ (ոչ միայն Կորդուք, այլեւ Մարակերտ, Մարդաղի, Վրնջունիք, Խոչակունիք, Մարաթուկ եւն., եւն.) վկայում են, որ նրանք մեր երկրում ապրելիս են եղել՝ իսլամից առաջ: Դարձեալ Խորենացու «Վիշապազունք»-ը ենթադրել է տալիս, որ հնուց ի վեր Մասիսը բնակւելիս է եղել քիւրտերով, իսկ արաբական պատմագրութիւնը, Հաբիբ Մասլամայի դէպի Արտաշատ կատարած արշաւանքի առիթով, Արարատեան դաշտում մատնանշում է մի «Նահր էլ - Աքրատ», որ նշանակում է «Քիւրտերի գետ»:

Երկրի ներսում, ինչպէս Աղձնեաց Սասուն լեռնավայրում եւ եզերական նահանգներից Տայքի, Ուտեաց, Փայտակարանի եւ Արցախի այլեւայլ մասերում խալդ-ուրարտական-ալանական ցեղերի հայացման առաջընթացը մինչեւ Թ. դարը դեռեւս չէր յանգել կատարեալ ձուլման: Բնորոշ է, որ այս նորադարձ «հայերի» որոշ զանգւածները Փայտակարանում, Ուտեաց եւ Արցախի դաշտային մասերում, ԺԱ. դարից սկսած՝ կամաց-կամաց ձուլւեցին թաթարներին եւ դարձան շաղախ կովկասեան Ատրպատականի թաթարական ազգութեան: Տայքի բնակիչների մի մասը իսլամանալով մերւեց աջարացիներին եւ լազերին, իսկ Բարձր Հայքին մերձակայ վայրերում (յատկապէս Սպեր, Խոտրջուր, Թորթում) բնակւող հատւածը օսմանեան տիրապետութիւնից յետոյ, ուղղակի թուրքացաւ: Նոյն ճակատագրից զերծ չմնաց անգամ Սասունը, ուր խալդական ծագում ունեցող մի շարք ցեղախմբեր նետւելով իսլամի գիրկը՝ միացան քրտական ազգային օրգանիզմին: Աւելորդ է խօսել Չորրորդ Հայքի Փոքր Ցոփք (Դերսիմ) գաւառի «արմենօիդ» ցեղին պատկանող ղըզըլբաշների մասին:

Այս հայաստանակործան աղէտը սրւեց յատկապես իսլամի ներ-

խուժումով, եւ սրանով առանձին թափ ստացած հայկական արտագաղթերով:

Հայկական արտագաղթը նախ սկսւեց Արշակունիների անկումից յետոյ՝ դեպի Յունական Հայաստան: Նա զանգւածային բնոյթ ստացաւ է. դարից, երբ Մամիկոնեանների վերջին փորձը՝ համահայկական շարժումով կասեցնել արաբական առաջխաղացութիւնը՝ լայն արձագանգ չգտաւ նախարարների մօտ եւ Տարօնի դրան առջեւ յուսահատ մաքառումի մեջ ընկաւ Մամիկոնեան վերջին սպարապետը: Հայկական արտագաղթի ալիքներն ողողեցին Փոքր Հայքը, Կապադովկիան, «արմենական թեմ»-ի մարզը, Բիւզանդիոնը եւ կայսրութեան բոլոր մասերը՝ Թրակիայից մինչեւ իտալական թերակղզի եւ մինչեւ Հիւս. Ափրիկէ: Բայց Հայաստանի համար առանձնապէս ճակատագրական եղաւ ԺԱ. դարը, երբ կործանւեց Բագրատունեաց հարստութիւնը եւ հայոց քաղաքական դրօշը տեղափոխւեց Կիլիկիա: Այդ օրից Հայկական Բարձրաւանդակը իր որդիների համար դարձաւ դժոխք - մէկ կողմից հայոց արտագաղթի նորանոր ալիքներ, միւս կողմից՝ անկաշկանդ ներխուժում թաթարների - որոնք բռնեցին երկրի հիւսիս-արեւելեան եզերական դաշտերը եւ քիւրտերի, որոնք հարաւից առաջխաղալով նւաճեցին Բարձրաւանդակի լեռնագօտիները եւ կոները: Քիւրտ-թաթարական բռնագրաւումները քաղաքական մասնաւոր սիստեմ դարձան պարսկա-օսմանեան պատերազմների շրջանում. երբ թուրքերը պարսիկների ցեղակից սիւնի քիւրտերն էին զետեղում Հայաստանում, իսկ պարսիկները՝ թուրքերի ցեղակից շիա թաթարները: Սրանց վրայ, յատկապէս Բարձրաւանդակի արեւմտեան մասում աւելացան եՀ օսմ. թուրքերը: Երբ սկսւեց հայ յեղափոխութիւնը, Հայկ. Բարձրաւանդակն արդէն բնօրէն վիճելի դարձած էր ոՀչ միայն քրիստոնէութեան եւ իսլամի, այլեւ հայերի, քիւրտերի եւ թուրք-թաթարների միջեւ: Քսաներորդ դարում հայերն ապրեցին իրենց պատմութեան ամենաահաւոր մարտիրոսագրութիւնը: Հայաստանի մեծագոյն մասում ջախջախւեց քրիստոնէութիւնը, որից յետոյ ժամանակի ոգին կշիռ տւեց ազգայինցեղային գործօնին: Շիա թաթարները սկսեցին հոգեպէս բաժանւել պարսիկներից եւ կապւել թուրքերին, սիւնի քիւրտերը հակւեցին հայերին եւ պարսիկներին: Հայկական Բարձրաւանդակի պայքարը այսօր ստանում է նոր բնոյթ: Իրերի զարգացումով, կրօնների մոլեգին բախումը տեղի է տալիս ցեղերի լինել-չլինելու պայքարին:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մի՞թէ Հայկական Բարձրաւանդակն ու հայ ցեղը արժանի էին այս ճակատագրին: Մի՞թե այդ առաջընթացն անխուսափելի էր:

Այո՛, ասում է ցեղօրէն ան-«ես» մարդը, իրապաշտը, քաղաքաբանողը, նաստը, խելօքը:

Չկայ աւելի վնասակար յիմարաբանութիւն, քան «իրապաշտական» կոչուած կիսամտածումը: Իրապաշտը նա է, ո՛վ չգիտէ անցեալը տառապելով ապրել, ո՛վ գտնուում է ներկայի կոպիտ փաստերի ազդեցութեան տակ, ո՛վ չգիտէ կռահել եւ տեսանել ապագան: Ով ժամանակի մի մասով է ապրում՝ նա յաւիտենականութեան տիպ չէ, նա ամբողջական էակ չէ, նա մարդա-բեկոր է, հոգեւոր թզուկ: Հայաստանի կործանման բուն պատճառներից մէկը հանդիսացաւ հայ ժողովրդի մէկ մասի կոպիտ ներկայապաշտութիւնը, «ռէալիզմը»: Դեռ այսօր էլ շատ հայեր հպարտանում են իրենց մտքի այդ տխուր առաքինութեամբ: Ես «ռէալիստ» եմ եւ գտնում եմ, որ Հայաստանը այլ ճակատագիր չէր կարող ունենալ, որ գաղութում բացի մեր ազգային մշակոյթը եւ համրանքը պահելուց այլ բան չենք կարող անել, որ առանց մեծ մի ոյժի աջակցութեան Հայաստանի վերանաճման մասին խօսք լինել եւն., եւն.: Այսպէս է դատում «ռէալիստ»-ը, առանց մտածելու, որ Հայաստանը կարող էր այլ ճակատագիր ունենալ, որ գաղութներում ո՛չ մէկ ազգային մշակոյթ կարող է զարգանալ եւ ո՛չ մէկ համրանք պահել, որ առանց ռազմաքաղաքական ոյժ ներկայացնելու՝ ո՛չ մէկ պետութիւն կարող է մեզնով հետաքրքրուել: Հայկական «ռէալիզմ»-ը միշտ էլ եղել է եւ է՛ մեր ժողովուրդի տկարութեան պոչը, որ միշտ էլ քամել է օտարից եւ արիւնոտուել. նա մի՛շտ էլ հոգեւոր մուր է ցանել մեր կեանքի վրայ եւ ստերոտել մեր պատմութիւնը: Հայոց ողբերգութիւնը պայմանաւորուում է այս ազգի մանր, միայն առօրեայի իմաստով գործնական խելքով: Դարեր անընդհատ հայը ճարտարօրէն հաց հանեց իր բարձրաւանդակից եւ կշտացրեց իր ոսոխներին, մի վայրկեանով վտանգից խուսափելու համար՝ նա վար իջաւ իր լեռներից եւ երկրի ռազմագիտական կէտերը յանձնեց քիւրտերին, մի վայրկեանով աւելի հանգիստ ապրելու համար՝ նա բռնեց արտագաղթի ճամբան:

Ինչո՞ւ այսպէս եղաւ:

Հայը երկու բան չընմբռնեց - իր բարձրաւանդակի արժէքն ու խորհուրդը եւ Մամիկոնեանների ցեղային կանչը:

Հայկական Բարձրաւանդակը - իրո՞ք դա ճանապա՞րհ է, ասպատակող ցեղերի կարաւանների ուղի՞, ինչպէս կրկնում ու թոթովում է պարտուողական հայը, «ռէալիստ»-ը: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Դա՝ նախ եւ առաջ բնական վիթխարի մի բերդ է եւ անառիկ բերդ: Օժտուած

հսկայակարկառ լեռնապատերով եւ բազմաթիւ վսեմատիպ կոներով՝ աշխարհը կարող էր զարկւել նրան եւ փշրւել. եթէ ցեղի ոգին խօսէր այդ տիտանական բարձունքներից: Գէոսոֆիական բարձր մի ճշմարտութիւն է, թէ աշխարհագրօրէն ամբողջական մարզերը ներկայացնում են բնական մի անհատականութիւն: Բնական անհատականութեամբ օժտւած երկրներում կենսաբանօրէն առողջ մի ցեղ կարող է քաղաքական ուրոյն նկարագիր ստեղծել, որ ասել է՝ ո՛չ միայն ինքնապաշտպանւել, այլեւ՝ աշխարհակալել: Հայկական Բարձրաւանդակը բնական մի անհատականութիւն է, ինչպիսիք են, օրինակ, Իրանը, Կենտրոնական Ռուսաստանը, Բրիտանական Կղզիները եւն.: Իւրաքանչիւր բնական անհատականութիւն ունի իր բնաբեւեռը եւ իր բնակորիզը: Եթէ այս կորիզը ազգագրօրեն ամբողջական է եւ տւեալ ազգը կենսահոգեբանօրէն առողջ՝ նրա քաղաքական ոյժի ծաւալումը դառնում է անխուսափելի. ազգօրէն առողջ օրգանիզմները մի՛շտ էլ ծաւալւում են: Եթե այդ բնակորիզն ազգագրօրէն խոցւում է եւ տւեալ ազգը ի վերջոյ կործանւում՝ գիտցէք, որ նա կենսաբանօրէն եւ հոգեբանօրէն փտախտաւոր մի ընկերութիւն է եղել, ընկերային մի հաւաքոյթ միայն եւ ո՛չ թէ ցեղակամ եւ առողջ մի օրգանիզմ. ազգօրէն հիւանդոտ օրգանիզմները մի՛շտ էլ կծկւում են:

Այո՛, ահագին առաւելութիւնների հետ, Հայաստանի բնութիւնն ունի մի քանի թերութիւններ. օրինակ, իր գետային կենտրոնախոյս սիստեմը, իր լեռնագօտիների ներանջատական մոլուցքը, իր եզերական կիրճերը: Հակահոս գետերը միշտ էլ առաջ են բերում տնտեսական եւ քաղաքական պառակտում: Օրինակ, Գերմանիոյ եւ Աւստրիոյ անջատումը պայմանաւորւում է Հռենոս-Էլբա-Օդեր-Շպրէի (միով բանիւ հիւսիս-արեւմտընթաց ջրերակների) եւ Դանուբի (հարաւ-արեւելընթաց) հակահոս ընթացքով: Բայց ցեղերի հանճարը նրանում չէ, որ նրանք յարմարւեն միջավայրի բնական պայմաններին, այլ որ այս պայմանները պատշաճեցնեն իրենց գոյութեան:

Հայութեան ցեղօրէն արթուն տարրի մէջ պատմական ամբողջ անցեալում նկատելի է պատշաճեցման այս ճիգը: Արաքսն ու Արածանին հակահոս են, բայց Այրարատն ու Տարօնը չշեղւեցին համահայկական ուխտից - եւ հայոց պատմութեան միակ փայլուն գիծը Տարօնի հայրենանւէր զինակցութիւնն է Այրարատին: Եւ այսքանը միայն: Ինչո՞ւ նոյն ոգին չիշխեց բովանդակ բարձրաւանդակում: Ինչո՞ւ հայը չկարողացաւ յաղթահարել իր գետերի քմահաճոյքը, իր երկրի ներանջատական բնութիւնը:

Պատճա՞ռը.

Հայը չհասկացաւ Մամիկոնեանների ցեղային կանչը: Նա ապրեց աւելի իբր ժողովուրդ, քան թէ իբր ցեղ:

Առաջին հայ անունը, որ յիշւում է Դարեհի արձանագրութեան մէջ, դա Դատարսէսն է, «Դարեհի ծառան», այսօրուայ ըմբռնումով՝ «ռէալիստ» հայը:

Դաւեր Տիգրան Մեծի շուրջը - գարշապարից եւ թիկունքից, որդիներից եւ ազգականներից:

Արշակունիները չկարողացան ազատւել, Փաւստոսի որակումով՝ «շնաբերան» Փիսակներից, Հայր Մարդպետներից, Մերուժաններից:

Եղիշէի ասելով՝ իդէալիստ Մամիկոնեանների հետ Հայրենիքի համար ոտքի ելած «ուխտապահ» բանակի թիւը 66 հազար էր միայն, մինչ ռէալիստ հայերը 60 հազարով խախտեցին ազգային ուխտը:

Մամիկոնեանների վերջին օրհասական կանչին արաբների դէմ՝ փոխանակ 180 հազար հայերի՝ արձագանքեցին միայն 18 հազար:

Եւ վերջապէս մօտաւոր անցեալում ճրագով չէի՞ն փնտրւում հայդուկները եւ ամէն քայլափոխում չէի՞ն հանդիպում ռէալիստը, կրաւորականը, անտարբերը, ծաղրածուն, ողբերգուն, սարսափահարը, շահամոլը, խորամանկը, վախկոտը, հաշւետեսը եւ դաւաճանը:

Այսօ՞ր. այսօր սակա՞ւ են նրանք, որոնք ո՛չ միայն ցեղի կանչից են սարսափում, այլեւ «ցեղ» բառից:

Մարդն իր համար ճակատագրական մի անասուն է, կենդանական մի անցում, եւ նրա գոյութիւնը արժէք է ստանում միմիայն աստուածայինի հետ հաղորդակից դառնալու տենչով:

Մենք չենք ճանաչում այլ կերպ եւ կամուրջ մարդու եւ Աստծու միջեւ, քան ցեղը:

Ցեղը՝ դա ո՛չ միայն Աստուծոյ շունչ է, այլեւ յաւիտենականութեան ուղի:

Կարելի է եւ առանց ցեղզգացութեան ապրել, բայց երբե՛ք ստեղծագործել յաւիտենականութեան ճամբին, որով եւ պատմութիւն երկնել:

Հայոց պատմութիւն - դա երկունքն է արմենական ցեղի ոգու:

Հայկական Բարձրաւանդակի ճակատագիր՝ դա հետեւանքն է՝ հայ ժողովրդի հոգեւոր ցեղաթափութեան:

Ի՞նչ ես մտածում, տարագի՜ր հա՛յ:

Դեռեւս դու շարունակում ես մնալ կէս-ժողովուրդ, կէս-ազգ, կէս-ընկերվարական, կէս-աշխարհաքաղաքացի փերեզակ:

Դեռեւս դու կէս-«Ես» ես, կէս-մարդ, կէս-բարի եւ կէս-չար:

Դու անկայուն ես, քմահաճ եւ փխրուն. դու դեգերում ես քեզնից դուրս, դու կորցրել ես ինքդ քեզ:

Ի՞նչ ասաց մարդկային հանճարը.

Գէոթէն ասաց.

«Կազդուրում դու ձեռք չես բերի, եթէ նա չի բղխում սեփական հոգուց»:

Ջննե՞լ ես հոգուդ խորին անդունդները, տեսնելու, թէ ի՞նչ կազդուրիչ ոյժեր կան այնտեղ քնած:

Գիտե՞ս ինչ բան է ցեղը - ոգուդ այդ ովկիանը՝ անծանօթ:

Մի օր խռովե՞լ ես այդ ովկիանը, նայե՞լ ես երկնքին եւ գոյութեանդ ամբողջ ոյժով զարկե՞լ ես հոգուդ կայծքարը:

Լսե՞լ ես Մամիկոնեանների կանչը, դարձե՞լ ես զայրոյթի աղաղակ.

«Արթնացի՛ր, Հայաստա՛ն»:

Երբ հովիւն է քնած՝ գայլը կը գրաւի փարախը:

Ցեղը քնած մնաց եւ Հայկ. Բարձրաւանդակը դարձաւ թշնամու տուն:

«Արթնացի՛ր, Հայաստա՛ն»: Գիտե՞ս ինչպէս է արթնանում խայթւած հպարտութիւնը, ինչպէ՞ս յանկարծօրէն մոխիրի տակից բորբոքւում է կրակը:

Կորա՞ծ է այլեւս Հայկական դատը. աշխարհը կարող է ասել՝ այո՛:

Բայց մենք կասենք - Հա՛յ, տո՛ւր ցեղօրէն արթնացած մի սերունդ, զարկող ու զարկելով ստեղծագործող մի սերունդ, եւ պատմութիւնը քեզ պիտի վերադարձնի քո երկիրը:

«Ցեղ եւ Հայրենիք», 1936թ., թիվ 2

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ՊԱՅՔԱՐԸ

Հայկական Բարձրաւանդակի դարաւոր պայքարը մտել է նոր մի փուլի մէջ. խորացել են պատմական կնճիռները, խտացել են դարերի բոլոր զգացումները, բեւեռացել են ցեղերի գոյութեան կռահումները. եռում է կեանքի կաթսան եւ մօտ է ժամը, երբ նա կը պայթի:

Պատմութիւնը յաճախ է երկընտրանքներ հասունացնում. ժամանակի հոլովական զօրոյթը, իրերի տրամաբանութիւնը յաճախ են հարցերը յղկում եւ անհրաժեշտականութեան թափով ու երանգով դնում ազգերի առջեւ՝ «կա՛մ - կա՛մ»:

Ուր սուր հակասութիւններ կան՝ այնտեղ հայ պատմական առաջընթացների յղութիւն, դրութիւնը յեղաշրջելու խռովք: Ուր իրարամերժ նպատակներ կան, իդէալների խաչաձեւում, նաեւ կուտակւած ատելութիւն, արեան հետքեր, նախճիրների յիշողութիւն՝ այնտեղ անխուսափելի է բաղխումը:

Հոգով սպառւածները կարող են մոխիր ցանել իրենց գլխին, յիմարները՝ «խաղաղութիւն» զառանցել, բոլշեւիկները՝ «հայկական հարցը լուծւած» համարել, բայց պատմութիւնն առօրեայ տրամադրութիւններից տարբերւում է նրանով, որ նա քայլում է դարերի գծով:

Արի-արմենականների եւ մոնգոլ-թուրքերի հակամարտութիւնը - դա հազարամեակների ժառանգութիւն է: Հայկական Բարձրաւանդակի պայքարը - դա դարերի առեղծւած է:

Ի՞նչ է կատարւել մեր օրերին: Մեր օրերին այդ առեղծւածը մօտեցել է լուծումի:

Մի կողմից՝ Միացեալ Հայաստանի երազը, միւս կողմից՝ թուրքերի պաշարած Այրարատը:

Մի կողմից՝ տարագիր հայերի ներգաղթի տենչը, միւս կողմից՝ կիսամայի թուրքաց Հայաստանը:

Մտքի սովորական հակասութիւններ չեն սրանք, այլ՝ գոյութեան: Դատողութեան օրէնքով չեն հասունացել դրանք, այլ՝ էութեան, բնազդների, զգացումների յղութեան ոյժով: Դասակարգերի, կրօնների, տնտեսական շահերի հակամարտութիւն չէ դա, այլ՝ հայրենիքների եւ ցեղերի:

Ի՞նչ է ասում իրերի տրամաբանութիւնը.

Խ. Հայաստանում մէկ քռ. քմ.ի վրայ՝ 40, իսկ Հայաստանի թուրքապատկան նահանգներում՝ միայն 8 մարդ:

Հայկ. Բարձրաւանդակի 84 առ հարիւրը թուրք-թաթարներին եւ միայն 13 առ հարիւրը՝ հայերին:

Կամ այն 8-ը, կամ այս 13-ը. երկուսից մէկը պիտի յաղթահարուի:

Ի՞նչ է ասում ոգիների տրամաբանութիւնը.

«Արթնացի՛ր, Հայաստա՛ն»:

Հայ ժողովրդի ողբերգութիւնը նրանում է, որ արեւ է երգում («Արեգակն արդար»), բայց քնամոլ է («Ի ննջմանէ ծանրութեան»), իդէալիստ է, բայց դրամատենչ, հայրենասէր է, բայց անձնապաշտ, իմացական է, բայց ոչ կռահող, խելք ունի, բայց ո՛չ երեւակայութիւն, սիրում է գիտութիւնը, բայց ծուլանում է նրանից օգտուել, գոռոզ է, բայց յարմարւում է նաստութեան, քաջ է, բայց խորտակումի զգացում չունի, խիստ է, բայց անկարգապահ, երազատես է, բայց ներկային գերի, ոյժի պաշտամունք ունի, բայց ոչ հզօրութեան կամք, կենսաբանական զօրութենականութիւն ունի, բայց ոչ կազմակերպական հակում, մշակութային տենչ ունի, բայց ոչ քաղաքական կորով, արդարամիտ է, բայց ոչ ճշմարտասէր, ցեղ է, բայց գերադասում է ժողովրդի բարոյականը:

Զգացումների շփոթ է հայ ժողովուրդը, շուռ եկած էութիւն:

Իսկ թուրքը - դա հայ ժողովուրդի հակապատկերն է՝ կենսաբանական տկարութիւն եւ ոյժի ծարաւ, անհանճար ոգի եւ քաղաքական կամք, անմաքուր սիրտ եւ գրաւիչ լեզու, բութ միտք եւ կարգապահական հակում, վախի զգացում եւ խորտակումի մոլուցք:

Հայը խորքով է արժէքաւոր, թուրքը՝ մակերեսով, նա էութեամբ է բարձր, սա՝ արտայայտութեան ձեւով: Հայը հոյակապ ցեղ է եւ անպիտան ժողովուրդ, թուրքը ստորին ցեղ է եւ սքանչելի ժողովուրդ:

Խանդավառուե՞նք, երբ Հայկական Բարձրաւանդակում հայերը դեռեւս համեմատական մեծամասնութիւն են կազմում:

Ընկճուե՞նք, երբ Անատոլիան թուրքերի համար մարդկային շտեմարան է, երբ թուրք եւ թաթարները հայերից 5-6 անգամ աւելի են, երբ թուրքերը պետութիւն ունեն եւ բանակ:

Առարկայական տեսակներ են սրանք, որոնք կարող են ե՛ւ բախտորոշ դեր խաղալ, ե՛ւ մոխիր դառնալով՝ քամուն տրուել:

Ժողովուրդը՝ դա միշտ էլ ներկայապաշտն է, իդէալի եւ մեծագործութեան թշնամին, որ իր հացի հետ օրւայ մանր փաստերն է ծամծմում: Դա անհաւատ «ռէալիստ»-ն է, որ չի հասկանում հակասութիւնների ոյժը՝ յեղաշրջուած ոգին յեղաշրջում է փաստերը եւ նրանց դասաւորումը:

Տայքի Շտէ գիւղում, Վահան Մամիկոնեանը 40 զինուորներով ոչնչացրեց թշնամու 4000-նոց գունդը:

Թուրքիայում յաճախ մի քանի կիսասատակ ոստիկաններ հայկական զանգւածները քշեցին դէպի աքսորի զարհուրանքը:

Պատմական գործօնների խառնուրդը մի բան է, որից թւագիտութիւնը ուղիղ եզրակացութիւն հանել չի կարող:

Յաղթում է ո՛չ թէ նա, ո՛վ փաստերի եւ նրանց հետեւանքների մասին է մտածում, այլ նա, ո՛վ գործում է եւ եզրակացութիւնը թողնում պատմութեան:

Թւով սակա՞ւ ենք - բայց ահա՛ գիտութիւնը, որ կրկնապատկում է մարդկային ոյժերը:

Հոգով տկա՞ր ենք - բայց ահա՛ արմենական ցեղը, որ կենսաբանական ոյժի անսպառ աղբիւր է, կորովի շտեմարան:

Մինչեւ այժմ ինչո՞վ յաղթեց մեզ թուրքը. իսլամի, քիւրտի, Եւրոպայի հակամարտութեան, գերմանացիների, դաշնակիցների, բոլշեւիկների միջոցով:

Ինչո՞ւ այս բոլորը թուրքին նպաստեցին. որովհետեւ մեր մէջ արմենական ցեղը չտեսան, այլ՝ հայ ժողովուրդը:

Ի՞նչ է հայ ժողովուրդը. դա մի բան է, որին Բերլինի Վեհաժողովում խղճահարութեամբ ծաղրում են եւ դեռեւս տասնեակ տարիներ նրանից քրիստոնէական վշտով լեցուն հառաչագրեր ստանում, որին դարեր անընդհատ խոշտանգում են եւ օսման. սահմանադրութեան օրը՝ մի ժպիտով սիրտը գրաւում, որին անկախութիւն են խոստանում եւ կոտորել տալիս, որին թուրքերի օժանդակութեամբ խորտակում են եւ մոլեռանդ բոլշեւիկ դարձնում, որին Լոզանում ձեռնունայն դուրս են նետում եւ անպատիժ մնում, որին ներգաղթ են խոստանում եւ իր հոգեւոր հայրենիքից, իր ցեղային բարոյականից եւ իդէալներից կտրում:

Եթէ այս ժողովուրդն է, որ իր քաղաքական յիմարութեամբ, իր հոգու աղքատութեամբ, իր կոտրտւած կամքով, իր մանր հաշիւներով, իր հատւածական տրամադրութիւններով, իր եսականութեամբ, իր անկայուն բարոյականով, իր զգացումների խեղճութեամբ, իր սրտի ծուռ բաղձանքներով, վաղւայ օրհասին, կանգնելու է թուրքին առջեւ՝ Հայաստանի կնճիռը հիմակւանից լուծւած համարեցէք. նա յաւիտենական Թուրան է, Թուրանի կամուրջը եւ միջնաբերդը:

Բայց կա՛յ արմենական ցեղը, որ այսօր իր բոլոր դարերի խռովքն է ապրում. յաւիտենական ա՛յն ոյժը, որ այսօր թէ վաղը պիտի վարարի մեր էութիւնը:

Արժէքների ուսմունք չէ դա, այլ՝ ինքնահզօրացման տենչ: Քաղաքական դեգերում չէ դա, այլ՝ ոգու կենտրոնացում: Խնդրանք չէ դա, այլ՝ հրաման: Նահատակութեան քարոզ չէ դա, այլ՝ կենագործումի

կամք: Ճակատագրին հնազանդելու պատգամ չէ դա, այլ՝ պայքարի կարօտ: Նահանջ չէ դա, այլ՝ յարձակում:

Հասունացել է Հայկ. Բարձրաւանդակի առեղծուածը եւ վերջին, օրհասական կռիւը անխուսափելի է:

Ո՞վ պիտի յաղթանակի: Նա՛, որ իբրեւ ժողովուրդ աւելի՛ ընդունակ է ինքնայաղթահարումի:

Ցեղի կամքից յաղթահարուած ժողովուրդ - դա ո՛չ միայն ոգու անօթ է, այլեւ՝ կենդանի ուժակիր, ո՛չ միայն պատմագործ հանճար է, այլեւ՝ յաղթանակի սուր:

«Ցեղ եւ Հայրենիք», 1936թ., թիվ 3

ՎՏԱՆԳԻ ԳԻԾԸ

Թուրքերը տիրելով Փոքր Ասիային, Հելլեսպոնտոսից (Դարդանէլ) անցան Թրակիա, մտան Բալկաններ, խորացան մինչեւ Կենտրոնական Եւրոպայի դռները, առանց ձեռք տալու Վոսփորի շուրջը խցկուած բիւզանդական «կայսրութեան»: Նրանք նոյնիսկ խնամական-բարեկամական կապեր հաստատեցին բիւզանդական կայսրերի հետ: Գրեթէ մէկ դար (93 տարի) թուրքերն իրենց տիրապետութեան կենտրոնում հանդուրժեցին բիւզանդական կայսրութեան այդ կղզեակը, մի օր էլ (1453թ.) խորտակելու նրա պարիսպները եւ կայսրերի մայրաքաղաքում սուլթանների գահը հաստատելու:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Եթէ մի բոլշեւիկի հարցնենք, թէ ի՞նչ է կատարւում Խ. Հայաստանում, նա կը պատասխանի՝ չտեսնուած շինարարութիւն:

Իսկ եթէ լուրջ մի պատմագէտի հարցնենք, թէ ի՞նչ է կատարւում Խ. Հայաստանի շուրջը, նա կը պատասխանի՝ այնտեղ քաշւում է դեղին այն պարիսպը, որ մի ժամանակ թուրքերը քաշեցին Բիւզանդիոնի շուրջը:

Այն ժամանակւայ Բիւզանդիոնի սահմաններն էին. արեւելքից՝ Թուրքիա, արեւմուտքից՝ Թուրքիա, հարաւից՝ Թուրքիա, հիւսիսից՝ գրեթէ Վոսփորի լայնութեամբ մի գծով՝ Սեւ ծով: Խ. Հայաստանի սահմաններն են. արեւելքից՝ կովկասեան Թուրքիա (Ազրբէյջան), արեւմուտքից՝ Թուրքիա, հարաւից՝ Թուրքիա եւ թուրք-թաթարական Ատրպատական, հիւսիսից՝ Լոռւայ ձորի լայնութեամբ մի գծով՝ Վրաստան:

Մինչդեռ թուրքերը դարանակալում էին, բիւզանդացիք զբաղւած էին աստուածաբանական վէճերով, եւ օրհասական վայրկեանին Վոսփորից ո՛չ օգնութիւն ստացան, ո՛չ էլ փրկութեան ելք:

Այսօր նոյնանման օղակի մէջ ընկած հայերը վիճում են քաղաքական օրիենտացիաների եւ ընկերային խնդիրների մասին, կրքեր են հրահրում եւ դաւեր նիւթում, առանց մտածելու, որ Լոռւայ ձորի ճամբան կարող է մի օր փակւել:

Այս երեւոյթի բուն պատճառն այն է, որ մենք սիրտը թողած՝ զօռ ենք տալիս խելքին:

Բայց խելք, որի մէջ սիրտ չկայ, կենսաբանօրէն ի սպառ անպէտք է: Դա մտքի այլասերում է եւ հոգեւոր վայրէջք:

Ամէն բանից աւելի մեզ պէտք է ոգու նոր յղութիւն, ցնցում եւ խռովք:

Հայաստանի առեղծա՛ծ, հայոց գոյութեան առեղծա՛ծ - սրանք ցեղի կնճիռներն են եւ ո՛չ թէ այլասերուած մտքի:

Այլասերուած միտքը՝ դա անարիւն ճարպիկութիւնն է, փերեզակների զէնքը, ապահովութեան խաբկանքը:

Ցեղը՝ դա վտանգի կռահումն է, կենսաբանական թափը, յաղթանակի կարօտը:

Յաղթանակ երազել - նշանակում է կանխազգալ վտանգը: Վտանգի գիծը՝ դա յաղթանակի կամուրջն է:

«Ցեղ եւ Հայրենիք», 1936թ., թիվ 1

ՎՏԱՆԳ ԵՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Թնդանօթի միս, աննպատակ մահ - սա է վիճակւում անազատ ազգերին, եթէ դրանք ընդունակ չեն, վտանգից առաջ, նպատակ դնել իրենց հաւաքական կեանքին:

Գաղութում՝ ամէն հայ անձնանպատակ է - հոգեախտաւոր, որ պատրանքներով լեցրած իր փչակը համարում է գոյութեան ճակատագիրը:

Մեռնում են նրանք, որոնք իրենց ինքնանպատակ են դարձնում, աստուածացնում. եւ նրանք, որոնք կտրւում են նպատակից, Աստծուց:

«Նպատա՞կ» - «կայ այդ», կ'ասի ձեզ ամեն սոփեստ եւ ցոյց կը տայ մաշւած արժէքների փտած մի տախտակ, որի վրայ իր «ես»-ն է գրւած, իր «ես»-ի մանր գործը կամ մանր միտքը:

Հանճարները սպանւում են մանր գործերից, ժողովուրդները մեռնում են մանր առաքինութիւններից:

Ոգին է կեանքի խորքը, իսկ ոգու տարողութիւնը չափւում է նպատակի մեծութեամբ, ինչպէս բարոյականը՝ նպատակի իմաստով:

Նպատակի մեծութիւն եւ իմաստ չի ունեցել եւ չունի անցեղ հայը: Նա չունի բարոյական խառնւածք, նրա համար չկայ արժէքների աստիճանաւորում:

Ո՞վ իր անձը, իր մէկ ու կէս հոգիանոց «կազմակերպութիւնը» կը ստորադասի ազգի ճակատագրին:

Ինչո՞ւ է գաղութը նպատակների շփոթարան, արժէքների եւ բարոյականների խառնարան: Որովհետեւ հոգեւոր գաղութը, ամէն բանից առաջ, վտանգի մոռացումի ճիգ է: Ուր այս անկենսաբանական ճիգը կայ, այնտեղ շղթայազերծւում է հոգեւոր անիշխանականութիւնը: Դեռ հասկացողութիւն չկայ ա՛յն մասին, որ վտանգը սարսափի ուրւական, երեւակայութեան բանդագուշանք եւ մտացածին ահազանգում չէ, այլ ընկերային զգացումի առաջին ստեղծիչ ազդակը, կեանքի կենսաբարոյական դաստիարակը եւ պատմութեան մարզում այնքան անխուսափելի, որքան տեղատարափը՝ ամպումից, երկրաշարժը՝ հրաբխային ժայթքումից յետոյ: Քանի դեռ այս հասկացողութիւնը չկայ - չկայ կենսաբանօրէն նպատակայարմար ինքնապաշտպանութեան գործ:

Ի՞նչ է վտանգը - դա նաե՛ւ ոգու կռահում է: Ի՞նչ է յաղթահարումը - դա նաե՛ւ կռահող ոգու կանխումի ճիգի իմաստութիւն է:

Օրւայ հայ կեանքում կռահում չկայ - կայ միայն ենթադրութիւն. կանխումի մտահոգութիւն չկայ - կայ միայն պայմանների հաշւառում:

Ի՞նչն է անկարելին - պայքարը Հայրենիքի՞ համար: Ի՞նչն է կարելին - գաղութում «հայը՝ հայ պահե՞լ»-ը, «ներգա՞ղթ»-ը:

Ժողովրդի համար հնարաւոր են այն բաները, որոնցում ճիգի իմաստութիւն, նւիրումի եւ արիութեան պահանջ չկայ:

Ազատւել տկարութեան բանդագուշանքներից - ասել է ինքնապաշտպանութեան գործը հասկանալ ո՛չ թէ «պայքար այլասերումի դէմ», այլ «պայքար Հայրենիքի համար»:

Դրանով միայն հայը՝ յաւիտենօրէն հայ կը մնայ:

«Տարօնի Արծիւ», 1938թ., թիվ 2

ՅԵՂԸ ՄԻԱՅՆ ԿԱՐՈՂ Է ՓՈԽԵԼ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Մեր ոգու անհանգստութիւնը իր խորին պատճառներն ունի: Պատմութիւնը սովորութիւն չունի նոյնութեամբ կրկնուել, բայց խորհրդաւոր մի բան կայ այն փաստի մէջ, որ թուրքերն էլ այսօր նոյն ճանապարհներով են հետապնդում մեզ: Նրանք էլ Փոքր Ասիայից մտան Հայկ. Բարձրաւանդակը եւ հետեւելով Եփրատի եւ Արածանու ընթացքին՝ երկար ժամանակ կանգ առան (ու նոյնիսկ մտան ու դուրս քշուեցին) Արաքսի հովիտների դրան, եւ այսօր մէկ ոտքով արդէն տեղաւորուել են Արարատեան դաշտում:

Իսկ մենք բռնած խալդ-ուրարտացիների ճամբան՝ անընդհատ քշւում ենք դէպի հիւսիս:

Ո՞ւր ենք գնում, ո՞ւր է առաջնորդում մեզ պատմական իրերի ընթացքը: Այս հարցի սիրտը դեռեւս չկարողացանք լրջօրէն շօշափել:

Հայութեան այն մասը, որ «վտանգից» է խօսում, շարունակում է դեգերել իրենից դուրս: Նախապաշարուած պատմական տխուր յիշողութեամբ՝ նա իմաստութեան վերջին խօսքը համարում է աշխարհից հիասթափուել, եւ ինքն իրեն՝ չհաւատալ - մենք ոչինչ կարող ենք անել:

Իսկ այն մասը, որ չի հասկանում ազգերի ճակատագրի խորհուրդը, որ ընդունակ չէ ըմբռնել, թէ կիսւած Արարատեան դաշտը չի կարող Հայաստան լինել եւ մանաւանդ մնալ, որ «մատերիալիստական դիալեկտիկայից» թոթովելով պատմութեան կնճիռներն ըստ այս ուսմունքի հասկանալու չափ բանականութիւն չունի, «վտանգ»-ը համարում է ազգայնական ծիծաղելի բանդագուշանք եւ յոխորտում - Խորհրդային Միութիւնը կարող է ամէն ինչ անել: Բայց ո՞վ ասաց, որ թուրքն էլ ընդունակ չէ շատ բան անել:

Խորհրդային Միութիւնը կարող է ամէն ինչ անել:

Թուրքը կարող է շատ բան անել:

Բայց աշխարհի ողջ բրտութիւնը, բռնակալների գազանութիւնը եւ դիւանագէտների ամենանուրբ մաքիավելիականութիւնը չեն կարող մի բան անել - սրանք չեն կարող օրհասական վայրկեաններին ցեղերի ոգու շղթայազերծումը սանձել:

Իրերի տրամաբանութիւնը մեզ առաջնորդում է դէպի անկում: Բայց կայ նաեւ ոգու տրամաբանութիւնը, որ ճնշում է իրերի սիրտը, որ փոխում է պատմութեան ընթացքը:

Երբ ժողովուրդն է յօրանջում - մենք ոչինչ կարող ենք անել:

Երբ ցեղն է բարբառում - մենք կարող ենք շատ բան անել:

Ցեղի կոչը՝ դա մի՛շտ էլ հայրենիքի համար մեռնելու կոչ է:

Հայրենիքը՝ դա մի՛շտ էլ անմահ է, երբ նրա դատի համար մեռնելու պատրաստակամ սերունդներ կան:

Ցեղի ոգին - եկել է ժամը, երբ նա պէտք է շղթայազերծւի:

Մեզ հարկաւոր չեն կրաւորականութեան քարոզներ - կրաւորականութիւնը մի՛շտ էլ հոգեւոր գերեզմանափորութիւն է: Մեզ հարկաւոր չեն քաղաքագիտական մանուածապատ դեգերումներ - հայը քաղաքականութեան մէջ մի՛շտ էլ յիմար է: Զուր չէ, որ Տակիտոսն ու Ֆոն Լուչանը այսպէս են բնորոշել մեզ:

Մենք պէտք է օգտուենք մեր բուն կարողականութիւնից - հայը իր պատմական կեանքի բոլոր թռիչքներն արել է իր ոգու ցեղային տարերքի ոյժով:

Ցեղը՝ դա ե՛ւ արիւն է, ե՛ւ ոգի: Դա ե՛ւ կամք է, ե՛ւ բանականութիւն: Դա ե՛ւ առաջնորդ է, ե՛ւ ռազմիկ: Դա ե՛ւ խորհուրդ է, ե՛ւ ստեղծագործութիւն: Դա ե՛ւ տառապանք է, ե՛ւ յաղթանակ:

Ցե՛ղը միայն կարող է փոխել պատմութեան ընթացքը:

«Ցեղ եւ Հայրենիք», 1936թ., թիվ 1

ՀԱՅԿԱԿԱՆ ՈԳՈՒ ՈՒԺԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Եղէգնի փողից՝ ծուխ էր բարձրանում,
Եղէգնի փողից՝ բոց էր բարձրանում,
Եւ բոցերի մէջ մի պատանի վազում...

Այսպէս եղաւ հայ կամքի խորհրդանշան, հայոց պատերազմական աստուած Վահագնի ծննդոցը: Իր գոյստացման բնոյթով, նա յիշեցնում է հայոց աշխարհի երկրաբանական լինելիութիւնը: Վահագնածնութեան երգը մի խտացում է հայոց տիեզերածնական (կոսմոգոնիական) ըմբռնումի: Նա հրահոսների եւ երկրաշարժերի մի աշխարհի ժողովրդի դիցաբանախառն բնափիլիսոփայութիւնն է: Մտայղացման առիթը, պատմական ժամանակներում լճային մի խառնարանում տեղի ունեցած հրահոսային ժայթքման ահարկու մի տեսարանը տուած պիտի լինի:

Հոգեբանական տեսակէտից, սակայն, չափազանց հետաքրքրական է, որ հայն իր կենսաբանական կամքը պատկերում է ըստ իր հայրենիքի բնաւժական ներբնակ զօրոյթի, ըստ վերջինիս ժայթքողական արտայայտութեան: Սա լինելիական հոգեբանութիւն ունեցող մի էակի յղացումն է: Ուժական մի աստուծոյ ըմբռնումը կարող է միայն ուժական կամզգացութեամբ պայմանաւորուել:

Աշխարհի երեւոյթները բաժանեցինք կայական եւ ուժական ստորոգածների: Նաեւ ցեղերի հոգեբանութիւնը, նրանց պատկերումը յաւիտենականութեան մասին, նրանց գործնական եւ վերացական իդէալները կրում են կայական կամ ուժական նկարագիր: Ցեղերից ոմանք ունեն լինելիական զգացում, ոմանք՝ յառողական: Առաջինները նորատենչ են, վերջինները՝ աւանդապաշտ: Նրանք իրանց գոյութեան իմաստը կապում են ապագային, սրանք՝ անցեալին կամ ներկային: Նրանց յաւիտենականութեան իդէալը տեւական շարժումն է, սրանցը՝ յարակայութիւնը: Նրանց երջանկութիւնն ասում է «եղիցի՛», սրանցը՝ «կա՛յ»: Նրանք կեանքը զգում են կենսաբանօրէն, սրանք ապրում են մեքենայօրէն: Նրանք պաշտում են կենագործ ոյժը, սրանք՝ վերացական իմացութիւնը եւն., եւն.:

Նիցշէն փառաբանելով գերմանների լինելիական հոգեբանութիւնը՝

նրանց էութեան մէջ տեսնում է զրադաշտական կենսախինդ ոյժը, լինելիական հաճոյքը (werdelust) եւ այդ իսկ պատճառով, նրանց բարձր դասում ձեւապաշտ, մեքենայազգաց, հոգով քարացած եւ կայապաշտ ռոմաններից (այսպէս կոչւած «լատինական» ցեղեր): Ուրիշ շատերի հետ՝ Բերտրամը նոյն Նիցշէին համարում է գերմանական լինելիական նոր կրօնադիցաբանութեան մեծ առաքեալը, գերմանական ոգու ուժականութեան մարմնացումը, իսկ Լուտերի շարժումը՝ գերմանական լինելիական ուժականութեան յաղթական ծառացումն՝ ընդդէմ ռոմանական կայապաշտական-դաւանամոլական (դոգմատիկ) հոգեբանութեան: Գերմանական ոգու ուժականութիւնը ցայտունօրէն աչքի է զարկում նաեւ գերմաներէն յաղթ եւ ռազմաշունչ լեզուի մէջ - մի լեզու, որ աճեցողական ներբնակ զօրոյթ ունի, որ անընդհատ նորաստեղծւում է, մինչ ֆրանսերէնն օրինակ, կնքւած ու կաղապարւած է «քարացած» ձեւերի մէջ:

Սեղ է նաեւ մեր հայ լեզուի ուժական թափը: Ինչպէս մեր շատ հոգեգծերը, այդպէս էլ մեր լեզուի առանձնայատկութիւնները փիլիսոփայօրէն-հոգեբանօրէն տակաւին չեն վերծանւած: Բայց առաջին իսկ ակնարկից՝ նրանք գալիս են վկայելու, որ հայ ոգու անդունդը բազմախորհուրդ մի ուժաստան է:

Վահագնածնութեան երգի փշրանքը հայ քաջքային (դեմոնական) ոգու հուժկու արձանացման մի վկայագիրն է, հաւանաբար տիեզերածնական դիւցազներգութեան վիթխարի մի կոթողի կտորը:

Նարեկացին՝ հայոց ամենամեծ մտածող-բանաստեղծը, որի ոճն արդէն ահռելի ուժականութեամբ օժտւած վարար մի հեղեղ է, իր «առուղեկան յաւիտենական»-ի գաղափարով տուրք է տալիս իր ցեղի ուժապաշտ ոգուն: Դրանով նա ընդունում է, որ այս աշխարհում ո՛չ թէ յարակայութեան, այլ յարատեւ շարժման, անցումի սկզբունքն է յաւիտենական:

Նարեկացուց մի հազարամեակ յետոյ, «Ձախորդ օրեր»-ի հեղինակ Ջիւանին՝ հայ ժողովրդի մտածող-աշուղը, կեանքի լաւատեսութեան հիմքը տեսնում է հե՛նց նրանում, որ այս աշխարհում ոչինչ է կայուն, որ «փոփոխակի անցքեր շարունակ՝ կուգան ու կ'երթան»: Ուժապաշտ մարդ-էակի բարոյական երջանկութեան ընբռնում է սա, ընդդէմ կայապաշտական կենսահայեցողութեան բարոյականի քարոզիչներին, որոնք կեանքի յոռետեսութեան հիմքը տեսնում են անցաւորութեան մէջ, որոնք աղաղակում են «կա՛նգ առ, ակնթա՛րթ», որոնք սոսկալով մահից՝ կառչում են անփոփոխ, անանց եւ տենչազուրկ «հանդերձեալ»-ի բանդագուշանքին:

«Սասմայ Ծռեր» աւանդավէպը, որի հերոսներն առիւծ են պատառում, սրի մի հարւածով 40 գոմէշի կաշի, 40 ջրաղացի քար եւ նրանց տակ եղած հսկայամարմին Մսրամելիքն են կտրում, ճկոյթի մի հարւածով ապառաժ քարից կրակ են հանում եւ այլն, եւ այլն - այդ ուժական աւանդավէպը տալիս է յարատեւ շարժման (perpetuum mobile) պատկերը: Հերոսի (Սասունցի Դաւիթ) զայրոյթից քարերը թռչում են այնպիսի ուժգնութեամբ, որ նրանք «մինչեւ էսօր գնում են, հա՛ գնում»: Նրանք «գնում են» բոլորի, հազարամեակներ, միլիառամեակներ յետոյ եկող սերունդների համար: Այդ քարերը պոկւել ու նետւել են «պատմական» մի վայրկեանում, բայց նրանց չուն այլեւս «յաւիտենական» է, որովհետեւ, քանի այս աշխարհը կայ՝ «էսօր»-ը վերջ չունի: Անվերջանալի եւ անվախճան շարժականութիւն - ահա՛, սասունցի ուժապաշտ հայ լեռնականների ըմբռնումը յաւիտենականութեան մասին:

Այսպէս՝ ահարկու է հայ էութեան ուժական գիծը: Ապագայապաշտ է հայը. նրա կեանքի ամենաազդու մղօնը լինելիական տենչանք է, գալոց յաւիտենականի կարօտը: Իր խռովքոտ Հայրենիքի հրահոսային տարերքի պէս՝ գալիքի խորհուրդն է եռում նրա ոգում: Ուժականատիպ մարդ-էակի երկունք է սա - լինելիական հաճոյքի կորովը, որ կենսաբանօրէն առողջ ժողովուրդը օժտել է սերնդագործական բարձր կարողութեամբ, որ պատմութեան պարտադրած վտանգների կամրջին՝ արիւնլւայ հային մղում է խորհրդածել. «Վերջը լաւ կլինի»... Ե՞րբ, ո՞ւր է այդ վերջը. դա էլ պատմականօրէն թանձրացեալ ժամկէտ չէ, այլ յաւիտենօրէն լինելիական, մտանորոգ մի յոյս: Հայը կարող է ե՛ւ կրաւորական զոհ լինել, բայց նա մի՛շտ էլ մեռնում է հաւատով: Այս հաւատը նրան ներշնչում է ցեղային անմահութեան զգացում - զգացում, որ պայմանաւորում է կենսաբանական զօրութենականութեան արտասովոր թափով:

Լինելիական հայը - դա յաւիտենատենչ մարդն է, յաւիտենական հայը:

Դանուբեան մի նաւում, 1925 թւականի ամրան, կարդացի տարագիր մի հայու թողած հետեւեալ արձանագրութիւնը. «Աշխարհում ամէ՛ն բան կմեռնի, բա՛յց հայը՝ չի մեռնի»...

«Տարօնի Արծիւ», 1938 թ., թիվ 3-4

ՀԱՅՈՑ ԳՐԱՒՈՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ազգային անձնաւորութեան արձանացումը Հայ գրականութեան մէջ

Ապրումով խորհրդապաշտ, մտածումով բանապաշտ մի էակ է հայը:

Հոգեբանական այս գծերի փոխադարձ ազդեցութեամբ՝ հայու ցայտուն տիպը հանդիսանում է ո՛չ միայն մոլեռանդ գաղափարապաշտ, այլեւ՝ իր որդեգրած գաղափարների բանական ողբերգու:

Այսօրինակ մարդու էութիւնը լեցնում է՝ հոգեւոր տառապանքը:

Այդպիսին՝ տառապապաշտ է, որով՝ կրաւորական հերոսացումի տիպար:

Ներգործական բնոյթի ամէ՛ն ոգորում կամ արձանացում ծագում է նրա ոգու ովկիանի տառապագին խռովքից:

Այստեղ՝ ստեղծագործութեան արմատական ազդակը տանջանքն է - հոգեւոր ցաւը:

Տակաւին հեթանոս հայը տիեզերքն ապրում էր իբր ցաւի մի հանգոյց:

Տիեզերական երկունքից է ծնւում հայոց պատերազմական աստուածը - Վահագնը:

Հասկանալի է, որ տիեզերքի եւ սեփական մարտական կորովի մասին նման պատկերում ունեցող մի ժողովրդի ոգում, քրիստոնէութեան գաղափարականը պիտի գտնէր պարարտ մի դաշտ:

Անշո՛ւշտ, հայոց քրիստոնէացումը պայմանաւորւում էր, նաեւ, պատմականօրէն հասունացած գործնական մի պահանջով:

Նրանով՝ հայը ձգտում էր քաղաքականապէս ինքնուրոյն դառնալու բաղձանքին՝ հրատապ մի խնդիր, որի լուծման համար անհրաժեշտ էր Հայաստանի եւ հարեւան աշխարհակալ ոյժերի միջեւ - Հռոմ եւ Պարսկաստան - կրօնա-մշակութային արժէքների եւ հոգե-բարոյական ըմբռնումների մի անջրպետ ստեղծել:

Սակայն, Արեւմուտքի վերահաս քրիստոնէացմամբ, Հայաստանը հոգեպէս խրամելու այս խիզախ քայլի հետեւանքները դարձան խնդրական:

Տրդատն ու Լուսաւորիչը, տեսականօրէն, խնդրին մօտեցան՝ հմտութեամբ, գործնականում, սակայն, մատնուեցին՝ ճակատագրական մի սխալանքի:

Նրանք, ըստ արժանւոյն, ըմբռնել էին իրենց ժողովրդի հոգեբանութեան շեշտուած մէկ գիծը - հոգեկան կենտրոնացման բարձր ընդունակութիւն, սակայն անտեսել էին քրիստոնէական ուսմունքի յատկանշական մէկ տրամադրութիւնը - աշխարհաքաղաքացիութիւն (կոսմոպոլիտիզմ):

Իբրեւ աշխարհային ցաւի փիլիսոփայութիւն՝ քրիստոնէական վարդապետութիւնը պատշաճում էր հայկական տառապապաշտ ոգուն, որով՝ նոր կրօնը մեր ցեղի հոգեկան կենտրոնացման ընդունակութեան շնորհիւ, կարճ ժամանակում, կարող էր դառնալ ժողովրդական հոգեբանութիւն: Այդպէս էլ եղաւ:

Իբրեւ աշխարհաքաղաքացիական ուսմունք, սակայն, քրիստոնէութիւնը չէր համապատասխանում հայու քաղաքական երազանքներին եւ խորթ էր հայ ժողովրդի անջատական հոգեբանութեան:

Այս հակասութեան հետեւանքով քրիստոնէութիւնը, հենց սկզբից, Հայաստանի պատմութիւնը դրեց առեղծւածային մի շրջանակում եւ ծնունդ տւեց զանազան երանգներով եւ փոփոխակներով արտայայտւող կամ կերպաւորւող, բայց ամբողջ անցեալում մեր կեանքի ընթացքը դրոշմող ողբերգութեանց մի շղթայակցութեան. սկզբում՝ պայքար ազգի քաղաքական եւ հոգեւորական հաստատութեանց միջեւ, ապա՝ պայքար ազգայնացւած միաբնութենական եւ արեւմտեան ընդհանրական երկբնութենական դաւանական ըմբռնելակերպերի միջեւ, միւս կողմից՝ պայքար հայ-քրիստոնէական միարմատեան (մոնիստական) գաղափարապաշտութեան եւ պարսիկ-զրադաշտական երկարմատեան (դուալիստական) ներգործապաշտութեան միջեւ, ավելի՛ ուշ՝ պայքար քրիստոնէական բանապաշտության (ռացիոնալիզմ) եւ իսլամական զգայապաշտութեան (սենսուալիզմ) միջեւ, վերջապէս, մեր օրերում, պայքար ազգայնական-դաշնակցական գաղափարապաշտութեան եւ հակակամ ապազգայնական-մեծամասնական նիւթապաշտութեան միջեւ:

Այս բոլոր ոգորումները մէկ յայտարարի բերելով, յստակօրէն պիտի տեսնենք, որ հայոց ողբերգութիւնը պայմանաւորւում է ազգայնականի եւ աշխարհաքաղաքացիականի աններդաշնակութեամբ եւ հակամարտութեամբ՝ նախ՝ հայ ոգում եւ ապա՝ հենց դրա հետեւանքով՝ պատմութեան մարզում:

Նախաքրիստոնէական շրջանում էլ կար այս հակամարտութիւնը

- նա արտայայտւում էր իբր իրանական եւ հելլէնական մշակոյթների բաղխում - բայց ինչ քրիստոնէութիւնը սաղմնաւորուեց Հայաստանում՝ մինչեւ այսօր էլ, անյաղթահարելի անէծքի պէս ճմլում է մեր սիրտը:

Սկզբում, քրիստոնէական յորձանքը Հայաստանում առաջ բերեց ոգիների, արժէքների, ըմբռնումների, էութեանց մի շփոթ:

Ամբողջ Դ. դարը հոգեւոր տարանջատման, ներքին պայքարի մի շրջան է: Ժամանակի հայը օրօրւում է ազգայնականութեան եւ աշխարհաքաղաքացիականութեան միջեւ:

Եւ դրա հետեւանքը լինում է ա՛յն, որ մի կողմից Հայաստանի դռները բացւում են ասորա - յունական մշակոյթի որոշ արդիւնքների առջեւ - աշխարհաքաղաքացիութեան յաղթանակ - միւս կողմից՝ նւաստանում է երկրի քաղաքական դրօշը-ազգայնականութեան պարտութիւն:

Որքան էլ պարտւած, սակայն եւ այնպէս, ազգայնականութիւնը չի զինաթափւում, իսպառ, եւ յետ-Նիկիական շրջանում, հայութիւնը կանգնում է բարդ մի կնճիռի առաջ. ինչպէս անձնաւորւել. վերածւել սոսկական մտօք քրիստոնեայ մի էակի՞, թէ՞ նոր վարդապետութիւնը կաղապարել ըստ ցեղային նկարագրի, ստորադասաբար ներծուլել՝ նրան:

Դ. դարու վերջերում - աւա՜ղ, արդէն ուշացած-ընդնշմարւում է հայկական էութեան ամենացայտուն մէկ գիծը - իւրացւած գաղափարները ցեղայնացնելու կամ ցեղօրէն դրոշմելու գիծը: Մեծն Ներսէսը քրիստոնէական աշխարհաքաղաքացիութիւնը փոխարինում է ներցեղային բարոյականով, Աւետարանի կարեկցանքի ուսմունքը, գործնականում, կապում է իր ժողովրդի առողջապահութեան խնդրին եւ հարթում՝ քրիստոնէութիւնն ազգայնացնելու ուղին:

Ե. դարը գալիս է հաստատագրելու, որ հայկական էութիւնը գաղափարները ներծուլման ենթարկող մի զօրոյթ է եւ ո՛չ թէ օտարամուտ գաղափարների ազդեցութեամբ՝ տարրալուծւող մի տկարութիւն:

Եթէ Գ. դարու վերջերին հայերը իրենց ազգայնականութիւնը փրկելու յոյսով զինակցեցին քրիստոնէութեան - ապա, Ե. դարում, քրիստոնէութիւնը ինքզինքը փրկելու համար՝ ստիպւեց զինակցել հայ ազգայնականութեան:

Ե. դարու հայ կեանքի խորհուրդն ու իմաստը հենց ա՛յն յաղթանակի մէջ է, որ տանում է ազգայնացւած քրիստոնէութիւնը՝ քրիստոնէական աշխարհաքաղաքացիութեան դէմ - մի երեւոյթ, որ արդիւնք է հայ ազգի ցեղային հուժկու խառնւածքի, ցեղային ոգու ընդդիմադիր կորովի:

Բնորոշ է, որ մեզ ծանօթ հայկական գրականութիւնը մի զուգերեւոյթ է ցեղային ոգու ինքնարձանացման փորձի:

Է՛լ աւելի յատկանշական է, որ հայոց գրերի հեղինակը՝ Մեսրոպ, հայկական ռազմական կորովը խորհրդանշող Մամիկոնեանների հայրենիք, նւիրական Տարօնի մէկ որդին է եւ հայկական բանակի՝ մեկ սպան:

Իբր մշակութային գործիչ, Մեսրոպը պատմական խոշոր դէմք է, բայց նա աւելի՛ խորհրդաւոր է իբր հոգեբանական տիպ, իբր հայ ցեղի ներքին ուժականութիւնը մարմնացնող տիպար:

Եւ նրա մեծութիւնը հե՛նց այս վերջին հանգամանքի մէջ է, մինչ իբր պատմական անձնաւորութիւն նա շա՛տ ուշ յայտնւեց մեր կեանքի հորիզոնում:

Այլ, բոլորովին այլ կը լինէր մեր ճակատագիրը, եթէ նա մէկ դար առաջ ծնւած լիներ:

* * *

Մեսրոպի գործի յաղթանակից յետոյ, յունա-ասորական ազդեցութեան վտարումը Հայաստանից եւ յետ-Քաղկեդոնեան շրջանի դաւանական ոգորումները տրամաբանօրէն պիտի դառնային՝ անխուսափելի:

Քրիստոնէութիւնը ծուլւեց հայ ազգային ոգուն եւ հոգեբանական իւրայատուկ մի համադրումով՝ հայը հանդիսացաւ քրիստոնեայ մարդու մէկ տիպար՝«հայ-քրիստոնեայ»:

Այս համադրութիւնը - «հայ քրիստոնէական» - դարեր շարունակ դառնում է հայ գրականութեան նիւթը:

Դրա շնորհիւ՝ հայոց գրաբարեան շրջանի ամբողջ մատենագրութեան մէջ տիրական է ազգայնօրէն երանգաւորւած դաւանական գրականութիւնը եւ դավանօրէն երանգաւորւած ազգային պատմագրութիւնը:

Երկու գլխաւոր այս սեռերին զուգահեռ, բայց նրանց ստւերի ներքոյ, զարգանում են մի կրօնա-բանաստեղծական եւ մի փիլիսոփայական-գիտական գրականութիւն:

Ստեղծագործական այս բոլոր ստորոգածներն իրենց բոլոր ուղղութիւններով, ընդհանուր առմամբ, համակւած են յատկանշական մէկ միտումով՝ հաշտեցում կամ համադրում տրամապաշտութեան (լոգիզմ) եւ խորհրդապաշտութեան (միստիցիզմ): Որքան էլ հայոց մեծագոյն հանճարների մոտ խորհրդապաշտութեան կապանքների մէջ

մնալու՝ բռնազբօսիկ մի ճիգ է նկատւում, այնուամենայնիւ, հայ ստեղծագործութեան բնական շեշտը պահում է իր համադրական գիծը:

Համադրական այս բնաճիգն օտար քննադատներին մտածել է տալիս, թէ հայ ստեղծագործութեան էութիւնը կայանում է Արեւելքի եւ Արեւմուտքի մշակութա-քաղաքակրթական ոգորումները համադրելու փորձի մէջ:

Մեզ թւում է, որ այս եզրակացութիւնն արդիւնք է սխալ դիտողութեան. յամենայն դէպս հայ մտածողները (ո՛չ իսկ բանաստեղծները) ո՛չ նման գիտակցւած ճիգ են ցուցահանում, ո՛չ էլ գրական որեւէ մարզում, Արեւելքն Արեւմուտքին կարկատելու փորձով զբաղւում:

Մեր խորին համոզումով, հայ ստեղծագործութեան մէջ արտայայտութիւն ստացած համադրական ձգտումը հետեւանք է ո՛չ թէ Արեւելքն Արեւմուտքին զօդելու առարկայական, արտա-«ես»-եան պահանջի, այլ՝ մարդու ենթակայական, ներ-«ես»-այիս ոգորումների:

Արդէն պատմութեան վիճակած դառն ճակատագիրը հայ ստեղծագործին պիտի ստիպէր մարդկային ոգու տարանջատման ողբերգութիւնն աւելի՛ խոր կերպով ապրելու, որով նաեւ, մարդու ապրում-մտածումի բեւեռները ներդաշնակելու բաղձանքին աւելի՛ բուռն կարօտով ձգտելու:

Պատահականութիւն չէ, որ բոլոր ժամանակների հայ մեծագոյն հանճարը - Գրիգոր Նարեկացի - հենց այս խնդիրը դարձրեց իր երկասիրութեան նիւթը:

Նարեկացին, սակայն, այս կնճիռն ապրեց իբր սեփական ոգու ողբերգութիւն:

Հետեւա՞նքը:

Ահաւոր կերպով տքնեց նա եւ տառապեց. մտածող-բանաստեղծի հզօր երեւակայութիւնը սարսափներ վիժեց. ճի՛շդ է, մեծ երկ ստեղծեց, բայց դուրս չեկաւ «երկու հոգիների պայքարի» ջրապտոյտից:

Զգայական ու բանական աշխարհները, Բնականն ու Գերբնականը, մինչեւ վերջ էլ նրա համար մնացին հակադիր մարզեր, եւ Բացարձակին ապաւինելու, նրան ձուլւելու յոյսը՝ մխիթարութեան մի կիսամիջոց միայն, նոյնիսկ՝ մի պատրանք: Նարեկացու ողբերգութեան մէջ խորհրդապաշտական տարրի կիրարկումն արդիւնքն է ա՛յն զգացումի, թէ բանապաշտութիւնն անզօր է մարդու էութեան հանգոյցը լուծելու:

Յուսահատւելով մտածումից՝ նա դիմում է իր «երկրորդ», զգացական «ես»-ին եւ ճգնում խորհրդապաշտութեան միջոցով շարժման մէջ պահել տրամապաշտութեան ուժաթափ թեւերը:

Այդ փորձի հետեւանքով բանապաշտ փիլիսոփայի երկասիրութիւնն երանգաւորուեց խորհրդապաշտ բանաստեղծի գունեղ յոյզերով:

Արտաքին ներկը, սակայն, չապահովեց ներքին համադրումը, առեղծուածը մնաց անլուծելի եւ հեղինակի «ես»-ը՝ ողբերգօրէն պառակտուած:

Աւելի՛ն:

Մեզ թւում է, որ Նարեկացու ողբերգութիւնը բարդացաւ հե՛նց տրամապաշտութեան ու խորհրդապաշտութեան զօդման այս փորձի շնորհիւ:

Համադրական ճի՞գ... Բայց աշխարհի բեւեռների ներհակութիւնը, կեանքի անկամրջելի պառակտումը քչեր, շա՛տ քչեր ապրեցին կամ ապրում են դառնագին այնպիսի յոռետեսութեամբ, ինչպէս՝ մեր փիլիսոփայ-բանաստեղծը:

Մինչեւ այսօր Նարեկացուն հաւասարածին մի հանճար չունեցանք, որով՝ հայ գրաւոր ստեղծագործութեան մէջ, տրամապաշտութեան եւ խորհրդապաշտութեան ներդաշնակման խնդիրը մնաց մի հանելուկ:

* * *

Ահա՛, ներհոգեւոր համադրման այսորակ ոգորումներն են, որ օտար դիտողներին արեւելեան եւ արեւմտեան մշակոյթների ներդաշնակման փորձերի խաբկանք են տալիս:

Ասւեց, որ հայ ստեղծագործողները նման փորձ չեն արել եւ չէին կարող անել հետեւեալ պատճառներով.

ա) Հայկական Բարձրաւանդակը բնական իւրահատուկ մի մարզ է: Շրջակայ երկրներից այնտեղ թափանցող բնագծերն ենթարկւելով երկրի ներծուլական քմահաճոյքին, չեն կարողանում աղօտել Բարձրաւանդակի խստօրէն անջատական նկարագիրը:

Այս համեմատութեամբ Հայաստան հասնող հոգեւոր տեսակի հոսանքներն էլ կրում են ո՛չ թէ կաղապարեալ արժէքների, այլ՝ ձուլելի տարրերի բնոյթ:

Ինչպէս որ շրջակայ երկրների բնագծերն ենթարկւում են Հայաստանի բնութեան քմահաճոյքին - այդպէս էլ՝ օտարամուտ հոգեւոր տարրերը հայ հոգու արւեստագործ կորովին: Դրանք չե՛ն կերպադրւում, այլ՝ կերպափոխւում են, չե՛ն դառնում ստեղծագործական հիւսւածքի թելեր, այլ՝ օգտագործւում են իբր հում նիւթ, ցեղային արւեստի ինքնարծանացման համար:

Այսորակ առաջընթացն արդէն, ո՛չ է՛ համադրական (սինտետիկ), ներծուլական (ասիմիլատիւ):

բ) Բարձրաւանդակի արիա-արմենական ժողովուրդը շրջապատուած լինելով թշնամի ցեղերով, ստիպւած էր ընդդիմադիր ոգի սնուցանել դէպի օտարները, որով նաեւ՝ դէպի նրանց մշակութային բովանդակութիւններն ու արժէքները:

Ճի՛շդ է, քաղաքակրթութիւնը փոխանցւում է նաեւ թշնամութեամբ եւ նրա առաջատար միջոցներից մէկը հե՛նց միջցեղային պատերազմներն ու բաղխումներն են, բայց այստեղ խօսքը քաղաքակրթութեանց փոխանցման ձեւերի մասին չէ, այլ՝ արժէքների որդեգրման:

Կարելի է թշնամուց շա՛տ բան սովորել, բայց ընդդիմամարտի կողմից նրա մշակութային արժէքները, միշտ էլ ժխտւում են:

Արժէքների պայքարը տարբեր հոգեբանական տիպերի ճշմարտութեանց պայքար է, իսկ ո՛չ մէկ դէպքում մարտնչողն այնքա՛ն ժխտական չէ դեպի թշնամին, որքան սոյնորակ պայքարում:

Արեւելեան մշակոյթ ասելով հասկացւում է իրանական քաղաքակրթութիւնը, մոնգոլ-թաթարական կիսա-քաղաքակրթութիւնը եւ իսլամական կրօներանգ մշակոյթը, իսկ պատմութիւնը վկայում է, որ գրական կեանք ունենալուց յետոյ, հայերն այս բոլորի հանդէպ գարշանքից բացի այլ զգացում չեն ունեցել:

Այս իրողութեան պատճառն ա՛յն է, որ հայերը ցեղաբանօրէն մոնգոլներին բոլորովին խորթ են, արաբների հետ ոչ մէկ կապ չունեն, իսկ պարսիկներին կապւում են միայն հեռաւոր, գրեթէ, աղօտւած մի գծով:

Ցեղաբանական տարբերութիւնները պատճառում են հոգեբանական խորթութիւն, իսկ վերջինս՝ արժէքմբռնումների հակամարտութիւն:

Միւս կողմից, հայերը ցեղային բազմաթիւ գծերով կապւած են փոքր-ասիական հին ժողովուրդներին եւ յոյներին, ինչպէս նաեւ մէկ գծով՝ հրէական որոշ ցեղերին, եւ կապւած են արեւմտեան ազգերին, յատկապէս այսպէս կոչւած ալպեան ցեղին:

Քրիստոնէութիւնն արդիւնք էր հելլէնա-հրէական հոգեմշակութային ոգորումների - այս ժողովուրդների մշակոյթների փոխադարձ ազդեցութեան, որով՝ նրա որդեգրումն հայերի կողմից՝ հոգեբանօրէն, ըստ ամենայնի, հասկանալի է:

Է՛լ աւելի հասկանալի է հայոց ողբերգական սէրը դէպի արեւմտեան էութիւնը:

Արեւմտեան էութիւնը հայը պատկերում է իբր պայծառ եւ հարա-

զատ մի գիծ, արեւելեանը՝ մութ եւ խորթ, նա համարւում է մաքրութիւն, սա՝ ապականութիւն, նա՝ դրախտ, սա՝ դժոխք:

Արժէքաւորման այս խոտորնակ չափանիշը հոգեբանօրէն անկարելի պիտի դարձնէր արեւմտեան եւ արեւելեան էութեանց համադրման որեւէ ճիգ:

Էապէս, Արեւելքն ու Արեւմուտքը հայն ապրում ու զգում է իբր հակադրութիւններ:

գ) Կարեւոր մի ազդակ է նաեւ հայոց անհատապաշտական հոգեբանութիւնը: Սրանով է պայմանաւորւում հայոց ազգային անձնաւորման կերպը ստեղծագործութեան մարզում: Անհատապաշտը հոգեբանօրէն ձգտում է տարբերական տեսակի ինքնարձանացման: Նա չի հանդուրժում որեւէ իրաւախոհութիւն: Անգամ համամարդկային գաղափարներ որդեգրելիս, նա չի մոռանում ինքնածին մի ներկ տալ նրանց՝ իր էութիւնը շրջապատին խստօրէն հակադրելու մտահոգութեամբ: Քրիստոնէութիւնը լուսաւորչական դաւանութեան, ընկերվարութիւնը Հ.Յ. Դաշնակցութեան միջոցով ազգայնացնելու հայկական ճիգը հետեւանք է ինքնահակադրման այս հոգեբանութեան:

Տարբերելու այս հակման շնորհիւ, ինչպէս յայտնի է, հայոց ազգայնացուած քրիստոնէութիւնն ստացաւ ցեղի կրօնական անձնաւորման բնոյթ եւ իբր այդպիսին ո՛չ արեւմտեան եկեղեցիների դաւանութեանց որեւէ զիջում արեց, ո՛չ Արեւելքի հակաքրիստոնէական յորձանքներին տեղի տւեց, ո՛չ էլ զրադաշտականութիւնը կամ իսլամը քրիստոնէութեան հետ հաշտեցնելու փորձութեան դիմեց:

Այդպէս, նաեւ հայոց գրաւոր ստեղծագործութիւնն ո՛չ զուտ արեւմտեան հունով ընթացաւ, ո՛չ արեւելեան կաղապար ստացաւ, ո՛չ էլ արեւելեան եւ արեւմտեան ներհակ ոգորումների արդիւնքներն ի մի ձուլելու տենչանքն ունեցաւ:

Հայկական խորհրդապաշտութիւնը զերծ մնաց արեւելեան վայրագ գունագեղութիւնից, իսկ բանապաշտութիւնը՝ արեւմտեան յաճախ անգոյն սառնութիւնից:

Այս տարբերութիւնն ոմանց կարող է միջին մի ճանապարհ, եզրերը հաշտեցնող մի եղանակ թւալ, սակայն, նա մնում է տարբերութիւն, իսկ տարբերութիւններն ո՛չ համադրական կառոյց են ընձեռում, ո՛չ էլ՝ փորձ:

դ) Այս բանաձեւումներն աւելի լրացւում են, քան ժխտւում հայ ճարտարապետական արւեստի էութեան հմտօրէն ծանօթ Ստրժիգովսկու ա՛յն պնդումով, թէ «հայոց անձնաւորութեան» արձանացումը «յատկապէս ճարտարապետութեան մէջ է երեւան գալիս»

(Strzygowski, Die Baukunst der und Europa, հատոր Բ, էջ 582):

Եթե Ստրժիգովսկին հայ գրաւոր ստեղծագործութեան մէջ հայկական անձնաւորութեան դիմորոշումը չի նկատում, ապա՝ այդ պիտի բացատրել, թերեւս, այն իրողութեամբ, որ մեր գրական արդիւնքների մէջ քանակապէս ահագին տեղ են գրաւում կրօնական բանաստեղծութիւնն ու աստուածաբանական երկասիրութիւնները: Իրականում, այդ «անձնաւորութեան» մենք հանդիպում ենք հայ ստեղծագործութեան բոլոր բնագաւառներում: Անգամ՝ կրօնական բանաստեղծութեան մարզում, վրիպաբար միայն, կարելի է չնկատել նրա պայծառ դէմքը:

Ի՛նչ վերաբերում է աստուածաբանութեան, հարկ է հաստատագրել, որ գրական մի սեռ է, որում, ընդհանրապէս, աղօտւում են ազգային անձնաւորութեան առանձնայատկութիւնները:

Եւ սակայն, անգամ այս մարզում, հայ աստուածաբաններն աւելի՛ մեծ չափով ու խնամքով ծառայում են իրենց ցեղային անձնաւորութեան արձանացման գործին, քան քրիստոնէական միւս դաւանութեանց տեսաբանները:

Աւելի՛ն:

Հայ աստուածաբանութիւնն անողոք պայքար մղելով զրադաշտական եւ իսլամական կրօնների, ինչպէս նաեւ արեւմտեան դաւանութեանց դէմ, հանդիսանում է հայ ազգային էութեան պահպանման ամենանշանակալից ազդակներից մէկը:

Է՛լ աւելին:

Արտայայտչական իր կերպերով, հայ աստուածաբանութիւնը թողնում է ա՛յն անայլայլ տպաւորութիւնը, որ նա մեր ցեղային ուժականութեամբ (դինամիկա) պայմանաւորուած ազգային ընդվզական ոգու ամենահուժկու մի արձանացումն է:

Վիճական եւ ընդդիմամարտ իր նկարագրով, հայ աստուածաբանութիւնն էլ, իր հերթին, մեզ ներկայանում է ո՛չ թէ իբր համադրման գործ, այլ՝ իբր հակադրական ույժ:

* * *

Ամփոփելով այս հատուածում արծարծուած մտքերը, պիտի եզրակացնել.

ա) Հայկական Բարձրաւանդակը, դրսից թափանցող բնագծերը ներծուլելով, շրջակայ երկիրների նկատմամբ՝ կարկառում է իբր ինքնատիպ, հակադրական եւ անջատական մի բնամարզ:

բ) Շնորհիւ բնական այս իրողութեան ներազդեցութեան, հայը ժա-

ռանգել է անհատապաշտական հոգեբանութիւն, որով՝ շրջապատի նկատմամբ իբր ինքնատիպ, հակադրական եւ անջատական հոգեւոր էակ արձանանալու ընդունակութիւն:

գ) Արիա-արմենական ցեղագծերի փոխադարձ ազդեցութեամբ, հայու ապրումը դրոշմւում է չափաւոր խորհրդապաշտութեամբ, մտածումը՝ չափաւոր բանապաշտութեամբ, իսկ նրա էութիւնը՝ սոյն գծերի իրաւախոհութեամբ կամ նոյնիսկ՝ համաձուլմամբ:

դ) Այս գծերի շնորհիւ հայկական ստեղծագործութիւնն արեւելեան եւ արեւմտեան ոգորումների նկատմամբ՝ ցուցահանում է տարբերական շեշտուած ոգի եւ ի վերջոյ, ստանում է ազգայնօրէն անձնաւորեալ դիմագիծ:

ե) Այս անձնաւորումը յստակօրէն արձանանում է նաեւ հայոց գրաւոր ստեղծագործութեան մէջ:

«Խռովք», 1932թ.

ՀԱՅՈՑ ՆԱՒԱՍԱՐԴԱԿԱՆԸ

(տպագրվում է որոշ կրճատումներով)

Հին հայերի Նաւասարդ նշանաւոր աւուր հանդիսավայրն Այրարատ նահանգի Բագրեւանդ (Ալաշկերտ) գաւառի Բագաւան կամ Դիցաւան մեհենական աւանն էր: Բագաւանը գտնւում էր Ջիրաւ լեռնադաշտում՝ Արածանի գետի անմիջական եզրին եւ Նպատ կոնաձեւ լեռան ստորոտում: Այստեղ էր հեթանոս հայոց կենսատւութեան եւ պտղաբերութեան աստուածահայր Արամազդի եւ աստուածամայր Անահիտի «վանատուր», այսինքն՝ օթեւան պարգեւող, հիւրընկալող բագինը, որի փոխարէն այսօր, մենաւոր հսկայի պէս, խրոխտօրէն կարկառւում է (թուրքերի ձեռքում մնացած, բայց բարեբախտաբար տակաւին կանգուն) Ալաշկերտի Ս. Յովհաննու վիթխարակառոյց պատմական վանքը՝ «Իւչքիլիսէ»-ն:

Քիչ, շա՛տ քիչ բան է աւանդւած մեզ Նաւասարդական տօնախմբութեանց եւ խաղերի մասին:

«Աւանդւած»-ով ըստ էութեան չենք զբաղւի. պիտի բաւարարւենք մի քանի խորհրդածութիւններով՝ որոնք թերեւս պիտի կարենան մի քիչ լոյս սփռել տակաւին խոր ուսումնասիրութեան կարօտ նշանաւոր այդ հանդիսութեանց բովանդակութեան եւ էութեան վրայ:

1) Հայոց ամանորային Նաւասարդ ամիսը, մօտաւորապէս, համապատասխանում է հռովմէական օգոստոսին: Այս ամսի երկրորդ կէսին հասնում է Հայաստանի պտուղների թագուհի խաղողը, իսկ հունձքը՝ գրեթէ վերջանում է Արարատեան դաշտում եւ սկսում է Բարձրաւանդակի միւս զուտ ցորենաբեր հովիտներում, որպիսիք են օր. Ալաշկերտը, Անթափ-Մանազկերտը եւ Շիրակը: Այսպէս, Նաւասարդը Հայաստանի պտղաբերութեան ամիսն է: Նաւասարդեան հանդիսութիւնները տեղի էին ունենում երկրի պտղաբերութեան աստուածների բագնաւանում, որով՝ նրանք առաջին հերթին, կրում էին գոհաբանական եւ ընծայաբերական ցոյցի բնոյթ: Ուզում ենք ասել, որ Հայաստանի զանազան գաւառների ժողովուրդը, պտղաբեր աստուածներին իր գոհունակութիւնն արտայայտելու համար՝ բնական պարգեւներից բաժին էր հանում նրանց բագիններին: Քրմական դասն էլ այս ընծաների մի մասով կերակրում էր «ուխտաւոր» բազմութիւնները, միւսը՝ տնտեսում էր բագինի «Վանատուր» կոչումն արդարացնելու եւ տարւայ ընթացքում

հանդիպող ճամբորդներին օթեւանի հետ նաեւ սնունդ հայթայթելու: Հաւանական է, որ նաւասարդական ճաշկերոյթը տեղի կ'ունենար հեթանոսական հանդիսաւորութեամբ, խմբակցաբար եւ ուրախ մթնոլորտի մէջ: Քաղաքական շարժառիթներ էլ կարող էին դեր խաղալ, որպէսզի տարւայ մէջ գէթ մի քանի օրով, լեռներով կտրտւած գաւառների միմեանցից մեկուսացած ժողովուրդը, Հայաստանի կենտրոնում ապրէր իբր համացեղային մի միաւոր, իբր ազգային եւ քաղաքական մի ընտանիք:

2) Նաւասարդեան տօնախմբութիւնները տեղի էին ունենում հայոց արքայական նահանգ Այրարատի սահմաններում: Ասել է թէ նրանք կազմակերպւում էին Հայաստանի կենտրոնական իշխանութեան - արքաների - նախաձեռնութեամբ: Այս պարագան կասկած չի թողնում, որ հանդիսութեանց մասնակցում էին թագաւորները իրենց շքախմբով:

3) Հանդիսավայրը Բագրեւանդ գաւառն էր: «Բագրեւանդ» իրանական բառ է եւ նշանակում է «հարուստ պարգեւատու»: Միհրական այս տիտղոսը պայմանաւորւում է այս գեղեցիկ գաւառի բուսական եզակի հարստութեամբ: Գաւառը ցորենի նշանաւոր շտեմարան է: Բացի այդ՝ նրա զմայլելի մարգագետիններն ու շքեղ լեռնալանջերը մինչեւ աշուն մնում են կանաչ եւ առատ կեր են հայթայթում խաշնաւոր կենդանիների ահագին հօտերին ու նախիրներին: Կասկած չկայ, ուրեմն, որ հանդիսութեանց կարող էր մասնակցել երկրի բոլոր նահանգների այրուձին, ինչպէս նաեւ ժողովրդական հեծեալ բազմութիւնը, քանի որ բնութիւնը նրանց երիվարներին ապահովում էր առատ եւ ձրի կեր:

4) Այրարատ նահանգի մէկ գաւառը կազմող եւ Տայք, Բարձր Հայք, Տուրուբերան ու Վասպուրական նահանգների միջեւ տարածւող Բագրեւանդը գրաւում է Հայկական Բարձրաւանդակի կենտրոնական մարզը եւ բնական հանգոյցն է Տարօն-Այրարատ ճանապարհի, որով երկրի մի մասից միւսը անցնող ճամբորդների համար հանդիսանում է կենտրոնական կայանը: Ո՛չ միայն իր բուսական փարթամութեան, այլեւ այս կենտրոնական դիրքի շնորհիւ էր, որ «Վանատուր» բագինը սեփականելու պատիւը վիճակւած էր Բագրեւանդին: Բարձրաւանդակի ամենահեռաւոր ծայրամասերից իսկ, ձիով, 5-6 օրւայ ընթացքում կարելի է հասնել Բագրեւանդ: Որով՝ հանդիսական մի առիթով, նա կարող էր այցելւել ո՛չ միայն Հայաստանի կենտրոնական, այլեւ եզերական նահանգների բնակչութիւնից:

5) Հանդիսութիւնները տեղի էին ունենում հայոց ամառնային կենտրոնական բանակատեղի Շահապաւանի (այժմ՝ Դիադին) մօտերը: Այդտեղ էր մէկը հայկական բանակի ռազմափորձային գլխաւոր

վայրերից, որոնք հնում «ասպարէզ» էին կոչւում: Անկարելի է երեւակայել, որ Նաւասարդ ամսին, Շահապաւանի ասպարէզում մարզւող հայ բանակը չմասնակցէր այս համազգային տօնախմբութեանց եւ ռազմափորձային խաղեր, ձիարշաւներ կազմակերպելով՝ փայլ չտար նրանց:

6) Հանդիսավայրի մօտն են նաեւ իրենց հարստութեամբ, գրեթէ ամբողջ աշխարհում եզակի հանքային տաք ջրերը - Դիադինի այսօրւայ լքւած, անտէր, բայց նշանաւոր ցայտաղբիւր-ջերմուկները: Դժւար է կարծել, որ նաւասարդեան հանդիսականները նրանց հանդէպ անտարբեր կարող էին մնալ: Աւելի՛ն: Դժւար է չընդունել, որ թէ՛ Շահապաւանն իբր ամառնային բանակատեղի, թէ՛ Բագաւանն իբր նաւասարդական հանդիսավայր՝ իրենց դիրքը մեծ չափով կը պարտին նաեւ այս ջերմուկներին, որոնք, ո՛չ միայն համահայաստանեան, այլեւ համաշխարհային նշանակութիւն ունեցող բնական հրաշալիքներ են՝ փառահեղօրէն հանդիսաւոր, ճշմարտօրէն երազային տեսարաններ:

Այս ջերմուկների արծաթափայլ եւ կենանորոգ շատրւանները, որոնք 5-10 մետր բարձրանալով խոնարհւում են դէպի իրենց ծծմբազանգ, սպիտակ-մարմարագոյն բնակերտ տաշտերը, ապա միանում՝ Արածանու կապոյտ յորձանքին, Ծաղկանց լեռների իրաւամբ «անթառամ» ծաղիկները, որոնք մինչեւ աշնան կէսերը պահում են իրենց օդասփիւռ, դրախտազմայլ բոյրը, Բագրեւանդի օգոստոսեան վճիտ, ակնապարար արեւը, նօսր, ախտափարատ օդը եւ այլ զմայլանքները - ահա՛ սրանք են կազմում հմայիչ ա՛յն ոյժը, որի միջոցով Բագաւանի աստւածները իրենց որդիներին Հայկ. Բարձրաւանդակի բոլոր ծագերից հրապուրում էին դէպի Ձիրաւ լեռնադաշտը: Ըստ այսմ, նաւասարդեան հանդիսութիւններով հետապնդւում էր նաեւ առողջապահական նպատակ: Այս կէտը նշանակալից է նրանով, որ ենթադրել է տալիս, թէ հանդիսավայրում եղած խաղերը պատշաճեցւած պիտի լինէին առողջապահական պահանջների, այսինքն՝ մարմնակրթօրէն նպատակայարմար կանոնների:

7) Նաւասարդեան հանդիսութիւնները տեղի էին ունենում մարդկային ձիրքերի պարգեւատու աստւածների բագնաւանում: Այս պարագան իրաւունք է տալիս մեզ պնդել, որ այդ հանդիսութիւնները կրում էին նաեւ ձիրքերի ցուցահանդէսի բնոյթ: Որով՝ երգիչների, նւագածուների, բանաստեղծների, ձեռնածուների եւ այլ «տւածուրիկ»-ների հետ՝ հանդիսութեանց փայլ պիտի տային նաեւ մարմնական ոյժով, ճկունութեամբ եւ այլ առաւելութիւններով «օժտւածներ»-ը՝ ըմբիշները, նետողները, ցատկող-վազողները, լարախաղացները եւ այլն:

Առանց մարմնամարզական որոշ կանոնների կիրարկման՝ այդ ձիրքերը չէին կարող մշակւել: Յայտնի է, որ օր. լարախաղացութիւնը ո՛չ միայն վտանգաւոր, այլեւ բարդ մի արուեստ է: Նա յենւում է հաւասարակշռութեան սկզբունքին վրայ - մի սկզբունք, որն առանց լուրջ մարմնակրթանքի անկարելի է գործնականացնել:

Ի՞նչ էր կապը Աշտիշատի եւ Բագաւանի հեթանոս աստւածների միջեւ: Բագրեւանդը սկսւում է այնտեղ, ուր Արածանին փոխում է իր սկզբնական հիւսիսահակ ընթացքը եւ թեքւելով դէպի արեւմուտք՝ բռնում է իր բուն հովիտ Տարօնի ճամբան: Բնա-ռազմագիտօրէն այս գաւառը բացառիկ նշանակութիւն ունի: Դա է հանգոյցը Տարօնի եւ Այրարատի: Գաւառի արեւելքը տարածւում է Արածանու եւ Արաքսի ջրբաժան գիծը: Արածանու հոսանքն ի վեր կատարւած տարօնական հայերի պատմական չուն չէր կարող այստեղ ճակատագրական մի հանգրւան չարձանագրել: Այստեղից պիտի նետւէր Ուրարտուն նւաճելու մեծ քայլը. իսկ դա պիտի պահանջէր ոյժերի լարում եւ ամփոփում: «Վանատուր»-ը կայանի, օթեւանի աստւածութիւն է, իսկ տարօնական հայերն իրենց բախտորոշ կայանը հենց այդտեղ պէտք է որ ունեցած լինեն: Հոգեւոր իմաստով՝ դա Վահագնի, հայոց պատերազմական ոգու օթեւան - կազդուրարանն է, Աշտիշատի աստւածների ոյժի ճառագայթումը՝ Այրարատի սահմաններին: Հետագային, այստեղ, Տրդատը հանդիպեց Տարօնից յաղթականօրէն եկող Լուսաւորչի քրիստոնէավառ բանակին: Եւ խորհրդաւոր կապը, որ կար հեթանոս Աշտիշատի եւ Բագաւանի միջեւ՝ քրիստոնեայ հայութիւնը պիտի պահէր Ս. Կարապետի եւ Ս. Յովհաննէսի էակցութեամբ: Անկասկած, հայոց նաւասարդական ոգու կենտրոնը Տարօնն էր, եւ թերեւս հնագոյն նաւասարդականները տեղի ունեցած են այնտեղ. թերեւս դա է ենթագիտակցական պատճառը, որ քրիստոնէութիւնից յետոյ հայոց նոր նաւասարդականի՝ Վարդավառի գլխաւոր հանդիսավայրը կրկին դարձաւ Տարօնը:

Ասւեց, որ Բագրեւանդի Ս. Յովհաննու վանքը բարձրանում է «Վանատուր» բագինի տեղը: Միանգամայն տրամաբանական է ընդունել, որ քրիստոնէութիւնից առաջ, հայ լարախաղացների ձիրքերի պարգեւատուներն եղել են Բագաւանի աստւածները: Հետագային, այդ պատիւը Բագաւանի նոր տաճար Ս. Յովհաննու եւ Մշու Ս. Կարապետի էակցութեան շնորհիւ՝ փոխանցւել է վերջինին: Ուշագրաւ իրողութիւն է, որ հայ լարախաղացների տարազը, իդէալն ու շարժուձեւը չեն համապատասխանում քրիստոնէական ոգուն: Նրանց վհուկապաշտական համոզումների եւ պարամոլեկան թռիչքների մէջ կայ հին, հեթա-

նոսական մի գիծ, որի հետքերով մեր մտածումը ո՛չ թէ դէպի ճգնաւոր-մարգարէի անապատն է գնում, այլ՝ դէպի նաւասարդեան կենսախինդ առաւօտը:

Այս տեսլներից կարող ենք եզրակացնել, որ նաւասարդականները նախ եւ առաջ գոհաբանական-ընծայաբերական ցոյցեր էին, որով՝ նրանք կրում էին համաժողովրդական բնոյթ: Եւ որովհետեւ Հայաստանի ժողովուրդն երկրագործութեամբ եւ խաշնապահութեամբ էր զբաղւում, նրա համազգային տօնը պիտի ունենար գեղջկական-հովւերգական նկարագիր:

Թագաւորի, նախարարների եւ հայկական այրուձիի ներկայութիւնն ստիպում է մեզ ընդունել, որ տօնակատարութիւնը տեղի էր ունենում հանդիսաւոր որսագնացութեամբ եւ հեծելազօրային ռազմախաղերով:

Մարզարուեստն ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ կենսաբանօրէն նպատակայարմար շարժմանց կանոնների մի գումար:

Նաւասարդեան հայերն ունէի՞ն այսպիսի կանոններ:

Հայոց մարզականի համար բախտորոշ այս հարցումի հանդէպ պատմութիւնը մնում է լուռ. տրամաբանութիւնը, սակայն, ասում է՝ այո՛:

Պատմականօրէն յայտնի է միայն, որ հայերը նշանաւոր որսագնացներ եւ ձիավարներ էին: Նոյնպէս նրանք տալիս էին բարբարոս հսկաները խորտակող ախոյեաններ եւ մինչեւ մեր ժամանակները՝ ամենաճարպիկ պարանախաղացներ:

Որսարուեստը մարզական նշանակալից մի կերպ է: Նա պահանջում է ձիավարութեան, հետապնդումի, նետումի եւ հարւածումի վարպետութիւն: Ճի՛շդ է. սա ուղղակիօրէն չի մտնում մարզարուեստի բնագաւառում, բայց անուղղակիօրէն նպաստում է մարզարուեստի զարգացմանը:

Այրուձիական կազմակերպութեան արուեստը (որում հայերն այնքան հռչակւած էին) նախատեսում է ո՛չ միայն ձիավարական, այլեւ զինախաղական ճարպիկութիւն: Հայկական ձին նշանաւոր «օդապարիկ» նժոյգն էր, իսկ զէնքերը՝ հին ժամանակների պաղ ու ծանր գործիքները: Թէ՛ նժոյգի կառավարումը, թէ՛ ծանր զէնքերի գործածութիւնը պահանջում են մարմնական ոյժ եւ ճկունութիւն: Մարմնական ոյժը մարզանքի կենսաբանական աղբիւրն է, իսկ ճկունութիւնը ձեռք է բերւում մարզական կերպերի մշակումով, մարմնակրթանքով, մարմնամարզով:

Ախոյենական եւ մանաւանդ լարախաղացական արուեստներն արդէն պահանջում են մարզական բարդ կանոնների կիրարկում:

Այս մասին աւելորդ է երկարաբանել. հայ ախոյեաններն ու լարախաղացները մարդկային մարզական կորովի ամենափայլուն ներկայացուցիչներն են:

Ինչպէս տեսնում է, մենք տրամադիր ենք ընդունել, թէ նաւասարդական հայերն ուրոյն մի մարզարուեստ ունեցած պիտի լինեն: Այդ մարզարուեստը, թերեւս, զուրկ էր տեսաբանօրէն հիմնաւորուած ամբողջականութեան իդէալից: Նրա արտայայտութեան կերպերը, սակայն, մատնանշում են սքանչելիօրէն զարգացած գործնական կողմը: Նաւասարդական հայերը կենսախինդ մարդիկ էին, համակուած հովւերգական-ուժապաշտական հոգեբանութեամբ եւ նւիրուած «մարդկային առողջ հասկացողութեան» վրայ խարսխուած ու հեթանոսօրէն պարզ մի քաղաքակրթութեան:

Նրանք ո՛չ թէ բանականն ընդհանրացնող եւ հոգեւորը ճշմարտօրէն արժեքաւորող հանճարներ էին, այլ կամային-մարմնականը գնահատող գործնական տաղանդներ:

Այս գծերով էլ կնքւել է նրանց ո՛չ թէ համադրական, այլ կամքի եւ մարմնական ոյժի մշակման, ո՛չ թէ «կալոկագաթիական», այլ սոսկ «բիոլոգիական» մարզականը: Հայոց մարզականի զուտ կենսաբանական այս նկարագիրը համապատասխանում է հայ ժողովրդի լինելիական էութեան:

«Նաւասարդունիք»... այսպէս պիտի անւանել պատմական անցեալի, ներկայի եւ գալիքի (մինչեւ մեր ցեղի յաւիտենականը) ուժական եւ ուժապաշտ հայ տիպերը: Նաւասարդական հայն է առասպելաբանը Վահագնածնութեան, Տորք Անգեղի, «Ո՞հ, տայր ինձ»-ի, «Սասմայ ծռեր»-ի: Այս տիպն էին մարմնացնում Տրդատը, Արտաւազդը, Սմբատը... Մամիկոնեան մեծ զօրավարները... «Նալդրան» Մանուկն ու Աբուլ-բուհարայ Ալօն... հայ յեղափոխական փաղանգի ընտիր հայդուկները, որոնք իբր ախոյեաններ կամ ռազմավառ հսկաներ, ապաւինած իրենց մարմնական, հոգեւոր, կամային եւ բարոյական ոյժին, իջան պատմութեան հանդիսավայրը եւ մի քիչ արեւ, մի քիչ հպարտանք եւ ապրելու ահագին տենչ դրին անընդհատօրէն բեկբեկւող մեր ցեղի կրծքի տակ: Դրանք մեր սրտում բորբոքեցին մի հրդեհ, որի բոցը մինչեւ «էսօր» բարձրանում է, հա՛ բարձրանում:

«Տարօնի Արծիւ», 1938թ., թիվ 3-4

ՏԱՐՕՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՅԵՂԱԿՐՕՆՈՒԹԻՒՆ*

Քաղաքական աշխատանք տանել կարենալու համար, անհրաժեշտ է երեք գործօն.

1) Պատմական զգացում:

2) Կազմակերպուած ոյժ:

3) Ապագայատենչ խռովք:

Առանց պատմական զգացումի՝ խորք, որով ե՛ւ ստեղծագործական ներբնակ զօրութենականութիւն չունի որեւէ կազմակերպութիւն, առանց վերջինի՝ նպատակամիտ չէ որեւէ ապագայատենչութիւն: Աւելին. առա՛նց երեք այս գործօններու ներդաշնակութեան, չկա՛յ ընդհանրապէս, պատմաստեղծումի որեւէ իրական ճիգ:

Մեր ձախողանքներու բուն պատճա՞ռը - թերի չէ՞ր պատմական զգացումը, պակասաւոր չէ՞ր կազմակերպութիւնը եւ անորոշ չէ՞ր պատկերումը՝ ապագայի մասին:

Վերցնենք ապագան, ի՞նչ կ'ուզէինք - կեանքի, պատուի, գոյքի ապահովո՞ւմ, աւտոնոմիա՞, ֆեդերացիա՞, ընկերային յեղաշրջո՞ւմ, անկախութի՞ւն: Մենք անծանօթ էինք նպատակի տեմպերամէնտի օրէնքին: Նպատակի թովչանքը ստեղծագործական մեծ ոյժ է եւ այս ոյժը ազդու է, երբ նպատակի սահմանումը յստակ է եւ վճռորոշ: Բոլոր կարգի պատեհապաշտութիւնները առաջ կու գան նպատակի անստուգութենէն կամ այլազան նպատակներու ներքին բաղխումէն:

Դառնանք պատմական զգացումին, ի՞նչ բանին աւելի ականջ տուած ենք - մեր պատմութեան ձայնի՞ն, թէ՞ Պոլսէն, Թիֆլիսէն եկած հովերուն: Ի՞նչպէս կ'ապրէինք հայկական ողբերգութիւնը - աւելի իբր ներքի՞ն, թէ՞ իբր արտաքին պատճառներու գումար: Որո՞ւն կապած էինք փրկութեան յոյսը - հայ ժողովրդի ներքին կարողութեա՞ն, թէ՞ Եւրոպային:

Ի՞նչ էր կազմակերպութեան ոյժը - անհատներ, բայց ոչ զանգուած, խումբեր, բայց երբեք զինուած բազմութիւն: Պայմաննե՞րը - աննպաստ էին անշո՛ւշտ: Բայց յեղափոխութիւն ըսել է՝ նախ եւ առաջ պայմաններու յաղթահարում: Երբ չկայ այդ, անհատները հերոսական կը ստեղծեն, բազմութիւնները կը դառնան կրաւորական զոհ եւ յեղափոխութիւնը կ'անցնի աննպատակ:

Յեղափոխութիւնը եւ տարերային ոյժ է, եւ մտածումի սիստեմ: Տարերքով կը պայմանաւորուի ոգիի ընդհանուր շարժը, սիստեմով՝ կազմակերպութեան արտայայտչական թափը: Այսպէս, որովհետեւ կազմակերպութիւնը ամէն բանէ առաջ խառնուածք է, նկարագիր:

Ի՞նչն էր պատճառը, սակայն, որ հայ յեղափոխութիւնը ընդհանուր շարժի չվերածուեցաւ:

Սովորութիւն է պատճառները որոնել «իրական պայմաններու» մէջ: Բայց հնարաւո՞ր է ուղիղ ըմբռնում «իրական պայմաններու» մասին, երբ պակաս է պատմական զգացումը եւ յստակորոշ չէ նպատակը:

Հայ յեղափոխութիւնը յաջողեցաւ մէկ բանի մէջ - ան պանծացուց նահատակութեան ոգին: Մեծ նուաճում էր այդ - հերոսածին յղութեան, ճակատագիրը յաղթահարելու ուղիղ ճանապարհ:

Ո՞ւրկից կու գար այդ ոգին - ահա՛ թէ ի՛նչը գիտականօրէն ուսումնասիրուած չէր: Մենք հոգեգիտութիւն չմտցուցինք մեր շարժումին մէջ, չծանօթացանք մեր առաքինութիւններու աղբիւրին, եւ հետեւանքը այն եղաւ, որ նահատակութեան ոգին ի վերջոյ յանգեցաւ կրաւորական ոչնչացումի:

Հայ յեղափոխութեան մէկ այլ նուաճումը եղաւ փրկութեան տեսիլքը: Տեսիլք, բայց ո՛չ գործնական նպատակ: Ընկերային բովանդակութիւն ունեցող գործնական նպատակը նախ հանրապարտադիր է եւ միասեւեռ: Հայ յեղափոխութիւնը իր նպատակները հաշտեցուց քաղաքական վայրկեանի պահանջներուն, դարձաւ նպատակի պատեհապաշտ - հոս՝ ներքին պատճառը պատմական տխուր եզրակացութեան:

Տարբեր նպատակ կը հետապնդէինք Համիդեան օրերուն եւ յանկարծ կառչեցանք օսմանեան սահմանադրութեան համապետական նպատակներուն: Բոլորովին այլ պատկերում ունէինք սահմանադրութեան մասին եւ յանկարծ դրուեցանք ջարդի պատկերին առջեւ: Չէինք կռահած որեւէ արարատեան անկախութիւն եւ յանկարծ ունեցանք հանրապետութիւն: Նոր սկսանք քարոզել այն (Միացեալ եւ Անկախ Հայաստան), ինչ որ որդեգրած պիտի ըլլայինք 30 տարի առաջ, եւ յանկարծ նետուեցանք գաղութներ:

Իրօ՛ք, ողբերգական ճակատագիր - հակասութիւն պատմական ընդհանուր առաջընթացի եւ մեր նպատակներու, իրականութեան եւ մեր իդէալներու:

Պատճառագիտօրէն քննել այս երեւոյթը կը նշանակէ ո՛չ միայն վերծանել մեր պատմութիւնը, այլեւ գտնել մեր ճակատագիրը շօշափող հարցերու բանալին:

Անմիջապէս ըսենք, որ մտքի տառապանքէն ծնունդ առին երկու նոր շարժումներ - ցեղակրօնութիւնը եւ տարօնականութիւնը:

* * *

Մենք ունէինք կազմակերպութիւն - հակասութիւն չկա՞ր իր ընկերվարական ծրագրի եւ ցեղաշունչ գործի, իր մտաւորականի եւ ռազմիկի հոգե-աշխարհներու միջեւ: Կարդացէ՛ք Դաշնակցութեան ծրագիրը եւ կարդացէ՛ք անոր պատմութիւնը եւ դուք պիտի տեսնէք, որ չկայ ոգիի եւ արիւնի ներդաշնակութիւն: Ծրագիրը պաղ միջազգայնականութիւն է, պատմութիւնը խռովիչ, սրտառուչ հայկականութիւն: Ծրագրի մէջ լեզու առած է եւրոպական-ռուսական դասակարգային մտածումը, պատմութիւնը՝ յայտնութիւնն է հայկական ցաւի եւ հերոսական ոգիի: Այս հակասութենէն չտուժեցի՞ն յեղափոխութեան նպատակը եւ գործը: Ո՛ւր երկու ոգիներու պայքար կայ, հոն կայ ներքին տատանում, քաղաքական դեգերում եւ ձախողանք:

Ի՞նչն էր պատճառը այդ երեւոյթի: Մեր վերածնունդը թերի էր: Առաջնորդող լոյսը ամբողջովին չստացանք հայոց պատմութենէն, այլ նաեւ Եւրոպայի ընկերային շարժումներէն: Եւրոպայի ընկերային շարժումները իրենց միջավայրին յատուկ հոգե-տնտեսական յղութիւններ, ոգորումներ էին, մինչդեռ հայ երկրի եւ ժողովուրդի կեանքի պայմանները այլ էին: Մենք շեղեցանք Քրիստափորի «յաւելեալ արեան» տեսութեան գիծէն: Դա պատգամ էր, պատմական զգացումով օծուն խորին ծանօթութիւն ճակատագրի: Ռուսական 1905-ի յեղափոխութիւնը, օսմանեան 1908-ի սահմանադրութիւնը վարագուրեցին մեր աչքերը: Մենք կտրուեցանք ոգիի իրականութենէն: Հայոց պատմութեան ձայնը չմնաց անվիճելի առաջնորդի դերին մէջ: Եւ այդ եղաւ շնորհիւ այն իրողութեան, որ մենք անծանօթ էինք մեր վերածնունդը ճշմարտօրէն հոգեգծող գործօնին - տարօնականութեան:

Հոգեգիտօրէն մօտեցա՞նք հայոց պատմութեան ներքին տարերքին, բաղխեցի՞նք մեր ցեղի ոգիի դուռը, օրհասական կանչով ոտքի հանեցի՞նք բոլոր ժամանակները, իմաստասիրաբար փորձեցի՞նք վերծանել այն հարցը, թէ ինչո՞ւ սկիզբէն մինչեւ այժմ այդպիսին է տարօնական հայը - ցեղի գոյութեան պայքարի մէջ զուտ հայկական կրօնական խանդ դնող:

Եթէ կ՚ուզէք նորը ստեղծել, դիմեցէ՛ք ձեր պատմութեան հին ոյժերուն, խառնուածքի ա՛յն տարրին, որ անցեալի մէջ ստեղծագործ եղած է եւ յաւիտենական: «Վերածնունդ» կը նշանակէ պատմական ոգիի վերակենդանացում: Վերածնունդ չկայ եւ ո՛չ մէկ տեղ, ուր կը բացակայի իմացական տառապանք եւ զգացումի խռովք՝ անցեալը կենդանիօրէն հոգեգծելու եւ դարձնելու ներկայի առաջնորդը: Մեր «Վերածնունդ»-ի

մէջ գործեցին խորթ, հայոց պատմութեան անծանօթ տարրեր: Այդ էր պատճառը, որ յեղափոխութիւնը չդարձաւ խորքով՝ ազգային հոգեբանութիւն, արտայայտութեամբ՝ համահայկական շարժում:

Ի՞նչ կ'ուզենք մենք: Մենք կ'ուզենք իրար շղթայել, իրարմով լրացնել քաղաքական կորովի երեք անհրաժեշտ տարրերը - պատմական զգացումը, կազմակերպուած ոյժը եւ ապագայատենչ խռովքը: Առաջինի աղբիւրը տարօնականութիւնն է - հայոց պատմութիւնը վարող յաւիտենական ոյժը: Երկրորդը ինքը՝ Դաշնակցութիւնն է, ժամանակի համահայկական միակ կազմակերպուած ոյժը: Երրորդը՝ ցեղակրօնութիւնը, որ ապագայի տենչ է, ուղիղ նոր սերունդի:

Տգիտութիւնը եւ չարութիւնը միայն կրնան հակասութիւն կամ իրարամերժութիւն տեսնել երեք այս հոգեւոր բովանդակութիւններու միջեւ:

Հայը վաղուց կորսնցուցած է աշխարհը համադրաբար պատկերելու, որով իր որակները համադրօրէն օգտագործելու ընդունակութիւնը:

Քանի դեռ հոգենորոգաբար չենք վերակառուցած այդ ընդունակութիւնը, կիսատ պիտի մնան մեր բոլոր գործերը եւ ձախող՝ ճակատագիրը յեղաշրջելու փորձերը:

Ոգիի գործ է կազմակերպութիւնը. իսկ ոգին կու գայ ցեղէն: Կուգայ այնպէս, ինչպէս արիւնը: Մարդը ո՛չ միայն ֆիզիքական յատկանիշներու գումար մըն է, այլեւ հոգեկան գործօններու ամբողջութիւն մը: Զուգահեռականութիւն, ներքին փոխադարձ կապ կայ ա՛յն յատկանիշներու եւ այս գործօններու միջեւ: Ո՛չ միայն ժառանգականութիւնը, այլեւ պատմութիւնը, մշակոյթը ունին զարգացման իրենց ներքին «տրամաբանութիւնը»: Ժառանգականութիւնը նախ եւ առաջ տիպի եւ խառնուածքի փոխանցում է: «Տիպ»-ը ե՛ւ մարմնական ըմբռնում է, ե՛ւ հոգեկան: Իսկ խառնուա՞ծքը: Ֆիզիքական «տիպ»-ի յատկանիշները անոնք են, որոնք կը մնան դիակի վրայ: «Դիակ» կը ստացուի ա՛յն ատեն, երբ որեւէ էակի մէջ կը սպառի գոյութեան դինամիզմը: Դիակը չունի գոյութեան ուժականութիւն, որով նաեւ՝ խառնուածք: «Դիակ» կը նշանակէ կենսաբանական ոյժերու դադար: Ի՞նչ են այս ոյժերը, որոնց «դադարում»-ով որեւէ օրգանիզմ կը զրկուի խառնուածքէ: Այդ ոյժերը կենսահոգեւոր գործօններ են: Դեռ Արիստոտելը գիտէր եւ հիմնաւորեց, թէ ոգին է մարմնի ստեղծիչը: «Էնթէլէքիան» է, որ կը կառուցանէ «օրգանոն»-ը: «Էնթէլէքիան» ոգին է եւ «օրգանոն»-ը՝ օրգանիզմը: Ամեն կազմակերպութիւն ընկերային օրգանիզմ է: Որեւէ կազմակերպութիւն կենսիմաստ է, երբ ունի պատմական առաջադրութիւններ: Ոգին կը պայմանաւորէ «կենդանութիւնը», իսկ պատմութիւնը, որով եւ պատմական

իմաստով նպատակադիր կազմակերպութիւնը՝ կենդանի մարդոց գործ է: Այսինքն, նախ եւ առաջ՝ ոգիի գործ:

Երբ գիտենք, որ ոգին եւ արիւնը ցեղէն կուգան, երբ գիտենք, կազմակերպութիւնը ոգին է, իսկ յեղափոխութիւնը, կռիւը՝ արիւնի նւիրաբերում: Երբ գիտենք այս բաները եւ կը մնանք անցեղաճանաչ, այո՛, այդ պարագային իրաւունք չունինք դատապարտել աշխարհը: Մենք ենք մեր ձախողանքներու պատճառը:

«Հիմնապէս» ինչո՞վ կը բացատրւի մեր 1915-ի աղէտը: Մեր գործիչները էապէս երկու բան կ'ըսեն.

1) Անակնկալօրէն պայթեցաւ համաշխարհային պատերազմը:

2) Թուրքերը մեզ խաբեցին:

Ինքնարդարացո՞ւմ է սա: Չես ունեցած կռահումի ընդունակութիւն, չես նախապատրաստուած, եւ թշնամին օգտւելով քո միամտութենէն՝ չսպասւած հարւածներ հասցուցած է քեզ: Եւ դու ջախջախւած ու պարտւած ես, չնայած որ պարտութեանդ համեմատութեամբ դու տկար չէիր եւ թշնամին հզօր չէր՝ իր տարած յաղթութեան համեմատութեամբ:

Ո՞վ է մեղաւորը:

Այնուհետեւ կրկնիր - «Թուրքը ոճրագործ է, դահիճ, նենգ, կեղծաւոր, խաբեբայ»: Աշխարհը կը փոխո՞ւի:

Աշխարհը կը փոխուի ինքնասրբագրումով, որ ըսել է՝ զղջումի մեծ ողբերգանք եւ նորակերտումի անդուլ ճիգ:

Զղջումը մեծ առաքինութիւն է եւ ապագայ կառուցելու բարոյական ոյժ: Հրեաները կու լային Եփրատի եզրին եւ այժմ ալ ունին «Լացի պատ»-ը: Հրէից ամբողջ ապագան «Լացի պատ»-ի խորհուրդի մէջ է: Հայը հոգեգիտութեան մասին հասկացողութիւն չունի: Բայց ողբերգութենէն աւելի մեծ ստեղծագործող ոյժ չկայ երկնքի տակ: Ճշմարտօրէն ողբերգել, կը նշանակէ գոյութեան ողջ դառնութեամբ, ցաւով, ցասումով, ոգորումով խորհրդածել ճակատագրի մասին: Կը նշանակէ ինքնաժխտումի սարսուռով եւ կարօտով ելուղի փնտռել այն բանի համար, որը քանի դեռ յայտնութիւն չէ ստացած, վերջ չունի քո բարոյական տագնապը:

Ի՞նչը կը պակսէր մեզ - պատմական զգացումը եւ միապատկեր, միասեւեռ ապագայի խռովքը:

Խորքով ապրիլ անցեալը եւ խռովքով՝ ապագան, կը նշանակէ ամբողջական, հզօրաթափ, լիարժէք եւ նպատակիմաստ դարձնել Դաշնակցութիւնը:

Այդ խորքը միայն տարօնականութիւնը կրնայ տալ, խռովքը՝ ցեղակրօնութիւնը:

Ցեղախառով երիտասարդութիւնը մի՛շտ ալ առաջապահ ոյժ է նպատակի գծին վրայ:

Ճիշդ կը նկատէ «Հայրենիք»-ը, թէ «Ցեղակրօն Ուխտերը Հ. Յ. Դաշնակցութեան առաջապահ ոյժն են Ամերիկայի մէջ»...

Բայց ինչո՞ւ միայն Ամերիկայի: Ինչո՞ւ ամէն տեղ չստեղծել այս «առաջապահ ոյժ»-ը: Եւ ինչո՞ւ չհասկնալ բարոյական թիկունքի, պատմութեան պահեստի ոյժերու նշանակութիւնը - ցեղի յաւիտենական կորովը, որ ստեղծագործօրէն արտայայտութիւն ստացած է յանձին այն խառնուածքի, որ այժմ «տարօնականութիւն» անունը ստացած է:

Առանց պատմութեան բոլոր ոյժերու ներդաշնակութեան, անհնար է պատմական գործ կատարել:

Ոգիի բանակ - ահա՛ թէ ի՛նչ դիմագծութիւն պիտի ունենայ հայութեան նոր կազմակերպութիւնը:

Ի՞նչ կրնան տալ մեզ այդ ուղղութեամբ տարօնականութիւնը եւ ցեղակրօնութիւնը:

Տարօնականութիւնը հայ ցեղի հոգե-բարոյական այն ոյժն է, որով դիմագծուած է մեր պատմական անցեալը:

Վերցուցէ՛ք հայոց պատմութիւն ստեղծելու առաջին ճիգը: Այրարատը գրաւող տարօնական հայերը, անշո՛ւշտ, իրենց բուն հայրենիք Տարօնի մէջ քաղաքական ոյժ եւ կազմակերպութիւն ունէին: Եւ այդ ոյժը մեծ էր, Հայաստանաստեղծ, հայակերտիչ: Վերցուցէ՛ք Վահագնապաշտութեան խորհուրդը, Արտաշիսեաններու՝ Հայաստանը ազատագրօրէն եւ քաղաքականապէս ամբողջացնելու հսկայաթափ կորովը: Վերցուցէ՛ք հայոց քրիստոնէացումի բարոյա-քաղաքական խորհուրդը, Մեսրոպի գործի իմաստը, Մամիկոնեաններու գերմարդկային հայրենասիրութիւնը, անգամ հոգեգիտօրէն դեռ չվերծանուած «Սուլթան Ս. Կարապետ» որակում-ըմբռնումի հոգեբանականը, մեր մեծ մատենագիրներու տարօնցիական ծագումը եւ առհասարակ հայ մատենագիրներու տարօնական ոգին:

Այս բոլոր ոգորումները, խռովքները, նւաճումները իրենց եռքը ստացած Տարօնէն եւ յաճախ ձեւակերպումի յանգած տարօնական հայերէն նւաճուած եւ անոնցմով բնակուած Այրարատի մէջ (ուրիշ ի՞նչ բանի մէջ փնտռել Տարօնի եւ Այրարատի զինակցութեան գաղտնիքը) - այո՛, ասոնք է, որ կը կազմեն մեր պատմական ճակատագիրը:

«Պատմական ճակատագիր» հասկացողութիւնը կը նախատեսէ ե՛ւ բնազդը, ե՛ւ գիտակցութիւնը, ե՛ւ անբանականը, ե՛ւ բանականը: Ատիկա լիամփոփ կեանքն է՝ իր բոլոր հոլովոյթներով, որով եւ՝ ներկայի հոգեւոր պատուանդանը եւ ապագայի բանալին:

«Վերածնունդ» կը նշանակէ պատմական ճակատագրի լիակա-

տար վերապրում: Ազգ մը, որ անընդունակ է իր անցեալի մէջ որոնել իր ներկայի խորհուրդը եւ ապագայի աստղը - նման ազգ զուրկ է պատմական զգացումէ, որով՝ նոր պատմութիւն կերտելու կորովէ եւ հանճարէ: Մարդաբան Ֆոն Լուչանը, որ այդքան խնամով (նաեւ բարեացակամօրէն) ուսումնասիրեց մեր ցեղային պատկանելիութեան հարցը եւ ապրող ժողովուրդի կեանքը, մեզ որակեց «քաղաքականապէս յիմար»: Քաղաքական ամէն յիմարութիւն կը պայմանաւորուի նախ եւ առաջ պատմական զգացումի բացակայութեամբ: Հոդ՝ մեր ինքնախաբէութիւններու, սխալանքներու եւ վերջին հաշւով, աղիտաւոր ձախողանքներու ներքին պատճառը:

Կը թողունք այլեւս, որ հայրենասէր ամէն հայ ինքն անձամբ խորհրդածէ այն մասին, թէ ի՞նչ կրնայ տալ մեզ տարօնականութիւնը, որ իր խորքին մէջ հայոց պատմական զգացումի գիտութիւնն է, ցեղային վերադաստիարակութեան ուսմունքը:

* * *

Ցեղակրօնութիւնը մեր նոր սերունդի տարօնական խռովքն է: Դաշնակցականութիւնը ապրիլ եւ ըմբռնել իբրեւ մեր ցեղի յաւիտենական ոգիի յայտնութիւնը, կրօնականութիւն՝ զգացումի եւ բանականութեան, սրտի եւ մտքի մոլեռանդութիւն դնել ցեղի պայքարը եւ ճակատագիրը վարող կազմակերպութեան մէջ - ահա՛ ցեղակրօնութեան էութիւնը եւ նպատակը:

Նոր սերունդին յատուկ է կեանքը իբր երջանկութեան խորհուրդ եւ ամբողջականութիւն ապրելու մղումը:

Նա մի՛շտ ալ շղթայակցութիւն կը փնտռէ գոյութեան բեւեռներու միջեւ. գիտէ գոյութեան ողջ կարօտով շե՛շտ դնել այն հարցի վրայ, թէ «ո՞ւրկէ կու գանք, ո՞ւր կ'երթանք»:

Նոր սերունդը հաւասարապէս աւանդապաշտ է եւ ապագայատենչ: Նա առեղծուածային հանգոյց է անցեալի եւ ապագայի միջեւ: Գիտէ լալ անցեալի համար եւ մոլեգնիլ ապագայի կարօտէն: Հաւասար խանդով կրնայ սարսռիլ Վարդան Սպարապետի երիվարի պատկերին առջեւ եւ տենչալ օդանաւորդութիւն:

Նա տպաւորումի էակ է նախ, դրոշմելու անգիտակցական բաղձանք եւ ըստ միջավայրի բարոյական պայմաններու ներազդեցութեան՝ ընդունակ է՛ Հայաստանի համար քաղցրօրէն մեռնելու, է՛ւ սէրէն փխրելու, է՛ւ համամարդկային գաղափարի մը համար զոհուելու, է՛ մանր եսականութիւնը ճակատագիր դարձնելու:

Ցեղօրէն առողջ նոր սերունդը կը նախատեսէ յաւիտենականութեան խանդով օծուն դաստիարակութիւն:

Ի՞նչ է յաւիտենականութիւնը - կրակ՝ անցեալի մոխիրներուն տակ եւ բոցավառում՝ ապագայի հորիզոնին վրայ:

Տարերքի էակցութեամբ կը պայմանաւորուի աշխարհի համասեռութեան ըմբռնումը եւ անցեալի ու ապագայի էակցութեամբ՝ յաւիտենականութիւնը: Ժամանակը ապրումային առաջընթաց մըն է եւ ապրումներու շղթայակցութիւնը, անոնց տրամաբանական ներքին կապակցութիւնը միայն կ'ընծեռէ ամբողջականութեան, որով եւ՝ յաւիտենականութեան զգացումը:

Ցեղակրօնութիւնը մեր ժամանակներու առաջին կազմակերպուած փորձն է՝ ամբողջական հայ մարդը ստեղծելու - տարօնատիպ հայը:

Անցեալը միայն մոխիր պատկերել ու ապագան՝ անորոշ, մշուշ, խաւար, կը նշանակէ՝ խորտակուիլ ներկայի մէջ: Այդպէս կ'ըլլայ, երբ չկայ ուղիղ ըմբռնում յաւիտենականութեան եւ ամբողջականութեան մասին, երբ ոգին, անցեալը եւ ապագան միմեանց զօդելու տքնութիւն չունի:

Ցեղակրօնութիւնը, ահա՛, այդ տքնութիւնն է: Եւ դա պատմագործումի լիազգաց կարօտ, նպատակ եւ իմաստ ունեցող միակ հոգեշարժն է:

Սպառազինուի՛լ տարօնական պատմական զգացումով, սպառազինուի՛լ ցեղակրօնութեան բերած ամբողջականութեան իդէալով եւ խռովքոտ ապագայատենչութեամբ - ահա՛ հոգեւոր այն զէնքերը, որոնք հայոց մարտական կազմակերպութիւնը կրնան վերածել պատմաստեղծ ոյժի:

Չհասկնալ այս բանը, կը նշանակէ կամ աղքատիկ գոհունակութիւն ցուցահանել ահաւոր եղածի եւ տխուր ներկայի հանդէպ, կամ չհասկնալ ժամանակի ոգին:

Իմաստութիւնը եւ ոգին քաղել տարօնականութենէն, խանդը՝ ցեղակրօնութենէն, եւ գործը վստահիլ դաշնակցականութեան: Ոյժերու այս համադրութեամբ միայն մենք ընդունակ կը դառնանք պատմական գործ կատարելու, ապագայ ստեղծելու:

---

* *Սույն հոդվածն իբրեւ խմբագրական գրվել է «Ռազմիկ» թերթում (1938թ., թիվ 42-45), այնուհետեւ «Տարօնականութեան հոգեվերանորոգչական դերը» վերնագրով վերատպվել է «Տարօնի Արծիւ»-ում (1938թ., թիվ 5-6), որից էլ այն արտատպում ենք մասնակի կրճատումներով:*

ՏԱՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Տարօնականութիւնը հիմնելով մենք ուզեցինք բարոյական եւ հոգեւոր վերանորոգումի հետ՝ կառուցուած տեսնել հայկական աշխարհայեցողութիւն, ազգային ընդհանուր դաւանանք:

Այդպիսի դաւանանք չունի մեր ժամանակների հայութիւնը: Եկեղեցու աստուածաբանական կենսահայեցողութիւնը հանրապարտադիր չէ այլեւս - կան յարանւանութիւններ, կայ նաեւ կեանքի պատմական զարգացումը, որ վաղուց ի վեր խախտած է ո՛չ միայն «հանդերձեալ»-ի հաւատը, այլեւ քրիստոնէական զգացումը՝ ընդհանրապէս: Ահա՛ Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ ծայր տուած «բարոյական վերազինման» շարժումը, որ ճիգ է վերականգնելու քրիստոնէական բարոյականը, որով՝ խոստովանութիւն, թէ տկարացած է մարդոց կրօնական զգացումը: Հայոց քրիստոնէութիւնը ժամանակ մը նոյնացաւ ազգային սկզբունքին - «հայ-քրիստոնեայ»: Բարձր, շա՛տ բարձր ըմբռնում մըն էր այդ՝ կեանքի բովանդակութեան մասին - մէկը հայոց պատմութեան ամենակենսիմաստ յղացումներէն, գործ առաւելապէս Մամիկոնեաններու, որոնց մէջ հայկականութիւնը յանգած էր բնազանցումի եւ աստուածայինը մարմին ստացած էր:

Առանց էաբանական խորքի իմաստ չունի մարդկային կեանքը: Ո՛ւր էութեան բարձր զգացում կայ, այնտեղ կայ գոյութիւնը բնազանցելու, այսինքն՝ աստուածայինով լեցնելու պահանջ: Ատով էր, որ Մամիկոնեանները ճշմարիտ աստուածապաշտութիւն, անգերազանցելի հայրենասիրութիւն եւ միաժամանակ մեծ հերոսական ստեղծեցին: Քաջ կրնան ըլլալ շատերը, բայց հերոսական կը ստեղծէ միայն նա, ո՛վ իր տքնութեան ու գործի, կեանքի ու մահւան խորհուրդի մէջ կը տեսնէ Աստուծոյ կամքի արտայայտութիւնը: Հերոսը մի՛շտ ալ Աստուծոյ խօսքի առաքեալն է եւ յաւիտենականութեան բանաստեղծը: Ղեւոնդ Երէցը Աստուծոյ հետ կը խօսէր եւ Եղիշէն Մամիկոնեան մարդու հերոսականի իմաստը կը տեսնէր «իմացեալ» մահւան մէջ: Աստուծոյ հետ խօսո՛ղը միայն կրնայ «իմացեալ մահ» ունենալ եւ նմանը միայն ընդունակ է երկրի վրայ անմահ գործեր երկնել:

Ստեղծագործ են այն ազգերը, որոնց էաբանական խորքը որդեգրած գաղափարներու եւ հասարակական կազմակերպութեան ձեւի միջեւ հակասութիւններ չկան:

Նա՝ ո՛վ սուրը Աստուծոյ անունով եւ Հայրենիքի համար՝ չէր վերցներ, կրնար ծագումով Մամիկոնեան ըլլալ, բայց բարոյապէս երբե՛ք պատկանիլ այդ ընտանիքին:

Մամիկոնեանը նախ եւ առաջ աշխարհայեցողութեան մարդ է: Ատոր համար ալ անոր գործունէութեան մէջ կայ բարոյական հետեւողականութիւն: Մամիկոնեանի մօտ դուք չէք տեսներ գաղափարաբանական պատեհապաշտութիւն: Մետաղեայ կուռ համոզումներու տէր էակ է նա եւ անոր բոլոր կառուցումները դրուած են բարոյական ժայռի վրայ:

Դարձէ՛ք դէպի օրւայ մեր իրականութիւնը եւ դուք պիտի տեսնէք խարխափումներ եւ հակասութիւններ: Միեւնոյն կազմակերպութիւնը իր շարժումը կը սկսի Հայաստանի անկախութեան նշանաբանով, իր գաղափարաբանութիւնը կը հիմնաւորէ մարքսական նիւթապաշտական վարդապետութեամբ, կը կռւի հայ ազգի փրկութեան համար, կը քարոզէ համերաշխութիւն իր ժողովուրդը ճնշող եւ խոշտանգող թուրք տարրի հետ, ցոյցեր կ'ընէ յոյսը դնելով եւրոպական պետութիւններու միջամտութեան վրայ, կը միանայ այս պետութիւններու կառոյցին սպառնացող Եւրոպայի ընկերվարական կազմակերպութիւններուն եւ օր մը ալ ներկայ Խ. Հայաստանը կը դաւանի «ազատ», «անկախ», «երջանիկ» հայրենիք եւ Հայկական Դատը՝ լուծուած:

Այս խարխափումները եւ հակասութիւնները յատուկ չեն միայն հնչակեաններուն: Առհասարակ հայութիւնը զուրկ է քաղաքական նպատակի եւ գաղափարական համոզումներու կայունութենէ, հետեւողականութենէ: Նոյն անձը մէկ երեսով կը ներկայանայ ցեղապաշտ, միւսով՝ ընկերվարական, մէկով՝ իդէալիստ, միւսով՝ մատերիալիստ, մէկով՝ Մեծ Հայաստան երազող, միւսով՝ կովկասեան կոնֆետերացիայի մէջ միակ ելքը տեսնող, ընկերային երեսով՝ թշնամի բոլշեւիզմին, քաղաքականով՝ բարեկամ: Այս քաոսի պատճառով ստեղծուած է օրւայ անվճռական հայը: Բարոյական անկայունութիւնը կը ստեղծէ մտածումի ցրւածութիւն, երկրորդը՝ նպատակի անորոշութիւն, իսկ վերջինը՝ ճիգի, գործունէութեան աննպատակութիւն:

Մտածումի ցրւածութեան անմիջական արդիւնքներէն մէկն է նաեւ «ես»-ի ներքին պառակտումը, ինչպէս եւ հասարակական կամքի բեկորացումը եւ հատւածապաշտութիւնը: Օրւայ հայ կեանքի պառակտումները հետեւանք են ազգային ընդհանրարժէք եւ հանրապարտադիր աշխարհայեցողութեան չգոյութեան: Բաւական չէ միութիւն քարոզել, պէտք է գտնել կառուցողական նիւթերը, միջոցները - հոգեւոր զէնքերը: Միութիւնը կը կառուցւի: Կը կառուցւին բոլոր ճշմարտութիւնները: Ճշմարտութիւնը հնարաւոր է, երբ գոյիմաստ խօսքի մը շուրջ կը

հիւսւիկ շարք մը անհերիակասելի դատողութիւններ: Միութիւնը կը կառուցի, երբ կայ հանրապարտադիր նպատակը, նաեւ բարոյական բռունցքը, որ ծգողական իր կարողականութիւնը կը ստանայ էաբանական խորքէ մը: Երէկ եկեղեցին միացուցիչ ոյժ էր, որովհետեւ զօրաւոր էր հայ մարդու կրօնական զգացումը: Որո՞նք են օրւայ հայի տիրական զգացումները: Ինչի՞ շուրջ կարելի է կեդրոնացնել հայութիւնը:

Նախ՝ հայ մտաւորականութիւնը չունի գիտական պատրաստութիւն (արժանաւորները թո՛ղ ներեն մեզ) եւ ընդունակ չէ մետաֆիզիքական խորքով եւ պատմա-իմաստասիրօրէն հիմնաւորուած հայկական աշխարհայեցողութիւն ստեղծել: Մեր քաղաքական կազմակերպութեանց ծրագիրները օտար ճշմարտութեանց թարգմանական խառնարաններ են: Այդտեղ կան հայկական նշանաբաններ, բայց ո՛չ հայկական գաղափարախօսութիւն: Բոլորը կը սկսին «մարդկութիւն», «մարդկային» բառերով եւ հայ զանգւածի փրկութիւնը կը տեսնեն ընկերային բարենորոգումներու մէջ: Այդ ընկերային պահանջները չեն բղխիր Հայաստանի առաւելապէս երկրագործական նկարագիրէն, այլ՝ Եւրոպայի բանւորական դասակարգի պայմաններէն: Փոխւած են Հայաստանի ազգագրական պատկերը, քաղաքական վիճակը, անգամ Եւրոպայի պայմանները, բայց եւ այնպէս մենք կառչած կը մնանք հին «դասակարգային» մտածումին:

Անստեղծագործ է այդ մտածումը եւ իր բնոյթով՝ զանգւածը պառակտող: Դասակարգային վարդապետութիւնը կը ստեղծէ «ընկերային շահակիցներ», բայց ո՛չ ճակատագրի եղբայրներ: «Դասակարգ»-ը կը նախատեսէ շահակիցներու միութիւն, որ իր խորքին մէջ համազօր է ազգային օրգանիզմի ընկերային մասնատումին: Մի՛ ըսեր «հայ աշխատաւորութիւն», «հայ քաղքենիութիւն», «հայ աւատատէր», «հայ կղեր», ազգը մի՛ պատկերեր ներքուստ պառակտւած, այլ ըսէ՝ «յաւիտենական հայկականութիւն», «հայութիւն»: Ամբողջականութեան զգացո՛ւմը միայն կրնայ քեզ մղել օրգանական միութեան գիտակցութեան պահանջին: Քանի դեռ հատւածապաշտ ես՝ կեղծ են բոլոր քո քարոզները՝ միութեան մասին: Քանի դեռ ներքուստ միազգաց, ընկերօրէն ամբողջազգաց չես՝ ունայն են եւ ինքնախաբեութիւն քաղաքական քո բոլոր գործերը: Միութիւնը կը ստեղծւի ո՛չ թէ կողմերու, հատւածներու սակարկութիւններով, այլ ընդհանուր նպատակի մը, արժեքի մը ենթարկւելու բացարձակ կամքով: Ո՛ւր հատւածներ, դասակարգեր կան՝ այնտեղ չկայ նպատակի, արժէքի ընդհանրութիւն, ուստի եւ՝ ճշմարտօրէն հայրենանպատակ քաղաքականութիւն, որովհետեւ սա, ամէն բանէ առաջ, ընդհանրական ապագայի մտահոգութիւն է: Մենք

չգիտենք՝ ընկերային ի՞նչ դիրք, բախտ, ճակատագիր կ'ունենան մեր որդիները եւ ասոնց յետնորդները, բայց մենք գիտենք, որ անոնք հայասերունդ են եւ կ'ուզենք, որ բոլոր պարագաներուն անոնք մնան այդպիսին - հա՛յ: Ընկերային վիճակը, դիրքը անցաւոր են, կա՛յ միայն ոգիի եւ արիւնի յավիտենականութիւն: Եւ կենսաբանօրէն առողջը ա՛յն ժողովուրդն է, որ արթուն բնազդ ունի իր տեսակի յաւերժացման համար: «Տեսակ» հասկացողութիւնը կենսաբանական է եւ ո՛չ ընկերային: Այդ կը նշանակէ՝ կենսաբանական որակները՝ ոգին, արիւնը, կրնան կազմել գոյիմաստ աշխարհայեցողութեան մը հիմքը եւ ո՛չ թէ պատմական կամ ընկերային որեւէ մտածում, գաղափար, բովանդակութիւն կամ ձեւ: Այդ կը նշանակէ նոյնպէս, որ առողջ, ուստի եւ՝ պատմաստեղծ է ազգային, քաղաքական, հասարակական ա՛յն կազմակերպութիւնը, որ իր կենսազգացութիւնը, բարոյական հրամայականը, նպատակադրութիւնը, գաղափարախօսութիւնը, ճշմարտութիւնները, համոզումները, տեսիլքները եւ գործելու կամքն ու մեթոդը կը ստանայ իրեն հարազատ էաբանական խորքէն՝ ցեղէն:

Որեւէ աշխարհայեցողութիւն պիտի ունենայ իր բնազանցական խորքը: Առանց վերացումի չկայ ընդհանուր դատողութիւն, առանց վերջինի՝ ընդհանրապարփակ ճշմարտութիւն: Աշխարհայեցողութիւնը նախ եւ առաջ այդպիսի ճշմարտութիւն մըն է: Մենք ընդհանրացումի, վերացումի կ'ենթարկենք նիւթական երեւոյթները եւ «նիւթ» ընդհանուր հասկացողութեամբ կը յօրինենք «մատերիալիստական» աշխարհայեցողութիւնը: Հոգեւոր որակներու բացարձակումով մենք կը հիմնաւորենք «իդէալիստական» (աւելի ճիշդը՝ «սպիրիտուալիստական») աշխարհայեցողութիւնը: Ասոնցմէ մէկը «քանակական» ըմբռնում է, միւսը՝ «որակական» - նիւթ եւ ոգի: Ասոնց զուգադրութեան կամ հակադրութեան ըմբռնումով՝ մենք կը յօրինենք «դուալիստական» աշխարհայեցողութիւնը:

* * *

Ցեղի մէջ մենք կը հանդիպինք երկու այդ գոյարմատներու կենսաբանական ներդաշնակութեան: Ժառանգականութեան օրէնքով մենք այդտեղ կը հաստատենք նաեւ ոգու եւ նիւթի (արեան) անսպառելիութիւն: Այս անսպառելիութիւնը ապացոյց է, որ ցեղը էաբանական խորք է: Անկէ կը բղխին ազգութիւնը, որ առաւելապէս որակային՝ մշակութային-ոգեկան ըմբռնում է եւ ժողովուրդը, որ առաւելապէս քանակական, կենսաբանական գումարի, հաւաքի հասկացողութիւն է: Ասով պիտի

բացատրել այն երեւոյթը, որ խառնուածքով իդէալիստ մարդը սովորաբար ազգայնական է, մինչ մատերիալիստը՝ ընկերապաշտ է, ժողովրդական, դասակարգազգաց: Ազգայնականի համար խանդի եւ իմաստութեան աղբիւրը ոգու հերոսագործութիւններու պատմութիւնն է, ժողովրդականը՝ կեանքի մեծագոյն արժէքը կը տեսնէ ներկան շահագրգռող ընկերային գաղափարներու մէջ:

* * *

Մինչեւ տարօնականութիւնը՝ հայ մարդը շա՛տ քիչ անգամ առիթ ունեցած է զբաղուիլ իր կեանքի էաբանական հարցերով: Նա ապրած ու գործած է օտար ճշմարտութիւններով, յարատեւօրէն ենթակայ զգացումի եւ բանականութեան ներքին հակասութեան: Ո՛ւր չկայ էաբանական խորքի եւ որդեգրուած բանական համոզումներու հարազատութիւն եւ ներդաշնակութիւն՝ այնտեղ չկայ կամքի նպատակամասնաստ ուղղութիւն, որով եւ՝ պատմաստեղծ ճիգ ու գործունէութիւն:

Հին հայերն ունէին իրենց դուալիստական աշխարհայեցողութիւնը (շեշտը դրուած ոգեկան կողմի վրայ): Քրիստոնէական մոնոֆիզիստական (միաբնութենական) դաւանանքը երկրէն կտրելու աստիճան «ոգիացուց» հայ մտածումը: Այստեղ՝ գլխաւոր պատճառը, որ մե՛նք եղանք քրիստոնէութեան համար ամենէն շատ արիւն թափողը, բայց գործնականապէս անկէ ամենէն քիչ օգտուողը: Նոր ժամանակներուն՝ Դաշնակցութիւնը գնաց իդէալիստական գծով (թէպէտեւ ծրագրի մէջ խօսքեր կան դուալիզմի եւ համադրական մոնիզմի մասին), հնչակեանները՝ մատերիալիստական (թէպէտեւ գործունէութիւնը վիպապաշտական էր), բոլշեւիկները տեսութեամբ ու գործով՝ մատերիալիստական: Մատերիալիստական ուղղութիւնը օտարամուտ է եւ հակասութեան մէջ՝ հայկական էութեան հետ: Այստեղ պատճառը հնչակեաններու վաղաժամ քայքայումին եւ ա՛յն փաստին, որ բոլշեւիզմը չի հարազատուիր հայ զանգուածի՝ մասնաւորապէս ցեղօրէն արթուն տարրի կողմէ:

Գաղափարախօսական մեր բոլոր խարխափանքները, քաղաքական սխալները, կազմակերպական թերիները պայմանաւորուեցան անով, որ մենք չունեցանք հայկականօրէն հիմնաւորուած աշխարհայեցողութիւն: Անծանօթ մեր էաբանական խորքին - ցեղին՝ իմաստութիւնը եւ ուղղութիւնը չառինք հայոց անցեալը վարող ոյժերէն, այլ՝ Եւրոպայի ներկան խռովող ընկերային հոսանքներէն: Այդ հոսանքները սնանկացան Եւրոպայի մէջ, իսկ մենք կորսնցուցինք նաեւ Հայրենիքի

եւ ժողովուրդի մեծ մասը եւ ասոր հետ՝ կամքի եւ մտքի կեդրոնացման ընդունակութիւնը: Բայց կառչած մտաւոր հին նախապաշարումներու, մենք կը շարունակենք մնալ բազմագաղափար, բազմանպատակ, բազմուղի, ուստի՝ հատուածամոլ, ցրուողական եւ քաղաքականապէս՝ անստեղծագործ:

Բոլոր պատմակառուցումներու առաջին պայմանը հոգեկան ոյժերու կեդրոնացումն է եւ ամբողջականութեան զգացումը: Մէկը ճակատագրական քայլերէն դէպի ոգեկան կեդրոնացումը եւ ուժաստեղծումը՝ նոր աշխարհայեցողութեան կառուցումն է: Քանի դեռ պակասաւոր էր հասկացողութիւնը կենսաբանութեան մասին՝ մարդիկ կը խօսէին «բացարձակ»-ներէն: Այդ տիեզերապաշտութիւնը մեր ճակատագիրը կը ստորադասէր գերբնականին, ընդհանուրին: Գերբնականը անկենսաբանական յաւիտենականութիւնն էր եւ ընդհանուրը՝ մարդկութիւնը: Յաւիտենականը կ'ապրուէր որպէս նախախնամութիւն, կամք տիեզերական մեքենականութիւն յինքեան, իսկ մարդկութիւնը՝ որպէս վերացական գաղափար: Էապէս սա համազօր էր բնական կապի խզումին՝ կենդանի մարդու եւ Աստուծոյ, անհատական անցաւորութեան եւ տեսակի յաւիտենականութեան միջեւ: Մարդու կրօնական զգացումի աղարտման գլխաւոր պատճառներէն մէկը «մարդկութիւն», «մարդկային» վերացական հասկացողութիւնները կուռք դարձնելն էր: Այս է պատճառը այն իրողութեան, որ աշխարհաքաղաքացիական բոլոր ոգորումները, ի վերջոյ, կը յանգին անկրօնութեան:

Մենք մատնանշեցինք մեր նոր աշխարհայեցողութեան էաբանական խորքը - ցեղը: Որպէս կենսաբանական ըմբռնում՝ դա կը նախատեսէ բնական կապ մարդու եւ յաւիտենականութեան միջեւ: Ոգիի գծով՝ դա մեզ կ'առաջնորդէ դէպի աստուածայինի կենդանի զգացումը, արիւնի գծով՝ դէպի կեանքի յաւիտենականութեան զգացումը: Ո՛ւր յաւիտենականութեան առողջ զգացում կայ, այնտեղ ներկայ է Աստուծոյ կամքը: Իր խորքին մէջ, ցեղը Աստուծոյ կամքի արտայայտութիւն է: Դա նաեւ օրգանական միութիւն է ոգիի եւ նիւթի, որով՝ բնօրէն համադիր աշխարհայեցողութեան խարիսխ:

Ցեղն է միայն ընդունակ դնել յաւիտենական, սրբազան եւ զօրութենաւոր նպատակ: Ցեղի յաւիտենական խնդիրը Հայրենիքն է: Ցեղի համար դա ո՛չ թէ շահագործելի հող է եւ աւելի լաւ ապրելու միջոց, այլ՝ էութեան պահանջ: Հայրենիք տենչալով, մենք աւելի կ'ուզենք Մասիսի ճակատը տեսնել, քան Արարատեան դաշտի մէջ բամպակ մշակել: Մեր նախահայրերու սրբաստանները եւ գերեզմանները ծգողական աւելի մեծ խորհուրդ ունին, քան Մշոյ, Կարնոյ կամ Վանայ շուկաները:

Տարբեր են ցեղի եւ ժողովուրդի բարոյական բովանդակութիւններ-ը: Ժողովուրդը մի՛շտ ալ առօրեայի մտահոգութիւն է, ցեղը՝ էութեան տանջանք: Տանջանքով շաղախուած նպատակը միայն կրնայ շարժման մէջ դնել մեր ողջ էութիւնը: Դաւանելով ցեղային աշխարհայեցողութիւն, մենք մեզ ամբողջացած պիտի զգանք՝ որպէս ներքին մարդ եւ ընկերութեան անդամ: Ներքին ամբողջականութեան զգացումը ինքնին ոյժերու կրկնապատկում է անհատի մէջ եւ հասարակական ներդաշնակութեան, ազգային օրգանական միութեան պահանջ:

Ցեղի առաջին հրամայականն է՝ հայրենատիրութի՛ւն: Այդ կամքով վերցո՛ւր սուր, գրիչ, բահ, ինչ որ կրնաս: Բոլոր պարագաներուն դու նպատակի զինուոր ես եւ ճակատագրի եղբայր անոնցմէ ամէն մէկուն, որոնք տքնած են, կը տքնին ու պիտի տքնին յաւիտենական Հայաստանի համար:

Այդպէս գործելով՝ դու քո մէջ պիտի զգաս ներկայութիւնը Մամիկոնեան հայու: Դա արդէն բարոյական սպառազինութիւն է եւ յաղթանակի ապահովութիւն:

«Տարօնի Արծիւ», 1939թ., թիվ 11

ԴԱՐՁ ԴԷՊԻ ՈԳԻՆ

Մեռնել, բայց չտեսնել Հայրենիքը պարտուած: Յաղթանակից կեանքի բարոյական կանոն յօրինել, պարտութիւնը ստեղծագործաբար ողբերգել եւ դրանից՝ մեծագործումի նոր ոյժ եւ խանդ երկնել:

Այդպէս չէ՞ր երբեմն հայը:

Ասում ենք՝ այդպէս էր, ուզում ենք էլի՛ այդպէս լինի եւ քարոզում ենք տարօնականութիւն:

Մեր առաջ, սակայն փռուած է հոգեւոր վերջալոյսի մի պատկեր: Վերջալոյսին՝ քնի կարօտից յօրանջում են ստուերները: Մեծ ստուերը՝ գիշերը, արդէն մայրն է քնաբեր առաքինութիւնների: Ստուերները յօրանջում են - «հին հայը վաղուց է մեռած»:

«Ոգին մահ չունի»,- ասում ենք մենք:

Ոգու մահւան հաւատում են վերջալոյսին ստուերօրէն սպառուածները: Նրանք՝ որ բռնուած են վախճանի տենդով: Ապրելու ագահութիւնը եւ մահւան զգացումը - միեւնոյն տոպրակում սրանք դեղնում են, ինչպէս աշնան տերեւները: Ամեն բան չի դեղնում կատարելութիւնից - շատ բան դեղնում է սպառումից: Դեղին երգերի բանաստեղծները, շա՛տ անգամ, քուն են քարոզում - ցաւագին ճիչ եւ ձանձրոյթի աղօթք:

Քնաբեր ամէն խօսք, մտածում եւ աղօթք վախճանի կարօտ է, վերջինը՝ տկարութիւն, իսկ տկարութիւնը՝ կենսագործ բոլոր ճշմարտութիւնների թշնամին:

«Արթնացի՛ր, Հայաստա՜ն» - օրերի զանգահարումը խոժոռում է հոգով մեռածներին: Արշալոյսի կանչը - դա մեծագոյն թշնամին է յոգնած-պարտասածների: Ստուերները ձայն չունեն, բայց նրանք ընկերներ են շարժուող կեանքի: Նրանք ունեն իրենց համր երանութիւնը - ուզում են քնել: Շարժումների թշնամին մի՛շտ էլ ստուերոտ մի էութիւն է:

Տարօնականութիւնը ոգու շարժում է, նոր կեանքի խօսք: Դա ունեցաւ իր թշնամիները - մահապաշտները, ստուերային էութիւնները, նրանք, որ տաժանքով են քայլում կեանքը փոթորկող ոյժերի հետ, ստուերի տաժանքով:

Մենք ասում ենք. «Ոգին անմահ է»:

Բայց երբեմն ոգու կայծը՝ հոգին, աւելի՛ շուտ է մեռնում, քան մարմինը: Անմահ է միայն ժամանակը բոցավառող, տարածութիւնը նւաճողաբար ճմլող ոգին, ստեղծագործը:

Յիսուսն էր ասում. «Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի»: Ստեղծագործ ոգին միշտ էլ աշխարհում է եւ լուսագործում է:

Ժամանակը ոգեսպառի համար անջրպետ է, ոգու կրողի համար՝ կապ: Ժամանակներն իրար են կապւում յաւիտենականի զգացումով - անցաւորը յաղթահարող ոգու ճիգով: Մամիկոնեաններից անցել է մէկուկէս հազարամեակ, հայ բոլշեւիկները տիրում են այսօր: Բայց նրանք մեզ աւելի՛ մօտ են թւում, քան վերջինները: Այդպէս չէ միայն նրանց համար, որոնք ժամանակը ըմբռնում են որպէս իրար հակասող դէպքերի մի շարժ, որպէս անցումների մի քաոս:

Ժամանակը հոգեբանական առաջընթաց է: Բարոյապէս աճող մարդու համար՝ նրա արժէքները, հոգեւոր բովանդակութիւնները աճում են այդ առաջընթացի հետ: Հայօրէն անկարելի է հերոսանալ առանց Մամիկոնեան մի հսկայ կենդանիօրէն պատկերելու: Հերոսականը ժամանակները յաղթահարող պատկերում է: Հրէութեան հզօրանքի գաղտնիքը նրանում է, որ ամէն հրեայի սրտի մի անկիւնում կենդանիօրէն տրոփում է Մովսէսը: Ոգու բոլոր նահանջները առաջ են գալիս ժամանակի մասին ունեցած անկենսաբանական ըմբռնումից: Հակասութիւնները պարտութիւն են վիժում: Կա՞րսը - այդ պիտի չունենայինք, եթէ այնտեղ ճակատող հայկական բանակը չապրէր իր եւ Վարդանների ոգու հակասութիւնը, եթէ ժամանակը յաղթահարելով՝ նա կարողանար անցումի իր երանութեան մէջ դնել Մամիկոնեանավայել հերոսական: Բոլոր պարտութիւնները արդիւնք են պատմական ոգու աղօտումին - նախ՝ դրան:

«Յեղաշրջւած ոգին է յեղաշրջում իրականութիւնը» - ասում ենք մենք: Իւրաքանչիւր ազգ ապրում է ճակատագրական մի նշանախօսքով: «Յիշի՛ր մահը»,- ասում է մի ժողովուրդ, եւ դրանով էլ բարոյակարգում իր ընկերային կեանքը: «Յիշի՛ր Մամիկոնեան հայը»,- ասում ենք մենք, որովհետեւ ուզում ենք յաղթահարել պարտուողականութիւնը, փոխել, յեղաշրջել ճակատագիրը: Ուզում ենք տարագրութեան ցաւն ու ամօթանքը վերածել հայրենատիրումի, հզօրանքի կամքի: Մեծագոյն ստորնութիւնների ընդունակ ժողովուրդը, ընդունակ է նաեւ գերագոյն հերոսականի: Մեծ անկումներն էլ գործ են հուժկու խառնուածքի: Միեւնոյն խառնուածքի բացասական արտայայտութիւնը կարող է ա՛յնքան անկումնային լինել, որքան դրականը՝ վերացնող: Ոգու ձգողական եւ վանողական կարողութիւնները ծագում են միեւնոյն արմատից: Իբր հոգեբանական տիպ՝ հրեան ե՛ւ բեւեռացած ստորնութիւն է, ե՛ւ բեւեռացած նւիրում: Ժողովուրդներ կան, որոնց համար ստորնութիւնը ինքնապաշտպանութեան ամենահատու զէնքն է: Կան

էլ, որ առանց դրական բարոյականի ՝ փլուզւում, ոչնչանում են: Հայը ընդունակ չէ ոգու երկու ուղղութիւններ կրել իր անձի մէջ: Մեր այս հոգեգծով մենք հակապատկերներ ենք հրեայի: Այդ է պատճառը, որ օտարութեան մէջ մենք չենք կարող օգտուել նրա ցեղային ինքնապաշտպանութեան մեթոդից: Նա մոռանում է լեզուն, ծպտւում է իբր ոչ-հրեայ, բայց Թալմուտի մի բառով պահում է ցեղային ներքին կրակի մոլեգնութիւնը: Ծպտումի ընդունակ հային չի կարող փրկել ամբողջ «Նարեկ»-ը: Հրեան յօրինում է համամարդկային գաղափարներ, խառնում է ազգերը իրար եւ յաճախ հանդիսատես դառնում իր «թալիսման»-ով փոթորկւած աշխարհի խելագարութիւններին, հայն ինքն իր մէջ փխրւում, այլասերւում է, հենց որ բռնւում է օտար մի հովից: Հայը «միջազգային» ասպարէզի էակ չէ: Փաւստոսի այլաբանութեամբ՝ նա իր Արշակ թագաւորի նման հզօր եւ ազատահոգի է միայն իր հողի վրայ: Հայրենիքն է նրա ինքնապաշտպանութեան միակ զէնքը:

«Դա՛ռ դէպի երկիր»,- ասում ենք մենք: «Ռէալ պայմաննե՞ր»,- հարցնում են իրենց կեանքում ընդհանրապէս պայմաններով ապրողները, սակարկողները: «Պատմական բոլոր իրականութիւնների հեղինակը եւ ստեղծիչը ոգին է»,- ասում է տարօնական մեծ հայերի հերոսականը: Այդ է ասում նաեւ մեր ժամանակների գիտութիւնը:

«Հոգեվերանորոգում եւ ճշմարտութիւնների յեղաշրջում» - ահա՛ առաջին քայլը դէպի նոր ճակատագիրը: Որպէսզի մի բան փոխւի՝ նախ պիտի կամենալ, որ փոխւի: «Կամենալ»-ը հոգեւոր որակ է: Ոգու ամէն ճիգ որակ է: Այդ է պատճառը, որ ոգու ներգործութիւնն է իմաստաւորում բնութեան ամէն մի երեւոյթը եւ պատմութեան դէպքերը:

Տարօնականութիւնը հոգեվերանորոգչական շարժում է, որով եւ՝ կեանքը իմաստաւորելու ճիգ: Նիցշէն ասում էր. «Գերմարդն է երկրի իմաստը»: Մենք ասում ենք. «Հայաստանն է հայ մարդու իմաստը»: Այսպէս ասելով՝ մենք ընդունում ենք Մամիկոնեան մի ճշմարտութիւն: Ծագում են հարցեր. «Ինչո՞ւ այս ճշմարտութեամբ գործող հայը հզօր էր: Ինչո՞ւ տկար է այսօր հայը: Ո՞րն է օրուայ հայի ճշմարտութիւնը: Մենք չկործանւեցի՞նք այն ըմբռնումից, թէ հայրենիքը միջոց է»:

Կեանքի լրջագոյն հարցերին մարդիկ պատասխանում են ըստ իրանց նկարագրի, խառնւածքի, բարոյական խորքի: Յոռետեսի կարծիքով՝ կեանքը մահւան առաջընթաց է: Մեզ համար՝ կեանքը մահւան յաղթահարելու ճիգ է: Վախկոտի կարծիքով՝ չկայ աւելի մեծ յանցագործութիւն, քան հերոսականի պահանջը: Եսականը «նւիրում» բառը հասկանում է որպէս պատուհասումի պատգամ: Ձեղծահոգի

էակը որոգայթ է լարում ճշմարտութեան դէմ: Յիսուսին խաչում են իր քարոզած գաղափարների սարսափից: Նոր գաղափարներից սոսկում են հոգեպէս սպառուածները: Անկումի երանութեան զոհերին՝ հզօրանքի խօսքը թւում է մահապատիժ: Տկարութիւնը գիտակցական սարսափ է մահից եւ անգիտակցական մահաբաղձութիւն: Տկարի չարութիւնը - դա գերեզմանափորի հոգեւոր զէնք է: Գերեզմանափորը հոգեբանական եղկելի այն տիպն է, որ մահու սարսափից մահւան դէպքերը օգտագործում է որպէս ապրուստի միջոց: Մեծ գաղափարների մանր թշնամիները միշտ էլ ունին գերեզմանափորի հոգեբանութիւն:

Հասկանալի է, որ տարօնականութիւնը իբրեւ ոգու շարժ եւ կենսանորոգումի ճիգ՝ պիտի անհանգստացնէր հոգեւոր գերեզմանափորներին, նւաստութեան երջանիկներին, իրենց անձերի բարոյական դիակնացումը առանց ցնցող տագնապի տեսնող-ապրողներին:

Մեծ գաղափարները յղութիւն են ստանում կեանքի մեծ ճգնաժամերից: Ամէն ճգնաժամ տալիս է իր զոհերը: Դրանցից է առօրէական ապրումներին գերի մարդը - յաւիտենականութեան ատամնաթափ այդ թշնամին:

Ծանր է մեզ համար չոր ճշմարտութիւններով խօսել, բայց ճշմարտութիւն է, որ յաւիտենականութեան գծի վրայ առօրէական արժէքները եւ նրանց կրողները չեն մեռնում, այլ սատակում են:

Մենք սոսկում ենք առօրէականին գերի դարձող գաղութահայութեան ճակատագրից:

Մենք ասում ենք, որ հայը մէ՛կ տեղ միայն կարող է իմաստալից մահ ունենալ - Երկրի ճանապարհին: Եւ մէկ տեղ միայն իմաստալից կեանք - Հայաստանում:

Ոմանք կարող են այս բանը չհասկանալ: Տգիտութիւնը յանցանք չէ, եթէ դա օժտւած չէ չարութեան դինամիզմով: Դա անշո՛ւշտ, մի ոյժ է - ա՛յն ոյժը, որ հոգեւոր լէշեր է ստեղծում եւ թմբում կեանքի հոսանքը: Կանգ առնել անգամ տգիտութեան զոհերի առաջ եւ խաչ հանել - դա ամէն բարոյաշունչ մարդու պարտականութիւնն է: Բայց չմաքրել կեանքի ուղին - դա միայն բարոյապէս սպառուածների տկարութիւնն է:

Չարութեան դինամիզմը պատմականօրէն անստեղծագործ է ա՛յն պատճառով, որ նրա կրողը մեծ նպատակների ծարաւ չունի: Դա, երբեմն, յաջողութիւններ է շահում, բայց յաղթանակի նւաճումը մի՛շտ էլ վերապահւած է դրականօրէն ստեղծագործ ոգուն:

Տարօնականութիւնը մեր ցեղի դրական հոգեգծերի շարժն է: Դա յաղթանակի վստահութիւն է:

Ճանաչում ենք մեր իրականութիւնը, որում ոգու սպառումը կասկածամտութիւն է վիժում, իսկ վերջինը՝ դաւ եւ ուրացում: Գիտենք նաեւ, որ ամէն մի ոչնչութիւն գոյութեան մի սկզբունք ունի - արժէք ստանալու նպատակով բացասել մեծ գաղափարները, ժխտել բաներ, որոնց մասին հասկացողութիւն չունի, եւ տրորել իսկական արժէքները: Առօրեան մի՛շտ էլ մանրագործ հերոսներ է վիժում եւ յաւիտենականութիւնը մի թշնամի ունի - առօրեայի «հանճարը»:

Ովքե՞ր են գործում մեր դէմ - մեր ցեղը հայրենատէր եւ յաւերժական դարձնելու ճիգի թշնամիները. «ռէալ պայմանների» փոխասացները: Բայց մենք առանց լապտերի չենք իջել մութ փողոց, ո՛չ էլ առանց զէնքի՝ պատերազմի դաշտ: Մեզ առաջնորդող լոյսը մեր պատմութիւնը վարող ոգեկան ոյժերի իմաստասիրութիւնն է, մեր զէնքը՝ Մամիկոնեանների բարոյականը: Հրամայողաբար մերժել որեւէ ներքին պայքար, ո՛չ թէ չափւել տկարութեան ու տգիտութեան հետ, այլ միայն վերանորոգող լոյս եւ հզօրանքի բարոյական բաշխել նրանց, որոնք տառապում են հարցից - «ինչո՞ւ, ինչո՞ւ այսպէս եղան հայն ու Հայաստանը»: Տարօնականութիւնը միայն հզօրանքի ուսմունք չէ, այլ նաեւ ներցեղային սրբութեան փիլիսոփայութիւն, այսինքն՝ ոչ-սովորական բարոյագիտութիւն: Դա միաժամանակ Աւետարանի ողբերգանքը չէ. «Յիւրսն եկն եւ իւրքն զնա ոչ ընկալան»: Դա մի ուսմունք չէ «բոլորի եւ ոչ ոքի համար», այլ միայն ընտրեալների: Դա կանչ է՝ ուղղւած միայն նրանց, որոնք ընդունակ են բարոյական նորոգումի:

Հոգենորոգչական շարժումը նախատեսում է ընտրանի: Ընտրանին նա է, որ սրտի կսկիծով ապրում է տխուր ներկան եւ հոգու աչքով տեսնում երջանիկ ապագան:

Տխուր չէ՞ մեր ներկան: Անհրաժեշտ չէ՞ երջանիկ ապագայ: Եւ ներկան մի բան չէ՞, որ պիտի յաղթահարւի: Ապագան չի՞ նւաճւում տագնապալի մարտնչումներով: Յաղթահարող, նւաճող ոյժը ո՞րն է: «Պատմազգաց ոգի՛ն» - ասում ենք մենք: Միայն դա՛, պատմազգաց ոգին է ընդունակ պատմութիւն երկնելու:

Տարօնականութիւնը, ահա՛, այս ոգու իմացումն է, եւ այդ նոյն ոգին վերանորոգաբար մշակելու աշխատանքը, ճիգը: Նրանք, որ այս բանը չեն հասկանում, ոգու թշնամիներ են՝ խառնւածքով:

«Կենդանեաւ մերով տեսաք զդիակունս անձանց մերոց»,- այսպէս էր ասում Եղիշէն: Այդ ողբերգութիւնից Մամիկոնեան հայերը ստեղծեցին նոր հերոսական: Պիտի ստեղծենք ե՛ւ մենք: Դա՞ւը, թշնամա՞նքը - թո՛ղ շարունակեն նրանք, որոնք ապագան չեն տեսնում: Ապագան տեսանողներինն է:

Ապագան տեսնում են նրանք, որոնք անցեալն ապրում են իբր ոգու յայտնութիւն, եւ պատմական արարչագործումը՝ իբր ոգու արժէքների շեղջաւորում:

Մեր ճշմարտութիւնները տեմպերամենտային ճշմարտութիւններ են - նրանք աճում են եւ աճման կամքը ներբնակ է: Միայն ոգու զգացողական ոյժերն են ներբնակ: Ոգում գործում է տիեզերաստեղծ ոյժի - դուք ասէք՝ Աստուծոյ - կամքը: Առանց մետաֆիզիկայի եւ օնտոլոգիայի,- բնազանցութեան եւ էաբանութեան,- կարելի չէ հասկանալ ոգին: Իրերի հիմքը այն չէ, ի՛նչ տեսանելի է պարզ աչօք: Ոգին ընդհանրապէս մատչելի չէ զգայնութեանց: Նրա ճշմարտութիւնները խո՛ր իմացաբանական են, էաբանական: Պատմութիւնը ռէալ դէպքերի արձանագրութիւն չէ, այլ՝ ոգու յայտնութիւն: Առանց ոգու իմացութեան՝ կարելի չէ հասկանալ պատմութիւնը: Ամէն բան չի լինում գիտացեալ իրերի կամքով: Շա՛տ բան, եւ ճակատագրականը, լինում է անգիտակցականի - դուք ասէք՝ Աստուծոյ - կամքով: Յաղթանա՞կ - դա հնարաւոր է, երբ մետաֆիզիքական ոյժերն են մարտնչողի առաջնորդը, երբ վերջինն զգում է, որ բացարձակ մի ոյժ է գործում իր մէջ:

Այդպէս չէի՞ն Մամիկոնեանները - աստուածահաղորդ: Այդպէս չէ՞ր Մեսրոպը, որ ըստ հայոց պատմութեան վկայութեան, նախ ձուլուեց աստուածայինին եւ ապա հնարեց մեր երկրի լոյսը: Ղեւոնդ Երէցը չէ՞ր ասում, որ ինքը խօսել է Աստուծոյ հետ:

Այդպէս էին նրանք, եւ դրա շնորհիւ էր, որ նրանց օրերի Հայաստանը հզօր էր՝ անգամ իր պարտութեան մէջ:

Տարօնական հայը աստուածահաղորդ է, աստուածախօս - ստեղծիչ կրօնական զգացումի եւ պատմակերտ ոգու:

Տարօնականութիւն - դա մեր պատմութեան իրրացիոնալն է, անգիտակցականը, ոգու այն տարերքը, առանց որի իմացութեան՝ անհնար է խօսել ճակատագրի հետ:

Այն բոլորից յետոյ, ինչ որ տեսանք. Դէր-Զօրից, Կարսից յետո՞յ էլ հարց չտանք.- «Որտեղի՞ց ենք գալիս, ո՞ւր ենք գնում»:

Մենք գալիս ենք մի աշխարհից, որի բոլոր իրականութիւնները սարսափի երազներ վիժեցին: Մենք գնում ենք դէպի մի երազ, որ իրականութիւն պիտի դառնայ:

Երբ չկայ պատմաստեղծ ոգու առաջնորդութիւն՝ իրականութիւնը կը դառնայ երազ - երազ չէ՞ այսօր երէկւայ մեր երկիրը, իր բոլոր իրականութիւններով:

Երբ կայ այդ ոգու առաջնորդութիւնը՝ երազները իրականութիւն

կը դառնան - վաղը իրականութիւն պիտի չդառնա՞յ Հայաստանը:

Որպէսզի այդպէս լինի՝ դարձէ՛ք դէպի ոգին: Մի՛ թշնամացէք, այլ հասկացէ՛ք, որ անոգի ժողովուրդը միութիւն, ոյժ եւ ապագայ չունի: «Դա՛րձ դէպի ոգին»:

Չէ՞ք լսում ի՞նչ ենք ասում. մենք ասում ենք՝ հոգեւոր վերանորոգում, տարօնատիպ հզօրահոգի հայ մարդու վերակառուցո՛ւմ, հայակերտո՛ւմ:

Եւ ուրիշ ոչի՛նչ:

Մնացեալը մենք թողնում ենք քաղաքագէտներին, կուսակցութիւններին եւ ցանկանում, որ նրանք իմաստուն լինեն եւ զօրաւոր:

«Տարօնի Արծիւ», 1938թ., թիվ 5-6

ԵԼՔԻ ԿԱՄՔ

Դիցուք թէ աշուն է եւ օրերի հետ՝ խամրում է շատ բան - անիմա՞ստ է ամենայն անցեալ: Դիցուք թէ ձմեռ է եւ բուքը խրճիթդ մտած՝ կոտրել է սրտիդ ապակին եւ խշրանքների սարսուռով տխուր առասպել է երգում - միայն մի՞ պատմութիւն ունի աշխարհը: Կամ թէ կեանքի սայլը ճռնչալէն խրւել է առեղծւածների ցեխում - սո՞ւտ է ճիգը եւ ելքը՝ ցնո՞րք:

Առեղծւածները սարդի ոստայն են հիւսում եւ դարանում ճակատագրին: Կալանւած ոգու ոյժը վախճանի տենդն է եւ առաքինութիւնը՝ փրկութեան մոլորանքը: Մտածի՛ր, որքան ուզում ես, գալարւի՛ր, քանի դեռ ցաւ ես զգում, աղօթի՛ր, եթէ հաւատում ես գերբնական ոյժերին - կը քամւես, կը չորանաս, կը մոխրանաս, եթէ չգիտես ճիշդ ժամանակին թաղել նախապաշարումներդ եւ ճիշդ ժամանակին կենտրոնանալ որպէս ինքնափրկումի կամք:

Մենք ասում ենք. «Չկայ անել դրութիւն»:

Չկայ թէկուզ ա՛յն պատճառով, որ գէթ ապրող էակների բաժին տիեզերքը եղել է եւ պիտի անցնի, եւ նրա առեղծւածների գաղտնիքը հենց ա՛յն բանում է, որ նրանցից իւրաքանչիւրը լուծւել է ուզում:

Տիեզերքը առեղծւածների յղութիւն է, ծագումի ու վախճանի հանգոյց, խառնարան, կռիւ, կամ պատճառների կապակցութիւն եւ հետեւանքների շղթայակցութիւն, գոյութեան երանութիւն եւ յայտնութեան կամք:

Ուզում ես հաւատա՛, որ Աստծու կամքն է ստեղծել տիեզերքը, ուզում ես ասա՛, որ տիեզերքի կամքն է ստեղծել Աստւածը: Երկու դէպքում էլ դու մի մասնիկն ես արարչագործութեան: Դա ենթադրում է՝ յայտնութեան տենչի, կամքի ներկայութիւնը քո մէջ: Դու ծնունդ ես կամքի, եւ ճակատագրօրէն մասնակից ստեղծագործութեան:

Ամէն ստեղծագործութիւն անցումի ճիգ է - կորովների կուտակման եւ հոլովոյթի գործողութիւն, տարերքի երկունք, ոգու շարժ, սրտի ողբերգութիւն, էութեան զեղումի տենդ, թափւող բաժակի երանութիւն:

Մենք ասում ենք. «Յաւիտենականութիւնն ամէն բանից առաջ ոգու անցումի կարօտ է, եւ գոյութեան իմաստը հասկանում են նրանք, որոնք մեռնելու կամք ունեն»:

Ուզում ես Յիսուսի հողի մէջ ընկած ցորենի հատիկի առակը վերծանի՛ր, ուզում ես հայ Մամիկոնեանների բարոյականը հասկանալով՝ ապրիր, ուզում ես ոգու խորհուրդով գիտութեան մօտեցի՛ր -

միեւնոյն է՝ տեսակի յարատեւումը, կեանքի ստեղծագործութիւնը պայմանաւորուած են անցումի խանդով, մեռնելու կամքով:

Գոյութիւնը ծագումի եւ վախճանի առեղծուած է: «Վախճան» նշանակում է ե՛ւ մահ, ե՛ւ նպատակ: Դա ասել է՝ մեր ճակատագիրն անցումի մղում է: Բայց ամէն «անցում» իմաստ ունի, եւ իմաստը նպատակի մէջ է: Ո՞վ է գծել ճակատագրի ուղին, ո՞վ է չափել տիեզերքի խորքը, ո՞վ է կշռել Աստուծոյ կամքը, ո՞վ է որոշել իրերի վախճանը, ո՞վ է գտել պատմութեան օրէնքները: Մենք ասում ենք. «Նպատակն է մեր կեանքի առաջնորդը»:

Քո գործունէութեան ձեւը պայմանաւորուում է քո նպատակի բովանդակութեամբ: Դու գործո՞ւմ ես այնպէս, որպէս թէ տիեզերքը քո կամքի արտայայտութիւնն է եւ Աստուածը՝ քո խղճմտանքի յղացումը - Աստուծոյ հետ ես, պատմաստեղծ ես: Առանց Աստուծոյ՝ դու ոչինչ ես, իսկ առանց քո խղճմտանքի արթնութեան՝ չկայ Աստուած: Այլ եթէ քեզնից դուրս կայ Աստուած, ապա դա զինակիցն է ուրիշների, եւ նրանք քեզ հետ կը վարուեն որպէս անոգի առարկայի: Դու կարող ես ե՛ւ աստուածապաշտ լինել եւ սակայն անհաղորդ մնալ Աստծուն: Քո էութիւնից պիտի բղխի աստուածապաշտութիւնը, այնպէս, որպէս թէ տիեզերքի բացարձակ կամքն է գործում քո մէջ: Աստուածապաշտութիւնը ճշմարտագործութիւն է եւ ճշմարիտ նպատակները միայն կարող են քեզ մղել իմաստալից գործունէութեան: Քո նպատակը պիտի արձանացնես էութեանդ ա՛յն բեւեռում, որ քեզնից դուրս է թւում: Անիմանալի կապերով դու զօդուած ես մի Անյայտի, մի Բացարձակի, մի Գեր-Բանականի: Քո նպատակը պէտք է լինի ո՛չ թէ քո մտքի յղացումը, այլ՝ քո կախումի զգացումի բացարձակ յայտնութիւնը: Դու գործում ես նրա կամքով, որից կախուած ես: Յիսուսն էր ասում. «Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ, որ առաքեացն զիս»: Այսպէս գործողներն են միայն պատմութիւն ստեղծում: Դու քո նպատակի գործիքն ես միայն, բարեկա՛մ: Եւ նպատակիդ միջոցով դու գործադրում ես քո մէջ յայտնութիւն ստացած Աստուծոյ կամքը: Երբ ասում ենք «Նմանեա՛ր Մամիկոնեան հային», ուզում ենք հասկացնել, որ դու պարտաւոր ես քեզ զգալ որպէս ցեղիդ նպատակի անօթը եւ այնպիսի վճռականութեամբ մօտենալ ճակատագիրդ շօշափող հարցերին՝ որպէս թէ Աստուծոյ կամքը բացարձակ յայտնութեան է յանգել քո մէջ: Երազող ես դու թէ գուշակ, երանգների ծարաւից խելագար բանաստեղծ թէ մտքի կմախքներով սիստեմներ հիւսող գիտնական, հացի սովորական ծառայ թէ գաղափարների իշխան, մարմնի թովչանք թէ հոգու ստեր, սրտի աղքատութիւն թէ ուղեղի տագնապ, միեւնոյն է - դու ձեւ կտաս յաւիտենականութեան ա՛յն մասին, որ ապրումի որոշականութիւն է ստանում քո մէջ: Ուզում ենք

ասել, որ հայ մարդը անձնական ի՛նչ բարեմասնութիւն էլ որ ունենայ, պատմագործումի տեսակէտով նրա արժէքը մոխիր է եւ քամի, եթէ դա չունի տարօնական հոգեգծութիւն: Միայն Մամիկոնեաններին յաջողուեց Յիսուսի մոլեռանդութեամբ մահով մահը յաղթահարել, այսինքն՝ որոշականութիւն դնել նպատակի, վճռականութիւն՝ գործի եւ բովանդակութիւն՝ պատմութեան մէջ: Ե՞րբ է մշակւում յաղթանակի արւեստը - այնժա՛մ, երբ պատմաստեղծ կամքը պատկերւում է որպէս Աստուծոյ զինակիրը, իսկ յաւիտենականութիւնը՝ որպէս մայր ամենայն կարելիութիւնների: Ինչպէս Աստուծոյ, այդպէս էլ նրա ներկայութիւնը վկայող կամքի համար ոչինչ է անկարելի: Տիեզերքը հասկացւում եւ յաղթահարւում է յաւիտենազգաց ոգու գործունէութեամբ: Մամիկոնեանները գիտէին աստուածաբանութիւնից ռազմարւեստ բղխեցնել, բարոյականով քաղաքականութիւն հիմնաւորել եւ յաւիտենականութեամբ նպատակ օծել: Նրանք նախ՝ աղօթում էին, յետոյ՝ ծրագրում եւ ապա՝ գործում: Այդ էր պատճառը, որ նրանց օրերի Հայաստանում չկար երկու բան - հոգեւոր պարտւողականութիւն եւ բարոյական անկում: Նրանից յետոյ Նարեկացին հիւսեց տիեզերական ողբ: Հանճարի ցաւով նա թաթախեց իր գրիչը Բզնունեաց ծովի ալիքներում եւ աղի խօսքերի մրմուռ ցանեց դարերի սրտին: Երկար ժամանակ հայի իմացական իդէալն եղաւ՝ հասկանալ «Նարեկ»-ը: Հասկացա՞ւ. նա թութակեց «ողբաձայն» մրմունջը, խարխափեց խորքի, իմաստի եզրին, գալարւեց բանականութեան վիժած առեղծւածների ցանցում եւ մի օր էլ ընդմիշտ մոլորւեց իր էութեան անդունդներում: Աստուածն այլեւս մեր կամքի զինակիցը չէր, այլ՝ մեր մոլորանքների քննադատը: Պատմութեան փառքի գծից չեղածը, ենթագիտակցօրէն, իրան ծռւած է զգում Աստուծոյ ճանապարհից: Նմանի համար Աստուածն այլեւս առաջնորդ չէ, այլ միայն «տեսող գաղտնեաց»: Հայն է հիւսել աշխարհի ամենասպանիչ, գոյութեան տենչի ժխտումին համահաւասար «Մեղա»-ն: Պատուհասւելու սարսափից, նա իր հաւատի պարարտութիւնը ճենճերելով՝ բուրվառեց երկնքին - ներսից այրւեց, ծուխը տւեց քամիներին եւ դատարկւեց իր էութեան ոյժերից: Տէր-Զօ՞ր - առանց խոր վերածնունդի՝ դա անխուսափելի էր: Մինչեւ այդ՝ մեր կեանքում ամէն ինչ սկսւում էր ցաւով, շարունակւում՝ ողբով, վերջանում՝ աղօթքով: Մենք շուռ եկած էութիւն էինք եւ տառապանքի ծարաւ: Մենք յիշողութեամբ էինք միայն տարօնական, բայց ո՛չ կենդանի զգացումով: Դրա համար էլ մեր կեանքը քաւութեան բաղձանք էր միայն եւ անստեղծագործ տանջանք - նահատակութեան սարսուռ եւ երկիւղած թերահաւատութիւն: Յոռետեսութիւնը աւելի՛ ծանր արժէքներ եւ սրբութիւններ է ստեղծում, բայց դրանք բոլորն էլ ճակատագրօրէն խորասուզող են, անկումնային:

Անիմաստ չէ՛ ամենայն անցեալ. աշխարհը միայն մի պատմութիւն չունի. ճիգը սուտ չէ, ոչ էլ ելքը՝ ցնորք:

Դեռ զգւանք չունե՞ս քո անզօր ճակատագրապաշտութեան, յոյսի աւելցուկներով կերակրուելու քո տկարութեան, քո նենգութեան, երկմտութեան, ունայնագործութեան, սողացող մոլորանքների հանդէպ: Ինչի՞ն ես սպասում եւ ի՞նչպէս սպասում: Հայաստանում ամէն ինչ սպասում են Մոսկւայից, գաղութներում՝ Հայաստանից: Հարուստներն իրենց հոգեպահուստ գանձը նախընտրում են իրենց աղջիկների հետ տալ օտարներին: Չունեւորները մխիթարւում են ա՛յն նախապաշարումով, թէ միայն աղքատութեան մէջ կարելի է մի քիչ աւելի լաւ հայ մնալ: Հոգեւորականութիւնը մոմ ծախելու նպատակով հաստատած իր աղօթատունները հռչակում է «Հայրենիք»: Քաղաքական կուսակցութիւնները գիտեն, որ ինչպէս էլ դարձնես՝ «մէկ անգամ մէկը անում է՝ մէկ»: Բարեգործական ընկերութիւնները «քիւֆթէ փարթի» են խաղում եւ թէ՛ զւարճանում, թէ՛ ողորմութիւն անում, թէ՛ ազգային աւանդութիւնները պահում... Մամուլի ներկայացուցիչները իրանց դէմքին մածուն են քսում եւ խելքի մրոտած թղթերի առաջ՝ կանգնում ճերմակերես: Եւ բոլորը միասին սպասում են ինչ-որ աքլորակ: Այս չէ՞ տարագրութեան տանջանքը, հսկումը, «ոգին պահելու» ճիգը: Եւ դու պատմութի՞ւն պիտի ստեղծես: Վա՜յ նրան, ո՛վ աքլորակի յոյսով «ոգին է պահում», նմանը, սովորաբար, մինչեւ աղջամուղջը աւանդում է այն:

Մենք ասում ենք՝ «Ոգին չի պահւում. ոգին աճում է գործելով»:

Գործի՛ր այնպէս, որպէս թէ գերբնական ոյժերից զօրութիւն ես ստանում եւ ո՛չ թէ դատարկւում նրանց առաջ: Այդպիսով՝ դու կը գործես քո Աստուծոյ հետ: Կը գործես կարելիութիւնների մի աշխարհում, որի բոլոր իրացումների աղբիւրը քո կամքն է:

Այսպէս չէի՞ն տարօնական հայերը: Ասում ենք՝ այսպէ՛ս էին, եւ «անել» թւացող այսօրւայ դրութեան մէջ մենք դիմում ենք նրանց ոգուն: Տարօնականութի՛ւն - դա միայն բարոյագիտական պատգամ չէ, այլեւ կարելիապաշտական իմաստասիրութիւն, անցաւորը յաւիտենականին հիւսելու իմաստութիւն եւ ճակատագրի առեղծւածները Աստուծոյ խորհուրդով լուծելու կամեցողութիւն:

Քանի դեռ չկայ այս կամեցողութիւնը, «անել դրութեան» նախապաշարումը պիտի շարունակէ բազմած մնալ իմաստութեան գահին եւ պատմութեան գծից դուրս նետւած հայը պիտի մոխրանայ մանր իր գոհունակութիւնների հետ, ինչպէս կալանւած ոգին՝ առեղծւածների ոստայնում: Տարօնականութիւնը հին մի բարոյականի ոգեկոչում չէ միայն. դա նաեւ ելքի կամք է՝ նախապաշարումների ցանցից:

«Տարօնի Արծիւ» 1939թ., թիվ 9

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

(հատված խմբագրականից)

Մի՞թէ ոգիներու անապատի մէջ կը քարոզենք մենք: Ենթադրենք, թէ այդպէս է: Բայց վտանգւած ժողովուրդի մը համար ի՞նչն է աւելի ներկայայորդոր, քան արթնութեան կանչը՝ պատմութեան հազարամեակներու ձայնով:

Նարեկացին կ'ողբերգէր. «Ձայն կու տան եւ չեմ արթնար, փող կը հնչեն եւ կռւի չեմ պատրաստւիր»: Այդպէս չէ՞ օրւայ հայութիւնը: Այդ չէ՞ մեր նւաստաշունչ ներկայի եւ անլոյս ապագայի, մեր պատմական զգացումի աղօտման եւ հոգեւոր նահանջողականութեան պատճառը: Ամօթանքի ողբերգութի՞ւն, թէ անկումի երանութիւն - ո՞րն է ապրող հայ սերունդի ճակատագիրը:

Քնախտաւորներու համար խռովարարներ ենք մենք - կը խռովենք անապատի մը մեռելային երջանկութիւնը: Վե՞րջը: Իրերու վերջը ենթակայ է վերանորոգումի տիրապետութեան: Ո՛չ մէկ դրութիւն առանց ընդդիմութեան տեղ կու տայ ուրիշ դրութեան մը, բայց ճակատագիրը դրութիւնների հոլովոյթ մըն է: Ոգիի խռովքները, ի վերջոյ, կը վերածւին հասարակական ոյժի: Չկայ «ձայն բարբառոյ յանապատի», եթէ խօսքը օծւած է տառապանքի սրբութեամբ: «Յիւրսն եկն եւ իւրքն ո՛չ ընկալան»-ը մեծ ողբերգութիւն է, բայց խորքոտ ու խռովքոտ ամէն ողբերգութիւն ունի իր տրամասութիւնը, իր դիալեկտիկան: Ծուռ է յաւիտենականութեան ճանապարհը եւ ոգիի զարգացումը տեղի կ'ունենայ հակասութեանց ոյժով: Մեծ ճշմարտութիւնները հետեւանք են մեծ տագնապներու եւ կեանքի արժէքաւոր բոլոր գործերը, պատմութեան ուղեգիծը որոշող բոլոր շարժումները առաջ կու գան որեւէ դատարկութիւն բովանդակութեամբ մը լեցնելու ծարաւէն:

Պատմական իմացութեան տեսակէտով դատարկ էր մեր իրականութիւնը - բայց ահա՜ տարօնականութիւնը: Կարճաշունչ էինք մեր ոգորումների մէջ - ահա՜ Մամիկոնեաններու «մեռնելու կամքի» ստեղծագործ բարոյականը: Միայն վերացական «հանդերձեալ»-ով կը մխիթարւէինք - ահա՜ ցեղային յաւիտենականի կենսաբանական զգացումը: Անթիւ կիսանպատակներու կը ծառայէինք - ահա՜ Ցեղը որպէս լիագումար նպատակ: Փրկութիւնը իրերու երազային դասաւորումէն կ'ակնկալէինք - ահա՜ հոգեգիտական ճշմարտութիւնը, թէ ճակատագրիդ միակ առեղծւածը դու ես:

Լուսաւորչի կրօնը կը դաւանիս, Մեսրոպի գրով կը լուսաւորուիս, Հայրենիքի մասին մտածելու պահուն Վարդանը կ'ոգեկոչես, Խորենացիէն, Եղիշէէն կը ստանաս հայկականութեանդ ներշնչումները եւ չես ըմբռներ տարօնականութիւնը: Տգէտ չես դու, այլ՝ բարոյապէս պակասաւոր: Տարօնական քո գիտակցութեան եւ զգացումի աղօտումն է պատմական դժբախտութիւններուդ բուն պատճառը: Խաբուած ես - մի՛ արդարացիր մեղադրելով ռուսը, անգլիացին, գերմանացին, ֆրանսացին, անգամ թուրքը: Խաբուած ես, որովհետեւ անծանօթ էիր քո էութեան: «Ծանի՛ր զքեզ» եւ պիտի տեսնես, թէ որքան հեշտ է բարոյապէս վերանորոգուիլ իբրեւ տարօնական հայ: Հարազատէ՛ «մեռնելու կամք»-ի բարոյականը եւ քաղցրութեան հետ՝ դու պիտի զգաս թեթեւութիւնը յաղթանակի:

* * *

Անապատի մէջ կը քարոզենք եւ մեր խօսքերն ունին բնազանցական շեշտ: Բոլոր մեծ ճշմարտութիւնները յղութիւն կը ստանան անապատի զգացումէն եւ գործնական կեանքի ամբողջ հիմքը աշխարհի բնազանցական ոյժերու մէջ է: Չկա՛յ աւելի մեծ թովչանք, քան յաւիտենականութիւնը, եւ աւելի ազդու խօսք, քան հազարամեակներու ձայնը: Մամիկոնեաններու մեծագործութեան գաղտնիքը ա՛յն բանի մէջ էր, որ յաւիտենականութեան զգացումը անբաժան էր իրենց խղճմտանքէն: Այս զգացումով կարելի է միայն աշխատիլ սեփական անձի առաքինութեան վրայ եւ Աստուծոյ համար: Այսպէս աշխատողնե՛րը միայն կրնան Հայրենիք յաւիտենագործել:

Կտրուած է յաւիտենականութեան թելը եւ հատուածականացած տարագրութիւնը կը մոխրանայ իր մանր նպատակներու հետ: Տարօնականութիւնը մեծ այդ տագնապէն եւ մեր ցեղի բոլոր դարերու ցաւի ու կարօտի զօրութենականութենէն յղութիւն ստացած առաջնորդող ճշմարտութիւն է:

Մեր եսի խորագոյն էութեան մէջ մենք հող չենք, որ հող դառնանք, այլ՝ ոգի, որ ոգի մնանք: Տարօնականութիւնը պատմական ոգիի ուսմունք է, միաժամանակ, ցեղագումար հայկականութեան շարժում: Որպէս մեր ցեղի յաւիտենականը արտայայտող կորով, դա նաեւ երկրի վրայ անմահ գործեր երկնելու բաղձանք է, որով՝ ազատագրական կամք:

Ոգիներու անապատի մէ՞ջ ենք դեռ - բայց չկայ հոգեվիճակի քարացում, չկայ պարտուողական գոհունակութեան լճացում: Ինչ որ այսօր կ'ապրինք՝ յիշողական սարսափներու նախապաշարում է: Փաստօրէն, մենք կանգնած ենք ճակատագրական անկիւնադարձի մը

առջեւ: Յեղաշրջուող ոգին կ'ընթանայ իրերու հոլովագործումի գծով:

Տարօնականութիւնը անապատի մէջ հասունացած խօսք է: Ո՛վ գիտէ նման խօսքի դիալեկտիկան՝ գիտէ կեանքի զարգացման օրէնքը: Մարդիկ կրնան շեղիլ օրէնքէն, բայց կեանքը՝ երբե՛ք յաւիտենականի գծէն: Կայ յաւիտենական դարձի օրէնքը, իրերը կը մղւին դէպի հոն, ուր է իրենց էութեան ծանրութեան կեդրոնը: Ո՛ր կողմէն ալ որ վերցնենք հայոց պատմութիւնը՝ մեր ուշադրութիւնը կը գրաւեն տարօնական հայու մեծագործութիւնները: Պատահականութիւն չէ սա, այլ՝ կեանքի խորհուրդ: Ապագան անոնց է, որոնք կը գործեն խորհուրդներու ոյժով:

Դժւարութիւններ կան մեր առջեւ, բայց մեզ հետ է ժամանակի ոգին: Պարտուած, պառակտուած, ներկայապաշտ եւ հաւատաթափ է օրւայ հայութիւնը, բայց նաեւ երբե՛ք մինչեւ իր էութեան խորագոյն անկիւնը այս աստիճան ողբերգօրէն ցնցւած: Նման ցնցումները կ'առաջադրեն վերանորոգումի պահանջ: Իսկ վերանորոգում կը նշանակէ՝ դա՛րձ դէպի կենսաբանական, ոգեկան եւ բարոյական ա՛յն ոյժերը, որոնք պատմական վաւերականութիւն ունին:

«Տարօնի Արծիւ», 1939թ., թիվ 10

ԻՐԻՑՈՒԿ ՄԵՌԵԼՆԵՐԸ ՎԿԱՅ

Մուսա լերան հայերը գաղթեցին՝ վառելով իրանց գիւղերը եւ գերեզմաններից առնելով նահատակների աճիւնները:

Ողբերգութիւնները ցաւ պատճառելով՝ լուծում են նաեւ առեղծուածներ: Ինքը՝ ցաւը որպէս անցումի տանջանք թէ երանութիւն, յիշատակի վառ մի մոմ է՝ մեր էութեան անծանօթի առաջ:

Շա՛տ եմ մտածել ա՛յն մասին, թէ ինչո՞ւ վերապրող տարօնցիները ստեղծեցին ցաւի երդումը - նրանք էութեան սարսուռով երդւում են «իրիցուկ մեռելներով»:

Ո՞վ է չափել հայ ոգու տարողութիւնը: Մեր սիրտը խորհուրդների ոստայն է եւ մեր ոյժը՝ հակասութեան մէջ: Մեր բոլոր յաղթանակները ոգու ողբերգական աքտեր են եւ մեր կամքն օծւած է աւելի այրւած մեռելների ցաւով, քան երկաթի շառաչի կարօտով: Ի՞նչ ցեղ էր այն, որ հարաւային Ռուսաստանում, Թրակիայում, մեր Տարօնում, Բագրեւանդում, Այրարատում արւեստական բլուրներ է կառուցել՝ իր մեռելների համար եւ դրանք դարձրել նաեւ ինքնապաշտպանութեան բերդեր: Ի՞նչն է ժառանգւել մեզ այդ ցեղից, որ չէր կարողանում առա՛նց գերեզմանների իշխանութեան ապրել, առա՛նց հայրերի ոգու եւ աճիւնների առաջնորդութեան՝ կռիւ վարել: Պատկերեցէ՛ք Հայաստանը եւ կարդացէ՛ք մեր կեանքի խորհուրդների գիրքը - մեր գերեզմանոցները, սովորաբար, հաստատւած էին բարձունքների վրա, որ ասել է՝ ողջերն ապրում են մեռած հայրերի հսկողութեան տակ: Մեր էութիւնը անբաժան է հայրերի գերեզմանից. դրանից էր հայն ստանում սրբութեան կրակը: Հռովմայեցին ասում էր «փա՛ռք», հայը՝ «լո՛յս»: Ո՛չ մի ժողովրդի լեզւի ոգուն այնպէս հարազատ չեն «լուսահոգի», «լոյս իջնէ հօրդ հոգուն, գերեզմանին» դարձւածքները եւ ո՛չ ոք է «արեւ»-ը, «լոյս»-ը, «կենդանի կրակ»-ը այնպէս խանդով երգել, որպէս մեր Շնորհալին, Նարեկացին: Վահագնի ուրւականը կրակի խորհուրդով դեռ յածում է հայ հողի վրայ: Լուսաւորիչը (այլ ո՛չ մի ազգ իր առաքեալին այսպիսի տիտղոսով է օծել. այս մակդիրն էլ իր հերթին արդիւնք է հայոց խոր լուսապաշտութեան) մեր առաջին մկրտութիւնը կատարում է Թոնդրակի հրաբուխներից իջնող

Արածանու ջրերում: Մամիկոնեանների դամբարան Ս.Կարապետը դառնում է հայոց աշխարհի ամենահզոր սուրբը: Հայն իր ոյժի, լոյսի, ձիրքի աղբիւրն համարել է մեծ նախահայրերի գերեզմանը: Աշխարհածանօթ է հայ լարախաղացների երկիւղած պաշտանքը դէպի իրանց հովանաւոր եւ ձիրքատու Ս.Կարապետը: Սայեաթ-Նովան ասում է, որ «Ս.Կարապետի կարողութիւնով» է ձեռք բերել նւագողական իր վարպետութիւնը: Հայոց սրբերի «սուլթան»-ի հմայքով իշխում էր Մամիկոնեանների դամբարանի խորհուրդը - տարօնական ոգու խորհուրդը: Տեսնողներից ո՞վ չի յիշում լոյսի պսակը գնդապետ Սամարցեւի - մոլեռանդ այն հայը, որ իր գնդի անունը դրեց «Սուրբ Կարապետսկի պոլկ» - ճակատին, երբ դա Ս.Կարապետի անունով խաչ էր հանում: Այսօր, ո՞վ չի սարսռում, երբ լսում է տարօնցի մայրերի ցասումնախառն բարեպաշտութեամբ օծուած երդումը. «էն իրիցուկ սուրբ մեռելները վկայ»...: Վկա՛յ ամբողջ Հայոց Աշխարհը, հայ ցեղը, որի խորհուրդները այնքան կենդանի կերպով դեռ ներազդում են հեռաւոր Մուսա լերան իր որդիների ոգում:

Օրհասական մի վայրկեանում նրանք թաղեցին խորհուրդների զանգը եւ կրօնական խանդով բարձրացան իրանց լեռը՝ աշխարհը զարմացնող հերոսական ստեղծելու: Այսօր, երկու պետութիւնների քաղաքական սակարկութիւնների հետեւանքով հարկադրւում են լքել իրանց հնամեայ գիւղերը, բայց վառում են տները եւ գերեզմաններից վերցնում նահատակների աճիւնները. «Թուրքը չի կարող շնչել մեր հայրերի բնակարաններում, ո՛չ էլ պիղծ իր ոտքը դնել նրանց գերեզմաններին»:

Հիացէ՛ք որքան ուզում էք. երկու աքտերով էլ Մուսա լերան հայերը փրկեցին մեր ցեղի պատիւը: Բայց ո՞ւր է գաղտնիքը կրօնականութեան հասնող այդ ցեղազգացութեան: Գաղտնիքը նրանում է, որ աշխարհագրական եւ ազգագրական պայմանների բերումով, հայկական այդ գիւղախումբը, պատմական յիշողութեամբ թէ կեանքի առօրեայով, ապրել է որպէս ինքնամփոփ ցեղ եւ ո՛չ թէ իր էութիւնից դուրս եկած ժողովուրդ: Մուսա լերան հայերն իրանց համարում են Տիգրան Մեծի հայկական աշխարհակալութեան առաջամարտիկ ոյժի յետնորդները: Պատրանք լինի դա թէ իրականութիւն. միեւնո՛յն է, այս հաւատը կենսաբանական խորք ունի եւ ըստինքեան բարոյական անխորտակելի ոյժ է: Փաստ է, որ Մուսա լերան հայերը ոգու խորհուրդի եւ հայրերի աճիւնների պատւով ապրող մարդիկ են: Դա նշանակում է, որ նրանք հին, շա՛տ հին հայեր են եւ Հայաստանից հեռացած դեռ ա՛յն օրերին, երբ մենք տարօնական ոգով ու բարքով ապրող ցեղ էինք եւ ո՛չ թէ «հայ

ժողովուրդ»: Ահա՛ պատճառը, որ յիշատակները Մուսա լերան շուրջ հայ ոգու ամենահուժկու շանթը արձակեցին - պատմական ծաւալով փոքր, սրտի տարողութեամբ՝ անչափելի:

Ինչե՛ր կարող էր անել Տարօնը Նեմրութի վրայ, ուր Խորենացին Բէլն է թաղել եւ մեր նոր պատմութիւնը՝ Սերոբներու տիտանացումը արձանագրել: Բայց ժողովրդական բարոյականի ռազմավարութիւնը այստեղ կոտրեց ցեղի սուրը: Մուսա լերան հայերի բնազդն անկաշկանդ մնաց. այնտեղ չկային ժողովրդի նախապաշարումներով առաջնորդուող ղեկավարներ:

Նրանք, որ դեռ «չեն հասկանում», թէ ցեղ, տարօնականութիւն, հայրերի ոգի քարոզելով ի՞նչ ենք ասում, թո՛ղ իրանց կարճաշունչ զննութիւնը մի պահ ուղղեն դէպի անցեալը, ապա դէպի օրւայ հայկական Պոլիսը կամ ժողովրդի բարքով ու տենչերով ապրող միւս գաղութները, եւ «կ'այլասերինք», «կ'ուծանանք» իրենց աղաղակներով ծունկի գան Մուսա լերան հայկական ցեղախմբի առաջ: Ուր ժողովրդի հոգեվիճակն է իշխում, այնտեղ կայ «այլասերումի» երանութիւն, ամօթանքի ողբերգութիւն: Մօտ մէկ միլիոն հայեր կան «սփիւռք»-ում, բայց այս քսան տարւայ ընթացքում հպարտանքի ողբերգութիւն ստեղծեցին Մուսա լերան հինգ հազար հայերը:

Մարդկային ամէն նախիր բարոյական ոյժ չէ, ո՛չ էլ «կ'ուծանանք» աղաղակը՝ քաղաքական գործ: Բարոյական ոյժ է միայն ցեղը եւ քաղաքական գործ՝ միայն հայրերի պատիւն ու ոգին յաւերժացնելու ճիգը: Զէնքի շառաչով յաղթանակ չտարաւ Մուսա լեռը, բայց իր գիւղերը հրկիզելով եւ նահատակների աճիւնները հետն առնելով՝ ապացուցեց, որ հայրենի հողի մրմուռի չափ խոր է անհերողութեան զգացումը՝ թուրքի հանդէպ: Թո՛ղ ժողովրդի ոգու ներկայացուցիչները հաշտուողականութիւն քարոզեն, թո՛ղ նրանք Մեծ Հայաստանը ցնորք համարեն եւ մեր հայրերի գերեզմանները հայոց երկրի հետ՝ անդառնալիօրէն կորած: Կորած են միայն իրանք, որ չեն հասկանում ժամանակների շարժը: Ազգերի պատմութիւնը գրւում է ցեղի արիւնով եւ ոգու տանջանքով, բայց ո՛չ ժողովրդի քրտինքով եւ հացի ժխորով: Եւ գրում են նրանք, որոնք յաւիտենականութեան համար աւելի՛ կենդանի զգացում ունեն, քան՝ անցաւորի, լինի դա դժբախտութիւն թէ հաճոյքի երանութիւն:

Թո՛ղ գիտնան նաեւ մակերեսայինները, որ մեր ճակատագիրը վարում են յաւիտենական ոյժերը, որ Մուսա լերան հայերի ներկայ աքտը նրանով է մեծ եւ պատմական, որ դա վկայութիւն է այն մասին, թէ մեզ ծգող ոյժերից ամենազօրութենաւորը ցեղն է - ցեղը՝ հողի իր կսկիծով,

կարօտով, անհերողութեան իր բարոյականով, ցասումով եւ կենդանիները մեռելներին շաղկապող խորհուրդներով:

Այդ խորհուրդների ոյժով մենք ոգեկոչում ենք Մամիկոնեաններին եւ նրանց «մեռնելու կամք»-ի հրամայականը իմաստաւորելով «այրուածների կտակ»-ով՝ ձգտում ենք հայրենադարձումի կրօնախանդ ցեղաշարժ ստեղծել - տարօնականութի՛ւն:

Ո՛վ կարողացաւ խորքով ապրել Մուսա լերան հայերի գործի խորհուրդը - ապրեց տարօնականութիւնը: Ո՛վ հասկացաւ դա - հասկացաւ, որ ո՛չ միայն երկնային, այլեւ երկրային յաւիտենականութեան ճանապարհին՝ հայրերի գերեզմանն է ճակատագրի ամենախորհրդաւոր նշանաքարը:

Օրւայ պայմաններում հայ չկայ Արեւմտեան Հայաստանում, բայց դա մեր հոգեւոր սեփականութիւնն է: Այդ սեփականութեան զգացումը հիմնաւորւում է յիշատակների ձգողականութեամբ:

Մեզ քաշում է յաւիտենականութիւնը. քաշում է այրուածների ցաւի ծանրութեամբ, սրբազան այն մոլեգնութեամբ, որով Մուսա լերան հայերը մի օր իրանց խորհուրդների զանգը թաղեցին, այլ մի օր իրանց հայրերի տունը վառեցին, քաշում է էութեան ա՛յն սարսուռով, որ ապրում է տարօնցի հայը օտարութեան մէջ, երբ երդւում է. «Իրիցուկ մեռելները վկայ»:

«Տարօնի Արծիւ», 1939թ., թիվ 11

ՀԱՅ ԵՎ ԳԵՐՄԱՆ ՈԳՈՒ ԷԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ*

Մարդաբանական հետազօտութիւնները (կատարուած մասնաւորապէս գերմանացի գիտնական Ֆոն Լուչանի կողմից) աստիճանաբար հաստատեցին, որ Քրիստոսից 15 դար առաջ Փոքր Ասիան, Հայկական Բարձրաւանդակը, Պարսկաստանի արեւմտեան մասը եւ Սիրիան բնակւած էին կազմաբանօրէն միացեալ մի ժողովրդով: Դրա զաւակներն ունէին կարճ գլուխ, բարձր գանգ, սեպօրէն ցցւած ճակատ, առհասարակ երկարաւուն դէմք, յետսակողմից ուղղահայեցօրէն իջնող գլուխ, հուժկուօրէն առաջակարկառ քիթ, թուխ աչք, թուխ եւ ողորկ մազ, խիտ եւ փարթամօրէն աճող մօրուք: Միջահասակ մարդիկ էին դրանք, թուխ մորթով:

Այս ցեղն այսօր ամենազուտ կերպով գտնւում է Հայկական Բարձրաւանդակում, Պարսկաստանի որոշ մասերում եւ Փոքր Ասիայում ու Սիրիայում որպէս կրօնական աղանդներ ինքնամփոփւած փոքրիկ խմբակցութիւնների մէջ - կըզըլբաշ, անսարիէ, թահթաջի, լիկիացի, դրուզ, մարօնիդ, եւն.:

Այս ցեղը ծանօթ է հայատիպ (armenoid), նախահայկական, ալարոդեան, կապադովկեան, փոքր-ասիական, հեթիտական եւլն. անուններով եւ իր մարմնական-կազմախօսական յատկութիւններով ներկայացնում է Կենտրոնական Եւրոպայի ալպեան-դինարեան ցեղի մի հատւածը (ըստ ոմանց՝ մայր արմատը):

Այդ Ցեղն էր ստեղծողը փոքր-ասիական երբեմնի նշանաւոր այն քաղաքակրթութեան (2000-1500 Ք.-ից առաջ), որի մոռացւած փառքը կապւում է հեթիտների անւան:

Լեզւաբանութիւնը մեծ ջանքեր է թափում «հայ», «հաթ», «հայասա», «խայաշա» կամ «արման», «արիմ», «արմինի», «արմին» (ինչո՞ւ ոչ՝ նաեւ «արմէն» - «էրման», գերման - (գ)երման) բառերի ստուգաբանութեամբ լուծել հայոց ցեղային ծագման խնդիրը:

Մարմնա-հոգեգծային (արեան եւ ոգու) յատկանիշների ուսումնասիրութիւնը, սակայն, աւելի ապահով ուղի է, որովհետեւ այդտեղ շօշափւում են խառնւածքի եւ կերպի ներայայտ, ինքնայայտ գծեր, որոնք զերծ են բառերի դիպւածական նմանութեան տարակոյսից եւ ընծայում են աւելի բարդ, բայց աւելի հիմնաւոր սիստեմի կարելիութիւն:

Մարդաբանութիւնն ասել է իր խօսքը: Հայերը արեան գծով մերձաւորագոյն ազգակիցներ են գերմանացիներին: Դեռ չի ուսումնասիրուել հայերի եւ գերմանացիների հոգեւոր էակցութեան կողմը, այսինքն՝ դեռ բաղդատութեան չեն դրուել նրանց խառնուածքի, որով եւ ոգու յայտնութեան բնորոշիչ գծերը:

Ոգու արտայայտութիւններն ունեն իրենց ծագման պատճառականութիւնը: Մենք կարող ենք չընդունել «ոգե-մարմնական զուգահեռականութիւնը» որպէս փիլիսոփայական տեսութիւն կամ բնազանցական վերացում, բայց ո՛չ ոք կարող է ժխտել ոգու եւ արիւնի փոխադարձ ազդեցութիւնը որպէս կենսաբանական ճշմարտութիւն: Որոշ որակի արիւնը կարող է միայն ծնունդ տալ որոշ որակի ոգու: Ոգու եւ ոգու միջեւ այնքա՛ն տարբերութիւն կայ, որքան՝ արիւնի եւ արիւնի: Տարբեր են ո՛չ միայն սպիտակների եւ դեղինների մարմնական յատկանիշները, այլեւ նրանց հոգեգծութիւնը:

Բայց անցնենք հայ եւ գերման ոգիների էակցութեան հարցին: Աւելի հիմնական ուսումնասիրութիւնը վերապահելով բարեպատեհ մի առիթի, այժմ պիտի բաւարարւենք մի քանի շատ ցայտուն երեւոյթների հաստատագրումով:

Դրանք են.

1) Լինելիական զգացում.- Ցեղերի խառնուածքը կնքւում է նրանց գոյապրումի բովանդակութեամբ եւ կերպով: Ոմանց մէջ շեշտուած է կայական զգացումը, ոմանց՝ ուժականը: Առաջինների երջանկութեան իդէալը յառողական է, երկրորդներինը՝ լինելիական: Նրանք ներկայապաշտ են, սրանք՝ նորատենչ: Նրանց ինքնայաւիտենականացման իդէալը յարակայութիւնն է, սրանցը՝ տեւական շարժումը: Նրանց կամքը ասում է - «կայ», սրանցը՝ «եղիցի»: Նրանք կեանքն զգում են մեքենայօրէն, սրանք՝ կենսաբանօրէն:

Հայերն ու գերմանացիները հաւասար չափով դինամիկական խառնուածքով են օժտուած (տե՛ս կէտ «4»): Խառնուածքի այս նմանութիւնը ցեղակցութեան ամենախոր, միաժամանակ ամենավաւերական հիմքն է:

2) Լեզու.- Ներզարգացողական, աճեցողական հսկայաթափ ոյժ ունի հնդկա-եւրոպական լեզուախմբի արեւմտեան (եւրոպական) ճիւղին պատկանող հայերէնը: Դինամիկական այդ զօրոյթը արտայայտւում է յատկապէս իբրեւ բարդ բառեր կազմելու ընդունակութիւն - մի յատկութիւն, որով օժտուած է մասնաւորապէս գերմաներէնը: Երկու այդ լեզուները նորաստեղծելու ներբնական իրենց զօրոյթով՝ տարբերւում են «քարացած» ձեւերի մէջ կնքւած եւ կաղապարուած լեզուներից,

որոնցից է, օրինակ, ֆրանսերէնը: Լեզուական դինամիկան պայմանաւորուում է խառնուածքի դինամիզմով:

3) Դիւցազներգութիւն.- Հայոց աւանդական պատմութիւնը բացւում է նախահայր Հայկի եւ ասորական Բէլի կռւով: Արիական Հայաստանի եւ սեմական հարաւի էութիւնների սուր պայքարը շարունակւում է հնում՝ հայ Արայի եւ Շամիրամի, հայոց պատերազմական աստուած Վահագնի եւ Բարշամի, միջին դարում՝ հայ «Սասմայ Ծռեր»-ի եւ արաբ «Մսրայ Մելիք»-ի միջեւ:

Հայկի մարմնական («խայտակն», «քաջաբազուկ») եւ հոգեկան («վեհանձն», «ազատասէր») գծերը համապատասխանում են նորդեան կապտաչեայ եւ գոռոզ ցեղի յատկանիշներին: Վահագնի մազերն ու աչքերը կրակ-արեգնագոյն են, ինչպիսին էր միջին դարում գերման լեգենդար կայսր Ֆրիդրիխ Բարբարոսան:

4) Աշխարհի լինելիական ապրում.- Հայոց դիցաբանական կոսմոգոնիայի մէջ գոյարմատի հանգամանք ունեն կրակն ու ջուրը (Վահագնը ծնւում է ծիրանի ծովում, կրակով բռնւած եղէգնի բոցերից): Կրակն ու ջուրը գոյարմատական են նաեւ Հայաստանի ծնունդ (ուրմիացի) համարւող Զրադաշտի դուալիստական կրօնում: Դեռ չի ուսումնասիրւել Հայաստանի եւ հայկական էութեան ազդեցութիւնը յունական փիլիսոփայութեան, մասնաւորապէս փոքր-ասիական (յոնիական) դպրոցի վրայ, բայց Թալէսը ջուրն էր ընդունում որպէս գոյութեան արմատ, Հերակլիտը՝ կրակը: Հերակլիտի կրակը ենթակայ է յաւիտենական հոլովոյթի եւ երեւոյթների աշխարհը հնարաւոր է դառնում նրա շարժումով: Հայը անմահութեան գաղափարը կապում է ջրին, ստեղծագործութիւնը՝ կրակին:

Շնորհալին անգամ Յիսուսը պատկերում է որպէս «հուր կենդանի»: Միջին դարում ստեղծւում է «արեւորդի»՝ որով կրակ-արեւի որդիների աղանդը: Յաւիտենականութիւնը հայը ապրում է որպէս անվերջանալի շարժում: «Սասմայ Ծռեր» դիւցազնավէպի հերոսների նետած քարերը «գնում են մինչեւ այսօր», այսինքն՝ յաւիտենական է նրանց չուն, որովհետեւ քանի դեռ աշխարհը կայ՝ «այսօրը» վերջ չունի: Թւում է, որ հին հայերն ունեցել են նաեւ նորատենչութեան մի աստուած կամ դեւ - «ցնորք», որ նշանակում է մինչեւ նորը. սխոլաստիցիզմի շրջանում հայոց ամենամեծ փիլիսոփայ-բանաստեղծ Գրիգոր Նարեկացին (10-րդ դար) խօսում է «անցաւոր յաւիտենական»-ի մասին, այսինքն՝ ընդունում է, որ աշխարհում ո՛չ թէ կայականութիւնն է յաւիտենական, այլ՝ շարժումը:

Նոր ժամանակների ժողովրդական մի երգիչ - Ջիւանի - իր «Ջա-

խորդ օրերը» երգում կեանքի լաւատեսութեան հիմքը գտնում է հենց այն բանում, որ աշխարհում ոչինչ է կայուն, որ «փոփոխակի անցքեր շարունակ կու գան ու կ'երթան»: Վերջապէս հայու ամենայուսահատական վիճակի մխիթարիչ խօսքն է. «վերջը լաւ կը լինի»:

Սա արդէն գերմանացիների լինելիական զգացումն է, Լուտերի - «այս կեանքը... մի էութիւն չէ, այլ մի լինելիութիւն»-ը, «մենք դեռ չկանք, այլ լինում ենք»-ը, Հեգելի հոլովաշրջական փիլիսոփայութիւնը, Նիցշէի «Զրադաշտական խանդը», «իրերի յաւիտենական կրկնադարձը»: Հայ եւ գերման էութիւններին յատուկ լինելիական այս տենչը համապատասխանում է նրանց լեզուների ներքին դինամիզմին:

5) Երկու ոգիների պայքար. - Հայ էութեան մէջ շեշտուած է ոգու ողբերգական պառակտումը: Նարեկացու հոգում կռւում են էմպիրիկ կեանքի խորին զգացումը եւ գիտնականի տանջող մտածումը - միստիցիզմը եւ լոգիզմը, քաղաքական անիշխանականութիւնը եւ կրօնական աբսոլուտիզմը, սիրտը եւ բանականութիւնը: Նա ե՛ւ հումանիզմի մի նախակարապետն է, ե՛ւ սխոլաստիկ: Առհասարակ, հայի մէջ ներդաշնակ չեն կուլտուրաստեղծ էներգիան եւ քաղաքական զգացումը: Հենց Նարեկացին մի Ֆաուստ է, 10-րդ դարում, համակւած Գէոթէի ասած «երկու հոգիների պայքար»-ով:

6) Ազգային էութեան արծանացում. - Հայկական ճարտարապետութիւնը համարւում է «մայր քրիստոնէական եկեղեցական ճարտարապետութեան» եւ կրում է արիական կառուցակերպի, ոճի եւ գծի կնիքը: Դա արտայայտում է հայոց ազգային անձնաւորութեան արծանացումի տենդը: Այդպիսի արծանացման յանգում է նաեւ գոթական ոճը:

Նշանակալից է, որ հայերի եւ գերմանների պատմութիւն եւ մեծապետութիւն ստեղծելու կամքը, այսինքն՝ պատմական զգացումի եւ ոգու զարգացման շրջանները, ժամանակագրօրէն զուգադիպում են միմեանց (Բ. եւ Ա. դար Ք.-ից առաջ): Կա՞ր արդեօք գիտակցական կապ երկու ժողովուրդների միջեւ: Յամենայն դէպս, ընդհ. թշնամի Հռոմի դէմ նրանք գործեցին յօգուտ միմեանց եւ դրանով փրկւեցին ռոմանացումի վտանգից:

Նոյնանման երեւոյթ տեղի ունեցաւ Միջին դարում, երբ հայերն ու բուլգարները, թերեւս առանց գիտակցական զինակցութեան, կռւելով Բիւզանդիոնի եւ բիւզանդական էութեան դէմ՝ փոխադարձաբար նպաստեցին միմեանց ազգային ինքնութիւնը փրկելու գործին:

Այս տեսակէտով նշանակալից է նաեւ 6 եւ 7-րդ դարում Հայաստանում ծայր տւած, Բուլղարիայում բոգոմիլիզմը խմորող եւ եւրոպական պրոտեստանտիզմի նախօրինակը համարւող պաւղիկեան շարժումը,

որ ոտքի ելաւ բիւզանդական ցենտրալիզմի, օրթոդոքս էութեան, չափազանցեալ միստիցիզմի, պատկերապաշտութեան դէմ: Հետագային գերմանացիք նման շարժումով նսեմացրին Հռոմի Աթոռի կշիռը եւ ունիվերսալիզմից անցան ազգային էութեան արձանացումին:

Այս տենդն այնքան զօրաւոր էր հայերի մէջ, որ նրանք Գ. դարի վերջում կամ Դ-ի սկզբում ընդունելով քրիստոնէութիւնը, իրենց ազգային ինքնութիւնը հակադրեցին հռովմէականութեան եւ իրանիզմին, իսկ Արեւմուտքի քրիստոնէացումից յետոյ, դաւանապէս կղզիացան Ազգային Եկեղեցու շուրջը:

Բաւարարենք ասածով եւ անենք մի քանի եզրակացումներ: Որպէս արեան եւ ոգու էակիցներ՝ հայերը եւ գերմանացիները ունեն խառնուածքի ընդհանուր գծեր: Դրանցից, պատմագործական տեսակէտով, մասնաւոր նշանակութիւն ունեն լինելիական զգացումը, կենսաբանական հզօրաթափ դինամիզմը եւ էութեան երկուութիւնը («ես»-ի տարանջատումը, որ կնքում է ազգարժէք երկու ստեղծագործութիւնների - «Նարեկ» եւ «Ֆաուստ» - նկարագիրը): Լինելիական զգացումով եւ կենսաբանական զօրաւոր դինամիզմով պայմանաւորւում է երկու ժողովուրդների մոլուցքը՝ ինքնայատուկ խանդ, ոճ ու երանգ տալու յաւիտենականութեան եւ ազգային էութեան արձանացման վերաբերեալ ամէն ստեղծագործութեան: Էութեան շեշտուած դուալիզմի հետեւանք են ստեղծագործական կամքի պառակտումը եւ քաղաքական անհատապաշտութիւնը, որից հայերն ու գերմանացիները հաւասարապէս տառապեցին դարերով: Օժտուած իմացական կարողութիւններով (հակառակ որ վերջին դարերում հայերը իմաստասիրութեան մարզում անպտուղ մնացին) նրանց պակսեց համապետական կամքը: Հայաստանում զուր անցան տարօնական հայերի (Այրարատի եւ Տարօնի գլխաւորութեամբ) միութեան ճիգերը, իսկ Գերմանիայում՝ դարերով իրար դէմ մաքառեցին աւատապետական ոյժերը, պրոտեստանտիզմը, կաթոլիցիզմը, պրուսիական էութիւնը մարմնացնող Հոհենցոլերնները, աւստրիական Հաբսբուրգները եւն.: Մեզանում քաղաքական միութեան իդէալը բանաձեւուեց («Միացեալ եւ Անկախ Հայաստան»), երբ ամէն բան կորցրած՝ սեղմւել էինք Այրարատում: Հայը իր ոգին շարժման մէջ է դնում, երբ կորցնում է իրականութեան հողը: Պակասաւոր է նրա իրականութեան զգացումը, հակասութիւն կայ հայի քաղաքական զգացումի եւ երազի միջեւ: Մինչեւ ռասիստական շարժումը՝ այդպէս էին ե՛ւ գերմանացիները (քանակական եւ որակական տարբերութիւնները - մեր նկատմամբ - հաշւի առնելով): Այդ շարժումով հնարաւոր դարձաւ գերմանական ազգի հոգեբանական միատարրութիւնը: Պատ-

մա-հոգեբանօրէն դա նշանակում է՝ ալպեան եւ նորդեան մինչեւ այժմ ներհակ հոգեգծերի ներդաշնակում: Կայծակի հարուածով չեղաւ դա, այլ՝ դարերի հոգեւոր ճիգով: Քաղաքական իմաստով, Գերմանիան նո՛ր է դառնում ազգութիւն, բարոյական իմաստով՝ նա այդպիսին էր վաղուց: Քաղաքական յաջողութիւնը մի՛շտ էլ ենթադրում է բարոյական նախապատրաստութիւն:

Կարծում ենք, որ հասկանալի դարձաւ, թէ ի՞նչ է վերապահւած տարօնականութեան - հայութեան բարոյական նախապատրաստութիւնը, հոգեբանական միատարրութիւնը՝ վերաքննական ոգու միջոցով:

---

* *Սույն հոդվածը՝ «Հայ եւ գերման ոգու եւ արեան էակցութեան մասին (գերմանացոց ռասիզմի եւ հայոց տարօնականութեան պատմական դերը)» վերնագրով, լույս է տեսել 1939թ., «Տարօնի Արծիւ»-ի թիվ 8-ում: Այն չի կարող դիտվել որպես այդ տարիներին զուտ քաղաքական նկատառումներով արված բարեխոսություն. դեռ ժամանակին Ռաֆֆին էր ասում՝ «Հայն ասիական գերմանացի է... Մեր մեջ նմանություններ կան, ամեն կողմից նայելով»:*

Արյան գծով հայերի ու գերմանացիների էակցությունը հիմնավորող հեղինակի բերած փաստարկները, հաշվի առնելով գիտության արդի նվաճումները, ժամանակավրեպ են, եւ մենք բավարարվել ենք հոդվածի՝ երկու ազգերի ոգո՛ւ էակցությանն առնչվող մասերը ներկայացնելով: - Խմբ.

Գ. ՆԺԴԵՀԻ «ՑԵՂԻ ՈԳՈՒ ՇԱՐԺԸ»

(մի փոքրիկ մեկնաբանութիւն)

Քչեր, շա՜տ քչեր մեր կեանքում խօսում, գրում կամ գործում են «արիւնով ու ջղերով»:

Բարձր տեմպերամենտի եւ հզօր անհատականութեան հոգեբանական տիպարներ են դրանք, որոնք աչքի են ընկնում իրենց հարազատած գաղափարներն ու ճշմարտութիւնները կրօնական էնտուզեազմով ապրելու յատկութեամբ եւ իրենց ինքնատիպ ոճով - ընդհանրապէս ֆրագմենտար բնոյթի:

Անկասկածօրէն դրանցից մէկն այս գրքոյկի հեղինակն է - մի մարդ, որ իր խառնուածքը խորհրդանշող ֆրագմենտար մտածումով ու ոճով, յաճախ երեւում է հայ խօսքի ամբիոնի կամ հայ մամուլի եւ գրքի էջերում:

Սոյն հրատարակութեան առումով - որ ի դէպ միայն բեկորներ է բովանդակում Նժդեհի հռետորական ստեղծագործութիւնից - չենք ուզում լայնօրէն զբաղուել հեղինակի անձնաւորութիւնը կերպաւորող հոգեւոր տարրերով, չենք ուզում անգամ նրա աշխարհայեցողութեան ամբողջական պատկերը տալու փորձն անել: Դրա հանդէպ տուրք տալով ա՛յն վարկածին, թէ երկը հասկանալու համար անհրաժեշտ է երկասիրողը ճանաչել, մի քանի ընդհանուր գծերով պիտի դիմորոշենք հեղինակը, այսինքն պարզենք հոգեւոր կարգի ա՛յն տեւալները, որոնք պայմանաւորում են նրա ցեղաշունչ գործը եւ գրուածքը:

Որո՞նք են դրանք:

Ա) Բարձր տեմպերամենտ.– Ո՛չ միայն Նժդեհի խօսքը, այլեւ նրա գրական ոճը թողնում են ա՛յն անայլայլ տպաւորութիւնը, որ նա բարձր տեմպերամենտի մի ստեղծագործ է: Հոգեբանական այս տիպարի առանձնահատկութիւններից մէկն ա՛յն է, որ նա հազիւ թե զբաղւում է արտա-«ես»-եան իրականութեանց վերլուծմամբ, եւ, ընդհակառակն, անդադար դեգերում է սեփական «ես»-ի անդունդներում: Ինքնապրպտումով է կառուցում նա իր ճշմարտութիւնները: Նշանակապաշտ է նա եւ խորհրդապաշտ. մտածելիս՝ ընդվզում է բանապաշտական դատելակերպի դէմ, ճգնում է խուսափել հոգեւոր մեքենականութիւնից եւ յաճախ կառչում է տարերայինին եւ էմոցիոնալին: Նա ապաւինում է ներգերբնականին, սակայն սեփական «ես»-ի փլուզման վտանգից սարսափած՝ ներեսում է մի բնական պատւանդան, աստուածացնում է մի

համա-«ես», եւ, համակլելով կրօնական վերացման զգացումով, թափանցում է ենթագիտակցականի մարզում: Համա-«ես»-ը, որ դարձած է Նժդեհի հոգեւոր պատւանդանը՝ ցեղն է: Սա է շեշտում եւ երանգաւորում նրա տեմպերամենտը: Ցեղակրօնութիւնն է լեցնում նրա անձնաւորութիւնը: Ենթագիտակցականը, որում անհատական «ես»-ը հանդիպում է ցեղային համա-«ես»-ի տարերքին, ամէն դէպքում չի՛ հանդիսանում հոգեւոր ներշնչարան: Այդ կախւած է նրանից, թե տւեալ տեմպերամենտն ո՞րպիսի դիրքորոշման է մղում իր անօթին-անհատին, բախողակա՞ն, թէ՞ ներդաշնակելի: Առաջին դէպքում՝ ցեղային եւ անձնական «Ես»-երի միջեւ ստեղծւում է անկամրջելի մի վիհ, որի հետեւանքով անհատը մատնւում է ներքին ողբերգութեան. նրա տեմպերամենտն սկսում է աղօտանալ եւ ի վերջոյ նա դառնում է սովորական եսապաշտ, անձնական փառասիրութեան մի գերի: Երկրորդ դէպքում՝ երկու «Ես»-երի ներդաշնակ ձուլումով կաղապարւում է ցեղատիպ մարդու հուժկու անձնաւորութիւնը: Ներհոգեւորի այս բարեբախտ ձուլումով, ահա՛, կերպաւորւած է Նժդեհի էութեան երկրորդ գիծը - նրա անհատականութիւնը:

Բ) Հզոր անհատականութիւն.- Մէկի հոգեւոր ֆինիոնոմին բնութագրելիս՝ մարդս միշտ էլ որոշ երկմտութիւն է ապրում: Մենք գործ ունենք փոթորկալից անցեալի տէր մի անհատի, հայկական չափանիշով վերցրած պատմական մի անձնաւորութեան հետ:

Նժդեհի անձնաւորութեան մասին խորհրդածելիս՝ մեր դէմ ծառանում են մեկնաբանութեան կարօտ մի քանի բարդ կնճիռներ: Որո՞նք են այս մարդու անհատականութիւնը ձեւակերպող գործօնները. ո՞րն է նրա հոգեւոր գանձերի շտեմարանը. ի՞նչն է նրա կորովն անսպառ դարձնում եւ նրա խօսքի թափը՝ ահռելի: Կարիք չկայ հոգեբանական նոր պրպտումների դիմել: Անհատը միշտ էլ մնում է հոգեւոր թզուկ, եթէ նա չի ներծուլւում մի հաւաքական «Ես»-ի, եթէ ընդունակ չէ դառնալ նրա մոլութիւնների եւ առաքինութիւնների կրողը, նրա ներկայացուցիչը, միկրոկոսմոսը բոլոր դէպքերում, իսկ վտանգի պատմական վայրկեաններին՝ նաեւ նրա մարգարէն, գուշակը եւ առաջնորդը:

Մեր եղերաբախտ ընկեր Յ. Զարիֆեանը յաճախ էր պատմում Դիլիջանի եկեղեցու բակում Նժդեհի խօսած ճառի - Ղարաքիլիսէի պատմական ճակատամարտը հոգեբանօրէն կարելի դարձնող խօսքի - մասին: Նա պատմում էր եւ զարմանում մարդկային խօսքի հոգիները յեղաշրջող եւ ցնցող ոյժի վրայ: Իսկ հիմա՞. 14 տարի յետոյ հա՛րկ է ճշմարտագրել, թէ առանց ցեղի հոգեւոր շտեմարանից օգտւելու բարոյական համարձակութեան, առա՛նց սեփական «Ես»-ի մակոյկը ցեղի ոգու խռոված ովկիանին յանձնելու բնազդական սիրոյ՝ անկարելի կը

լինէր ներքին քաոսի մատնուած, խուճապահար բազմութիւններին նման խօսք ասել եւ պարտուողական ոգիներում ցեղի հզօրանքի յոյսն ու կրակը բորբոքել: Ցեղի ոգու տարերքն էր Նժդեհին Զանգեզուրում դարձրեց հզօր անհատականութիւն, նրա՛ ձայնով է, որ նա ցայսօր էլ մնում է պերճախօ՛ս:

Նժդեհի անհատականութիւնը, համոզումները, կրօնը պայմանաւորուած են ցեղով:

Նա պաշտամունք ունի Ահարոնեանի հանդէպ, որովհետեւ սա «անցաւորից յաւիտենականը տանող ճամբի վրայ հանդիպել է իր ցեղի ոգուն» եւ առաջնորդւում է նրա շնչով:

Նա մոլեկրօն դաշնակցական է, որովհետեւ այս կուսակցութիւնը ծնած է մեր «ցեղի ոգու շարժից», որովհետեւ նրա մէջ «ցեղի ձայնը կայ», որովհետեւ նրա խոստացած բարոյական երջանկութիւնը հայ անհատ մարդու հոգեխառնումն է «ցեղի ոգու հետ»:

Նա փառաբանում է Հայրենիքը, որովհետեւ հայ ցեղի հոգեւոր բոյնն է: Օտար երկիրը հայրենիքի «ստւերն է»,- ասում է նա: Նրա համար բոլոր առաքինութիւնների չափանիշը հայրենապաշտութիւնն է: «Անհայրենասէրը անառաքինի է»: «Մշակոյթը հոգեւոր դէմքն է, որով հայրենապաշտումից զուրկ մշակոյթը մշակոյթ չէ»:

Նա երկիւղածութեամբ սպասում է «Հայ Գերմարդ»-ի, «նոր-հայ» մարդու յայտնուելուն, որովհետեւ նրանից է ակնկալում ցեղի վրէժը լուծելու, ցեղի տունը վերակառուցելու նւիրական գործը:

Նա երկրպագում է հայութեան տիտանական ցաւին, որովհետեւ նա ցեղի ցաւն է - ցաւը, որ նրան տալիս է ա՛յն յոյսը, թէ «տառապանքից ու ամօթանքից» ծնունդ պիտի առնի մեր «նոր կրօնը - հպարտանքի կրօնը»:

Մենք կասենք՝ նաեւ փրկութեան եւ հզօրանքի կրօնը - «Մա՛հ ներքին տկարութեան»:

«Արիւնով ու ջղերով» ասւած եւ ապա գրի առնւած այս խօսքերը լուծում են Նժդեհի հզօր անհատականութեան գաղտնիքը: Նա պայմանաւորուած է ցեղային մեծ «Ես»-ին ներդաշնակօրէն հոգեխառնւելու, համաձուլւելու կարողութեամբ, ասել է ա՛յն ոյժով, որ Նժդեհին մղում է դառնալ հայրենապրումի եւ ցեղապաշտումի մոլեռանդ քարոզիչը:

Գ) Ֆրագմենտարիզմ. - Արդէն նկատւեց, որ բարձր տեմպերամենտի ու հզօր անհատականութեան հոգեբանական տիպարին իւրայատուկ է ֆրագմենտար մտածում, որով եւ ոճ: Մեր գրականութեան մէջ այսորակ ոճն իր կատարելութեան է հասնում Նարեկացու մօտ, իսկ համամարդկային հոգեւոր ստեղծագործութեան մարզում՝ նրա տիտանը Նիցշէն է:

Նժդեհի ոճն ու մտածումն էլ կրում են ֆրագմենտարիզմի որոշ դրոշմ: Նրա մտածումն արդէն զուրկ է սիստեմների շրջանակում սեղմուելու ընդունակութիւնից: Բոլոր ֆրագմենտարիստների պէս նա էլ ստեղծագործում է ո՛չ թէ թելերով, որոնք ի վերջոյ հիւսուածքի, այսինքն, սիստեմի պիտի վերածուեն, այլ՝ հանգոյցներով: Ո՛չ թէ խաղաղ զարգացում, այլ՝ խոյանք, ո՛չ թէ երկարապատում եւ զգուշաւոր շարայարումներ, այլ՝ կարճ խորհրդածութեանց յանկարծօրէն յաջորդող վճռաշունչ բանաձեւումներ - ահա՛ Նժդեհի մտածման եղանակը:

Ֆրագմենտար ոճն ըստինքեան ապացոյց է ենթակայի հոգեւոր աշխարհի հարստութեան եւ խորութեան:

Ֆրագմենտարիստը խուսափում է ձեւերին եւ սովորութեանց կոմպրոմիսներ անել: Զօրեղ է նրա մտքի կաղապարիչ ֆունկցիոնը: Բնազանցումի արուեստագէտ է նա: Նրա արտայայտութիւնները պատկերաւոր ընդհանրացումներ են՝ սինթէզ եւ ալեգորի միասին: Նրա երեւակայութիւնն անհիշխանական մի ոյժ ունի, մի ոյժ, սակայն, որ միշտ նոր կերպեր է ծնում. ֆրագմենտարիստը նորաստեղծ է: Նրա երջանկութիւնն է դառնալ իր ներկայացրած հաւաքական «ես»-ի պատգամախօսը: Այդ է պատճառը, որ մարդկային յարաբերութեանց աշխարհում, հոգեհաղորդ տարրերի համար նա դառնում է անգերազանցելի կազմակերպիչ եւ հրահրիչ, թշնամու հանդէպ, սակայն, մի՛շտ մնում՝ ատելավառ բացասիչ: Սլաքներ ունի ֆրագմենտարիստի խօսքը. նրա մտքերը պայթուցիկներ են, որոնք ձգտում են սրտերը հրդեհել. երկարաշունչ չեն նրանք, որովհետեւ շրթունքի խօսք լինելուց առաջ, սրտի պոռթկումներ են:

Ֆրագմենտար ոճաբանի հոգեբանութեան այս գծերը ընդնշմարում ենք արդէն «էջեր իմ օրագրէն» ու «Բաց նամակներ հայ մտաւորականութեան» գրքոյկներէն, «Որդիների պայքարը հայրերի դէմ» գրքի, եւ «Յիշի՛ր պատերազմը» յօդուածաշարքի մէջ: Մենք հանդիպում ենք նրանց նաեւ այս գրքոյկում, ինչպէս նաեւ բոլոր դէպքերում, երբ կարդում եւ մանաւանդ երբ լսում ենք Նժդեհն:

* * *

Հապճէպով եւ հարեւանցիօրէն վերլուծելով երկասիրողի մի քանի գծերը, մենք գրեթէ սպառեցինք մեր խօսքը նաեւ երկի մասին: Նժդեհը նրանցից է արդէն, որոնք նոյնանում են իրենց երկին:

Ի՜նչ յատկապէս սոյն գրքոյկի հրատարակութեան առիթով ընթերցողների ուշադրութեան պիտի յանձնուէր՝ արդէն ուրուագծուեց այս խորհրդածութեանց ա՛յն մասում, ուր խօսք եղաւ հեղինակի անհատականութեան շուրջ: Կրօնականութեան հասնող ցեղապրումի քարոզն է

այդ - մի քարոզ, որ իր էութեամբ նոր չէ, սակայն իր թափով՝ նորատիպ: Ժողովուրդների ինքնափրկութիւնն ու յաղթական վերելքը պայմանաւորուում են նրանով, թէ նրանց պատկանող անհատները որպիսի ընդունակութիւն ունեն իրենց անձնական կորովը նուիրաբերել ցեղադրօշ մի գաղափարի իրականացման գործին: Այս նուիրաբերումը, սակայն, ո՛չ այլ ինչ է, քան գործնական իմաստութիւն անհատական անցաւորը ցեղի մէջ յաւիտենական արժէքի, ասել է՝ մշակութագործ ոյժի վերածել: Բայց առանց գիտակցական եւ բնազդական խոր ցեղապրումի՝ անհատը միշտ էլ իր փոքրիկ ոյժով մնում է՝ կենտրոնախոյս:

Իսկ այդ դէպքում ո՞ւր կմնայ մեր վրէժի գործը, ո՞ւր՝ Հայրենիքը վերաշինելու մեր երազը:

Բայց ահա՛ Նժդեհը մատնանշում է ձգողական մի կենտրոն - ցեղի տառապանքը: Սա է աշխարհից մեզ ընծայուած ընդհանրական պարգեւը. ծանր յիշատակի պէս նա չոքել է բոլորիս սրտին: Նա է մեր ցեղի հոգեւոր պիտակը. նրանով է ճանաչում մեզ աշխարհը եւ նրա անունով է, որ պիտի գործենք բոլորս: Տառապա՛նքը, որ իր լծակից սպանիչ ամօթանքով պիտի խեղդէ բոլորիս, քանի դեռ թուրքը մնում է անպատիժ:

Եւ տառապա՛նքը, սակայն, որով կենագործ ազգերն իրենց ցեղի նժոյգն են մտրակում դէպի Յաղթանակ:

Պիտի կարողանա՞նք այս տառապանքը ստեղծագործ ոյժի վերածել - սա է մեր կեանքի մեծագոյն խնդիրը, մեր գալոց պատմութեան միակ խորհուրդը:

Այս գրքոյկն ասում է՝ այո՛: Նա աւետում է մեզ Հայ Գերմարդու երկունքը:

Մեր օրերում, երբ վերջապէս որոշ յուսատու խռովք է նկատւում ոգիներում, երբ անակնկալներով հարուստ մի յղութեան նախանշաններն են ընդնշմարւում հայ կեանքում՝ պէ՛տք է այս ցեղաշունչ գրքոյկը կրկին եւ կրկին կարդալ: Բայց եւ խորհրդածել նաեւ միջոցների, մեր ինքնափրկութեան տեխնիկի մասին: Նրա քարոզած խօսքերը հաճելի են, բայց եւ ծանր պարտականութիւն են դնում մեր ուսերին: Որովհետեւ «մա՛հ ներքին տկարութեան» պատգամը հոգեբանական մեծ նախապատրաստութիւնն է պատմական ա՛յն գործնական եզրակացութեան, որ վաղը չի՛ կարող այլ խօսքով բանաձեւուել, քան «մա՛հ արտաքին թշնամուն»: Իսկ այդ հնարաւոր կը դառնայ ցեղի հոգեւոր տիտանականութեան համապատասխանող մի տեխնիկով:

«Ցեղի Ոգու Շարժը», Սոֆիա, 1932թ.

Գ. ՆԺԴԵՀԻ «ՑԵՂԸ ԵՒ ԻՐ ՏԱԿԱՆՔԸ»

(խորհրդածութիւններ)

Ա.

Մի իմաստասէր նկատում է - մի գրքի արժէքը հասկացւում է նրա առաջին տողերից:

Շատ մտածողներ էլ ասում են - աշխարհի եղելոյթները տառապելով ապրել՝ նշանակում է իմաստասիրել:

Բացէ՛ք Նժդեհի գիրքը եւ անմիջապէս, անգամ, «Երկու խօսքի» առաջին տողերից պիտի զգաք, որ հեղինակը մեր կեանքի եղելոյթներին մօտենում է տառապելով եւ իմաստասիրօրէն մտածելով:

Սովորական հայ գիրք չէ դա, այլ՝ ուղեփոխիչ մի երկասիրութիւն, որ մեր օրւայ մտածական ինքնուրոյն գրականութեան առջեւ նոր հորիզոններ է բացում:

Նրա արժէքը այն տարբերութեան մէջ է, որ ունի դա մեր հասարակաբանական եւ քաղաքական սովորական յօդւածագրութիւնից:

Օրւայ հայը ձգտում է աւելի երեւոյթների կերպարանը ճանաչել, քան՝ նրանց բովանդակութիւնը ըմբռնել: Նրա մտածումը խորշում է իրերի խորքը, էութեան անդունդները թափանցելու ճիգից:

Այս ճիգը նկատւում է Նժդեհի իւրաքանչիւր խորհրդածութեան մէջ:

Օրւայ հայը զբաղւում է հարցերով, բայց չի շօշափում նրանց սիրտը: Նա ազդւում է դէպքերից, զգայուն է իրականութեան հանդէպ, բայց խուսափում է դրանց ծնուցիչ պատճառների իմաստը մեկնաբանելու տքնութիւնից:

Նժդեհը իր սիրտն է դրել հարցերի մէջ եւ իր երեւակայութիւնը լծել մի գործի - մեր ողբերգութիւնը ներկայացնել պատճառագիտօրէն:

Օրւայ հայը աշխատում է, նոյնիսկ աշխատասէր է, բայց քիչ դէպքերում յաջողւում է ճշմարտօրէն երկասիրել: Իր աշխատանքը նա պայմանաւորում է արտաքին դրդապատճառներով, աշխարհի պարտադրած կարիքներով, որով՝ իր ջանքը չունի ներբղխականութեան դրոշմ:

Նժդեհը ամէն վայրկեան բախում է իր ցեղի ոգու դուռը, պրպտումներ է անում նրա էութեան կրակարանում եւ ամէն միտք կամ ճշմարտութիւն բխեցնում է նրանից:

Օրեայ հայը սիրում է արտաքին դիտողութիւնը, դրա համար էլ նրա գրականութիւնը աւելի նկարագրական բնոյթ ունի: Նա նախընտրում է դիւրաբար տպաւորել եւ ոչ թէ իր էութիւնը ստեղծագործօրէն պարտադրել: Նա աւելի խօսում է, քան թէ ապրում, աւելի գրում է, քան թէ մտածում, աւելի քննադատում է, քան թէ քննում:

Նժդեհը աշխարհը դիտում է իր հոգու լուսամուտից եւ նրան պարտադրում իր ներապրումները: Նրա իւրաքանչիւր բառը արդիւնք է ներքին զննութեան, դրա համար էլ՝ ամէն մի խօսքը խտացեալ մտածում է:

Օրեայ հայը սիրում է օտար գաղափարներն ու մտքերը թարգմանել միայն, քիչ դէպքերում նա կարողանում է դրանք ներծուլել եւ մանաւանդ դրոշմել՝ ըստ իր էութեան պատկերի: Նրա մտաւորական ոգորումները յաճախ զուրկ են մնում ցեղային զգացումի վերահսկողութիւնից: Դրա համար էլ նա մտաւորապէս շուտ է այլասերւում:

Նժդեհը օգտագործում է միայն օտար մտքերն ու գաղափարները: Նա չի՛ ղեկավարւում նրանցով, այլ՝ ղեկավարում է դրանց: Իր հուժկու ցեղզգացութեան թափով նա ճմլում է նրանց սիրտը եւ ստիպում, որ սա տրոփի հայօրէն:

Օրեայ հայու իմացականութիւնը զինուած չէ կենսազգացութեամբ, այլ՝ միայն անթեւ բանապաշտութեամբ: Անզօր բանապաշտութիւնը յաճախ ենթակային մատնում է մտքի խուճապի, իսկ խուճապահար միտքը միշտ էլ ուրւականներ է ստեղծում, երեւակայութեան անտեղի տառապանք եւ խնդիրների քաոս: Նմանը դառնում է ջղային, զրկւում է ապրումների մշտավառ կրակից, ներքին լարումից ու լաւատեսութիւնից: Այդ է պատճառը, որ այսօր, երբ ազգերի կեանքը դառնում է մէկ էական կնճիռի - կենսաբանական-ցեղայինի - շուրջը, հայը հրապարակ է նետել անթիւ «կնճիռներ» եւ իր բանական ողջ պաշարը վատնում է դրանց վրայ: Նա չգիտէ խնդիրների «խնդիրը» զանազանել եւ հարցերի «հարցը», իր կեանքի մեծ հրատապը պարտադրել իր մտածում-զգացումին: Յաւիտենականը թողած՝ նա զբաղւում է առօրեայով, տունկը լքած՝ նա կոծում ու աղմկում է թափւող տերեւների համար, ինչպէս դասալիքը, որ կռւի ժամանակ իր սիրտն ու սուրը գործի դնելու փոխարէն՝ դժգոհում է իր ձիու պայտից, իր կօշիկի գամերից եւ նրանց տալիս «ռազմագիտական» նշանակութիւն:

Նժդեհի միտքը գործում է իր սրտի զարկով. այդ պատճառով էլ նա զբաղւում է կենսաբանօրեն էականով: Հոգու յորձանումով նա մղւում է դէպի ձգողական այն ոյժը, որ կոչւում է յաւիտենական-ցեղային. դրա համար էլ նա համակած է զգացումի կրակով, մշտախռով

ապրումներով, անցումի կարօտով եւ լաւատեսութեամբ: Այս հոգեվիճակը նրան ընձեռում է մտքի լարում, ուշադրութեան կենտրոնացում, որով՝ հարցերից «հարցը» ընտրելու եւ նրա մասին յայտնութեան լեզուով խօսելու ընդունակութիւն:

Օրւայ հայը ծառայելով չոր բանապաշտութեան՝ անտեսում է այն ճշմարտութիւնը, թէ իմացութիւնը կենսաբանական մի գործիք է: Դրա համար էլ նա ոչ թէ բովանդակութիւնը, այլ ձեւն է դարձնում նպատակ: Նա վիճում է՝ յենւած կրքերի «տրամաբանութեան» եւ ոչ թէ կենսաբանական բարոյականին: Այդ է պատճառը, որ նա անվերջ խօսում է, բայց չի կարողանում իր «գաղափարական» հակառակորդը տարհամոզել: Նա մոռանում է, որ, ընդհանրապէս, տրամաբանութեամբ «տարհամոզելը» մի նախպաշարում է, որ աշխարհում ամէն նւաճում լինում է յաղթահարումով, իսկ վերջինս՝ կենսաբանական ըմբռնում է: Նա չգիտէ, որ «յաղթահարել»-ը պայմանաւորւում է ինքնայաղթահարումով, ներքին տկարութեանց նւաճումով: Նա չգիտէ, թէ նւաճել սեփական անձը՝ նշանակում է պատմագործութեան մարզը իջնել ամբողջական «ես»-ով, այսինքն՝ ժառանգական եւ ստացական բոլոր կարողականութիւնների զօրահաւաքումով: Մինչդեռ օրւայ հայը գործի է լծել միայն իր լեզուն: Երբ սիրտը չի կառավարում լեզուն՝ սա դառնում է շփոթահարոյց գործիք: Սրտի իշխանութիւնը՝ դա «Ես»-ի օրգանաւոր ներդաշնակութեան, անձի ներքին հաւաքականութեան յայտարարն է: Անկարելի է ներքուստ ցրւած լինել եւ շինարար լեզու ունենալ: Իսկ ներքուստ ցրւած են բոլոր նրանք, որոնց իմացութեան աղբիւրը ցեղը չէ: Այդպիսիք ընդհանրապէս ունեն երկարապատում, մանւածապատ ոճ եւ բեկորային մտածում:

Նժդեհի ոճը բեկորային է, մտածումը՝ ամբողջական: Բեկորային ոճը արդիւնք է մտքի անհանգստութեան - Նժդեհը «ցեղահոգ» է: Մտածման ամբողջականութիւնը պայմանաւորւում է նրա խորին ցեղազգացութեամբ - Նժդեհը ցեղամարդ է: Ցեղամարդը կենսազգաց իմացականութիւն ունի. նրա լեզուն սիրտն է, որում ցեղի արիւնի հետ՝ տրոփում է նրա գոյութեան խորհուրդը: Սրտով եւ արիւնով խօսել, ասել է՝ էութեան կսկիծն ու բերկրանքը վերածել բառի, դառնալ պատգամախօս - Նժդեհը պատգամախօս է: Նմանի իմացութեան աղբիւրը ցեղի էութեան անդունդն է, ենթագիտակցականը, յաւիտենականը: Նմանի իմացական իդէալը ինքնապաշտպանութիւնն է, ներիմացութիւնը: Ներքուստ ամբողջացած, ինքնայաղթահարումի յանգած «Ես»-ը միայն ընդունակ է ներիմացական ապրումի: Այստեղ էլ ճշմարտագրվում է այն տեսութիւնը, թէ Բացարձակին ձուլւելը հնարաւոր է

միայն սեփական ոգու երկնքի տակ՝ անցաւորը ապրելով եւ յաւիտենականի մասին մտածելով:

Երկու խօսք եւս:

«Ցեղը եւ Իր Տականքը» հակադրութեանց գիրք է: Կեանքի անկատարութեան պատճառներից մէկն էլ թերեւս այն է, որ օրգանաւոր «գոյ»-ը բազմատարր է եւ տարբերարժէք, որ նա, ինչպէս Նիցշէն է ասում, կազմւած է ե՛ւ ոգուց, ե՛ւ աղբից: Այս այլազանութիւնն ու այլարժէքութիւնը հիմք են դառնում մարդկային բարոյական զգացման: Դրանց վրայ է խարսխւում արժէքների ուսմունքը - բարոյագիտութիւնը: Վերջինս արժէքների հակադրութեանց գիտութիւն է: Համեմատական եղանակաբանութեան կիրարկմամբ, բարոյագիտութիւնը ճգնում է յանգել արժէքների համադրութեան իդէալին, հանրարժէք բարոյականի ըմբռնումին:

Այդպես է նաեւ Նժդեհի մեթոդը: Նա միմեանց է հակադրում ցեղազգաց ընտրանու լիարժէքութիւնն ու ցեղի տականքի անարժէքութիւնը, եւ մեր առջեւ դնում ցեղամարդ հայու գաղափարատիպը:

Ցեղամարդ հայը՝ դա զօրութենական բարոյականով օժտւած, ցեղային արժէքազգացութեամբ համակւած հայն է: Դա համադրական հայ «Ես»-ն է, հոգեւոր երկւութիւնից ձերբազատւած ամբողջական հայը:

Ա՛յս հայն է միայն ստեղծագործ, նա՛ է միայն հոգեւոր ինքնակառուցումի ընդունակ, նրա՛ ճակատը միայն կարող է մի օր պսակւել յաղթանակով:

Նժդեհի գիրքը կարօտի եւ զգւանքի գիրք է: Եւ հենց այդ պատճառով էլ, նա հոգեւոր ինքնակառուցումի նորատիպ մի փորձ է: Ամէն կառուցում նախատեսում է կառուցանիւթերի զննում, մերկացում, ճանաչում: Հեղինակը գտել է մեր կեանքի լուսաւոր եւ ստւերային գծերը եւ դրանք հակադրել միմեանց - ցեղը եւ իր տականքը: Ցեղը՝ դա կենսազօրոյթի յաւիտենական լուսաղբիւրն է, որ ոգիները վառում է ինքնայաղթահարումի, մեծագործութեան կարօտով: Տականքը՝ դա այրւած ոգու մնացորդն է, սրտի ապականութիւնը - հոգեւոր դիահեխութիւն, որ միայն զգւանք է յարուցանում:

Այս երկու զգացումները - կարօտ եւ զգւանք - ստեղծագործ ոյժեր են: Զգւանքը՝ դա ինքնաժխտումի խռովքն է, տկարութեանց բացասման նախաքայլը: Կարօտը՝ դա բարձրատիպ գոյութեան տենչն է, իբր արժէք յաւիտենականացնելու ճիգը: Զգւանքը իրականութեան խթանումն է, կարօտը՝ իդէալի երազը:

Ստեղծագործական ամէն յղութիւն պատճառում է իրականութեան խայթումով, ստեղծագործական ամէն ծնունդ պայմանաւորւում է աշխարհի ցաւը յաղթահարելու կարօտով:

Հայ ցեղի տականքը՝ դա մեր օրերի ցաւն է:

Իսկ ի՞նչ է ասում ցաւը: Ինչպէս իմաստասէրն է նկատում, նա ասում է. «Անցի՛ր»: Զգւանքը՝ դա «թռչող թեւեր» է տալիս, իսկ ամէ՛ն թռչող ոգի, ամէ՛ն մտրակւած երեւակայութիւն համակւում է նորաստեղծութեան կարօտով:

Այդ կարօտը: Դա մեր կեանքի լինոյթն է. դա լինելիական հայու հոգեւոր առաջընթացն է, դա յաւիտենական հայու անդադար չուն է:

Նորաստեղծուի՛ր այրելով մէջդ ինչ որ զզւելի է: Նորաստեղծուի՛ր վառելով մէջդ ինչ որ վսեմ է:

Այդ ասել է՝ հոգեկերտուի՛ր ցեղօրէն, համակուի՛ր հզօրանքի զգացումով, եղի՛ր դաշնակցական:

Այս է Նժդեհի կոչը, այս է նրա գրքի իմաստը:

Բ.

Նժդեհի գիրքը կրում է «Ամերիկահայութիւնը» ընդհանուր վերտառութիւնը: Նրա բովանդակութիւնը, սակայն, բնորոշւում է «Ցեղը եւ իր Տականքը» ենթախորագրով: Գրւածքի յօրինման իբր անմիջական շարժառիթ հանդիսացել են ամերիկահայ կեանքի վերջին տարիների իրադարձութիւնները: Նիւթը, սակայն, ընդհանուր է, համահայկական: Դա ներկայացնում է օրւայ հայ կեանքի համայնապատկերը:

Հեղինակը խորապէս ըմբռնել է, թէ ներկան ո՛չ այլ ինչ է, քան անցեալի եւ ապագայի հանգոյցը - մի կամուրջ, որի վրայից պատմագործ ցեղերը կատարում են իրենց յաւիտենական չուն: Այդ պատճառով էլ գրւածքն ստացել է վերլուծական նկարագիր, իսկ վերլուծման չափանիշը համարւել է յաւիտենական-ցեղայինը:

Հայութիւնը պատմականօրէն բաժանւած է երկու հակամարտ հոսանքների: Դրանցից մէկը «ցեղահոգ» է, միւսը՝ անձնազոհ: Մէկի ճակատը պսակում է ցեղի ձեռքը, միւսի էութիւնը կնքւած է ընկածութեան մրով: Մէկը վառում է ցեղի կենդանանորոգ զօրութենականութեամբ, միւսը՝ մոխիր է միայն: Մէկն առաջնորդում է ցեղի լինելիական բարոյականով, ինքնակատարելագործումի տենչ ունի եւ մարմնացնում է ճակատագիրը յաղթահարելու, բարձրանալու բնաձիգը, միւսը՝ էութեամբ ստորնահակ է, «տականք»: Ըստ այդմ էլ՝ գիրքը

բաժանւում է երկու մասի - Դաշնակցականութիւն եւ հակադաշնակցականութիւն:

Հեղինակի լաւատես ոգին մղել է նախ՝ զբաղւել հակադաշնակցական տականքի էութեան բնութագրմամբ: Նա քրքրում է այս հոգեւոր տիղմը, մերկացնում նրա զազրատիպ դէմքը, ախտորոշում նրա վէրքերը, յետոյ իր ընթերցողները դաշնակցականութեան լուսաւոր դէմքով մխիթարելու, նրանց դաշնակցական հզօրանքի շնչով վարակելու համար: Հենց այստեղ է գործի դաստիարակչական արժէքը. դա հոգեւոր ինքնակառուցումի գիրք է:

Ամբողջ գիրքը մշակւած է ամերիկահայ «Եռագոյնի բանակին» ձօնւած «Երկու խօսք»-ի եւ գրքի 15 հատւածների մէջ:

«Երկու խօսք»-ով արդէն ուրւագծւում է օրւայ հայութեան ներքին պայքարի դէմքը: Դա պայքարն է ցեղօրէն «յաւիտենական»-ի եւ ժողովրդօրէն «առօրեայ»-ի. նպատակադրութեան եւ «անուղի, աննպատակ» հոգեշփոթի, ցեղային «լիարժէքութեան» եւ մարդկօրէն «ընկածութեան գիտակցութեան»: Կողմերից մէկը - հակադաշնակցականութիւնը լծւած է «վատութեան» եւ «ամբարիշտ ուրացում»-ի գործին, միւսը՝ դաշնակցականութիւնը՝ խայթւած է ազգային ամօթանքի զգացումից:

Սրանով էլ պայմանաւորւում է գրքի ողբերգական բնոյթը, նրա ցեղացաւ շեշտը: Բոլոր ողբերգութիւնների հիմքը նրանում է, որ մարդս բարոյական զգացում ունի, իսկ երեւոյթները ենթակայ են չարի եւ բարու սկզբունքներին: Այս սկզբունքները ենթակայական ըմբռնում-ապրումներ են, բայց տիեզերական ցաւի շեշտ կայ աւետարանչի ա՛յն խօսքի մէջ, թէ «Յիւրսն եկն եւ իւրքն զնա ո՛չ ընկալան»: Կեանքի վրայ մի անէծք կայ եւ այդ նրանում է, որ նոյն արգանդից ե՛ւ Աբէլ է ծնում, ե՛ւ Կայէն, որ մէկը չարն է գործում, իսկ միւսը տառապում է ուրիշի գործած վատութեան համար: Մեր վիշտը նրանում չէ, որ աշխարհում թուրք կայ, այլ նրանում, որ թրքատիպ հայ կայ: Հայ՝ որ ցեղի ձայնը չի լսում, որ նրա առաքելութեան խորհուրդին չի հաւատում, հայ՝ որ չարութեան անօթ է եւ պղծում է մեր ոգու ստեղծագործ երկունքը, որ անասնազգաց է, ընդունակ չէ ապրել ու հասկանալ, թէ իր ընկածութեամբ ինչ սպանիչ ամօթանք, բարոյական ի՞նչ զարհուրելի տառապանք է պատճառում ցեղօրէն զգայուն հայ մարդուն:

Այստեղ է հայ կեանքի մղձաւանջը, այստեղ՝ նրա այրող ցաւը, այստեղ՝ մեր ողբերգութիւնը:

* * *

«Միջավայրը» հատուածում թելով մարդաաշխարհագրական, հոգեւոր-մշակութային, հոգեբանական եւ տնտեսական ա՛յն գործօնները, որոնք նպաստում են ամերիկահայութեան ցրուածութեան՝ հեղինակն այդ գաղութը բաժանում էր երկու մասի - «Հայ հասարակութիւն դառնալու իդէալով առաջնորդուող ազգայնական հոսանք եւ ցեղօրէն դիմազուրկ ցրուածութիւն»:

Կենտրոնահակ եւ կենտրոնախոյս այս տրամադրութիւնները ունեն կենսա-հոգեբանական հիմք: Ցեղը կենտրոնաձիգ զօրոյթ է, անցեղազգաց խուժանը՝ կենտրոնացիր հակում: Ցեղօրէն զգայուն տարրերն ունեն համախմբելու բաղձանք, այսինքն՝ ընկերօրէն «հասարակութիւն», ազգօրէն պետութիւն դառնալու իդէալ: Դրա հանդէպ ցեղօրէն ուծացած տիպերը համակուած են վանողական զգացումով. ձգտում են ձերբազատուել ցեղի գերիշխանութիւնից եւ ապրել անձնօրէն: Դրանք զուրկ են կախումի, որով պարտականութեան, ինչպէս նաեւ կարգապահութեան գիտակցութիւնից: Դրանք անձնիշխան չեն, այլ՝ միայն «ես»-ական, այսինքն՝ մանր շահերի եւ կրքերի գերի, որով՝ չունեն ցեղի ինքնիշխանութեան ըմբռնումը, այսինքն՝ հոգեբանօրէն ստրուկ են:

Հոգեբանօրէն ստրուկը նա չէ, որին քաղաքականօրէն ծանր մի դրութիւն է պարտադրուած, այլ նա՛, որ անձնիշխան դառնալու խռովք չունի: Նմանին պակասում է երկու բան - խորին հայրենազգացութիւն եւ խորին ինքնազգացութիւն, որով՝ հայրենասիրութիւն եւ ինքնասիրութիւն: Հայրենասէրը կարող է տարագրուել, բայց երբե՛ք հոգեպէս տեղափոխուել, ինքնասէրը կարող է պարտուել, բայց երբե՛ք անպատուօրէն տեղի տալ: Այս հակամերժ զգացումների փոթորկումն է, որ այսօր գաղութահայ իրականութիւնը վերածել է կռւադաշտի: Ինքնազգաց հայը խօսում է Միացեալ եւ Անկախ Հայաստանից, վրէժից եւ հայ ճակատագրին ու դատին շուրջը ցեղօրէն համախմբելու անհրաժեշտութիւնից, անցեղազգաց հայը երջանկութիւն ասելով հասկանում է անձնական շահը, իսկ այդ կարելի է ապահովել միայն անհատական ճիգով եւ նաեւ Հայաստանից դուրս:

Կենտրոնաձիգ եւ կենտրոնախոյս այս տրամադրութիւնները հեղինակը պատմա-հոգեբանօրէն բացատրում է նրանով, որ «հայութեան մի մասը՝ Ամերիկայում արմատ ձգելու նպատակով չի հեռացել երկրից, այլ եղել է պանդխտութիւն», մինչ «միւս մասը՝ Հայրենիքը

թողել է ընդմիշտ, գնացել դրամ շահելու եւ նոր կեանք վայելելու նպատակով»:

Դաշնակցականը՝ դա ակամայից Հայրենիքը թողած «պանդուխտ» հայն է, որի «սրտում հայրենի հողի զգացումը դեռ այսօր էլ կենդանի է»: Հակադաշնակցականը՝ դա հոգեբանօրէն «անհայրենիք, ապահայրենական» հայ տիպն է:

Իբրեւ հայրենաստեղծական երկունքով համակւած էակ՝ դաշնակցական հայը տառապապաշտ է իր հոգեբանութեամբ. դրա հանդէպ՝ անստեղծագործ հակադաշնակցականի ոգին «չարութեան շտեմարան է»:

Տառապանքը ինքնաբուխ բարոյականի մէկ արտահայտութիւնն է, չարութիւնը՝ արտաքուստ հրահրելու տրամադրութիւնը: Տառապապաշտը ինքնագիտակ երկնող է, ստեղծագործ, նրա իդէալն է սեփական էութեան արձանացումը (քաղաքականօրէն՝ այդ ասել է ազգային պետութեան կառուցումը): Ցեղօրէն վատը, չարը - դա արտաքին թշնամու գործիքն է, նրա զինակիցը, անինքնակամը, դրսից գրգռողը - դրա իդէալն է բարոյական անձնատուութիւնը օտարին (քաղաքականօրէն՝ այդ ասել է օտարահպատակ մնալու տենչ):

«Ցեղ եւ Հայրենիք», 1936թ., թիվ 2, 3

ՄԵՐ ՕՐԵՐԻ ՏԱԳՆԱՊԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

(տպագրվում է որոշ կրճատումներով)

Կայ կրօնական, բարոյական, գաղափարական ընդհանուր տագնապ: Թւում է, թէ կրօնը դադարել է քաղաքական գործօն լինելուց: Բայց դարաւոր հաւատալիքները ստեղծում են կեանքի համար բախտորոշ համոզումներ: Մասնաւորապէս քրիստոնէութիւնը մեր ժամանակներում ապրում է անթրոպոմորֆիզմի, մարդակերպացումի շատ նշանակալից մի առաջընթաց: Խզւել է ընդհանուր կապը, բայց հին համոզումները կենդանի են ազգերի մէջ, եւ դրանցից իւրաքանչիւրը իր կրօնն է կառուցում «ըստ պատկերի իւրում»: Թեպէտեւ գոյութիւն ունի, օրինակ, պապական աթոռ, բայց անգամ կաթոլիկ ազգերի համար չկան այլեւս քաղաքական կշիռ ունեցող ընդհանուր դոգմաներ: Բարոյական միութիւն չէ նաեւ իսլամը: Սա էլ չունի այլեւս ընդհանուր եւ հեղինակաւոր կենտրոն: Այստեղ էլ կրօնական համոզումները գնում են ազգային անհատականացման գծով: Չկան այլեւս միջազգայնօրէն ազդեցիկ քրիստոնէութիւն, իսլամութիւն, բայց կան քրիստոնեայ, իսլամ ազգեր: Այս երեւոյթը անզգալաբար նոր շեշտ եւ ուղղութիւն է տալիս քաղաքականութեան, որ այլեւս նոյնիսկ ձեւականօրէն չի ընթանում ընդհանուր սկզբունքներով, այլ՝ զուտ ազգային տրամադրութեամբ:

Սխալ հասկացողութեան արդիւնք են նաեւ մշակութային-տնտեսական «կապեր»-ը: Տնտեսական գործունէութեան մի ճեւն է միայն իր բնոյթով միջազգային՝ առեւտուրը, որը ընթանում է մրցութեան սկզբունքով: Դրա հանդէպ մշակոյթը, որպէս ոգու արտայայտութիւն, զուտ ազգային որակ է: Մշակոյթը էութեան յայտնութիւն է. իւրաքանչիւրին հարազատ է միայն ի՛ր էութիւնը: Չկա՛յ համամարդկային մշակոյթ, կա՛յ միայն ընդհանուր քաղաքակրթութիւն, որ ոգու եւ զգացումի տարածում չէ, այլ՝ մտքի եւ ձեռքի ստեղծած բարիքների, ձեւերի: Անգամ կրօնը զուտ մշակոյթ չի տարածում, այլ՝ բարոյական նորմեր եւ կենսահայեցողութիւն: Եւ դա մշակոյթ չէ, այլ արդիւնքներից եւ միաժամանակ ազդակներից մէկը մշակութաստեղծ ոգու: Այդ պատճառով էլ իր յարուցած ապրումներն այնքա՛ն այլազան եւ տարբերաչափ են, որքան ազգային եւ անհատական «Ես»-ի ստեղծած մշակու-

թային որակները:

Ազգային կամ անհատական անձնաւորութեան կնիք է կրում անգամ իմաստասիրական-գիտական մտածումը: Իր արդիւնքներով էլ փիլիսոփայութիւնը դեռ չյանգեց գաղափարների ընդհանրութեան կամ իմացական մոնիզմի: Մարդկային իմացականութիւնն էլ ընթանում է մտաւոր բազմածնութեան գծով: Այսօր կան գիտական բազմաթիւ սիստեմներ, անթիւ ճշմարտութիւններ, վարկածներ՝ գոյութեան հիմքերի, կեանքի իմաստի թէ բարոյականի մասին: Դեռ չկայ աններհակասելիօրէն ներածական մի բնազանցութիւն, որով՝ ընդհանրարժէք եւ հանրապարտադիր մի աշխարհայեցողութիւն, բարոյագիտութիւն, ընկերային դաւանանք: Կրօնական զգացումի, զուտ մշակութային որակների, քաղաքական-տնտեսական շահերի այլազանութեան հետ՝ ահա՛ նաեւ իմացական ըմբռնումների, գաղափարների, ճշմարտութիւնների եւ բարոյական չափանիշների քաոս:

Իմաստասիրական մտածումի բազմագծութիւնը իր կնիքը դրել է նաեւ ընկերաբանութեան, ուստի եւ հասարակական շարժումների վրայ: Սոցիոլոգիան չընծայեց գիտականօրէն անժխտելի ճշմարտութիւններ, այլ՝ միայն տեսութիւններ: Անծանօթ է մնում պատմական կամքի խորհուրդը եւ գիտականօրէն աննախատեսելի՝ նրա ուղղութիւնը: Այդ պատճառով էլ հասարակական շարժումները չունին գաղափարական միասեռ խորք եւ նրանցում գործում է նաեւ «երազների տրամաբանութիւնը»: Իսկ երազները մի՛շտ էլ կրում են անձնականութեան դրոշմ: Մասնաւորապես Եւրոպայում միմեանց դէմ մահու եւ կենաց պայքար են մղում դեմոկրատիզմը, ռասիզմը* եւ բոլշեւիզմը...

Այս ուղղութիւններից դեմոկրատիզմը, իր խորքում, յենւում է «կամքի ազատութեան», բոլշեւիզմը՝ «նիւթապաշտական դետերմինիզմի», ռասիզմը՝ «կենսաբանական յաւիտենականի» վրայ: Բնազանցական այս ըմբռնումներով որոշւում է այս գաղափարաբանութիւնների հասարակաբանական արժէքը եւ նրանց գործնական բարոյականի նկարագիրը:

Դեմոկրատիզմը անզօր է ստեղծել իշխանութեան կենտրոնացում, որով եւ՝ ազգային ոգու լիագումար ամբողջացում: Որպէս իրաւախոհական ուսմունք, նա չի կարողանում վերացնել պետութեան, ժողովրդի, դասակարգերի փոխյարաբերութիւնների հակասութիւնները: Նա պառակտեալ մասերի գումար է եւ ո՛չ թէ օրգանական միութիւն: Որպէս «իրաւունքի» եւ «ազատականութեան» հին

վարդապետութիւն, նա, անշո՛ւշտ, ստեղծել է աւանդութիւններ եւ քաղցր նախապաշարումներ («պարլամենտ», «ընտրութիւն», «քաղաքացիական ազատութիւն», եւն.), բայց իրենց խորքում դրանք կոմպրոմիսներ են խղճմտանքի հետ, որով՝ յարմար անօթներ գաղափարաբանական պատեհապաշտութեան եւ քաղաքական բախտախնդրութեան: Այս տեսակէտով էլ երբեք զարմանալի չէ, որ անգլիական պահպանողականութիւնը ձեռք է երկարում «քրիստոնէական բարոյականը եւ մարդկային ազատական հասարակարգը խորտակող բոլշեւիզմին»: Դա համապատասխանում է «իրերի տրամաբանութեան». դեմոկրատիզմը եւ բոլշեւիզմը էակից են. տարբերութիւնը նրանց միջեւ որակական չէ, այլ՝ քանակական, բարոյական չէ, այլ՝ քաղաքական, հոգեւոր չէ, այլ՝ տնտեսական, բովանդակային չէ, այլ՝ ձեւական: Այսօր դեմոկրատիզմը բարոյական զէնքն է անգլեւֆրանսական այլացեղ եւ աշխարհագրօրէն ցրուած կայսրութիւնների տիրապետական քաղաքականութեան, բոլշեւիզմը՝ այլացեղ, բայց աշխարհագրօրէն միազանգ ռուսական պետութեան: Առաջինը ձգտում է մարդկութիւնը նուաճել բարոյական «կատեգորիա»-ներով, երկրորդը՝ տնտեսական երջանկութեան հեռանկարներով: Նա ներկայանում է ամբոխի բոլոր խաւերի առաջնորդը, սա՝ նրա մի դասակարգի: Նա հաշւի է առնում պատմական ընդհանուր զարգացումը եւ շեշտը դնում քաղաքականութեան վրայ, սա՝ մեկնում է հասարակաբանութիւնից եւ քաղաքականութիւնը երանգաւորում է «ընկերային նպատակներով»: Դեմոկրատիզմը մտածումի անսկզբունքութիւն է, բոլշեւիզմը՝ բարոյական կեանքի: Երկուսն էլ չեն խոստանում ոգու, բանականութեան, սրտի, կամքի, բարոյական զգացումի ներդաշնակութիւն, որով՝ անհատի եւ հասարակութեան, ազգի եւ պետութեան, ժողովրդի եւ դասակարգի օրգանական միութիւն:

Այդ հակասութիւնները վերացնելու եւ օրգանապէս միացեալ ազգութիւն, ընկերութիւն, պետութիւն ստեղծելու ձգտում ունի ռասիզմը: Ցեղն է այս շարժումի էաբանական խորքը, ուստի՝ դա չի յենւում միայն սոցիոլոգիայի կամ պատմութեան վրայ, այլ հաշւի է առնում կեանքի բովանդակ ծաւալը եւ մղւում դէպի կենսաբանական մի մետաֆիզիկա: Նա դաւանում է ցեղային ոգու յաւիտենականութիւնը, եւ պատմութիւն, մշակոյթ, ընկերային կազմակերպութիւն, պետութիւն եւն. համարում նրա յայտնութիւնը: Յաւիտենականութեան կենսաբանական ըմբռնումը նրան ընծայում է ցեղի - ոգու եւ արեան - անցեալի, ներկայի, ապագայի օրգանական միութեան

զգացումը, եւ պահանջ է դարձնում ապրող հասարակութեան կեանքի կազմակերպումը՝ ըստ այդ զգացումի: Այստեղ էականը դասակարգային խնդիրը չէ, այլ՝ ոգեկան ոյժերի եւ արժէքների նուիրապետութիւնը: Այստեղ ամէն ինչ ստորադասւում է ցեղի յաւիտենականին եւ համակարգւում որպէս խղճմտանքի, անձնական շահու եւ հասարակական նպատակի ներդաշնակութիւն: Դրանով ստեղծւում է յաւիտենանպատակ - որով՝ ամբողջական մարդը եւ ազգային հասարակութիւնը: Այստեղ չկան համամարդկային խարխափանքներ, անցեղ ընկերութեան երազանքներ, ո՛չ էլ ներազգային դասակարգային հակամարտութիւններ: Ցեղն է բոլորի ճակատագիրը եւ բոլորը գործում են նրա համար:

«Տարօնի Արծիւ», 1939թ., թիվ 10

---

* Խոսքն առողջ ցեղապաշտության մասին է եւ ո՛չ ցեղամոլության: - *Խմբ.*

ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵԼԱԿԷՏ

Մօտենում են մեր ազգային աղէտի - Մեծ եղեռն - քառորդ դարը եւ քաղաքական անկումի - Հայաստանի Հանրապետութեան կործանում - 20-ամեակը:

Ստացած հարուածներից յետոյ, դեռ մնում ենք անկեալ՝ հոգով, բարոյականով, մտածումով: Օրէցօր աւելի է վատթարանում կացութիւնը: Բաժան-բաժան եղած, մասնատուած հայրենիք եւ աշխարհագրօրէն ցրիւ եկած, հոգեբանութեամբ հատուածականացած ժողովուրդ: Իրականութեան ստեղծած վտանգներին, կազմալուծման առաջընթացին կարելի պիտի լինէր դիմագրաւել մէկ բանով - բարոյական ոյժերի զինահաւաքումով: Բայց հայ ոգին մնաց քայքայուած: Ամէն ոք մանրացաւ իր հին մտքերի փշրանքների հետ - հայ մարդը պառակտուեց որպէս «ես», որպէս ընկերութեան անդամ: Հակառակ ներքին փոթորիկների՝ նա եղաւ տկարութեան ծարաւ, հաշտուեց այն մտքին, թէ ինքն այլեւս պատմաստեղծ գործօն չէ: Մոռացուեց արտաքին ճակատը, քաղաքական գործը եւ ամեն բան ընթացաւ ներքին պայքարի գծով:

Ազգովին վտանգուած ենք երկրում, երկրից դուրս: Երկիրը քաղաքական նուաճումներ չարեց, տարածութեամբ չընդլայնուեց, ո՛չ էլ դարձաւ հայրենիք բոլոր հայերի: Գաղութներում աշխարհագրական ցրուածութեան զուգահեռուեց հոգեբանական ցրուածութիւնը: Հայութիւնը բարոյական ամբողջութեան, քաղաքական կամքի վերածելու հիմնական աշխատանք չտարուեց: Դեռ այժմ էլ կազմակերպուած չէ համահայկականութեան գործը՝ որպէս պրոպագանդ, որպէս կազմակերպական մեքենայ:

Ազգովին վկայւում է, որ ընդհանուր է քայքայումը: Մեր լեզուն շարունակում է ստեղծել նուաստութիւն, անկում եւ յոռետեսութիւն ախտանշող որակումներ - «խլեակ», «անհայրենիք», «բեկոր», «մնացորդ» եւն., որոնցով բնութագրւում են օրուայ հայի հոգեվիճակը, ճակատագիրը, նրա բարոյական եւ քաղաքական բովանդակութիւնը:

Ո՛չ միայն հայրենատէր դառնալու, այլ եւ երկիր վերադառնալու

խօսքն անգամ համարւում է «երազատեսութիւն»: Լքուեց անգամ «ներգաղթ» կոչուած քաղաքական մեքենայութիւնը: Գաղութահայութիւնը մի վայրում ամփոփելու, ազգային կեանք եւ հայ հասարակութիւն ընծայող մի կայան ստեղծելու փոխարէն՝ մենք շարունակում ենք ենթակայ մնալ ցրիչ ոյժերի քմահաճոյքին, մեր սեփական անզօրութեան զգացումի նախապաշարումներին:

Կան մանր երազներ, պատրանքներ, մանր գործեր եւ ինքնախաբէութիւն սնուցող անպտուղ ոգորումներ, բայց չկա՛յ հայ հասարակութիւն, որով՝ հոգեւոր, բարոյական կազմակերպութիւն եւ իշխանութիւն. չկա՛յ մշակութաստեղծ իրական ճիգ, վերադաստիարակչական տքնութիւն, ո՛չ էլ քաղաքական կամք եւ լուրջ գործ:

Խօսքի եւ գործի կատարեալ անհամապատասխանութիւն, հակասութիւն: Աւերիչ կազմալուծող հատուածականութիւն, ամուլ դաւանամոլութիւն, մտքերի լճացում, տեսակէտային նախապաշարումներ, պատմական սպանիչ յիշողութիւն, յարանուանական խտրականութիւն, իրենք իրենց մէջ ճեղքուած, բարոյական տկարութիւնից թայֆայականացած կազմակերպութիւններ: Ազգային կամքի, ազգարժէք գործի, ցեղային դաւանանքի բացակայութիւն: Ընդհանուր անկազմակերպ վիճակ: Չկա՛յ գիտական վերարժէքաւորում անցեալի, հոգեգիտական մօտեցում ներկայի, ո՛չ էլ մշակուած հայեցողութիւն, Հայաստանի ապագայի եւ Հայկական դատի զարգացման նոր ընթացքի, մղումի, ուղղութեան մասին: Անձնանպատակ մտաւորականութիւն, տեսակէտների եւ տրամադրութիւնների պղտոր, կրքոտ եւ ատելավառ քաոս: Զգացումների հակամարտութիւն, նպատակների եւ գործերի խաչաձեւում: Միութեան ոգու կատարեալ անկում: Ոյժի զգացումի սպառում: Ժողովրդի բարոյական յետադիմութիւն, նրա թուի նուազում: Տնտեսական, որոշ երկրներում՝ նաեւ քաղաքական, օրաւուր անտանելի դարձող պայմաններ: Ամէն հայ լքուած, թողուած է իր բախտին: Չկա՛յ ազգային կազմակերպուած մատակարարութիւն՝ մեր կեանքի եւ ո՛չ մէկ մարզում: Նաեւ պատասխանատուութեան զգացում եւ պահանջ: Եկեղեցու անկում եւ հոգեւորականութեան բարոյական աղքատութիւն: Դպրոցների խեղճութիւն, կրթական սիստեմի պակասաւորութիւն կամ չգոյութիւն, դաստիարակութեան անբովանդակութիւն կամ ցեղային գծի պակաս: Որոշ երկրներում՝ նաեւ հալածանք, խափանում հայ դպրոցի, կրթութեան, մշակոյթի:

Ամէն գաղութ լքուած, թողուած է իր բախտին: Բարոյական կապի խզում անհատների եւ խմբակցութիւնների միջեւ: Ընդհանուր ճակատագրի զգացումի աղօտում: Հին եւ նոր սերունդների անհասկացո-

ղութիւն: Նոր սերնդի լուրջ եւ համապարփակ կազմակերպութեան չգոյութիւն: Ժամանակի ոգու անտեսում - անցեղաճանաչութիւն: Ստրկականութիւն՝ փոխառիկ գաղափարների, օտար մաշուած մտքերի, ճշմարտութիւնների նկատմամբ: Այլասերումի կամ առնուազն քաղաքականապէս անարժէք, աննպատակ եւ անգործ մնալու վտանգ: Ահա՛ օրուայ հայ իրականութիւնը - վտանգի եւ անտարբերութեան մղձաւանջը:

Գիտեն բոլորը, խոստովանում, ահազանգում, գրում են բոլոր հոսանքներին պատկանող գործիչները, թէ ընդհանուր է քայքայումը, թէ աննախընթացօրէն վտանգուած ենք որպէս համրանք, որպէս ազգային դիմագծութիւն, որպէս տնտեսական կարողութիւն, որպէս քաղաքական ոյժ եւ ազդակ: Բայց եւ այնպէս՝ ո՛չ թէ ազգովին ստեղծագործ ելքի մասին խօսք եւ մանաւանդ գործ չկայ, այլ եւ կոյր թշնամանք՝ ցեղահոգ եւ հայրենահոգ անհատների կողմից եղած վերանորոգչական ճիգերի հանդէպ:

ՆԵՐՔԻՆ ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կորած է որեւէ ժողովուրդ, որ ծառայում է կուռք դարձած անկենսաբանական նախապաշարումների:

Կենսաբանօրէն առողջ եւ մտածումի բարոյականով օժտուած մարդիկ գործում են ո՛չ թէ բնական նախապաշարումներով, այլ՝ գոյզգացութեամբ: Ոգի՛ն է օգտագործողը բնութեան (որով աշխարհագրական դիրքի), նա՛ է ստեղծում ե՛ւ գոյութեան խորհուրդին եւ կռուին ծառայեցնում կրօնը, գիտութիւնը, համոզումները, տեխնիք միջոցները:

Բախտորոշը կեանքում՝ ոգու զօրութենականութիւնն է, խառնուածքը: Բարոյական նուաճում եւ ընկերակում, քաղաքական յաղթանակ եւ պարտութիւն նախեւառաջ հետեւանք են ոգու խառնուածքային «թերի»-ների եւ «առաւել»-ների: Պատմաստեղծումի արուեստը խորագոյն իր հիմքում հոգեգիտութիւն է: Այս գիտութեան անտեղեակ էինք մենք. նրան խորքով ծանօթ չենք ե՛ւ այսօր:

Ահա՛ մեր աղէտների ներքին պատճառականութիւնը.

ա) *Ազգային ոգու խաթարում.* արդիւնք ժամանակների այլասերիչ ազդեցութիւնները յաղթահարելու կամքի պակասի, որի հետեւանքները եղան՝ հատուածականութիւն, յարանուանական չարիք, պարտուողականութիւն, օտարահակութիւն եւլն., եւլն., ուր իրար հանդի-

պեցին հայութեան եսականութիւնը, կրաւորականութիւնը, ամէն կարգի փրկութիւն օտարներից սպասելու հոգեվիճակը, անարժէքութեան, նուաստութեան զգացումը, շրջապատի բարբարոսութիւնը եւ եւրոպացիների շահադիտութիւնը:

բ) *Անինքնաճանաչութիւն,* արդիւնք ցեղային հայեցողութեան չգոյութեան եւ պատմութեան ու պատմա-իմաստասիրութեան լուրջ ծանօթութեան պակասի, ի մասնաւորի մեր պատմական կեանքը վարող հոգեւոր-իդէական ոյժերից օգտուելու անընդունակութեան:

գ) *Իշխանութեան զգացումի պակաս*, արդիւնք՝ գոյավար ոյժերի խաթարումին եւ հետեւանքը՝ քաղաքական-գաղափարական-հոգեւոր անիշխանութեան, նուիրապետական եւ հեղինակաւորապաշտական բարոյագծերի անկում եւ շուտ զինաթափուելու տկարութիւն:

դ) *Ճշմարտութեան զգացումի խաթարում,* որ ճակատագիրը շօշափող հարցերի, դժբախտութեանց պատճառների մեկնաբանումի մէջ՝ հային մղում է անկենսաբանական մոլորանքների - մի բան, որ ի վերջոյ յանգել է նկարագրի խաթարումին, մտածումի անբարոյականութեան, իրատեսութեան եւ կամքի պակասին: Օրինակ, հայը իր ձախողանքի պատճառները վերագրում է երկրի բնութեան (իրականում անառիկ), աշխարհագրական դիրքին (իրականում՝ սահմանուած ո՛չ թէ ոտից կոխան դառնալու, այլ՝ աշխարհակալելու), արտաքին ազդակներին (բայց ո՛չ իր անընդունակութեան՝ դրանցից նպատակայարմարօրէն օգտուելու):

ե) *Բարոյական կորովի պակաս,* որի պատճառով ո՛չ միայն կեանքի առօրեայում, այլ եւ՝ յաճախ բախտորոշ վայրկեաններին՝ ասպարէզ է ընծայում թերուս, հատուածականացեալ, կեղծ եւրոպականութիւն կրող տարրերին, որոնք մի՛շտ էլ հանդիսանում են զանգուածի ուշադրութիւնը էականից հեռացնող, նրա կրաւորականութիւնը եւ նպատակի անորոշութիւնը սնուցանող ներքին ազդակ:

զ) *Ընդհանրապէս գիտական ոգու, գիտականութեան պակաս,* որի պատճառով թերի եղաւ մեր վերածնունդը եւ անյաջող անցաւ դրան յաջորդող յեղափոխութիւնը: Դրա պատճառով կարելի չեղաւ գիտականութիւն դնել մեր պայքարի մէջ, անգա՛մ մեր երկիրը ռազմագիտօրէն, ազգագրօրէն, տնտեսապէս լրջօրէն ուսումնասիրել - մի թերի, որի հետեւանքով մեր յեղափոխութիւնը, հակառակ իր հերոսների գերմարդկային նուիրուածութեան, չկարողացաւ օգտուել ինչպէս ցեղի հոգեւոր ոյժերից, այդպէս էլ՝ Հայրենիքի աշխարհագրական կարելիութիւններից:

է) *Ցեղային դաւանանքի, պատմազգացողական, կենսաբարոյա-*

կան հայեցողութեան պակաս, որի հետեւանքով ղեկավար մտաւորականութիւնը անհաղորդ մնաց իր ցեղի պատմագործ ոյժերին եւ ո՛չ իր ժողովուրդը հոգեգիտօրէն ճանաչեց, ո՛չ մեր հարեւանները, ո՛չ էլ աննախապաշար պատկերում ունեցաւ իր ժամանակի աշխարհի քաղաքական եւ ընկերային շարժումների մասին:

ը) *Պատմական զգացումի պակաս,* որի վատթարագոյն հետեւանքներն են - դեգերումը՝ օտար ճշմարտութիւնների ետեւից եւ պատասխանատուութեան խնդրի անտեսում: Հայ կեանքում չկա՛յ նպատակի իշխանութիւն եւ գործնական ուղու ընդհանրութիւն: Հայութիւնը բազմանպատակ է, բազմուղի, որ ազգային տեսակէտով ասել է՝ աննպատակ, անուղի: Այս հոգեգծերի պատճառով, ղեկավարը մնում է անպատասխանատու, իսկ ժողովուրդը՝ զուրկ իրական ղեկավարութիւնը ճանաչելու ընդունակութիւնից:

թ) *Հոգեւոր կեանքի ծայրայեղ տկարացում,* որի հետեւանքներից են - արժէքների նուիրապետութեան եւ սրբութեան զգացումների խաթարումը, եսականութեան շեշտումը, երջանկութեան իդէալի անձնականացումը եւ առօրեայով ապրելու գոհունակութիւնը:

ժ) *Տեսական խղճմտանքի պակաս,* որի պատճառով վերացած է մտածումի եւ խօսքի բարոյականը, որով եւ՝ փոխադարձ վստահութիւնը եւ կուլտուրական ստեղծագործութեան հաւաքական շինարարութեան հնարաւորութիւնը: Ստեղծուել է հոգեբանական մի մթնոլորտ, որին միայն հիւանդոտ կասկածամտութեանն է թեւաւորում եւ մի ոճ, որ ծառայում է մի բանի - ժխտողականութեան, ճշմարտութիւններ [...]: Կենսարժէք ճշմարտութիւնների հանդէպ գործնական մեթոդ է դարձել տգէտ ձեւանալ կամ տգիտութիւնը ծածկել փայլուն տարազներով: Սովորական երեւոյթ է՝ էականի դէմ անկարեւորը հանել, շարժումների դէմ ճակատ ստեղծել, անգործութիւնը եւ ժամանակի ունայնագործումը երկդիմի, թէական բանաձեւերով արդարացնել: Որոշ տարրեր սնուում են նպատակի խաբուսիկութեամբ եւ դրանով էլ աննկատ թողնում միջոցների, ուղու, աշխատանքի մեթոդի պակասը:

ժա) *Պարտուողականութիւն,* որը շեշտուեց մասնաւորապէս ազդեցութեամբը վերջին աղէտների, որոնց յիշատակները շարունակում են հայի մտածողութեան մէջ սնուցանել տկարութեան, պարտութեան ճակատագիրը սեփական ոյժերի ներգործութեամբ փոխելու անկարողութեան զգացում:

ժբ) *Անլիարժէքութեան զգացումի տիրապետում,* որ հող գտաւ մեր ապրած աղէտների, կոտորածների, պարտութեան, տարագրութեան եւ սրանց կապուած նուաստացուցիչ յիշողութիւնների պատճառով:

ԽՏԱՑՈՒՄ

Հայ կեանքի ժամանակակից տագնապի ենթակայական գլխաւոր պատճառներն են իդէական ոգու բացակայութիւնը եւ սրտի պակասը:

Մինչեւ այսօր՝ հայը իր ողբերգութիւնը չապրեց հարկաւոր, կենսաթափ խորութեամբ եւ իր կեանքի տագնապը չվերծանեց պատճառագիտօրէն: Հոգեւոր իր գլխաւոր զէնքը հանդիսացաւ լրագրութիւնը, որ աւելի ծառայեց մտքի ցրուածութեան, քաղաքական կամքի կազմալուծումին, հատուածական կրքերի հրահրումին եւ մոլորանք ստեղծելու գործին:

Անլուծելի են մնում մեր կեանքի էական հարցերը, որ նշանակ է անփութութեան՝ հանդէպ ճակատագրի եւ անլուրջ վերաբերմունքի՝ դէպի զանգուածի քաղաքական դաստիարակութեան գործը:

Մտքի անհիշխանականութեան, քաղաքական աննպատակութեան հետ՝ տիրական չարիք դարձած է անգիտակցական վանողականութիւնը հանդէպ բոլոր այն ոգորումները, որոնք մտքի եւ կամքի սպառում, տքնութիւն են պահանջում: Դա նշանակում է, որ դեռ չկա՛յ կազդուրուելու ճիգ, չկա՛յ կենսաբանօրէն ստեղծագործ հաւատ դէպի ապագան, չկա՛յ լուրջ ուղեխուզութիւն, հոգեւոր, բարոյական, մտաւոր աճում: Մեր կեանքը զուրկ է պրոբլեմներին յղութիւն տալու, որով՝ ճշմարտախուզական ճիգից:

Մեր էութիւնը համակուած է բարոյական անտարբերութեամբ՝ դէպի բոլոր այն հարցերը, որոնք ազգային տեսակէտով գոյարժէք են: Մենք նախապաշարուած ենք անզօրութեան զգացումով եւ բնազդաբար անձնատուր եղած դանդաղ մահուան թովչանքին: Խօսւում է «անել դրութիւն»-ից եւ բնական համարւում ժողովրդի կրած բոլոր նեղութիւնները, աստիճանական քայքայումը, քաղաքական դիմազրկումը, հաշտուողականութիւնը՝ անհայրենիք կեանքի հետ: Մտքի մակերեսայնութիւնը հալածանք է բացել բոլոր խոր հասկացողութիւնների, մասնաւորաբար այն ճշմարտութեան դէմ, թէ չկա՛յ անել դրութիւն, երբ պատմագործ ոգին է ելք փնտռում:

Աղէտները եւ տարագրութիւնը ո՛չ նոր երեւոյթներ են, ո՛չ յատուկ միայն մեր ժողովրդին, ո՛չ էլ անյաղթահարելի չարիքներ: Բայց դրանք այդպիսին - անյաղթահարելի չարիք կը դառնան, երբ ենթական իր անհայրենիք կեանքի ցաւից, իր հայրենաբաղձութիւնից չի՛ ճգնում աւելի ազնուանալ, ոգիանալ, հզօրանալ, գումարել իր գոյութեան անսպառ ոյժերը: Դա հնարաւոր է, երբ ժողովուրդը ոգու առաջնորդներ

ունի: Ճշմարիտ առաջնորդութեան պակասի իսկական վաւերագիրն է օրուայ հայութեան աշխարհագրական ցրուածութիւնը: Մեր գաղութները հաստատուած են առա՛նց քաղաքական նպատակի, առա՛նց ռազմագիտական, տնտեսական ցեղապահպանումի հաշիւների նախատեսումի: Ձանգուածին վարել են կոյր ոյժերը, վայրկեանի յարմարութիւնը, իսկ ղեկավարութիւնը, կատարուած փաստից յետոյ իր գոյութիւնը արդարացրել է հետեւեալ անկենսաբանական տրամաբանութեամբ. «Իրական պայմանները ստեղծեցին հայկական սփիւռքը»: Այդ «սփիւռք»-ը հետեւանք է ոգու, նպատակի, ծրագրային աշխատանքի բացակայութեան: Ո՛ւր այս որակները չկան՝ հոն ամենազօր են «իրական պայմաններ»-ը: Ոգու որպիսի՛ ճիգ է պէտք, որպէսզի «սփիւռք»-ը կրկին «հաւաք» դառնայ: Առանց հոգեվերանորոգչական լուրջ ոգորումի՝ մենք գերի կը մնանք «իրական պայմաններ»-ի քմահաճոյքին: Այս նախապաշարումը մեր գոյութեան առաջին թշնամին է:

ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Պատահականութիւն չէ, որ Հայը դեռ չունի իր պատմութեան իմաստասիրութիւնը, որ ասել է՝ դեռ չի խօսել իր գոյութեան խորհուրդի, իր նպատակի հետ:

«Պատմութիւն» ասելով՝ հայն աւելի՛ հասկանում է իրերի ընթացքի նկարագրութիւնը, քան՝ ոգու տրամաբանութեան, իր կեանքի ներքին ոյժերի եւ խորհուրդների մեկնաբանութիւնը:

Դարերից ի վեր մեզ պակասում են պատմաստեղծումի հոգեւոր երեք էական գործօնները՝ պատմական զգացում, նպատակի կամք եւ ճիգի ժառանգութիւն:

Պատմական զգացումով է պայմանաւորւում պատասխանատուութեան, որով՝ երկիւղածութեամբ դատելու եւ նուիրումով գործելու պահանջը: Նպատակի կամքը նախատեսում է գոյութիւնը իմաստաւորելու եւ սրա հարցերին կեանքի շեշտով մերձենալու արիութիւն: Ճիգի ժառանգութիւնը պարտադրում է հետեւողականութիւն, օրգանաբար ստեղծագործելու ոգեկան ոյժ:

Երեք այս որակների ներդաշնակութիւնն է ընծայում պատմաստեղծումի հոգեվիճակը: Դրա բացակայութիւնը ախտանիշ է հոգեսպառութեան, որի հետեւանքներից են՝ տկարութեան զգացումը, ներքին չարութիւնը, անհամերաշխութիւնը, եսականութիւնը, քաղաքական կամքի վատասերումը, աննպատակութիւնը, յոռետեսութիւնը:

Ըստ մեր պատմութեան վկայութեան՝ հայի գործն ու նպատակը, որով՝ աշխատանքն ու արդիւնքը, զոհողութիւնն ու վաստակը չեն համապատասխանում միմեանց: Նրա ոգորումների ճակատագիրը կնքում է իրերի քմահաճոյքը - արտաքին ազդակները, անակնկալ միջադէպերը, պատահարները: Դիպուածապաշտ է հայը, ինչպէս պատմական զգացումից, կռահելու եւ ծրագրելու խանդից զուրկ ամէն մարդ:

Օրգանական կապ չկա՛յ հայի մտայղացումների եւ պատմանպատակ տքնութիւնների միջեւ: Ո՛չ միայն արուեստին, այլ եւ՝ գիտութեան, անգամ հասարակ գրին ծառայող հայն իրան համարում է երկնային խորհուրդների ներկայացուցիչ եւ կտրւում երկրից: Կեղծ խորհրդապաշտութիւնը, յաճախ, զրկում է նրան իրական, զօրութենաւոր զգացումների մակածութեամբ (ինդուկցիա), ոգեկան տարրերի համախառնումով նպատակ կառուցելու հնարաւորութիւնից: Հայի նպատակը յղացումն է երեւակայութեան, գործերը՝ տենչերի: Նա չունի գործնական նպատակ եւ պատմականօրէն նպատակադիր գործունէութիւն: Մտածումի եւ կամքի անհերդաշնակութիւնը, բանականութեան եւ զգացումի հակասութիւնը նրա ոգորումները թողնում են անպտուղ, հերոսականները՝ անվաստակ: Անստեղծագործ ողբերգութեան, այսինքն՝ աղիտապաշտութեան էակ է հայը, որպիսիք են բոլորը, որոնք չունին նպատակի կամք:

Միայն արտաքին ազդակները չեն պատճառը, որ հայոց պատմական ոգին զուրկ է տրամաբանական զարգացումից: Պակաս է հայոց ստեղծագործական խանդի ներքին թափը, որով եւ՝ հետեւողականութեան կամքը, ճիգի ժառանգութեան զգացումը: Անհատը ժխտում է անհատի, սերունդը՝ սերունդի գործը, նպատակը, ուղղութիւնը: Նոր կեանքի բաղձանքով համակուած էակ է հայը եւ նրա ճշմարտութիւնները կարճակեաց են - արշալոյսից՝ մինչեւ արշալոյս: Գործի, արժէքների յաջորդականութիւն եւ կուտակաւորում չի՛ ճանաչում նրա պատմութիւնը: Նորատենչութիւնը նրա համար ո՛չ թէ ինքնագերազանցումի քայլ է, այլ՝ ինքնահակասում, ժխտում: Հայը ժառանգական ճիգի մարդ չէ՛, այլ՝ պատմական յիշողութեան: Նա չի՛ շարունակում գործը, այլ՝ միայն ապրում՝ որպէս կատարուած փաստ: Նա աւանդապահ է, բայց ո՛չ ստեղծագործ, դիպապաշտ, բայց ո՛չ իրերի շարժի հետ գործող: Հայի հոգեւոր զարգացումն ընթանում է անկապ թռիչքներով եւ ո՛չ թէ տրամաբանական շղթայակցութեամբ: Այդ է մէկը այն պատճառներից, որ մեր պատմութիւնը ո՛չ թէ արդիւնքներ է կուտակում, այլ՝ հակասութիւններ, աղէտներ, սարսափներ վիժում:

Կառուցողական հոգեգիծ չկայ՛ որեւէ գործի, գաղափարի նպատակի մէջ, եթէ դրանք չեն բղխում պատմական զգացումից: Քաղաքական անկումն ու հոգեւոր դեգերումն սկսում են այնտեղ, ուր մարդիկ կորցնում են իրանց պատմութիւնը վարող ոյժերի հետքը - ճակատագիր դարբնող նախահայրերի ոգու առաջնորդութիւնը: Հոգ վիճակն է ճակատագրի որոշիչը եւ պատմաստեղծական հոգեվիճակը նա է, որում անցեալի ապրումը, ներկայի խնդիրը եւ ապագայի զգացումը ներդաշնակաբար ազդու են:

Մեծագործ հայրերի նպատակի, գործի, ուղղութեան լքումը հետեւանք է ոգու սպառումի: Սպառումն է մայր ամենայն այլասերումի - մտքի, զգացումի, քաղաքական կորովի թէ բարոյականի: Նման այլասերումի արդիւնք է պարտուողական հոգեվիճակը: Մօտաւոր ժամանակների մեր դեգերանքները, կիսաշունչ գործերը, անհետեւողականութիւնը, պատեհապաշտութիւնը պայմանաւորւում են այդպիսի հոգեվիճակով: Արկածուելը, պատուհասուելը դառնում են անխուսափելի, եթէ չի գործում պարտուողական հոգեվիճակը յաղթահարող վերածնական կամքը: Առանց վերածնունդի՝ կարելի չէ՛ հոգեվիճակ, որով եւ՝ ճակատագիր փոխել: Պատմութիւնը տրամաբանական արտայայտութիւնն է ա՛յն բոլորի, ինչ ժամանակները կուտակել են որպէս ոգեկան տարրեր եւ կառուցել՝ որպէս հոգեբանութիւն: Պատմական ճակատագիրը նախ եւ առաջ ոգու տարողութիւն է: Ոգու տարողականութեան պակասի պատճառով է, որ լրջօրէն դեռ չենք կարողանում պատասխանել մեր կեանքի պատմական զարգացման տեսակէտով այնքան էական նշանակութիւն ունեցող հետեւեալ հարցերին.

1) Ինչո՞ւմն է խորհուրդը այն բանի, որ թէ՛ համիտեան, թէ՛ իթթիհատական, թէ՛ միլլիական Թուրքիան Հայաստանի եւ հայութեան հանդէպ մնաց քաղաքական նոյն տեսակէտի եւ գծի վրայ: Մենք չենք ըմբռնել եւ գնահատել ցեղային գործօնը, որ իր հիմքում ղեկավարն է պատմական կամքի: Չենք ըմբռնել, որ իշխանաւորի անձը կամ տուեալ վարչաձեւը խորտակելով կամ բարելաւելով՝ ազգերի յարաբերութիւնները չեն փոխուի, գոյութեան իմաստ եւ բովանդակութիւն ունեցող պատմական հարցերը չեն լուծուի: Քսան տարի օսմանեան տիրապետութեան դէմ կեանքի եւ մահուան կռիւ վարելուց յետոյ՝ 1908թ. մեր զինուած պայքարն այլեւս աւելորդ համարեցինք եւ հակառակ Կիլիկիոյ յաջորդ տարուայ (1909թ.) ջարդին՝ շարունակեցինք հաւատ ընծայել քաղաքական օսմանականութեան, մինչեւ որ կը հասնէին Մեծ եղեռնի օրերը: Անակնկալի՞ եկանք, թէ՞ պատուհասուեցինք: Պատմութեան մէջ - մեր թէ թշնամու - ե՞րբ ենք տեսել զգա-

ցումների յաւիտենականի տրամադրութիւնը: Մենք զբաղւում ենք «անմիջական» չարիքով, «անմիջական» կարիքով, պատմութիւնը մեզ համար վայրկեանի բաղձանք է եւ տրամաբանութիւն: Դեռ այսօր էլ չենք սիրում իրերի խորքը թափանցել: Մեզ համար «վայրկեան»-ը եւ «անմիջական»-ը ո՛չ թէ յաւիտենականի բնական մի մասնիկը, «անմիջական»-ի մի արտայայտութիւնն են, այլ՝ վերջինների հակադրութիւնը: Վայրկենապաշտն՝ արկածւում է, ներկայապաշտը՝ մնում է անապագայ - իրերի կամքով եւ ոգու տրամաբանութեան օրէնքով թրծուած այս ճշմարտութիւնը դեռ այժմ էլ դժուարանում ենք հարազատել:

2) Ինչպէ՞ս եղաւ, որ՝

Մեր դրացի բոլոր ժողովուրդները - արիական թէ մոնգոլ, կովկասեան թէ սեմական, քրիստոնեայ թէ իսլամ - դուրս եկան մեր դէմ:

Թուրքիայի դէմ ելանք, բայց կայսերական Ռուսաստանի հովանաւորութիւնը ապահովելու փոխարէն՝ միացանք ռուս յեղափոխականներին, աւելի եւս գրգռելով ռուս իշխանութեան թշնամանքը, իսկ դրանից յետոյ, 1914-ին, կամաւորական շարժումով միացանք ցարական բանակին:

Փրկութիւնը ակնկալեցինք եւրոպական պետութիւններից, իսկ մեր դատի հովանաւորութիւնը, թէկուզ բարոյական իմաստով, յանձնեցինք այս պետութիւնների կառոյցին ընկերային յեղաշրջումով սպառնացող տարրերին, օրինակ՝ Երկրորդ Ինտերնացիոնալին:

3) Ինչպէ՞ս եղաւ, որ զուտ ցեղային, ազգային-ազատագրական շարժառիթներով եւ նպատակով ծագած յեղափոխութիւնը ղեկավարուեցաւ նաեւ ընկերային լոզունգներով, հակառակ որ Քրիստափորը «յաւելեալ արեան» իր տեսութեամբ հայ մտաւորականութիւնը զգուշացրել էր սոցիալ-դեմոկրատիզմի պահանջներին հետեւելու չարիք-վտանգից: Ի՞նչ շահեց հայութիւնը իր մտաւորականութեան որոշ մասի դաւանած «արեւմտեան դեմոկրատիզմ»-ից, բացի նրանից, որ Եւրոպան մեր ծով արիւնը փոխանակեց Թուրքիայից սպասած իր քաղաքական եւ տնտեսական շահերով, որ հին Ռուսաստանը կոտրեց մեր յեղափոխութեան բազուկը, իսկ օրուայ կարմիր Մոսկուան շարունակում է մեզ համարել եւրոպական իմպերիալիզմի ագենտներ:

Ի՞նչ էր «մանդատ»-ի մեր քաղաքականութիւնը, լուրջ ընբռնո՞ւմ էր դա աշխարհի մասին, թէ՞ ցնորք: Հոգեբանօրէն, դա չէ՞ր նշանակում ժողովուրդն իր բազուկին չվստահող, քաղաքականապէս եւ մարտապէս կրաւորական դարձնել կամ հայութիւնը սին յոյսերի մղելով՝ բոլշեւիզմը Հայաստանի գոյութեան դէմ գերագրգռել: Այդ չանդրա-

դարձա՞ւ նաեւ Կարսի աղէտի վրայ: Ինչո՞ւ հայ զօրքը չկռուեց. «առարկայական պայմանե՞րն» էին աննպաստ, ամրութի՞ւնը խարխուլ, սպառազինութի՞ւնը թերի, թէ՞ չկար մի բան - այդ բոլորից օգտուելու ոգի եւ վճռականութիւն, եւ կար մի բան - այնքան մեծ յոյս Եւրոպայի վրայ, որ Կարսում՝ պարտուելը կամ յաղթելը չէր համարւում ճակատագրական՝ Հայկական հարցի համար:

Քաղաքականութիւն ունէի՞նք, ունի՞նք: Երէկ բարեկամ էինք հեռաւորներին, թշնամի՝ մերձաւորներին: Այսօ՞ր. դէմ ենք բոլշեւիզմին եւ թշնամի՝ կովկասեան հակաբոլշեւիկ դրացիներին: Անգլիայից, Ֆրանսիայից հիասթափուած ենք, իսկ Գերմանիային, Իտալիային՝ «գաղափարախօսօրէն» հակառակ: Որպէս թէ թշնամի ենք Թուրքիային, բայց, իրականում, ոչինչով է արտայայտւում մեր թշնամանքը:

Օրուայ հայութիւնը կարո՞ղ է քաղաքականութիւն ունենալ, երբ չունի ցեղային դաւանանք, հոգեւոր իշխանութիւն, բարոյական ոյժ, ճակատագիր փոխելու կամք եւ ազգային ղեկավարութիւն: Կարելի՞ է ներքին ծրագիր ունենալ, երբ չկայ արտաքին քաղաքականութիւն: Իսկ երբ ներքին ծրագիր եւ արտաքին քաղաքականութիւն չկայ, կարո՞ղ է լինել կազմակերպուած, տեւական եւ նպատակորոշ աշխատանք: Ո՛վ չունի արտաքին քաղաքականութիւն, չունի ե՛ւ ներքին ծրագիր, ե՛ւ կենսիմաստ գործունէութիւն:

4) Ինչո՞ւ արժէքների նուիրապետութեան զգացումը միշտ պակաս եղաւ հայ ղեկավարութեան մէջ - մի բան, որ անգա՛մ վտանգի ծանրագոյն վայրկեաններին, դարձաւ ներքին պառակտումների պատճառ, ոյժերը ջլատող:

5) Ինչո՞ւ հայ մտաւորականութեան մի մասը շուտ անկրօնացաւ - տգիտութի՞ւնն էր պատճառը, սուտ եւրոպականութի՞ւնը, թէ՞ բարոյական աթէիզմը: Սա չէ՞ր հայ եկեղեցականութեան բարոյական անկումի մի պատճառը: Կրօնը «անհատական խիղճի գործ» հռչակելը անտակտութիւն չէ՞ր, երբ դեռ պետութիւն չունեցած՝ խզում էինք ժողովուրդը միացնող դարաւոր կապը: Ինչի՞ց առաջ եկաւ հայ բոլշեւիզմը - արդեօ՞ք միայն ռուսական ազդեցութիւն, թէ՞ նաեւ հայ կեանքի բարոյական ներքին պայմանների ախտավիժում: Ինչո՞ւ խոր եղաւ հայերի հոգեւոր բոլշեւիզմը եւ մակերեսային քաղաքականութիւնը:

6) Ինչո՞ւ անկարելիութեան աստիճան դժուար է ամենապարզ ճշմարտութիւնն անգամ՝ պարտադրել մեր իրականութեան, եթէ այդ ճշմարտութիւնը նպատակիմաստ է, շինարար, ստեղծագործ: Ինչո՞ւ հայութիւնն անձնատուր եղաւ անկենսաբանական մոլորանքների: Ինչո՞վ բացատրել օրուայ հայ մտաւորականութեան գաղափարավա-

խութիւնը, միաժամանակ, անցեալ արժէքների եւ աւանդների չարաշահումը - նորին թշնամի են, հինը՝ լդրճող, աղարտող: Ինչո՞ւ դժուար է որեւէ յանցագործ, հասարակութեան կամ ազգի դէմ մեղանչած մէկը ո՛չ միայն պատժել, այլեւ՝ սանձել: Ինչո՞վ բացատրել կեղծիքի տիրապետութիւնը՝ մեր կեանքում - խօսքի անիմաստութիւն (օրինա՛կ, ազգային միութիւն քարոզողները եւ խանգարիչները միեւնոյն անձերն են): Ինչո՞ւ չի իրականանում հայկական միութիւնը - արդեօ՞ք դրա պատճառը միայն բոլշեւիզմն է: Բոլշեւիզմից առաջ կա՞ր հայկական միութիւն - միաճակա՞տ էին հայերը Եւրոպայի առաջ, երկու պատւիրակութիւն չէ՞ր նշանակում ապացուցել, որ մենք, քաղաքական իմաստով, դեռ ազգ չենք: Առա՛նց արժէքների նուիրապետութեան զգացումի, առա՛նց ներցեղային բարոյականի, հոգեւոր բռունցքի՝ հնարաւո՞ր է որեւէ միութիւն:

7) Ինչո՞ւ հայն անարդար է հային հանդէպ եւ թշնամանող - դրանով չի՞ արդարացւում ընդհանրապէս օտարների՝ իր հանդէպ ունեցած անարդար եւ թշնամական վերաբերմունքը: Ասւում է, որ հայ բոլշեւիկները զիրար սեւացնելով եւ մատնելով՝ զոհեր են մատակարարել Մոսկուա-Թիֆլիսի հայաջինջ քաղաքականութեան: Գիտենք, որ արտասահմանում մի քանի հոսանքների բաժանուած հայերն անվերջ յաճախել են իրենց բնակած երկիրների ոստիկանատները եւ զիրար մերկացրել, զրպարտել են՝ առանց անդրադառնալու, որ դրանով քաղաքականապէս կասկածելի, բարոյապէս՝ անարժէք են դարձնում ընդհանրապէս հայութիւնը: Երբ ներցեղային բարոյական չկայ՝ ազգի իւրաքանչիւր անդամը միւսի համար դառնում է հալածիչ, ոսոխ, իսկ ինքը՝ ազգային ամբողջութիւնը անդամալուծւում է: Հաւաքականութեան զգացումի խաթարումը ինքնին բաւական է, որ մի ազգ մեռնի, թէկուզ դա չունենայ արտաքին թշնամիներ:

8) Ինչո՞ւ չի ստեղծւում մարտիկը, մարտական ոյժը - ինչո՞ւ չկայ վերջինի պաշտամունքը, այլ, ընդհակառակն, ճիգ է նկատւում մարտական մեր անցեալը խաթարել կամ մարտական ոգի ունեցող կազմակերպութիւնները զբաղեցնել ներքին թնճուկներով եւ կեղծ մշակութային խնդիրներով - պար, երգ, դերասանութիւն: Օրուայ հայը գիտէ՞ օգտուել մեր անցեալից, ի՞նչն է վարում մեր պրոպագանդը - ողբերգական-հերոսականի ոգի՞ն, թէ՞ եւրոպացուն այլեւս զզուանք պատճառող նուաստութեան զգացումը: Աշխարհն ինչպէ՞ս ճանաչում է մեզ - որպէս ջարդուելու ընդունա՞կ, թէ՞ հերոսական ստեղծող ժողովուրդ: Ո՞վ է մեղաւորը այդ բանում: Ինչո՞ւ որոշ տարրեր բնազդական թշնամանքով դուրս եկան տարօնականութեան դէմ, որ ասել է՝

պատմա-հոգեբանական հիմք ունեցող այնքա՜ն անհրաժեշտ հոգեվերանորոգչական շարժում, նոր հոգեվիճակ ստեղծելու ճիգ: Ի՞նչը պէտք է լինի հայ մարդու իդէալը, գործը - կարեկցա՞նք ստեղծել իր շուրջը, թէ՞ քաղաքական շահագրգռութիւն:

9) Ինչո՞ւ նոր սերունդ դեռ չի դիմագծւում, հակառակ որ մի սերնդի կեանք անցաւ վերջի տարագրութիւնից ի վեր: Ժողովրդի կեանքում օրգանական-հոգեւոր աճո՞ւմ գոյութիւն չունի, ցեղի կենսա-բարոյական ոյժե՞րն են սպառուել, թէ՞ արուեստական խոչընդոտներ կան: Ինչո՞ւ ցեղակրօնութիւնը չդարձաւ ընդհանուր շարժում, երբ դրա համար կար հնարաւորութիւններից էականը - հոգեբանական հողը, երբ ամէնուր կար խանդավառութիւն եւ սպասում: Ո՞վ ստեղծեց երկու սերունդների հակամարտութիւնը: Ախտաբանօրէն վերծանուե՞լ է այն խնդիրը, թէ ի՛նչ է նշանակում նախանձի մթնոլորտ ստեղծել սերնդի եւ սերնդի միջեւ: Առանց յաջորդութեան բնական զգացումի՝ կարո՞ղ է բարոյական կապ ստեղծուել հին եւ նոր սերունդի միջեւ: Առանց կեանքին հասարակագիտօրէն մօտենալու, առանց ժամանակի ոգին ըմբռնելու՝ կարելի՞ է նոր սերնդի դաստիարակութեան մասին խօսել: Գոյութիւն ունի՞ նորահաս սերնդի դաստիարակութեան եւ կազմակերպութեան լուրջ ծրագիր, աշխատանք, որ նշանակում է՝ ծրագիր եւ աշխատանք հայութեան ապագայի համար: Ովքե՞ր են նոր սերնդի մղում «հաճելի ժամանակների», մանրագործութեան, հոգեւոր գաղջութեան, նպատակի չնչինութեան: Ինչո՞ւ դեռ չեն հարազատւում հասարակագիտական հետեւեալ երեք ճշմարտութիւնները - ա) ժողովրդի հոգեւոր վերանորոգումը հնարաւոր է միայն նորահաս սերունդի միջոցով, բ) յարանուանացած, հատուածականացած մի ժողովրդի միութեան հաշտարար ոյժը նոր սերունդն է, գ) հայրենիքի ինքնապաշտպանութեան գործի կազմակերպութիւնը տարւում է նորահասի խնդրի կապակցութեամբ:

10) Գոյութիւն ունի՞ հայկական պրոբլեմատիկա. ո՞րն է դա: Ինչո՞ւ ցայսօր չճշտուեցին մեր երկրի եւ ժողովրդի ճակատագիրը շօշափող խնդիրները եւ սրանց կարեւորութեան աստիճանը: Առանց ճշմարտախուզութեան՝ կա՞յ անցեալը հասկանալու ճիգ, առանց սրան՝ հնարաւո՞ր է նպատակաւոր դիրքորոշում ներկայում, առանց վերջինի՝ կա՞յ լուրջ աշխատանք՝ ապագայի համար: Առհասարակ, մոլորանքը եւ ինքնախաբէութիւնը չէի՞ն մեր կեանքը վարող ոյժերը: Ճի՞շդ է, որ մենք թշնամիներ եւ բարեկամներ ունինք: Ի՞նչ ենք անում թշնամիների դէմ, ի՞նչ՝ բարեկամների համար: Հասարակագիտականօրէն հիմնաւորուա՞ծ է օրուայ հայ խօսքը, մամուլը: Ինչո՞ւ հայ կեանքում ամէն

խօսք կրում է ծիծաղելի մեծամտութեան կամ թունաթափութեան կնիք: Ինչո՞ւ ճշմարտութիւնը չի գնահատւում՝ ըստ իր բանական կշռի: Քանի՞ զգացումի, քանի՞ ճշմարտութեան է ծառայում իւրաքանչիւր հայ: Ներքուստ պառակտուած այս էութիւններով կարելի՞ է ստեղծագործ ընկերութիւն, ազգ, հայրենիք, պետութիւն ստեղծել: Կա՞յ այդ բոլորը ստեղծելու կենդանի իդէալ: Ամէն ինչ բաղձանք չէ՞, այլապէս, ինչո՞ւ ողբերգութեան 20 տարին անցաւ առանց շօշափելի գործի: Քսան տարի անպտուղ անցկացնել չի՞ նշանակում հաստատել, թէ՝ որպէս պատմաստեղծ գործօն, միտք եւ առաջնորդութիւն՝ մեռեալ է հայութիւնը: Եւ, վերջապէս, հաշուի առնուե՞լ է, թէ բարոյական որպիսի՛ կործանում է քսան տարի անընդհատ տարբեր երկինքների տակ յիսուներկու ազգերի ինքնասիրութիւնը շոյել: Դրանից յետոյ՝ ինքնակամ դառնալու ընդունակութիւն մնո՞ւմ է: Անկախութեան ցաւ ունենալ, բայց ոգորում, պայքար չունենալ՝ չի՞ նշանակում անզգայ դառնալ եւ հաշտուել դանդաղ մահուան ճակատագրին:

ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄ

Հայութեան բոլոր դժբախտութիւնների ենթակայական պատճառը ոգեսպառութիւնն է: Իրական ամէն ուղի եւ նպատակ նախատեսում է ոգեկան ոյժ: Անստեղծագործ նպատակ, ունայն գործ, անկենսաբանական խօսք - դրանք բոլորը պայմանաւորւում են սպառուածութեան զգացումով: Ոգեսպառ, ասել է՝ անուղի, աննպատակ, նաեւ՝ սխալադատ: Սխալ դատողութիւններով կառուցուած ճշմարտութիւնները անկենսաբանական են: Անկենսաբանական ճշմարտութիւնների ծառայող ժողովուրդների կեանքը դանդաղ մահուան մի առաջընթաց է, նրանց պատմութիւնը՝ սեւ թուականների պաշտամունք: Տխուր երգերի եւ ձախողուած հերոսականների, անստեղծագործ ողբի եւ անզօր ափսոսանքի, երկարատեւ յօրանջումների եւ երերական տրամադրութիւնների հեղինակներ եւ միաժամանակ զոհեր են նման ժողովուրդները: Ճակատագիրը Դեր-Զօր եւ իրար յաջորդող խորտակումները պարտադրեց մեզ, որովհետեւ նպատակագրային իր տեմպերամենտով՝ թշնամին գերազանցեց մեզ: Նա մեզ գտաւ անուղի, ներքուստ տատանուողի հոգեվիճակում, եւ վարեց մեզ այնտեղ, ուր կամենում էր: Չքմեղանում ենք, որ «խաբուեցինք»: Չկա՛յ խաբուել, կայ ինքնախաբէութի՛ւն: Խաբւում են բոլոր նրանք, որոնք ղեկավարւում են ո՛չ թէ կամեցումով, այլ՝ տրամադրութիւններով:

Սխալ բոլոր հաշիւների աղբիւրը ոգեսպառութիւնն է:

Նոյն հոգեվիճակն է այսօր հայութեան պարտադրել նուաստութեան, անարժէքութեան, իր ոյժերը ստորագնահատելու եւ իր գոյութեան սպառնացող ոյժերի անյաղթահարելիութեամբ նախապաշարուելու զգացումը: Յոռետեսութիւնը, թէ կարող է որպէս հայ ապրել, հետեւանք է ա՛յն բանի, որ բարոյական իր կորովը տկար է համարում: Կորած է ամէն ժողովուրդ, որ թողած իր ներաշխարհը՝ անվերջ թօթովում է «ռէալ պայմաններ»-ի մասին:

Գոյութեան մեծագոյն «ռէալ»-ը ոգին է: Երբ չկա՛յ այս հասկացողութիւնը՝ մտածումը ճշմարտութեան փշրանքներ է վիժում եւ էութիւնը գերի է դառնում «արտաքին ազդակներ»-ին: Այդտեղ ներկայ են արդէն ցեղային պահպանութեան յոռետեսութիւնը, քաղաքական անկարողութեան զգացումը եւ ճակատագրին հնազանդելու բաղձանքը: Այս հոգեվիճակից ծնւում է ներքին չարութիւնը, որի հետեւանքով՝ գործի չափանիշը դառնում է նախանձը, խօսքը ստանում է թունաթափութեան եւ պրոպագանդը՝ տկարութեան վաճառքի բնոյթ:

Մեր արտաքին քաղաքականութիւնը յենւում է կեղծիքի վրայ, որովհետեւ դա թելադրւում է տկարութեան զգացումից: Քաղաքականութիւնը ենթադրում է՝ նա՛խ ցեղային սուր ինքնազգացողութիւն, ինքնայարգանք եւ իրաւունքի գիտակցութիւն: Հայը վարժուել է իր իրաւունքը սպասել օտարների արդարամտութիւնից: Դրա համար էլ՝ նա բարեկամներ չունի, որովհետեւ կանխաւ մատնում է մուրալու իր տկարութիւնը:

Իր պրոպագանդում հայն երեւան չի գալիս որպէս արժէք, այլ՝ որպէս կարեկցանք հայցող: Չկա՛յ ոյժի եւ հզօրանքի պրոպագանդ - դրա համար էլ՝ կայ թշնամանք տարօնականութեան եւ ցեղակրօնութեան դէմ: Տկարութեան թշնամանքը թոյլ չի տալիս, որ ըմբռնենք կեանքի ճշմարտութիւնը: Սրա հետեւանքն է, մի կողմից՝ կեղծ մարտականութիւնը, միւս կողմից՝ թշնամանքը դէպի մարտականը: Ոգեսպառը թշնամի է ճիգ եւ կորով պահանջող ամէն բանի: Դրա հետեւանքներից են նաեւ մտքի ցրուածութիւնը, կեղծ մխիթա-րութիւնը, կեղծ ինքնագոհունակութիւնը, քաղաքական սոֆիզմը, հոգեւոր շինականութիւնը: Իմ համոզումը հրամայուած ճշմարտութիւնն է: Հօրս եւ ո՛չ թէ նախահայրերիս ճամբով: Այստեղ՝ հին սերնդի անկենսաբանական մեծամտութիւնը, նորի՝ ծուլութիւնը: Դէպի՞ նախահայրերը - դա երեւակայութեան լարում, մտքի տքնութիւն եւ մեծագործութեան ճիգ է պահանջում: Կրկնի՛ր, որ «ամէն ինչ կորած է եւ անկարելի» եւ մտածի՛ր անձիդ մասին: Այդ աւելի՛ դիւրին է, եսականացնող եւ գրաւիչ:

Դաստիարակչական անզօրութիւն կայ հայ ընտանիքում, նուազ բացառութիւններով ծնող կայ, մայր չկայ: Հայ կինը դաստիարակչական իր դերը չի խաղում: Ուզո՞ւմ ես սերունդը «հայ պահել», նախ՝ ստեղծի՛ր ցեղահոգ մայրը: Կանանց կազմակերպութիւնները փոխանակ այս գործին միայն ծառայելու՝ իրենց նպատակը լցնում են մանր բարեգործութիւններով: Ո՞ւր է հայ հայրը: Մանուկի եւ պատանու համար առաջին իրական գաղափարատիպը, շօշափելի հերոսը իր հայրն է: Ի՞նչ է օրուայ հայ մարդը որպէս գաղափարատիպ, որին բնազդաբար ձգտում է նմանել մանուկը: Երբ պարտուողական հայրեր կան՝ դուրս կը գայ նուաստութեան զգացումով համակուած սերունդ:

Եկեղեցին եւ դպրոցը - կրօնը եւ դաստիարակութիւնը - դարձել են անբովանդակ: Նրանք ներքին ապրում չե՛ն, այլ՝ արտաքին կրթութիւն եւ ծէս: Խորհուրդ չի՛ մնացել նրանցում, որովհետեւ հայ անհատը շարունակում է մնալ չվերանորոգուած, այսինքն՝ կենսաբանօրէն հաւատաթափ:

Հայաստան եւ հայրենասիրութիւն - դրանք նախատեսում են քաղաքական վերաբերում դէպի հայրենիքը: Դա ենթադրում է խորին մտահոգութիւն ապագայի հանդէպ, որով եւ՝ յստակորոշ մի ծրագիր եւ կենդանի, ուղղագիծ եւ յարատեւ աշխատանք: Ինչո՞վ է արտայայտւում օրուայ հայ մարդի հայրենասիրութիւնը: Կարելի՞ է երեւակայել աւելի գաղջ, իր խորքում աւելի վիրաւորական վերաբերում, քան Հայաստան «մեխ ու տախտակ» ուղարկելով, սնարժէք մի «ներգաղթ»-ի հաւատ կեղծելով, երկրի «բարգաւաճում»-ը փառերգելով կամ թերութիւնները քննադատելով, ի մի բան՝ ունայնագործութեամբ եւ խօսքի քամիաբանութեամբ հայրենասիրական պարտականութիւնը բաւարարուած համարել: Հայը ի՞նչ բովանդակութիւն է դրել իր ներգաղթի եւ ի՞նչ ապրում՝ իր օտարութեան մէջ: Երկրին սպառնում է սուրը, արտասահմանին՝ ձուլումը: Այս չէ՞ օրուայ տիրական մտածումը, հեղինակաւոր ճշմարտութիւնը: Եւ դա խուճապ չի՞ ստեղծել ամէն տեղ: Մեր ցրուածութիւնը չարիք համարելով՝ ուզում ենք, որ հայութիւնը հաւաքուի Երկիր: Բայց խուճապահարի հոգեվիճակը թոյլ տալի՞ս է, որ այդ ուղղութեամբ մենք նպատակաւոր մի քայլ առնենք: Ո՞ւր է բոլշեւիկասէր տարրի տարիների «քաղաքականութեան» եւ հակաբոլշեւիկ տարրի տարիների «պայքար»-ի արդիւնքը: Կա՞յ քաղաքականութիւն, կա՞յ պայքար, եթէ զանգուածը չի՛ դաստիարակուել եւ կազամկերպուել որպէս Երկրի ինքնապաշտպանութեան ակտիւ ազդակ: Կա՞յ վտանգը յաղթահարելու որեւէ հաւանականութիւն, եթէ դա չես դարձրել ճակատագրիդ անբաժան ընկերը, եթէ չես որոշել

ապրել վտանգի թագաւորութեան մէջ: «Ես եւ վտանգը ճակատագրի եղբայրներ ենք եւ նրա թագաւորութեան մէ՛ջ միայն կարելի է յաղթահարումի, այսինքն՝ ստեղծագործումի կամք ու կորով մշակել»: Բայց այս խօսքը կարող է ասել միայն վերանորոգուած ժողովուրդը:

* * *

Չվերանորոգուած ամէն էակ տկար է: Նմանը չունի՛ ռէալ քաղաքականութիւն: Տկարութիւնը աշխարհի հետ լեզու չի գտնում: Հայը թշնամի է թէ՛ Ռուսիային, թէ՛ Թուրքիային, թէ՛ հին իր «դաշնակիցներին», թէ՛ դրացի ժողովուրդներին, թէ՛ հայկական ներքին որեւէ խմբակցութեան, որին ինքը չի պատկանում: Նա պատերազմ է հռչակել աշխարհին եւ խաղաղօրէն նստել օտարութեան մէջ ձեռք բերած իր խրճիթում: Խօսքով «ծովից ծով Հայաստան» է հոլովում, գործքով՝ անտարբեր է անգա՛մ «Արարատեան կորիզ»-ի ճակատագրի հանդէպ: Անկարելի նպատակի սնուցիչը - դա ոչինչ անելու հոգեբանութիւն է: Որպէս սպառուած էակ, օրուայ հայը ներքին ճակատում գործում է նախանձի զէնքով, արտաքինում՝ կեղծ ինքնապաշտպանուողի «մտորումներով»: Այս պատճառով՝ սուտը դարձել է գործունէութեան միջոց, ինքնախաբէութիւնը՝ ղեկավար սկզբունք: Դրա հետեւանքներից է ստամտաւորականութեան, հոգով փերեզակ տարրի տիրապետութիւնը մեր կեանքում: Ամէն շինարարութիւն, մասնաւորապէս ազգային-պետական, պահանջում է իդէալիստական խորքով, նախաձեռնութեան ոգով օժտուած ղեկավարութիւն եւ յեղափոխիչ, ակտիւացնող երիտասարդական ոյժի մասնակցութիւն: Մեծ ժողովուրդները ազգային շինարարութիւն ասելով՝ հասկանում են նախ եւ առաջ նորահաս սերնդի դիմակերտումը, նրան ինքնապաշտպանողական ոյժ դարձնելու աշխատանքը: Տգէտ եւ անձեռնահաս մի ղեկավարութիւն - ահա՛ ժողովրդի ապագայի առաջին թշնամին: Ապագայ ստեղծւում է ժամանակի ոգու ըմբռնումով եւ այս ոգուն համապատասխանօրէն դաստիարակուած եւ կազմակերպուած նորահասի միջոցով: Նորահասը ուժապաշտ է, դա համախմբում է ոյժի հմայքի շուրջը եւ մօտենում միայն ա՛յն նշանախօսքերին, որոնք դառնում են կոնկրէտ մի նպատակի շուրջը: Չկա՛յ բացարձակ հրամայական, կա՛յ հրամայականի վերածուած բարոյական մի բովանդակութիւն: Տարբեր արդիւնք է ստացւում, երբ ասում են - «եղի՛ր հայ», «հայ մնա՛», եւ տարբեր՝ երբ ասում են - «եղի՛ր այս տիպի հայ», «ունեցի՛ր այսինչ նպատակը»: Ո՛ւր դաստիարակութիւնը բովանդակութիւն, որոշ իդէալ

եւ յստակադիր նպատակ չունի - այնտեղ չկայ դաստիարակութիւն:

Առհասարակ, մեր կեանքում բացակայում է ապագայահոգ գործ անելու եւ արածը որոշ մեթոդով, սիստեմով, նպատակադրօրէն առաջ տանելու կամքը: Այդ ասել է, որ գոյութիւն չունի՛ լուրջ կազմակերպութիւն: «Հայկական կազմակերպութիւնները» անուն են եւ ո՛չ թէ բովանդակութիւն: Դրսից, նրանք ոյժի խաբկանք են տալիս, իրանց յարկի տակ՝ անկազմակերպութեան տիպարներ են:

Հասարակական կազմակերպուածութեան զուգահեռւում է մտածումի անկազմակերպութիւնը: Աշխարհայեցողութեան պակասից մի՛շտ էլ տառապել է հայ մտաւորականութիւնը եւ անուղի են մնացել նրա գաղափարական ոգորումները: Մտքի քաոսից ստեղծւում է նպատակի անորոշութիւն եւ գործունէութեան աննպատակութիւն: Հայը տքնում է, աշխատում, արիւն թափում, բայց մինչեւ այժմ լրջօրէն չի անդրադարձել այն խնդրին, թէ ինչո՞ւ իր ճիգերն անպտուղ են մնում: Վաղուց է, ինչ հայը, որպէս մտածող, դարձել է հետեւակ եւ հետեւում է արդէն մաշուած, սպառուած ճշմարտութիւնների: Հայ մտածումի համար՝ գարունը բացւում է ա՛յն ժամանակ, երբ Եւրոպայում արդէն ուշ ամառ է եւ պտուղը՝ քաղուած: Հայը ուշացող է նաեւ մտքի զարգացման աստիճանաչափով: Նրա որդեգրած գաղափարները կրում են մակերեսայնութեան, գիտականութեան պակասի, սկզբունքային ներհակութեան դրոշմը: Միեւնոյն անհատի մէջ հաւասարապէս տեղ են գտնում անիշխանականութիւնը, բացարձակապաշտութիւնը, իդեալիզմը, ռէալիզմը, աշխարհաքաղաքացիութիւնը, թունդ ազգայնականութիւնը, միեւնոյն քաղաքական ծրագրում՝ միջազգայնականութիւնը, անհատապաշտութիւնը, ընկերային յեղափոխութեան երազը, ազգային պետութիւն ստեղծելու նպատակները եւլն. եւլն.: Որ այս հակասութիւնների պատճառով հայութիւնը տուժում է քաղաքականապէս, կասկածելի դառնում թէ՛ հեռաւորի, թէ՛ դրացու, թէ՛ «աջ»-ի, թէ՛ «ձախ»-ի աչքում - դրան անդրադառնալու տրամադրութիւն դեռ չունի՛ հայ մտաւորականութիւնը: Որպէս յապաղող եւ յապաղուածը սխալ ըմբռնող՝ նա իրար է խառնել ժողովուրդ, ազգ, ցեղ, դասակարգ, դեմոկրատիա, սոցիալիզմ, կամքի ազատութիւն, ինդիւիդուալիզմ, սուբիեկտիւիզմ, քաղաքականութիւն, ընկերային վարդապետութիւն, կրօնական զգացում, խղճի ազատութիւն եւլն. հասկացողութիւնները եւ սխալ էլ կիրարկում է: Առհասարակ, նա իրար է խառնում ձեւը եւ բովանդակութիւնը - դեռ այսօր էլ ոմանք սոցիալիզմը հակադրում են ցեղին, վերջինը՝ դեմոկրատիային: Պակասաւոր է ե՛ւ հայի ճշմարտութեան զգացումը, որի պատճառով ո՛չ միայն իմացական, այլեւ՝ բարո-

յական խնդիրներում քմահաճ է: Առանց ուտիլիտարիզմի մասին հասկացողութիւն ունենալու՝ հայի համար ճշմարիտ է հաշուին եկող խօսքը: Առհասարակ, նա սկզբունքները անձնական շահու համար օգտագործող է, չի՛ սիրում բարոյական վերահսկողութիւն եւ օրինապահութիւն - կարգապահութիւնը բացարձակ արժէք եւ նպատակ է հռչակում, երբ իշխանաւոր է. դա նրա աչքում անէծք եւ չարիք է դառնում, երբ ենթարկւում է: Իշխելիս՝ բռնաւոր, ենթարկուելիս՝ դեմոկրատ - այսպէ՛ս է հայը: Նա աշխարհը բարոյապէս արժէքաւորում է իր անձնական վիճակով, դիրքով:

Իր ամբողջ մոլութիւնները հայը պսակում է հոգեւոր անջատողականութեամբ, որով նա արդարացնում է ներքին իր պառակտումը, քաղաքական հատուածապաշտութիւնը: Իրականում աննպատակ՝ նա ստեղծել է մանր եւ կեղծ նպատակներ եւ դրանց շուրջը անթիւ միութիւններ, որոնցից իւրաքանչիւրը իր մեռելն է լալիս եւ էժան կերպով փառաւորւում: Ո՛ւր շատ միութիւններ կան - այնտեղ չկայ միութիւն, ուր շատ փառաւորեալներ կան - այնտեղ չկայ փառք: Պառակտուած եւ փառքի գծից դուրս ընկած ժողովուրդ՝ հայութեան հատուածապաշտ տարրերը բնազդական սարսափ ունեն ցեղի, տարօնականութեան հանդէպ, որոնք ձգտում են հոգեբանօրէն միատարր ազգութիւն եւ հանրապարտադիր ազգային բարոյականութիւն ստեղծել: Մանր անձնապաշտութիւնը հին սերնդի որոշ ներկայացուցիչների «վարակել է» անհերոսապաշտութեան ախտով: Այն, որ դեռ այսօր էլ հնարաւոր է դաւադրել եւ սեւացնել, վտանգի օրերին անուն եւ արժէք ստացած հայ մարդկանց - վատթարագոյն ինքնամատնութիւնն է հին սերնդի որոշ ներկայացուցիչների մանր անձնապաշտութեան, անհայրենասիրութեան: Դա ապացոյց է, որ հին սերունդը նորի դաստիարակութեան գործում, ընդհանրապէս, անընդունակ է օգտուել հայ հերոսականից եւ հերոսներից: Դա ապացոյց է, որ նրա գործածած բառերը սին են, անիմաստ, նրա պաշտամունքը անցեալի հանդէպ՝ կեղծ եւ յոյսը դէպի ապագան՝ մոլորանքի զէնք:

«Ռազմիկ», Սոֆիա, 1938-39թթ., թիւ 113-120

ՀԱՅՈՑ ՄԱՅԻՍ 28-Ը

Կը տօնենք Հայոց Մայիս 28-ը: Օտարութեան մէջ կրկին կը բանանք մեր ցեղի յիշատակներու գրքին ամենէն սրտաճմլիկ էջը:

Կ'անցնին ժամանակները եւ աշխարհի անցքերը՝ անոնց հետ: Ինչ որ յաւիտենարժէք է, սակայն, կը նուիրագործուի իր գոյաժամէն հեռանալով: Հերոսները աստիճանաբար կը մեծանան մարդկային երեւակայութեան մէջ: Այդպէս կ'արժէքաւորուին նաեւ պատմութեան մեծ դէպքերը: Յաւիտենարժէք դէպքերու մեծութիւնը ո՛չ թէ իրենց ծաւալի եւ արդիւնքի մէջ է, այլ՝ իրենց ողբերգական խորքի: Քաղաքական մեծ նուաճումներ չըրինք մայիս 28-ով, ո՛չ ալ երջանիկ հայրենիք ստեղծեցինք: Բայց ինչ որ կատարուեցաւ այդ օրերուն - որպէս էութեան շղթայազերծում եւ ոգիի արձանացման տագնապ - կը մնայ հայոց պատմութեան եզակիօրէն սրտաճմլիկ դրուագը: Սովորական կռիւ չէ՛ր այդ, ո՛չ ալ չափուող բանակներու ռազմական պատիւն ու համբաւը որոշող ճակատամարտ, այլ՝ գուպար երկու ցեղերու, որոնք դարերով միմեանց ոչնչացումը երազած են: Մէկը քանակ ունէր եւ աշխարհասասան զինակիցներ, միւսը՝ սակաւաթիւ էր եւ աշխարհէն լքուած՝ իր Աստուծոյ հետ:

Պատմութեան մէջ խորհուրդ եւ կեանքի մէջ գաղտնահզօր ոյժերու յայտնութիւն չտեսնողներու, աշխարհի անցքերու մասին միայն թուաբանօրէն դատողներու համար Ապրիլ 24-ի աղէտէն, ռուսական պետութեան կազմալուծումի հետեւանքով հայոց վիճակուած մինակութեան տագնապէն, էրզրումի եւ Կարսի անկումի պատճառած յուսալքումէն յետոյ՝ տրամաբանօրէն անբացատրելի կը մնայ Մայիս 28-ը: Բաղդատեցէ՛ք նաեւ ոյժերը եւ ամէն բան ձեզ պիտի թուայ խելագարութիւն, զառանցանք, առասպել: Մէկ կողմէ՝ թուրքական բանակը, որ ուղղակիօրէն կը ներկայացնէր 25 միլիոնոց Օսմանեան կայսրութեան, եւ, անուղղակիօրէն, բովանդակ աշխարհի իսլամներու եւ քրիստոնեայ զինակիցներու կամքը, միւս կողմէ՝ հազարիցս բարեկամներէն դաւադրուած ու լքուած, տարագիր եւ ճիւղակոտոր մէկ միլիոննոց հայութեան ոյժերը - ազգերն ու պետութիւնները մէկ ցեղի դէմ, երեք հարիւր միլիոն մարդոց թշնամանքը՝ մէկ միլիոնի դէմ:

Զրոյց ելաւ միայն, որ գերմանական հրամանատարութիւնը,

հայոց մէկ հոգեգիծը հաշուի առնելով թէ թուրքերը հայութիւնը ջնջելու ծրագրէն հեռու պահելու մտահոգութեամբ, դիտել տուած է - թեպէտեւ հայերը պետական կազմակերպութիւն եւ ռազմաճակատային մեծ գործողութիւններ վարելու կարելիութիւն չունին, բայց որպէս պարտիզանական կռուի վարպետներ՝ կրնան երկար ատեն զբաղեցնել օսմանեան բանակները:

Ո՛չ ոք է, սակայն, գտած ոգիի օրէնքները: Մայիս 28-ին մենք լայն ճակատներու վրայ բաղխեցանք թուրքերուն եւ ոգիի գերազանցութեամբ մոլեգնեցանք որպէս յաղթական յարձակողներ: Գոյութեան ցաւէն կը գալարէինք - մարդկօրէն խոր ողբերգութիւն ստեղծեցինք, մահապարտ էինք - մեր քաջութիւնը վտանգի ծանրութեան հետ կշռեցինք, ժողովուրդ էինք - ցեղին դիմեցինք, ռազմապատրաստ չէինք - «Նոր Աւարա՜յր» ոգեկոչեցինք, իրական պայմանները դժոխային էին - հրաշք գործեցինք:

Գոյութեան ցաւ, մինակութեան ողբերգութիւն եւ ցասում՝ ճակատագրի դէմ - ահա՛ արտաքին պայմաններու անդրադարձումը եւ ներհոգեւոր խռովքը վարող ա՛յն ուժերը, որոնք ցրեցին նախապաշարումներու եւ առեղծուածներու մշուշը, եւ մեր ներքին տեսո-ղութեան առջեւ բացին կեանքի բոլոր հորիզոնները: Այլեւս մինակ չէինք, մեզ հետ էր ոգու ցնցումով ոյժերը կրկնապատկած ցեղը, մեզ հետ էր վտանգի սլաքով մեր էութեան մէջ յանկարծօրէն յայտնուած պատմական իմաստութիւնը՝ բոլոր յաղթանակներու բանալին՝ մեռնելու կա՛մքն է:

Կրա՛կ վառէք եւ կարդացէ՛ք Մամիկոնեաններու կտակը:

Մենք միայն չվերյիշեցինք, այլեւ «կենդանեաւ մերով» լսեցինք անոնց կանչը: Ո՛վ այդ օրերուն անցած է էջմիածնէն՝ գիտէ, որ հոն ամէն բան կը յիշեցնէր Աւարայրի հսկումը եւ ամէն ուխտ կը կատարուէր այդ անունով: Ո՛վ տեսած է Մայիս 28-եան որեւէ բաղխում՝ գիտէ, որ հայ զօրքը աւելի ոգիի ձայնով կը կռուէր, քան լոկ ֆիզիքական ոյժով եւ ռազմարուեստով:

Մայիս 28-ը նախատեսուած դէպք չէր, այլ՝ «պատուհաս». ատոր համար ալ շարժումը եղաւ ո՛չ թէ գիտակցական ոգորում, այլ՝ տարերքի փոթորկում: Սովորական կռուի մէջ՝ մահու վտանգն աւելի՛ է սարսափելի, քան ինքը՝ մահը: Մայիս 28-ին հայ ոգին, ձուլուած վտանգին, իր խորքէն վանեց մահու եւ կեանքի առեղծուածը: Այստեղ (Մամիկոնեան ոգիի վերայայտնութեան մէջ) է հայոց նորագոյն պատմութեան մեծ յաղթանակի գաղտնիքը:

* * *

Դէպքը յիշատակ կը թողու, կրակը՝ մոխիր:

Առանց նախօրեակի չկա՛յ ստեղծագործութիւն, առանց սպառումի՝ մնացորդ, առանց թերահաւատութեան՝ հրաշք:

Մենք օրինակեցինք Մամիկոնեանները, որպէսզի «Նոր Աւարայր»-ի փառքով օծէինք մեր ժամանակները, բայց չսպառեցինք մեր ոգիի լոյսը, որպէսզի օր մը գաղութը անկումային գոհունակութեամբ ինքզինքը «մնացորդաց» անուանէր, հրաշքը չերկնեցինք, որպէսզի կեանքը նաեւ ուրացումի հանճարներ վիժէր: Ոգին ծայրահեղութիւններ ունի եւ ճակատագիրը՝ բեւեռներ: Մարդու ցաւն է միայն իր անձի համար, գործը՝ ուրիշին, փառքը՝ ամենեցուն, այլապէս՝ յանցանքը վատին է, պատիժը՝ Աստուծմէ եւ փորձանքը՝ ժողովուրդին: Մայիս 28-էն յետոյ կարելի չէր աւելի զարհուրելի պատիժ երեւակայել, քան օրուայ մեր դրութիւնն է: Անդունդ կայ միեւնոյն ժողովուրդի այն ու այս օրերու հոգեվիճակներուն միջեւ: Այն օր սակաւ էինք, բայց՝ ցեղի հետ եւ հզօրակամ, այսօր նուազ չե՛նք, բայց՝ ամբոխ ենք եւ մեր զինակիցն է տկարութի՛ւնը: Տկարութիւնը վտանգէն կը փախչի, բայց պատիժը Աստուծմէ է: Հասկանա՛նք. ցե՛ղն է միայն Աստուծոյ հետ հաշտ: Այդ մենք տեսանք Մայիս 28-ին, երբ մոխիրներու տակէն բորբոքեցաւ Մամիկոնեան կրակը: Այդ դեռ պիտի տեսնենք, երբ կը յաղթահարուին տկարութիւնը եւ հոգեւոր մոխրապաշտութիւնը, երբ Մայիս 28-ը չի՛ մնայ պատմական յուշ, այլ՝ կենդանի ուխտ՝ նոր գործի համար:

«Ռազմիկ», 1939թ., թիւ 121

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Անցաւ հայ յեղափոխութեան յիսնամեակը: Պատմութեան յանձնուեց մեծ ոգորումների եւ ձախող գործերի, տաժանալի պայքարի եւ չնչին արդիւնքի, հերոսական ոգու եւ պարտութեան ճակատագրի մի շրջան - բայց եւ այնպէս՝ դիւցազնական մի շրջան:

Այդ շարժի մէջ մեր ցեղն երեւան հանեց իր էութեան դրական գծերից մի քանիսը - ամէնից առաջ *նուիրումը,* որ եղաւ հայ յեղափոխութեան գլխաւոր զուգերեւոյթը: Հերոսակշիռ էր եւ *քաջութիւնը*՝ որ հայ յեղափոխական ընտրանուն պսակաւորի տեղ տուեց բոլոր ժամանակների եւ բոլոր պատմութիւնների անմահների շարքում:

Պատմաստեղծ գործօններ են նուիրումն ու քաջութիւնը, եւ ճշմարիտ ողբերգութիւնը ծագում է այնտեղ, ուր սրանք մնում են՝ աննպատակահաս: Ոգու թէ բարոյական կեանքի զարգացման տեսակէտով՝ զուր չի անցնում եւ ոչ մի մեծագործութիւն, բայց փաստ է, որ նպատակի տեսակէտով հայ յեղափոխութիւնն անցաւ որպէս զուր ճիգ: Որեւէ ողբերգութիւն աւելի՛ խոր է դառնում, երբ հակասութիւն կայ ճիգի եւ արդիւնքի, ոգու եւ նպատակի միջեւ:

Ժամանակակից պատմա-իմացութիւնն ասում է, թէ նպատակահաս է ոգու ընդհանրացման յանգած ժողովուրդը միայն: Այս չափանիշով, մենք մեր դժբախտութեան էական մի պատճառը տեսնում ենք ա՛յն բանում, որ մեր նախորդները չգործեցին որպէս *ցեղօրէն ամբողջազգաց հայեր, այլ՝ որպէս հայ կուսակցութիւններ, կուսակցական անհատներ, խմբակցութիւններ:*

Նախայեղափոխական շրջանում - ո՛չ միայն Աբովեանի, Նալբանդեանի, Նազարեանի, այլեւ՝ Վարժապետեանի, Խրիմեանի, Ալիշանի, Ռաֆֆու, Արծրունու շրջանում - ստեղծուեց *վիպապաշտական մի հայրենասիրութիւն* եւ դրան համապատասխանող *ամբողջապաշտական մի ազգապետութիւն:*

Ոգու այդ շարժը ծնունդ էր հայ միջավայրի, եւ դրա տրամաբանական արդիւնքը պէտք է լինէր *հայ ազգային կազմակերպութիւնը:* Այդպէս չեղաւ, դժբախտաբար, հայ յեղափոխութիւնը: Դա կրեց կուսակցական կնիք, ուստի եւ՝ պատճառ դարձաւ հայ ոգու եւ ոյժի ցրումին:

Ինչո՞ւ այդպէս - այդպէս՝ եւրոպական այն օրերի դասակարգային

ոգու եւ վարդապետութիւնների անդրադարձումին պատճառով:

Ահա՛, բախտորոշ այդ յիսնամեակի հայ հոսանքների եւ կազմակերպութիւնների պատմութիւնը - մինչեւ 1890 թուականը տիրական է «արմենական» մտայնութիւնը, մինչեւ 96 թուականը՝ հնչակեանը, մինչեւ 1921 թուականը՝ դաշնակցականը, մինչեւ այս օրերը՝ դաշնակցական եւ մեծամասնականը: Չենք թւում ռամկավարականը, որ չդարձաւ տիրող մտայնութիւն եւ շարունակում է մնալ որպէս երկրորդական երեւոյթ:

Այդ հոսանքներից խորքով թէ նպատակով զուտ հայկական է *արմենականը,* որ երեւան է գալիս ազգային վերազարթնումի եւ միութեան նշանաբաններով, չի՛ ձգտում կուսակցութիւն դառնալ, այլ՝ համահայկական շարժում խմորել: Բայց դեռ արդիւնքի չհասած՝ արմենականութիւնն իր դէմ տեսնում է հատուածապաշտ, կուսակցական ոգու ընդվզումը - հնչակեանութիւնը (1887թ.), որ դեռ արտաքին ճակատի համար գործունէութեան ծրագիր չմշակած՝ ստեղծում է ներքին ճակատ, հանդիսանալով առաջին խախտողը հայ ազգի հոգեւոր թէ քաղաքական միութեան, ուստի եւ՝ առաջին հայ կուսակցութիւնը:

Արմենական-հնչակեան պայքարը վերացնելու եւ հայկական ոյժերը մի գաղափարի, գործի եւ նպատակի շուրջ համախմբելու առաջադրութեամբ ասպարէզ է գալիս *Հայ յեղափոխականների դաշնակցութիւնը,* որ սակայն, հնչակեանների ընդդիմութեան պատճառով, հարկադրւում է գործել որպէս կողմ՝ կողմի դէմ եւ դրանով էլ, աստիճանաբար կուսակցականանում է - Հ. Յ. Դաշնակցութիւն:

Որպէս հետեւանք դասակարգային ոգու եւ մատերիալիստական աշխարհայեցողութեան՝ հենց հնչակեանութեան մէջ ծայր տուեց եւ այլ մի չարիք - քաղաքացիական կռուի (թէկուզ նախնական տիպի) մոլուցքը, որ արտայայտուեց ընկերասպանութեան ձեւի տակ: Այս կուսակցութեան ծոցում՝ զարգացած իրարասպանութիւնը, ի վերջոյ, քանդեց միջկուսակցական արիւնոտ յարաբերութիւնների - «հնչակ-դաշնակ» կռիւը:

Հայ յեղափոխական ոգու անկման ներքին պատճառներից են՝ ո՛չ միայն ապստամբական մի շարք ձեռնարկների ձախողանքը, որ անդրադարձաւ որպէս պարտուողականութիւն սնուցող գործոն, ո՛չ միայն ռուսական 1905-ի յեղափոխութիւնը եւ օսմանեան 1908-ի սահմանադրութիւնը, որոնց պատճառով հայ քաղաքական մտածումը դուրս ելաւ ազգային հունից, այլեւ՝ կուսակցական ոգու վատասերումը, որ հենց սկզբից պառակտեց հայութեան կենդանի ոյժերը

եւ 1921թ. յանգեց հայակործան քաղաքացիական կռուի - դաշնակցական-բոլշեւիկ կռուի:

Այսպէս՝ մեր յիսնամեակն արձանագրեց արմենական-հնչակեան պայքար, հնչակ-հնչակեան կռիւ, «հնչակ-դաշնակ» կռիւ, դաշնակցական-մեծամասնական կռիւ: Այս բոլորի մէջ մենք տեսնում ենք մատերիալիզմի, դասակարգային-կուսակցական ոգու ընդվզումը՝ ազգային խորքի դէմ:

Ճի՛շտ է՝ Դաշնակցութիւնը ամբողջ քառորդ դար (1896-1921) իր ձեռքը կենտրոնացրեց հայ մարտական գործի ղեկավարութիւնը եւ մեր ազգի ապրած մեծագոյն աղէտների եւ խոյանքների շրջան (1914-1918) հանդիսացաւ հայ քաղաքական մտածումն ու կամքը միատարրող ոյժը, բայց հայ միւս կուսակցութիւնները չունեցան ազգային բաւարար գիտակցութիւն՝ իրենց մասնաւորը ընդհանրականին ստորադասելու, ուստի՝ չստեղծուեց ազգային բացարձակ հեղինակութիւն, հաւաքական լիամբողջ կամք, առանց որոնց չկա՛յ, չի՛ կարող լինել ճշմարիտ նպատականուաճութիւն: Ուր պակաս է ազգային-ամբողջականի զգացումը՝ այնտեղ անխուսափելի է դառնում ներքին տկարութեան ապաւինումը՝ արտաքին միջամտութեան: Եւ ահա՛ բոլշեւիզմը, որ հայ ոգու պառակտումը հասցրեց ծայրագոյն աստիճանի: Դա վիճելի դարձրեց Դաշնակցութեան հեղինակութիւնը, բայց ինքը, որպէս օտարամուտ վարդապետութիւն թէ կազմակերպութիւն, չկարողացաւ դառնալ ազգային հեղինակութիւն:

* * *

Յիսնամեայ մեր ոգորումները մեզ տուին սրտաճմլիկ մի հերոսական եւ քաղաքական անթիւ սխալներ: Յարգա՜նք մեռածներին եւ զգաստութի՛ւն ողջերին:

Մեծութիւններ ծնեց մեր ցեղը, բայց ազգերի համար աւելի ճակատագրական է իրանց հոգեւոր մանրուքի յաղթահարումը: Վատթարագոյն մանրուքը մեզ համար, եղաւ կուսակցականութիւնը - այն չարիքը, որ հոգեւոր կենտրոնացման հակամէտ մեր ժողովուրդը մղեց աղանդական միակողմանիութեան, որ անկարելի դարձրեց ներքին վճռականութիւնը եւ ազատագրական պայքարը՝ համահայկական ճակատով եւ ոյժերով, որ ի շահ արտաքին թշնամու՝ զոհեր խլեց, յաճա՛խ անմեղներ, երբեմն էլ՝ արժէքներ, որ այսօր դարձել է հին նախապաշարում, քարացնելով դաւանանքը եւ սպանելով գործի հաւատը:

Բայց եւ այնպէս, մեր առջեւն է հարցը - հայ ճակատագիը պէ՛տք է փոխուի: Փոխել ճակատագիրը, ասել է՝ նա՛խ փոխել ոգին, հասարակական կազմակերպութեան ձեւը: Կուսակցական ոգի եւ կազմակերպութիւն - նպատակի տեսակէտով այդ ոչինչ տուեց մեզ: Ահա՛ ամբողջ մի յիսնամեակի փորձառութիւնը, նաե՛ւ՝ մեր ապրած պատմական ժամանակի հրամայականը - չգործե՛նք որպէս կուսակցութիւններ, այլ՝ որպէս հայեր, որովհետեւ *նպատակը ցեղին է, եւ ճակատագիրը՝ Հային:*

«Ռազմիկ», 1941թ., թիւ 21

«...Ես քո զավակն եմ եւ պարտավոր եմ մնալ հավատարիմ քո ներշնչած ոգուն»*

Իմ շատ սիրելի մայր

Հոգիս, վատություն կլինի իմ կողմից, եթե փորձեմ քեզ վշտացնել, նաեւ՝ եթե փորձեմ ինձ պաշտպանել: Թերություններ ունեմ ես եւ՝ շատ, եւ դրանցից մեկն էլ՝ թերեւս քո հանդեպ իմ պարտականություն-ների մեջ թերանալն է:

Կարծում ես, որ ինքս այդ չե՞մ զգում. զգում եմ եւ շատ խոր կերպով, եւ սակայն մի՞թե ես մեղավոր եմ: Ես էլ, դու էլ եւ մեզ հետ շատ ու շատ մարդիկ՝ զոհերն ենք նույն ճակատագրի. այնքան դեպքեր տեղի ունեցան մեր աշխարհում՝ մի ամբողջ ժողովուրդ կորավ. այդ բոլորից հետո մի՞թե աններելի քայլ կլիներ, եթե քո մեկ տղան խոտորեր քո ցանկացած ուղուց: Չլինի՞ մտածում ես, թե ես մի քարի կտոր եմ, մի անսիրտ, անհոգի մարդակերպ կենդանի, որ չի ուզում իր հարազատներին օգտակար լինել, բաժանել նրանց հետ կյանքի քաղցր ու դառն վայրկյանները: Կարծում ես, որ սիրով ե՞մ մնում Եվրոպայում, որ չեմ կարոտում եւ քեզ, եւ Տաճատին, եւ Արաքսուն *(Ասատրյանի եղբայրը եւ քույրը - խմբ.)* եւ շատ ու շատ սիրելի մարդոց: Դու, Տաճատը եւ Արաքսը մեղադրում եք ինձ, որ ես շատ եմ կառչել անցյալի հիշատակներին, ճիշտ եք ասում: Բայց ինչո՞ւ չեք մտածում, որ այդ անցյալի ամենասիրելի հիշատակները՝ հենց դուք եք: Լա՞վ կլիներ, եթե մոռանայի այդ հիշատակները՝ այսինքն Ձեզ, իհարկե՝ ոչ: Հավատա մայրս, որ ես լավ եմ անում, որ անցյալի ամեն դեմք ու հիշատակ չեմ մոռանում: Եթե կարողանայի մոռանալ նրանց՝ պիտի մոռանայի նաեւ քեզ: Բայց դու չես ուզում, որ ես մոռանամ քեզ, իրավունք ունես, դու պաշտպանում ես քո մայրական շահերը եւ արդար ես: Բայց դու մոռանում ես մի բան, որ ես էլ իրավունք ունեմ չմոռանալ այն ամենը, ինչ ինձ եւ քեզ համար ընդհանրական մայր է եղել:

Երբ ես քեզ պատկերում եմ՝ պատկերում եմ միշտ մեր գյուղում, իսկ մեր գյուղը մի աղքատիկ, բայց սիրելի ամբողջություն էր: Միայն այդ ամբողջության մեջ դու կատարյալ էիր, հարազատ ու բնական: Մի՞թե դու վատ չես զգում քեզ, որ Մանիշակին, Էթարին, Նազոյին ահա 10-12 տարի է, ինչ չես տեսնում եւ չպիտի տեսնես մինչեւ

հավիտյան: Դրանցից յուրաքանչյուրը, որ մեռել է, իր հետ մեռցրել է մի բան մեր գյուղից, եւ այսօր այլեւս չկա այն սրբազան ամբողջությունը. մենք նրա փշրանքները, մնացորդներն ենք, եւ մեր գոյությունը կատարյալ չէ: Մենք դուրս եկանք այդ գյուղից՝ նյութապես գրեթե ոչինչ չկորցրինք (ի՞նչ ունեինք, որ կորցնեինք), օտարության մեջ ան-համեմատորեն քիչ անձնական վշտեր, սիրելիների կորուստներ ունեցանք, քան՝ մեր բոլոր գյուղացիները, բայց մի՞թե չես զգում, որ աշխարհի ամբողջ հարստությունն էլ եթե հիմա քեզ տան՝ չի ծագի էն հին արեւը քո հոգում, ուրախության են անուշ արեւը, որ մի ժամանակ ժպտում էր մեր գյուղում՝ քո, իմ բոլորիս գլխին: Եվ գիտես ինչո՞ւ, որովհետեւ այդ գյուղում մենք թողինք մեր առաքինությունները, մեր էության լավագույն տարրերը, ուրախության եւ ազնիվ թախիծի զգացումը, կարճ՝ մեր կյանքի ամբողջ խորհուրդը:

Որքա՞ն ես փոխվել, մի՞թե դու իմ այն մայրն ես, որ ուշ երեկոներին մեղմաձայն եւ հուզիչ մեղմությամբ երգում էիր «տալվորեցիք արեք երթանք». նվիրական զգացումների մի կենդանի, հսկայական հնոց էր քո հոգին այդ հին, այդ անուշ օրերին. դու ջերմացնում էիր իմ սիրտը եւ գիտե՞ս այդ օրերին ես ինչպես էի սիրում քեզ: Այո, քո այդ սրտառուչ երգերով դու հանդիսանում էիր նաեւ իմ հոգեւոր կյանքի, իմ գաղափարների մայրը: Հասկանո՞ւմ ես ինձ, մայրս: Մի՞թե դու չես սիրում քո հեռավոր անցյալի նվիրական հուշերը: Ես որքան էի սիրում իմ աղոթող մորը, չնայած որ հաճախ ծիծաղում էի եւ խանգարում քո աղոթքը, գիտեմ՝ հիմա նա այլեւս չի աղոթի այնպես ջերմեռանդորեն, գուցե նաեւ՝ մոռացել է «ընկալ քաղցրությամբ»-ը եւ գուցե չի ցավում, որ մոռացել է, բայց ես կուզենայի նրա մեջ տեսնել հին շունչը, հին հոգեբանությունը, հին աղոթքը: Մայրս, չէ՞ որ այն հինը լավն էր, դու էլ ավելի լավն էիր այն օրերին, դու խորհրդապաշտ էիր, ապրում էիր քո ցեղակիցների տառապանքով, պատմում էիր ինձ Մշո դաշտի զանազան դեպքերից, մի հեղափոխական քարոզիչ էիր ինձ համար. ես քո զավակն եմ եւ պարտավոր եմ մնալ հավատարիմ քո ներշնչած ոգուն: Մի՞թե ուրախ չես, որ կարողացել եմ մնալ իբրեւ ժառանգորդ քո լավ հիշատակների:

Գիտեմ, քեզ տանջում է նաեւ այն հանգամանքը, որ դու կյանքում ինձնից «խեր չտեսար»: Չեմ մեղադրում, սակայն մի՞թե ես մեղավոր եմ: Իհարկե ոչ, այդ դու էլ գիտես: Բայց դու ուզում ես իմանալ, թե ինչպե՞ս եւ ինչո՞ւ ընկա Եվրոպա: Այստեղ էլ քո հին օրերի ոգին է մեղավոր եւ ոչ ինքս: Կարո՞ղ ես այժմ ուրանալ, որ հին օրերին դու ուզում էիր ինձնից ունենալ մի «ուսումնական» տղա, մի «մեծ» մարդ,

մի լավ «ազգասեր» գործիչ: Ես հավատարիմ մնացի քո հին մտայնության՝ մի՞թե ես մեղավոր էի: Այս իմ խոսքերը, սակայն, չեն նշանակում, թե ես անտարբեր պետք է մնամ քո տառապանքի հանդեպ, որ ես չպետք է օգտակար դառնամ քեզ: Քավ լիցի: Ես ուզում եմ, որ դու քեզ մի քիչ ինքնաքննադատության ենթարկես, որպեսզի համոզվես, որ իմ բռնած ուղին քո մի ժամանակվա ցանկացածն է: Եթե այդպես համոզվես, չես դառնա այլեւս աճապարող, կարող ես սպասել, համբերել…

Հայկ

Ռոնսբերգ, 10 օգոստ. 1926թ.

---

* *Հայկ Ասատրյանի՝ տարագրությունից մորը գրած այս նամակը առաջին հայացքից թեեւ զուտ անձնական բնույթի է, սակայն իր մեջ կրում է մի երեւույթի ողբերգականություն, որի դառնությունը հաճախ են ճաշակել Հայրենիքին անմնացորդ նվիրաբերված եւ անանձնական կյանք նախընտրած հայորդիները:*

Նամակը սիրահոժար մեզ է տրամադրել մեծանուն իմաստասերի եղբոր աղջիկը՝ երեւանաբնակ Կլարա Ասատրյանը: Այն տպագրվում է որոշ կրճատումներով: - Խմբ.

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Ծագումով հայ որոշ անձինք պատճառ դարձան գեներալ Նժդեհի եւ մի քանի հայ երիտասարդ հայրենասերների ձերբակալվելուն: Մնացածը թյուրիմացության հետեւանք է... Այդ հայրենասերները 1935 թվականից ի վեր որեւէ քաղաքական կուսակցության չեն պատկանում, որեւէ քաղաքական ծրագիր չունեն եւ տքնել են միայն հանուն իրենց ժողովրդի բարոյական միասնության. մի ժողովուրդ, որ տարագրության մեջ մատնված է ահավոր ազգային ողբերգության, ուծացման, այլասերման եւ կուսակցական երկպառակությունների, որոնք սպառնում են խորտակել հայ ազգային կյանքը: Նրանց քարոզչությունը նպատակ ուներ փրկել հայ ժողովրդի բարոյական ուժն ու արժեքները: Ճիշտ նմանապես, այդ հայրենասերները երբեք չեն գործել Խորհրդային Միության դեմ եւ այնքան էին դժգոհ նրանից, որքան եւ մյուս եվրոպական ուժերից, որոնք նախորդ աշխարհամարտում զոհեցին Հայաստանն ու հայ ժողովրդին: Ընդհակառակը, նրանք ցանկանում էին եւ հավատում, որ Խորհրդային Միությունը կընդլայնի Խորհրդային Հայաստանը, վերստին կհամախմբի հայ բնակչությանը մեկ միաձույլ հայրենիքում եւ կշտկի հին Ռուսաստանի ու Եվրոպայի սխալը:

Նրանց քարոզչության ամբողջ իմաստը Խորհրդային Հայաստանի ամրապնդումն ու պաշտպանությունն էր:

---

* Հայկ Ասատրյանն այս պարզաբանումը գրել է 1944 թվականին, Բուլղարիայում համայնավար իշխանության հաստատումից անմիջապես հետո, բուլղարահայ «Ռազմիկ» թերթի համարներից քաղված մեջբերումներով՝ նպատակ ունենալով այն ուղարկել Բուլղարիայի եւ Խորհրդային Միության տարբեր ատյաններ, պաշտոնատար անձանց, ընդ որում նաեւ Անաստաս Միկոյանին՝ ապացուցելու համար, որ ոչ թերթը, ոչ էլ նրա խմբագրակազմը նացիստամետ չեն:

Տեքստն առաջին անգամ հրապարակվել է 1993 թվականին, Սոֆիայում, Վիդկա Նիկոլովայի կազմած ***«Ոգու բանաստեղծը եւ սրի ասպետը. Տեոդոր Տրայանով եւ գեներալ Նժդեհ»*** ժողովածուում, որտեղից էլ կատարված է հայերեն թարգմանությունը: – *Խմբ.*

Երբ բռնկվեց ներկայիս պատերազմը, Արեւմուտքի մութ աղբյուրներից շատ հրահրիչ լուրեր տարածվեցին ընդդեմ Խորհրդային Հայաստանի եւ առհասարակ ընդդեմ հայ ժողովրդի: Միաժամանակ, օրեցօր ուժգնացավ հակահայկական քարոզչությունը գերմանալեզու գրականության մեջ: Գերմանացի գիտնականները հայերին ընկալում էին իբրեւ առաջավորասիական ցեղ՝ հրեաների ցեղակիցը, եւ բոլոր հայերը գիտեին, որ իրենց էլ սպասում է հրեաների ճակատագիրը: Մյուս կողմից, խորհրդա-գերմանական պատերազմի ընթացքում մի քանի տասնյակ հազար հայ գերիներ ընկան գերմանացիների ձեռքը եւ սպասում էին մահվան կամ էլ Խորհրդային Միության դեմ լեգեոնների մեջ ընդգրկվելուն: Ահավասիկ, այս երկու վտանգներից խուսափելու համար հայ հայրենասերները դիմեցին հետեւյալ քայլերին.

1. Մի քանի գրքեր հրապարակեցին՝ ցույց տալու համար, որ հայերը առաջավորասիական ցեղ չեն, այլ արիացիներ:

2. Նրանցից ոմանք մեկնեցին Գերմանիա՝ այդ ուղղությամբ աշխատելու, ընդդեմ հայ ժողովրդի համար վտանգավոր այն միջոցների, որ մտադիր էր ձեռնարկել գերմանական Rassen politische Amt-ը[1]:

3. Կազմակերպեցին խորհրդային եւ ֆրանսիական բանակների հայ ռազմագերիներին օգնելու գործը, որպեսզի տառապանքներից փրկեն արդեն իսկ փոքրաթիվ հայ ժողովրդի այդ երիտասարդ ռազմագերիների կյանքը:

Գերմանիա ուղարկվածներն այս խնդրի իրագործմանը ծառայելու հնարավորություն չունեին, որովհետեւ գերմանացիները թույլ չէին տալիս օգնությունը լայնորեն կազմակերպել եւ նախատեսում էին նրանց լեգեոնների կազմի մեջ մտցնել:

Այնուհետեւ գերմանացիներն այդ երիտասարդներից պահանջեցին գործի անցնել հայկական լեգեոններում: Բայց նրանք հրաժարվեցին՝ հայտարարելով, որ կկռվեն միայն Թուրքիայի դեմ: Նրանք ընդդիմացան եւ, ի վերջո, վերադարձան իրենց բնակավայրերը՝ առանց հակախորհրդային որեւէ ձեռնարկման մասնակիցը դառնալու: Ընդհակառակը, թե՛ Նժդեհը եւ թե՛ նրա հետ մեկնած մարդիկ Գերմանիայի հայկական շրջաններին բացատրեցին իրենց արարքի իմաստը. հայկական կողմից դավաճանություն կլիներ խառնվել գերմանա-խորհրդային առճակատմանը եւ պատճառ դառնալ Խորհրդային Հայաստանի նոր դժբախտությունների:

Այդ հայրենասերները փրկեցին Եվրոպայի եւ Բալկանների հայկական գաղութները գերմանական հալածանքից: Հայ համայնավար-

ների դեմ նրանք երբեք սադրանք թույլ չտվեցին, դատապարտեցին հայ կուսակցական գործիչների կողմից ձեռնարկված ամեն մի այդպիսի փորձ, եւ իրենց ամբողջ ծառայության դիմաց այդ մարդիկ այսօր սադրանքի զոհ են: Նրանց գործելակերպը հասկանալու համար բերում ենք որոշ հատվածներ իրենց պաշտոնաթերթ «Ռազմիկի» առաջնորդողներից:

Թիվ 3, 10 հունվարի, 1941թ.

Ծանր էր մեր վիճակը երեկ: Թեթեւ չէ եւ այսօր: Մենք ելք չենք գտել Եվրոպայի քաղաքական ուժերի հակասություններից: Դրա հետ մեկտեղ, այսօր չենք ըմբռնում ռուս-թուրքական հարաբերությունների հանելուկը: Ռուսաստանի նոր համակարգում մեր կշիռը փոքր է: Հայկական հարցը շարունակում է մնալ օրենքից դուրս: Ոչ մեկի սիրտը չի ցավում, որ հայը հող չունի: Այդ ամենի մեջ մեղքի ամենամեծ բաժինը մերն է: Բոլշեւիկ լինի, թե նացիոնալիստ, հայը շարունակում է ծառայել սնահավատությանը...

Մեր պահանջները Ռուսաստանից հայտնի են. Խորհրդային Հայաստանի սահմանների ընդլայնումն ու մեր ժողովրդի համախմբումն այնտեղ:

Մեր հողը տրված է թուրքերին, եւ մեր ժողովուրդը տարագրության մեջ դատապարտված է քայքայման: Չկա աշխարհում մի հայ, որ հրաժարվի Թուրքահայաստանից, չկա մի հայ, որ չտենչա ապրել եւ մեռնել իր Արարատի հովանու տակ: Չկա մի հայ, որ սրտից հանի իր պապերի սրբազան Տարոնը: Եթե ռուսները դեռեւս չեն հասկացել այդ, ուրեմն անցել են հայ ժողովրդի կողքով՝ առանց նրա մարդկային էության խորքը թափանցելու: Իսկ եթե հասկացել են, ժամանակն է արդեն, որ ուղղեն իրենց հին սխալը:

Թիվ 4, 17 հունվար, 1941թ.

Բոլշեւիկները ժառանգեցին ռուսական հին կայսրությունը: Դրա հետ մեկտեղ, նրանք ժառանգեցին նաեւ այն պատմական հարցերը, որ դարեր շարունակ դրված էին ռուս ժողովրդի առջեւ: Այդ հարցերից մեկը Հայկական հարցն է:

Թե ինչպես էր վերաբերվում հին Ռուսաստանը այդ հարցին, բոլշեւիկներն իրենք մեզնից լավ գիտեն: Դա մեր մարդկային ուժերի, քրիստոնեական զգացմունքի, մեր հույսերի օգտագործումն էր եւ մեր ժողովրդի աստիճանական ոչնչացումը թուրքերի ձեռքով:

Հայի մտապատկերներում միայն «Դեր-Զոր» բառը հիշեցնում է 600 000 հայ կանանց եւ մանուկների կործանումը...

Եկավ բոլշեւիզմը, որի առաջին գործը «տունդարձ» նշանաբանն էր, իսկ դա նշանակում էր սարսափներ ապրած, իր թվաքանակի կեսը կորցրած հայերին մենակ թողնել թուրքերի առաջ: Մոսկվան չէր լսում մեր աղաղակը եւ ոչ էլ գնահատում էր մեր պահվածքը: Մենք մենակ էինք մնացել Գերմանիայի դաշնակցի՝ թուրքերի առաջ: Եվ միակն էինք կովկասյան ժողովուրդներից, որ ողբում էր Ռուսաստանի թուլությունը: Թաթարները սոսկալի նախճիր սարքեցին Շամխորում՝ նահանջող ռուսական զորքի գլխին[2]: Տառապյալները դարձյալ հայերն էին:

Եկան թուրքերը: Նրանց ներխուժումը մեզնից մոտ կես միլիոն զոհ խլեց: Այդ օրերին եւ այդ վիճակում Անդրանիկը Նախիջեւանից ռադիոգիր է հղել Մոսկվա. «Ես կռվում եմ միացյալ եւ անբաժանելի Ռուսաստանի հողում»...

Կնքվեց թուրք-բոլշեւիկյան համաձայնագիր, որն ուղղված էր ընդդեմ Անտանտի: Բայց դաշնակիցների դեմ ոչ բոլշեւիկները, ոչ էլ թուրքերը չկրակեցին: Զոհ դարձան հայերն ու հույները: Էնվերը կարողացավ խաբել Մոսկվային, թե իսլամը մեծ քաղաքական ուժ է, եւ դրա բանալին գտնվում է թուրքերի ձեռքում: Քաղաքական զորեղ ուժերից միայն Անգլիան էր հասկանում իսլամի գաղտնիքը, միայն նա գիտեր, որ Թուրքիան իսլամի տիրակալը չէ, այլ քաղաքական մակաբույծը: Ինչեւէ, սխալը գործվեց: Էնվերի իսլամական բանակն իր զենքն ուղղեց բոլշեւիկների դեմ... Իսկ մենք՝ հայերս, կորցրինք ամեն ինչ, մեր հողերը թողեցինք թուրքերին եւ կրելով մեր 2 000 000 զոհերի տառապանքը՝ սփռվեցինք օտարության մեջ:

Մոսկվան գուցե եւ անաստված է, իսկ մենք՝ անուժ... Բայց արյունով գծված մեր սահմանները պետք է վերականգնվեն:

Թիվ 5, 24 հունվարի, 1941թ.

Բոլշեւիկները ցանկացան լոբանովյան ոգին ոչնչացնել Ռուսաստանում, բայց արդյունքն այն եղավ, որ «Հայաստանն առանց հայերի» մնաց թուրքերին: Հին թե բոլշեւիկյան Ռուսաստանին հայությունը բազմաթիվ եւ կարեւոր քաղաքական գործիչներ է տվել: Բայց այն, ինչ հայ զանգվածները տալիս են Ռուսաստանին, մարդկության պատմության մեջ կմնա որպես անօրինակ անձնազոհություն: Մինչդեռ, դրա դիմաց Ռուսաստանն անտարբեր է մնում հայի ճակատագրի հանդեպ:

Սակայն վրա է հասել ժամանակը, որպեսզի այդ բոլոր սխալներն ուղղվեն:

Այն օրվանից, երբ թուրքերը ցույց տվեցին իրենց ախորժակը Կովկասի նկատմամբ, մենք ցանկացել ենք Ռուսաստանի հայկական քաղաքականությունը փոխված տեսնել: Ռուսաստանում դեռեւս չի գոյացել այն ըմբռնումը, որ մեր հակաբոլշեւիզմը հայ ժողովրդի աննախադեպ մարդկային ողբերգության հետեւանքն է... Թուրքերը մարդկային թվաքանակ չունեն Թուրքահայաստանում, բայց տեր են դարձել Կարսի մարզին եւ Արարատյան դաշտավայրի մի մասին...

Ռուսաստանը դեռեւս Հայկական հարցի ճիշտ ըմբռնումը չունի: Եվ չի ուզում հասկանալ, որ մեր պատմության սլաքն ուղղված է դեպի հարավ, եւ Հայաստանը, ընդարձակվելով դեպի Վան, Մուշ եւ Էրզրում, փրկում է նրա տիրապետությունը Կովկասում:

Թիվ 6, 31 հունվարի, 1941թ.

Ո՞րն է պատմական այն ցավալի փաստի անբանական պատճառը, որ Ռուսաստանը՝ հակառակ 150-ամյա արյունոտ ջանքերին, չի կարողացել տիրանալ Հայկական բարձրավանդակին՝ Առաջավոր Ասիայի ռազմավարական բանալուն:

Անգլիայի դիմադրությո՞ւնը: Հակասությունն՞երը եվրոպական ուժերի շահերի միջեւ: Օսմանյան տերության, իսլամի ո՞ւժը: Պատճառը սրանցից ոչ մեկն էլ չէ... Ռուսաստանը հասկանում է մեր լեռների ռազմավարական նշանակությունը եւ հայկական գործոնի քաղաքական կշիռը, բայց սառնասրտորեն է վերաբերվում մեր երկրի բնության գաղտնիքներին, ինչպես եւ մեր ժողովրդի ճակատագրին: Ժխտելով Հայաստանի բնաաշխարհագրական ամբողջականությունը եւ ցանկանալով մեր հողը աշխարհագրական միաձուլման ենթարկել «Անդրկովկաս» հասկացության տակ՝ Ռուսաստանը չի կարողանում տեսնել հայկական գործոնի դրական կողմը եւ քաղաքական հմտությամբ օգտվել դրանից: Հին Ռուսաստանը թուրքերի դեմ ուղղված հայ ազգային-ազատագրական ողբերգական շարժման մեջ տեսնում էր «հեղափոխական վտանգ», իսկ բոլշեւիկյան Ռուսաստանի համար դա դարձել է «հակահեղափոխական վտանգ»...

Ճակատագրի օրենքն է. նա, ով մեղանչում է որեւէ երկրի բնության գաղտնիքների դեմ, չի կարող իմաստավորված օգտագործել այդ երկրի աշխարհագրական դիրքը... Նա, ով վեհ խղճի մտոք չի ապրում այն տառապյալների ցավը, որ փրկություն են իրենից ակնկալում, նրա քաղաքական կամքը զրկվում է բարոյական շարժունությունից: Այդ դեպքում զոհերը բնորոշվում են Դեր-Զորով, իսկ ազատարարը՝ ուրացմամբ:

Հայաստանի եւ հայերի առնչությամբ Ռուսաստանի առջեւ դրված են հետեւյալ հարցերը.

1. Հայաստանը թուրքերի Արեւելյան Անատոլիան չէ եւ ոչ էլ ռուսների հարավային Անդրկովկասը, այլ Հայկական բարձրավանդակը, որ մկրտված է հայ ժողովրդի անվամբ:

2. Հայկական բարձրավանդակը արիացի հայերի հայրենիքն է եւ ոչ թե Անատոլուի մոնղոլ թուրքերինը:

3. Ռուսաստանին եւ մանավանդ Կովկասում նրա տիրապետությանը վտանգ չի սպառնում հայերի կողմից, որոնց ազգային իդեալը Արաքսի ափից ուղղված է դեպի հայկական Տավրոսը: Վտանգն սպառնում է մոնղոլական ժողովուրդների կողմից, որոնց պանթուրքիստական երազանքները ձգվում են մինչեւ Բաքու, Դաղստան եւ Կասպից շրջան:

4. Նա, ով քաղաքական ազդեցություն չունի Հայկական բարձրավանդակի վրա, կարող է դարերով երազել, բայց չտեսնել Դարդանելը: Մեր բարձրավանդակը, հիրավի, Դարդանելի ռազմավարական թիկունքն է, որ անատոլիական մի ժողովրդի տիրապետության տակ է: Այդ ժողովուրդը, որն Անդրկովկասում եւ հյուսիսարեւմտյան Իրանում ցեղակիցներ ունի, չի կարող իր տիրապետությունն ավարտուն համարել Կովկասում:

5. Նոր Ռուսաստանն իր ժողովուրդներին հող եւ ինքնորոշում է խոստանում: Երկու միլիոն հայ այսօր անհող են ու տարագիր...

Իսկ Հայաստանը մնում է հայ ժողովրդի դահիճների կրունկի տակ:

Մենք ուզում ենք պատմական փաստերը փոխված տեսնել: Ուզում ենք տեսնել պատմական մեղքերից մաքրված մի մեծ ժողովուրդ:

Թիվ 7, 7 փետրվարի 1941թ.

Ավելի քան 2000 տարի է, ինչ հայը կանգնած է «Եվրոպա» առեղծվածի առաջ... Բարիք եւ բարյացակամություն նա չի տեսել Եվրոպայից, այլ միայն երախտամոռություն... Մեր փրկությունը չի գա ոչ Եվրոպայի ցեղակիցներից, ոչ նրա քրիստոնեությունից, ոչ իմպերիալիզմից եւ ոչ էլ նրա հասարակական ուսմունքներից ու շարժումներից: Հակառակ իր քաղաքական ուժին եւ քաղաքակրթիչ եռանդին, նա չի կարող մարդկայնորեն փրկել եւ ինքն իրեն...

Եվրոպական ոգու մասնատման առաջին զոհը դարձավ մեր ժողովուրդը, որը հուսահատ պայքար է մղում Արեւելքի դեմ: Այդ դարավոր պայքարում, օգնության փոխարեն, Եվրոպան մեզ դավաճանորեն հարվածներ է հասցնում...

Չնայած դրան, մեր ժողովուրդը մնացել եւ շարունակում է մնալ Եվրոպային նվիրված...

Ներկայիս պատերազմը հայն ընկալում է որպես խոր ողբերգություն...

Նախորդ պատերազմում մենք ոչ մի թշնամական քայլ չձեռնարկեցինք Գերմանիայի դեմ, այլ միայն ապրեցինք այն սարսափը, որ նա դաշնակից է դարձել քրիստոնեության եւ մեր ժողովրդի թշնամուն՝ Թուրքիային: Պատերազմից հետո մենք նույն զգացումն ունեինք Ռուսաստանի հանդեպ: Այսօր ճիշտ նույնն ենք զգում Անգլիայի հանդեպ: Ոչ թե թշնամություն, այլ միայն ցավ...

Եվրոպան կարող է դա բացատրել այնպես, թե մենք ավելի շատ սրտի եւ զգացմունքի ժողովուրդ ենք, քան քաղաքական մտքի: Բայց մենք հավատում ենք, որ կգա զղջման ժամանակը. այդ նույն Եվրոպան մի օր կհասկանա, որ անսիրտ քաղաքականությունը դժբախտություն է ոչ միայն թույլերի, այլեւ զորեղների համար, ոչ միայն ուրիշների, այլեւ իր համար...

Թիվ 8, 14 փետրվարի 1941թ.

Մենք երբեք այն կարծիքին չենք եղել, թե Հայաստանին սպառնացող վտանգն անցել է: Մենք ապրել ենք թուրք-գերմանական ռազմական դաշինքի սարսափները... Բոլշեւիկները մինչեւ այսօր էլ չեն ուզում հասկանալ պանթուրքիզմը... Թուրքիան միշտ էլ կարողացել է թանկ վաճառել իր աշխարհագրական դիրքը եւ հերթով վաճառում է մերթ Անգլիային, մերթ Գերմանիային, մերթ Ռուսաստանին, հետո՝ վերստին Անգլիային եւ այդպես շարունակ... Եվրոպացիներն ընդհարվում են իրար հետ: Դարդանելը մնում է թուրքերին, իսկ կոտորածի սարսափներն ապրում են հայերը: Անգլիացի զինվորական տեսուչները շրջագայում եւ աշխատում են ոչ միայն Դարդանելում ու Թուրքիայում, այլեւ Էրզրումում ու Կարսում, այնտեղ, ուր 22 տարի առաջ գերմանացի տեսուչները թուրքերին հրահրեցին Ռուսաստանի դեմ: Անգլիայի նպատակակետը Բաքուն է: Բայց թուրքերը գիտեն, որ այդ ճանապարհն անցնում է Երեւանով: Հնարավոր է, որ անգլիացիները թույլ չտան Դեր-Զորի կրկնությունը: Հնարավոր է, որ ռուսական բանակը ավելի շատ ցույց տա իր ուժը, քան միտքը: Բայց այս ամենը չի նշանակում, թե հայությունը պետք է հույսը դնի միայն իր թշնամու դաշնակցի մարդասիրության եւ իր դաշնակից բանակի քաջության վրա. Կովկասը թուրքական ներխուժումից պաշտպանելու համար ամենաբնական եւ արդյունավետ տարրը հայությունն է:

Թիվ 9, 21 փետրվարի 1941թ.

Ներկայիս պատերազմի առաջին օրերին, երբ Սիրիայում Վեյգանի[3] բանակի առջեւ ծառացավ Անդրկովկասի հարցը, խորհրդավոր «փախստականներ» հայտնվեցին Հալեպում: Դրանք խորհրդային սահմաններից ճողոպրած ադրբեջանցի թաթարներ էին: Նրանք ուզում էին իսլամի անունից արաբական աշխարհի միջոցով սադրանքներ հրահրել խորհրդային իշխանության եւ հատկապես Խորհրդային Հայաստանի դեմ: Նրանք պատմում էին, թե խորհրդային իշխանությունը հայերի օգնությամբ մահմեդականների սոսկալի հալածանք է սկսել: Դա պանթուրքիզմը պանիսլամիզմի հանդերձով ներկայացնելու փորձ էր: Մեզ համար պարզ է այդ սադրանքի աստառը: Այս վտանգի հանդիման մենք խորհրդային իշխանությունից ակնկալում ենք.

1. Հայաստանի դիրքերի ընդլայնում դեպի Թուրքիա:

2. Խորհրդային Միությունում սփռված հայերի համախմբում Հայաստանում եւ Հայաստանի ինքնապաշտպանության կրկնապատկում:

3. Չմերժել արտասահմանի հայերի ամեն կարգի ծառայություն՝ ի պաշտպանություն իրենց հայրենիքի:

Ահավասիկ այն միջոցներից մի քանիսը, որոնցով հնարավոր է վանել հայ ժողովրդի գոյությանն ու Կովկասում ռուսական տիրապետությանը սպառնացող վտանգը:

Թիվ 49, 15 փետրվարի 1942թ.

Մենք գտնվում ենք սարսափելի աղետի առաջ: Հայ գերիների առայսօր հայտնի քանակը (20 000) ինքնին ցույց է տալիս ծանր կորուստների թիվը:

Դեռ չգիտենք, թե ինչ նոր չափեր կընդունի պատերազմը, ինչ կկատարվի Կովկասում եւ մանավանդ Հայաստանում... Սպառնալիքներն ու վտանգը մեծ են: Գուցեեւ ինչ-որ հրաշքով փրկվենք... Մեր առջեւ դրված են նախ հայրենիքի պաշտպանության եւ վիրավորների ապաքինման հարցերը:

Տասնյակ հազարավոր հայ գերիներ մեզնից փրկություն են ակնկալում: Ցույց տանք, որ մենք հայրենասերնե՛ր ենք: Պարտքը կրկնապատիկ մեծ է, որովհետեւ նրանք Հայաստանի երիտասարդ ուժերն են...

Օգնե՛նք հայ ռազմագերիներին: Թող նրանք զգան, որ տարագրության մեջ հայի սիրտը չի մեռել:

Թիվ 191, 29 դեկտեմբերի 1943թ.

Մեր քննադատությունն ուղղված է ոչ թե անցյալի հայ ազգային կուսակցությունների, այլ ներկայիս կուսակցական գզվռտոցի դեմ, որը չարիք է եւ կեղծիքի, նախանձի ու զրպարտության դպրոց: Մեր թերթի դեկտեմբերի 4-ի համարում ավարտեցինք «Լ'էկո դը Նանսի»-ում[4] հրապարակված հոդվածի թարգմանական տպագրությունը: Այդ հոդվածը մահվան դատավճիռ է հայ կուսակցություններին: Միջկուսակցական այդ գզվռտոցը երկնքից չի ընկել, եւ այն հայերի գործն ու ոգեւորությունն է, ովքեր շահագրգռված են կուսակցական հաշիվներով: Այդ հոդվածում ասված է, որ հայ համայնավարները ճարպկորեն աշխատանքի են մտնում՝ որպես Մոսկվայի գործակալներ, եւ որ Թուրքիայում, Քրդստանում, Իրանում ու Սիրիայում Մոսկվայի լավագույն գործակալները հայերն են...

Ինքներդ դատեք, թե ինչով են նրանք զբաղված: Դա՞ է քաղաքական աշխարհին հայերի ծառայության ուղին:

Թիվ 190, 25 դեկտեմբերի 1943թ.

Պատերազմը մեր առջեւ մի շարք հարցեր է դրել, որոնք շարունակում են դեռեւս չլուծված մնալ: Այդ հարցերից են.

1. Ռազմագերիներին եւ տուժածներին օգնության գործը:
2. Հայկական քարոզչությունը:

Այս հարցերի առնչությամբ համագործակցություն չի ստեղծվել հայկական բոլոր գաղութների միջեւ: Հետեւաբար՝ բավականաչափ արդյունքներ չկան: Հայ ռազմագերիների եւ տուժածների համար Եվրոպայի ու Բալկանների հայկական գաղութները ինչ-որ բան ուղարկել են, բայց անջատ-անջատ եւ անբավարար քանակությամբ: Ռազմագերիների համար ամենամեծ հանգանակությունը հավաքվել է Բուլղարիայում՝ հայկական Գթության խաչի նախաձեռնությամբ: Նկատի առնելով միայն Ֆրանսիայի, Ռումինիայի եւ Բուլղարիայի գաղութների նյութական հնարավորությունները՝ կարելի է ակնկալել, որ կհավաքվի առնվազն 100 միլիոն լեւ, եթե ընդունակ լինենք գործն համազգային ծավալով կազմակերպել: Նման գումարը հնարավորություն չի ընձեռում լավագույնս եւ ազնվորեն օգնելու նաեւ այլ կարգի տուժածներին: Այդ առումով մենք հաջողության չհասանք, եւ դրա պատճառը մանրախնդիր անմիաբանությունն է... Այս պայմաններում ռազմագերիներն իրենք են սկսում հոգալ իրենց վիճակի մասին:

Թիվ 191, 29 դեկտեմբերի 1943թ.

Հայկական քարոզչության գործի բարվոք կազմակերպումն ավելի անհրաժեշտ է դառնում, որովհետեւ մենք լավ չենք ճանաչում ուրիշներին եւ քանի որ «փակ» ենք, ճիշտ նույն կերպ ուրիշները եւս չեն ճանաչում մեզ: Այն, որ լավ չենք ճանաչում ուրիշներին, հաստատում են Մեծ եղեռնից փրկվածների խոստովանությունները: Գրեթե բոլոր հայ մտածողները նշել են, որ հայերս չէինք ճանաչում թուրքերին, թեեւ ապրել ենք նրանց հետ մոտ կես հազարամյակ...

Այն, որ «փակ» ենք եւ մյուս ժողովուրդները մեր մասին ստույգ գիտելիքներ չունեն, հաստատում է Եվրոպայում ներկայումս առկա թյուր ըմբռնումը: Մեզ համարում են առեւտրական ժողովուրդ՝ անմարտունակ, ինքնապաշտպանվելու անընդունակ, բարոյապես անլիարժեք եւ խարդախությամբ ապրող: Չեն ուզում հավատալ, որ հայը հերոսական ոգի ու պատմություն է ունեցել... Ժողովուրդները ոչնչանում են նաեւ մյուսների մասին ունեցած սխալ գիտելիքների եւ իրենց մասին ուրիշների կազմած թյուր կարծիքի հետեւանքով: Մենք չունենք գիտականորեն, ոչ էլ հոգեբանորեն կազմակերպված ազգային քարոզչություն: Արդյունքում, հայության թողտվությամբ, Գերմանիայում ամրապնդված այն թյուր կարծիքը, թե մենք պատկանում ենք առաջավորասիական ցեղին, թափանցել է գիտություն: Ազգային քարոզչության գործը պահանջում է ձերբազատվել պատահականություններից, կամայականությունից եւ ոչ գիտական մոտեցումից: Այն պետք է կազմակերպվի որպես համազգային գործ:

Բուլղարերենից թարգմանեց
Զավեն Բոյաջյանը

Թարգմանչի ծանոթագրությունները

[1] Ռասաների քաղաքական գերատեսչություն (գերմ.):

[2] Խոսքը Շամխորի դեպքերի մասին է (1918թ. հունվարի 9-12), երբ թուրք-թաթար մոլեռանդների ձեռքով կազմակերպվեց կովկասյան ռազմաճակատից Ռուսաստան վերադարձող շուրջ 1000 ռուս զինվորների ջարդը:

[3] Խոսքը ֆրանսիացի գեներալ, գերագույն գլխավոր հրամանատար Մաքսիմ Վեյգանի (1867-1965) մասին է, որը մասնակցել է Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմներին:

[4] Ֆրանսիական թերթ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐԻԱԿԱՆ ՆԱԽԱԴԻՐՔ ԱՌԱՋԱԻՈՐ ԱՍԻԱՅՈՒՄ*

Ա.

ԴԱՏ ԵՒ ՃԱԿԱՏԱԳԻՐ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ)

- ՀԱՅ ՀԵՐՈՍԱԿԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ
- ՀԻՆ ԵՒՐՈՊԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ
- ՀԱՅԿԱԿԱՆ ԵՂԵՌՆԸ
- ՊԱՏՃԱՌՆԵՐԸ
- «ԼՈՋԱՆ»-Ը
- ԻՄԱՍՏԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

---

* *Սույն աշխատությունն առաջին անգամ լույս է տեսել 1942թ. Սոֆիայում, որից էլ կատարված է վերատպությունը: Աշխատության Բ հատորը երբեւէ լույս չի տեսել, եւ նրա ճակատագիրը մեզ անհայտ է:* – Խմբ.

ԽՌՈՎԻՉ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԻ ԳԻՐՔ

(հատված 1942թ. հրատարակության առաջաբանից)

Հայաստանին վիճակւեց Արեւմտեան էութիւնը Արեւելքի դէմ դարերով պաշտպանելու որքան ծանր, այնքան պատւաբեր պատմական դերը:

Նրա արիականութիւնը, ինչպէս եւ հետագայում քրիստոնէութեան առաջամարտիկի հանգամանքը պատճառ դարձան, որ նա աւելի թշնամիներ ունենայ, քան զինակիցներ, եւ որ յաճախ մենակ կուրծք տայ իր գոյութեան եւ երկրին՝ Արիականութեան Առաջաւոր Ասիոյ նախադիրքին սպառնացող բազմապիսի ոյժերին:

Մենակի այդ իր ողբերգութիւնը աւելի եւս շեշտւեց այն ժամանակից, երբ Հռոմը քաշւեց Արեւելքէն:

Ճի՛շդ է, միջին դարերում քրիստոնեայ աշխարհը ղեկավարելու չափ զօրաւոր ոյժեր առաջ եկան Եւրոպայում, բայց ճիշդ է ու այն, որ դրանք իրենց ներքին հակամարտութեանց շնորհիւ չկարողացան իրական օգնութիւն ցոյց տալ իսլամի եւ մոնգոլ թուրքերի դէմ եւրոպականութեան ու քրիստոնէութեան դատի համար օրհասօրէն մաքառող Հայաստանին:

Եւրոպական մարդկութեան այդ ապերախտ թերացումը՝ իր նիւթապաշտիկ աշխարհզգացողութեան շնորհիւ, նոր եւ նորագոյն ժամանակներում հանգեց բացայայտ դաւաճանութեան՝ դէպի հայկական ճակատագիրը՝ մի բան, որ եւ կարելի դարձրեց անօրինակ ջարդը հազարամեակների պատմութեան ու մշակոյթի տէր մի ամբողջ ժողովրդի:

Այսպէս, մեծ եղաւ Եւրոպայի ուրացումը, այնքա՛ն, որքան մեծ էր եղել քրիստոնէութեան մատուցած մեր ցեղի ծառայութիւնը՝ կրօնացեղագրական ամենածանր պայմաններում. այսպէս ապերախտւեց այն ազգը, որի արիութիւնն ու արիական հաւատարմութիւնը ճակատագիրը փորձել էր դարերի հարւածներով:

Ազգերը դեռ չեն ճանաչել հայը, որն իր պետութեան անկումից յետոյ իսկ մնաց արժէքաստեղծ՝ օտար գահերին թագակիրներ, բանակներին՝ յաղթական զօրավարներ, երկիրներին՝ բարեկարգիչներ, արւեստներին ու գրականութեան հանճարեղ վարպետներ տալով: Իր բնաշխարհում թէ իբրեւ տարագիր՝ նա եղաւ ստեղծագործ, որով եւ՝

յաղթանակ կանգնեց ժամանակների ու մահաւան դէմ, ու յաճախ իր հանճարի լոյսով լուսաւորեց յաւիտենականի բարձունքները: Նա գիտցաւ արժէքագործել, եւ դրանով հաստատեց երեք բան, այն է՝ որ մեծ, շա՛տ մեծ է իր հոգեւոր զօրութենականութիւնը, որ անխաթար է կենսաբանական իր բարոյականը, եւ որ ընդունակ է իր ճակատագրի հանդէպ եղած անարդարութիւնները հատուցանել մարդկութեան բերած իր ծառայութիւններով:

Աշխարհը դեռ չի հասկացել նաե՛ւ մեր նորագոյն ողբերգութիւնը: Դա միայն նրանում չէ, որ թուրքը դաւադրաբար ջարդի մատնեց մեր ժողովրդի կէսը, այլ՝ որ հին նենգաշահ Եւրոպան իր ընթացքի անբարոյականութեամբ ներշնչեց նրան, թէ կարելի է միլիոնաւոր քրիստոնեաներ ջարդել եւ անպատիժ մնալ: Դա նրանում չէ, որ գերեզմանոցի վերածւեց լոյսի եւ արդար վաստակի աշխարհ մեր հայրենիքը, այլ՝ որ այդ վանդալականութիւնը տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ Եւրոպան քաղաքականապէս ամենազօր էր, իսկ Թուրքիան՝ անկեալ:

Մեր ողբերգութիւնը պայմանաւորւեց ու խորացաւ նրանով, որ անպատիժ մնաց պատմութեան մեծագոյն չարագործը, որն ըստ նոյն Եւրոպայի հոգեւոր ընտրանիին պատկանողներէն մէկի՝ «մարդկութիւնը տառապեցնողներն ամենէն զարհուրելին եղած է»*: Նա՝ հին Եւրոպան, որի նրբագոյն արհեստն էր «նախ սուրբ գիրքը եւ հաց, յետոյ սուրը» մտցնել օտար երկիրներէն ներս, Թուրքիա միայն հաց եւ կաշառող ոսկի մտցրեց: Մենք ի զուր սպասեցինք, սպասեցինք մարդկօրէն, որ նա հայկական ողբերգութիւնը դարձնէ ի՛ր ողբերգութիւնը: Աւա՛ղ, նա չհասկացաւ, որ արեւմտականութեան եւ քրիստոնէութեան Արեւելքի հերոսական պահակի ֆիզիքական մահը համազօր պիտի դառնար իր բարոյական մահաւան:

Աւելի՛ն, նա ո՛չ միայն յամառեց չհասկանալ այդ, այլ եւ հայկական եղեռնից յետոյ նրա մտաւորականութեան տականքը իր գրիչը ծախու հանեց թուրքին, որպէսզի հայհոյի ու վատահամբաւուի սրբազան զոհը՝ Հայութիւնը...

Իբրեւ հետեւանք եւ թագն ու պսակն այդ բոլորի՝ մեզ վիճակւեց նաե՛ւ Լոզանը՝ Եւրոպայի բարոյական անկման ու ամօթանքի Գողգոթան, ուր խաչ հանւեց մօտ երկու միլիոն անթաղ մեռելների դատը, առանց անդրադառնալու, որ դրանով նա բարոյապէս մեղսակից է դառնում ջարդարարին, եւ անլուր ու անարիւն կոտորածի դատա-

* Ժ. դը Մորգան:

պարտում իր կենդանի յաւիտենականից՝ հայրենի հողից կտրուած մէկ միլիոն հայ տարագրութիւնը:

Այսպէս, իր քաղաքա-նիւթական հզօրանքի մէջ մարդկայնօրէն սնանկացած Եւրոպան, որի համար Գլադստոններն ու Ժոռէսները մնացին իբրեւ սուրբ գիրք՝ հեթանոսների մէջ, ոչ միայն չզգաց մեր աղէտի վեհութիւնն ու ահաւորութիւնը, այլ եւ զայն վերստին սակարկեց մեր ցեղի գոյութեան թշնամիների հետ:

Այստեղ է ահա՛, որ մահացու վէրքեր ստացան նրա անունը, բարոյականը, հեղինակութիւնը:

Հետեւա՞նքը՝ քառորդ դար է, ինչ մեր ազգին վիճակուած ողբերգութեան չափ մեզ տառապեցնում է Աստծուց լքուած հին Եւրոպայի բարոյական անկումը: Մենք ողբում ենք թէ՛ մէկը, թէ՛ միւսը, հաւասարապէ՛ս:

«Եւրոպայի մեղքերի ամօթից այլեւս կարելի չէ նայել երկնքին»*: Այո՛, վաղուց է, ինչ մենք առանց ցաւախառն ամօթանքի չենք կարողանում նայել նաեւ աշխարհի աչքի մէջ, որովհետեւ, իբրեւ արիացեղ ժողովուրդ, մեզ վիճակուած ողբերգութիւնը մենք ապրում ենք նաե՛ւ իբրեւ եւրոպական մարդկութեան հոգեւոր անկման ողբերգութիւնը:

* * *

Այդ ողբերգութեան պատճառների վերլուծման է նուիրուած Դոքտ. Հ. Ասատրեանի այս գիրքը:

Շատերը, հարազատ թէ օտար, շատերն են գրել հայկական եղեռնի մասին, դրանք, սակայն, յաջողագոյն դէպքում հանդիսացել են իբրեւ մի պտղունց խունկ կամ առկայծող մի պատրոյգ անգիտութեան ու մոլորանքի մութ անապատում:

Առաջին անգամն է, ինչ հրապարակ է դրւում մի գիրք, արժանի մեր ցեղի անցեալին, օրւայ մեր տառապանքի մեծութեան եւ մեր դատին: Դա պատկանում է ճշմարտօրէն մեծ այն մատեանների կարգին, որոնք գալիս են խռովելու եւ լուսաւորելու ընթերցողի գերագոյն խղճմտանքը:

Իբրեւ գիտութեան եւ տեսական խղճմտանքի մարդ՝ հեղինակն իր խօսքը ծառայեցրել է ճշմարտութեան, իսկ փրկարար ճշմարտութիւնը՝ իր անիրաւուած ժողովրդին: Չի կարելի խորանալ այդ գրքի մէջ եւ

* Մարքւարտ:

իրեն չզգալ խաչուած հայկական խաչով, նաեւ՝ չլեցուել խորագոյն յարգանքով դէպի հաւատքի, սրի եւ իմացականութեան հսկաներ ծնող հայ ցեղը:

Պատմական փաստերի եւ փաստաթղթերի լոյսի տակ ներկայացուած են՝ ոճրագործ թուրքը, ոճիրի բարոյական հնարաւորիչը՝ հին Եւրոպան եւ սրանց զոհը՝ հայութիւնը: Հետեւեցէ՛ք իրերի եւ երեւոյթների սիրտը շօշափելու կարող հեղինակի քաղաքական ու հոգեբանական վերլուծումներին եւ դուք թուրքն ու մասոնացած Հին Եւրոպան պիտի գտնէք կողք կողքի, միասին: Չլինէր Եւրոպայի ուրացումը՝ թուրքը չէր յանդգնի գանկերի ոսկրադէզերով ծածկել մի ամբողջ հայրենիք. ահա՛ այն համոզումը, որով ընթերցողը փակում է այդ գիրքը: Մի վաւերագրեալ ամբաստանագիր է դա, որում ամենայն առարկայականութեամբ ճշդուած են մեղքերի բաժինները մեր ժողովրդի գոյութեան դէմ դաւող բոլոր մութ ոյժերի: Դա գալիս է Հին Եւրոպան յանձնելու նորի՝ ճշմարիտ եւրոպականութեան դատաստանին: Գալիս է ճշմարտութեան ջրով սրբելու օրուայ եւ վաղուայ հայութեան աչքերը, որպէսզի նա, իրեն պատճառուած ամբողջական չարիքի հետ, տեսնէ նաե՛ւ տիեզերական արդարութեան երկաթէ բռունցքն այն հարուածների մէջ, որոնց տակ այսօր կործանւում է հին աշխարհը:

Մեր ողբերգութիւնը կատարեալ դարձնելու հաշւով՝ մեր ցեղի դիւամիտ թշնամիները աշխատեցին, ինչպէս ասացի, որ հայը մնայ անտեղեակ իր դժբախտութեան հիմնական պատճառներին: Իսկ նմանը՝ անհատ թէ ժողովուրդ, դառնում է առօրեահոգ, տեսլազուրկ, անհամերաշխ, պառակտեալ ու պարտուողական, որով եւ՝ անընդունակ վերանորոգումի, հերոսականի, նորակերտումի՝ անընդունակ երբեւիցէ տիրապետելու իր ճակատագրին: Հոգեւորապէս ապաքինում են միայն այն հարուածած, աղիտուած ժողովուրդները, որոնք սիրում են ճշմարտութեան հարցը: Ո՛ղջ ճշմարտութիւնը ժողովրդին՝ ահա՛ թէ ինչ են պահանջում քաղաքական դաստիարակութիւնը եւ ճշմարիտ հայրենասիրութիւնը: Այո՛, ո՛ղջ ճշմարտութիւնը, որովհետեւ ժողովուրդները միայն ճշմարտութեամբ են յաջողում յաղթահարել իրանց դժբախտութիւնը եւ հարուածախոյս լինել վաղը, գալիքում: Այդ գրքի հեղինակը, որ մեզ նման չի սիրում ճշմարտութիւնը անտեսել, գալիս է, միաժամանակ, քաւելու հայ ղեկավար մտաւորականութեան վերջին երկու տասնամեակների անգործութեան մեղքերը, այն կուսակցականացած մտաւորականութեան, որ յանցաւոր թեթեւամտութիւն ունեցաւ կարծելու, թէ իր կոչումը սոցիալիզմ եւ դեմոկրատիա բառերը անլրջօ-

րէն հոլովելու մէջ է եւ ոչ թէ իր ցեղը մութ զրպարտութիւնների դէմ պաշտպանելու:

Այս օրերին, վերածնւող ցեղայնութեան այս մեծ օրերին, երբ դրւում է Նոր Եւրոպայի, որ ասել է՝ քաղաքական նոր բարոյականի եւ մարդկայնութեան խնդիրը՝ բացարձակապէս անհրաժեշտ է դառնում հայասիրական լուրջ պրոպագանդի կազմակերպումը, մի բան, որ հնարաւոր է միայն նման գրքերով, որպէսզի մարդկութիւնը ուղիղ հասկացողութիւն կազմէ ջարդուած, խաբուած ու զրպարտուած մեր ժողովրդի մասին: Չմոռանա՛ք, որ այս կամ այն ժողովուրդը Եւրոպայի կողմից քաղաքականապէս անհրաւուելուց առաջ մի՛շտ էլ վատահամբաւուել է, վարկաբեկւել: Դոքտ. Հ. Ասատրեանի այս մեծարժէք մատեանը նաե՛ւ այդ տեսակէտից մի մեծ տուրք է՝ տրւած ճշմարտութեան ու մեր ցեղին, ահա՛ թէ ինչո՛ւ նրա երեւումը մեր ընթերցող հասարակութեան կողմից պիտի ողջունւի երախտագիտութեան խորագոյն զգացումով:

ՁՕՐ. ՆԺԴԵՀ

ՀԱՅ ՀԵՐՈՍԱԿԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Որքան մեծ էր հայ ժողովրդի պատմական առաքելութիւնը, այնքան ահաւոր եղաւ նրա ճակատագիրը:

Ծագումով եւրոպացի, ցեղով արիական-դինարեան, լեզուով հնդկա-գերմանական, կրօնով քրիստոնեայ՝ այս ժողովուրդը ներկայացրեց եւրոպականութեան առաջին «մղում յԱրեւելս»-ը, նրա նախադիրքը՝ Առաջաւոր Ասիայում:

Շրջապատուած ոչ-արիական եւ հակաքրիստոնէական թշնամիներով՝ նրան վիճակուեց մենակութեան ողբերգութիւնը, որից, սակայն, նա կարողացաւ դիւցազնական ստեղծել: Յաւէտ վտանգուած՝ այս ժողովուրդը ցուցահանեց մեծագործումի ոգի, իր ճակատագրի, նպատակի եւ պատմութեան իմաստը տեսնելով Ե. դարի հռչակաւոր պատմագիր Մովսէս Խորենացու հետեւեալ խօսքում - *«Թէպէտ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ... սակայն բազում գործք արիութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս»*...

Իր հայրենիքը - Առաջաւոր Ասիայի ռազմագիտական բանալի, շրջակայ երկրների աշխարհագրական հանգոյց Հայկական Բարձրաւանդակը - հանդիսացաւ պատմութեան ամենաարիւնոտ այն թատերավայրը, ուր Ժ. դարի արաբ աշխարհա-պատմագիր Իբն ալ-Ֆաքիհի խօսքով՝ մարդկային ճակատագիրն ենթարկուեց *«կայծակին, երկրաշարժին եւ նժոյգի պայտին»*:

Բայց եւ այնպէս, հայ ժողովուրդն արիական իր էութեան եւ Եւրոպայի մշակութային, կրօնական արժէքների պաշտպանութեան համար՝ կատարեց անհաւասարելիօրէն հերոսականը:

Նրա պատմութիւնը հանդիսացաւ ամենահմայիչ մէկ օրինակը գերմարդկային պայքարի - անգերազանցելի նպատակի կամքով, անհասանելի՝ նահատակութեամբ:

Որպէս արիականութեան թէ քրիստոնէութեան առաջամարտիկ՝ Հայը գործեց ճակատագրի զինուորի կամքով եւ նուիրումով, իր քաջութիւնն օծելով սրբութեամբ, իր սրից անբաժան պահելով խաչը:

Գրեթէ 27 դար անընդհատ դաժան կռիւ տարաւ դա ասիական ոգու - իրանականութեան, սեմականութեան, մոնղոլականութեան դէմ: Հնում կազմեց պաշտպանութեան բնական գիծը դասական Հելլադայի քաղաքակրթութեան, քրիստոնէութիւնից յետոյ՝ կրօնակից Եւրոպայի:

Հայն եղաւ աշխարհի քրիստոնեայ առաջին ազգը, մէկը սոյն կրօնի գլխաւոր տարածիչներից եւ ամենից ուխտուածը սրա ուսմունքն ու բարոյականը զէնքով պաշտպանելու գործում: Երեք դար դա կրօնական պատերազմ վարեց հեթանոսութեան, տասներեք դար՝ իսլամի դէմ: Երկու դար - Կիլիկեան Հայաստանում - դարձաւ Եւրոպայի խաչակիրների նուիրուած զինակիցը, ապահով միակ խարիսխը նրանց համար, առհասարակ քրիստոնէութեան ուխտուած պահակը՝ Երուսաղէմի ճանապարհին: Հետագային՝ որպէս կամաւոր, դա երեւաց վտանգի բոլոր այն գծերին, ուր իսլամն ու քրիստոնէութիւնն իրար բաղխուեցին: Այդ պայքարին ծառայեցրեց ո՛չ միայն իր քաջութիւնն ու հաւատարմութիւնը, այլեւ օտարութեան մէջ ստեղծած առեւտրական իր սիստեմը, սրա մէջ դնելով ո՛չ թէ հրեա-մասոնական օթեակների թխած ու եւրոպացի վաճառուած գրչակների կրկնած առասպելական խորամանկութիւնը, այլ՝ հենց մեծահանճար իմացաբան Կանտ փիլիսոփայի նկատած *«ջանասիրութիւն»-ը, «ողջամտութիւն»-ը, «գերազանց նկարագիր»-ը:*

Որպէս հակամարտ երկու աշխարհների-Արեւելքի եւ Արեւմուտքի-շփման կէտ եւ փոթորկալից պայքարների առաջաւոր դիրք՝ Հայաստանը ձեռնատու չեղաւ պետական թէ քաղաքակրթական մեծ ու տեւական կառոյցներ ստեղծելու: Բայց եւ այնպէս, այս մարզերում էլ հայ ցեղի արիական կորովը դրսեւորեց անկարելին:

Հայերը մշակեցին զինուորական մի ոգի, որ երբեմնի թշնամի Հռովմի բանաստեղծներ Ովիդից այնուամենայնիւ այլաբանուեց որպէս *«Վագրային»*, Վիրգիլիոսից՝ որպէս *«կամուրջներ չհանդուրժող»*: Նրանց զինուորական բարոյականը յենւում էր *«սրբութեան ուխտ»*-ի վրայ եւ դեռ Ե. դարից առաջ էլ պատգամում էր. *«Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր եւ ի վերայ ազգիս մեր»*: Քրիստոսից մի դար առաջ, հայ դրօշի տակ կազմուեց, Կիկերոնի խօսքով՝ *«Ասիայի մեծազօր արքայ»* Տիգրան Մեծի կայսրութիւնը:

Հայաստանում երեւան եկաւ սերունդը Մամիկոնեան դիւցազնաշունչ զօրականների, որոնք թէպէտեւ միայն հայոց պատմութեան մէջ անմահացած՝ իրանց ճակատին կրեցին արիական ցեղի ամենամեծ հերոսների հանճարի, նուիրումի, մեծագործութեան կնիքը: Այդտեղ կազմակերպուեց հին աշխարհում այնքա՛ն հռչակուած հայկական այրուձին: Գրեթէ ամբողջ հինգ դար - մասնաւորապէս քրիստոնէութեան ծանր տագնապաժամերին - հայ կայսրերն ու սպարապետները ղեկավարեցին Բիւզանդիոնը, ստեղծելով սրա պատմութեան *«ամենափայլուն շրջան»-ը,* ինչպէս շատերի հետ՝ Գելցերն է նկատում

հայազգի Վասիլ Ա.-ի հարստութեան կապակցութեամբ: Հակառակ յետնական ժամանակների զարհուրանքին՝ զինուորական այդ ձիրքը կենդանի մնաց հայ ցեղի ոգում, ինչպէս կրակը՝ մոխիրի տակ: Մասնաւորապէս Ռուսաստանին հայերը տուեցին զօրավարների փայլուն մի շարք, իսկ իրանց ազատագրական պայքարներին, գերման գրագիտուհի Իլզէ Ֆրաբտնի որակումով՝ *«ամենաարիւնոտ երկնակամարի տակ, շողշողուն աստղերի պէս մեծ ու պայծառ հերոսներ, նահատակներ»:*

Նուազ կշռութաւոր չեղան այս ազգի մշակութաստեղծ ոգու նուաճումները: Հայը զարգացրեց երկրագործական ինքնուրոյն մի քաղաքակրթութիւն: Նոր շատ բան մտցրեց մետաղագործութեան մէջ: Ստեղծեց հոյակապ մի ճարտարապետութիւն: Շատ արուեստներում դարձաւ ո՛չ միայն իր շրջապատի, այլեւ եւրոպական ազգերի ուսուցիչը: Մշակեց հնդկաեւրոպական սքանչելի մի լեզու՝ նրբութեամբ յունարէնին, նորակերտումի ուժականութեամբ՝ գերմաներէնին հաւասար: Դա երկնեց պատմագիտական, աստուածաբանական, իմաստասիրական, գեղարուեստական, գիտական մեծ մի գրականութիւն, կրօնական անգերազանցելի մի բանաստեղծութիւն, եկեղեցական շատ սրտայոյզ մի երաժշտութիւն, փառաւոր մի դիւցազներգութիւն եւ երանգներով թէ իմաստով շատ հարուստ ժողովրդական երգերի մի գանձարան:

Այս ժողովրդի մեծ յղացումներից է ազգային ապրումի, ոգու մշակումը: Դա քրիստոնէութիւնը վերածեց ազգային դաւանանքի, ստեղծեց ազգային մի եկեղեցի, որի մասին ամէն ոք Ալենիի հետ կարող է կրկնել՝ միակը որ *«աշխարհիս վրայ ամենից աւելի ներկայացնում է մի ազգի ոգու մարմնացումը»*: Դա յօրինեց ամենակատարեալ այբուբենը, որ երբեւէ կարող է արտայայտել մարդկային հնչիւնների նրբութիւնը: Հնում՝ որոշ ազգերի գիր տուեց, նոր ժամանակներում՝ տպագրութիւն եւ առհասարակ հոգեւոր անկախութեան այն զէնքերը, որոնցով քաղաքականապէս անբախտ ժողովուրդները կարողանում են ազգային իրանց դիմագծութիւնը պահել, որոնցով թուապէս փոքրերն էլ յաւիտենականի առաջ մնում են մեծ:

Էութեամբ արիական՝ այս ժողովուրդը, քաղաքական իր հզօրանքի թէ խորտակումների մէջ, մնաց եւրոպականութեան իդէալների խաչակիր դերում եւ յաւիտենականութեան չափ անանց, նրա չափ խոր մի հաւատարմութեամբ նուիրուեց իր այդ առաքելութեան: Անխորտակելի մնաց առաքելական նրա կամքը, չնայած որ նա միշտ գործ ունեցաւ ամենավայրագ մի շրջապատի կոյր ու դաժան ոյժերի

հետ:

Ամենախոր յուսահատութեան մէջ իսկ՝ բարոյապէս թէ իմացապէս դա չկտրուեց Եւրոպայից – տարածեց սրա ոգին, բառը, գիրը, քաղաքական տեսիլքը՝ Արեւելքում: Վերջին դարերին, ենթակայ իսլամական պետութիւնների տիրապետութեան, դա իր վրայ կրեց սրանց ամբողջ ատելութիւնը՝ քրիստոնէութեան դէմ: Դա իմաստ տեսաւ անգամ այդ ճակատագրի մէջ, շրջապատի մոլեռանդութեան եւ բարբարոսութեան դէմ մաքառելով ողբերգական մի հայրենասիրութեամբ - անօրինակ՝ տառապանքով, անօրինակ՝ նուիրումով եւ հաւատարմութեամբ: Դա ամենօրեայ արցունքով օծեց հայրենի յիշատակարանները, կեանքի գնով պահեց հայ տաճարը, հայ գիրքը եւ մարդասպանների, աւազակների սրի տակ՝ մնաց բարեպաշտ երկրագործ: Աշխատանքից չարչարանքը միայն բաժին հանեց իրան, վաստակը տուեց թուրքին, թաթարին, քիւրդին, եւ ամէն օր ձեռքն առած բարեպաշտ իր հայրերի մագաղաթը, խորհուրդի նստեց Աստծու հետ՝ իր քրիստոնէութիւնը, իր ցեղի արիւնը, պատիւը անարատ պահելու ուխտով:

Հենց այդ ժողովրդին պիտի վիճակուէր քրիստոնէութեան եւ արիականութեան մեծագոյն նահատակի ճակատագիրը: Դա ապրեց մարդկային պատմութեան ամենաքստմնելի եղեռնները, միայն քառորդ դարի ընթացքին (1895 - 1920) տալով 300.000 + 30.000 + 2.000.000 զոհեր: Մահուան ճանապարհին իսկ ցուցահանեց բարոյական մեծութիւն՝ որպէս զանգուած կրելով մի խաչ, որ հազուադէպ պարագաներում միայն ընդունակ են տանել գաղափարի մեծ առաքեալները, եւ ինչպէս Ե. դարի իր պատմագիրներից Եղիշէն է ասում՝ *«իր կենդանութեամբ տեսաւ իր անձի դիակը»*, բայց մնաց ոգու ժողովուրդ:

* * *

Մի ժամանակ մարդկային սրտից արձակուեց ցաւագին աղաղակը. *«Եգիպտո՛ս, Եգիպտո՛ս, հետագայ սերունդներին անհաւատալի առասպելներ միայն պիտի մնան քեզանից, եւ բարեպաշտ քո գործերը ծանուցող ոչինչ կայուն, քան քար կտրած խօսքերը»*:

Անհունօրէն զարհուրելին վիճակուեց Հայաստանին: Այստեղ, 20-րդ կոչուած դարում, եւրոպական հզօր ոյժերի աչքի առաջ եւ նրանց մեղսակցութեամբ, քրիստոնեայ մի ազգ եւ մէկը արիական ցեղի ամենահին, ամենամեծ եւ ամենահնքնուրոյն մշակոյթներից՝ խորտա-

կուեցին մոնղոլական բարբարոսութեան հարուածների տակ: Այստեղ, իսլամական մոլեռանդութիւնը պատմական յուշարձանների քարերին անգամ չխնայեց:

Կատարուածից յետոյ «ցնցուեց» քրիստոնեայ մարդկութիւնը եւ շատ բան ասաց-գրեց ահաւոր եղեռնի մասին, թէպէտեւ տարողութեամբ դա պատկանում է անցաւոր այս աշխարհի անպատմելի դէպքերին, իսկ իմաստով՝ դեռ անըմբռնելի է մնում Եւրոպային:

Ամէնից աւելի բարոյական ըմբռնողութեան պակասից է մարդկային տկարութիւնը սարսափներ վիժում: Մեղսակից հայ ազգի ահաւոր նահատակութեան՝ քաղաքական Եւրոպան նրան էլ պիտի պարտադրէր սպանիչ մի *«Վերսայլ»*: Դա ո՛չ հայ ժողովրդի արեան եւ արցունքի հեղեղներից ազդուեց, ո՛չ դեռեւս խղճի եւ պատուի զգացում չկորցրած 7.000.000 եւրոպացիների եւ ամերիկացիների բողոքից, ո՛չ իսկ Լլոյդ Ջորջի քննադատութիւններից: Լոզանի դաշնագրով (1923թ.) դա հայերի դարաւոր հայրենիքը թողեց նրանց սպանիչներին:

Այդ քայլով հին Եւրոպան կնքեց բարոյական իր մահկանացուն:

Սրտի տէր ամէն մարդ, որ դեռ չէր կորցրել իր Աստծու հետ խօսելու իրաւունքը՝ մատնուեց բարոյական տանջանքի: Շատերը Բերլինում պրոֆեսորներից Մարքարտի հետ զգացին, որ *«Եւրոպայի մեղքերի ամօթից այլեւս կարելի չէ նայել երկնքին»*: Ուրիշները Ֆրիդեօֆ Նանսէնի հետ տառապելով հայկական արժէքներն ուրացող, հերոսականը, նահատակութիւնը մոռացող, դատը, յոյսը տապանաքարող Եւրոպայի համար՝ ողբացին հայ ճակատագիրը, աղաղակելով. *«Խաբուա՛ծ ժողովուրդ»*:

«Ցաւն ասում է՝ անցի՛ր»... բայց եւ այնպէս, կեանքի ամենատխուր ցաւի ոյժով ապրում է հայ ժողովուրդը – ոգու ժողովուրդը, որի դիւցազնական զօրավարների, կայսրերի եւ հնահռչակ այրուձիի քաջութեան եւ նուիրումի շնորհիւ շատ անգամներ փրկուեցին Եւրոպան եւ քրիստոնէութիւնը, որ սակայն, իրերի ապերախտ մի դարձակէտում զոհ դարձաւ եւրոպական ոյժերի քաղաքական հակամարտութեան, նրանց բարոյական կարճատեսութեան, նրանց դաւաճանութեան:

Թուրքե՞ր յաղթեցին հայերին... Բայց հայոց նահատակութիւնը տեղի ունեցաւ քաղաքական դաւադրութիւնների պատմական մի շրջանում, երբ աշխարհում տիրում էր ոգու ստորնացումը, երբ վախկոտի խորամանկութիւնը շղթայակապում էր հերոսների ասպետականութիւնը, երբ առիւծի եւ աղուէսի կռւում՝ յաղթանակը վիճակւում էր

վերջինին:

ՀԻՆ ԵՒՐՈՊԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

Կար ժամանակ, երբ սիրտը դեռ կենդանի էր Եւրոպայում, ուստի եւ՝ յաւիտենականի կռահում կար նրա քաղաքական տեսիլքներում: Այն ժամանակ՝ ոգին աւելի՛ էր մօտ Աստծուն, խիղճն աւելի՛ արթուն, միտքն աւելի՛ յաւիտենատես: Բարոյական կռահումի էակ էր մարդը, եւ նրա ինքնասիրութիւնը բարեպաշտութեան գործ էր համարում մտածել, թէ պատմութիւնը նուազ արժէք պիտի ունենար եւ գոյութիւնը նուազ իմաստ, եթէ աշխարհում, որպէս կրօն իսլամը տիրապետելիս լինէր, որպէս ոգի եւ արիւն՝ մոնղոլականութիւնը:

Միջին դարի գերմանական կայսրերը, ինչպէս Ֆրիդրիխ Բարբարոսան, Հայնրիխ Զ.-ը, յստակ ըմբռնում ունէին այն մասին, թէ Հայաստանը - ասիական բարբարոսներով շրջապատուած արիական այդ կղզին - քրիստոնէութեան, եւրոպականութեան վտանգի գիծն է, խարիսխը, նախադիրքը: Որպէս յաւիտենատես արիներ՝ նրանք նենգութիւն չէին դնում հայկական իրանց քաղաքականութեան մէջ եւ գիտէին, որ զօրաւոր Հայաստան ասել է՝ բարոյապէս հզօր եւրոպական դիրք՝ Ասիայի դէմ:

Աւանդութեան ոգին դեռ ապրում էր ԺԷ., ԺԸ. դարերի Գերմանիայում, ուր Լէոպոլտ Ա. կայսրը եւ իշխանները՝ ինչպէս Պֆալցի Կուրֆիւրստ Եոհան Վիլհելմը, Հայաստանի ազատագրումն իսլամական լծից՝ համարում էին քրիստոնէական բարոյականի գործ, քաղաքակրթութեան պահանջ, եւ առա՛նց քաղաքական նախանձի՝ հարցի լուծումն առաջադրում եւ վստահում էին Ռուսաստանին:

Իր կեանքի վերջաժամին՝ Պետրոս Մեծը կատարեց առեղծուածային մի փորձ: Թերեւս որպէս հետեւանք գերմանական աւանդութեան՝ աւելի՛ վճռական եղաւ գերմանազգի Կատարինէ Բ. կայսրուհին, որի *«Հայաստանի թագաւորութիւնը վերականգնելու»* ուխտը, սակայն, վիժեց վերահաս մահուան հետեւանքով: Նիկոլայ Ա. կայսրը բաւարարուեց միայն Հայաստանի փոքր մի մասը Ռուսաստանին կցելով:

Բոլոր այդ փորձերի ժամանակ, հայերը զէնքով ու խաչով առաջնորդեցին ռուսական բանակները դէպի Կովկաս: Հայաստանում կազմակերպուած հուժկու եւ յաճախ տարիներ տեւող ապստամբութիւններով, նրանք թիկունքից հարուածեցին մահմեդական պետութիւններին: Չտկարացան նուիրումի մէջ, չնայած որ երեք դէպքում էլ լքուեցին

«ազատարարից», մենակ մնալով մահմեդական ոսոխների դէմ:

Հայ ազգի ճակատագիրը դրուեց կեղծ կարեկցանքի, դաւի եւ դաւաճանութեան կախարդական շրջագծում, երբ ծայրագոյնս սրուած անգլեւռուս քաղաքական մրցակցութեան պատճառով, վերջնականապէս խորտակուեց քրիստոնեայ աշխարհի բարոյական միութիւնը:

Քաղաքական բարքերի տեսակէտով անօրինակօրէն ապականիչ այդ մրցակցութեան զուգահեռուեց ոգու ընդհանուր անկումը, հետեւանք՝ ժամանակի հասարակական պայմանների: Եւրոպայում հսկայական թափով զարգացան բնական գիտութիւնները եւ պաղուեան իրանց շունչը դրեցին աշխարհայեցողութեան վրայ: Այդ աշխարհայեցողութիւնը սնուցեց կեղծ մի ազատականութիւն, որի անմիջական ծնունդը հանդիսացան իմաստամերժ իրապաշտութիւնը եւ ներկայազգաց եսապաշտութիւնը, իսկ գլխաւոր զոհերը՝ բնազանցօրէն իմաստաւորը եւ յաւիտենականի զգացումը: Իրապաշտութիւնը խախտեց քրիստոնէական հանդերձեալի հաւատի հիմքերը, իսկ նիւթապաշտութիւնը կասկածի տակ դրեց անգամ ժողովուրդների պատմական ոգու գոյութիւնը, նրա յաւերժազդեցութիւնը: Գերաստիճանօրէն զարգացած ճարտարարուեստը սրեց ազգերի տնտեսական մրցակցութիւնը: Դրա հետ՝ աճեց կարիքը, որ ազգերի ներքին կեանքում խորացրեց դասակարգային ոգին: Տնտեսական գործօնը ճանաչուեց պատմութեան միակ կամ գլխաւոր շարժիչ ոյժը եւ «շահ»-ը դարձաւ ժամանակի մեծ առեղծուածը, թովչանքը, երջանկութեան միջոցն ու նպատակը՝ միաժամանակ: Աղքատ զանգուածները նետուեցին մարքսականութեան ուռկանը, կառավարութիւնները յենուեցին ազատ որմնադիրների վրայ, վերջինները, որպէս ազդեցութեան միջոց, ծառայեցրին միջազգային դրամոյթը, մասնաւորապէս՝ հրէականը: Այդ պայմաններում, ազատականութիւնը բռնեց անաստուածականութեան, ժողովրդապետութիւնը՝ հոգեւոր անիշխանականութեան, ընկերվարութիւնը՝ դասակարգային եսականութեան, կայսերապաշտութիւնը՝ աւելի տնտեսահոգ նուաճողականութեան, քաղաքականութիւնը՝ դիւանագիտական դաւերի եւ խարդախութիւնների ճամբան: Աւանդութիւններից դատարկուած, երջանկութեան իր գաղափարականով ներկայապաշտ այդ Եւրոպայում, քրիստոնէութիւնը դարձաւ կենսազդեցութիւն կորցրած հին յուշ միայն, մարդկայնութիւնը՝ պերճախօսութեան ձեւ, խօսքը՝ պատրանք, գործը՝ ճշմարիտ խօսքի հակասութիւն:

Պատմական այդ ժամանակաշրջանին, ահա՛, զուգադիպեց հայ եւ թուրք դարաւոր կնճիռի ծայրայեղ սրումը, որ ասել էր՝ քրիստոնէութեան եւ իսլամի, արիականութեան եւ մոնղոլականութեան լինել-

չլինելու պայքարը Առաջաւոր Ասիայում:

Ի զուր էր գթասիրտ Գլադստոնը աղաղակում. *«Ո՛վ Հայաստանին է ծառայում՝ ծառայում է քաղաքակրթութեան»*: Ամէնից աւելի այդ օրերի Եւրոպային էր պատշաճում Գէօթէի խօսքը -

«Ո՞վ է այժմ ուզում օգնել իր դրացուն,
Իւրաքանչիւր ոք իր մասին է հոգում,
Ամէն ոք քերում է, պեղում, հաւաքում,
Եւ կայսերական գանձարկղը դատարկ է մնում...»:

Դատարկ էր այդ օրերի Եւրոպայի մարդկայնութեան, բարոյականի, խղճմտանքի, ցեղային տեսիլքների գանձարկղը:

Այդ դրութիւնից օգտուեց Թուրքիան: Խորքով Եւրոպայի թշնամին՝ դա իր փրկութիւնը տեսաւ եւրոպական ոյժերի մրցակցական ոգին հրահրուած տեսնելու մէջ: Քաղաքականապէս դա դիմահակուեց Ռուսաստանին (1832), Անգլիային եւ Ֆրանսիային (1854), միայն Անգլիային (1878), կրկին Ռուսաստանին (1882-ից, մասնաւորապէս 1895-ին), նաեւ՝ Գերմանիային (1889-ից), միայն Գերմանիային (1914), կրկին Ռուսաստանին (1918) եւ կրկին Անգլիային, սրան ու սրան (1923-ից), չնայած բոլորին ատում էր հաւասար չափով: Կրօնական գետնի վրայ՝ դա փորձեց վերակազմել իսլամի միութիւնը - համիսլամականութիւն - թէպէտեւ ինքն երբեք չի եղել իսլամի հոգեւոր սնուցիչը, տէրը, առաջնորդը, այլ՝ նրա քաղաքական պորտաբոյծը միայն: Բայց եւ այնպէս, դա յաջողեց մի կողմից համիսլամականութեան սնասարսափով, միւս կողմից՝ քաղաքական-տնտեսական, երբեմն էլ՝ հողային զիջումներով կաշառել եւրոպական մեծ ոյժերի խղճմտանքը, եւ հակաքրիստոնէական իր ատելութեան ամբողջ թոյնը կենտրոնացնելով ներքին քրիստոնեաների դէմ՝ հերթով թափել յոյների, հայերի, բուլղարների, մարոնիտների, ասորիների, կրկին յոյների եւ կրկին ու կրկին հայերի արիւնը:

Մեծ պէտք է լինէր հայերի արեան տուրքը, որովհետեւ ինչպէս Մեդիսըն Գրենդն է ասում. *«Այս ժողովուրդը իրապէս ներկայացնում է Եւրոպայի առաջապահը դէպի Արեւելք եւ ծեւացնում է մնացած միակ միջնաբերդը, որով արեւմտեան իդէալները կարող են ներմուծուել Ասիա»*: Այդ բանը գիտէր իսլամական Արեւելքը, որ հնուց ի վեր հայութիւնը ճանաչում էր որպէս խորհրդանշան քրիստոնէութեան թէ եւրոպականութեան: Դա գիտէին ե՛ւ թուրքերը, որոնք Օսմանեան կայսրութեան փրկութեան նախապայմանը համարում էին այդ *«միջնաբերդ»-ի* ոչնչացումը: Նրանք գիտէին նոյնպէս, որ դա հնարաւոր է Եւրոպայի հոգեւոր, բարոյական թէ քաղաքական տկարու-

թիւններից օգտուելու ճանապարհով:

Եւ մինչդեռ հայ ժողովուրդը շարունակում էր կրօնական վերացումով օրհնել *«Արեւմտեան կողմն աշխարհի»*, ջերմեռանդօրէն աղօթել վասն *«թագաւորաց քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշտից»,* թուրքերն ստանում էին Եւրոպայի մեծ ոյժերից մէկի «անզօրութեան» հաւաստիքը, միւսի՝ կատարեալ համաձայնութիւնը՝ հայկական միջնաբերդը խորտակելու մասին:

Անգլիայում, հրեայ Դիզրայէլիի քաղաքական հին գործակից եւ յաջորդ Սալիզբուրին ասաց. *«Բրիտանական նաւատորմիղը չի կարող Արարատ բարձրանալ»,* թէպէտեւ հայկական ջարդեր տեղի էին ունենում ե՛ւ Պոլսում, Վոսփորի ափերին: Ռուսաստանից լսուեց արտաքին գործերի նախարար Լոբանովի նշանախօսքը. *«Հայաստա՛ն՝ առանց հայերի»:*

«Քրիստոնէութեան պաշտպան» այս երկու մեծ պետութիւնների ուղղութեան հետեւեցին ե՛ւ միւսները: Այսպէս կոչուած «Արեւելեան հարց»-ի շահագործումը շուտով դարձաւ մէկը եւրոպական դիւանագիտութեան գործնական մեթոդներից: Սկսուեց արեան եւ կոնցեսիաների առեւտուրը: Սովորութիւն դարձաւ հայկական ամէն կոտորածի նախօրեակին Թուրքիայից պահանջել մի զիջանելիք, կոտորածի ընթացքին՝ սպառնալ *«բարենորոգումների»* գործադրման պահանջով, կոտորածից յետոյ՝ ստանալ ուզածը եւ լռել:

Թէպէտեւ ծանօթ այդ օրերի Եւրոպայի բարոյական տխուր պատկերին՝ հայերը շարունակեցին նրա «տասներկու խաչապաշտ պետութիւններ»-ին վերագրել բարոյական միութիւն եւ համաքրիստոնէական բարձր նպատակ: Խառնուածքով իդէալիստ եւ խորապէս կրօնազգաց այս ժողովուրդը, մինչեւ վերջ էլ, չկարողացաւ քաղաքական իրապաշտութիւն դնել եւրոպական իր արեւելադիմութեան մէջ: Իրապաշտութեան մէջ դա աւելի ոգեկան ոյժի, ապրումի պակաս տեսաւ, քան իրականութեան զգացում: Որպէս դարերով հալածուած քրիստոնեայ՝ դա հաւատաց իր տառապանքը կարդալ կրօնակից ամէն էակի սրտում, որով եւ՝ բարոյական թէ քաղաքական խտիր չդրեց եւրոպական այս կամ այն պետութեան, ժողովրդի միջեւ: Չասեց «Անգլիա», «Ֆրանսիա», «Գերմանիա», «Իտալիա», «Ռուսաստան», այլ միայն՝ «Եւրոպա»: Խորապէս տառապելով հանդերձ Եւրոպայի քաղաքական պառակտումի փաստից՝ դա մի վայրկեան իսկ չդադարեց համաեւրոպական նպատակով աշխատել, այլ, հաւատարիմ աւանդութեան իր գծին՝ շարունակեց հաւասարապէս օգտակար լինել քրիստոնեայ ամէն ոյժի, որ ձգտում էր Արեւելքում դիրքեր խլել

իսլամից: Կարելի է հաստատապէս ասել, որ այն օրերի աշխարհում հայը միակ ժողովուրդն էր, որ շարունակեց կրօնական խանդով ապրել գոյութեան, ճակատագրի եւ պարտականութեան հարցերը, ուստի եւ միակը, որ հոգեբանութեամբ կապուած մնաց համաեւրոպական եւ համաքրիստոնէական իդէալին, ուխտին: Այդ իսկ պատճառով, անգամ ազգային իր հարցի լուծման խնդրում, դա չկարողացաւ տարբերութիւն դնել եւրոպական այս կամ այն պետութեան միջեւ: Զէյթունի հայերը 1862-ին խորտակելով իրանց դէմ շարժուող թուրքական բանակը, դիմեցին Նապոլէոն Գ.-ի Ֆրանսիայի միջամտութեան: Կովկասի ճակատի վրայ, 1877-ին, ռուսական բանակներն առաջնորդեցին հայ զօրավարները: Նոյն այդ ժամանակին, Եգիպտոսում քաղաքական թէ ընկերային մեծ բարենորոգումներ մտցնելով՝ Անգլիայի տիրապետութեան համար ուղի հարթեց հայ Նուբար փաշան: Պոլսից, Զմիւռնիայից հայերը շարունակում էին ամբողջ Թուրքիայում եւ Արեւելքի միւս երկրներում տարածել ֆրանսիական գրականութիւնը, մշակոյթը: Կովկասի իրանց միջնակարգ դպրոցներում սովորեցնում էին գերման լեզուն՝ հարազատում, տարածում գերմանական իմաստասիրական մտածումը, գերմանական ոգին: Թուրքիայի դէմ մղուած յեղափոխական կռւում՝ նրանք գործակցում էին մակեդոնացիներին: Վերջապէս, Բալկանեան պատերազմին էլ նրանք անմասն չմնացին յանուն քրիստոնեայ ժողովուրդների ազատագրումին մղուած կռիւներին, տալով թուով թէպէտեւ սակաւ, բայց քաջութեամբ գերազանց կամաւորների մի զօրամաս բուլղար բանակի կողքին:

Բոլոր այս դէպքերում պատեհապաշտութիւնը չէր, որ հրահրեց, վարեց հայերին, այլ՝ քրիստոնէական ընդհանուր նպատակը, որ դարերից ի վեր հանդիսանում է նրանց ոգու, իդէալի, գործի առաջնորդող ոյժը:

Եւրոպայի մեծագոյն մեղքերից մէկը պիտի մնայ տխուր այն փաստը, որ դա ինչպէս իր դատի ամենահաւատարիմ նահատակի տառապանքը, այդպէս էլ նրա ոգին, նպատակը, նրա երկունքների եւ գործերի իմաստը չհասկացաւ:

Ընդհակառակն՝ դա յարմարութիւններ ընծայեց հայ ժողովրդի գոյութեան թշնամիներին՝ դաւախօսութեան ենթարկելու նրա աւանդական առաքելութեամբ պայմանաւորուած համեւրոպական ձգտումները: Հենց հայերի անխտրական դիրքը դէպի քրիստոնեայ բոլոր ոյժերը՝ մոլորանքների ամբողջ մի աշխարհ ստեղծեց Եւրոպայում: Օգտագործելով հայ ոգու այդ գիծը՝ այս ազգի թշնամիները Անգլիայում նրան ներկայացրին որպէս *ռուսասէր*, Ռուսաստանում՝ որպէս

անգլիասէր, իսկ Գերմանիայում՝ որպէս *անգլեւռուսասէր:* Քչերն էին անդրադառնում, որ աշխարհում ամէն ոճրագործ նախ եւ առաջ իր զոհի զրպարտիչն է եւ յետոյ՝ սպանիչը, որ փարիսեցիութեան յաւիտենական զէնքը հենց մոլորանքներ յղանալու արուեստ է, որով դա նա՛խ «չարագործ» է հռչակում եւ ապա՝ խաչել տալիս ամէն Յիսուս:

Այդ օրերի քաղաքական Եւրոպան չունէր ցեղային առաջնորդութիւն, ուստի եւ՝ արժանաւորապէս չէր ըմբռնում, որ Արեւելքում, թուրք մահմեդականների ձեռքով զոհուել՝ նշանակում է արիականութեան պայքարի, դատի կրող լինել եւ տէր՝ ցեղային բարձր ոգու, քրիստոնէական մեծ բարոյականի: Դա չկարողացաւ ցեղահոգօրէն մօտենալ այն հարցին, թէ ինչո՞ւ էին հակաարիական ոյժերը (կրօնապէս՝ ամբողջ իսլամը, քաղաքականապէս՝ մասնաւորապէս թուրք եւ թաթարները, տնտեսապէս՝ նաեւ հրեաները) այնքա՛ն շահագրգռուած հայերի ոչնչացումով: Միակողմանիօրէն քաղաքականացած եւ դիւանագիտական խաղերում անխտրողական՝ դա խուլ էր նաեւ իր սեփական հասարակական կարծիքի հանդէպ, որովհետեւ Գերմանիայում չպակասեցին անուանի գիտնականներ, Ֆրանսիայում՝ մեծ գրողներ, Անգլիայում, Իտալիայում, Զուիցերիայում, Ամերիկայում, Սկանդինաւեան երկրներում եւ այլուր հասարակական գործիչներ եւ ամէն տեղ եկեղեցական համայնքներ, բարձր հոգեւորականներ՝ օգնութեան սրտայոյզ կանչեր, բողոքի ցասկոտ ճիչեր արձակելու «նահատակ Հայաստան»-ի համար: Բայց այդ բոլորը մնացին աւելի որպէս հոգու մխիթարութիւն, քան թէ դարձան սպեղանի օրհասօրէն մարտնչող ժողովրդի վէրքերին:

Մի բանում անսխալ էին տաճիկները. նրանք գիտէին, որ բարոյախօսութիւնը այդ օրերի Եւրոպայի առաքինութիւնների վերջին անզօր մնացորդն է: Կոտորածների ժամանակ, դրանցից առաջ թէ դրանցից յետոյ, նրանք ծաղրում էին հայերի Եւրոպայի վրայ դրած միամիտ յոյսերը. *«Հայկական դատը պատկանում է Եւրոպայի տէրտէրներին»*: Ծաղրում էին այնպէս, ինչպէս հետագային անաստուածութիւն քարոզող բոլշեւիկներն ասում էին. *«Երկինքը պատկանում է ճնճղուկներին»*:

Ոչնչականութեան սնուցիչը մարդկային ոգում՝ դա աշխարհի բարոյական դատարկութեան զգացումն է: Ճիւաղային անգթութիւնն սկսում է այնտեղ, ուր վախկոտ ոչնչականի խորամանկութիւնը կարողացել է հասկացողութիւն կազմել աշխարհի բարոյական ոյժերի քայքայման մասին: Հայերի, ինչպէս նաեւ միւս քրիստոնեաների դրութիւնը Թուրքիայում տանելի էր այնքա՛ն ժամանակ, որքան Եւրոպան, գէթ կրօնական գետնի վրայ, բարոյական միութեան որոշ տպաւորու-

թիւն էր թողնում:

Բարբարոսների հոգեւոր ամենահատու զէնքը մի նախնատիպ իրապաշտութիւն է, որով նրանք առա՛նց մտաւոր ճիգի, առա՛նց տեսութիւնների, հասկանում են արտաքին յարաբերութիւնները եւ սրանց ներգործումով էլ շղթայազերծում են իրանց բնազդները: Թուրքերը հասկացել էին նաեւ, որ հայերի ամենամեծ դրամագլուխը գաղափարապաշտութիւնն է, որի վրայ խարսխուած էր նրանց խորին նուիրումը դէպի իրանց կրօնը, սրբերը, աւանդութիւնները, նրանց քաղաքական հակումն ու հաւատարմութիւնը դէպի Եւրոպան: Բայց նրանք գիտէին, որ այդ օրերի Եւրոպան վարակուած է քաղաքական իրապաշտութեամբ եւ որ այդպիսի իրապաշտութիւնը պառակտիչ է բարոյական ոյժերի տեսակէտով եւ ընդունակ չէ գնահատել գաղափարական հաւատարմութիւնը:

Եւ իրօք, եւրոպական դիւանագիտութիւնը միայն արիւն եւ չարիք սերմանեց: Դա բարոյապէս զինաթափեց քրիստոնեաներին եւ թուրքերին ներշնչեց նրանց վրէժի նշաւակ դարձնելու վստահութիւնը:

Ահա մի քանիսը տխուր այդ փաստերից:

1877-Ի ՌՈՒՍ ԵՒ ԹՈՒՐՔ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թուրքերի համար ներքին քրիստոնեաներին աւելի հետեւողականօրէն ոչնչացնելու առիթը նուիրագործեցին 1877-ի ռուս-թուրքական պատերազմը եւ սրա հետեւանքով կայացած «Բերլինի Վեհաժողով»-ը (1878 յունիս - յուլիս):

Այս պատերազմի խմորումն ինքնին ահաւոր վտանգներ էր ստեղծել հայ ազգի համար: Հայաստանը դարձել էր անգլեռուս մրցակցութեան գլխաւոր մի թատերավայրը: Երկու պետութիւններն էլ լաւ էին ըմբռնել իրանց զոհի քրիստոնէական տկարութիւնը - «անձնուէր միամտօրէն՝ մինչեւ սուրբ լինելու աստիճան», ինչպէս Հերցէնն է որակում հայ ազատագրութեան գործիչներից Նալբանդեանցին: Նրանք օգտւում էին հայ գաղափարապաշտների ազգային այդ գծից եւ նրանց մօտենում խաչով, Աւետարանով: Երկուսն էլ խոստանում էին՝ ազատութիւն իսլամական լծից:

Կ. Պոլսում իրար դէմ գործում էին անգլիական եւ ռուսական դեսպանները՝ էլիոտը, ապա Լայարդն ու Իգնատիեւը: Վերջինը՝ հազուադէպօրէն գործունեայ եւ շնորհալի ռուս դիւանագէտ՝ անօրինակ ազդեցութիւն էր ձեռք բերել թուրքական մայրաքաղաքում եւ արժանացել «Երկրորդ Սուլթան» որակման: Նրա առաքելու-

թիւնն էր.

1) Վերականգնել Խրիմի ձախողանքից յետոյ Ռուսաստանի անկեալ վարկն ու ազդեցութիւնը Թուրքիայում:

2) Խաղաղ նուաճումով ձեռք բերել նեղուցների տիրապետութիւնը:

3) Այդ նպատակի համար որպէս հիմնական միջոց՝ իրականացնել Թուրքիայի քրիստոնեաների - բուլղարների, հայերի եւ յոյների – ինքնավարութիւնը, Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ:

Լայարդն իր կառավարութեան կողմից հայերին խոստանում էր «ինքնավարութիւն»՝ շեշտելով, թէ Հայաստանը պէտք է լինի թումբ պետութիւն՝ Ռուսաստանի եւ Բրիտանական Կայսրութեան ասիական կալուածների միջեւ, որպէսզի թէ՛ հայերի ազգութիւնը կուլ չգնայ ռուսների կողմից, թէ՛ Հնդկաստանի ճանապարհը պաշտպանուի:

Թուրքիայի քրիստոնեաների դժբախտութեան պատճառներից մէկն այն բանում էր, որ այդ օրերին անգլիական կառավարութեան գլուխը կանգնած էր հրեայ Դիզրայէլին: Այնժամ, չծագեցին հոգեգիտական հարցեր: Կարելի՞ է առանց հաշուի դաւանափոխ լինել: Կարո՞ղ է դաւանափոխը նոր կրօնի բարոյականով կառավարել իր բնազդները: Դիզրայէլին պատանի էր, երբ քրիստոնեայ դարձաւ եւ հասուն մարդ էր, երբ ասաց. *«Ցեղն է պատմութեան բանալին»*: Նա չուզեց ասել երկրորդ ճշմարտութիւնը, թէ՝ ցեղն է միաժամանակ մարդկային ոգու գաղտնիքների կղպանքը: Դրանով նա կարողացաւ պահել անգլիական քաղաքական գործչի իր խորհրդաւորութիւնը եւ բրիտանական կայսերապաշտական ոգին հանել քրիստոնէութեան դատի դէմ: Եւ ողբերգութիւնը նրանում էր, որ քրիստոնեաներն Անգլիայում տեսնում էին Գլադստոնի խղճմտանքի տիրապետութիւնը:

Հոսում են քրիստոնեաների արեան հեղեղները: Գլադստոնը խօսում է «բուլղարական սարսափներ»-ի մասին, եւ Դիզրայէլին արդարացնում է թուրքերին, առնուազն մեղադրում է՛ զոհերին: Դեսպան էլիոտը պարզապէս ջարդարարների խորհրդականն է եւ լրագրող Մակ-Գարոնը մերկացնում է նրան՝ նկարագրելով գործուած *«գազանութիւնները Բուլգարիայում»*:

Ռուսները 12 ապրիլ 1877թ. պատերազմ են հռչակում Թուրքիային: Նրանց զինուորական հրամանագիրն ասում է. *«Հարիւրաւոր տարիներից թուրքական լուծը ծանրացել է քրիստոնեայ մեր եղբայրների վրայ: Դառն է նրանց դրութիւնը... Քրիստոսի սուրբ հաւատը, պատուաւոր անունը, քրտինքով եւ արիւնով ձեռք բերած բարիքը - ամէն ինչ հայհոյուած է եւ պղծուած անհաւատների ձեռքով»...*

Գեղեցիկ, սրտառուչ, նաեւ ճշմարիտ խօսքեր: Փրկութեան կարօտ մարդկանց տկարութիւնն է միշտ հաւատալ, որ հզօրների ոսկի խօսքերին յաջորդելու են ոսկի գործեր:

Ցնցւում է ե՛ւ հայ ժողովուրդը: Կովկասի ռուսական բանակը ղեկավարում են հայ զօրավարները՝ Լորիս Մելիքեան, Տէր-Ղուկասեան, Լազարեան: Դրանք իրանց հայ սպաներով գնում են Էջմիածին, ստանում են Հայոց Կաթողիկոսի օրհնութիւնը: Նրանք հաւատացած են, որ սրբազան այդ պատերազմով կը փրկուի ե՛ւ իրանց ազգը:

«ՍԱՆ ՍՏԵՓԱՆՕ» - «ԿԻՊՐՈՍ» - «ԲԵՐԼԻՆ»

Բայց ահա՛ «Սան Ստեֆանօն»: Աշխատում են Կովկասի հայերը, Էջմիածինը, Կ. Պոլսի Պատրիարքարանը: Թուրքիայի հայ հոգեւորական պետերը դիմում են Ալեքսանդր Բ. կայսեր: Ռուսները ծանօթ են հայոց գեր-քրիստոնէական զգացումներին, հաւատարմութեան: Ռուսական բանակի ընդհանուր հրամանատար Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչն ասում է Ադրիանուպոլսի հայոց առաջնորդ Գէորգ Ռուսճուկլեան վարդապետին. *«Կայսեր՝ եղբօրս հեռագրեցի, թէ հայերի ցոյց տուած ընդունելութիւնը, սէրը եւ համակրութիւնը չտեսայ ո՛չ յոյների, ո՛չ էլ այլ ազգերի մօտ: Մի քանի օրից կը լինեմ Սան Ստեֆանօ եւ մօտ ձեր Պատրիարքին: Ձեր հարցը եւ յոյսն ի դերեւ պիտի չելնեն, անհո՛գ եղէք, եղբօրս հետ բանակցութեան մէջ ենք»:*

Բայց «բանակցութեան» մէջ էր ե՛ւ Դիզրայէլին: Ռուսաստանի ձեռքով փրկուած Հայաստան - դա պիտի նշանակէր Հնդկաստանի ճամբաների կորուստ:

Սան Ստեֆանոյի դաշնագիրը կնքուեց հայ Տատեանի ապարանքում, յուսախաբութեան մատնելով տան տիրոջը եւ իր բոլոր ազգակիցներին: Ռուսներն հարկադրուել էին դաշնագրի 16-րդ յօդուածի երկդիմի խօսքերով մխիթարել հայերին. *«Նկատելով, որ ռուս զօրքերի Հայաստանում գրաւած, բայց Թուրքիային վերադարձուելիք հողերից մեկնելը կարող է կռիւների եւ երկու պետութիւնների բարեկամական յարաբերութիւններին վնաս բերող կնճիռների ծնունդ տալ, Բարձրագոյն Դուռը պարտաւորութիւն է ստանձնում՝ հայերի բնակած գաւառներում տեղական կարիքների պահանջած բարւոքումներն ու բարենորոգումները գործադրել առանց այլեւս յապաղելու, եւ նրանց ապահովութիւն երաշխաւորել քիւրդերի եւ չերքէզների դէմ»:*

Ուրեմն, դիւանագիտական վարագոյրի ետեւ գործող մութ մի ոյժ

հարկադրել էր ռուսներին՝ հրաժարուել Հայաստանից: Դառնօրէն խաբուել, զոհուել էին հայերը, որոնց ռուսները թելադրում էին միջամտութիւն յարուցող *«կռիւներ եւ կնճիռներ»* ստեղծել: Սա հաշտութեան դաշինք չէ երկու պետութիւնների միջեւ, այլ՝ դաւադրութիւն մի երրորդի, այս դէպքում՝ պետական կեանքից զուրկ հայ ժողովրդի դէմ:

Հայերին մնում էր երկու ելք. 1) դիմել Եւրոպայի միջամտութեան, 2) ռուսական զօրքի հետ՝ լքել Թուրքիային վերադարձուելիք հայրենի գաւառները:

Եւրոպայի միջամտութեան դիմելը գալիս էր թէ՛ Անգլիայի, թէ՛ Ռուսաստանի հաշուին:

Սան Ստեֆանոյի դաշնագրով Ռուսաստանը չէր ստացել այն ամէնը, ինչ ցանկանում էր. ուստի՝ յաւակնում էր հայերի բողոքի շնորհիւ Եւրոպայում հաճութիւն ստեղծել աւելի լայն նուաճումների համար: Իսկ Դիզրայէլին ահազանգ էր բարձրացնում, որ Բալկաններում ռուսական ազդեցութիւնը հասել է Եգէական, Հայաստանում՝ նրան է մնացել Բայազէդի շրջանը, այսինքն՝ Հայկական Բարձրաւանդակի կենտրոնական մարզը եւ Տրապիզոն-Իրան անդրանցական ուղու մի մասը: Դիզրայէլին էլ ուզում էր եւրոպական միջամտութիւն եւ դրա գլխաւոր մի առիթը համարում էր Հայկական Խնդիրը:

Հայերն զգում էին, որ գտնւում են կրակի ու ջրի միջեւ: Այլ բան չէր մնում նրանց, քան Եւրոպա գնացող իրանց պատուիրակութեան գլուխը կարգել ոչ թէ մի դիւանագէտ, այլ՝ մի բարոյագէտ-իմաստասէր՝ Խրիմեան Հայրիկը, որն ասում էր. *«Եւրոպացիներին պիտի խօսիմ միայն լացի լեզուով»*: Լա՛ց իսլամական լծի տակ տառապող քրիստոնեաների համար, բայց լա՛ց նաեւ Եւրոպայի քրիստոնէական բարոյականի վրայ:

Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ներսէսը քրիստոնէութեան համար կործանարար անգլեւռուս մրցակցութեան վերջ տալու յոյսով, գրում էր Բերլինի Վեհաժողովի նախագահ Բիսմարկին. *«Հայաստանում չէզոք շրջան ստեղծելով, եթէ ապագայ կռիւների առաջքը բոլորովին չառնուի, երկու կողմի գրգռութիւնը գէթ պիտի պակսի»:*

Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի պատուիրակներն այցելեցին Պետերբուրգ, Լոնդոն, Հռոմ, Փարիզ, Վիէննա եւ հաւաքուեցին Բերլին, ուր տեղի պիտի ունենար եւրոպական վեց մեծ ոյժերի վեհաժողովը: Ամէն տեղ լաւ ընդունելութիւն, մասնաւորաբար Լոնդոնում. միտինգներ, ցոյցեր, հանդիպումներ, խոստումներ:

Խրիմեանի «լացի լեզուն» հասկանում էին՝ Անգլիայում Գլադստո-

նը, Գերմանիայում՝ Բիւլովը: Դրանից ազդւում էին նաեւ Վիկտորիա թագուհին, գերման կայսրուհին, որոնք խոստանում էին միջամտել քրիստոնեաների փրկութեան համար:

Բայց հարցի լուծումը կախուած էր Ռուսաստանի եւ Անգլիայի արտաքին քաղաքականութիւնը վարողներից: Ռուսները վախենում էին Խրիմի նախընթացից եւ իրանց զէնքի փայլուն յաղթանակը վերածում էին դիւանագիտական անարգ պարտութեան: Շուվալովն այլեւս Սալիզբուրիի կամակատարն է: Օգտուելով այդ յաջողութիւնից՝ Դիզրայէլին սկսում է հակահայ աշխատանք, թոյն սրսկելով Անգլիայում, որ *«հայերը գործիք են ռուս քաղաքականութեան ձեռքում»,* իսկ նեղսրտած Ալեքսանդր Բ. կայսրը, Պետերբուրգում, Խորէն Նարբէյ եպիսկոպոսին իր դառնութիւնն էր յայտնում. *«Հայերն ընդդիմանում են ռուսական ծրագրին»,* այսինքն՝ Անգլիայի հետ են:

Հայ իմաստասէր Խրիմեանը չէր մոռացել այցելել ե՛ւ Լոնդոնի կենդանաբանական պարտէզը: Դիտել էր վագրերի կերակրումը – հզօր վագրը մռմռալով լափում էր մսի մեծ պատառը եւ կատաղում էր, երբ փորձում էին տալ նաեւ տկար վագրի բաժինը: Հարցնում է իմաստասէրը. «Անօթի՞ պիտի մնայ այս կենդանին»: Մատակարարը պատասխանում է. «Ո՛չ, բայց նա իր բաժինը պիտի ստանայ, երբ յագեցած է մեծ վագրը»: Եւ իմաստասէր-բարոյախօսը գրում է իր ժողովրդին հետեւեալ եզրակացութիւնը Եւրոպայի դիւանագիտութեան մասին. *«Այս քաղաքակիրթ աշխարհիս մէջ մարդագէլներ պիտի ուտեն Թուրքաստանի մեծ կտոր միսերը, զրկեալ հայուն գէթ կտորիկ մը ոսկոր պիտի թողո՞ւն»:*

Հայկական Հարցը «լուծւում» էր Բերլինի Վեհաժողովի յուլիս 8-ի նիստում: Դրանից ամիս առաջ, յունիս 4-ին, Կ. Պոլսում Անգլիայի եւ Թուրքիայի միջեւ կնքուել էր հետեւեալ դաշնագիրը. *«Եթէ Ռուսաստանը, իր ձեռքում պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը... այսուհետեւ փորձի տիրել Ն. Կ. Մ. Սուլթանի Ասիական որեւէ երկրի... Անգլիան պարտաւորւում է միանալ Ն. Կ. Մ. Սուլթանին՝ զէնքի ոյժով այդ երկրները պաշտպանելու համար»:* Եւ աւելացւում էր՝ *«որպէս փոխարինութիւն»* սուլթանը խոստանում է մտցնել անհրաժեշտ բարենորոգումները *«քրիստոնեաների եւ այլ հպատակների»* բարւօք կառավարման համար եւ *«որպէսզի Անգլիան իր պարտաւորութիւնները կատարելու համար հարկաւոր միջոցներն ապահովի, Ն. Կ. Մ. Սուլթանը հաւանութիւն է տալիս նոյնպէս, որ Կիպրոս կղզին գրաւուի եւ կառավարուի Անգլիայի կողմից»:*

Բացի այսպէս կոչուած «կիպրոսեան» այս դաշնագրի կնքումից,

դիւանագիտական վարագոյրի ետեւ տարւում էր եւ այլ աշխատանք: Թուրքիայի «պաշտպան» Սալիզբուրին ձեռք էր առնում *«Հայաստանի փրկութեան ուխտով»* Բերլին եկած Ֆրանսիական Հանրապետութեան ներկայացուցիչ, արտաքին գործերի նախարար Վադինգտոնին, սրա հետ նաեւ՝ Իտալիայի ներկայացուցիչին՝ նրանց առաջ դնելով թուրքական ափրիկեան կայսրութիւնը բաժանելու ծրագիրը. *«Եգիպտոսը՝ Անգլիային, Թունիսը՝ Ֆրանսիային, Տրիպոլին՝ Իտալիային»:* Լուռ էր այլեւս Վադինգտոնը: Շահուած էր եւ Իտալիան: Աւստրիան դէմ էր արդէն Ռուսիայի ազդեցութեան հզօրացմանը Բալկաններում: Բիսմարկն անմասն այս սակարկութիւններին՝ նախագահի իր պաշտօնը վարում էր ամենից աւելի Եւրոպայի քաղաքական ներդաշնակութիւնը փրկելու մտահոգութիւնով: Շուվալովին մնում էր *«վախ յայտնել»,* որ ռուսական զօրքերի հեռանալը, խոստացուած բարենորոգումների կիրարկումից առաջ, կարող է խռովութիւնների պատճառ դառնալ: Սալիզբուրին յայտարարում է, որ *«հայերի շահերը պէտք է պաշտպանուեն»:*

Ծանօթ այլեւս իրերի կացութեանը Եւրոպայում՝ Աբդիւլ Համիդը Հայոց Պատրիարքարանից ստիպողաբար պահանջում է ետ կանչել հայկական պատուիրակութիւնը: Եւ Ներսէս Պատրիարքը, որ դեռ հաւատում էր Նախախնամութեան, պատասխանում է. *«Աւելի շուտ կը համաձայնիմ կախուիլ պատրիարքարանի դրան վրայ, քան թէ կատարել այդ քայլը»:* Բայց Նախախնամութեան ձայնը լսելի է միայն սրբերին. նրա կամքը գործում է յաւիտենազգաց ոգիների մէջ: Ներսէս Պատրիարքի սխալը նրանում էր, որ ինքն որպէս իմացապաշտ ոգի՝ չէր կարող հաշտուել այն մտքին, թէ եւրոպական հանճարն առաջնորդւում է միայն չոր ներկայապաշտութեամբ:

Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածն ասում է. *«Բարձրագոյն Դուռը պարտականութիւն է ստանձնում առանց այլեւս յապաղելու, գործադրել այն բարւոքումներն ու բարենորոգումները, որոնք տեղական պէտքերն են պահանջում հայերի ապրած գաւառներում, եւ հայերի ապահովութիւնն երաշխաւորել քիւրդերի եւ չերքէզների դէմ: Այս նպատակով ձեռք առած միջոցները (Բարձրագոյն Դուռը) պարբերաբար պիտի ծանուցանի պետութիւններին, որոնք պիտի հսկեն նրանց գործադրութեան վրայ»:*

Ո՛ւր որոշումների մէջ անորոշութիւն կայ, այնտեղ չկա՛յ պարտականութիւն: Ո՛ւր պարտականութիւն չկայ, այնտեղ չի՛ կարող լինել ո՛չ պատասխանատուութիւն, ո՛չ էլ հսկողութեան իրաւունք: Եւ վերջապէս, բառախաղը քաղաքականութեան մէջ, միայն ոճիր է սերմա-

նում:

Այսպէս՝ ջնջւում է «Սան Ստեֆանոյի» դաշնագիրը: Կրճատւում են Բուլղարիայի սահմանները. ռուս զօրքը հեռանալու է ո՛չ միայն Կարինից, այլեւ Բայազէդից: Թուրքիայի քրիստոնեաների պաշտպանութիւնը հռչակւում է եւրոպական բոլոր մեծ ոյժերի եւ ո՛չ թէ միայն Ռուսիայի մենաշնորհը: Հայաստանի համար նախագծւում են «բարենորոգումներ», գործադրելի Օսմանեան Դրան կողմից՝ եւրոպական ոյժերի վերահսկողութեամբ: Դիզրայէլին վերադառնում է Լոնդոն եւ ընդունւում է ինչպէս յաղթական կեսարները Հռովմում, իսկ Հայաստանում ոճիրների ամբողջ մի դժոխք է պայթում հայ ժողովրդի գլխին:

ԴԱՌՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

Ռուսական բանակն հեռանում է թուրքաց Հայաստանի գրաւուած մասերից: Հայերն այրում են իրանց տները, հացահատիկը, յարդը, խոտը, վերցնում են մի-մի բուռ հող իրանց հայրերի գերեզմաններից, համբուրում են հայրենի յիշատակարանները եւ իրանց սրտերում պայթած դարաւոր ցաւի հռնդիւններով բռնում են ռուսաց Հայաստանի ճամբարները: Բոցերի մէջ է ամբողջ մի աշխարհ եւ տասնեակ հազարների, հարիւր հազարների մարդկային կարաւաններն արցունքի հեղեղներով գալարւում են ծխով բռնուած մի երկնքի տակ:

Սահմանագլխին նրանց դէմ ցցւում է ռուսական սուինը - «ե՛տ»: Ռուսական դիւանագիտութիւնը գիւտ էր արել. «Հայերը պետք է վերադառնան իրանց տեղերը, որպէսզի Հայկական Հարցը կենդանի մնայ ռուսեւթուրք նոր սահմանագլխին եւ միջամտութեան նոր առիթներ ընծայի»:

Անգլիան էլ չէր ցանկանում հայերի տեղափոխումը, որպէսզի ինքն եւս չկորցնի Թուրքիայում միջամտելու առիթները:

Ռուսաստանը հաւատում է Թուրքիայի հայերի միջոցով մի օր կրկին իջնել դէպի հարաւ, Անգլիան մտածում է նոյն այդ հայերի սիրաշահումով վտանգել ե՛ւ Ռուսաստանի տիրապետութիւնը, Կովկասում:

Եւ ահա՛ հայերին պարտադրւում է վերադառնալ եւ նստել մոխիրների վրայ:

Միմեանց դէմ քաղաքական դաւեր լարելով՝ եւրոպական պետութիւնները հայերին յանձնեցին իսլամի վրէժխնդրութեան: Կրօնապէս պատուախնդիր մարդկանց թէ ժողովուրդների համար զարհուրելին ո՛չ թէ թշնամուց կրած նահատակութեան տանջանքն է, այլ՝ հաւատակիցների դաւաճանութեան պատճառած ցաւը: Հայոց պատմութիւնը,

մօտաւորապէս բիւզանդական շրջանից, լի է լքումի փաստերով: Դրանք երբեմն արագացուել են տկարութեամբ, մինչդեռ այժմ դաւաճանութիւնը կատարւում էր քրիստոնեայ ոյժերի զօրութեան մոլուցքից: Այս իրողութիւնը պիտի ունենար հոգեբանական ծանր անդրադարձումներ: Տառապած, բայց հպարտութիւնը չկորցրած մարդկանց պէս՝ ազգերն էլ նախընտրում են սպանուել թշնամուց, քան թէ կրել բարեկամի վիրաւորանքը: Հայն իր հոգին էր կարդացել եւրոպացու սրտում եւ այժմ նրան տեսնում էր իսլամի զինակցի եւ քրիստոնեաների մտաւորական սպանիչի դերում: Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը քաղաքական արժէքի տեսակէտով թղթէ մի խօսք էր, բարոյական առումով՝ արիւնոտ մի հեգնանք, անարգ մի մահավճիռ հայ ժողովրդի վզից: Դա կրում էր կնիքը խարդախ այն գործերի, որոնց հեղինակները մտածելուց առաջ որոշել են խզել ամէն կապ Աստծու եւ պատասխանատուութեան զգացումի հետ: Անիրաւ մի դատաւոր աւելի՛ մեծ յոռետեսութիւն է սփռում կեանքում, աւելի՛ է քանդում մարդկանց հոգիները, ստորացնում ճակատագիրը, մահափորձի ենթարկում հաւատը դէպի բարոյականը, վիրաւորում արդարութեան, սրբութեան զգացումը, քան հազար-հազար ոճրագործներ՝ միասին: Եւ, վերջապէս, Յուդաները չարագործում են, որովհետեւ փարիսեցիներ կան, իսկ սրանք օրինականացնում են չարիքը, որովհետեւ Պիղատոսներ կան: Բերլինի դաշնագրում խօսուած է քիւրդերի եւ չերքէզների մասին եւ հայերի պաշտպանութիւնը վստահուած է բուն ոճրագործին՝ թուրք իշխանութեան: Դրանից յետոյ, Աբդիւլ Համիդն իրաւունք ունէր հետեւել «տրամաբանութեան կարգ»-ին եւ աչքի ընկած աւազակներին, մարդասպաններին տալ աստիճաններ, շքանշաններ:

Բարոյականի ծաղրանքը հզօրների կողմից՝ տառապեալների մէջ ստեղծում է ցասումի յուսալքութիւն - մի հոգեվիճակ, որ սնուցում է անտարբերութիւնը՝ դէպի ճակատագրի չարիքները եւ յաճախ յանգում է մինչեւ իսկ նահատակութեան բաղձանքի: Եղերական վայրկեաններին ազդու դարձող այդպիսի մի հոգեվիճակով հայերը պիտի վերենթարկուէին օսմանեան իշխանութեան:

Կարինի, Բայազէդի շրջանները վերագրաւող թուրք զօրքին հետեւում էր մահմեդական զինուած խուժանը՝ թուրքեր, թաթարներ, չերքէզներ, չեչեններ՝ Բուլղարիայից, Կարսի շրջանից եւ քիւրդեր՝ Հայաստանի հարաւային գաւառներից, մինչեւ իսկ Քիւրդիստանից: Նրանց հետ քայլում էր մոլեռանդութեան, վրէժի, կողոպուտի եւ ոճրագործումի ոգին: Նրանք փախել էին զինուած քրիստոնեաներից եւ այժմ գործ ունէին անզէն քրիստոնեաների հետ:

«Ձեր սուտ կրօնի անհաւատ թագաւորների օգնութեա՞ն դիմեցիք. ահա՛ նրանց օգնութիւնը»... եւ դաշոյնի հարուածներ, խարազանում, բռնաբարումներ, բռնագրաւումներ: Իշխանութեան պաշտօնն էր վայրագութիւնների դէմ բողոքող կամ նրանց ընդդիմացող հայերին բանտարկել եւ որպէս ապստամբների «օրէնքով» պատժել:

Թուրքերի վերահաստատման դեռ առաջին օրերին անգլիական հիւպատոսները գրում էին իրանց կառավարութեան. *«Քրիստոնեաների ներկայ վիճակն աւելի՛ է վատ, քան երբեւէ եղել է»: «Ամէն տեղ, իւրաքանչիւր քայլափոխին, կործանումի եւ բռնութեան ոգին է յայտնւում հազարաւոր ձեւերի տակ»* (հիւպատոս Տրոտըրի 1878-ի աշնան տեղեկագրերից):

ՍԱԼԻԶԲՈՒՐԻ ՓՈՐՁԵՐԸ

Բերլինի դաշնագիրը ստորագրած եւրոպական պետական գործիչներից Սալիզբուրին է թերեւս միայն տառապում Անգլիայի շահած դիւանագիտական յաղթանակի դառն, արիւնոտ այս պտուղներից: Նրա եւ Դիզրայէլիի միջեւ սկսւում է քրիստոնեայ անգլիացու եւ դաւանափոխ հրեայի ոգիների խուլ հակամարտութիւնը, թէպէտեւ սեղմուած պատշաճութեան ձեւերի եւ կայսրութեան ընդհանուր շահերի հաշւառման սահմաններում: Սալիզբուրին ուզում է թէ՛ Թուրքիայի քրիստոնեաները փրկել, թէ՛ ռուսական արշաւի առաջն առնել: Դիզրայէլին մտահոգուած է միայն վերջինով եւ ելքը տեսնում է իսլամ տարրերի ուժեղացման մէջ՝ քրիստոնեաների հաշուին: Նա դիմում է օրինական անզօր միջոցների, սա՝ դաւադրութեան:

Սալիզբուրին հրապարակ է քաշում Կիպրոսի դաշնագիրը: Մշակում է բարենորոգումների մի ծրագիր եւ պարտադրում թուրքերին: Սուլթանը, սակայն, իրագործումը կապում է նիւթական միջոցների հետ եւ խնդրում է 6 միլիոն ոսկու փոխառութիւն: Սալիզբուրին համաձայնւում է, բայց անգլիական դրամատներն ու դրամատէրերը, դրդուած Դիզրայէլուց եւ արդէն անյուսօրէն պարտապահանջ թուրքերից, զլանում են նոր վարկ բանալ: Այսպիսով, մարդկային ողբերգութիւնը վերածւում է նիւթական զաւեշտի:

Սալիզբուրին, սակայն, դիմեց նոր կիսամիջոցների: Նա աւելացրեց անգլիական հիւպատոսների թիւը եւ հրահանգեց նրանց մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձնել Թուրքիայի քրիստոնեաների դրութիւնը եւ պահանջուած դէպքերում միջամտել՝ զեղծումներին, բռնութիւններին վերջ տալու նպատակով: Միաժամանակ, նա պար-

տադրեց սուլթանին նշանակել եւրոպացի ոստիկանական մի հրամանատար եւ երկու լիազօրներ,- մի հայ եւ մի թուրք,- Հայաստանի դրութիւնը քննելու եւ պահանջուած բարենորոգումների ձեւերն ու բովանդակութիւնը ճշդելու համար: Այս քայլերն ունեցան դրական իրանց արդիւնքները, բայց շա՛տ կարճ ժամանակի համար:

Լիազօրները Հայաստան հասան 1879-ի գարնան: Կարինում թէ այլուր, նրանք լսեցին հայերի պահանջները. վալիները՝ հայ: Նրանց նշանակումը սուլթանից, բայց՝ Հայոց Պատրիարքի համաձայնութեամբ: Պետական հաստատութիւնների մէջ հայեւթուրք լեզուների հաւասարիրաւութիւն: Պաշտօնէութեան եւ ոստիկանութեան կէսը քրիստոնեայ, կէսը՝ մահմեդական: Կառավարութեան կողմից զինուած քիւրդ հրոսախմբերի զինաթափում եւն., եւն.:

Բայց հենց այդ օրերին դեսպան Լայարդը գրում է Սալիզբուրիին. *«Այժմ դաւեր են մղւում Փոքր Ասիայում, ինչպէս այն նպատակով, որ հայոց ազգութիւնը վերականգնեն, այդպէս էլ այն, որ առաջացնեն իրերի այնպիսի դասաւորում, որ սարսափի աղաղակ խլէ քրիստոնեայ ամբողջ ազգաբնակչութիւնից եւ յանգի եւրոպական միջամտութեան: Ես մի քանի անգամ նախազգուշացրել եմ թուրք նախարարներին, որ եթէ նրանք չշտապեն իրագործել Բերլինի դաշնագրի հայերին վերաբերեալ որոշումները, նոյնպէս ե՛ւ յունիս 4-ի դաշնագրինը, եւ վերջապէս, եթէ նրանք ձեռք չառնեն քրիստոնեաների պաշտպանութեան համար անհրաժեշտ միջոցները Փոքր Ասիայում, պիտի տեսնեն, բայց արդէն շատ ուշ, որ սուլթանը ենթարկուած է այդ նահանգներից ոմանցից զրկուելու վտանգին»:*

Արտաքուստ հայասիրական այս ելոյթով դեսպան Լայարդը մոլորանքի եւ սարսափի է մատնում իր ղեկավարին ինչ-որ ռուսական վտանգով: Նա գիտի, որ Բերլինի դաշնագիրը լքուած, մոռացութեան է տրուած ստորագրողների կողմից, եւ այս քայլով ուզում է հենց նոյն ճակատագրին ենթարկել ե՛ւ կիպրոսեան յունիս 4-ի դաշնագիրը, որի ոյժով Սալիզբուրին փորձում էր փրկել Թուրքիայի քրիստոնեաների դրութիւնը:

Յաղթանակել էր Դիզրայէլին, եւ Աբդիւլ Համիդն այլեւս չէր վախենում Սալիզբուրիի սպառնալիքներից: Լայարդի այս գրութիւնից յետոյ, թուրք կառավարութիւնը վերջ է տալիս «բարենորոգչական» փորձերին, ետ է կանչում լիազօրներին, հեռացնում է ոստիկանութեան եւրոպացի պետին, արգելում է հայ թերթերին գրել Հայաստանում կատարուած բռնութիւնների եւ կողոպուտների մասին, արգելում է արտասահմանի հայ թերթերի մուտքը Թուրքիա, հալածանքի է

ենթարկում հայ դպրոցը եւ կրթական ընկերութիւնները, պահանջ է դնում Կ. Պոլսի Հայոց Պատրիարքին՝ յարաբերութիւններ չպահել օտար պետութեանց հետ, չգործածել «Հայաստան» բառը, եւ, վերջապէս, պաշտօնականացնում է սարսափի իշխանութիւնը հայկական նահանգներում:

Ծայրայեղ չափերի է հասնում մասնաւորապէս հողերի բռնագրաւումը՝ կապուած Թուրքիայում իսկ անօրինակ դաժանութիւնների հետ: Հայ գիւղերը դատարկւում են: Հայերի տներում ու հողերի վրայ հաստատւում են մահմեդական գաղթականները եւ վաչկատուն քիւրդերը:

Գաւառներից Պոլիս են հասնում սարսափի եւ բողոքի ահաւոր ճիչեր: Ներսէս Պատրիարքը դիմում է քրիստոնեայ պետութիւնների դեսպաններին: Լայարդը պատասխանում է նրան. *«Իբրեւ մահմեդական պետութիւն՝ Թուրքիան ապաստան է տալիս իր կրօնակից փախստականներին. ի՞նչ կարելի է ասել դրա դէմ»:*

Դիզրայէլին լուծած էր հայոց հարցը: Նա համաձայնուել եւ ներշնչել էր տաճիկներին՝ քրիստոնեաների աստիճանական ջնջումով վերացնել ռուսների դէպի հարաւ թափանցելու կարելիութիւնները:

ԳԼԱԴՍՏՈՆԻ ՓՈՐՁԵՐԸ

Բայց մարդիկ իրանց մեղքերի մի մասը քաւում են դեռ այս աշխարհում: Դիզրայէլիի թրքասիրութիւնը ներքուստ աւելի եւս տկարացրեց Պահպանողական կուսակցութիւնը: Իշխանութեան գլուխ եկաւ Գլադստոնը: Պոլսից հեռացաւ *«իսլամներին ցնծացող»* Լայարդը եւ նրա տեղը գրաւեց *«քրիստոնէասէր»* Գոշէնը:

Գլադստոնը, որի ասպարէզ գալը քրիստոնեաներն ընդունեցին որպէս Նախախնամութեան մի այցելութիւն, պահանջում է Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի գործադրումը: Նա խանդավառւում է այն բանով, որ դաշնագիրն ստորագրող մեծ պետութիւններն անխտիր ընդառաջեցին իր կոչին: Նրանց դեսպանները, միանման ծանուցագրերով եւ միաժամանակ, յիշեցնում են Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը եւ հարց տալիս թուրք կառավարութեան, թէ ի՞նչ է ձեռնարկուած հայերի դրութիւնը բարելաւելու համար:

Թէպէտեւ կրակների մէջ էր Հայաստանը, բայց եւրոպական ոյժերի միացեալ այս շարժուձեւը գալիս էր հայերին մխիթարելու, թէ աշխարհում դեռ կենդանի են քրիստոնէական ոգին եւ բարոյականը: Տառա-

պանքն ստեղծում է նաեւ յատուկ մի զգայնութիւն, որի շնորհիւ ենթական անկեղծ խօսքից նոյնքան բարոյական բաւարարութիւն է ստանում, որքան ազնիւ գործից: Առանց այդ էլ հայերն այլեւս Եւրոպայից գործ չէին սպասում, այլ՝ միայն ազնիւ կեցուածք: Նրանք սարսափում էին ո՛չ թէ քաղաքական, այլ՝ բարոյական հիասթափութիւնից: Նրանք ոյժ ունէին դիմագրաւել թուրքական հալածանքներին, բայց անզօր էին հոգեպէս տանել եւրոպական դաւերի բարոյական հարուածը: Նրանք տեսնում էին, որ Թուրքիան հակահայ իր քայլերի մէջ, յաճախ գօտեպնդւում է հենց եւրոպական այդ դաւերից:

Գլադստոնը ձգտում է ո՛չ միայն վերջ տալ այդ դաւերին, այլեւ հայկական ողբերգութեան առիթով փորձում է Եւրոպան մի միութեան վերածելու կարելիութիւնները: Բայց մեծ երազողներին յաճախ պակասում է գործնականի զգացումը, ամենափոքր չափով: Նա աւելի բարձր կարծիք ունէր Եւրոպայի մարդկայնական առաքելութիւնների մասին, ուստի եւ՝ չկարողացաւ հասկանալ, որ կայսերակալումի տենդով բռնուած մի աշխարհում տիրում է իրական շահերի հակամարտութիւն, իսկ ուր այսպէս է, այնտեղ, թեկուզ «հեռաւոր եղբայրներ»-ի հանդէպ ունեցած պարտականութիւնների խնդրում, բոլորի պատասխանատուութիւնը, ընդհանուր երաշխաւորութիւնը, «վերահսկողութիւն»-ը ասել է՝ ո՛չ ոքի պատասխանատուութիւն, ո՛չ մի երաշխաւորութիւն, ո՛չ մի վերահսկողութիւն: Գլադստոնի համար Հայկական հարցը քաղաքակրթութեան, բարոյականի հարց էր, ուստի, նա դրանում չէր տեսնում ինչպէս անգլիական, այդպէս էլ՝ եւրոպական ուրիշ որեւէ պետութեան քաղաքական շահերի վտանգումը կամ դրանց խաչաձեւումը: Նրա համար կային ազատութեան արժանի տառապեալներ, որոնք պէտք է փրկուէին: Բայց նրա տկարութիւնը հենց թեւաւոր գաղափարապաշտութեան մէջ էր: Դրանում էր ե՛ւ հայերի տկարութիւնը: Եւ ճակատագրի կծու հեգնանքներից է թերեւս – նմանը միշտ էլ հասկանում է նմանի ցաւը, բայց քիչ դէպքերում նմանը կարող է փրկել նմանին:

Թուրք կառավարութիւնը յուլիս 5-ին (1880թ.) պատասխանում է վեց մեծ պետութիւնների յունիս 11-ի ծանուցագրին: Այդ պատասխանագրում, ի միջի այլոց, ասուած է.

«Հակառակ պատերազմին հետեւանք եղող ամէն տեսակ մտազբաղումներին եւ դժուարութեանց՝ կառավարութիւնը Քիւրտիստանի բոլոր կողմերն ուղարկեց ձեռնհաս պաշտօնատարներ, որոնց միակ գործն էր ամէնից աւելի ազդու միջոցներ փնտռելու թէ՛ հայերի եւ թէ՛ կայսրութեան միւս հաւատարիմ հպատակների անդորրութիւնն

ապահովելու...

«Կառավարութեան ուշադրութիւնը գրաւած է կարեւոր մի միջոց - այն է՝ արքուն հսկել կրթութեան եւ հասարակաց աշխատութեանց առաջադիմութեան, որոնք մի երկրի երջանկութեան գլխաւոր սատարն են...

«Ոճիրների պատահումը բնական է աշխարհի բոլոր երկրներում, բայց երբ դրանք գործւում են հայոց բնակած տեղերում՝ կրքոտ մտքերն երեւակայական եղեռնագործութիւններ են հնարում...

«Կառավարութիւնը պիտի անուանէ մի վարիչ (գիւղախմբական ժողովներից), որ իր հրամանի ներքեւ պիտի ունենայ քաղաքապահ զօրք, որի գործը պիտի լինի ապահովել գիւղախմբի կարգն ու անդորրութիւնը, ծերբակալել չարագործներն ու սրիկաները, եւ պաշտպանել բնակիչներն բռնութեան եւ կեղեքումների դէմ...

«Պաշտօնական մարդահամարի արդիւնքից» երեւում է, որ հայկական նահանգների բնակչութեան թիւն է՝ *«հայեր՝ 17%, միւս ոչ-միւսիւլմաններ՝ 4%, միւսիւլմաններ՝ 79%...*

«Բ. Դուռը Բերլինի դաշնադրութիւնն ստորագրող պետութեանց պիտի ծանուցանէ բոլոր այն միջոցները, որ ինքը ձեռք առած է հետզհետէ բարեկարգութիւններ մտցնելու Քիւրտիստանում եւ ասիական նահանգներում, ուր ապրում են նաեւ հայեր»:

Թուրքերը գտել են Եւրոպայի աքիլլէսեան կրունկը եւ պաշտպանւում են հեգնախառն ստերով: Հայաստանը դարձել է «Քիւրտիստան», հայերը՝ փոքրամասնութիւն, նրանց դէմ կազմակերպուած պետական հալածանքը՝ սովորական ոճիր-արկած, ոճիրը՝ բնական երեւոյթ, երկրի միակ մշակութակիր ժողովրդի դպրոցական հաստատութիւնների խափանումը՝ կրթութեան մէջ երջանկութիւն տեսնելու գիտակցութիւն: Եւ այդ բոլորից յետոյ՝ ո՛չ միայն զոհերի տառապանքը, այլեւ աշխարհի զօրաւոր ոյժերի լրջութիւնը, բարոյականը ծաղրող մի փաստաթուղթ ստորագրելու յանդգնութիւն:

Վեց մեծ պետութիւնների դեսպանները թուրք կառավարութեան ուղղուած հաւաքական մի ծանուցագրով (7 սեպտ. 1880թ.), ի միջի այլոց, ասում են. *«Յուլիս 5-ի ծանուցագրի ուշադիր ուսումնասիրութիւնն ապացուցում է, թէ Օսմանեան պետութեան առաջարկութիւնները չեն համապատասխանում Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի ո՛չ ոգուն եւ ո՛չ տառին...*

«Ստորագրողներիս ներկայացրած պետութիւնները գիտեն, որ Օսմ. պետութիւնն երկու յանձնախումբեր ուղարկած է հայաբնակ նահանգները, բայց բանաւոր պատճառներ ունին մտածելու, որ նրանց

պաշտօնը եւ ոչ մի արդիւնք տուած է: Բ. Դուռը հակառակ 61-րդ յօդուածի պարտաւորութիւններին՝ զլացած է իրանց հաղորդել այն կարգադրութիւնները:

«Ոչինչով է ապացուցւում, թէ որեւէ բարւոքում է ներմուծուել արդարադատութեան գործում. ընդհակառակն՝ հիւպատոսական բազմաթիւ տեղեկագրերը հաստատում են, որ դա անցեալի բաղդատմամբ՝ եթէ ոչ յոռեգոյն, գէթ նոյնքան անգոհացուցիչ է:

«Հայաբնակ նահանգներում տեղի ունեցած եղեռնների մասին Բ. Դրան տալ կարծած բացատրութիւնների բառերն իսկ ապացուցում են, որ նա զլանում է խոստովանել տիրող անիշխանութեան աստիճանն եւ երկրի դրութեան ծանրակշռութիւնը, որի յարատեւումը, ամենայն հաւանականութեամբ, առիթ պիտի դառնայ ընդարձակ այդ շրջանների քրիստոնեայ ժողովուրդների բնաջնջման:

«Լայնածաւալ այդ նահանգների մասնաւոր նկարագիրն է քրիստոնեայ տարրի գերիշխանութիւնը. այս իրողութիւնը հաշուի չառնող որեւէ բարենորոգում չի կարող գոհացուցիչ արդիւնքներ ունենալ:

«Ձեր ծանուցագրի մէջ նշանակուած համեմատութիւնը (ազգաբնակչութեան տարրերի թուի մասին) այնչափ տարբեր է ուրիշ տեղեկութիւններից, որ պետութիւնները չեն կարող այն իբրեւ ճշգրիտ ընդունել»:

Սրանով, Եւրոպայի վեց մեծ պետութիւնները միաբան եւ միախորհուրդ յայտարարում են պարզապէս, որ Օսմանեան պետութիւնն ոչ միայն ոճրագործների, այլեւ ստախօսների, խեղաթիւրողների մի ընկերակցութիւն է: Նրանք գիտեն նաեւ, որ քրիստոնեայ ժողովուրդները դատապարտուած են բնաջնջումի: Բայց փոխանակ փրկութեան գործնական միջոցներ առաջարկելու՝ նրանք բաւարարւում են թղթէ սպառնալիքներով ու թուրքերին քաղաքական իմաստութիւն, բարոյական, ճշմարտասիրութիւն եւ արդարամտութիւն քարոզելով:

Շուտով պիտի քանդուէր եւ բարոյական այդ միութիւնը եւ հայ ժողովուրդը մենակ պիտի մնար իր ողբերգութեան մէջ. Գլադստոնը մենակ՝ իր երազների հետ:

Տառապեալների ազատագրումին նպաստելն ենթադրում է սրտի մշակոյթ. մինչդեռ այդ օրերի Եւրոպան իր հանճարի թէ կամքի կոչումը տեսնում էր առաւելապէս նիւթական քաղաքակրթութեան մէջ: Հայկական հարցով ամէնից աւելի զբաղւում էր անգլիական հասարակական կարծիքը: Բայց հենց Անգլիայում Գլադստոնի անձի մէջ աւելի՛ տնտեսագէտն էր գնահատւում, քան՝ բարոյագէտը: Այդ էր պատճառը, որ նա ոչ միայն չկարողացաւ լուծել իրլանդական

«հոմրուլ»-ի հարցը, այլեւ սրա եւ նման խնդիրների կապակցութեամբ՝ մի քանի անդամ կորցրեց պետական ղեկավար գործիչի իր դիրքը: Մնացեալ Եւրոպան աւելի՛ էր ենթակայ իրերի տրամաբանութեան ազդեցութեան: Ամէնուր զգալի էր դառնում *«երկու ոգիների պայքար»-ը.* պառակտւում էր իմաստասիրական մտածումը, գաղափարապաշտութիւնը յայտարարւում էր *«քաղցր սուտ»* եւ քաղաքականութիւնը աւելի ու աւելի էր հեռանում բարոյականից:

Մասնաւորապէս 80-ական թուականներին սերմանուեց այն, ինչ պիտի հնձուէր 1914-ին: Անօրինակ ազդեցութիւն ձեռք բերեց դրամատիրութիւնը: Ազգային տնտեսութիւնն իր տեղը զիջեց համաշխարհայինին եւ կլանուեց սրանից: Նոյնանման յեղաշրջում կրեց քաղաքականութիւնը, որ ազգայինից անցաւ համաշխարհայինի: Հսկայական չափերով զարգացած ճարտարարուեստը պահանջագրեց արտադրութեան համար հում նիւթեր, գերարտադրութեան համար՝ շուկաներ հայթայթելու մոլուցքը: Պետութիւնները վարակուեցին գաղութատիրական տենդով: Նրանք չգտան կրաւորական աշխարհն ըստ կարիքների բաժանելու մի բանաձեւ, այլ իրարից յափշտակեցին՝ ինչ որ դեռեւս մնացել էր Ափրիկէում, Ովկիանիայում թէ այլուր: Նորագրաւ այդ գաղութներում յաճախ գծուեցին անբնական սահմաններ, որով՝ առաջացան շահերի նոր խաչաձեւումներ, նոր հակամարտութիւններ: Ո՛չ միայն ծովային, այլեւ ցամաքային բնութիւն ունեցող երկրների առեւտուրը տեղափոխուեց ծովերի վրայ, որով՝ ազատ ելքը դէպի բաց ծովը, դարձաւ գոյութեան խնդիր: Ստեղծուեց ո՛չ միայն մայր երկիրը, այլեւ գաղութները եւ առեւտուրը պաշտպանելու հարկադրանք: Ձղայնացուցիչ մրցում մտաւ առեւտրի, սպառազինութեան մէջ: Կազմուեցին զինակցութիւններ՝ ներքուստ յենուած նախանձի, արտաքուստ՝ խմբակցական շահերի պաշտպանութեան սկզբունքին: Այդ բոլորին զուգահեռ, շատ տեղերում ընկերային շարժումը վերածուեց գաղտնի, դաւադրական կազմակերպութիւնների: Կառավարութիւնների առաջ դրուեց ներքին ընկերային բարենորոգումների հարցը, որ աւելի հրահրեց դասակարգային հակամարտութիւնների ոգին: Որոշ երկրներում վերարծարծուեցին ե՛ւ ազգային փոքրամասնութեանց խնդիրները: Կարճ՝ պետութիւն լարուեց պետութեան դէմ, զինակցութիւն՝ զինակցութեան, ազգ՝ ազգի, դասակարգ՝ դասակարգի: Հակամարտութեան այս ոգին ընդհանուր իր կնիքը դրեց պատմական իրերի զարգացման վրայ, «իրական շահեր»-ի ըմբռնումը կապուեց տուեալ վայրկեանին, իսկ այսվայրկենապաշտութիւնն ամէն ինչ դարձրեց յարաբերական:

Նման պայմաններում, ամէնից շուտ մոռացւում են բարոյական պարտաւորութիւնները: Քրիստոնեայ պետութիւնների վարիչները, որոնք պիտի նախընտրէին առանձին-առանձին մզկիթ մտնել, քան թէ միասնաբար եկեղեցի՝ շա՛տ բնական կերպով պիտի լքէին եւ Հայկական Հարցը: Այդ դրութիւնը պիտի օգտագործէր Թուրքիան:

Առակ թէ իրական դէպք՝ բայց Աբդիւլ Համիդի հոգեբանութեան թէ թուրքական քաղաքականութեան համար յատկանշական է հետեւեալ պատմութիւնը: Հայկական առաջին (1895-ի) կոտորածներից յետոյ Աբդիւլ Համիդը կարծել է, որ ջնջուել է եւ էլ հնարաւոր չէ հայ յեղափոխական շարժումը: Բայց մի օր նրան յայտնում են, որ ստեղծուել է նոր եւ աւելի՛ զօրաւոր հայկական մի կազմակերպութիւն: *«Ուրեմն, հայերն այժմ երկո՞ւ կուսակցութիւն ունեն»,*- ցնծագին հարցնում է նա: Բանբերի հաստատական պատասխանի վրայ՝ Համիդը մենախօսում է. *«Հիմա կարող եմ հանգիստ քնանալ, որովհետեւ երկու կուսակցութիւններն աւելի իրարի դէմ պիտի կռուեն»*: Նոյնանման պատմութիւն 1912-ին, երբ գահընկէց Սուլթանին առաջարկում են Սալոնիկից տեղափոխուել Կոնիա. *«Աւա՜ղ, Բալկանի քրիստոնեաները միացան»,*- բացականչում է Համիդը եւ աւելացնում. *«Օսմանեան ոյժի գաղտնիքը քրիստոնեաները պառակտուած պահելու հնարամտութեան մէջ է»:* Այդ հնարամտութեան խնդրում Համիդը հանճարի պատիւը վերապահում էր իրան: Բայց յետնորդներն ապացուցեցին, որ գիտեն այդ «գաղտնիք»-ը, եւ այն էլ նրանից ո՛չ պակաս հմտութեամբ:

Եւրոպան զարգացրել է դիւանագիտական շա՛տ նուրբ մի արուեստ, բայց բարբարոսների իշխանութեան մէջ խորամանկութիւնն աւելի՛ մեծ դեր է խաղում: Հայկական բոլոր աղէտները, հալածանքները, կոտորածները զուգադիպել են Եւրոպայի մեծ ոյժերի պառակտումներին: Հաստատ է, որ թուրքերը մի՛շտ էլ ապահովել են եւրոպական այս կամ այն կառավարութեան «բարեացկամութիւն»-ը եւ ապա գործի դրել սուրը՝ հպատակ քրիստոնեաների դէմ: Հաստատ է նոյնպէս, որ երբ Գլադստոնի նման մարդիկ են եղել եւրոպական այս կամ այն կառավարութեան գլուխը՝ նրանք չեն յանդգնել կանանց, երեխաների ջարդեր կազմակերպել, թէկուզ Եւրոպայում բարեկամներ ունեցած լինեն:

Եւ ահա՛ 80-ական թուականներին, Թուրքիան հաշուի էր առնում երկու պարագայ՝ Գլադստոնը եւ պառակտուած Եւրոպան: Առաջինի երկիւղից նա զգուշանում էր կոտորածներ, ցնցող դէպքեր ստեղծել եւ չափաւորում էր հալածանքները հայերի դէմ, երկրորդի քաջալերող անտարբերութիւնից նա յանդգնութիւն էր ձեռք բերում մերժելու

աստիճան ձգձգել հայկական նահանգների բարենորոգումների հարցը: Այդպիսով, հայեւթուրք յարաբերութիւնները ստանում էին տարօրինակ մի հաւասարակշռութեան բնոյթ – հաւասարակշռութիւն վտանգուածութեան խորին զգացումի եւ համեմատաբար զուսպ սպառնալիքի միջեւ:

ՏԽՈՒՐ ՄԻ ՄԻՋՆԱՐԱՐ

Ռուս ոչնչականները 1881թ. սպանեցին Ալեքսանդր Բ. կայսրին – Ռոմանովների հարստութեան վերջին լաւ ներկայացուցչին: Հայերի հետ կապ չունեցող այդ դէպքը տխուր իր հետեւանքները պէտք է ունենար ո՛չ միայն Ռուսաստանի բոլոր ժողովուրդների, այլեւ Թուրքիայի հայութեան ճակատագրի վրայ: Այդ օրերին, ռուսական պետութեան ղեկը գտնւում էր հայ իշխան Լորիս Մելիքեանի ձեռքում: Սա ձգտում էր մի կողմից ռուսական ոչնչականութիւնը, անիշխանական շարժումն արմատախիլ անել, միւս կողմից՝ համոզում էր լուսամիտ Ալեքսանդր Բ. կայսեր՝ ընկերային անհրաժեշտ բարենորոգումներ մտցնել Ռուսաստանում: Նա ռուսական նոր սահմանադրութեան իր ծրագիրն էր մշակում, երբ տեղի ունեցաւ չարաղէտ ոճիրը:

Հակառակ իրանց կրած քաղաքական դառն հիասթափութիւններին, հայերն իբրեւ խորապէս կրօնազգաց եւ քրիստոնէական ամբողջ աշխարհով ապրող ժողովուրդ՝ հոգեհանգիստներ են կատարում օծեալ մի թագաւորի եղերական մահուան առթիւ: Կ. Պոլսի հայոց մայր եկեղեցիում կայացած հոգեհանգստից յետոյ ընդունելութիւն է լինում Պատրիարքարանում, ուր ռուս դեսպան Լոբանով Ռոստովսկին բաժակաճառ է ասում *«Հայաստանի կենաց»:*

Հայ շրջանակներում թէ՛ քաղաքական աշխարհում դեսպանի այս ելոյթը թողնում է ա՛յն տպաւորութիւնը, թէ Ռուսաստանը, Գլադստոնի համաեւրոպական փորձի վիժումից յետոյ, կրկին իր ձեռքն է առնելու Հայկական հարցի տնօրինումը:

Շուտով պատահում է եւ ուրիշ մի դէպք. Անգլիան 1882-ին գրաւում է Եգիպտոսը: Տարի առաջ Ֆրանսիան արդէն տիրել էր Թունիսին: Յոյսեր, ուրեմն, որ քրիստոնեայ պետութիւնները սեղմում են Թուրքիան՝ քայլ առ քայլ առաջանալով դէպի Հայաստան:

Բայց շուտով հայերի վրայ իջնում է հիասթափութեան ծանր մշուշը: Եւ առաջին հիասթափուողները լինում են հենց ռուս զէնքի փայլուն ասպետներից եւ Ռուսաստանը ազատական սկզբունքների վրայ բարեկարգել փորձող Զօր. Լորիս Մելիքեանը եւ Եգիպտոսի

հռչակաւոր բարեկարգիչ եւ անգլիական տիրապետութեան հողը մշակած Նուբար փաշան: Ճակատագիրն երկու այս հայերին հանդիպեցնում է Ֆրանսիայում: Մինչեւ իրանց ծերութիւնը, երկուսն էլ հաւատացել են, թէ ծառայել են քրիստոնէութեան ընդհանուր դատին, միաժամանակ, որպէս հայրենասէր հայեր՝ Ռուսաստանից թէ Անգլիայից ակնկալել են Թուրքիայում տառապող իրանց ազգակիցների փրկութիւնը: Իսկ այժմ Ռուսաստանին ծառայած Լորիս Մելիքեանն ասում է, թէ ինքն յոյս չունի նրանից: Նուբար փաշան նոյնն է ասում Անգլիայի մասին: Լորիս Մելիքեանը, որ արդէն ճանաչել է ռուս քաղաքականութիւնը, պնդում է, որ յոյսն Անգլիան է: Նուբարը, որ լաւ գիտէ Անգլիան՝ յոյսը կապում է Ռուսաստանին: Երկուսին էլ մնում էր մոխիր ցանել նաեւ հեռաւոր սրբերին կապած յոյսերի վրայ եւ ընդունել, որ այդ երազները մերձաւորից, իրականութիւնից զարկուած ցաւոտ սրտի խաբկանքներ են միայն:

Ռուսաստանում գահ բարձրացաւ Ալեքսանդր Գ.-ն – յետադէմ մի բռնակալ: Դա մերժեց բարենորոգման ամէն ծրագիր եւ ձեռք առաւ հալածանքի քաղաքականութիւնը. հալածանք ո՛չ միայն ընկերապէս դժգոհների, յեղափոխականների, ոչնչականների, անգամ գաղափարական ազատականների դէմ, այլեւ՝ մշակութունակ ազգային փոքրամասնութիւնների: Հալածւում էին գերմանները, ֆինները, մասնաւորապէս՝ հայերը: Ընդհանուր կերպով, տարւում էր ռուսացման վայրագ մի քաղաքականութիւն: Պատահում է աւելի եւս տխուր մի դէպք, որ հայերին քաղաքականապէս վտանգել է տալիս ե՛ւ Թուրքիայում: Բալկաններում, նոյն Ալեքսանդր Գ.-ի բռնակալ ոգու պատճառով, հակամարտութիւն է ստեղծւում ռուսական համասլաւականութեան եւ բուլղար ազգայնականութեան միջեւ: Ազդուած դրանցից՝ ռուսական քաղաքականութիւնը Հայկական հարցի նկատմամբ մշակում է նոր տեսակէտ. *«Ռուսաստանը չի ուզում իր սահմանների վրայ նոր Բուլղարիա ստեղծել»:*

Հենց նման յայտարարութեան էր սպասում Թուրքիան: Բայց սա նպաստաւորուեց ե՛ւ այլ մի կողմից: Եգիպտոսի գրաւումից յետոյ Անգլիան յարձակւում է Սուդանի վրայ, որով՝ նա ո՛չ թէ գալիս է դէպի Առաջաւոր Ասիա, այլ՝ խորանում է դէպի Ափրիկէ: Նոյն այդ Սուդանի անյաջող արշաւանքը դառնում է Գլադստոնի դահլիճի անկման գլխաւոր մի պատճառը: Ասպարէզ է գալիս Սալիզբուրին, որ իր հետ բերում է բրիտանական կայսերապաշտական քաղաքականութեան աշխուժացում: Ծրագրւում է գրաւել ո՛չ միայն Սուդանը, այլեւ՝ Հարաւային Ափրիկէի բուրական գաղութները: Մինչ այդ, գաղութատի-

ական քաղաքականութիւնն էր որդեգրել եւ Գերմանիան: Ճակատագրօրէն, դա դիրք էր գրաւել նաեւ Սուդանի եւ Հարաւային Ափրիկէի միջեւ - մի մարզ, որի վրայով պիտի անցնէր անգլիական երազ դարձող Կապ - Կահիրէ երկաթուղագիծը: Թշնամի ռուսական կայսերապաշտութեան, Սալիզբուրին փորձում է հասկացողութեան գալ Գերմանիայի հետ: Հետագային լինում են եւ փոխադարձ որոշ զիջումներ, բայց հակամարտութեան պատճառները շա՛տ էին խոր, եւ դրանք չէին կարող վերացուել քաղցր խօսքերով, փոքրիկ զիջողութիւններով: Շա՛տ ուշ, միայն 1884-ից էր Գերմանիան սկսել գաղութատիրական քաղաքականութեան եւ իր մեծութեան ու կարիքներին անհամապատասխան արդիւնքներ էր ձեռք բերել: Նա որոնումների մէջ էր եւ իր հայեացքն յառել էր դէպի Առաջաւոր Ասիա: Տաճիկները գիտէին, որ ռուսները կարող էին Հայկական դատից հրաժարուել, բայց Հայկական Բարձրաւանդակից՝ երբե՛ք: Նրանք գիտէին նոյնպէս, որ հաստատուելով Եգիպտոսում՝ Անգլիան իր ձեռքը պէտք է առնի սկզբից ի վեր թուրքատեաց արաբ տարրը եւ վտանգի նրանց տիրապետութիւնը Կարմիր ու Միջերկրական ծովերի եւ Պարսից ծոցի միջեւ: Ահա այդ սպառնալիքի դէմ՝ նա տեսնում էր մի հատիկ ելք – յենուել Եւրոպայի հզօր ոյժերից մէկի վրայ: Զօրաւոր այդ յենարանը նա գտաւ՝ Բաղդադի երկաթուղագծի մենաշնորհը տալով Գերմանիային: Դրանով Թուրքիան հասնում էր եւ այլ մի նպատակի. դէպի Հնդկաստան տանող կարեւոր մի ճամբա յանձնելով Գերմանիային, նա մի կողմից անգլեւգերման հակամարտութիւնն էր սրում, միւս կողմից՝ գերմանեւռուսականը: Այս հակամարտութիւններն օգտագործելով՝ նա պիտի մաքրէր իր հաշիւը հայերի հետ, որովհետեւ տեսնելով, որ վտարւում է Ափրիկէից, նա կանխազգում էր, որ նոյնն է լինելու եւ Բալկաններում, ուստիեւ՝ Հայաստանն որպէս թիկունք թէ նահանջի ուղի՝ նրա համար ստանում էր ճակատագրական նշանակութիւն:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Այդ բոլորից յետոյ, 1889թ., Աբդիւլ Համիդը Կ. Պոլսի հայոց այդ օրերի պատրիարք Խորէն Աշըգետնին սպառնում է. *«Անհնարին է ինձ զիջել տալ զինքնօրէնութիւն, զոր հայքն երազեն, եւ ո՛չ միայն ինձ՝ այլեւ ամէնեցուն որ զկնի իմ գալոց են սուլթանք նզով դնեմ ի վերայ չտալ հայոց այնպիսի ինչ՝ այլ մանաւանդ՝ ցջնջումն բովանդակ իսլամութեան յերեսաց երկրի՝ ուխտ դնեմ պատերազմել ընդդէմ*

անկախութեան հայոց»:

Մինչեւ այսօր էլ քիչ եւրոպացիներ են հասկացել հայեւթուրք կնճիռի տարողութիւնը: Եւրոպացին սիրում է ամէն բան ըմբռնել համեմատականի սահմանում: Քաղաքական, կրօնական, մշակութային, տնտեսական պայքարներ, դաւանական վէճեր, ազգային հարցեր, ապստամբութիւններ, բռնութիւններ, յեղափոխութիւններ եղել են միշտ եւ ամէն տեղ: Լաւագոյն դէպքում նրանք մտածել են, որ թուրքական բռնակալութիւնն ամէնից արիւնարբուն է եւ իսլամական մոլեռանդութիւնը՝ ամէնից ծայրայեղը: Իսկ հայե՞րը - դրանք էլ համարուել են քրիստոնեայ մի տարր, որ ձգտում է եւրոպական որեւէ պետութեան հովանու տակ ընկնել եւ այդ պատճառով էլ թուրքերի կողմից հալածւում է, ջարդւում:

Այստեղ՝ պակասում է ըմբռնումը պատմական այդ ողբերգութեան մասին, նա՛խ այն պատճառով, որ ողբերգութիւններն ընդհանրապէս չեն հասկացւում մտածումով, մտածումային համեմատութիւններով, այլ ապրումով, ապա այն՝ որ քիչ դէպքերում երկու ցեղերի պայքարն ստացել է խորապէս կրօնական բնոյթ եւ էութիւնների բովանդակ լարումով վերածուել միաժամանակ ֆիզիքական գոյութեան հարցի:

Երբ Սուլթանը վերի յայտարարութիւնն էր անում, բարեմիտ եւրոպացիները շարունակում էին խօսել հայերին *«կեանքի, պատուի եւ գոյքի ապահովութիւն»* երաշխաւորելու մասին: Բայց հայերի համար պարզ էր այլեւս, որ Աբդիւլ Համիդը, քաջալերուած Եւրոպայի քաղաքական ոյժերի հակամարտութիւնից, վճռել է իսլամի միջոցով ջնջել իրանց ազգութիւնը:

Խաբուած՝ Եւրոպայից եւ կանգնած ոչնչանալու վտանգի առջեւ՝ հայերին մնում էր գերագոյն իրանց յուսահատութիւնից ստեղծել ինքնապաշտպանութեան կամք եւ միջոցներ: Այդ օրերի նրանց հոգեվիճակը բնութագրում էր պատրիարք Մատթէոս արք. Իզմիրլեանը. *«Մենք յուսահատների մի ազգ ենք»*: Իսկ հայկական սարսափները նկարագրող եւրոպացիներից էմիլ Դիլոնն աւելացնում էր. *«Մահը, ջարդը երկնքի ողորմութիւն է հայերի համար»:*

Հայ յեղափոխութիւնը խմորուեց 80-ական թթ. վերջերին. 90-ականի սկիզբներին, դա սկսուեց բողոքի ցոյցերով, եւ, աստիճանաբար, մասնաւորապէս 1895-ի կոտորածներից յետոյ, վերածուեց յեղափոխական կռուի:

Հայ յեղափոխական այդ շարժումը դարձաւ ճշմարիտ մի դիւցազնական՝ աշխարհից մահուան դատապարտուած մի ժողովրդի: Գրեթէ ամբողջ մի 20-ամեակ (1890-1908) յարատեւ ու դաժան կռիւ մղուեց

աշխարհի պատմութեան մէջ անօրինակօրէն անհաւասար ոյժերի միջեւ: Հայ յեղափոխական փոքրաթիւ խմբերի դէմ կռւում էին՝ թուրք զօրամասերը, Աբդիւլ Համիդի կազմակերպած քիւրդ հեծելազօրը, իսլամական զինուած խուժանը: Գերազանց եղաւ հայերի ցուցահանած նուիրումը եւ մարտական կորովը: Շա՛տ յաճախ հայ յեղափոխական մի զինուորի վիճակուեց կռուել 10, 20, 50, 100 եւ աւելի թշնամիների դէմ: Ստեղծուեցին կայծակնաշարժ, թեթեւ հարուածային խմբեր, որոնց քաջութիւնն անցաւ առասպելների կարգը եւ երգուեց ո՛չ միայն հայ, այլեւ քիւրդ, անգամ թուրք ժողովուրդների կողմից: Թշնամին այդ հերոսներին տուեց «ջանֆեդա» անունը, որ ասել է՝ «անձնազոհ»: Կռուադաշտում, անզօր այդ անձնազոհների դէմ՝ թուրքերը մեթոդ դարձրին անզէն ժողովրդի՝ կիների, երեխաների կոտորածը: Եւրոպան անտարբեր մնաց թափուող արեան հանդէպ: Սասունում, 1894թ. հայ աղջիկները հարիւրներով ժայռերից գահավէժ՝ ինքնասպանութիւն էին գործում, իսկ եւրոպական դիւանագետները սոնքում էին, որ դեռ չեն կորցրել մարդկային տառապանքի լեզուն հասկանալու ընդունակութիւնը:

Բայց եւ այնպէս, Սասունի ահաւոր դիւցազնեղերգն որպէս թէ ցնցում է Եւրոպան: Լոնդոնում Գլադստոնը բարձրացնում է ցասումի ձայն ո՛չ միայն «Կարմիր սուլթան»-ի, այլեւ նրա ոճիրները հնարաւոր դարձնող քաղաքական Եւրոպայի դէմ: Անգլիական կառավարութիւնը դիմում է վեց մեծ պետութիւններին՝ յիշեցնելով Բերլինի վեհաժողովից մնացած յանձնառութիւնները, Եւրոպայի բարոյական պատասխանատուութիւնը՝ հայկական աղէտի մէջ, եւ առաջարկում է միջամտութիւն: Ընդառաջում են միայն Ֆրանսիան եւ Ռուսաստանը:

«ՄԱՅԻՍԵԱՆ ԾՐԱԳԻՐ»

Անգլիայի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի Կ. Պոլսի դեսպաններն իրանց կառավարութիւնների համաձայնութեամբ եւ հրահանգով՝ կազմում են բարենորոգումների ընդարձակ, այսպէս կոչուած «Մայիսեան Ծրագիր»-ը եւ 1895թ. մայիսին ներկայացնում Սուլթանի կառավարութեան՝ պահանջելով նրա գործադրութիւնը:

Այդ ծրագիրը նախատեսում էր վարչական լայն բարենորոգումներ, համաձայն Բերլինի դաշնագրի 51-րդ յօդուածի եւ 1880թ. վեց մեծ պետութիւնների ծանուցագրի ոգուն:

Որպէս գործնական խնդիրներ՝ աւելացուում էին.

1. Բանտարկուած կամ քաղաքական յանցանքով դատապար-

տուած հայերի ներումն:

2. Հայ տարագիրների եւ աքսորականների վերադարձը՝ իրանց հողերի վրայ:

3. Բանտերի վերահսկողութիւնը եւ բանտարկեալների դրութեան քննութիւնը՝ մի քրիստոնեայ եւ մի մահմեդական քննիչների կողմից:

4. Նահանգներում մտցուելիք բարենորոգումների գործադրութեան վրայ հսկող բարձր մի յանձնաժողովի նշանակում (իւրաքանչիւր նահանգի համար՝ մէկական քրիստոնեայ եւ մահմեդական):

5. Կ. Պոլսում մնայուն հսկող մի մարմնի հաստատում (վեցանդամեայ – 3-ը՝ քրիստոնեայ եւ 3-ը՝ մահմեդական):

6. Սասունի, Տալուորիկի եւ այլ տեղերի դէպքերի ժամանակ հայերի ունեցած զոհերի եւ կրած վնասների հատուցում:

7. Կրօնական հաւատափոխութեան հետ կապուած գործերի կանոնաւորում (կրօնափոխ կարող են լինել միայն չափահասները):

8. Հայերի վայելած (կրօնական) իրաւունքների եւ առանձնաշնորհումների պահպանութիւնը եւ ճիշդ գործադրութիւնը:

9. Ասիական Թուրքիայի միւս նահանգների հայերի վիճակի բարելաւումն:

Յունիս 3-ին (1895թ.) թուրք կառավարութիւնը, Սուլթանի անունից, պատասխանում է Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսիայի ծանուցագրին: Չեւականօրէն, նա ողջունում է բարենորոգումների այդ ծրագիրը՝ նրա «կէտերի մեծ մասը յարմար» գտնելով «վիլայէթների օրէնքի տրամադրութեան» եւ քանի որ *«Սուլթանի գլխաւոր ցանկութիւնն իր երկրի եւ բոլոր հպատակների բարգաւաճումն ամէնից արդար եղանակով աճեցնելն ու զարգացնելն է»*, առաջարկում է՝ *«վարչական այդ բարենորոգումների կիրարկումը չսահմանափակել միայն կայսրութեան մի մասում, այլ՝ բոլոր նահանգները նպաստաւորել նրանցով»:* Դրանից յետոյ՝ խուսափողական ընդհանուր խօսքեր: Կրկնւում է 1880-ի պատմութիւնը: Այժմ, պայմաններն աւելի էին նպաստաւոր: Վեց մեծ պետութիւններից միայն երեքն էին ստորագրել. 15 տարի առաջուայ բարոյական միութիւնն էլ չկար:

Կ. Պոլսի հայոց այդ օրերի պատրիարք Իզմիրլեանը անգլիական դեսպան Սըր Ֆիլիպ Քըրրիին ուղղուած մի գրութեամբ (14 յունիս 1895) արդէն կասկած է յայտնում, որ *«պատրաստուած ծրագիրը, հակառակ ձեր ազնիւ բաղձանքների, պիտի չկարենայ դարման բերել հայ ժողովրդի տառապանքներին եւ իրագործել Բերլինի վեհաժողովից ի վեր սպասուած բարւոքումներն ու բարենորոգումները»:* Նա ճանաչում է թուրքերին եւ չի հաւատում ո՛չ նրանց խօսքին,

ո՛չ էլ այն բանին, թէ նրանք կարող են փոխել իրանց բնութիւնը, ուստի՝ առաջարկում է բարենորոգումները կիրարկել *«եւրոպական մնայուն վերին մի յանձնախումբի»* հսկողութեամբ:

Բանակցութիւնները շարունակւում են, եւ թուրք կառավարութիւնը յուլիս 20-ին (1895թ.) ներկայացնում է «բարենորոգումներ»-ի ձեւով՝ կէս զիջողական, ըստ էութեան՝ մերժողական մի հակաձրագիր: Սրա կապակցութեամբ, 5 օգոստ. 1895-ին, ֆրանսիական դեսպանը գրում է արտաքին գործոց նախարար Հանոտոյին. *«Բ. Դրան պատասխանն ո՛չ մէկ կերպով ի նկատի չի առնում մեր առաջարկութիւնները եւ բարենորոգումի այն խոստումները, որ օսմ. կառավարութիւնը նախապէս արել էր... Օսմ. կայսրութեան ասիական նահանգների վարչական ներկայ կազմակերպութիւնն ո՛չ մի յոյս չի տալիս: ...Բարենորոգումների մեր առաջարկները միայն մի նպատակ ունէին՝ ապահովել հայերի կեանքը, գոյքը եւ բարեկենցաղը՝ պաշտօնեաների եւ զինուորների կամայականութեան եւ բնութեան դէմ, ինչպէս նաեւ քիւրդերի աւեր ու աւարառութեան դէմ:... Բ. Դուռը մերժում է բոլոր այն առաջարկութիւնները, որոնք վերաբերւում են բարենորոգման իսկական կէտերին... Բ. Դուռը երբեք չգործադրուած եւ յաճախ բռնաբարուած օրէնքների կրկնումից այն կողմը չի անցնում ...նա բաւականանում է խօսել «կատարելիք բաներ»-ի մասին»...*

Երեք դեսպաններն իրանց կառավարութիւնների հրահանգով պահանջում են ընդունել եւ անխախտ կերպով գործադրել առաջարկուած ծրագիրը: Թուրքերը շարունակում են բանակցել, բայց ամբողջ երկուեւկէս ամիս մնում են լսողի եւ խորհրդաւոր կերպով լսողի դերում:

Արիւնոտ մի դաւ էր կազմակերպւում հայ ժողովրդի դէմ: Լռութեան այդ ամիսների ընթացքին, թուրքերն Եւրոպայում աշխատանք էին տանում հող պատրաստելու հայկական մի ջարդ կազմակերպելու համար: Շուտով պիտի ներկայանար ե՛ւ պատրուակը:

Կ. Պոլսի հայերն 1890թ. նախընթացով՝ բողոքի մի ցոյց են կազմակերպում: Ցոյցի օրը նշանակում են սեպտ. 30-ը (1895թ.) եւ այդ մասին նախապէս յայտնում են վեց մեծ պետութիւնների դեսպաններին: Նրանք որոշում են խաղաղ ցոյցով գնալ «Բարձրագոյն Դուռը», եւ պարզելով Հայաստանի տագնապալից վիճակը, պահանջել բարենորոգումների իրագործումը: Թուրքերը երեւի եւրոպական որեւէ դեսպանատնից, նախապէս ծանօթ հայերի ձեռնարկին՝ դէպի Բ. Դուռը առաջնորդող փողոցները պաշարում են զօրքով եւ զինուած ամբոխով: Հայկական թափօրի վրայ բացւում է կրակ եւ սկսւում է անխնայ մի կոտորած, որ տարածւում է Պոլսի բոլոր թաղերում: Սպանւում են հա-

զարաւոր մարդիկ:

Դրանից մի շաբաթ յետոյ, (8 հոկտ. 1895թ.) յայտնապէս թէ՛ եւրոպական պետութիւնները, թէ՛ հայերը քնացնելու նպատակով՝ թուրք կառավարութիւնը յայտարարում է, որ ընդունել է հայկական նահանգները բարեկարգելու ծրագիրը եւ Շաքիր փաշան նշանակել է ընդհանուր քննիչ: Մինչդեռ Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսիայի դեսպանները 24 հոկտ. 1895-ին իրանց *«գոհունակութիւն»-ն* էին յայտնում *«բարենորոգումներն ի գործ դնելու»* առիթով, ամբողջ Փոքր Ասիայում տեղի էր ունենում մարդկային պատմութեան ամենազարհուրելի մի նախճիրը: Սուլթանն *«ապահովութեան»* մի թուղթ էր յանձնել եւրոպացիներին եւ կոտորածի սուրը դրել իր *«քննիչ»-ի* ձեռքում: Անակնկալի եկած հայերը շատ քիչ տեղերում կարողացան ինքնապաշտպանուել: Ահաւոր այս ջարդը նրանցից խլեց 300.000 զոհեր: Աւերակ գիւղերում, լեռներում եւ կիրճերում, իրանց ծնողների դիակների շուրջ՝ լքուած մնացին 50.000 երեխաներ: Թուրքերն հասել էին իրանց նպատակին – որոշ գաւառներում հայերը իրօք որ վերածուեցին փոքրամասնութեան: Քաղաքական Եւրոպան լուռ մնաց, իսկ միսիոնարների համար գործ բացուեց: Սրանք սկսեցին դրամական ժողովարարութիւն *«նահատակ Հայաստանի որբերի փրկութեան համար»:*

Ինչո՞ւ տեղի ունեցաւ մարդկային ահաւոր այդ սպանդը: Ինչպէ՞ս եղաւ, որ խաղաղ մի ցոյց վերածուեց հայկական ընդհանուր մի ջարդի պատրուակի: Ո՞վ էր հայերին թելադրել այդ ցոյցը եւ ո՞վ նրա մասին նախապէս հաղորդել թուրք կառավարութեան: Ինչպէ՞ս եղաւ, որ եւրոպական պետութիւնները լռեցին, երբ Պոլսի փողոցներում քրիստոնեաների արեան լճեր էին կազմւում: Ո՞վ քաջութիւն եւ վստահութիւն ներշնչեց թուրքերին՝ մի թղթով խաբել աշխարհը եւ ամիսներ շարունակ սրով ու կրակով գործել հայկական նահանգներում: Տխուր այս հարցերը կը պարզուեն, երբ թէկուզ ընդհանուր կերպով կը ծանօթանանք եւրոպական դիւանագէտների այդ օրերի սակարկութիւններին:

Անգլիայում 1895-ի ամրան կառավարութեան գլուխ կրկին եկաւ Սալիզբուրին: Չինաստանում սրուել էին անգլեւռուս հակամարտութիւնները: Ռուսների նոր ցարը՝ յեղյեղուկ եւ սնոտիապաշտ Նիկոլայ Բ.-ն, ենթակայ էր քաղաքական ոգով անկեալ մի շրջապատի չար խորհուրդների ազդեցութեան: Չինաստանում յաջող՝ ռուսները խանդավառ երազներ էին հիւսում Հնդկաստանի ճամբաների մասին: Անհանգիստ այդ բոլորից՝ Սալիզբուրին ձգտում էր կրկին փոթորկել

Մերձաւոր Արեւելքի խնդիրները եւ շեղել ռուսների քաղաքական ուշադրութիւնը: Գլադստոնի օրոք նուաճուել էր Եգիպտոսը եւ Անգլիան ցամաքով սահմանակցել Թուրքիային: Այժմ Սալիզբուրին հետապնդում էր Թուրքիայի վերջնական բաժանման ծրագիրը: Նա հաշւում էր Անգլիային բաժին հանել բոլոր այն մասերը, որոնք պիտի ստացուէին 1914-ի պատերազմից յետոյ: Դրանով պիտի վերանային Գերմանիայի՝ Բաղդադի երկաթուղագծին կապուած հեռանկարները: Հայկական Բարձրաւանդակում հայոց անկախ եւ չէզոք մի պետութեան ստեղծումով պիտի վերացուէին նաեւ ռուսների դէպի հարաւ թափանցելու կարելիութիւնները: Նեղուցներում, պետութիւնների իրար խաչաձեւող շահերը պիտի ստեղծէին մի տեսակ հակամարտութիւնների հաւասարակշռութիւն, բայց նաեւ տեւական թշնամութիւն մասնաւորապէս Ռուսաստանի եւ Գերմանիայի միջեւ:

Թուրքիայի բաժանման խնդրում Սալիզբուրին հետամուտ էր ամէնից աւելի Գերմանիայի համաձայնութիւնն ու գործակցութիւնն ապահովել: Նա ընդհանրապէս ձգտում էր անգլեւգերման մի համաձայնութեան: Այդ ուղղութեամբ բանակցութիւններ սկսեց կոմս Հացֆելգի հետ: Հետագային էլ Անգլիան բազմաթիւ եւ բազմատեսակ առաջարկութիւններ արեց. ամենանշանակալիցը՝ Չէմբըրլայնի փորձը (1899-ին), որով սա, Բիւլովի ցանկութեամբ, դրեց երրեակ ուխտի խնդիրը: Ցեղային սկզբունքով պէտք է միանային գերմանանգլեւսաքսոն (Գերմանիա, Անգլիա, Ամերիկա) պետութիւնները: Ի դժբախտութիւն ցեղակից այդ ազգերի ու եւրոպական քաղաքակրթութեան եւ ի վնաս տառապած հայ ժողովրդի՝ բոլոր այդ փորձերը ձախողուեցին:

Անգլիական պետական գործիչները Թուրքիայի բաժանման իրանց ծրագիրը բարոյապէս հիմնաւորում էին հայկական ողբերգութեամբ: Բայց Թուրքիան կռահելով իր վախճանը՝ նետուել էր Գերմանիայի գիրկը եւ Վիլհելմ Բ. կայսրը, որ 1888-ին յաջորդել էր միայն 99 օր թագաւորող եւ դեռեւս իր գահաժառանգութեան օրերին քրիստոնեայ հայերի ճակատագրով ջերմօրէն հետաքրքրուող հանգուցեալ Ֆրիդրիխ Գ. (Ա.)-ին, լքել էր գերման կայսրերի աւանդական քրիստոնէապաշտպան քաղաքականութիւնը: Վիլհելմ Բ.-ի Լոնդոն արած մի այցելութեան առիթով Սալիզբուրին նրան պարզում է հայկական աղէտի ծաւալը, հայերի գոյութեան սպառնացող վտանգը եւ որպէս փրկութեան միակ ելք՝ առաջադրում է Թուրքիայի բաժանման հարցը: Կայսրը, սակայն, ընդդիմանում է - *Թուրքիայի*

*զարգացումը «կամաց-կամաց առաջադիմութիւն է անում դէպի լաւը**»:* Նա չէր ուզում զոհել ապագայ իր զինակիցը, որի միջոցով հաւատում էր Գերմանիայի ազդեցութիւնը տարածել Արեւելքում: Նա քաղաքական մեծ կշիռ եւ կարողութիւններ էր վերագրում իսլամին եւ նրա գաղտնիքների բանալին տեսնում թուրք սուլթանների ձեռքում: Բացի այդ, նա ենթադրում էր, որ անկախ մի Թուրքիա լայն շահաստան եւ գործի ասպարէզ պիտի դառնայ գերման առեւտրի եւ մասնագէտների համար:

Սալիզբուրիի այդ առաջարկը մերժելով՝ Վիլհելմ Բ.-ն մի համաձայնութիւն է կնքում Ռուսիայի հետ՝ պաշտպանելու Թուրքիայի ամբողջութիւնը որեւէ յարձակման դէմ: Այդ համաձայնութեանը միանում են Գերմանիայի զինակիցները՝ Աւստրիան եւ Իտալիան: Եւ որովհետեւ Ֆրանսիան էլ Ռուսիայի դաշնակիցն էր, Անգլիային կրկին վիճակուեց մենակ մնալ, ուստի եւ՝ ձախողուեց Թուրքիան անդամահատումի ենթարկելու նրա ծրագիրը:

Քաղաքականապէս ապահովուած՝ Թուրքիան այժմ հետամուտ էր զինակիցներ գտնել նաեւ ոճիրներ յղանալու եւ սարսափներ վիժելու գործում: Ու կատարուեց ամէնից չսպասուածը – շարժառիթներով՝ ամէնից յիմարականը եւ անբարոյականը միաժամանակ, հետեւանքով՝ ամէնից զարհուրելին: Աբդիւլ Համիդը դաշնակցել էր Նիկոլայ Բ.-ի կառավարութեան հետ:

Սալիզբուրիի «հայկական թումբ-պետութիւն» ստեղծելու երազը Ռուսաստանում հրահրում է հակահայ ոգին:

Անզօր՝ յաղթահարելու Անգլիայի ընդդիմութիւնը եւ տէր դառնալու Հայկական Բարձրաւանդակին, ռուսական դիւանագիտութիւնը տկարի եւ վայրագ ոչնչականի իր թշնամանքն ուղղում է հաւատարիմ իր զոհի՝ հայ ժողովրդի դէմ: Դա տրամաբանում է քաղաքական յիմարութեան վերածուած նախանձի ոյժով - ես ուզում եմ փրկել հայերին եւ օգտուել նրանցից, բայց որովհետեւ Անգլիան էլ նոյնն է ուզում, ուստի՝ պէտք է ոչնչանան հայերը: Եւ այդ դաւաճանութիւնը մի ժողովրդի հանդէպ, որ երկու ամբողջ դար հանդիսացել էր ռուսական նուաճման առաջապահը Կովկասում եւ Առաջաւոր Ասիայում ու իր գոյութեան այդ տագնապաժամին էլ կապուած էր ամէնից աւելի շօշափելիօրէն մերձաւոր քրիստոնեայ ոյժին, այսինքն՝ թուրքաց Հայաստանին սահ-

---

* *Բրուն. Գեբհարդտ,* «Ձեռնարկ Գերման պատմութեան», հատոր Բ., էջ 602:

մանակից Ռուսաստանին:

Դեռեւս յունիս 4-ին (1895թ.) ռուսական արտաքին գործոց նախարար Լոբանով Ռոստովսկին (նա, որ Պոլսում «Հայաստանի կենացն» էր խմել) ասում է Պետերբուրգի անգլիական դեսպանին. *«Ռուսաստանը չի ընդունում, որ Փոքր Ասիայում ստեղծուի մի շրջան... որ կարող է կորիզ դառնալ հայկական անկախ մի թագաւորութեան»:* Նոյնը յունիս 13-ին աւելացնում է. *«Ռուսաստանը չի ընդունի, որ իր սահմանների մօտ ստեղծուի երկրորդ Բուլղարիա»:*

Չկամութիւն արտայայտող այս խօսքերին զուգահեռ՝ գազանի հրահանգներ են յղւում Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիստովին: Սա դառնում է Աբդիւլ Համիդի խորհրդականը. *«Կոտորեցէ՛ք, ծերդ մեծութիւն, կոտորեցէ՛ք»:* Եւ ահա՛ Հայաստանից հասնում են Շաքիր փաշայի տեղեկագրերը. *«Անդորրութիւնը կատարեալ է»:* Մոխիրների տակից լսւում է դաւաճանուած ժողովրդի ձայնը: Եւրոպական մամուլը զարհուրանքներ է արձանագրում: Հանրային կարծիքն ընդվզում է դիւանագիտութեան դէմ: Գլադստոնը պահանջում է պատերազմ յայտարարել, պատուհասել Թուրքիային: Եւ Սալիզբուրին դառնօրէն պատասխանում է, որ Անգլիան մենակ է: Բողոքի ցոյցեր, ելոյթներ անգլիական, ֆրանսիական խորհրդարաններում: Ցնցում նաեւ Գերմանիայում, Իտալիայում, եւրոպական փոքր երկրներում:

Ոճրագործները՝ Աբդիւլ Համիդի եւ Նիկոլայ Բ.-ի կառավարութիւնները, գիտեն, որ ամէն բան անցուկ-մոռացուկ է, բայց եւ այնպէս, վայրկեանը փրկելու նպատակով՝ դիմում են բարոյական չարաշահութեան: Կ. Պոլսում Սուլթանը «խնդրում է» հայոց պատրիարքին՝ ազդարարել հայերին, որ չյարձակուեն մահմեդական ժողովրդի վրայ: Նոյնն է թելադրում Պետերբուրգի կառավարութիւնը՝ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ուրեմն՝ «զոհերն ոճրագործ, ոճրագործները՝ զո՞հ». Պատրիարք Իզմիրլեանը ծառանում է Սուլթանի դէմ, իսկ Էջմիածնի Կաթողիկոս Խրիմեանը՝ Համիդի հետ նզովում է ե՛ւ Նիկոլային: Հակահայ հալածանք է սկսւում ե՛ւ ռուսաց Հայաստանում: Բանտարկւում, աքսորւում են հարիւրաւոր հայ մտաւորականներ: Նողկալի վերաբերմունք է ցոյց տրւում մասնաւորապէս թուրքական սրից Կովկաս ապաստանած հայերին: Փորձ է լինում խորտակել հայկական մշակոյթը, փակել դպրոցները:

ՄԻ ՔԱՆԻ «ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐ»

Անակնկալ այդ ջարդերից ցնցուեց դաւադրուած հայ ժողովուրդը: Մինչեւ այդ՝ հայ յեղափոխութիւնը կրել էր ցուցարարական բնոյթ: Այժմ դաժան իրականութիւնը հարկադրում էր դիմել զէնքի: Զէյթունում ընդհարումներ սկսեցին յարձակուող թուրք զօրամասերի եւ հայերի միջեւ: Քառասուն եւ ութ օրուայ արիւնահեղ կռիւները վերջացան թուրք բանակի ջախջախումով: Խայտառակ պարտութիւնը հարկադրեց Սուլթանին՝ դիմել եւրոպական մեծ ոյժերի դեսպանների միջամտութեան: Սրանք ներկայացուցիչներ նշանակեցին եւ բանակցութեան մէջ մտան Զէյթունի հայ ղեկավարների հետ: Զէյթունին խոստացան տեղական ինքնավարութիւն եւ լաւ օրեր՝ ամբողջ հայութեան: Հետեւանքը, սակայն, եղաւ Զէյթունի զինաթափութիւնը: Անարգ այս խաբէութիւնից յետոյ՝ Ֆրանսիայի ներկայացուցիչը գրում էր Հանոտոյի կառավարութեան. *«Սրանով՝ պետութիւնները մեծ ծառայութիւն մատուցեցին Սուլթանին»:*

Ընդհանուր ջարդերից զերծ էին մնացել հայկական մի շարք կենտրոններ: Թուրք կառավարութիւնը հետամուտ էր խորտակել եւ դրանք: Վանում կենտրոնացումներ կատարելուց յետոյ, յունիս 2-ին (1896թ.) թուրքերն անցնում են յարձակման: Մինչեւ յունիս 8-ը հայերը ծանրածանր կորուստներով ետ մղեցին թշնամու յարձակումները, որոնք միշտ էլ վերածւում էին խուճապային փախուստի: Այդտեղ էլ երեւան եկան մեծ պետութիւնների հիւպատոսները, որոնք միջամտեցին, թելադրելով հայերին՝ հեռանալ Վանից եւ չդառնալ կոտորածի պատճառ: Նրանք համաձայնուեցին գիշերանց թողնել իրանց դիրքերը եւ ուղղուել Պարսկաստան: Եւ ահա՛ առեղծուած. ճանապարհին նրանք պաշարուեցին եւ կոտորուեցին թշնամի դարանակալ ոյժերից, իսկ Վանի շրջանի հայ գիւղացիութիւնից խլուեցին 20.000 զոհեր:

Կ. Պոլսում, երիտասարդ մտաւորական յեղափոխականների մի խումբ յղանում եւ Օգոստոս 14/26-ին (1896թ.) գործադրում է մի ծրագիր: Այդ հայ յեղափոխականները գրաւում են Օսմանեան դրամատունը, որում մեծ հարստութիւններ ունէին նաեւ եւրոպական պետութիւնները: Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսի Կենտրոնական Կոմիտէն վեց մեծ պետութիւնների դեսպաններին ներկայացնում է մի ծանուցագիր՝ պահանջելով անյապաղ գործադրումը հայկական նահանգների բարենորոգումների ծրագրի: Պետութիւններից պահանջւում էր նշանակել «ծագումով եւ ազգութեամբ եւրոպացի բարձ-

րագոյն մի կոմիսար՝ Հայաստանի համար»: Ծանուցագրում խօսուած էր հայկական ողբերգութեան մասին. *«Եւրոպան տեսաւ ահռելի այս ոճիրը եւ լռեց: Մեզ նախատեցին՝ զլանալով մարդկային մեր իրաւունքը: Մեր ազգային պատիւը ցմահ խոցոտեցին՝ ջանալով բողոքի մեր ձայնը խեղդել մեր արեան մէջ: Անցած է այլեւս դիւանագիտական խաղերի ժամանակը: Հարիւր հազարաւոր մեր նահատակների թափուած արիւնը մեզ իրաւունք է տալիս ազատութիւն պահանջելու»:*

Դրամատան տիրացած խումբը պահանջում էր վերի ծանուցագրի կէտերի անյապաղ գործադրումը եւ յայտարարում էր. *«Այստեղից չենք հեռանայ 2 օր: Մեր պահանջներն են՝ պետութիւնների միջամտութեամբ կեանքի, պատուի եւ գոյքի ապահովութեան երաշխաւորում՝ քրիստոնեաներին: Դրամատան կահկարասիքին եւ հարստութեան ձեռք պիտի չդպցնենք, մինչեւ որ կատարուեն մեր պահանջները: Հակառակ պարագային՝ պիտի ոչնչացնենք դրամատան գանձը եւ թղթերը եւ բոլոր պաշտօնեաների հետ (դրանց թիւը 157 էր, մեծ մասը՝ եւրոպացի) պիտի դիմենք մեր մահուան՝ դրամատան աւերակների տակ: Մարդկութեան ոճրագործ անտարբերութիւնն է մեզ մղած այս ծայրահեղութեան»:*

Թուրք զօրքի բոլոր յարձակումներն ետ մղուեցին յեղափոխականների աւերիչ ռումբերի հարուածների տակ: Մինչեւ կէսօրը՝ հարիւրաւոր դիակներ էին փռուել դրամատան շրջակայ փողոցներում: Պոլսի ուրիշ թաղերում էլ սկսուել էր կռիւը: Սամաթիայում մի քանի յեղափոխականներ ստեղծում էին սրտառուչ մի դիւցազնական: Հայերի մահառիթ ռումբերի որոտը խուճապի էր մատնում զօրքը եւ մահմեդական բնակչութիւնը: Սուլթանը հարկադրուեց կռուադաշտից ետ քաշել իր զօրքը եւ խօսքը տալ եւրոպական դեսպաններին: Սրանք լիազօրեցին ռուսական դեսպանի աւագ խորհրդական Մաքսիմովին՝ դրամատուն գնալ եւ բանակցել հայ յեղափոխականների հետ: Սա խօսում է աղուէսի լեզուով. *«Երկրում խաղաղութիւն հաստատելու համար՝ միջոցներ ձեռք առնուած են: Ձեր եւ ձեր ընկերների վրայ յարձակումն արդէն դադարած է: Ապահովուած է ձեր ընկերների ազատ հեռացումը Պոլսից: Ջանք ենք թափում համոզել Սուլթանը, որ ձեր Կ. Կոմիտէի պահանջներին գոհացում տայ: Մինչեւ հիմա արիութիւն ցոյց տուիք եւ այդքանը բաւական է ձեր խնդիրը նորից յուզելու: Սպառնում էք օդ հանել դրամատունը. ի՞նչ պիտի շահիք 157 անմեղների մահուան պատճառ լինելով, եթէ ոչ ամբողջ Եւրոպայի հակակրանքը եւ թշնամութիւնը: Դուք պահանջում էք գրաւոր երաշխաւորութիւն (բարենորոգումների իրագործման համար): Կարող ենք մինչեւ իսկ*

տալ այդպիսի թուղթ... բայց դա կլինի դանակը սրտին դրուած եւ խլուած մի խոստում, որ իրաւաբանական տեսակէտով՝ խոստում չէ: Դուք լաւ սկսեցիք եւ լաւ վերջացրէք»:

Մաքսիմովն առաջարկում է տեղափոխուել ֆրանսիական «Ժիրոնդ» նաւը, ուր պիտի գան դեսպանները եւ սկսեն մանրամասն բանակցութիւններ... Նրանք չեկան, այլ՝ միայն անգլիական, ֆրանսիական եւ ռուսական դեսպանների խորհրդականները, որոնք յայտարարեցին. *«Կատարուածն անխոհեմութիւն էր»:*

Եւրոպական մամուլը (Լոնդոնի, Փարիզի, Բերլինի, Վիեննայի, Հռոմի թէ այլ մայրաքաղաքների եւ գաւառական կենտրոնների) մխիթարում էր հայերին՝ գովելով նրանց քաջութիւնը: Ահա՛ միայն մի նմոյշ: *«Էտուալ Բելժ»* թերթի թղթակիցը *«Ժիրոնդ»* նաւից գրում էր. *«Ինչ որ այստեղ պիտի պատմեմ՝ անհաւատալի պիտի թուայ, բայց ստոյգ իրականութիւն է.. Այս դիւցազնավէպի ամբողջ պատմութիւնը անկարելի է մի քանի տողով տալ... Ուզում եմ միայն մի փաստ արձանագրել, այն՝ որ մի խումբ քաջեր կատարեալ անձնազոհութեամբ, օր ցերեկով, մայրաքաղաքի կենտրոնում գրաւեցին Օսմանեան կայսրութեան ամենակարեւոր հաստատութիւնը, 13 ժամ մնացին այնտեղ, առանց մի սանթիմի ձեռք տալու, եւ ի վերջոյ հեռացան ամենապատուաւոր եւ յաղթական կերպով: Եւ ահա երիտասարդ այդ հերոսները, այդ առաքեալները մեզ հետ էին վեց օր շարունակ... Սպաներ եւ այլ պաշտօնեաներ՝ ամէնքս հիացած ենք...»:*

Եւրոպական դիւանագիտութիւնը մի անգամ ե՛ւս խաբել էր իր զոհերին: Կ Պոլսում սկսել էր հայերի նոր կոտորած, բայց միջամտողներ չկային այլեւս: Առեղծուածը շուտով պիտի պարզուէր: Թուրք ոստիկանական Ընդհանուր Տեսուչ Նազըմ բէյը բանտում ասում էր ձերբակալուած հայ գործիչներին. *«Եթէ բոլոր հայերը ոչնչացնենք՝ Եւրոպայի հոգը պիտի չլինի... բայց եթէ նոյնիսկ մեր յօժար կամքով իշխանութիւն տանք հայերին՝ Ռուսաստանը մեզ թող պիտի չտայ, որ մի Հայաստան ստեղծենք իր սահմանի վրայ...»:*

Եւրոպայում բողոքի ալիքը բարձրանում էր ոճրագործ դիւանագիտութեան դէմ: Հայկական ողբերգութիւնը դառնում էր պրոպագանդի սքանչելի նիւթ սոցիալիստների համար: Փարիզում Ժորէսը փոթորկալից ճառեր էր ասում: Ֆրանսիական պարլամենտում անկարգութիւններ էին ծագում: Մերկացւում էր «Ռուսաստանին ծախուած» Հանոտոյի կառավարութիւնը: Անատոլ Ֆրանսը, Կլեմանսօն եւ գրական թէ քաղաքական անթիւ գործիչներ նուիրւում էին հայկական դատին: Աւելի կամ պակաս չափով նոյնն էր կրկնւում Եւրոպայի մնացեալ

երկրներում: Անգլիայում Գլադստոնը կրկին պահանջում էր պատուհասիչ միջոցների գործադրումը: Սալիզբուրին նամակներ էր գրում կառավարութիւններին: Ռուսաստանում քաղաքական յիմարութիւնը կրկին արիւնոտ քրքիջներ էր վիժում: Լոբանովը ցնծում էր եւ Տոլստոյը քրիստոնէական իր բարոյագիտութիւնը հիմնաւորելով չարիքի դէմ կրաւորական մնալու սկզբունքով՝ նախընտրում էր անտարբեր լռութիւնը:

ԿՌՈՒԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Այլեւս ո՛չ մի յոյս եւրոպական դիւանագիտութեան վրայ: Հայաստանում յեղաշրջում է կրում մտայնութիւնը՝ փրկութիւն սեփական ոյժերով: Ժողովրդի հոգեբանութիւնն արտացոլում է շատ տարածուած մի երգում. «Միայն զէնքով կայ հայոց փրկութիւն»: Ստեղծուել էր քաջութեամբ մեռնելու վարակիչ տրամադրութիւն: Բայց անկարելիութեան աստիճան դժուարանում էր սպառազինումի հարցը: Կար անշուշտ գիտակցութիւնը, թէ առանց արտաքին օժանդակութեան՝ անազատ ժողովուրդները չեն կարող պայքարի միջոցներ ստեղծել: Պետութիւններից ո՛չ մէկն էր զէնք տալիս հայերին: Մնում էր զանազան վայրերում հիմնել փոքրիկ զինագործարաններ, որոնք պիտի աշխատէին գաղտնի, մերկացուելու, բռնուելու տեւական վտանգի տակ: Երկրորդ միջոցն էր՝ արտասահմանում պատահական գնումներ կատարել եւ զինակիր խմբերի միջոցով տեղափոխել երկիր: Այդ խմբերն յաճախ կռուի էին բռնւում երկուստեք շատ խիստ կերպով հսկուած ռուս-տաճկական սահմանագլխին եւ ընկնում երկու կրակի միջեւ: Այդպիսի դէպքերում նրանք զարկում էին միայն տաճիկներին եւ թիկունքից հնձւում ռուսական դաւադիր գնդակներից: Երկրում պահանջ կար նուազագոյնը 100.000 հրացանի, բայց մեծամեծ կորուստներով հազիւ հնարաւոր եղաւ 2-3 հազարի հայթայթում: Այդ պայմաններում հայ յեղափոխականներին մնում էր կռուին տալ մասնական (պարտիզանական) ձեւ, ինչպէս նաեւ զարգացնել ահաբեկչական գործունէութիւնը: Շուտով հայ յեղափոխութիւնը վերածուեց ահաբեկչական հսկայ մի կազմակերպութեան - ամէնից ծաւալունը, սարսափելին եւ հետեւողականը այդ օրերի աշխարհում: Առաջին փորձը գործադրուեց քիւրդ այն ցեղախմբերի դէմ, որոնք միացած տաճիկ զօրքերին՝ դարանակալել եւ ոչնչացրել էին 1896-ին Վանից հեռացած հայերին: 300 հոգուց բաղկացած յեղափոխական մի խումբ Պարսկաստանից թափանցեց տաճկաց սահմանից ներս եւ

1897թ. յուլիս 25-ին ոչնչացրեց քրդական «մազրիկ» ցեղը: Քիւրդերի մէջ ծայր տուեց բեկում, յուսալքում եւ տատանում Սուլթանի հակահայ քաղաքականութեան նկատմամբ: Քիւրդ որոշ ցեղապետեր սկսեցին փնտռել հայ յեղափոխականների բարեկամութիւնը: Նրանք ո՛չ միայն սարսափել էին հայ յեղափոխականների քաջութիւնից, այլեւ՝ զարմացել նրանց մեծահոգութեան վրայ: Հայերը ջարդել էին միայն «աշիրէթ»-ի զինուած տարրը եւ խնայել կանանց, երեխաներին - մահմեդականների համար անհասկանալի, բայց եւ սքանչացումի արժանի վարմունք: Զարհուրանքը շուտով պիտի լրացնէր Ալաշկերտի Խաստուր գիւղի դէպքը: Այստեղ 80 հոգիանոց յեղափոխական մի խումբ անարգ փախուստի էր մատնում ռազմադաշտում 500 սպանուածներ թողած թուրք զօրքը եւ քրդական ցեղախմբերը: Բայց դիւցազնական կռիւները տեղի էին ունենում Տարօնում, ուր Սերոբը, Անդրանիկը, Գէորգ Չաւուշը առասպելական հերոսների տեղ էին գրաւում քրիստոնեայ եւ մահմեդական ժողովուրդների երեւակայութեան մէջ: Այստեղ ստեղծւում էր մասնական կռուի առանձին մի դպրոց, երեւան էր գալիս հերոսների անսպառ մի սերունդ, որ զարգացնում էր յարձակողական թէ պաշտպանողական միշտ այլազան ձեւեր, մեթոդներ՝ բոլորն էլ սարսափ եւ շուարում պատճառող: Դրանցից մէկն էր, օրինա՛կ, Առաքելոց վանքում կամաւոր պաշարումի ենթարկուելը՝ հոյակապ մի յղացումը Տարօնի խռովքոտ զաւակներից Կոտոյեան Հաջի Յակոբի: Մօտ 60 ընտիր հերոսներ, 1901-ի խեղդ աշնան, մտան Առաքելոց վանք եւ ամրացան հայ մշակոյթի առաքեալների յիշատակին նուիրուած հինաւուրց այդ մենաստանում: Թուրք զօրքը պաշարեց նրանց, բայց ծանր կորուստներ կրելով՝ քաշուեց հեռուները եւ կազմեց պաշարման գօտի: Թուրքերն ենթադրում էին, որ հայ յեղափոխականները բաւարար չափով պաշար չունեն եւ պիտի հարկադրուեն անձնատուր լինել: Բայց անցնում էին օրերը եւ հայկական փոքրիկ բերդն ընկրկումի նշաններ ցոյց չէր տալիս: Պաշարող զօրքն օրական 20-30 զոհ էր տալիս ձիւնին եւ ցրտին: Ծայր տուեց ե՛ւ տիֆի ահաւոր համաճարակը: Ծանր դրութիւնը կրկին մղեց Սուլթանին՝ դիմել բանակցութիւնների: Կրկնւում էր Օսմանեան դրամատան պատմութիւնը, այն տարբերութեամբ միայն, որ Սուլթանն այս անգամ դիմում էր ուղղակի Կ. Պոլսի հայոց պատրիարքի միջամտութեան: Թուրք կառավարութեան լիազօրները Մշոյ հայոց Առաջնորդի հետ՝ վանք գնացին: Նրանք առաջարկեցին անձնատուր լինել, որովհետեւ Սուլթանը խոստացել է ներում տալ հայ յեղափոխականներին եւ իրագործել նրանց պահանջները: Յեղափո-

խականների պետ Անդրանիկն ասում է, որ իրանք դուրս կը գան վանքից, երբ գործադրուեն «մայիսեան ծրագրի» բարենորոգումները, որ իրանք ներումի կարիք չունեն, որովհետեւ *«այն օրից, որ հրացան ենք վերցրել՝ որոշել ենք մեռնել»:* Յեղափոխականները գիտէին, որ արդիւնք չեն տալու բանակցութիւնները: Միւս կողմից, նրանք յաջող կերպով լուծել էին տրուած ռազմական խնդիրը՝ թուրք զօրքն ուժասպառուած էր եւ բարոյալքուած. համաճարակը ռազմադաշտից թափանցել էր Մշոյ զօրանոցները եւ անխնայ հնձում էր: Նոյեմբեր 21-ի գիշերը խումբը հեռանում է վանքից: Թշնամին նկատում է, բայց նախընտրում է մեռեալ ձեւանալ: «Հրաշք»-ի կատարումից յետոյ միայն նա բարձրացնում է զարմանքի աղաղակներ. «Փախա՞ն, փախա՞ն»…

Համատարած ահաբեկումը թուրք վարչութեան գազանաբարոյ ներկայացուցիչների դէմ եւ զարմանք ու սարսափ պատճառող յեղափոխական խմբերի տեւական կռիւները խարխլում էին Սուլթանի պետութեան մեքենան: Յոռետեսութեան հետ՝ դեժգոհութիւն էր ծաւալւում նաեւ թուրք ժողովրդի մէջ: Քրիստոնեաների շարժումն սպառնալից էր դառնում նաեւ Օսմանեան կայսրութեան եւրոպական մասում: Կրետէն արդէն միացուել էր Յունաստանին, իսկ Մակեդոնիայում խորանում էր ազատագրական կռիւը: Հայեւմակեդոնական յեղափոխականները կնքել էին եղբայրական ուխտ եւ միասին գործում էին ընդհանուր թշնամու դէմ: Սուլթանի առաջ դրւում էր երկընտրանք՝ կա՛մ տեղի տալ, կա՛մ ոչնչացնել հայ յեղափոխութեան գլխաւոր կենտրոնները, մասնաւորապէս՝ Տարօն-Սասունը: Դեռեւս Օսմ. դրամատան դէպքից յետոյ Սուլթանը փորձել էր հասկացողութեան գալ հայ յեղափոխականների հետ: Նա իր արտաքին գործոց նախարարի օգնական, հայազգի Արթին փաշա Տատեանի միջոցով բանակցութիւններ էր սկսել Հ. Յ. Դաշնակցութեան Կենտրոնի հետ, Ժընեւում: Սուլթանն սկզբունքով ընդունում էր բարենորոգումները, բայց ո՛չ թէ Եւրոպայի, այլ հենց հայ յեղափոխական կազմակերպութեան վերահսկողութեան ներքոյ: Հայերը պահանջում էին եւրոպական երաշխաւորութիւն եւ որպէս նախապայման՝ առաջարկում.

ա) «Թուրքիայից դուրս ելած բոլոր հայ գաղթականների վերադարձը՝ հայրենիք:

բ) Զարդերի եւ գաղթականութեան միջոցին թուրքերի եւ քիւրդերի կողմից իւրացուած հողերի եւ անշարժ կայքերի վերադարձը օրինական տէրերին:

գ) Քաղաքական յանցանքով բանտարկուած բոլոր հայերի ազատ արձակում»:

Այս բանակցութիւնները խզուել էին 1899-ին, երբ Սուլթանի քրիստոնեայ գործակիցները նրան վստահեցրել էին, թէ Լահէյում գումարուելիք խաղաղութեան յանձաժողովը չի զբաղուելու պետութիւնների ներքին խնդիրներով:

Այդ գործակիցները վստահութեան հետ այժմ Սուլթանին ընծայում էին «դրական» օժանդակութիւն: Կովկասի փոխարքայ իշխան Գոլիցինի եւ Ռուսաստանի պետական կեանքի այդ օրերի վարիչ Պլէվէի սադրանքներով, Նիկոլայ Բ.-ն ստորագրում էր յունիս 12-ի (1903թ.) հրովարտակը, որով յարքունիս էին գրաւուելու հայ եկեղեցական կալուածները, խափանուելու էին հայկական դպրոցները: Գործակցելով Աբդիւլ Համիդի հետ՝ ցարի կառավարութիւնը հարիւր հազարներով զոհեր էր պատճառել հայութեան եւ այժմ սպառնում էր նրան սպանել նաեւ բարոյապէս, մշակութապէս: Յորդել էր արդէն հայերի դառնութեան բաժակը, եւ ահա՛ ռուսաց Հայաստանի թէ Կովկասի բոլոր կողմերից բարձրացաւ ցասումի ալիքը: Սրտայոյզ ձայներ էին հասնում Էջմիածին. ամբողջ ազգը միասիրտ կանչում էր իր Աստուածը, դիմում էր իր հռչակաւոր հովուապետին՝ այդ օրերին արդեն 84-ամեայ վաստակեալ ծերունի, բայց հմայքով միշտ վեհափառ Խրիմեանին. *«Հայրի՛կ, Հայրի՛կ, փրկի՛ր մեր Սուրբ Եկեղեցին, փրկի՛ր մեր ազգը, օրհնի՛ր սրբազան մեր պայքարը, առաջնորդի՛ր մեզ»:*

Երբ ցարի բարձր պաշտօնատարները ներկայացան Էջմիածնի Վեհարանը՝ «խոնարհաբար խնդրելու», որ հայոց Հայրապետը ընթացք տայ կայսերական «օրէնք»-ին՝ Խրիմեանը պատասխանեց. *«Երբ Էջմիածին մտայ իբրեւ Ամենայն Հայոց Կաթուղիկոս՝ երդուեցի Աստծո առջեւ, հաւատարիմ մնալ Ս. Եկեղեցւոյս եւ ազգիս... ուստի՝ համաձայն չեմ եւ երբե՛ք չեմ ընդունի այդ օրէնքը»:* Օգոստոս 3-ին Պլէվէն սպառնական հեռագիր է ուղղում «Նորին Սրբութիւն Հայոց Կաթողիկոս»-ին. *«Ամէն մի յետաձգում, իբրեւ անհնազանդութիւն կայսերական կամքին, առաջ պիտի բերէ ծանր հետեւանքներ»:* Ռուս կառավարութիւնն սպառնում էր կոտորել կայսրութեան ամենահաւատարիմ ժողովուրդը, զինու զօրութեամբ խորտակել աշխարհի հնագոյն քրիստոնեայ Եկեղեցին: Դաւաճանական, հակաքրիստոնէական այդ ելոյթի դէմ՝ ապերախտուած եւ դաւադրուած հայ ժողովուրդը տրամաբանում էր. *«...զօրք ու թնդանօթներ չունենք մենք... բայց մեր զէնքն արդարութիւնն է, մէկը բարձր այն ոյժերից, որ կարողացել է մեծամեծ պետութիւններ ջախջախել»:*

Օգոստոս 21-ին հայոց Կաթողիկոսն հրահանգում էր հայ եկեղե-

ցական համայնքներին, վանահայրերին՝ «*չմասնակցել յանձնողական որեւէ գործողութեան*»: Աստուծոյ տաճարները կողոպտող, «աւազակ» կառավարութիւնը (ինչպէս հայ աշուղներն էին որակում իրանց երգերում) ոտքի հանեց կոզակների զօրախմբեր, որոնք յաճախ հրեայ, մահմեդական պաշտօնատարների ղեկավարութեամբ, ջարդում էին եկեղեցիների դռները, սրբազան անօթների պահարանները, մատենադարանները:

Այս անարգանքը չէր կարող մարսել կրօնապէս պատուախնդիր ժողովուրդը, եւ ահա՛ Կովկասի մի ծայրից միւսը բարձրացաւ ցասումի փոթորիկը. *«Ցոյց տանք ուխտադրուժ բռնապետութեան, որ նա չի կարող տեւողաբար եւ անպատիժ կերպով խաղալ մի ազգի ճակատագրի հետ»:*

Արիւնահեղ առաջին ընդհարումը հայ ժողովրդի եւ ռուս զօրքի միջեւ՝ տեղի ունեցաւ Վաղարշապատի մօտերը, երբ ռուսական մի վաշտ կտրեց Երեւանից դէպի էջմիածին շարժուող հայկական մի թափօրի առաջը եւ կրակ բացեց: Հայերը՝ տղամարդիկ, կանայք, աղջիկներ, պատանիներ, քարերով խուժեցին զօրքի վրայ: Թիկունքից նրանց միացաւ Վաղարշապատի ժողովուրդը եւ զօրքը հարկադրուեց քաշուել: Երեկոյեան, ազգային ուխտի սրտաշարժ ցոյցեր եղան էջմիածնի տաճարի եւ Վեհարանի առաջ: Նոյնանման, բայց աւելի արիւնոտ դէպք պատահեց Իգդիրի շրջանում, ուր հայ ցուցարարները փայտերով եւ քարերով կռիւ էին մղում ռուսական մոսին հրացանների եւ սրերի դէմ: Կռիւներ բոլոր գաւառներում, անգամ Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսում, ուր եկեղեցական արարողութեան ժամանակ ռուս զօրքը յարձակում գործեց հայոց գլխաւոր տաճարի վրայ: Ամէնից արիւնոտ կռիւները մղուեցին Գանձակում եւ Բագւում: Գանձակում յարձակումն անձամբ վարում էր քրիստոնէութիւն ընդունած հրեայ զօրավար Անդրէեւը, որ օրեր յետոյ դիակնացած գետին պիտի փռուէր հայ ահաբեկիչների գնդակից: Բագւում կրօնական արարողութիւնից յետոյ եկեղեցիում դիրք բռնեցին 300 զինուած հայ երիտասարդներ, որոնք զանգերի յարատեւ ղօղանջի տակ սկսեցին կռիւը: Սրտաճմլիկ տեսարան: Ռուսական գրոհներն անընդհատ ետ էին մղւում: Երկուստեք տրւում էին զոհեր: Գիշերը ռուսներն ետ քաշեցին զօրքը եւ բանակցութիւններ սկսեցին հայ մեծամեծների հետ: Գնդակների որոտը դադարեց, շարունակւում էր միայն զանգերի լալահառաչ, թախծոտ ղօղանջը: Եկեղեցու գաւիթում դրուած էին 11 նահատակներ եւ նրանց շուրջը տնքում էին 65 ծանր վիրաւորներ:

Արեան հեղումն սկսել էր եւ այլեւս կարելի չէր կասեցնել 200

տարի շարունակ քրիստոնէաբար խաբուած ժողովրդի ցասումը: Հայ յեղափոխական կազմակերպութիւնը գործի էր դնում ահաբեկչական սարսափելի մեքենան: Կովկասի այլեւայլ կենտրոններում իրար ետեւից թաւալգլոր ընկնում էին բազմաթիւ նահանգապետներ, զօրավարներ, ոստիկանական պաշտօնեաներ. կատարեալ մի կոտորած: Ձերծ չմնաց նոյնինքն փոխարքան՝ իշխան Գոլիցինը, թէպէտեւ միայն դաշոյնի ծանր հարուածներ ստանալով: Սարսափած՝ հայ ահաբեկիչների ուրւականից եւ միաժամանակ ծանօթ նրանց բարոյականին, այս բռնաւորը, իր պալատից դուրս գալիս, բաւական չէր համարում իր կառքը շրջապատել թիկնապահ կոզակների ջոկատով, այլ որպէս ինքնապաշտպանութեան միջոց՝ կողքին բազմեցնում էր իր կինը: Հայ յեղափոխականների աւանդութիւնն արգելում է կանանց, երեխաների վրայ զէնք վերցնել: Նման դէպքերում օրէնք չէ ռումբ, հրազէն գործածելը: Եւ ահաբեկիչները կեանքը, գործի նպատակը ստորադասելով սկզբունքին՝ ցատկում են իշխանի սուրացող կառքի վրայ, փորձելով դաշունահարել նրան: Բայց հազիւ դաշոյնի երեք հարուածներ հասցրած, նրանք գնդակահարւում են կոզակների ջոկատից: Ահաբեկչական հարիւրաւոր փորձերից այս դէպքը միայն արդիւնքով անյաջող եղաւ եւ ելքով՝ ողբերգական գործադրողների համար: Բայց եւ այնպէս, խաւարեց նաեւ Գոլիցինի աստղը: Վէրքերը մահացուցիչ չէին. մահացուցիչ եղաւ կրած սարսափը: Կովկասի բռնաւորը կիսախելագար վիճակում փախաւ Ռուսաստան եւ մեռաւ:

Քաջալերուած ռուսեւհայ արիւնոտ այս բաղխումներից եւ համոզուած, որ թուրքաց Հայաստանի յեղափոխականներն այլեւս չեն կարող Կովկասից օգնութիւն ստանալ, երկար նախապատրաստութիւններից յետոյ թուրք կառավարութիւնը 1904թ. գարնան, 15.000 կանոնաւոր զինուորներով, մօտ 40.000 քիւրդերից եւ թուրքերից բաղկացած անկանոն զօրախմբերով եւ տասնեակ թնդանօթներով պաշարեց Սասունը:

Հայերն ունէին միայն մի քանի հարիւր հրացան եւ սակաւաքանակ ռազմամթերք: Նրանց ոյժն իրանց ծայրագոյն յուսահատութեան եւ հռչակուած հերոսների հմայքի եւ քաջութեան մէջ էր: Կռիւն սկսուեց մարտ 30-ին, իրարից հեռու ընկած հինգ ճակատների վրայ: Մինչեւ ապրիլ 13-ը, թշնամին կրեց ջախջախիչ պարտութիւններ: Բայց այդ օրը ճակատագրական եղաւ նաեւ հայ յեղափոխականների համար. մի հակայարձակումի ժամանակ զոհուեցին կռուի մտաւորական վարիչներից մարգարէատիպ Հրայրը եւ ուրիշ քաջեր: Ապրիլ 14-ին թշնամին ստացաւ օգնական նոր ոյժեր, բայց այդ օրն էլ հայերն իրանց

ռազմամթերքն սպառելու գնով՝ կարողացան ջախջախիչ հարուածներով ցրել եւ փախուստի մատնել թշնամին: Յաջորդ օրուանից ռազմամթերքի ծանր տագնապը հարկադրեց հրամանատար Անդրանիկին՝ սեղմել դիմադրութեան ճակատը: Մինչեւ ապրիլ 20-ը հայերն այրեցին իրանց գիւղերը եւ կենտրոնացան Գելիէգուզան: Հայկական դիրքերը շարունակում էին մնալ անպարտելի, բայց թշնամու մարտկոցը հեռուից ռումբեր էր տեղում գիւղի վրայ, ուր տեղաւորուած էին 20.000 կիներ, երեխաներ: Գիշերը որոշում տրուեց ժողովուրդը փոխադրել Մշոյ դաշտ եւ Սասունի անառիկ կէտերը: Կռիւը տեղափոխուեց դաշտ ու շարունակուեց Սասունի այլ եւ այլ կիրճերում, բարձունքներում:

Թուրքերը չկարողացան կոտորածներ սարքել Հայաստանի մնացեալ մասերում: Նրանք հարկադրուած էին իրանց ոյժերը զբաղեցնել պաշարողական դրութեամբ եւ դիմադրել Կովկասի, Պարսկաստանի սահմաններից անընդհատ խուժող յեղափոխական խմբերին: Այս խմբերից շատերը սահմանագլխին ընկան ռուս եւ թուրք կրակի միջեւ: Օլթիի մօտ պատահեց զազրելի դէպք. ռուս եւ թուրք զօրքն օղակի մէջ առաւ յեղափոխականների խումբը: Հայերը չկրակեցին ռուսների դէմ, եւ խմբի ծերունի քահանան խաչով ու խաղաղութեան դրօշով դիմեց նրանց: Բայց գնդապետ Բըկովը հրամայեց անխնայ կոտորել: Հակառակ դրան, հայերը շարունակեցին զարկել միայն տաճիկներին եւ հնձուեցին ռուսական գնդակներով: Ոչնչացումից յետոյ 14 հոգի անձնատուր եղան ռուսներին: Բայց սարքուեց գազանական մի խրախճանք. թուրք զինուորների աչքի առջեւ ռուսները մորթեցին այդ գերիներին՝ իբրեւ հատուցում իրանց զինակցի տուած զոհերի: Մի քանի օր յետոյ, Օլթիի փողոցներում, Բըկովը փչեց իր շունչը հայ ահաբեկիչի գնդակից: Ուրիշ տեղերում, ուր խմբերը յաջողեցին խորանալ թուրքական սահմանից ներս, տեղի ունեցան դիւցազնական կռիւներ: Մոսունում, գիշերային մի յարձակումով, յեղափոխականները ռումբերով ոչնչացրին թուրքական զօրանոցը եւ ամբողջ զօրքը: Թշնամու համար նոյնքան աւերիչ եղաւ Զօրի յարձակումը: Բասենում, Ալաշկերտում, Արճէշում եւ այլուր ոչնչացան մի քանի հայկական խմբեր, բայց տասնապատիկ, քսանապատիկ զոհեր խլելով թշնամու բանակից:

Տարօն–Սասունում պանծալի հերոս Գէորգը (թուրքերից Չաւուշ անուանուած) շարունակում էր շանթահարող իր հարուածները: Անհաւասար կռիւը հիացրել էր աշխարհը: Ցնցումը մեծ եղաւ մանաւանդ, երբ Կ. Պոլսում Սուլթանի պալատական մզկիթի առջեւ, «Սելամլըք»-ի արարողութեան ժամանակ, պայթեց հայ յեղափոխականների դժոխա-

յին մեքենան: Դիպուածով Սուլթանը զերծ մնաց մահից, բայց զարհուրեց շուրջը տարածուած մեռելաստանից: Խորտակուած էր այլեւս արիւնարբու բռնաւորի կորովը: Յոգնել ու յուսալքուել էր ե՛ւ նրա զօրքը Հայաստանում:

Պատուհասել էր նաեւ Ռուսաստանը: Հեռաւոր Արեւելքում ճաբոնացիները չարաչար պարտութեան էին մատնել նրա զօրքը եւ խորտակել նաւատորմիղը: Ռուսաստանում ծայր էր տուել յեղափոխութիւն, որ այդ երկրում մի՛շտ էլ բորբոքւում է ո՛չ թէ իրերի պատմական զարգացման, այլ՝ պարտութեան, պարտուողականութեան հետեւանքով: Առասպելներ հիւսող ժողովրդի հետ՝ սնոտիապաշտ ցարն էլ թերեւս հաւատում էր, որ այդ աղէտները ծագեցին, որովհետեւ սրբի հռչակ հանած հայոց Կաթողիկոսը նզովել էր նրան: Չեղեալ հռչակուեց յունիս 12-ի կայսերական «անդարձ» որոշումը, մանաւանդ որ դրա հեղինակ Պլէվէն էլ ընկել էր ռուս յեղափոխականների գնդակից: Բայց եւ այնպէս, վերականգնելով Հայ Եկեղեցու իրաւունքները՝ ցարի կառավարութիւնը նոր աղէտ էր պայթեցնում հայ ժողովրդի գլխին: Համիսլամականութեան անունով, նա զինեց, գրգռեց Կովկասի մահմեդական բնակչութիւնը եւ ասիական յետադէմ այդ ոյժը հանեց հայերի դէմ: Ամբողջ մէկեւկէս տարի (1905/1906) Կովկաս վերածուեց դժոխքի: Կռիւն սկսուեց Բագուից եւ տարածուեց երկրի բոլոր կողմերը: Այրուեցին քաղաքներ, հիմնայատակ կործանուեցին գիւղերը, հրդեհուեցին անգամ Բագուի նաւթահանքերը: Միլիոնների (միայն Բագուում 25 միլիոն ռուբլի) նիւթական կորուստ կրեց հայութիւնը: Եղան անխնայ ջարդեր: Ցնցուեց Եւրոպան: «Թայմզ»-ը մեղադրում էր ռուս կառավարութեան, որ նա հրահրել է թուրքեւթաթարների կողոպտիչ բնազդները՝ քաղաքակրթութեան դրօշակիր հայերի դէմ: Ձինակից Ֆրանսիայի մամուլն արտայայտում էր իր դժգոհութիւնը: «Թան»-ը (15 սեպտ. 1905) գրում էր. «*Հայերն աւելի կրթուած եւ աւելի աշխատասէր, քան Կովկասի միւս ժողովուրդները՝ ներկայացնում են իմացականութիւնը, իսկ թուրք ժողովուրդն ունի պահպանողական... մտայնութիւն»:* «Մատէն»-ը շեշտում էր, որ *«Մի անդունդ է բաժանում երկու ցեղերին... ներհակ բնազդներ. մէկը քաղաքակրթութեան մի իդէալ է հետապնդում, միւսը՝ յետ մղում... Թաթարները յանձնառու են լինում պատժել ազատամիտ մի ժողովուրդ, որ իր իդէալով իսկ ահարկու մի ոյժ է բռնապետական կառավարութեան (ցարի) դէմ»:* Ուսումնասիրական արժէքաւոր մի գործ* էր հրատա-

* “Fire and Sword in the Caucasus”.

ռակում Լուիջի Վիլարին, եզրակացնելով, որ հայեւթուրք ընդհարումները *«մի մասն են այն կռուի, որ ժամանակակից քաղաքակրթութիւնը մղում է ասիական բարբարոսութեան դէմ»:* Նոյն կարծիքն ու վերաբերումն ո՛չ միայն ամբողջ Եւրոպայում, այլեւ ռուսական ազատական հոսանքների շրջանակում: Բացառութիւն էր կազմում առաւելապէս հրեաներից եւ վրացիներից առաջնորդուած ռուսական «սոցիալ դեմոկրատ» կազմակերպութիւնը: Պլեխանովի թեւն անհանգստանում էր, որ *«Հ. Յ. Դաշնակցութիւնը ցանցով պատել է ողջ Անդրկովկասը»*, իսկ Լենինի թերթը փորձում էր դէպքերը բացատրել մոնոլոլաբանական իր տրամասութեամբ. *«Հայկական դրամատիրութեան եւ թուրք պրոլետարիատի պայքար»*:

Այլասերումն առաջ է բերում խղճմտանքի ծռութիւն, իսկ վերջինը՝ տիրապետող է դարձնում անտրամաբանականը: Ռուսները զինուոր չէին վերցնում մահմեդականներից եւ այժմ զինում էին տունը նստած թաթարներին՝ սրանց ձեռքով կոտորելու Հեռաւոր Արեւելքում, Ճաբոնիայի դէմ կռուի տարուած իրանց հայ զինուորների ընտանիքները: Ցարական իշխանութիւնը գլխաւոր իր առաքինութիւնը թէ առաքելութիւնը համարում էր քրիստոնէութեան դատի, սրբութիւնների պաշտպանութիւնը եւ մահմեդականների միջոցով կողոպտել, սրբապղծել տալիս հայ եկեղեցիները: Ռուս մարքսականները պճնազարդւում էին «մարդկային առաջադիմութեան դրօշակիր» մակդիրով, բայց յղացումով, մեթոդով թէ նպատակով ասիական՝ քաջալերում էին համիսլամականութեան անունով «ջիհատ» հռչակած թուրքեւթաթարներին, մահմեդական յետադէմ կալուածատէրերին, պղծեռանդ եւ խաւարամիտ մոլլաներին:

Բայց ճակատագիրն էլ իր տրամաբանութիւնն ունի. այդ մոլորանքներն ախտանշաններ էին, որ Ռուսաստանում քանդուած է բարոյականը, որ ցարականութիւնը դատապարտուած է ոչնչացումի, քրիստոնէութիւնը՝ սնանկութեան, իսկ մարքսականութիւնը կոչուած է միայն ընկերային պատրանքներ յղանալու եւ քաղաքական ոճիրներ վիժելու: Այդ բոլորից յետոյ թաթարները պիտի չդժուարանային ցարի իշխանութեան հմայքի, շահերի անունով՝ վրէժ լուծել հայերից այն բանի համար, որ նրանք են ռուսական դրօշը Կովկաս բերել եւ դեռ շարունակում են կռիւը մահմեդական մեծագոյն պետութեան՝ Թուրքիայի դէմ: Բագւում, Գանձակում, Նախիջեւանում եւ ամէնուր, թաթար խուժանները կրում էին *«Ե՛տ Ալլահ, ե՛տ Մուհամմեդ, ե՛տ Ալի, մա՛հ իսլամի, Խալիֆ-Սուլթանի թշնամի հայերին»* եւ նման մակագրութիւններով դրօշներ: Գանձակի կայարանում ռուս սպաները ծափահարում

էին այս նշանախօսքերի հեղինակներից՝ թաթար գործիչ Ալաքբար Խասմամեդովի ճառը. *«Պարոնայք սպանե՛ր, բացատրեցէ՛ք ձեր զինուորներին, որ մենք՝ թուրքերս, բազմաթիւ զոհեր տալով, կռւում ենք ցարի թշնամիների՝ հայերի դէմ»…*

Այդ կռիւն էլ վերջացաւ թուրքեւթաթարների չարաչար պարտութեամբ: Անակնկալի եկած, հայերն սկզբում ունեցան կորուստներ: Բայց նրանք շատ շուտ կազմակերպեցին եւ կենտրոնացրին հակահարուածիչ իրանց ոյժերը: Անգամ Սասունից եւ թուրքաց Հայաստանի ուրիշ մասերից Կովկաս հասան մի շարք հռչակուած հերոսներ:

Բագւում, ուր այդ օրերին թուրքերն իրանց թուով հայերի գրեթէ կրկնապատիկն էին, յարձակումն սկսուեց փետրուար 5-ի (1905թ.) երեկոյեան: Նրանք կրակի տուեցին իրանց թաղերում գտնուած հայերի տները. մոխրացան տասնեակ ընտանիքներ, հրդեհից փախչող կիներն ու երեխաները մորթոտուեցին փողոցներում: Ամբողջ 40 ժամ հայերը խաղաղութեան կոչեր էին ուղղում մահմեդականներին եւ միջամտութեան խնդրանքով դիմումներ անում իշխանութեան: Բայց կողոպուտը, հրդեհումները, ոճիրները շարունակւում էին անարգել: Բագուի գեներալ-նահանգապետ Նակաշիձէն (ազգով՝ վրացի) կոզակների զօրախմբերով շրջագայում էր հայկական թաղամասերում եւ յայտարարում, որ անզօր է, բաւականաչափ զօրք չունի դէպքերի առաջն առնելու: Հայերը զէնք խնդրեցին պաշտպանուելու համար. մերժեց: Երբ նրանք կարողացան իրանց հատուկենտ զէնքերով մի քանի խմբեր կազմել եւ օգնութեան գնալ թուրք թաղերում այրուող իրանց ազգակիցներին՝ կոզակներն հրաման ստացան հետապնդել նրանց եւ զինաթափել: Առեղծուածը լուծուած էր: Բագուի նախկին քաղաքագլուխ եւ հասարակական գործիչ, ռուս Նովիկովը «բաց նամակ» էր ուղղում նահանգապետ Նակաշիձէին. *«Ողջ Ռուսաստանը, ողջ աշխարհը սասանուեց, իմանալով… Բագւում կատարուած սարսափները… Ես ճանաչում եմ հեղինակը եւ սրբազան պարտք եմ համարում յիշել նրա անունը: Կոտորածի հեղինակը դուք էք: Կայէնից էլ վատ էք, Կայէնը միայն մի եղբայր սպաննեց, դուք ձեր ձեռքերը թաթախեցիք հարիւրաւոր անմեղ եղբայրների արեան մէջ: Յուդայից էլ վատ էք դուք, որովհետեւ զարհուրելի գործը նիւթելուց յետոյ, նա զղջաց եւ խեղդամահ եղաւ, մինչդեռ դուք հնարաւոր էք համարում դեռ ապրել… Դուք անարգեցիք Ռուսաստանը… Թո՛ղ ձեր անունը յաւիտեանս արհամարհուած լինի»:* Ո՞ր Ռուսաստանը, բարեհոգի՛ Նովիկով, ա՞յն, որ այլեւս իսլամի, ասիական բարբարոսութեան զինակիցն է եւ որի հազարաւոր չարանենգ գործիքներից մէկն է միայն Նակաշիձէն:

Կոտորածը, հրդեհումը, կողոպուտը Բագուում շարունակուեցին մինչեւ փետրուար 9-ը, երբ հայերը, ղեկավարութեամբ քաջահմուտ ռազմագէտ Նիկոլ Դումանի, շշմեցուցիչ հարուածներով ջախջախեցին թաթար հորդաները եւ հարկադրեցին նրանց «հաշտութիւն» խնդրել: Պարտուած թշնամու զարհուրանքն աւելի մեծ եղաւ, երբ հայ ահաբեկիչների գնդակներից եւ ռումբերից Բագուի փողոցներում իրար ետեւից դիաթաւալ ընկան Նակաշիձէն եւ իր բազմաթիւ հրեայ, վրացի, թաթար, ռուս պաշտօնատարները:

Կռիւը վարակիչ կերպով տարածուեց ամբողջ Կովկասում: Նախիջեւանում գործուեցին սանձարձակ գազանութիւններ–հրդեհումի, կողոպուտի, ջարդի, պղծումի մոնղոլակերպ նախճիրներ: Ռուս իշխանութեան եւ զօրքի աչքերի առջեւ սրբապղծուեցին հայ եկեղեցիներ, բռնաբարուեցին, մորթոտուեցին հայ կանայք եւ երեխաներ, եղան անգամ բռնի իսլամացման փորձեր: Ցարական կառավարութիւնը «խաղաղարար»-ի հանգամանքով Նախիջեւան էր ուղարկել ռուսական զօրավարի աստիճան եւ պաշտօն ստացած մի թաթար՝ զօր. Ալիխանովը, որի կոզակ ջոկատները, սակայն, չկարողացան կասեցնել հայ յեղափոխական ոյժերի խորտակիչ հակահարուածը: Այստեղ էլ թաթարները, հարիւրաւոր դիակներ թողնելուց յետոյ՝ ցրիւ եկան, դիմելով փախուստի եւ «հաշտութեան» խնդրանքի: Ինքը՝ զօր. Ալիխանովը, որ բարբարոսութիւններ էր գործել նաեւ վրացական գիւղերում, ստացաւ մահուան իր պատիժը՝ հայ ահաբեկիչներից:

Օգոստոսին, Բագուում վերսկսուեց կռիւը՝ աւելի ծաւալուն աւերածութիւններով: Բայց այս անգամ վերջնական եղաւ այդ շրջանի թաթարութեան ջախջախումը:

Կարճ տեւեցին կռիւները Թիֆլիսում, ուր Բորչալուից խուժած թաթար հրոսակները 500 սպանեալներ տալուց յետոյ՝ բարձրացրին «հաշտութեան» սպիտակ դրօշը:

Երեւան քաղաքում եւ նահանգում հայերն արագ եւ վճռական հարուածներով հնազանդութեան մղեցին թաթարներին:

Ամէնից երկարատեւ, արիւնահեղ, բայց եւ թաթարների համար ճակատագրօրէն աղիտաւոր եղան Արցախի եւ Սիւնիքի կռիւները: Այստեղ թաթարները կռուեցին յամառօրէն՝ տալով հազարաւոր զոհեր: Հիմնայատակ կործանուեցին մի շարք աւաններ եւ գիւղեր: Շուշի եւ Գանձակ քաղաքներում կռիւներն ստացան ճակատային պատերազմի բնոյթ: Շուշիում հայերը պատրաստեցին եւ գործածութեան դրին նաեւ թնդանօթ: Գանձակում, ի վնաս հայերի, գործում էր նաեւ ռուսական «հաշտարար» մարտկոցը: Բայց հայերն անգերազանցելի մնացին

իրանց կազմակերպուածութեամբ, ինչպէս նաեւ ձեռնառումբերով եւ դժոխային մեքենաներով, որոնց պատրաստումին թէ գործածութեան անընդունակ եւ անծանօթ մնացին թաթարները: Շուշիում սրանք խորտակուեցին սպառիչ կերպով: Գանձակում ցրուեցին՝ փախուստի դիմելով: Թաթարների համար վերջնական եղաւ Ասկերանի կիրճի աղէտը: Այստեղ հայերը պաշարեցին եւ մինչեւ վերջին մարդն ոչնչացրին թշնամու լաւագոյն ոյժերը՝ Աղդամի շրջանի թուրք խաներից եւ բէկերից կազմուած հրոսախմբերը:

Ձախջախիչ կերպով պարտուած՝ թաթարները դիմեցին ռուս կառավարութեան միջնորդութեան: Կովկասի նոր փոխարքայ իշխան Վորոնցով-Դաշկովի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ հայեւթուրք պատուիրակների համագումարը: Կայացաւ «հաշտութիւն»: Կովկասում հայերը տարել էին ռազմապէս փայլուն, բայց քաղաքականապէս անօգուտ մի յաղթանակ: Թուրքերը հեռանում էին համագումարից՝ սրտում պահելով պարտուածի ոխը: Նոյնանման զգացումներ էր սնուցում եւ ցարական իշխանութիւնը, որ կորցրել էր ոչ միայն հարիւրաւոր պաշտօնատարներ, այլեւ՝ հմայքը: Եւ այդ այն աստիճան, որ հայերը զլանում էին դատական իրանց խնդիրները լուծել պետական դատարաններում եւ դիմում էին յեղափոխական ատեաններին (բոլոր վայրերում, հայերը հիմնել էին ոչ միայն այսպիսի ատեաններ, այլեւ՝ բանտեր), իսկ հայ պահակները, անգամ Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսի փողոցներում, կանգնեցնում եւ խուզարկում էին ռուս սպաներին, որպէսզի սրանք չկարողանան գաղտնիաբար զէնքեր մատակարարել թաթարներին…

Թուրքաց Հայաստանում շարունակւում էր կռիւը Գէորգի («Ձաւուշ») յեղափոխական խմբերի եւ թուրք զօրքերի միջեւ: Համոզուած, որ այրուած են բոլոր կամուրջները ռուսների եւ հայերի միջեւ՝ Սուլթանը վերջին իր ճիգերն էր թափում արեան մէջ խեղդելու հայ յեղափոխութիւնը:

Հետագային կռուադաշտ պիտի դառնար եւ Պարսկաստանը, ուր հայ յեղափոխական խմբերը, գլխաւորութեամբ Եփրեմի, ղեկավար դեր ստանձնեցին պարսկական սահմանադրական շարժումների մէջ: Երկարատեւ այս կռիւները մղուեցին ոչ միայն երկրի խաւարամիտ ոյժերի դէմ, այլեւ՝ ռուս իշխանութեան, որ յենուած թաթարածին Ղաջարական արքայական տան եւ թուրքաթաթար յետադէմ տարրերի վրայ, ձգտում էր իր տիրապետութեան ենթարկել Պարսկաստանը: Յաղթեցին սահմանադրական ոյժերը: Հայ հռչակուած հերոսը դարձաւ Թեհրանի կառավարիչ: Բայց արդիւնաւոր չեղաւ եւ այս յաղթանակը.

դաւադրօրէն սպանուեց Եփրեմը (մինչեւ այժմ էլ մութի մէջ են մնում մահափորձի հեղինակները) եւ ռուսական զօրքը մտաւ հիւսիսային Պարսկաստան:

ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ ԵՒ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

Տաճկաց թէ ռուսաց Հայաստանում տեղի ունեցած արիւնոտ այս դէպքերն ամենապարզ կերպով ապացուցում են, որ ռուսութիւնը իշխանութիւնները վճռել էին ոչնչացնել հայ ժողովուրդը: Տաճիկների վարմունքը հասկանալի էր, ըստ ամենայնի: Հայերի համար ողբերգութիւն էր ստեղծել ռուսական քաղաքականութիւնը: Դա մոլորանքի քաղաքականութիւն էր: Ճակատագրի գրքում դա պէտք է մնայ ապերախտութեան եւ անիրաւութեան, միաժամանակ՝ սեփական քաղաքական շահերի վայրենի անգիտակցութեան ամենադասական փաստը: Տաճիկները փորձում էին ջնջել հայերին, որպէսզի վերանայ ռուսական առաջխաղացման սպառնալիքը: Նոյնն էին անում ռուսները, կարծելով որ դրանով աւելի՛ շուտ կը հասնեն իրանց նպատակին: Եւրոպական դիւանագիտութեան վատ աշակերտը՝ ռուս քաղաքական մտածումը տառացիօրէն էր հասկանում նրա խօսքերը: Ռուս ոգու գլխաւոր թերութիւնը հէնց նրանում է, որ դա քաոսային է, բայցեւ ելք գտնելու հարցում՝ անխտրողական: Երբ եւրոպացին դեռ տեսաբանում է՝ ռուսը նրա տեսութիւնն արդէն վերածել է կոպիտ գործի: Անգլիան, Գերմանիան Արեւելքում մղում էին իսլամը սիրաշահելու պրոպագանդ: Ռուսաստանը դրան հակադրեց իսլամասիրական քաղաքականութիւնը եւ գործօն կերպով զինակցեց թուրքերին՝ քրիստոնեաների դէմ: Դրանով հանդերձ, նա կատաղութեան պատրուակ համարեց այն փաստը, որ հայերը, 1898-ին, Կ. Պոլսում, դիմել էին գերման կայսեր: Այդ քայլը համարւում էր «դաւաճանութիւն» ռուսական քաղաքական հեռանկարների դէմ, ուստի ե՛ւ արդարացւում պատուհասիչ ամէն միջոց:

Օրհասական վիճակից հայերը փրկուեցին (թէպէտեւ ծանր կորուստներով) շնորհիւ երեք գործօնների: Դրանք էին.

1. Դիմադրութիւնը:
2. Եւրոպական հասարակական կարծիքի ցասումը:
3. Քաղաքական աշխարհի նոր դասաւորումները:

Դիմադրութիւնը, տուեալ պայմաններում, եղաւ աւելի՛ քան հերոսական: Կովկասում հայերի յաղթանակը բացայայտ էր: Թուրքաց Հայաստանի կռիւների մասին Պրեսանսէն ֆրանսիական պարլամեն-

տում յայտարարում էր. *«Արիւնոտ այդ ողջակէզները ջարդեր չեն միայն: Եղել են կռիւներ - ես բարձրաձայն գովում եմ հայերին - անհաւասար կռիւներ, քանի որ նրանք գրեթէ անզէն են»*: Ո՛չ միայն անզէն, այլեւ՝ բարոյապէս մենակ էին նրանք՝ բարբարոսների ամբողջ մի աշխարհի դէմ: Այդ օրերին շատերն էին կրկնում իտալական ազգի մեծ հերոսի որդու՝ զօրավար Ռիչիոտի Գարիբալդիի խօսքերը. *«Զէնքով միայն կարելի է ստիպել եւրոպական դիւանագիտութեան, լսելու... թուրք բռնապետութեան տակ տառապող հայերի ձայնը: Այդ մտքով ես եւ իմ բարեկամները տրամադրութեան տակն ենք հայ անբախտ ազգի, որի հետ է ամբողջ մեր համակրանքը»:* Բայց հենց այդ դիւանագիտութիւնն էր արգելք դառնում հերոսական թռիչքների, խաչակրաց նոր արշաւանքի: Անգամ Գարիբալդին, որի ասպետական սրտում հեռաւոր եղբայրների տառապանքի ձայնն այնքան խոր արձագանքներ էր գտնում, չէր կարողացել Հայաստան գնալ:

Մենակ եւ անզէն հայերի հերոսական այդ դիմադրութիւնը համակրանքի ալիքներ բարձրացրեց անգամ Ռուսաստանում: Ռուս ազատական մտաւորականութիւնը խոր ամօթանք էր ապրում, որ ցարի կառավարութիւնը, միացած ասիական բարբարոս ոյժերին, հալածում է քրիստոնէութեան եւ քաղաքակրթութեան դատի համար այնքա՛ն տառապած մի ժողովուրդ: Վիկտոր Չերնովի, Ստրուվէի արտասահմանեան թերթերը բուռն կերպով քննադատում էին քաղաքականապէս սխալ, բարոյապէս վարկաբեկիչ այդ գործերը եւ ներբողականներ հիւսում մարտնչող հայ ժողովրդի հասցէին: Հայկական հալածանքները խորացնում էին վրդովմունքը ռուսական կայսրութեան ազգային փոքրամասնութիւնների (ֆինլանդացիների, լեհացիների եւլն.) մէջ: Իրար էին մօտենում ճակատագրակից ժողովուրդներ, որոնց ազգային դատին քաջալեր էր հանդիսանում ռուս գաղափարական մտաւորականութիւնը: Ուռճանում էր բռնապետութեան ներքին թշնամիների բանակը:

Փարիզում, 1904-ին, ֆինն յեղափոխականների հրաւէրով եւ Միլիւկովի նախագահութեամբ կայացաւ Ռուսաստանի ընդդիմադիր հոսանքների գաղտնի համաժողովը, որին մասնակցեցին ազատական ռուսները, լեհերը, հայերը, ֆինները, վրացիք, եւն.: Համաժողովը, ի միջի այլոց, որոշեց.

ա) «Բռնապետութեան ոչնչացումը»:

բ) «Ազգային ինքնորոշման իրաւունք... բոլոր ժողովուրդների համար»:

Այս որոշումները մեծ խանդաղատանքով ընդունուեցին Եւրոպայի

առաջադիմական հոսանքների կողմից: Ժորէսը խանդավառ՝ գործնական արդիւնքներ էր սպասում: Ֆրանսիայի հանրային կարծիքի առջեւ վարկաբեկուած էր զինակից ցարական Ռուսաստանը: Դէպքը ճակատագրական մի անկիւնադարձի հանգամանք ունէր մասնաւորապէս հայերի համար: Պատմութեան մէջ առաջին անգամն էր, որ նրանք մասնակցում էին հակակառավարական մի շարժման: Ցարական իշխանութիւնը կորցնում էր իր ամենաուխտեալ հպատակների վստահութիւնը: Ճակատագրօրէն դժբախտ մի դէպք՝ հայերի գոյութեան եւ ռուսների առաջաւորասիական տիրապետութեան երազի համար:

Մեծ ցնցում առաջ բերեցին Սասունի դէպքերը: Դիւանագիտութիւնը վճռական քայլերի չդիմեց. նա բաւարարուեց մի քանի հիւպատոսներ Մուշ ուղարկելով: Հիւպատոսները (անգլիական, ֆրանսիական, ակամայից նաեւ՝ ռուսական) տաճիկներին հարկադրեցին Սասունի հայերի վերաբնակեցումն իրանց հայրենի գիւղերում: Բայց հանրային կարծիքը դրանով չէր բաւարարւում: Անգլիայում Գլադստոնի տեղը գրաւել էր Լորդ Բրայսը, որ միթինկներ էր գումարում, բողոքներ կազմակերպում: Ֆրանսիայում Պրեսանսէ, Ժորէս, եւ շատ-շատերը պահանջում էին Ռուսաստանի հետ զինակցութիւնը խզելու գնով՝ պաշտպանել Հայկական դատը: Դեռ 1901-ից խորապէս փոխուել էր Ֆրանսիայի վերաբերմունքը: Թուրքերը չէին կարող կամ զլանում էին վճարել ֆրանսիական դրամատէրերի պահանջները: Կառավարութիւնը Միտիլլի էր ուղարկում նաւատորմիղը եւ սպառնում Թուրքիային: Ոմանք՝ Թուրքիային ահաբեկելու, ուրիշները՝ հայերին նպաստելու նպատակով, պահանջում էին դնել հայկական նահանգների բարենորոգումների հարցը: Պարլամենտում կատաղի պայքար էին մղում պահպանողական Դընի Կոչէն եւ մանաւանդ ընկերվարականներ Մարսէլ Սանբա եւ Ռուանէ: Փոթորկալից ճառերից եւ ցոյցերից յետոյ, դահլիճը 227-ով ընդդէմ 212-ի ստացաւ անվստահութեան քուէ (4 նոյեմբեր 1901-ին): Պարլամենտը պահանջում էր վճռական միջամտութեամբ լուծել Հայկական Հարցը: Վարչապետ Վալդեկ Ռուսօն միջամտում էր՝ խոստանալով ձեռք առնել աւելի ազդու միջոցներ: Արտաքին գործոց նախարար Դելկասէն հաստատում էր Հայաստանի «ցաւալի կացութիւնը»: Նա իր ցասումն էր յայտնում, որ հայ ազգը *«շարունակաբար եւ անպատիժ կերպով կեղեքւում է եւ ենթարկւում եղեռնափորձի»:* Բայց արդարանում էր, որ *«միայն Ֆրանսիան չէ Բերլինի դաշնագիրն ստորագրողը»:* Ժորէսն յայտարարում էր, թէ *«մեծ յոյսեր եմ դրել Ֆրանսիայի վրայ՝ Եւրոպայի հանրային կարծիքը հաւաքական գործունէութեան մղելու: Ֆրանսիան պէտք չէ կանգ*

առնի կէս ճամբին... եթէ չի ուզում դաւաճանել պատուի օրինագրքին»:

Սասունի արիւնոտ դէպքերի օրերին Դելկասէն, բուռն ծափերի մէջ, յայտարարում էր. *«...շա՛տ իրաւացի կերպով կարելի է ամբաստանել նրան* (Օսմանեան կառավարութեան), *որ հակառակ բացորոշ յանձնառութիւնների, պահում է այնպիսի մի վարչութիւն, որի ներքոյ ապստամբութիւնը հանդիսանում է յուսահատ եւ գազազած ազգաբնակչութեան ապաւէնը: Անմեղ զոհերի թիւը չափազանց պարզօրէն վկայում է, որ զինուորները* (թուրք) *շատ էլ չեն նեղուել ընտրութեան մէջ... Դուռը պէտք չէ յոյս տածի, որ իր պատասխանատուութիւնն ո՛չ այլ ինչ է, բայց եթէ լոկ խօսք»:* Պրեսանսէն դառն, ցասումնալի խօսքեր էր ասում Եւրոպայի վարձկան գրչակների հասցէին, որոնք բարոյապէս դեռ խուլ ու կոյր, կամ՝ շլացած թուրքական ոսկիներից՝ արդարացնում են բարբարոսութիւնը: Ամբողջ խորհրդարանի բուռն ծափերի տակ, նա շնորհակալութիւն էր յայտնում Դելկասէին, որ նախարարական ամբիոնից պաշտօնապէս յայտարարեց, թէ *«հայերի... ապստամբութիւնն ամէնից սուրբն է բոլոր պարտաւորութիւններից»:* Ֆրանսիայում ցնցող տպաւորութիւն էին թողնում մանաւանդ Վիկտոր Բերարի խորազնին ուսումնասիրութիւնները, մերկացումները:

Հարցապնդումներ, բողոքի ցոյցեր եղան եւրոպական միւս երկրների խորհրդարաններում, նաեւ գերմանական Ռայխստագում, աւստրիական Ռայխսրատում: Բելգիայում Վանդերվելդը յամառ պայքար էր տանում *«այն ոյժի դէմ, որ այնտեղ, Արեւելքում, աւելի գազանային եւ աւելի խորամանկ՝ յաւակնում է միւս կառավարութիւնների կրաւորական մեղսակցութեամբ եւ ոսկիներ ծախսելով, գլուխ հանել մի ժողովրդի ջարդը»:* Բրիւքսէլում կազմակերպուեց հայասէրների մեծ համագումար-ցոյցը. պատգամաւորներ Գերմանիայից, Անգլիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, եւրոպական միւս գրեթէ բոլոր երկրներից: Լոնդոնում Լորդ Բրայսի նախագահութեամբ տեղի ունեցաւ նաեւ անգլեֆրանսիական մասնաւոր մի համագումար:

Բոլոր այս ոգորումները, քայլերը, անշո՛ւշտ, ազդեցին ռուսական քաղաքականութեան վրայ: Միւս կողմից, նրանք սանձեցին ե՛ւ թուրք կառավարութեան հայաջինջ ախորժակները:

Բայց անօգուտ պիտի անցնէին այդ բոլորը, եթէ քաղաքական աշխարհում տեղի ունեցած չլինէին նոր դասաւորումներ պահանջադրող խմորումներ:

Հակառակ Նիկոլայ Բ.-ի կառավարութեան Սուլթանին ցոյց տուած

ջերմ գործակցութեան՝ հայութիւնն ոչնչացնելու խնդրում, Կ. Պոլսում ուժեղացած էր գերմանական ազդեցութիւնը: Ռուսաստանում կային (թէպէտեւ քիչ) հասկացողներ, որ Սուլթանը միայն շահագործում եւ խաբում է ցարի կառավարութիւնը, որ վերջինը լքելով աւանդական իր քրիստոնէապաշտպան քաղաքականութիւնը, խորտակում է իր իսկ տիրապետութեան հիմքերն Առաջաւոր Ասիայում: Բայց գործում էր ո՛չ թէ զղջումի, դարձի ոգին կամ քաղաքական իմաստութիւնը, այլ՝ միայն նախանձը, նեղսրտութիւնը: Կրետէի հարցում էլ Ռուսաստանը բռնել էր նոյն հակաքրիստոնէական դիրքը: Բայց յոյների պարտութիւնից յետոյ թուրքերը ճանաչում էին միայն Գերմանիայի երախտիքը: Երբ 1897-ի աշնան ֆրայհէր ֆոն Մարշալն որպէս գերման կայսերական պատուիրակ Կ. Պոլիս գնաց՝ թուրքերը նրան ընդունեցին շքեղ ցոյցերով: Աւելի մեծ եղաւ ռուսների կատաղութիւնը, երբ Կ. Պոլսում երեւաց գերման կայսերական զոյգը: Կայսրը դեռ Պոլսում էր, երբ ռուս կառավարութիւնը յանկարծ «յունասէր» դարձաւ եւ 18 հոկտ. 1898-ին, վերջնագիր յղեց թուրքերին՝ պահանջելով զօրքերի հեռացումը Կրետէից: Գէորգ իշխանը նշանակուեց Կրետէի կառավարիչ եւ կղզին կցուեց Յունաստանին: Դրանով ցարն ուզում էր թուրքերին ցոյց տալ գերմանական բարեկամութեան անարժէքութիւնը: Բայց աւելի՛ մեծ զայրոյթ առաջ բերեցին Վիլհելմ կայսեր յայտարարութիւններն Երուսաղէմում եւ Դամասկոսում: Քրիստոնէական ուխտավայրում, աւետարանական փրկչի նորակառոյց եկեղեցու օծման առիթով, կայսրը գերմանական հովանաւորութիւն հռչակեց բոլոր գերմանների վրայ, առանց դաւանական խտրութեան, մինչդեռ գերման կաթոլիկները մինչ այդ ենթակայ էին ֆրանսիական հովանաւորութեան: Դամասկոսում կայսրը ճառ ասաց խաչակիրների դէմ մղած կռիւներով իսլամական հերոս համարուած քիւրդ Սալահէդդինի դամբարանի վրայ, իրան, մի որոշ չափով, հռչակելով պաշտպանը *«աշխարհի 300 միլիոն մահմեդականների»*, որոնցից 250 միլիոնն Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հպատակներն էին: Դրանով հարթուեց անգլեւֆրանս-ռուսական զինակցութեան ուղին, թէպէտեւ Ասիայում անգլեւռուս շահերն ու նպատակները շարունակում էին մնալ ներհակական: Ռուսաստանը, 1899-ին, վերջին եւ ծախող մի փորձ արեց նեղուցների եւ ասիական Թուրքիայի վերաբերեալ հասկացողութեան գալու Գերմանիայի հետ: Գերմանիան պիտի պաշտպանէր Ռուսիայի Դարդանելեան նպատակները, սա՝ նրա փոքր-ասիական տնտեսական ձեռնարկները: Անգլիայում, 1901-ին, գահ բարձրացաւ Եդուարդ Է.-ն, որը յամառօրէն հետապնդեց Գերմանիան չէզոքացնելու եւ զինակիցներով պաշա-

ռելու քաղաքականութիւնը: Անհրաժեշտ էր զօրաւոր մի հարուած հասցնել Ռուսիային, որպէսզի սա ի սպառ նետուէր անգլիական քաղաքականութեան ուռկանը: Դա արուեց Հեռաւոր Արեւելքում, Ճաբոնիայի ձեռքով (1904/5-ին): Ռազմապէս, քաղաքականապէս նսեմացած եւ ներքին յեղափոխական շարժումներից վտանգուած, ռուս կառավարութիւնն զգում էր, որ զինակից Ֆրանսիայում չունի այլեւս Հանոտոյի օրերի կշիռը: Ֆրանսիան ծանօթ այլեւս ռուսական փտախտին՝ զօրաւոր հակում էր ցոյց տալիս դէպի Անգլիա: Հարցն այլեւս պարզ էր: Կնքուեց անգլեւֆրանսիական դաշինքը՝ Հիւս. Ափրիկէի վերջնական բաժանման վերաբերեալ (8 ապրիլ 1904): Դրանով, Ֆրանսիան աւելի՛ զօրաւոր մի նեցուկ գտաւ Գերմանիայի դէմ: Շուտով ծագեց Մարոկկոյի կնճիռը. Անգլիան եւ Գերմանիայի զինակից Իտալիան (որ դեռ չէր ստացել վաղուց խոստացուած իր բաժինը Հիւս. Ափրիկէում) պաշտպանեցին ֆրանսիական տեսակէտը: Հենց ռուս-ճաբոնական պատերազմից անմիջապէս յետոյ, ասիական կալուածների փոխադարձ ապահովութեան սկզբունքով, դաշինք կնքուեց նաեւ Անգլիայի եւ Ճաբոնիայի միջեւ: Ֆրանսիայում այն աստիճան ընկել էր ռուսական կշիռը, որ այնտեղ մարդիկ անպատշաճութիւն չէին տեսնում միանալ այդ դաշինքին: Այդ բոլորից յետոյ, թւում էր, թէ առողջ տրամաբանութիւնը Ռուսաստանին պիտի մղէր դէպի գերմանական զինակցութիւնը: Դրա փոխարէն, կնքուեց անգլեւռուսական մի դաշինք (1907-ին)՝ գլխաւորապէս Պարսկաստանում ազդեցութեան գօտիներ հաստատելու (հիւսիսը՝ Ռուսաստանին, հարաւը՝ Անգլիային): Ռէվալում տեղի ունեցաւ Էդուարդ Է.-ի եւ Նիկոլայ Բ.-ի տեսակցութիւնը (8 յունիս 1908): Դարդանելի ցնորքներն աւելի բուռն կերպով ալեկոծեցին ռուս դիւանագէտների սահմանափակ երեւակայութիւնը: Այդ դէպքը ճակատագրական հետեւանքներ ունեցաւ թուրք պետութեան եւ հայ ժողովրդի համար: Դարդանելը ձեռք բերելու յոյսով, ինչպէս նաեւ դաշնակից Անգլիայի եւ Ֆրանսիայի հասարակական կարծիքը բաւարարելու հաշիւներով, Ռուսաստանը փոխեց կամ փոխել կեղծեց հակահայ իր քաղաքականութիւնը: Նոյնը կատարեցին թուրքերը՝ Օսմանեան խարխլած պետութիւնը բաժանումի վտանգից փրկելու նպատակով:

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Հայերի եւ Հայկական Դատի եւրոպացի պաշտպանների արած քաղաքական լայնածաւալ աշխատանքը դրական արդիւնքներ

չտուեց: Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում կար մեծ համակրանք: Բայց այս տեղերում էլ, ինչպէս Վանդերվելդն էր ասում Բելգիայի մասին, *«պետական եւ սրտի նկատումներ»-ի* հակամարտութեան հետեւանքով, մարդիկ բաւարարւում էին բողոքներով, ցոյցերով: Վիլհելմ կայսրը, 1898-ին, անպատասխան թողեց հայերի դիմումը: Հետագային (1906թ.) հիասթափութեամբ վերջացան նաեւ Միացեալ Նահանգների նախագահ Ռուզվելտի միջամտութեան կապուած պատրանքները:

Յոգնած եւ հիասթափուած էին նաեւ թուրքերը: Ռուսաստանն էր նրանց գլխաւոր յենարանը եւ աջակիցը: Բայց նրանք հաւատում էին, որ ռուսների հակահայ քաղաքականութիւնը ժամանակաւոր թիւրիմացութիւն է միայն եւ իր հիմքում չի վերացնում ռուսեւթուրք հակամարտութիւնը: Դեռ 1905թ. մայիսին Կովկաս էր եկել նոր փոխարքայ Վորոնցով-Դաշկովը, որ իրան պճնազարդում էր «հայասէր»-ի փետուրներով եւ ձգտում էր հաշտեցնել ռուս պետականութեան եւ հայ ազգայնականութեան շահերը: Անգլեռուս զինակցութիւնից (1907թ.) յետոյ «երիտասարդ թուրքեր»-ը մատնուեցին ահաւոր տագնապի: Նրանց առջեւ ցցուեց խարխլած Թուրքիայի բաժանման ուրուականը: Նրանք կրկին դիմեցին հայ յեղափոխականներին: Թուրքիայում գործող յեղափոխական ոյժերի եւ «երիտասարդ թուրքեր»-ի միջեւ կնքուեց համաձայնութիւն (1907թ. դեկտ.): Կէտերն էին՝ *1) Աբդիւլ Համիդի գահընկեցութիւնը, 2) ներկայ վարչաձեւի արմատական փոփոխութիւնը, 3) պարլամենտական դրութեան հաստատումը:* Միջոցների շարքում նախատեսուած էր եւ *«ընդհանուր ապստամբութիւն»-ը:* Բայց այդպիսին տեղի չունեցաւ, եւ «երիտասարդ թուրքեր»-ը միայն հեռուից «բարեկամաբար» դիտում էին հայերի շարունակած կռիւը: Կացութիւնը փոխուեց, երբ տեղի ունեցաւ Եդուարդ Է.-ի եւ Նիկոլայ Բ.-ի տեսակցութիւնը Ռէվալում (1908թ. յունիսին): Դրանից մի ամիս յետոյ (1908թ. յունիսին) Սալոնիկի բանակը Կ. Պոլիս մտաւ եւ յայտարարեց *Սահմանադրութիւն:*

Կատարուածը յեղափոխութիւն չէր, այլ՝ քաղաքական անարիւն դերասանութիւն, որ մեթոդ էր դարձել 1830-ական թուականներից, «երիտասարդ թուրքեր»-ի շարժման հիմնադիր Ռէշատ փաշայի օրերից: Թուրքիայի տկարութեան բոլոր վայրկեաններին կատարուել էին նման խեղկատակութիւններ («Գիւլհանէի Հատտի Շէրիֆ»-ը՝ 1839-ին, «Հատտի Հիւմայիւն»-ը՝ 1856-ին, «Միդհատի սահմանադրութիւն»-ը՝ 1876-ին): Դրանք փորձուած միջոցներ էին մարդկայնութիւն, ազատականութիւն, պետական իմաստութիւն կեղծելու ճանապարհով՝ յետ

վանել եւրոպական միջամտութեան վտանգը: Նոյնն էր կրկնւում այժմ: «Ազատութիւն - խաղաղութիւն - հաւասարութիւն» նշանաբաններով, թուրքերն ուզում էին բարոյապէս Եւրոպային զինաթափել, ռազմապէս՝ հայերին: Դադարեց հայեւթուրք կռիւը, թէպէտեւ «հաշտութեան» ձեւի տակ, ժամանակաւոր մի զինադադար էր միայն կնքուել: Թուրքերն առիթ չփախցրին շարունակելու դաւը՝ հայ ժողովրդի գոյութեան դէմ: Սահմանադրութեան հռչակումից հազիւ 8 ամիս անց նրանք անակնկալօրէն յարձակուեցին հայերի վրայ: Կիլիկիայում ջարդուեցին 30.000 հայեր: Ջարդին մասնակցել էին հենց «երիտասարդ թուրքերը»: Կարինում հայերը փրկուեցին գրեթէ հրաշքով: Այստեղ Եղիշէ Թոփչեանը, կռահելով գալիքը, հայկական գիւղերից զինուած ոյժեր էր մտցրել քաղաք: Կիլիկիայում, թուրքերն իրանց կորուստները հաշւում էին 19.000: Մեղքը բարդուեց Աբդիւլ Համիդի վրայ եւ խնդիրը փակուեց նրա գահընկեցութեամբ: Դրանով էլ չփոխուեց կացութիւնը: Հայաստանում յարաբերութիւնները սրուած էին մնում, մասնաւորապէս հողային հարցի պատճառով: Հայերը յետ էին պահանջում համիդեան սարսափների օրերին քիւրդերի եւ թուրքերի կողմից բռնագրաւուած իրանց հողերը: Թուրքերը միայն թղթի վրայ էին ճանաչում հայերի «օրինական իրաւունք»-ը: Բայց եւ այնպէս, այդ շրջանին անհամեմատօրէն լաւ էր Թուրքիայի հայերի դրութիւնը, մանաւանդ որ Ռուսաստանում վերսկսել էր հալածանքը հայ յեղափոխականների դէմ, իսկ Պարսկաստանում մղւում էին *«սահմանադրական»* կռիւները: Քաղաքականի հետ՝ նաեւ հայերի մշակութային կեանքի ծանրութեան կենտրոնը տեղափոխւում էր թուրքաց Հայաստան:

Կ. Պոլսում է՛լ աւելի էր բարձրացել հայերի քաղաքական կշիռը: Օսմ. պետութեան նախարարութիւններից մի քանիսը, յաճախ՝ անգա՛մ արտաքին գործոցը, հայերի ձեռքում էր: Ամբողջ Թուրքիան գտնւում էր Օսմանեան պարլամենտի հայ մի քանի երեսփոխանների (ինչպէս Գրիգոր Զօհրապ) հռետորական հմայքի, նրանց մշակած հանրօգուտ շինարարութիւնների, գործերի նախագծերի ազդեցութեան տակ: Քրիստոնեաների զինուորագրութեան հետեւանքով, թուրքական բանակում հայ տարրը, որակի տեսակէտով, գրաւում էր առաջնակարգ դիրք: Կ. Պոլսի «Հայոց Միացեալ Ընկերութիւն»-ը եւ կրթական այլ մարմիններն ստեղծում էին դպրոցական հսկայական մի ցանց ամբողջ Հայաստանում եւ Անատոլիայում: Թուրքիայի տնտեսական շինարարութեան եւ առաջադիմութեան զարկերակը գտնւում էր հայերի ձեռքում: Հայ մտաւորականութիւնը վերջնականապէս լքել էր կռուի ուղին եւ Հայկական Հարցի լուծումը կապել Արեւելքի ընդհանուր հա-

սարակական-քաղաքական պայմանների բնաշրջական զարգացման հեռանկարներին: Մեծ խանդավառութեամբ եւ ապագայի լաւ յոյսերով, հայերը, 1912-ին, տօնեցին իրանց գրերի գիւտի 1500-ամեակը: Նրանք ոգեւորուած էին մասնաւորապէս հայկական համալսարանի ծրագրով: Կատարւում էին դրամական մեծ նուիրատուութիւններ (միայն բագուեցի Արշակ Ղուկասեանը նուիրեց 7 միլիոն ոսկի ռուբլի): Համալսարանը պիտի հաստատուէր հէնց դարերով բարբարոսների լծի տակ տառապած թուրքաց Հայաստանում՝ հայոց հայրենիքի պատմականօրէն նուիրական Տարօն գաւառում: Պիտի վերականգնուէր, ուրեմն, հայկական հին, պանծալի մշակոյթը:

Այդ օրերին, ահա՛, Եւրոպայի դիւանագէտները յիշեցին 34 տարի առաջ, 1878թ. «Բերլինի Վեհաժողով»-ի հայերին արած խոստումները: Նրանք պահանջեցին եւ հարկադրեցին տաճիկներին՝ լայն ինքնավարութիւն տալ հայերին: Մութ եւ ահաւոր առեղծուած - գլխաւոր պահանջողն էր ցարական Ռուսաստանը:

ՄՈՒԹ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ

Սահմանադրութիւնն ազատութիւն չբերեց Թուրքիայի ժողովուրդներին, ո՛չ էլ փրկութիւն՝ Օսմ. կայսրութեան: Վարչաձեւի փոփոխութիւնը չեղաւ ոգու յեղաշրջումով: Թուրքը մնաց նոյն անհանդուրժողը՝ փոքրամասնութիւնների ազատութեան: Դժգոհութիւնները խորացան Արաբիայում, ուր տեւական կռիւ էր մղւում օսմանեան իշխանութեան դէմ: Ապստամբեցին ալբանացիները, անգամ քիւրդերը: Իտալիան գրաւեց Տրիպոլին եւ Կիրենայկան՝ Ափրիկէից վերջնօրէն վտարելով օսմանեան դրօշը: Այդ պատերազմը հազիւ վերջացած՝ ոտքի ելան բալկանեան քրիստոնեաները: Բուլղարիան, Յունաստանը, Սերբիան, Սեւ Լեռը միացած՝ թուրքերին դուրս էին քշում ե՛ւ Եւրոպայից: Բուլղարական բանակը հասաւ Չաթալճա եւ սպառնաց Կ. Պոլսին: Սկզբում սրտառուչ էր Բալկանի քրիստոնեայ ժողովուրդների համաձայնութիւնը: Խանդավառ էին նաեւ հայերը, որոնք կամաւորների փոքրիկ մի զօրախմբով կռւում էին բուլղարական բանակի շարքերում եւ տրամադիր էին շա՛տ աւելին անել: Արեւելեան Թրակիայում, ազատագրուած հայերը զինական իրանց ծառայութիւնն էին առաջարկում բուլղարներին: Ռոդոստո հայաբնակ քաղաքում շքեղ ընդունելութիւն ցոյց տրուեց Բուլղարիայի թագաւոր Ֆերդինանդին, որ դրել էր նաեւ Հայաստանի ազատագրման հարցը: Բայց մեծ պետութիւնների հակամարտութիւնները Բալկաններում հրահրեցին ուխտադաւութեան ոգին:

Անհամաձայնութիւնը աւարի բաժանման խնդրում՝ յանգեց նոր պատերազմի: Նախկին զինակիցներից երեքը, միացած Ռումանիային, իրանց զէնքը դարձրին Բուլղարիայի դէմ: Ապերախտուեց եւ չարաչար կերպով պարտուեց հակաթուրք պայքարի իսկական դրօշակիրը: Տխուր այդ կացութիւնից կրկին օգտուեց Թուրքիան: Առանց դիմադրութեան հանդիպելու, էնվէրը մտաւ Ադրիանուպոլիս եւ ձրի շահեց յաղթականի պսակը: Քայքայուած թուրք պետութեան մէջ դերասանութիւնն աւելի եւ աւելի գրաւեց քաջութեան տեղը: Բայց դրանով էլ թուրքերը կարողացան Եւրոպայում որպէս ոյժ ծախել իրանց:

Հայերը փախցրեցին փրկութեան ամենայարմար առիթը: Նրանք չօգտագործեցին օսմանեան պետութեան ամենատկար վայրկեանը. չապստամբուեցին: Պատճառները չեն արդարացնում ժամանակի հայ գործիչներին, որոնք, լքած կռուի միջոցը, տարուած էին բնաշրջական նախապաշարումներով: Ազդեցին, անշո՛ւշտ, նաեւ մի քանի դէպքեր. 1) Կարճ տեւեց բալկանեան քրիստոնեաների համաձայնութիւնը. հայերը դառն փորձառութիւններ ունէին եւրոպական դիւանագիտութեան մասին եւ ցաւով հասկանում էին, որ ապերախտուած ու դաւադրուած Բուլղարիայի կրած աղէտները հետեւանք են հզօր ոյժերի սադրանքներին, մութ հաշիւներին: 2) Քաղաքականութիւնը բարոյականով պայմանաւորող ժողովուրդ՝ նրանք ասպետական գործ չէին համարում զարկել կործանուող Թուրքիայի թիկունքից, մանաւանդ որ պատճառներ ունէին չվստահել ռուսական դիւանագիտութեան: 3) Հայերը տեսնում էին, որ Թուրքիայում օրից օր ուժեղանում է Գերմանիայի ազդեցութիւնը, որի հետ նոյնպէս կապում էին ընդհանուր մի վերածնութեան յոյսեր: 4) Նրանք նկատում էին ռուսեւգերման շահերի վտանգաւոր հակամարտութիւնը Փոքր Ասիայում, ուստի եւ գիտէին, որ մի ապստամբութիւն կարող է առիթ ծառայել ո՛չ միայն իրանց համար անորոշ հետեւանքներով ռուսական միջամտութեան, այլեւ՝ ռուսեւգերման պատերազմի:

Դեռեւս 1912թ. գարնան, ռուս կառավարութիւնը լրջօրէն անհանգստանում էր գերմանեւհայ մի հասկացողութիւնից՝ Փոքր Ասիայում: Հենց Կովկասում զգալի թիւ էր կազմում գերմանասէր հայ մտաւորականութիւնը: Փոքր Ասիայում Գերմանիայի համար լաւագոյն առիթն էր ներկայանում բարերարել հայ ազգը եւ Առաջաւոր Ասիայում ստեղծել ամուր, տեւական, արիական մի խարիսխ: Նման մտքեր տեղ էին գտնում այդ օրերին հայոց պաշտօնական օրգանի հանգամանք ունեցող Կ. Պոլսի «Ազատամարտ» թերթում: Հայերն անտարբեր չէին դէպի գերմանական ծրագիրը, որ ռուսեւգերման այդ հակամարտու-

թիւնների օրերին, նոյն թերթում պարզում էր հայութեան գերմանացի բարեկամներից դր. Լեպսիուսը. «*Գերմանական քաղաքականութիւնը կատարեալ յեղաշրջում է կրել Հայկական Խնդրի նկատմամբ: Որքան գերման նախաձեռնողները մտնում են Փոքր Ասիայի խորքերը, այնքան նրանք աւելի եւ աւելի այն համոզման են գալիս, որ գրեթէ չեն կարող յաջողութիւն գտնել… առանց հայերի աջակցութեան: Ուստի՝ գերմանացիք վճռել են խրախուսել այդ ընդունակ, բայց անտարբերութեան մատնուած ժողովրդին: Գերմանական դիւանագիտութիւնն ըստ ամենայնի աշխատելու է Հայաստանում բարենորոգումներ մտցնելու եւ միանգամընդմիշտ վերացնելու այդ երկրում անդորրութիւնը խանգարող պատճառները: Այս հոգացողութիւնն անհրաժեշտ է մանաւանդ այն պատճառով, որ նա նպատակ ունի պահպանել ասիական Թուրքիայի անձեռնմխելիութիւնը…: Ամէնից առաջ բանակի կազմակերպումը կը յանձնուի բացառապէս գերմանացի սպաներին… ուստի՝ կարելի է վստահ լինել, որ… բնակչութեան կեանքը կ'ապահովուի: Երկաթուղու կառուցումն, իր բոլոր ճիւղերով, աստիճանաբար առաջ է գնում. Սեբաստիա-Խարբերդ-Տիգրանակերտ գիծը մեր ձեռքին կը լինի, այս է երկրի վերածնութեան նոր միջոցը: Բայց լուսաւորութեան ջերմ կողմնակից հայերին առանձնապէս կ'ուրախացնի Կ. Պոլսում գերմանական համալսարան հիմնելու ծրագիրը: Սակայն ամէնից առաջ պէտք է փոխել դասաւանդման եղանակը ստորին եւ միջնակարգ դպրոցներում: Այդ բանի համար մենք կ'օգտուենք հայերից*»:

Անհանգստացած հայերի՝ Գերմանիային հակուելու վտանգից, Պետերբուրգի կառավարութիւնը դիմում է մի շարք քայլերի՝ ձեռք բերելու «հայոց բարերար»-ի պատիւը: Էջմիածնի նորընտիր Կաթողիկոսի (Գէորգ Ե.)՝ ցարին արած աւանդական այցելութեան առիթով (1912-ի գարնան), Պետերբուրգի պալատը նրան հաւաստիքներ է տալիս, թէ փոխուել է ռուսների հայկական քաղաքականութիւնը: Միաժամանակ, թելադրւում է Հայոց Հայրապետին, առաջարկ բերել՝ Հայկական Հարցի լուծումը Ռուսաստանին վստահելու իմաստով: Մի քանի ամիս յետոյ (հոկտ. 2-ին) Կաթողիկոսը դիմում է Նիկոլայ Բ.-ին՝ խնդրելով Թուրքիայի հայերին ընդունել իր հովանաւորութեան տակ: Որ այդ քայլը կատարուել է որոշ հարկադրանքի տակ, դա պիտի պարզուէր հետագայ դէպքերից: Կաթողիկոսարանի արտասահմանեան օրգանները (Կ. Պոլսի Պատրիարքարան եւ սրան համախոհուրդ գործող հայ քաղաքական մարմինները) Լոնդոնի «Անգլեւհայկական Կոմիտէ»-ի անունից դիմեցին 6 մեծ պետութիւններին եւ Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ Թաֆթին: Կաթողիկոսը

նշանակեց նաեւ մի պատուիրակ (Պօղոս Նուբար փաշա), աշխատանք տանելու եւրոպական մայրաքաղաքներում: Այս քայլերը ցոյց են տալիս, որ էջմիածինը չէր ուզում ամբողջովին անձնատուր լինել ռուսական քաղաքականութեան եւ Հայկական Խնդրի լուծումը ցանկալի էր համարում համաեւրոպական ճիգով ու համաձայնութեամբ:

Կ. Պոլսի ռուսական դեսպան Գիրսը Սազոնովին ուղղած պաշտօնական մի գրութեամբ (26 նոյեմբեր 1912) ահազանգ է հնչեցնում Պետերբուրգում, որ հայերը պատրաստւում են դիմել եւրոպական մեծ պետութիւններին, որով՝ *«նախաձեռնութիւնը դուրս կը գայ մեր ձեռքից»*: Նա աւելացնում է. *«Անհրաժեշտ է հաւաստիացում տալ թէ՛ Կաթողիկոսին, թէ՛ Կ. Պոլսի Պատրիարքին, թէ կայսերական կառավարութիւնը հայ ժողովրդին... ցոյց կը տայ... հնարաւոր հովանաւորութիւնը: Այսպիսի մի խոստում... Թուրքիայի հայերին յոյս կը տայ, թէ մենք կ'օգնենք... Դա կարող է նրանց յետ պահել պետութիւններին դիմելուց... Բայց պէտք է նկատի առնել եւ այն հնարաւորութիւնը, որ ներկայումս Թուրքիայում տիրող անիշխանութեան մէջ բարենորոգումները սպասուող հանգստացումը չեն բերելու եւ պատրաստ լինել այն բանին, որ մեր զօրքերի մուտքը հայկական նահանգներում գուցէ անհրաժեշտ դառնայ»:*

Պետերբուրգի կառավարութեան թելադրանքով Կովկասի փոխարքան մի պաշտօնագրով (22 դեկտեմբեր 1912) յայտնում է Կաթողիկոսին. *«...Կայսերական կառավարութիւնն առաջարկութիւն է արել թուրք կառավարութեան... այժմ իսկ լուրջ կերպով զբաղուել բարենորոգումներով՝ թուրքաց Հայաստանում... Հետեւելով դարաւոր աւանդութիւններին եւ խորին զգացմունքով վերաբերուելով հայ ժողովրդի տանջանքներին կայսերական կառավարութիւնն այսուհետեւ էլ մտադիր է ամենաբարեացակամ կերպով վերաբերուել Թուրքիայում հարստահարուող հայ ժողովրդի կարիքներին... անհրաժեշտ բարենորոգումներն իրագործելու նպատակով: Կայսերական կառավարութիւնը, սակայն, գտնում է, որ հայերի շահերին անհամապատասխան է Հայկական Հարցի քննութեան առնելը պետութիւնների առաջիկայ խորհրդաժողովում (Լոնդոնի), որ հաւաքւում է բալկանեան տագնապը կարգաւորելու, որովհետեւ հիմք ունի կասկածելու, թէ եւրոպական պետութիւնները միակամ կը լինեն հայերի համար կենսական հարցի լուծման ժամանակ: Եւ սակայն, պետութիւնների այսպիսի միակամութեան բացակայութիւնը... ինչպէս ապացուցել է պատմական տխուր փորձը, պիտի ստեղծի նպաստաւոր պարագաներ, որպէսզի թուրք վարչութիւնը խուսափողական վերաբերմունք ցոյց տայ դէպի*

հայերի դրութեան բարւոքման գործը: ...Ես առանձնապէս կարեւոր կը համարէի, որ ներկայ վճռական վայրկեանին հայերը ցոյց տային առանձին շրջահայեցութիւն...եւ հաւաքական անժամանակ դիմումներով չբարդացնէին կայսերական կառավարութեան գործը՝ Թուրքիայի հայոց դրութեան լաւացման խնդրում»...

Պարզ են ռուսների ձգտումները. 1) ապահովել Հայկական Հարցի նախաձեռնութիւնը՝ չէզոքացնելու համար գերմանական ազդեցութեան վտանգը, 2) անմիջապէս պատերազմ չյայտարարել Թուրքիային (որովհետեւ այդ քայլին դէմ էր անգամ զինակից Անգլիան), 3) բարենորոգումներ մտցնել Հայաստանում, գիտենալով, որ դրանից յետոյ թուրքերը, ըստ սովորութեան, պիտի մղուեն հայկական նոր կոտորածներ սարքելու, 4) այդ կոտորածներն առիթ համարելով՝ քրիստոնեաների պաշտպանութեան խնդիր յարուցել եւ գրաւել թուրքաց Հայաստանը:

Հայերն հասկանում էին այդ բոլորը, եւ հակառակ Կաթողիկոսարանի կամայ թէ ակամայ ռուսահակ քաղաքականութեան՝ նախապատուութիւն էին տալիս ինքնավարութեան՝ եւրոպական մի ոյժի ազդեցութեամբ բարեկարգուած Թուրքիայում, քան թէ ընկնել ռուսական հովանաւորութեան տակ: Նրանց սրտում դեռ լայն տեղ էր գրաւում երկիւղը լոբանովեան քաղաքականութիւնից: Պատմական դառն յիշողութիւնը սնուցում էր տխուր հեռանկարներ: Գերմանացիք թերեւս հասկանում էին այդ բանը եւ Կ. Պոլսի դեսպան բարոն Ֆօն Վանգենհայմը թելադրում էր թուրքերին՝ զիջող լինել Հայկական Խնդրում: Վերջինները, սակայն, ապաւինած կեղծաւորութեան եւ դերասանութեան՝ զլանում էին ընդառաջել որեւէ բարի ցանկութեան: Ներքին գործերի նախարար Թալաաթ բէյը շարունակ այցելում էր Հայոց Պատրիարքարան եւ խնդրում՝ հրաժարուել եւրոպական միջամտութիւնից: Դրա հանդէպ՝ թուրք կառավարութիւնը մշակում էր եւ հայերին ներկայացնում 17 յօդուածներից բաղկացած «բարենորոգումներ»-ի խեղկատակային մի ծրագիր՝ Աբդիւլհամիդեան օրինակով: Այդ ծրագիրը Հայաստանից կտրում էր Կարինի եւ Սեբաստիայի նահանգները եւ իբրեւ հայկական շրջան ճանաչում միայն Վանի, Բաղէշի, Տիգրանակերտի եւ Խարբերդի նահանգները: Սրանց մասին էլ ծրագրի յօդ. 1-ը տնօրինում էր. *«Օրէնքները, որոնք որոշում են պաշտօնեաների յարաբերութիւնները, ինչպէս եւ վարչական, ելեւմտական, իրաւական, զինուորական օրէնքները, շէրիի օրէնքը, որոնք գործում են ամբողջ պետութեան մէջ՝ իրանց ոյժում են մնում եւ յիշեալ չորս նահանգներում»:* Մնացեալը՝ նոյնանման թթու իսլամամոլ զառան-

ցանքներ, արդիւնքի տեսակէտով գործնական նշանակութիւնից զուրկ, մութ, երկդիմի դարձուածքներ – ընդհանուր մի տեսուչ (անշո՛ւշտ, Սուլթանից նշանակելի, որով՝ թուրք), օժանդակ մի յանձնախումբ (3-ը՝ մահմեդական, 3-ը՝ քրիստոնեայ), *«ընդհանուր տեսուչն իրաւունք ունի հեռացնելու նահանգի պաշտօնեաներին* (այսինքն՝ թուրքերի հաշուին չեկած քրիստոնեաներին), *բացի շարիաթի պաշտօնեաներից»* (յօդ. 8): Բայց այդ բոլորից յետոյ՝ նաեւ մի խոստում (յօդ. 11). *«Վճռել, արդարութեան հիմքերի վրայ* (շարիաթի՞, որ մասնաւորապէս Թուրքիայում, գեավուրների ստացուածը «հալալ» է անում միւսիւլմաններին) *հողային վէճերը՝ քիւրդերի եւ հայերի միջեւ»* (թուրքերի խլած հողերի մասին ո՛չ մի խօսք): *«Վերացնել երկու այդ տարրերի (հայերի եւ քիւրդերի) պառակտումների առիթները եւ նրանց միջեւ հաստատել կատարեալ համաձայնութիւն»:* Եւ այդ ա՛յն օրերին, երբ քիւրդերն ապստամբական լայն շարժում էին սկսել եւ կոչ էին անում հայերին՝ միասնաբար խորտակել *«բոլոր չարիքների, անգթութիւնների հեղինակ, բոլոր թշուառութիւնների պատճառ նենգաղաւ թուրքի* իշխանութիւնը:*

Հայերի երկրորդ սխալն եղաւ, որ նրանք չմիացան քրդական այդ ապստամբութեան՝ կործանելու իշխանութիւնը մի ժողովրդի, որ անընդունակ է հաւատարմութեան եւ անարժան նման վերաբերմունքի: Մենակ մնացած քիւրդերը չկարողացան ընդլայնել շարժումը եւ Բաղէշը հազիւ գրաւած՝ ջարդուեցին: Շարժումը համարուեց արդիւնք ռուսական հրահրումի: Դրանով, երեւի, ռուսները ձգտում էին անապահովութեան մթնոլորտ ստեղծել հայկ. նահանգներում եւ հայերին աւելի եւ աւելի հարկադրել իրանց քաղաքականութիւնը: Եւ իրօք, դէպքերի ազդեցութեան տակ, էջմիածնի Կաթողիկոսը եւ Կովկասի հայկական մարմինները նոր դիմումներ են անում ռուս կառավարութեան՝ ապահովելու Թուրքիայի հայութեան ինքնապաշտպանութեան գործը: Կառավարութիւնը, սակայն, նկատելով, որ Թուրքիայի հայերը քիւրդերից են անհանգստանում եւ տրամադիր չեն կանգնել օսմ. իշխանութեան դէմ՝ մերժում է զէնք տալ նրանց: Այդ առիթով, Կովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովը, 24 մայիս 1913-ին, գրում է Հայոց Կաթողիկոսին. *«Ապրիլ 27-ին զինուորական մասի իմ օգնական զօր. Շատիլովին ներկայացաւ մի պատգամաւորութիւն Կով-*

---

* Քիւրդի սովորական որակումը թուրքի մասին՝ «նենգաղաւ թուրք» («ռոմէ խային»):

կասի հայերի կողմից, որ հրաւիրելով զօր. Շատիլովի ուշադրութիւնը թուրքահպատակ հայերի առանձնապէս ծանր դրութեան վրայ ներկայ վայրկեանում, խնդրեց աջակցութիւն ցոյց տալ նրանց, ինքնապաշտպանութեան միջոցներ հայթայթելով թշնամի մահմեդական ազգաբնակութեան դէմ» (այսինքն՝ քիւրդերի եւ ո՛չ թէ թուրք կառավարութեան)... *«Այժմ արտաքին գործոց նախարարն ինձ ծանուցեց, որ կայսերական կառավարութիւնն արդէն ձեռք է առել բոլոր միջոցները Թուրքիայի հայ ժողովրդի դրութիւնը շուտափոյթ կերպով բարելաւելու համար: ...Ես անհրաժեշտ համարեցի ....տեղեկացնել Ձեր Վեհափառութեան, թէ այժմ ի՞նչ փուլի մէջ է գտնւում թուրքաց Հայաստանի բարենորոգումների հարցը, որպէսզի Դուք, Ձեր լուսաւոր հեղինակութեամբ, հանգստացնող ներգործութիւն անէք հայ ժողովրդի... յուզուած մտքերի վրայ եւ մի անգամ եւս պնդէք նրան ինքնազսպման եւ հանդարտութեան անհրաժեշտութիւնը»:*

Ռուսները զէնք չէին տալիս հայերին, որովհետեւ սրանք չէին ուզում դուրս գալ Օսմ. պետութեան դէմ: Հայերն այդ չէին անում, որովհետեւ այդ պետութեան թիկունքում կանգնած էր եւրոպական այլ մի ոյժ՝ Գերմանիան, որի նպատակների դէմ գործելու միտում չունէին նրանք: Կար նաեւ այն հաւատը, թէ Գերմանիան բարեկարգութիւններ մտցնելով Թուրքիայում, ինքնաբերաբար պիտի լուծի նաեւ Հայկական Հարցը: Եւ վերջապէս, որպէս վիպապաշտ քրիստոնեաներ, հայերը չէին ուզում առիթ ծառայել մի պատերազմի՝ քրիստոնեայ երկու պետութիւնների միջեւ:

Բայց եւ այնպէս, ռուս դիւանագիտութիւնը դիմեց վճռական քայլերի: Արտաքին գործերի նախարար Սազոնովը համաձայնութիւն կայացրեց անգլիական եւ ֆրանսիական կառավարութիւնների հետ՝ Հայաստանում բարենորոգումներ մտցնելու նպատակով: Հայերը, տեսնելով, որ անգլեռուս աղիտաւոր հակամարտութիւնը վերացած է, իսկ Գերմանիան ինքն եւս անհրաժեշտ է համարում հայկական նահանգների բարենորոգումը՝ հաւատացին, որ Եւրոպան վճռել է քաւել արիւնոտ իր գործերի մեղքերը եւ ոյժ տուին ձեռնարկին: Կ. Պոլսի ռուսական դեսպանատան աւագ խորհրդական Մանդէլշտամը մշակեց հայկական նահանգներում մտցուելիք բարենորոգումների նախագիծը (8 յունիս 1913թ.), որի էական կէտերն են. *«Կարին, Վան, Բաղէշ, Տիգրանակերտ, Խարբերդ եւ Սեբաստիա նահանգներից կազմւում է մի նահանգ: Հայկական Նահանգի Ընդհանուր - նահանգապետը պիտի լինի քրիստոնեայ - օսմ. հպատակ, կամ որ աւելի նախադասելի է՝ եւրոպացի, որ նշանակւում է Սուլթանից, պետութիւնների համա-*

ձայնութեամբ: Վեց խորհրդականներ (3-ը՝ քրիստոնեայ 3-ը՝ մահմետական): Ոստիկանութիւնը կազմւում է նահանգի մահմեդական եւ քրիստոնեայ բնակիչներից՝ կէս առ կէս: Կազմակերպումն ու հրամանատարութիւնը յանձնւում է թուրքական ծառայութեան մէջ գտնւող եւրոպացի սպաներին: Խաղաղութեան ժամանակ, նահանգի զինուորցուները ծառայութիւնը կատարում են տեղում: Քրդական Համիդիէ զօրագնդերն արձակւում են: Միայն նստակեաց բնակիչները կ'օգտուեն ընտրական իրաւունքից: ...Հայերը յետ կը ստանան իրանցից խլուած հողերը կամ նրանց փոխարժէքը՝ փողով կամ հողով: Նահանգի հողերի վրայ արգելւում է մուհաջիրներ բնակեցնել: Նոյն այս սկզբունքների ոգով բարելաւուելու է դրութիւնն այն հայերի, որոնք ապրում են Նահանգի սահմաններից դուրս, մանաւանդ Կիլիկիայում: Պետութիւնները հետեւում են բոլոր այս որոշումների գործադրման»:

Այս նախագծին համաձայնութիւն տուին Անգլիան եւ Ֆրանսիան: Գերմանիան եւ իր զինակիցներն ընդդիմացան: Վեց մեծ պետութիւնների դեսպանատներից նշանակուեցին լիազօրներ: Վիճաբանական նիստերն սկսեցին յուլիս 3-ից (1913), Կ. Պոլսի աւստրիական դեսպանատան մէջ: Պայքարը մղւում էր ռուսական եւ գերմանական լիազօրներ Մանդէլշտամի եւ Շոնբերգի միջեւ: Ի վերջոյ, ռուսները զիջեցին: Գերմանական եւ ռուսական դեսպանները համաձայնութիւն կայացրին բարենորոգումների ծաւալի մասին եւ միասին յայտարարութիւն արեցին թուրք կառավարութեան: Այս ձեւով, նախաձեռնութեան պատիւը չմնաց միայն Ռուսաստանին, այլ անցաւ նաեւ Գերմանիային: Վերջապէս 26 յունուար (18 փետր.) 1914-ին, ռուսական հաւատարմատար Գուլգեւիչի եւ թուրք վարչապետ ու արտ. գործ. նախարար Սաիդ Հալիմ փաշայի կողմից ստորագրուեց *«Հայաստանի բարենորոգումների համաձայնագիր»-ը,* որ վաւերացուեց սուլթանական հրովարտակով: Հայաստանը բաժանուել էր երկու մարզերի. *1) «Կարինի, Տրապիզոնի եւ Սեբաստիայի նահանգները, 2) Վանի, Բաղէշի, Խարբերդի եւ Տիգրանակերտի նահանգները: Երկու այդ շրջանների համար նշանակւում են մէկական եւրոպացի ընդհանուր տեսուչներ: Զինուորական ծառայութիւնը կատարւում է տեղում, բայց, ցնոր կարգադրութիւն, տեղական որոշ զօրքեր ուղարկւում են Արաբիա: Ծովային զինուորները հաւաքւում են ամբողջ պետութիւնից: Համիդիէ գնդերը վերածւում են պահեստի հեծելազօրքի. նրանք զէնք կը ստանան միայն զինակոչի ժամանակ: Լուսաւորութեան նախահաշւում ամէն ազգի բաժինը համեմատական*

է տուեալ ժողովրդից գանձուած կրթական հարկերին: Միեւնոյն հաւատին պատկանող համայնքների անդամները պահում են իրանց սեփական դպրոցները: Հասարակական պաշտօնների բաշխման եւ ոստիկանութեան կազմակերպման մէջ գործադրւում է մահմեդականների եւ քրիստոնեաների հաւասարութեան սկզբունքը, ըստ հնարաւորութեան»:

Բացի եւրոպացի տեսուչներից, հայերը գրեթէ ոչինչ էին ստացել: Դրա հանդէպ, տաճիկները շարունակելով բարեկամութիւն կեղծել, սրտում կուտակում էին ոչնչացուցիչ ոխը: Նշանակուեցին երկու տեսուչներ՝ նորվեգացի Հոֆը եւ հոլանդացի Վեստենենկը: Նրանց ներկայութիւնը Կ. Պոլսում՝ հանդուրժուեց լուռ ատելութեամբ: Ռուս դիւանագիտութիւնը քարիւղ էր թափում կրակի վրայ: Հենց համաձայնագիրն ստորագրող Գուլգեւիչն յայտարարում էր. *«...Ի հարկէ, հայերը չստացան ինքնավարական լայն այն իրաւունքները, որ ուզում էր ապահովել ռուսական ծրագիրը»:* Բայց *«հայերը չեն կարող չգիտակցել, որ այժմ արուած է առաջին քայլը՝ նրանց թուրքական լծից ազատելու համար»:*

Արուած էր վերջին քայլը՝ հայ ժողովրդի գերեզմանը փորելու համար: «Բերլինի վեհաժողով»-ից (1878թ.) մինչեւ 1914-ը, եւրոպական դիւանագիտութիւնը վաճառքի նիւթ էր դարձրել հայ ժողովրդի արիւնը: Ամբողջ 36 տարի նա միակամ չեղաւ Հայկական Խնդրի նկատմամբ եւ շա՛տ խորհրդաւոր կերպով «ելք» գտաւ միայն համաշխարհային ահաւոր մի փոթորիկի նախօրէին:

Թուրքերը դանակները սրած՝ առիթի էին սպասում: Առիթը ներկայացաւ, երբ Հոֆը նոր էր ոտք դրել հայ հողի վրայ, իսկ Վեստենենկը դեռ ճանապարհին էր: Պայթեց համաշխարհային պատերազմը: Տաճիկները վայրկենաբար պաշտօնից արձակեցին եւրոպացի տեսուչներին եւ յայտարարեցին ընդհանուր զօրահաւաք: Իսկական նպատակն էր հայ ազգի ոչնչացումը՝ կռուի բռնուած Եւրոպայի անտարբերութիւնն ու հակամարտութիւններն օգտագործելու ճանապարհով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՂԵՌՆԸ

Ամբողջ մի գրականութիւն կայ բովանդակ մարդկութեան պատմութեան մէջ ծաւալով ամենամեծ, խորքով ամենազարհուրելի այս եղեռնագործութեան մասին: Քառորդ դար է անցել աշխարհաժխոր այդ դէպքից, բայց հայ յիշողութիւնը, մտածումը դեռ նրանով են կլանուած: Տասնեակներով հատորներ են յօրինել հայ գրողները, պատմագիրները, իսկ հայ մամուլը շարունակում է նորանոր դրուագներ արձանագրել: Եւրոպացիներից Լեպսիուսը Գերմանիայում, Լորդ Բրայսն Անգլիայում, Ժագ դը Մորգանը Ֆրանսիայում եւ ուրիշ շատերը նոյն այդ երկրներում, Զուիցերիայում, Իտալիայում, Սկանդինաւիայում թէ Ամերիկայում գրի են առել անօրինակ նախճիրի այլ եւ այլ դրուագներ: Բայց դրանք տուել են այն, ինչ հնարաւոր է վերարտադրել անպատմելիօրէն սարսափելի մարդկային երեւակայութիւնը տանջող եւ անմեկնաբանելիօրէն մղձաւանջային մի երազի փշրանքներից: Հայկական աղէտն սպասում է հանճարաւոր իր դիւցազնեղերգուին: Օրուայ հայը դեռ հոգեկան կարողութիւն չունի ծնել նմանին. նա շա՛տ է մօտ արիւնոտ դէպքին, դեռ լալիս է իր զոհերի վրայ: Բեկորային են նաեւ եւրոպացի գրագէտների գեղարուեստական վերարտադրումի փորձերը՝ «Տրապիզոնցի Անթառամը», «Մուսա Լերան Քառասուն օրերը» եւ նման գրուածքները շօշափում են միայն մասնակի դէպքերը: Պատմական նիւթը լիագումարօրէն ուսումնասիրուած չէ դեռ. իր ծաւալով ու մանաւանդ ներքին բնոյթով դա նաեւ անսպառ է: Երկու միլիոն մարդիկ են ոչնչացել հոգեկան եւ մարմնական տանջանքներով: Նրանցից իւրաքանչիւրին վիճակուել է առանձին մի ողբերգութիւն – չարչարանքի հազարաւոր ձեւեր, հոգեկան անյոյս խռովքներ: Նրանք բոլորը քաջարի մի ցեղի զաւակներն էին, որոնք, սակայն, խաբուած՝ դահիճներից եւ դաւադրուած՝ աշխարհից, մատնուեցին կրաւորական նահատակութեան ճակատագրին: Կրօնապէս անհունօրէն խորազգաց եւ պատուախնդիր մարդիկ՝ նրանք տեսան իրանց սրբավայրերի կործանումը, իրանց սրբութիւնների պղծումը: Կենսազգացութեամբ յաւիտենապաշտ՝ նրանք մեռան՝ ապրելով իրանց ցեղի վախճանի սարսուռները: Բարոյապէս ամենաբարձր չափով զգայուն՝ նրանց վիճակուեց կրել ազգային իրանց պատուի անարգումը՝ ամենասպանիչ վիրաւորանքների, նողկալի պղծագործութիւնների անհաւատալիօրէն հրիշաւոր ձեւերով: Օտար մի ականատես (սիրիացի

քրիստոնեայ մի բժիշկ) վկայում է. *«Յիսուսը պիտի հրաժարուէր իր առաքելութիւնից, եթէ նա ապրելիս լինէր այն բոլորը, ինչ մահից առաջ վիճակուեց ամէն մի հայի»:* Ամերիկացի կրօնական մի գործիչ (Վիքըրի) աւելացնում է. *«Նման պարագաներում, ամերիկացիները հաւանաբար կրօնափոխ դառնային»:* Բայց հայերը մեռան՝ հաւատարիմ իրանց ազգային թէ կրօնական ուխտին, մեռան որպէս քրիստոնէական գաղափարի առաքեալներ: Կրաւորական նահատակութիւն, բայցեւ ի՛նչ կամք, ի՛նչ հերոսական, գերմարդկային ի՛նչ մաքառումներ, ի՛նչ տագնապներ:

Ոճիրը նախապատրաստուեց եւ գործուեց դիւային նենգութեամբ - զգուշօրէն, բայց դաժան հետեւողականութեամբ եւ գազանական բնազդների լիակատար շղթայազերծումով: Համաշխարհային պատերազմի սկսման օրը (28 յուլիս 1914թ.), Սուլթանի հրովարտակով յայտարարուեց զօրահաւաք: Հայերը ներկայացան աւելի մեծ օրինապահութեամբ, քան թուրքերը: Նրանք կենտրոնացուեցին մասամբ Կարինի բանակավայրում, մասամբ՝ Դարդանելի գծի վրայ, մինչդեռ ուրիշ աւելի մեծ խմբեր, ամրաշէն զինուորների անուան տակ, անզէն վիճակում, ցրուեցին երկրի զանազան կողմերը, հայաբնակ վայրերից հեռու: Այս ձեւով հայկական գաւառները գրեթէ դատարկուեցին 20-45, յաճախ մինչեւ իսկ 50 տարեկան տղամարդ հայ բնակչութիւնից: Դրա հանդէպ՝ Հայաստանում կենտրոնացուեցին քրդական Համիդէի հեծելագնդերը, թուրքական նորակազմ ասպատակախմբերը («չէթէ»), որոնք ընկան հայկական անպաշտպան գիւղերի վրայ: Ո՛չ հայ զինուորներն էին տեղեակ իրանց ընտանիքների վիճակին, ո՛չ էլ վերջինները գիտէին նրանց տեղը: Աշնան, հոկտ. 20-ին, սկսուեց ռուսեւթուրք պատերազմը, որին շուտով պիտի հետեւէր Անգլիայի յարձակումը Դարդանելի վրայ: Երկու ճակատների վրայ էլ հայ զինուորները կազմում էին թուրք զօրքի ընտիր տարրը. կռւում էին քաջութեամբ: Այդ մասին վկայում էին Դարդանելի թուրք հրամանատարները, վկայում էր անգամ պատերազմական նախարար Էնվէրը, որը Սարիղամիշի իր արկածախնդրութեան օրերին (1914/15 դեկտեմբեր-յունուարին) անձամբ տեսել էր հայ զինուորի մարտական որակը եւ Կ. Պոլիս վերադարձին՝ գրում էր Կոնիայի հայ առաջնորդին - *«...Օգտւում եմ առիթից՝ Ձեզ ասելու, թէ օսմանեան բանակի հայ զինուորները խղճմտօրէն են կատարում իրանց պարտքը ռազմադաշտում եւ վկայում են այս բանը, որ ես անձամբ տեսած եմ»:* Ամբողջ 1914/15-ի ձմրան՝ Ալաշկերտի ճակատով դէպի Մանազկերտ առաջացող ռուս բանակի ջանքերը կասեցնող

ոյժն եղաւ Մշու զօրաբաժինը, որի զինուորների 80%-ը բաղկացած էր Տարօնի հայերից:

Բայց այդ բոլորը չէին կարող փոխել էնվէրների հիմնական նպատակը, որ բանաձեւուել էր 10 կէտերի մէջ եւ յղուել երկրի բոլոր կողմերը: Ներքին գործերի նախարար Թալէաթի գաղտնի այդ հրամանագիրը, ի միջի այլոց, ասում է. *«...2) Հաւաքել բոլոր հայերի ամէն տեսակ զէնքերը»... 4) ...զօրքերն ու կարգապահական ոյժերն իբր թէ ջարդերն արգիլելու գործածել ... 5) Բնաջնջումը գործադրել մասնաւորաբար յիսունից վար այրերի եւ դպրոցական ուսուցիչների վրայ: Աղջիկներն ու մանուկները թողնել՝ իսլամացնելու համար»... 7) Կառավարական հայ պաշտօնեաները, պատճառաբանելով, թէ լրտեսութիւն են արել, վտարել բոլոր պաշտօնատներից: 8) Բանակի մէջ գտնուողների պատշաճ ձեւով բնաջնջումը՝ զինուորական իշխանութեանց կողմից: 9) Գործողութիւնը ամեն տեղ միաժամանակ սկսել եւ այսպէս ինքնապաշտպանութեան պատրաստուելու ժամանակ չթողնել»:*

Ձմրան (1914/15-ի), տունը մնացած հայ պատանիները, զինուորական տարիքից վեր բոլոր տղամարդիկ (մինչեւ 60-70 տարեկան), անգամ կիները, լծուած էին ե՛ւ ահաւոր մի ծառայութեան: Մասնաւորապէս Մուշի, Խնուսի, Քղիի, մինչեւ Երզնկայի եւ Բաբերդի հայերը շալակով պարէն եւ ռազմամթերք էին տեղափոխում Կարին եւ Հասան-Կալա: Հազարաւորներ ցրտահար եղան, բքախեղդ, իսկ վերջում պարզուեց, որ նրանցից հարիւրներ էլ զանազան կիրճերում սպանուել են թուրք ասպատակախմբերի ձեռքով: Նոյն այդ ձմրան, ոստիկանական խմբերը, նախ՝ որպէս թէ «պետութեան կարիքների համար», կամաւորապէս, ապա, արդէն անպաշտպան կիները, երեխաները դաժանօրէն չարչարելով՝ գտել եւ հաւաքել էին գրեթէ բոլոր կարգի զէնքերը: Տեսնելով, որ ժողովուրդն ի սպառ զրկուած է ինքնապաշտպանուելու մարդկային ոյժերից եւ զինական միջոցներից, հենց նոյն ձմրան երկրորդ կէսից զինաթափել սկսեցին ե՛ւ բանակի հայ զինուորներին: Դեռ 1914-ի դեկտեմբերի վերջին զանգուածային կոտորածներ տեղի ունեցան Ալաշկերտի Ձէտկան, Մ. Սուլէյմանի հայ գիւղերում եւ Բերդ աւանում: Սրանք ա՛յն հայերն էին, որոնք չէին նահանջել ռուսական բանակի հետ: Կոտորածը տարածուեց Թուքակի շրջանի եւ Վանայ լճի հիւսիսում գտնուած հայ գիւղերում: Մինչեւ մարտ կողոպտուել էին արդէն 500 հայ գիւղեր եւ նրանց բնակիչներից սրի էին քաշուել 26.000 անպաշտպան կիներ, պատանիներ, երեխաներ: Ապրիլի սկզբին տաճիկները փորձեցին ոչնչացնել նաեւ Վանայ

լճի արեւելեան գաւառակների հոծ հայ բնակչութիւնը: Թէպէտեւ մեծապէս զինաթափ եւ կռուող ոյժերի ահագին մասը կորցրած, Վասպուրականի հայերը դիմեցին յուսահատական ինքնապաշտպանութեան: Հայաստանում ո՛չ ոք գիտէր, թէ նոյն ձմրան որպիսի՛ ողբերգական դէպքեր էին պատահել հեռաւոր Կիլիկիայի կողմերում, ուր կործանուել էր տղամարդ իր բնակչութիւնն օսմանեան դրօշի ծառայութեան տրամադրած եւ կամաւորապէս զինաթափուած հինաւուրց արծիւների բոյն Զէյթունը, որի հպարտ զաւակները դեռ մարտին տեղահանուել եւ քշուել էին դէպի արաբական անապատները: Թուրքերի համար այնքան սարսափելի Զէյթունի այս չսպասուած կործանումը՝ սնուցեց ընդհանուր տեղահանութեան յանդգնութիւնը: Թէ ի՛նչպէս սկսեց դա եւ ի՛նչպէս ընթացաւ, այդ մասին, հազար-հազարների հետ, պատմում են գերման երկու քոյրեր, որոնք 1914-ի հոկտեմբերից մինչեւ 1915-ի ապրիլ եղել են Կարինում, «Գերման զինուորական առաքելութեան» («Deutsche Militar-Mission») ծառայութեան մէջ եւ հետագային շատ բաների ականատես են եղել Երզնկայում, Սեբաստիայի ճանապարհին: Նրանց գրածները լոյս են տեսել Ժընեւում 1915-ին եւ ապա յիշուել Հայկական Եղեռնին նուիրուած շատ գրքերում:

Ահա մի քանի հատուածներ նրանց պատմածներից.

«1915-ի մարտին, մենք հայ մի բժշկից իմացանք, թէ կառավարութիւնը մի մեծ կոտորած է պատրաստում: Նա խնդրեց մեզ զօրավար Պասելտից իմանալ, թէ ճի՞շդ է դա: Հետագային մեզ յայտնեցին, որ ազնիւ այս սպան եւս վախենում է այդ բանից եւ խնդրել է հեռանալ իր պաշտօնից... Մենք հիւանդացանք տիֆով եւ պաշտօնեաների յաճախակի փոփոխութեան պատճառով ստիպուեցինք հեռանալ Կարինից: Միջնորդութեամբ Կարինի գերման հիւպատոսի, որ վայելում էր հայերի վստահութիւնը, մենք մտանք Երզնկայի Կարմիր Խաչի մէջ եւ այնտեղ աշխատեցինք եօթը շաբաթ: Յունիսի սկիզբը, Երզնկայի Կարմիր Խաչի վարիչը – X. սպայակոյտի բժիշկը, մեզ ասաց... թէ Երզնկայի եւ շրջակայի ամբողջ հայ ազգաբնակչութիւնը պիտի տեղափոխուի Միջագետք, ուր նա մեծամասնութիւն չի կազմելու, բայց կոտորածներ չեն լինելու եւ միջոցներ ձեռք պիտի առնուեն տեղահանուածներին կերակրելու եւ զինուորական պահակախմբերով ապահովելու նրանց: Իբր թէ Երզնկայում գտել են զէնքով եւ ռումբով բռնուած կառքեր եւ շատ ձերբակալութիւններ են կատարուել: ...Յունիսի սկզբի շաբաթին մեկնելու էր առաջին կարաւանը. հարուստներին թելադրուեց կառք վարձել: Նրանք պէտք է գնային Խարբերդ: Յաջորդ երեք օրերում նոր

տեղահանութիւններ եղան… Ստիպուեցին մեկնել ե՛ւ մեր հիւանդանոցում ծառայող հայերի ընտանիքները, նոյնիսկ հիւանդ մի կին. նրան խնամող դոկտ. Նոյկիրխի բողոքը միայն երկու օրով ուշացրեց նրա մեկնումը: Մեզ մօտ կօշկակարութիւն անող մի զինուոր (46 տարեկան) ասաց քոյր X-ին. *«…Ես երբեք ոչինչ չեմ արել կառավարութեան դէմ, բայց եւ այնպէս խլում են իմ ամբողջ ընտանիքը, իմ մօրը՝ որ 70 տարեկան է, իմ կնոջն ու հինգ երեխաներին, եւ ես չգիտեմ, թէ նրանք ո՛ւր են տարում»:* Նա լաց է լինում մանաւանդ մէկուկէս տարեկան փոքր իր աղջկայ համար: Հետեւեալ օրը նա եկաւ եւ ասաց. *«Իմացայ, նրանք ամէնքն էլ մեռած են»:* Եւ դա կատարելապէս ճիշդ էր…: Հայ երկու դեռատի ուսուցչուհիներ, ուսած Խարբերդի կոլեջում… պատմեցին, թէ կարաւանը կողքից քիւրդերի եւ յետեւից թուրքական կէսկանոնաւոր զօրքի խաչաձեւ կրակի տակ էր առնուած: Նրանք ընկել են գետին եւ մեռած ձեւացել եւ ապա կարողացել են խոտորնակ ճանապարհներով հասնել Երզնկա… Երբ Երզնկա են հասել՝ մի ոստիկան ուզել է տիրանալ մատաղատի օրիորդին. նշանածը բողոքել է: Սա սպանւում է, եւ երկու օրիորդները տարւում են թուրքերի տները, ուր նրանց հետ վարւում են սիրալիր կերպով, բայց պահանջում են, որ մահմեդական դառնան: Նրանք այս տեղեկութիւնները մեզ հաղորդեցին մի բժշկի միջոցով, խնդրելով, որ մեզ հետ Խարբերդ տանենք իրանց: Եթէ թոյն լինէր, ասել են նրանք, կը թունաւորուէին:

…«Զինուորները մեզ պատմեցին, թէ այդ անզէն դժբախտներն ի՛նչպէս են կոտորուել ամէնքն էլ: Կիները ծունկի էին գալիս եւ իրանց երեխաներին ձգում Եփրատի մէջ: Մի զինուոր ասում էր. *«Սարսափելի բան էր, ես չէի կարողանում կրակել»:* Մենք ուրիշ թուրքերից էլ լսեցինք պարսաւանքի եւ կարեկցութեան խօսքեր: Նրանք պատմեցին, որ պատրաստի սայլեր են եղել՝ դիակները դէպի գետը տանելու եւ կոտորածի հետքերը ջնջելու համար: (Ամսի 11-ի երեկոյեան տեսանք, որ զինուորները վերադառնում են աւարով)… Շարունակ հասնում էին տեղահանուածների կարաւաններ, ամէնքն էլ բերուած սպանուելու համար: …Մեր յոյն կառապանն ասաց, որ զոհերի ձեռքերը կապում են եւ ժայռերի բարձունքից ձգում գետի մէջ…: Քոյր X եւ ես… մտածեցինք, թէ ի՛նչ կարող ենք անել եւ վճռեցինք մինչեւ Խարբերդ ընկերանալ թափօրներից մէկին: Մենք դեռ չգիտէինք, թէ կառավարութիւնն է հրամայել նրանց կոտորել ճանապարհին, կարծում էինք, թէ այդ կերպով կարող էինք առաջն առնել ոստիկանների վայրագութիւնների եւ քիւրդերի յարձակումների… Ուստի, հեռագրեցինք Կարինի հիւպատոսին՝ ասելով, որ մենք արձակուած ենք հիւան-

դանոցից եւ խնդրում ենք, Գերմանիայի շահի համար, Երզնկա գալ: Նա մեզ պատասխանեց. *«Անկարելի է հեռանալ պաշտօնատեղիցս, սպասում եմ աւստրիացիներին, որոնք այստեղով պիտի անցնեն յունիս 22-ին»:* Յունիս 17-ի երեկոյեան Կարմիր Խաչի դեղագործ Գ.-ի հետ գնացինք պտոյտի: Նա էլ մեզ պէս զարհուրած էր վայրագութիւններից... Նա էլ արձակուել էր պաշտօնից: Մենք պատահեցինք մի ոստիկանի, որ մեզ պատմեց, թէ 10 որպէ հեռաւորութեան վրայ Բաբերդից տեղահանուածների մեծ մի կարաւան է կասեցուել: ...Պատմեց, թէ ի՛նչպէս տղամարդիկ կոտորուած եւ կիրճի խորն էին նետուած... թէ ի՛նչպէս... կիները բռնաբարուել են, թէ ի՛նչպէս գլուխներն են ջարդել այն երեխաների, որոնք ճչում կամ ուշացնում էին կարաւանի երթը...

«Քաղաքի մուտքի մօտ Կամախի կիրճի ճանապարհը բաժանւում է պողոտայից: Այնտեղ կար ստրուկների շուկայի նման մի բան. մենք ինքներս էլ վերցրինք վեց տղաներ՝ 3-ից մինչեւ 14 տարեկան...եւ մի աղջնակ: Այս վերջինին յանձնեցինք մեր թուրք խոհարարուհուն: Նա ուզում է երեխային տանել դոկտ. X-ի մասնաւոր տան խոհանոցը՝ մինչեւ մենք վերադառնանք եւ վերցնենք նրան. բայց բժշկի զինուորական կցորդը՝ Ռիզա բէյը, ծեծում է կնոջը եւ երեխային ձգում փողոց:... Մինչ մենք մեր վեց երեխաներով վերադառնում ենք հիւանդանոց: Ամենափոքրը բաբերդցի մի հարուստի զաւակն է, ծածկուած իր մօր վերարկուի մէջ, արտասուելուց երեսն ուռած. նա առաջ է նետւում ցոյց տալով մի ոստիկան. *«Ահա՛ իմ հօր սպանողը»*... Գնացինք միւթէսարիֆի մօտ... Այդ մարդը հրէշի կերպարանք ունէր... Նա մեզ ասաց, որ այլեւս չի ուզում հանդուրժել մեզ եւ թէ մեզ չի թոյլատրում Խարբերդ գնալ... Նա մեզ պէտք է ուղարկի Սեբաստիա, եւ ինչ որ ամենավատն էր, թոյլ չտուեց մեզ հետ տանել երեխաներին: Նա ոստիկան ուղարկեց, որպէսզի նրանց մեր սենեակից վերցնի:... Նրանց այնքան շուտ անցկացրին... որ չկարողացանք վերադարձնել նրանց մեզ մօտ թողած դրամը (475 ղրուշ): Մենք խնդրեցինք դոկտ. Լինդենբերգին, որ այդ գումարը նրանց յանձնի... եւ ճիշդ մեր մեկնումի վայրկեանին, երբ մեզ արդէն ասել էին, որ նրանք սպանուած են, Ռիզա բէյն եկաւ մեզանից պահանջելու այդ դրամը՝ երեխաներին յանձնելու պատրուակով...պիտի ճանապարհորդէինք... Սեբաստիա (յունիս 21-ին)... տեսանք հինգ դիակներ (որոնցից մէկը՝ կին), մէկը՝ հագուստով, միւսները՝ մերկ եւ մի ուրիշն անգլուխ... Մենք պատահեցինք տեղահանուածների մի բազմութեան... Կամախի կիրճի ճամբին: Սակաւաթիւ տարիքաւորներ, բազմաթիւ կանայք ու շատ սիրուն երեխաներ... Մի աղջնակ ծիծաղում

էր՝ դիտելով այս տարօրինակ տեսարանը, մինչ ուրիշ դէմքեր մեռելային լրջութիւն ունէին: Ո՛չ մի շշուկ. ամէն ինչ խաղաղ էր եւ այս դժբախտներն անցնում էին կարգով... անցնում էին՝ մի քանիսը բարեւելով մեզ: Նրանք ամէնքն այժմ Աստծու գահի առաջն են եւ Նրան են բողոքում»...

Կամախի կիրճի զարհուրանքի ականատեսներից Երամ Գալուստեանը (աղէտի օրերին՝ 17 տարեկան պատանի, Վերի Բագառիճ գիւղից) պատմում է.

-«Կամախ հասանք եւ հայկական ուրիշ կարաւաններին խառնուելով՝ բազմութիւն դարձանք: Սա աւելի ընկճեց մեզ: Զգում էինք, որ այլեւս ազգ չենք: Տարօրինակ մի զգացում, որին ենթակայ էակը բնազդաբար անձնատուր է լինում մահաբաղձութեան՝ «Շուտ մեռնէինք-վերջանայինք»... Եփրատի հետ՝ իջնում էինք աստիճանաբար խորացող կիրճը... Մէկը միւսին հարցնում էր. «Ո՞ւր ենք գնում». մի ուրիշը տրտնջում էր, որ «մահն ուշանում է»: ...Գետի ահարկու որոտը տրամադրութիւններն աւելի՛ երազային էր դարձնում եւ երբ կոտորածն սկսուեց՝ հայերն արդէն մահապատրաստ էին: Հրազէնների որոտից յետոյ* ծերպերից դուրս նետուեց դարանակալ խուժանը՝ սուսերամերկ: ...Հայերն յափշտակուած էին մեռնելու խենթութեամբ. ամէնքը մղում էին դէպի գետ եւ աղջիկները զարմանալի երանութեամբ նետւում էին յորձանքի մէջ»...

Այդ ձեւով ոչնչացուել են Կարինի եւ Տրապիզոնի նահանգների բոլոր այն կարաւանները, որոնք քշուել են նոյն կիրճով: Այդ տեղից Եփրատի յորձանքները տարել են 150 հազար մորթուածների, ինքնասպանների դիակներ: Մնացորդները, շաբաթների աննկարագրելիօրէն տանջալից ճամբորդութիւնից յետոյ, նոյն ճակատագրին են ենթարկուել Եփրատի այլ մի կիրճում, Մալաթիայի մօտերը: Տրապիզոնի այր մարդիկ շղթայակապ լցրել են նաւեր և կացնահար թէ ողջ-ողջ՝ թափել Սեւ ծով: Սակաւաթիւ կիներ եւ երեխաներ, որոնք կարողացել են տոկալ չարչարանքներին եւ հասնել մինչեւ արաբական անապատներ՝ ոչնչացուել են Դէր-Զօրում: Նոյնն է

---

* Վախենալով դիմադրութիւնից՝ թուրք զօրքն ու իսլամական խուժանը կիրճի բարձունքներում նախապէս բռնուած դիրքերից մի քանի ժամ խաչաձև կրակի տակ են պահել հայկական անզէն եւ 90%-ով կանանցից ու երեխաներից կազմուած կարաւանները, եւ երբ հազարներ արդէն զարկուած են եղել, վար են իջել՝ գործը սրով շարունակելու:

վիճակուել Տիգրանակերտի եւ Խարբերդի նահանգների հայութեան: Չորս այս նահանգներից ոչնչացուել են 650 հազար հայեր:

Սեբաստիայի հայ ուսուցիչներից մէկը նկարագրում է Փոքր Հայքի մօտ 400 հազար հայերի ոչնչացումը*: Ձեւերն ընդհանրապէս նոյնն են: Ձինուորագրութիւնից զերծ մնացած այրերի մի մասը (երեւելիները, ինքնապաշտպանութեան ընդունակները) զգուշաւոր կերպով ձերբակալել են, զանազան պատրուակներով: Մնացեալներին հանել են կանանց եւ երեխաների կարաւանների հետ: Մի քանի նախորոշուած վայրերում, մասնաւորապէս Ֆըրնջըլար գիւղում, դատել են նրանց եւ դաժան գանակոծումներով կողոպտել: Շղթայակապ վիճակում, նրանց ներկայութեան սարքել են քստմնելի նախճիրներ: Ոսկիներ գտնելու պատրուակով մերկացրել են կանանց եւ զազրելի ձեւերով անպատուել նրանց: Ապա կացնահար սպանել են ամօթանքի վշտից խորտակուած, շղթաների տակ անզօրօրէն բողոքող տղամարդկանց: Կիներից շատ-շատերն ինքնասպանութիւն են գործել: Անտէր մնացած երեխաները թափուել են ջուր: Ով կարողացել է մի կերպ հասնել մինչեւ Մալաթիա, տարուել է *«մանկական պարտէզներ»:* Այս «պարտէզներ»-ը—աղբիւսատեղիներ—յատկացուելիս են եղել հայ մանուկներին հաւաքելու եւ կառավարական խնամքով իսլամի համար դաստիարակելու: Մի շարք «պարտէզներ»-ում կենտրոնացրել են 1-5 տարեկան հազարաւոր երեխաներ: Բայց յետոյ, յայտարարելով, թէ առողջապահական քննիչ է գալիս, փոսեր են բացել եւ նրանց ողջողջ թաղել այդ «պարտէզներ»-ում: Մինչեւ Մալաթիա, կարաւանները մի քանի տասնեակ անգամ ենթարկուել են հաւաքական կողոպուտի: Մասնակի կողոպուտն եղել է առօրեայ, ամէնժամեայ սովորական երեւոյթ: Ճիւղակոտոր կարաւանները Սամոսատ հասնելիս՝ ենթարկուել են վերջնական կողոպուտի եւ ջարդի: Մայրերն իրանց զաւակներն իսլամացումից փրկելու նպատակով՝ նրանց յանձնել են Եփրատի յորձանքին: Թուրքերն սկսել են կիների եւ աղջիկների զանգուածային առեւանգում: Սամսոնցի մտաւորական մի օրիորդ բարձրացել է մի ժայռի գլխին եւ կոչ ուղղել. *«Ո՛վ հայ է, ո՛վ սիրում է Քրիստոսին, թո՛ղ ինձ հետեւի»:* Հարիւրներով, հազարներով կանայք, աղջիկներ, ձեռք-ձեռքի տուած, հետեւել են նրան՝ Եփրատի ալիքների մէջ: Ամբողջ 15 օր արիւն է հոսել Եփրատը, դիակների անցքը տեւել է ամսից աւելի: Խմելու ջրից զրկուած

* *Կարապետ Գաբիկեան,* «Եղեռնապատում», Բոստոն, 1924թ., էջ 602:

իսլամ բնակչութեանը կառավարութիւնը մխիթարել է այն յայտարարութեամբ, թէ գետը տրամադրուել է *«անհաւատների դիակների փոխադրութեան»:* Կարաւաններից միայն չնչին մի բեկոր է հասել Սուրուճ, Հալէպ, Դէր-Զօր:

Մասամբ նոյն բախտն է վիճակուել 500 հազար ուրիշ հայերի, որոնք տեղահանուել էին Թրակիայից, արեւմտեան Անատոլիայի շրջաններից, Կ. Պոլսից, Զմիւռնիայից Կիլիկիայից: Կ. Պոլսից եւ Զմիւռնիայից տեղահանուել են միայն տեղական բարձր մտաւորականները եւ հայաստանցի պանդուխտները:

Հայկական Տաւրոսի կիրճերից մէկում, Բաղէշի մօտերը, ոչնչացել է համանուն նահանգի մի քանի հայահոծ գաւառների բնակչութիւնը: Այդ շրջանը՝ հայ զէնքի առասպելական հսկաներից Սերոբի ծննդավայրը, ծանօթ էր մարտական իր անցեալով: Դեռ կենդանի էին հին հերոսներից շատերը: Բայց խաբուած զանազան միջամտութիւններից, թելադրանքներից՝ նրանք համակերպուել են զինաթափուելու եւ տեղահանուելու ճակատագրին: Ահաւոր է եղել Բաղիշու ջարդը: Տասնեակ հազարների կարաւաններից չի մնացել կենդանի ե՛ւ ոչ մի հետք:

Կրկնակի նահատակութիւն է վիճակուել Օսմանեան կայսրութեան բոլոր մասերից քշուած կարաւանների այն մնացորդներին, որոնց Գողգոթան երկար է տեւել—մինչեւ արաբական անապատները: Այստեղ, դանդաղ մահուան չարչարանքն հասել է ամենաքստմնելի նրբութիւնների—սովի հետ՝ պղծագործութիւններ, զանգուածային գնդակահարումներ, ողջ-ողջ հրկիզումներ, թաղումներ: Զոհերը զրկուած են եղել վերջին մխիթարութիւնից՝ ինքնասպանութիւն գործելու հնարաւորութիւնից: Քչերն են կարողացել գաղտագողի մօտենալ Եփրատին եւ գտնել յաւիտենական իրանց հանգիստը: Անապատի անծայրածիր աւազների վրայ թափուած են մնացել տասնեակ հազարաւոր որբեր:

Մի քիչ տարբեր պատկեր հայաշխարհի մնացեալ անկիւններում: Ալաշկերտի շրջանն ազատւում է հայ պատանիների կազմակերպած դիմադրութեամբ եւ թեթեւ կռիւներով (ռուս բանակը շուտ է հասնում): Ծաւալով մեծ կռիւներ են տեղի ունենում Վանի ամբողջ նահանգում: Այստեղ ժողովուրդն ոտքի է կանգնում, երբ կառավարութիւնը դաւադրաբար սպանում է ծանօթ հայ գործիչ Իշխանին եւ խաբէութեամբ ձերբակալում (յետոյ՝ անհայտ պարագաների տակ ոչնչացնում) Օսմ. պարլամենտի հայ ներկայացուցիչներից Վռամեանին: Կառավարութիւնը «բարեկամական» հրաւէր է ուղղում ե՛ւ Արամին: Երբ հայերը բացատրութիւն են պահանջում Իշխանի եւ Վռամեանի վախճանի

մասին՝ թուրք զօրքը պաշարում է Վան քաղաքի հայկական թաղերը եւ նրանց ենթարկում թնդանօթային կրակի: Հայերը դիրքեր են գրաւում եւ բարձրացնում անհաւասար կռուի դրօշը: Բռնկւում են բոլոր գաւառները, որոնցում, դեռ Իշխանի սպանութիւնից առաջ, բազմաթիւ արիւնոտ դէպքեր էին պատահել: Վանում թէ գաւառներում կատարւում են քաջութեան անմոռանալի գործեր: Թուրք զօրքի յարձակումները յետ են մղւում ծանր կորուստներով: Եղել է, անշո՛ւշտ, զէնքի եւ ռազմամթերքի մեծ տագնապ: Բայց հայ մասնագէտները մասամբ բաւարարել են կարիքը: Նրանք հիմնել են փամփուշտներ լեցնելու, զէնքեր նորոգելու, անծուխ վառօդ պատրաստելու, ռումբեր շինելու աշխատանոցներ: Ստորերկրեայ անցքեր բանալով՝ հայերը դժոխային մեքենաներով, հրդեհումով, յանկարծական գրոհումներով ոչնչացրել կամ գրաւել են թուրքական զօրանոցները: Մայիսի առաջին օրերին (կռուի սկզբնաւորութիւնից գրեթէ մի ամիս յետոյ) թուրքերը, կատարելապէս ջախջախուած, դիմել են փախուստի: Վանի նշանաւոր միջնաբերդի վրայ, դարերի ընդհատումից յետոյ, կրկին ծածանուել է հայկական դրօշը: Մայիս 6-ին Վան են մտել ռուսական բանակի հետ գործող հայ կամաւորների խմբերը: Յաջորդ օր հասել է ե՛ւ ռուսական բանակը:

Վանի նման բախտաւոր ելք չունեցաւ հեռաւոր Պոնտոսի սահմանների մօտ օրհասօրէն գուպարող հայկական արծուեբոյն Շաբին Կարահիսարը՝ ծննդավայրը Անդրանիկի: Դիմադրողներն անհուսօրէն հեռու ռուսական ճակատից՝ չունէին փրկութեան թէկուզ խաբուսիկ յոյս: Այստեղ ապստամբութիւնը ծայր է տալիս բանտից, ուր սկսուելիս է եղել ջարդը՝ խաբէութեամբ ձերբակալուած մի քանի հարիւր հայերի: Նրանց յաջողուել է ոչնչացնել իրանց դահիճներին եւ նրանց զէնքերը վերցնելով՝ յարձակուել հայկական թաղերն արդէն պաշարած եւ մի քանի տներ էլ հրդեհած ոստիկանների եւ զինուորների վրայ: Ջարդելով ե՛ւ սրանց, հայերը հրդեհում են կառավարչատունը, զօրանոցը եւ կրակը տարածում թուրքական թաղերը: Կենդանի մնացած թուրքերը փախչում են (Շաբին Կարահիսարում թուրքերը քրիստոնեաների կրկնապատիկն էին): Հայերը տիրում են քաղաքին եւ օսմանեան զինապահեստից ռազմամթերք փոխադրում Տիգրան Մեծի, Միհրդատի ժամանակներից մնացած բերդը, հսկայ քարաժայռի վրայ: Երզնկայից, Սեբաստիայից հասնում են թուրքական մի քանի գնդեր, թնդանօթներով: Հայերը տեղափոխւում են բերդը: Սկսւում է ամիս տեւող անհաւասար կռիւը: Թուրքական զօրքի բոլոր յարձակումները ձախողւում են, արեան մեծ կորուստներով: Մահ են սփռել մասնաւո-

ռապէս հայկական ձեռնառումբերը: Մօտ երկու հազար զոհեր տալով, թուրքերը վերջ են տուել յարձակողական փորձերին եւ հարցի լուծումը թողել հեռուից գործող մարտկոցին եւ ժամանակին: Վերը՝ քարաժայռի վրայ, տիրել է սովը: Սպառուելու մօտ է եղել ե՛ւ ռազմամթերքը: Իբրեւ ելք, հայերն որոշել են ճեղքել պաշարման շղթան եւ անցնել դէպի պոնտեան լեռները: Յարձակումն յաջողուել է, բայց անհնար է եղել շարժման մէջ դնել քաղցից ուժասպառ ժողովուրդը: Պատահել է ե՛ւ աղիտաւոր թիւրիմացութիւն: Վար իջած վաշտերից մէկը, գիշերային մթութեան մէջ, ընկել է բերդի քարաժայռից նետուած հայկական ռումբերի տակ եւ գրեթէ ամբողջովին ոչնչացել: Սրանով կտրուել է թուրքերի թիկունքն անցած եւ քարաժայռի տակը գտնուած հայ խմբերի կապը: Տխուր այս պատահարը եւ բացուող լոյսը պատճառ են դարձել, որ քարաժայռից իջած ոյժերը բոլորովին կտրուեն իրանց թիկունքից եւ աստիճանաբար առաջանան Կիրասոնի ուղղութեամբ: Սկսուել է նոր յարձակում: Հայերն սպառել են իրանց վերջին ռումբերը եւ գնդակները: Կռուողներից ո՛վ թշնամու գնդակով չի ընկել՝ վերջ է տուել իր կեանքին ինքնասպանութեամբ: Նոյնն են արել բազմաթիւ կիներ, աղջիկներ, հետեւելով կռուի վարիչներից Վահան Հիւսիսեանի գեղանի կնոջ օրինակին: Սովից կիսամեռօրէն ուժասպառ կանանց եւ երեխաների մի մասը կոտորուել է թուրքերի ձեռքով, միւսը՝ իջեցուել է քաղաք՝ թաղուած գանձերի տեղը ստուգելու նպատակով, ապա վերածուել է գաղթակարաւանի եւ դանդաղ մահուան ճանապարհով քշուել դէպի Միջագետք:

Հեռաւոր Հարաւում, Ալեքսանդրէտի ծոցի մօտ, հիացմունքի արժանի մի հերոսական ստեղծեցին Սուեդիայի մի քանի հայ գիւղերի բնակիչները: Նրանք բարձրացան Մուսա լեռը եւ 58 օր (ո՛չ թէ 40) պայքարեցին թուրքական բազմաթիւ զօրքերի դէմ: Նրանք ջախջախեցին թուրքերի բոլոր յարձակումները՝ առասպելական, անհաւատալի քաջութեամբ: Քիչ էին նրանք (4-5 հազար հոգի), բայց հրաշքներ գործեցին: Կռուեցին հին դարերի հայկական մոլեգնութեամբ: Այդտեղ, ամենացայտուն կերպով, թուրքը կրեց խորհրդանշական իր պարտութիւնը հայ ցեղից: Նա սարսափով լքեց կռուադաշտը, հայերին թողնելով իր մարտկոցը եւ իր համար փրկարար ելք համարեց, երբ ֆրանսիական ռազմանաւերն ափին մօտենալով՝ իրանց վրայ վերցրին Մուսա լերան կատաղի այս մարտիկները – տղամարդիկ, կիներ, պատանիներ, աղջիկներ, որոնք բոլորն էլ կռուել էին իրանց ցեղին հասցրած անարգանքից գերմարդկօրէն տառապածների ցասումով:

Ողբերգական վախճան ունեցաւ պատմական Հայաստանի հեռաւոր հարաւում, Սիրիայի սահմանների մօտ ընկած Եդեսիայի ամենասրտաճմլիկ դիւցազնականը: Այստեղ էլ երիտասարդութիւնն ամենայն օրինապահութեամբ մտել էր թուրք բանակի շարքերը: Մեծ հեռաւորութեան պատճառով (ռուսական թէ անգլիական բանակներից) չկար, չէր կարող լինել փրկութեան հեռանկար: Եդեսիայի հայերը, սակայն, տեսել էին հերոսական Զէյթունի տեղահանեալների կարաւանները. մի քանի փախստականներից լսել էին նաեւ նրանց ոչնչացման մասին: Կառավարութիւնը պահանջում է եղեռնավայրից հրաշքով փախած եւ այդտեղ ապաստանած զէյթունցիների յանձնումը: Շուտով հասնում է եւ երկրորդ գոյժը՝ սպանուել են Բաղդադի գծի վրայ աշխատող 1.500 անզէն հայ զինուորները: Շուկայում, յանկարծօրէն, ձերբակալւում են նաեւ տեղական երեւելիներից մի քանի տասնեակ մարդիկ: Երկրորդ մի ձերբակալութեամբ՝ բանտարկուած հայերի թիւն հասնում է 200-ի: Կառավարութիւնը փրկագին է պահանջում եւ հայերը վճարում են մեծ քանակութեամբ թանկագին զարդեղէն եւ 6.400 հնչուն ոսկի: Ստանալով գանձը՝ նոյն գիշերն իսկ բանտարկեալները գաղտնօրէն քաղաքից դուրս հանելով՝ ոչնչացնում են մի ձորում, Տիգրանակերտի ճանապարհին: Անարգ այս յաջողութիւնից յետոյ կառավարութիւնը պահանջում է հայ անուանի հերոս Մկրտիչ Եօթնեղբայրեանի եւ բոլոր զէնքերի յանձնումը: Քաղաքի մօտերը, հայկական Կամուրջ գիւղում, մի ընդհարում է տեղի ունենում Մկրտիչի եւ թուրք ոստիկանների միջեւ, որոնցից մի քանիսն սպանւում են: Շուկայում կոտորւում են 500 հայեր եւ ասորիներ: Ոստիկանները մտնում են հայկական թաղը եւ պաշարում մի տուն, ուր այդ վայրկեանին գտնուել է ե՛ւ Մկրտիչը: Ոստիկաններից 20-ը սպանւում են, միւսները՝ զինաթափւում եւ ազատ արձակւում: Թուրքերը յարձակւում են հայկական թաղերի վրայ: Բայց ղօղանջում են նաեւ հայ եկեղեցիների զանգերը՝ ազդանշան դիմադրութեան: Թուրքերը փախչում են՝ թողնելով 450 դիակ: Հայերը խուժում են իսլամական թաղերը, որոնց բնակիչներից մի մասը կոտորւում է, մնացեալը՝ փախչում: Կանանց, երեխաներին, չարագործութիւններ չարած տղամարդկանց խնայում են եւ պատսպարում: Հասնում են թուրքական նոր ոյժեր: Կռիւը տեւում է 33 օր: Հայերը դիմադրում են կրօնական վերացումի հասած ոգորումներով: Հայ մարտիկների թիւն եղել է 1.000-ից մի քիչ աւելի (պատանիներ, օրիորդներ, կանայք, տարիքոտ մարդիկ եւ միայն սակաւաթիւ երիտասարդներ): Թուրք զօրքը կրում է ծանր կորուստներ եւ խայտառակ պարտութիւններ (Ուրֆայի թուրք կոմիսէր

Եուսուֆ էֆէնդին հետագային՝ անգլիական հրամանատարութեան տուել է հետեւեալ հաշիւը. *«Բացի* (հայերի կողմից) *ոչնչացուած տեղական ոյժերից... կռիւներին մասնակցեցին ընդամէնը 11.000 կանոնաւոր զինուորներ: Երբ ամէն ինչ վերջացաւ, Ֆախրի փաշան ողջ մնացած 3.000 զինուորներով մեկնեց Բաղդադի ճակատը»):* Հրաշքներ են գործում հայ աղջիկների զինեալ խմբերը, գլխաւորութեամբ օրիորդ Քէթէնճեանի: Թնդանօթաձիգներից շատերը հնձւում են սքանչելի նշանառու Սարգիս Եօթնեղբայրեանի (հրամանատար Մկրտիչի եղբայրը) հարուածներից: Յանդուգն այս մարտիկը մի գիշեր խորանում է թուրքերի թիկունքը, հասնում հեռաձիգ 3 թնդանօթներից մէկի դիրքը, սպանում անակնկալի եկած զինուորներին, փչացնում թնդանօթը եւ փոքրիկ իր խմբով վերադառնում քաղաք: Բայց ճակատագրի կծու հեգնանքներից է, որ զօրաւոր հոգին յաճախ պարտւում է զօրաւոր զէնքից, ինչպէս մշակոյթը, որ խորտակւում է բարբարոսութեան կրունկի տակ: Շաբաթների ռմբակոծութիւնը կատարեալ աւերակոյտի է վերածում Եդեսիայի հայկական քաղաքամասը: Կռուողներից թէ ժողովրդից շատերն են ընկել: Ինքը՝ հրամանատար Մկրտիչը, ծանրապէս վիրաւոր, ձիերի վրայ կամ զինուորների ուսերին դրուած պատգարակով է այցելում դիրքերը: Վերջին օրերին հայերն արդէն հրդեհուած տներից, փլատակների միջից են դիմադրում: Վիրաւորների խնդրանքով, հարազատները նրանց թոյն են տալիս կամ սպանում: Կանայք ինքնասպանութիւն են գործում այնպիսի նուիրումով, որպէս թէ կրօնական սրբազան մի ծէս են կատարում: Նրանք մեռնում են՝ ստանալով հոգեվարող քահանաների օրհնութիւնը: Եւ, այսպէս, լռութեան սեւ վարագոյրն իջնում է պատմական Եդեսիայի վերջին սրտաճմլիկ դիւցազնահանդէսի վրայ:

Ամէնից զարհուրելին, սակայն, կատարուեց հայոց հայրենիքի կենտրոնական մարզում՝ հայ լուսաւորութեան եւ պատմական փառքի օրրան Տարօնում: Պատերազմից ամէնից աւելի Տարօնի շրջանն էր տուժել: Թուրքական բանակին նա տրամադրել էր զէնքի ընդունակ ամբողջ իր ոյժը: Բացի դրանից, հազարաւոր պարէնակիրներ, որոնցից մօտ 6.000-ը ցրտահար՝ մեռել են կամ անպէտքանալու աստիճան հիւանդացել: Ընդհանուր տեղահանութեան օրերին (1915-ի մայիսին) Տարօնն արդէն կորցրել էր մարտական գրեթէ ամբողջ իր ոյժը: Հակառակ դրան, թուրքերը մինչեւ յուլիս 15-ը զգուշանում են մօտենալ այդ շրջանին: Հայ մի քանի գործիչների ծայրայեղ օրինասիրութիւնն էլ անդամալուծել է ժողովրդի ապստամբական ոգին: Յուլիսի սկիզբներին ռուսական բանակը մօտենում է Տարօնին, ուստի եւ՝ թուրքերն

ահագին զօրքեր են լեցնում այդ գծի վրայ: Բայց ռուսներն անակնկալօրէն նահանջում են եւ զօրամասերն ու իսլամական տասնեակ հազարաւոր զինուած խուժանը տրամադրւում են Մշոյ հայաբնակ մեծ դաշտի ոչնչացման գործին: Մի գիշեր գիւղերն առանձին պաշարւում են: Լուսաբացին թնդանօթները գործում են Մուշ քաղաքի վրայ:

Ազդանշանը տրւում է.* սկսւում է ընդհանուր կոտորածը: Թէպէտեւ անակնկալի եկած, հայերը կռւում են շատ եւ շատ գիւղերում: Կռւում են առանց ռազմամթերքի, առանց երիտասարդ ոյժերի, ամէն գիւղում 5-10 հրազէններով – մէկը՝ 100-ի, երբեմն՝ մի քանի հարիւրի դէմ: Դիւցազնական, բայց անյոյս դիմադրութիւն: Աւրան մեծ գիւղում, ուր հաւաքուելիս են եղել նաեւ շրջակայ մի քանի գիւղերի բնակիչները, եռօրեայ կատաղի կռիւներից յետոյ, հայերն հաւաքւում են եկեղեցի, հսկում են կատարում եւ վերջին գնդակներով սպանում իրանց հարազատներին: Նոյն օրհասն Իննակնեան լեռներում:

Մուշ քաղաքում, կռուի առաջնորդ Կոտոյեան Հաջի Յակոբը մի քանի անգամ ճեղքելով թուրք զօրքի շղթան՝ լեռ է բարձրացնում 6.000-ի չափ կանանց, երեխաների խմբեր: Օրհասական մի յարձակման ժամանակ վիրաւոր՝ նա հարկադրւում է կռիւը սահմանափակել պաշտպանողականով: Ռազմամթերքի սպառումով, նա հրաման է տալիս հրդեհել տները: Մինչդեռ տղամարդիկ վերջին գնդակներով թշնամին իր դիրքումն են պահել, կանայք, աղջիկները վառել են հայրենի յարկերը: Սարսափելի է եղել ինքնաողջակիզումի տեսարանը: Զոհերն աղօթել են՝ բարձրաձայն երգելով եւ փառք տալով Աստծուն, որ զերծ են մնում մահմեդական ոսոխների պիղծ ձեռքերի հպումից: Ուրիշ տասնեակ հազարներով կանայք, երեխաներ հաւաքուելայրուել են թշնամու ձեռքով – միայն Աւղուտ գիւղում՝ 15.000: Մարդկային կմախքների ընդարձակ դաշտեր, մոխրակոյտեր են կազմուել Խասգեղ, Ցրօնք, Սոխգոմ, Բլէլ եւ այլ գիւղերի մօտ: Ուրիշ հազարներ իրանց վախճանը գտել են ողջ-ողջ նետուելով Արածանիի (արեւելեան

---

* Այդ ազդանշանի յիշողութիւնը պատկերալից կերպով արտայայտուել է Խ. Հայաստանի բանաստեղծներից մէկի (Տարօնի կոտորածի օրերին փլատակների մէջ անտէր մնացած մի մանուկ) տողերում.

«Ինձ արքնացրին թնդանօթով օրորոցից մի անգոյն,
Ինչ որ լաւ էր՝ մանկութիւնից խորտակեցին իմ հոգում,
Կործանեցին մեր խրճիթը մութ անտառի եզերքում,
Հիմա աւեր այդ խրճիթն ու մանկութիւնն եմ ես երգում»...

Եփրատ) ջրվէժներից, սահանքներից: Սեւ Սարի ստորոտներին եւ լանջերին ընկած մի քանի տասնեակ գիւղեր կարողացել են կռուով բարձրանալ Քան լեռը: Շուտով այստեղ հաւաքուել է 40-50 հազար հոգի (ըստ ոմանց՝ մօտ 70.000): Բռնկուել է ե՛ւ Սասունի լեռնավայրը, ուր հայերը մի քանի արիւնահեղ ճակատամարտերից յետոյ՝ ունեցել են նոյն սրտաճմլիկ վախճանը: Քանում, ուր հասնում են նաեւ Սասունի հայութեան մի քանի խմբերը, կռիւները շարունակուել են մինչեւ աշուն: Ահաւոր է եղել վերջին օրուայ պատկերը: Թշնամին, տեսնելով, որ պաշարուածների կողմից այլեւս հրազէնի ձայն չի գալիս, խուժել է հայերի բանակավայրը: Սպառած վերջին գնդակները՝ սրանք դիմադրել են քարերով, հրացանի կոթերով, դաշոյններով, փայտերով: Կանայք եւ աղջիկները, գրկած իրանց զաւակներին, փոքրիկ եղբայրներին, քոյրերին, նետուել են ժայռերից: Նրանք, որ ընկել են մեռելակոյտերի վրայ եւ ողջ մնացել՝ խելագարօրէն վազել են դէպի ուրիշ ժայռեր եւ երկրորդ, երրորդ անգամ նետուել:

* * *

«Կարդալով այսպիսի սոսկումների մասին՝ թւում է, թէ իսկապէս երազում էք»,- ասում է հայկական եղեռնը նկարագրող ֆրանսիացի մի հեղինակ: Բայց երազանման այդ մղձաւանջը խլել է կեանքը երկու միլիոն մարդկանց, եւ սրանց հետ՝ մոխրացրել դարաւոր մի մշակոյթ: Կործանուել են քրիստոնէութեան հնագոյն եւ մեծափառ տաճարները, գործ՝ Դ. Ե. եւ հետագայ դարերի: Ճարտարապետական ամենահռչակաւոր կոթողներից շատերը հիմնահատակ քանդուել են (ինչպէս Մշոյ Ս. Կարապետի հռչակաւոր վանքը), ուրիշները վերածուել են մզկիթների, ախոռների կամ ի հեգնումն մարդկային քաղաքակրթութեան՝ նաեւ «թանգարաններ»-ի (ինչպէս Աղթամարի գեղակառոյց տաճարը): Հարիւրաւոր հին վանքերի ճակատագիրը բաժանել են հազարաւոր եկեղեցիները, ոմանք նոյնպէս գործ՝ քրիստոնէական միջնադարի: Ոչնչացուել են անգամ գերեզմանատները, ջարդուել, փշրուել են հայկական գեղաշէն, նրբագիծ խաչքարերը - թանկարժէք գործեր քրիստոնէական արուեստի: Կրակի են յանձնուել հազարաւոր գրչագիր աւետարաններ, կրօնական, պատմական երկեր - անհունօրէն արժէքաւոր թէ՛ որպէս աղբիւր, թէ՛ որպէս հայկական մանրանկարչական նշանաւոր արուեստի սքանչելիքներ: Նիւթական կողոպուտի չափը, իր ահագնութեան մէջ, մնում է անորոշելի: Նոյնպէս ե՛ւ մարդկային զոհերի իսկական թիւը:

Ելնելով 1912թ. անկատար վիճակագրութիւններից (ըստ որոնց՝ Թուրքիայի հայերի թիւը մօտ երկու միլիոն է), եւրոպացի հեղինակները հայերի մարդկային կորուստը ցոյց են տալիս 1,100.000: Իրողութիւն է, որ հայ ազգի ծանրութեան կենտրոնը գտնւում էր Թուրքիայում: Ռուսական վիճակագրութիւնը Կովկասի հայերի թիւը (հայկական եղեռնի օրերին) ցոյց է տալիս 1.786.794: Թուրքիայի հայերը նուազագոյնը սրա մէկեւկէսն էին, յամենայնդէպս՝ ո՛չ պակաս 2.500.000-ից: Դեռ 1884 թուականին, ամենաճշմարտամօտ համարուած անգլիական մի աղբիւր հայերին հաշւում է 2.000.000: Ճի՛շդ է՝ հետագային եղան ջարդեր (330.000), արտագաղթ (200.000), բայց հայերի նման աճող (նուազագոյնը՝ 3%-ով) մի ժողովուրդ 1915-ին, ուրեմն՝ 30 տարուայ ընթացքին, դարձեալ կարող էր իր թիւը հասցնել 2.5 միլիոնի: Վերջապէս, եւրոպական աղբիւրները միայն Կ. Պոլսի հայերի թիւը, ներկայ դարի սկզբին, հաշւում են 250.000, իսկ հայկական նահանգների նկատմամբ՝ վեց պետութիւնները յաճախ են միաձայնօրէն պնդել քրիստոնեաների մեծամասնութեան վրայ:

Կոտորածը տարածուել է (1918-ին) պարսկական Ատրպատականի հայկական շրջաններում (Խոյ, Սալմաստ, Ուրմիա), ուր անխտիր ջնջուել են տասնեակ հազարներով հայեր եւ քրիստոնեայ ասորիներ: Վերջապէս, արեան հեղեղներ են հոսել Կովկասում՝ ռուսական Հայաստանում (Կարս, Շիրակ, Լոռի-Փամբակ, Նախիջեւան, Գողթն, Նուխի, Արէշ, մասնաւորապէս՝ Բագու): Լեպսիսուսի բերած տախտակից հասկացւում է, որ Թուրքիայից Հայաստան եւ Կովկաս են ապաստանել մօտ 450.000 հայեր: Խորհրդային վիճակագրութիւնը (այն էլ 1926-ին) Հայաստանի եւ Կովկասի հայերի թիւը հաշւում է 1.332.000: Դուրս է գալիս, որ Կովկասում հայերը տուել են մօտ 900.000 զոհեր (1.786.794 + 450.000 – 1.332.000), չհաշուած անգամ 9 տարուայ աճը: Անշո՛ւշտ, կեղծուած է այս թիւը. քաղաքական հաշիւներով, բոլշեւիկները կատարել են ե՛ւ թուաբանական ջարդ: Հակառակ իմաստով նրանք կեղծել են նաեւ թուրքաթաթարների թիւը, որ 1917-ի ցարական վիճակագրութեամբ 2.070.000 էր, 1926-ի բոլշեւիկեան վիճակագրութեամբ՝ 1.675.000: Թուրքական 1918-ի ներխուժման հետեւանքով, Կովկասում եղել են հայերի եւ մահմեդականների փոխադարձ ոչնչացումներ, գրեթէ հաւասար, մօտ 350.000-ական կորուստներով: Մօտ 200.000 հայեր Անդրկովկասից անցել են հիւսիսային Կովկաս, հարաւային Ռուսաստան, նոյնքան թուրքաթաթարներ տեղափոխուել են Թուրքիային մնացած հայկական նահանգները:

Վերցնենք այժմ թուրքաց Հայաստանի Մեծ Հայքին պատկանող 5 նահանգները (Կարին, Վան, Բաղէշ, Տիգրանակերտ, Խարբերդ), զանց առնելով Տրապիզոնը եւ Սեբաստիան: Ըստ 1912-ի պակասաւոր վիճակագրութեան, հինգ այդ նահանգներն ունէին 2.630.500 բնակիչ: Նոր Թուրքիայում 5 այդ նահանգները վերածուել են 9-ի, որոնց բնակչութեան համագումարն է, ըստ թուրքական 1927-ի պաշտօնական վիճակագրութեան, 1.207.817: Այս ընդհանուր թուից պէտք է հանել ռուսական Հայաստանից Բայազէդի նահանգին կցուած Սուրմալու գաւառի 54.000 մահմեդական բնակիչները եւ, վերջապէս, հայկական ջարդերից յետոյ թուրքաց Հայաստանի նահանգներում վերաբնակուած մօտ 150.000 ուրիշ մահմեդական ներգաղթողներ: Ուրեմն, 1912թ. 2.630.500 բնակիչներից 1927-ին մնացել է շուրջ մէկ միլիոն, այն էլ՝ ըստ թուրքական վիճակագրութեան: Հանելով այդ նահանգների 800.000 քրիստոնեայ բնակչութիւնը՝ պարզւում է, որ այդ մարզում ոչնչացուել են, մի՛շտ անտեսելով 9 տարուայ բնական աճումը, 830.000 մահմեդականներ: Փոխադարձ ոչնչացումներ են եղել ե՛ւ Կիլիկիայում, պարսկական Ատրպատականում, արեւմտեան Անատոլիայում, Տրապիզոնի նահանգում, ուր հայերն առանձին կամ ռուսների եւ յոյների մասնակցութեամբ տարել են վրէժխնդրական կռիւներ: Թողնելով Պարսկաստանի, Անատոլիայի, Թրակիայի, Կիլիկիայի շրջանների բնակչութիւնների վերաբերեալ բաղդատական մանրամասնութիւնները, մենք եզրակացնում ենք. թուրք կառավարութեան 1915/20-ին յղացած եւ գործադրած ժողովրդասպան ծրագրին՝ Թուրքիայում, Կովկասում եւ պարսկական Ատրպատականում զոհ են գնացել աւելի քան 3.200.000 մարդիկ, որոնցից շուրջ 2.000.000-ը՝ հայեր (բռնի իսլամացումով հայ ազգի համար կորածների թիւն անորոշ է) եւ շուրջ 1.200.000-ը՝ մահմեդականներ:

Հայկական եղեռնի օրերին հայերի ճակատագիրը բաժանեցին քրիստոնեայ ասորիները եւ աղանդաւոր (արեւապաշտ) եզդիները: Հետագային սկսուեցին քրիստոնեայ յոյների ջարդերը: Իսկ 1924-ից թուրքական սուրը գործում է մահմեդական, բայց ցեղով արիական քիւրդերի դէմ: Այսօր (քրտական ջարդերից եւ Երզնկայի երկրաշարժից յետոյ) Մեծ Հայքի նախկին 5 նահանգներում ապրում են միմեանց արեան թշնամի դարձած 550.000-ի չափ քիւրդեր եւ 400.000-ի չափ թուրքաթաթարներ: Դրա հանդէպ հայկական Մեծ Եղեռնից ազատուած եւ աշխարհի չորս ծագերը ցրուած Թուրքիայի 750.000 հայերի թիւն արդէն հասել է 1.200.000-ի, որից 400.000-ը՝

խորհրդային սահմաններում, 200.000-ը՝ Ամերիկայում, 200.000-ը՝ արաբական երկրներում, 100.000-ական՝ արեւմտեան Եւրոպայում եւ Բալկաններում, մնացեալը՝ այլեւայլ երկրներում): Խորհրդային Միութեան հայերի թիւն է (ըստ 1939-ի վիճակագրութեան) 2.154.000: Ուրիշ 170.000 հայեր ապրում են Պարսկաստանում: Բոլոր հայերի օրուայ թիւն է 3.5 միլիոն: Չլինէին 1915-ի կոտորածները եւ տարագրութեան յատուկ անբնաստ պայմանները՝ հայերն այժմ պիտի կազմէին մօտ 10 միլիոննոց մի ազգութիւն: Ահա՛ թէ ի՞նչ է կորցրել հին Եւրոպայի դիւանագիտութեան ամենամեծ զոհը՝ Առաջաւոր Ասիայում արիական իր ուխտի համար եւ քրիստոնէական քաղաքակրթութեան դրօշի տակ նահատակուած հայ ժողովուրդը:

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Որո՞նք են անօրինակ այս ոճիրի պատճառները:

Թուրքերը եւ տեսական խղճմտանքից զուրկ, յաճախ պարզապէս վաճառուած, երբեմն էլ պատմական հարցերում կատարելապէս տգէտ եւրոպացի մի քանի փաստակները բերում են հետեւեալ պատրուակները.

1) ՀԱՅԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ – Մենք տեսանք թուրք պատերազմական նախարար Էնվէրի վկայութիւնը՝ հայ զինուորների խղճմիտ ծառայութեան մասին: Յիշեցինք, որ Դարդանելի թուրք հրամանատարները նկատել են տուել Կ. Պոլսի կառավարութեան, որ հայ զինուորների զինաթափումով որակազրկուելու է թուրքական բանակը: Այս կապակցութեամբ կայ նաեւ ամենահեղինակաւոր վկայութիւնը: Զօրավար Լուդենդորֆն է ասում. *«Բարի, քաջ անատոլցին անյայտացաւ զօրամասերից»** (էջ 200): Թէպէտեւ խօսքն այստեղ ընդհանուր իմաստով է, բայց *«անյայտացածներ»-ը,* անշո՛ւշտ, անատոլցի թուրքերը չէին, այլ միայն՝ հայերը: Մի այլ տեղ զօրավարը նկատում է. *«Իր աններելի վերաբերմունքով՝ դէպի հայերը, Թուրքիան զրկեց իրան աշխատաւոր այն ոյժերից, որոնց այնքան ստիպողականօրէն կարիքն ունէր ուղեշինութեան եւ հողամշակութեան համար»* (անդ, էջ 136): Թուրքիայի այն օրերի մեծ զինակցի ամենապատասխանատու դէմքերից մէկի այս որակումը - *«աններելի»* - ինքնին ապացուցում է, որ դաւաճանութիւնը կատարուել է կառավարութեան կողմից, այն էլ՝ օրինապահ եւ ամէն տեսակէտով արժէքաւոր մի ժողովրդի դէմ: Յաւելեալ ապացո՞յց - ահա՛ ռուս-թուրքական ռազմաբեմը՝ հայ հողի վրայ, ուր ամէնից աւելի ցայտուն կերպով երեւան պէտք է գար հայերի «դաւաճանութիւն»-ը: Բայց ի՞նչ ենք տեսնում այստեղ: Դեռ 1914թ. հոկտեմբերի վերջերին Ալաշկերտի թուրքերը, վախենալով ներխուժող ռուս բանակի փոխվրէժից, ծառանում են ջարդի հրահանգի դէմ, հեռագրով խնդրելով Կ. Պոլսի կառավարութեան՝ թողնել, որ իրանք հաշտ ապրեն քրիստոնեայ իրանց դրացիների հետ: Նրանք հայերի հետ կնքում են «փոխադարձ պաշտպանութեան» մի ուխտ: Ահա՛ եւ Կարինը – թուրք բանակի հայաստանեան ճակատի կենտրո-

* *Erich Ludendorff.* „Meine Kriegserinnerungen''.

նավայրը: Այստեղ ո՛չ միայն հայկական ապստամբութեան որեւէ փորձ չի եղել, այլեւ Սարիղամիշի անյաջող յարձակումի ժամանակ ռուսներից ջարդուած թուրք բանակի հայ զինուորներն աչքի են ընկել իրանց հաւատարմութեամբ եւ քաջութեամբ: Նրանք են գերումից փրկել եւ փախցրել անգամ Էնվէրին: Բայց «գնչուական այս բարոն»-ը*, ինչպէս Լեպսիուսն է որակում Թուրքիայի ամենահռչակուած այս «հերոս»-ին, չէր կարող իր ազատարարների մէջ այլ բան տեսնել, քան իր տկարութեան վկաներին: Ուստի՝ պէտք է ոչնչանային նրանք. պէտք է զրպարտուէր, ոչնչացուէր նրանց ժողովուրդը: Որ հայերը դաւաճանութիւն չեն արել, դա յստակօրէն երեւում է այն փաստից, որ երբ Կ. Պոլսից հրահանգուել է հայերին տեղահանել՝ դրա դէմ, հրաժարուելու աստիճան բողոքել են ո՛չ միայն Կարինի բերդապետ, գերմանացի զօրավար Պոսելտը, ո՛չ միայն տեղի գերմանական հիւպատոս ֆօն Շոյբեներ-Ռիխտերը, այլեւ՝ թուրք երեւելիները եւ հէնց ի՛նքը՝ կուսակալ Թահսին բէյը:

Բողոքել եւ մինչեւ վերջ ընդդիմացել է Զմիւռնիայի թուրք կուսակալը: Շատ տեղերում, ինչպէս Սեբաստիայում, միջամտութեան փորձեր են արել գերման սպաները: Դառն գանգատներ է յղել Բերլին Կ. Պոլսի գերմանական դեսպանատունը: Սրանցից եւ ո՛չ ոք շահագրգռուած էր պաշտպանել ինչ-որ «դաւաճանութիւններ»-ի: Եւ, վերջապէս, զօրավար Լուդենդորֆն է շարունակում պատմել. *«Ռայխսկանցլերը շա՛տ խիստ կերպով դատապարտում էր Թուրքիայի գործ դրած բռնամիջոցները՝ քրիստոնեայ հայերի դէմ: Նրանք նաեւ ծանր մի սխալ էին եւ ոչնչով դարմանելի»* (անդ, էջ 500):

Այդ բոլորից յետոյ, մասնաւորապէս հայերին չի զարմացնում թուրքերի ինքնարդարացումը: Մի ժողովուրդ, որ յանձին իր կառավարութեան ընդունակ է հրահանգ տալ մահից առաջ զրպարտել զոհերին, որ ամէն ճիգ թափում է ջնջել ո՛չ միայն նրանց, այլեւ նրանց պատմութեան նիւթեղէն հետքերը, այդպիսի մի ժողովուրդ իր զոհերի մահից յետոյ երբեք պիտի չփոխէր ինքնարդարացումի իր զէնքը: Բայց հայերը խորապէս վրդովւում են եւրոպացու անուն կրող այս ու այն վճարուած գրչակի, կամ անցքերի ծաւալին եւ բնոյթին անտեղեակ, միայն ստախօսի կոյր վկայի դերում գտնուող այս ու այն գրողի, գիտնականի ելոյթներից: Առաջինների արժէքը սքանչելիօրէն որակել է Շոպէնհաուէրը. *«Պատիւը եւ դրամը չեն կարող տեղաւորուել միեւնոյն*

---

* *D. Dr. Johannes Lepsius.* „Der Todesgang des Armenichen Volkes", XIII.

տոպրակում»: Երկրորդներին կտակ են թողել իմացականութեան հնագոյն հանճարները. *«Թո՛ղ ձեր խօսքի ճշմարտութիւնը լինի ձեր ամենաբարձր ինքնասիրութիւնը»:*

2) ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ – Կովկասի հայերը՝ պատերազմի սկզբին, Եւրոպայում, Ամերիկայում կամ ափրիկեան երկրներում գտնուած պանդուխտները՝ հայկական եղեռնից յետոյ, կազմեցին կամաւորական մի քանի գնդեր: Կովկասի գնդերը, որոնք գործում էին ռուս բանակի հետ, բաղկացած էին ռուսահպատակ հայերից եւ Թուրքիայից վաղուց փախած պանդուխտներից: Իբրեւ Թուրքիայից Կովկաս անցած նոր մարդ, այդ գնդերի շարքում էր միայն Կարօ Փաստրմաճեանը, Օսմ. պարլամենտի անդամ: Թուրքերն այս հայ գործիչի ներկայութիւնը թշնամի բանակում՝ դարձրին թունոտ քարոզչութեան նիւթ: Նոյն այդ օրերին հարիւրներով աւստրիահպատակ չեխ ականաւոր գործիչներ, հազարներով զինուորներ, անցած ռուսական, ֆրանսիական, իտալական բանակները՝ կռւում էին իրանց պետութեան դէմ: Հենց Թուրքիա էին անցել կովկասեան մահմեդականների մի շարք գործիչներ: Թուրքերը վերակազմել էին քրդական համիդէական հեծելագնդերը, ստեղծել էին չերքէզական ասպատակախմբեր: Այս ժողովուրդները Կովկասում ունէին իրանց ցեղակիցները, ուստիեւ՝ ազգակցական կապերը: Բայց այդ բաների համար ո՛չ աւստրիացիները չեխերին ոչնչացրին, ո՛չ էլ ռուսները՝ Կովկասի մահմեդականներին: Եւ, վերջապէս, զօրավար Լուդենդորֆն է վկայում. *...«Քիւրդերն ու հայերը՝ Կովկասի սահմանի վրայ, արաբական ցեղերը՝ Միջագետքում, Սիրիայում, մինչեւ Ադէն՝ թշնամի էին թուրքերին»* (անդ, էջ 136): Ինչո՞ւ. այդ էլ բացատրում է զօրավարը. *«Թուրքերը մի՛շտ էլ վարել են ձախողօրէն բնածին մի քաղաքականութիւն: Նրանք միայն վերցրել են, երբե՛ք՝ տուել»* (անդ, էջ 136): Միայն վերցնել գիտցողների մէջ մի՛շտ էլ գործում է ոչնչացումի ոգին:

Կովկասահայերի կամաւորական շարժումը չի արդարացնում Թուրքիայի հայերի ոչնչացումը: Պատերազմի նախօրեակին տաճիկները բանակցել էին հայերի հետ եւ ծանօթ էին նրանց տեսակէտին: Կարինում դաշնակցական կազմակերպութեան ներկայացուցիչների (Ռոստոմ, Վռամեան, Ակնունի) եւ թուրք կառավարութեան բանագնացների (Նէջի, Խալիլ եւ Շաքիր բէյեր) միջեւ տեղի ունեցած այդ բանակցութիւնների ընթացքին կողմերն արտահայտել են իրանց մտածումը: Թուրքերը պնդել են. *«Անդրկովկասի վրացիներն ու թաթարները համաձայն են ապստամբել ռուսների դէմ, եթէ միայն հայերն իբրեւ աւելի՛ եռանդով մարդիկ իրանց վրայ վերցնեն նախաձեռնութիւնը»:* Իբրեւ

վարձատրութիւն *«հայերը, վրացիները, թաթարները դառնում են ինքնավար ժողովուրդներ՝ Թուրքիայի հովանաւորութեան տակ: Հայերն ստանում են Կարսի շրջանը, Երեւանի նահանգը, Գանձակի նահանգի մի մասը* (ռուսական բաժնից), *Վանի եւ Բաղէշի նահանգները եւ Կարինի նահանգի մի մասը* (Թուրքաց Հայաստանից): *Վրացիներին տրւում են Քութայիսի, Թիֆլիսի նահանգները, Բաթումի շրջանը* (Կովկասից) *եւ Տրապիզոնի նահանգի մի մասը* (Թուրքիայից): *Բագուի նահանգից, Գանձակի նահանգի մի մասից եւ կովկասեան լեռնավայրից մինչեւ Վլադիկաւկազ* (Կովկասից) *կազմւում է մահմեդականների ինքնավար շրջանը*»: Հասկանալի է, որ հայերը պիտի չուզենային զէնք վերցնել քրիստոնեայ մի պետութեան դէմ: Նրանք գիտէին նոյնպէս, որ վրացի եւ թաթար գործիչները միայն քաղաքական շանտաժ են կատարում: Կովկասի եւ ո՛չ մի ժողովուրդ (մասնաւորապէս՝ քրիստոնեայ) թուրքերի խոստացած ազատութիւնը պիտի նախընտրէր ռուսական ամենավատ ստրկութիւնից: Որ թուրքերն ու վրացիները իրար խաբել են, այդ երեւում է զօրավար Լուդենդորֆի վկայութիւնից. *«1915/16-ին մենք վրացի խմբերի հետ աշխատել էինք Հայաստանում, յամենայն դէպս՝ առանց արդիւնքի»* (վրացիները խաբել են, որ նման խմբեր գոյութիւն ունեն): Դա երեւում է մանաւանդ թուրքերի վերաբերմունքից՝ Կովկաս ներխուժելու օրերին (1918-ին): Նրանք ո՛չ միայն վրացիներին չտուին Տրապիզոնի նահանգից խոստացուած մասը, այլեւ խլեցին Բաթումի շրջանը եւ պատրաստւում էին ոչնչացնել ամբողջ Վրաստանը, որ փրկուեց միայն Գերմանիայի բարերար միջամտութեան շնորհիւ:

Հայերը ճանաչում էին թուրքերին եւ ամէնից լաւ՝ հենց Օսմ. պարլամենտի անդամ կարնեցի Կարօ Փաստրմաճեանը (մէկը 1896-ին Օսմ. դրամատունը գրաւող հայ յեղափոխականներից): Նրանք պարտականութիւն եւ իրաւունք ունէին ապստամբել միայն Տաճկաստանի դէմ: Բայց այդ քայլին նրանք չդիմեցին, որովհետեւ թուրքերը զինակից էին քրիստոնեայ այլ մի ոյժի՝ Գերմանիայի: Ուստի, Կարինում նրանք յայտարարեցին թուրք բանագնացներին. *«...Հայերը կատարելապէս օրինապահ են եւ կը կատարեն քաղաքացիական իրանց պարտականութիւնը՝ ինչպէս Ռուսաստանի, այդպէս էլ Թուրքիայի վերաբերմամբ»:* Թուրքերը չունեն եւ ո՛չ մի հատիկ փաստ, որ մինչեւ տեղահանութիւնը եւ ջարդերը՝ Թուրքիայում ապրող հայերը շեղուել են այս գծից: Ընդհակառակը, Թուրքիայի հայերն էլ կամաւոր անթիւ ծառայութիւններ մատուցեցին իրանց պետութեան: Տարբերութիւնը նրանում էր միայն, որ ռուսները զէնք էին տալիս կովկասցի հայ կամաւորներին, իսկ թուրքերը յատուկ ծրագրով գաղտնօրէն ոչնչացնում էին ո՛չ

միայն իրանց բանակի հայ զինուորներին, այլեւ՝ պաշարակիրներին: Եւ վերջապէս ինչի՞ մասին է խօսքը, երբ պատերազմի դեռ առաջին օրերին Բայազէդի, Դիադինի, Ալաշկերտի քիւրդերն իրանց ծառայութիւնն էին առաջարկում ռուսներին, երբ արաբական ցեղերը կռւում էին անգլիական բանակի կողքին, երբ Կովկասի մահմեդականներն անգամ փորձեր էին անում կամաւորական խմբեր կազմել Ռուսաստանի համար:

3) ՀԱՅԵՐԻ ՎԱՇԽԱՌՈՒԹԻՒՆԸ – Շնորհիւ հայութեան դահիճների մղած քարոզչութեան եւ հրեաների նիւթած առասպելների, Եւրոպայում բաւականաչափ խորացել է մոլորանքը՝ հայ առեւտրականների անխտրողական բարոյականի մասին: Հայոց պատմութեան եւ հայ ժողովրդի հոգեգծութեան անծանօթ հեղինակներից շատերն են զոհ գնացել այդ մոլորանքին: Լուրջ համարուած մի քանի գրքերում իսկ տեղ են գտել այսպիսի մտքեր. *«Հայերը զոհ գնացին ո՛չ միայն իրանց քրիստոնէութեան, այլեւ իրանց նկարագրին»:* Այն փաստը, որ յիշեալ հեղինակները ցոյց չեն տալիս այդ «նկարագիր»-ը կամ սրա մասին խօսում են վերացական անհեթեթութիւններով, ինքնին ապացուցում է, որ նրանք իրանց իմաստակութիւնները քաղել են գիտութեան սեւ շուկայից: Այդ հեղինակները չգիտեն իսկ, որ հայ ժողովրդի 80%-ը կազմուած է աշխարհի ամենաբարեսիրտ, պարզունակ, սրտով՝ հողին, հոգով՝ երկնքին կապուած գիւղացիներից: Նրանք չգիտեն նոյնպէս, որ քաղաքաբնակ հայերի մօտ 80%-ն էլ բաղկացած է քրտինքով օրուայ հացը շահող շատ ուշիմ եւ սակաւապէտ արհեստաւորներից, որ առեւտրական դասը կազմում է հայ ժողովրդի միայն 3-4%-ը: Հայ առեւտրականներն ապրում եւ գործում են Հայաստանից դուրս: Բոլորն էլ օժտուած են նախաձեռնումի մեծ կորովով, ուստի եւ, հակառակ իրանց աննշան թուի, երեւում են ամէն տեղ: Նրանց մէջ անթիւ են եղել բարեգործ մարդիկ. շատերն են հիմնել դպրոցներ, եկեղեցիներ, հիւանդանոցներ, մատենադարաններ եւ թողել ազգին: Պակաս չեն անշուշտ ե՛ւ ստուերոտ գծեր ունեցողները: Դեռ նոր պղատոնականներն էին ասում. *«Նիւթի մէջ գործում է սատանայական սկզբունք»-ը:* Պէտք է նկատի առնել նաեւ այն իրողութիւնը, որ հայ առեւտրականների նախահայրերը շատ դարեր առաջ կտրուել են հայ հողից, հայրենի միջավայրից – պայմաններ, որոնցում դժուար է անաղարտ պահել ազգային նկարագիրը, հոգեգծերը: Բայց եւ այնպէս, հայ առեւտրականները, ընդհանուր առումով, ոչնչով են պակաս ուրիշ ազգերի իրանց դասակիցներից, եւ շատ բաներում, մասնաւորապէս բարեգործութեան մէջ, անկասկածօրէն գերազանցում են բոլորին:

Հայն առեւտրական ժողովուրդ չէ, ուստի՝ նրա վաճառականները շահելու իրանց մեթոդներն որդեգրել են ուրիշներից: Նրանց յաջողութեան գաղտնիքը նրանումն է, որ Արեւելքում միակն են, որ հաշուել եւ գործը կազմակերպել գիտեն եւրոպացիների պէս: Թաթարներից, թուրքերից, Արեւելքի հրեաներից եւ ուրիշներից հայերը տարբերւում են ա՛յն բանով, որ չեն սիրում մանր փերեզակութիւնը, որով՝ նրանք չունեն ե՛ւ փերեզակային հոգեգծութիւն: Հայաստանում հայերը նախընտրում են երկրագործութիւնը, եւ երբ նրանցից խլում են հողը՝ դառնում են արհեստաւոր: Յամառութիւնը, մտաւորական ընդունակութիւնը՝ միացած խնայողութեան եւ նախաձեռնութեան ոգուն, աստիճանաբար նրանց հասցնում են արդիւնաբերողի դիրքին: Այդ դէպքում էլ, սակայն, հայը չի լքում իր արհեստը, չի դառնում ծոյլ գործատէր, այլ՝ զբաղումով թէ հոգեբանութեամբ՝ մնում է վարպետ: Ո՛վ ծանօթ է Արեւելքի հին թէ նոր պատմութեան, նա գիտի, որ հայկական առեւտուրն ու արդիւնաբերութիւնը հանդիսացել են այդ աշխարհամասի հասարակական կեանքի զարգացման ամենաէական գործօնները: Դեռ հին դարերից հայերը հռչակուած են որպէս աշխատանքի եւ շինարարութեան ժողովուրդ: Այդպիսին - շինարարական - եղաւ եւ մնաց նաեւ հայկական դրամագլուխը: Փաստե՞ր. ահա Սպահանը, Բագուն, Թիֆլիսը, Կ. Պոլիսը: Որպէս շինարար տարր, հայերին Ռուսաստան են հրաւիրել Պետրոս Մեծը, Կատարինէ կայսրուհին: Պարսիկների Շահ Աբաս թագաւորը նոյնիսկ բռնագաղթով է նրանց տարել իր մայրաքաղաքը: Թուրք հին սուլթանները լայն առանձնաշնորհումներով նրանց հրապուրել, հրաւիրել են Կ. Պոլիս: Վերջապէս, հայ առեւտրականների՝ բոլոր ազգերին գերազանցող բարձր նկարագրի մասին վկայում է Կանտը:

Ի՞նչ են արել հայ առեւտրականները Թուրքիայում: Պատմութիւնից ծանօթ է, որ նրանք շա՛տ յաճախ (մասնաւորապէս սուլթան Մահմուդ Բ.-ի օրօք) փրկել են Օսմ. կայսրութիւնը սնանկութիւնից: Յայտնի է նոյնպէս, որ նրանց կողքին անդադար գործել են կառուցողական արուեստի մէջ այնքա՛ն հռչակուած հայ վարպետները: Իսկապէ՞ս դրանք կեղեքել են թուրքերին: Եւրոպական ամբողջ գրականութիւնը, վեց մեծ պետութիւնների մի շարք հաւաքական ծանուցագրերը հաստատում են, որ Թուրքիայում անընդհատ կեղեքուել է հայ ժողովուրդը: Հայկական եղեռնից յետոյ՝ ճիգ կայ պնդել դրա հակառակը: Դուրս է գալիս, որ մահից առաջ հայերն եղել են հարստահարուողներ, մահից յետոյ՝ հարստահարողներ: Այստեղ մենք կանգնած ենք ոճրա-ախտաբանական մի երեւոյթի առաջ: Սրան ասում են՝

զոհերի ուրուականներից կրած վախի յաղթահարում՝ հոգեւոր սադիզմի միջոցով: Պատահական ոճրագործն աւելի իր զոհի ուրուականից է վախենում, քան՝ օրէնքի դատավճռից: Եղեռնաբաղձ էակին, սակայն, յատուկ է իր զոհի ուրուականն եւս սպանելու մոլուցքը: Ուրիշ որեւէ հոգեգիտական բացատրութիւն կարելի չէ տալ հայ ժողովրդի դահիճների՝ զոհերին զրպարտելու ճանապարհով ինքնարդարացմանը: Որ այդ բոլորը հոգեբանական հաշուով եղած յերիւրանքներ են՝ պարզ երեւում է հետեւեալ չոր փաստից.

- Թուրքիայի հայոց առեւտրական դասը եւ դրամագլուխը կենտրոնացած էր Կ. Պոլսում եւ Զմիւռնիայում: Տեղահանութիւնից եւ զանգուածային ջարդից զերծ են մնացել միայն երկու այդ քաղաքների հայերը, բացառութեամբ մի քանի հարիւր գաղափարապաշտ մտաւորականների, չունեւոր ուսուցիչների եւ հայաստանցի պանդուխտների - բոլորն էլ թշուառ կոչուելու չափ աղքատ բանուորներ, բեռնակիրներ:

Այս փաստը լուծում է բոլոր առեղծուածները: Թուրքերը սպանել են ո՛չ թէ սրանց նկարագրի, այլ՝ քրիստոնէական կրօնի եւ ազգային նպատակի պատճառով: Հարուստներից խլել են գանձը, աղքատներից՝ նաեւ կեանքը: Նրանք ոչնչացրել են ո՛չ թէ «կեղեքողներ»-ին, այլ՝ կեղեքուածներին: Ուստի, հայկական եղեռնը չի ունեցել ընկերային շարժառիթներ, այլ՝ միայն ազգային եւ կրօնական: Դա չի ունեցել մանաւանդ նկարագրային շարժառիթներ:

Ի՞նչ նկարագիր կարող է ունենալ հայ ժողովուրդը, որ մօտաւորապէս երեք հազար տարուայ դիւցազնա-ողբերգական պատմութիւն ունի: Ազգերն յարատեւում են իրանց բարձր տեսիլքների, նպատակի ոյժով: Միայն նպատակի ժողովուրդներն են ընդունակ ապրել բարոյական բարձր արժէքներով, ճշմարտութիւններով: Հայն է առաջին ընդունողն ու գլխաւոր մի տարածիչն արիական գրեթէ բոլոր ժողովուրդներից որդեգրուած քրիստոնէական կրօնի: Դրանով նա արտայայտել է իր նկարագիրը: Մարդկանց թէ ազգերի նկարագրի չափանիշը հաւատարմութեան այն աստիճանն է, որ ցուցահանում են սրանք իրանց գոյութեան ուխտի հանդէպ: Ծանօթ է հայերի եզակի հաստատակամութիւնը՝ քրիստոնէական իրանց ուխտի մէջ: Հայի զօրութիւնը հաւատարմութեան խորին իր զգացումի մէջ է: Այստեղ է նաեւ նրա պատմական ճակատագրի ողբերգականութեան բուն պատճառներից մէկը:

Եւ, վերջապէս, ո՞ր նկարագրի մասին է խօսքը, երբ հայերն ո՛չ առաջին զոհերն են թուրքական եղեռնագործութեան, ո՛չ էլ՝ վերջին: Նրանցից առաջ զանգուածօրէն ջարդուել են բալկանեան քրիստո-

նեաները,- մասնաւորապէս յոյները, բուլղարները,- սիրիական քրիստոնեաները, նրանց հետ՝ քրիստոնեայ ասորիները, աղանդաւոր եզդիները, մասամբ՝ անգա՛մ մահմեդական արաբները, նրանցից յետոյ՝ մահմեդական քիւրդերը, աղանդաւոր ղզլբաշները, որոշ չափով՝ նոյնի՛սկ չերքէզները: Ինչպիսի՞ նկարագիր ունեն բոլոր այս ազգերը: Երբ զոհերը տարբեր են ու դահիճը նոյնը, ոճիրի պատճառները պէտք է փնտռել վերջինի բնութեան մէջ:

ԲՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ա) Մոնղոլական եղեռնաբաղծութիւն – Մոնղոլական ցեղի ցայտուն հոգեգծերից են սեռակենտրոնութիւնը եւ եղեռնաբաղծութիւնը: Առաջինով մոնղոլատիպ էակն ուրուագծում է իր բաղձանքները, երկրորդը՝ ծառայեցնում է որպէս նպատակահասութեան միջոց: Սեռակենտրոնութիւնը թէ եղեռնաբաղծութիւնը հետեւանք են ներքին անզօրութեան զգացումի: Արիատիպ մարդը նպատակին ձգտում է ոգեկան ոյժերի լարումով, մոնղոլատիպը՝ ոճիրով: Առաջինն ողբերգական խորք ունի, երկրորդը՝ անխտրողական է կարճագոյն ելքին ծառայող միջոցների խնդրում: Նա մտածում է նաեւ իրերի վախճանաբանութեան մասին, սա տեսնում է միայն իրերը, ուստի՝ ամենավերացական համարուած իր յղացումներն իսկ հազիւ են հասնում անբնազանցական մի ճակատագրապաշտութեան սահմանին: Իրականում անհաւատ՝ մոնղոլն ամենավարպետ կերպով կեղծում է մոլեռանդութիւն: Վերացական ամէն բանի երեւութական արժէք է տալիս, երբ դրանից գործնական շահ ունի: Սիրում է հաճոյքը, բայց չունի ուրախ հոգի: Անընդունակ է արժէքներ ստեղծել, բայց ունի զգայական վայելքի մոլուցք: Մշակոյթը, արուեստը չի ստեղծում, բայց համեմատաբար շուտ է իրացնում նիւթական քաղաքակրթութիւնը եւ սրա յարմարութիւններից օգտուելու ձեւերը: Մեծագլխութիւնը եւ կարճոտութիւնը նրան դարձնում են ծոյլ և մակաբոյծ: Չին չի հեծնում ասպետական գործեր կատարելու խանդով, այլ՝ իր մարմինը փոխադրելու պահանջից: Չիու վրայ աւելի քնանում է, քան թէ երազում: Ժանտազգացօրէն նեղսիրտ է եւ իր ամենազօրաւոր զգացումն է ատելութիւնը: Իր ոյժերը ծնունդ են իր ներքին տկարութեան: Անչափելիօրէն վախկոտ է, բայց եւ անհունօրէն անգութ: Մի վայրկեանում դա աւելի է ստրկանում, քան թէ արիատիպ մարդը՝ տարիների, սերունդների ընթացքին: Որպէս ներքին սարսափի էակ՝ դա աշխարհում իրան պարտադրում է սարսափով: Ներքին սարսափի զգացումը, միացած ծուլութեան, նրան դարձնում

են ամենադաժան մակաբոյծը: Մոնղոլն է միայն ընդունակ ստեղծելու «ենիչերիական» դրութիւն: Դրա քաջութիւնը բղխում է նենգութիւնից, քաղաքական իրապաշտութիւնը՝ հաւատարմութեան զգացումի կատարեալ բացակայութիւնից: Դա զուրկ է պատմական ապրումից, բայց սքանչելիօրէն գիտի օգտուել վայրկեանից: Դա ո՛չ տեսնում է հեռաւորը, ո՛չ էլ մտածում նրա մասին, բայց որպէս չոր ներկայապաշտ՝ յաջողւում է անցաւոր արդիւնքներով իրան ապահովել անստոյգ մի ապագայ: Դա խորշում է վերացականից, զուրկ է յաւիտենականութեան զգացումից, յաւիտենատենչութիւնից, անընդունակ է անցաւորում արժէքներ տեսնել եւ սարսափում է ապագայից, ուստի՝ ո՛չ կարողանում է դիւցազներգութիւն ստեղծել, ո՛չ էլ՝ ճշմարիտ բանաստեղծութիւն: Հաւաքաբար դա կատարում է քաջութեան գործեր, բայց ծնունդ չի տալիս հերոսների, այսինքն՝ նպատակի մարդկանց: Հերոսը, սուլթանը նրա համար այնքան հմայք ունեն, որքան դեռ մարմնապէս ապրում են: Կարճայուշ է, ուստի եւ՝ ապերախտ: Դա հասկացողութիւն չունի ոգու պաշտամունքի մասին եւ շուտ է մոռանում իր հօրը, իսկ պապերով չի՛ էլ հետաքրքրւում (հայրութեան զգացումի չգոյութիւնն էր, որ մղեց նրան «թրքութեան հայր» յայտարարել Քէմալին՝ դեռ նրա կենդանութեանը): Դա անփոյթ է նաեւ դէպի իր զաւակների ապագան: Այդ բոլորով հանդերձ, անձնական «ես»-ի զգացումն էլ աղօտ է իր մէջ: Նրա ընտանեկան, ընկերային թէ կրօնական ամբողջ կեանքը դառնում է սեռային յոյզերի շուրջ: Նրան մահմեդական է դարձրել ո՛չ թէ Ղուրանի իմաստութիւնը, շքեղ ոճը, այլ՝ նրա զգայական խոստումը՝ դրախտային կանանց մասին: Սեռակենտրոնութեն հետ՝ բնութիւնը նրան տուել է ե՛ւ ժանտատեսիլ կերպարան: Ցեղային երկու այս յատկանիշների պատճառով, նրա մէջ միացած են պղծումի եւ եղեռնագործումի բաղձանքները: Արիատիպ մարդը բնազդական գարշանք ունի դէպի միւս ցեղերը, որովհետեւ նրա մէջ ազդու է ներքին զգացումը՝ սեփական արեան ազնուութեան մասին: Մոնղոլն իրանից դուրս է տեսնում գեղեցկութիւնը, ազնուութիւնը, ուստի՝ ունի արիւնախառնումի անյաղթահարելի մղում: Այդ անյաղթահարելիութիւնը, հանդիպելով մասնաւորապէս սպիտակ ցեղի գարշողական վանումին, մոնղոլի մէջ յարուցում է նախանձի մղձաւանջ, որ բաւարարութիւն է ստանում պղծումով կամ ոչնչացումով: Ահա՛ թէ ինչո՛ւ մոնղոլական ցեղի վարած բոլոր կռիւների շարժառիթներն եղել են սեռային եւ հետեւանքները՝ ոճրախառն պղծագործումներ: Ահա թէ ինչո՛ւ այդ ցեղի բոլոր ներկայացուցիչների մէջ անեղծանելի բնազդների ոյժով գործում են նենգամտութիւնը, ճարպկօրէն կեղծելու

անմրցելի ընդունակութիւնը, պղծաբաղձութիւնը, եղեռնաբաղձութիւնը, կողոպուտի, ոչնչացումի տենդը, եւ այդ բոլորի հետ՝ դաժան սրամտութիւնը, սադիստական հեգնանքը:

Դեռեւս Ե. դարու մի պատմագիր՝ Ամիանոս Մարկելինոսը, նկարագրելով հոների կեանքը, ասում է. *«Նենգամիտ եւ փոփոխամիտ են նրանք եւ վայրի գազանների նման... անընդունակ ուղիղը զանազանելու անիրաւից: Ո՛չ մէկ յարգանք ունեն որեւէ կրօնի...հանդէպ, չափազանց ցանկացող են ոսկու, եւ այնչափ են յեղյեղուկ, որ օրը մի քանի անգամ կռւում են իրար հետ՝ առանց որեւէ պատճառի եւ շուտով էլ հաշտւում՝ առանց գոհացում ստանալու: ...Նրանց սրունքներն այնքան անճոռնի են, որ արգելք են դառնում քայլելու... Յաճախ կնոջ նման են նրանք ձի հեծնում»...*

Ուրիշ մի պատմագիր տալիս է Ճենկիզ Խանի՝ Բուխարան գրաւելու պատկերը. *«Կատարուեցին աննկարագրելի արարքներ: ...Ի գործ դրուեցին բոլոր պղծութիւնները, եւ նրանց առջեւ, որոնց համար ամենազարհուրհելին էր տեսնելու աչք ունենալ: Ոմանք ոյժ ունեցան մահը նախընտրել, քան հանդիսատես լինել այդ զարհուրանքներին... տեսնելով իրանց կիների անպատւումը՝ խուժեցին ազատելու նրանց եւ ոչնչացան»:*

ԺԱ. դարից, թաթար հորդաներն երեւում են Հայաստանում: Դէպքերին ականատես հայ պատմագիրներից Կիրակոս Գանձակեցին նրանց մասին վկայում է. *«...Կաթնկեր մանուկներին զարկում էին քարերին, մատաղատի աղջիկներին յափշտակում... Հոսում էր արիւնը. ո՛չ մայրերի արցունքներին էին խղճում, ո՛չ ծերերի սպիտակ մազերին: Հայոց աշխարհը ծածկուեց դիակներով»:*

Հանրածանօթ են Բաղդադի զարհուրանքները – մարդկային գանգերի բուրգեր: Ուրիշ տեղերում՝ արեան լոգանքներ: Սեբաստիայում՝ 4.000 հայ պատանիների կենդանի թաղումը: Շքեղաշուք, գերման պատմագէտ Կարլ Ռոտի որակումով՝ *«Արեւելքի մարգարիտ»* Անիի, հայկական ճարտարապետութեան այդ սքանչելիք-մայրաքաղաքի կործանումը:

Կողոպուտի տենչը, սեռային ցանկութիւնը, պղծաբաղձութիւնն ու եղեռնաբաղձութիւնն են եղել մոնղոլական բոլոր աշխարհակալներին եւ հորդաներին առաջնորդող ոյժը: Այդ ոյժն է վարել անգամ թուրքական երկու ամենաերեւելի աշխարհակալներին՝ սուլթաններ Մէհմէդ Բ.-ին եւ Սուլէյման Ա.-ին, որոնք ստեղծել են օսմ. պետութեան փառքը եւ պատմութեան մէջ էլ ճանաչւում են որպէս զօրաւոր եւ լուսամիտ անձնաւորութիւններ (Մեհմէդ Բ. Ֆաթիհը ցուցահանում էր անգամ

գրական հակումներ եւ շատ եւրոպացիներ նրան ընդունում են որպէս Վերածննդի դարաշրջանի մի դէմք): Բիւզանդիոնի պարիսպների առջեւ (28 մայիս, 1453) սուլթան Մէհմէդ Բ.-ն ճառ է խօսում, իր բանակին խոստանալով գրաւելի քաղաքի կիները, աղջիկները եւ գեղեցիկ պատանիները: Կ. Պոլսի գրաւման օրն այդպէս էլ եղաւ: Անխտիր պղծուեցին կանայք, կոյսեր, պատանիներ եւ մանուկներ՝ երկու սեռից: Անասելի այդ խայտառակութիւններին անձամբ մասնակցեց ինքը՝ «Վերածննդի դարաշրջանի» սուլթանը: Նա ոչնչացնել տուեց գերի մնացած յոյն հրամանատար Նոթարասն ու սրա ամբողջ ընտանիքը, որովհետեւ նա զլացել էր 14-ամեայ գեղանի իր տղան յանձնել սուլթանի կրքերին: Սուլէյման Ա.-ի ժամանակ, երբ Հռոդոսում պաշարուած քրիստոնեաները, դիւցազնաբար դիմադրելով, ի դերեւ էին հանում թուրքական ներխուժումի բոլոր փորձերը (1522) սուլթանն իր բանակը խանդավառելու միջոց ընտրեց հետեւեալը - ամբողջ 12 ժամ անընդհատ նա մունետիկներին կանչել տուեց. *«Վաղը յարձակում. հողն ու քարը՝ Փադիշահին, բնակիչների արիւնն ու ինչքը՝ յաղթողներին»:* Արեան եւ կողոպուտի տենչը հետեւեալ օրը 12 հազար թուրքերի դիակներ թափեց Հռոդոսի ափերին, բայց ողջ մնացողները շարունակեցին յարձակումները (տալով 60 հազարի չափ զոհեր), որովհետեւ մոնղոլը կանգ առնել չգիտի միայն մի բանի առաջ – կողոպուտի, եղեռնագործումի հեռապատկերի: Նոյն Սուլէյման Ա.-ն պարսիկներից խլում է Հայաստանը (1553): Կռուել են, ուրեմն, իսլամական երկու պետութիւններ, բայց ահա թէ ինչպէ՛ս է նկարագրում հայերի վիճակը դէպքերին ականատես հայ մի վանական՝ տարօնցի Յովհաննէս աբեղան: Իր ողբատաղում նա ասում է. *«Հայոց երկրի քահանաները, աշխարհականները գերուեցին անօրէն ազգերից: Նորահաս մանուկները, լուսնի նման աղջիկներն ընկան թուրքադաւան անիծեալ ազգի ձեռքը: Սուրբ եկեղեցիները մզկիթների վերածեցին... Սկիհները, բուրվառները, աւետարանները, ոսկին եւ արծաթը կողոպտեցին, բոլոր գրքերն այրեցին: Աղօթքի ժամանակ եկեղեցի(ները) մտան եւ կոտորեցին մեր հոգեւորականներին, աշխարհականներին, կիներին, աղջիկներին: Ջրից աւելի՝ արիւնը հոսեց քրիստոնեաների երկրում... Շատ գիւղեր, շատ քաղաքներ հրկիզուեցին, շատ վանքեր ամայացան, բազմաթիւ վարդապետներ, եպիսկոպոսներ նահատակուեցին... Ո՞վ կարող է պատմել Հայոց Աշխարհի աւերմունքը»...*

Ի՞նչն է փոխուել այդ օրերից. փոխուել է մասամբ թուրք ազգի արիւնը: Նա ձուլել է փոքր-ասիական բազմաթիւ փոքր ժողովուրդներ:

Օսմանեան կայսրութեան պատմութեամբ եւ թուրք ազգի ցեղային բաղկացութեամբ զբաղուող բազմաթիւ հեղինակաւոր պատմաբաններ, ցեղաբաններ միաբերան վկայում են, որ դա ամենախառնարիւն ժողովուրդն է. *«Յոյներ, սերբեր, բուլղարներ, ալբանացիներ, հայեր, ռումէններ, հունգարներ, գերմաններ, իտալացիներ, ռուսներ, չերքէզներ, վրացիներ, քիւրդեր, պարսիկներ, սիրիացիներ, արաբներ – սրանք էին, որ...Մեծապանծ Սուլէյմանի ժամանակ սոսկացրին բովանդակ աշխարհը»* (Գիբոնս): Աւելին. օսմ. հզօրութեան գաղտնիքը հենց այդ բազմազան ժողովուրդների շաղախից կազմուած ենիչերիական գնդերի մէջ է. *«Նրանք թուրքի համար շահեցին կայսրութիւնը... Օսմանեան մեծութեան ամենափայլուն օրերին բնիկ թուրքերն իջած էին գրեթէ հպատակ մի ժողովրդի վիճակին: Սուլթանների վարչական պաշտօնները ղեկավարում եւ բանակներին հրամայում էին Արեւելքից բերուած գերիներ, Արեւմուտքից՝ յօժարակամ հաւատուրացներ, յոյն եւ սլաւ ընտանիքներից հարկահաւաքումի ենթարկուած տղաներ:... Սատանայի կամ մարդու խորամանկութիւնը չի կարողացել երբեք հնարել բռնակալութեան այսպիսի սոսկավիթխար մի մեքենայ: Նուաճած ազգերի շղթաները դարբնուեցին իրանց իսկ ձեռքերով: Նրանց ամենալաւ արիւնը քաշուեց, առնուեց իրանցից, որպէսզի առաջն առնի իրանց յաղթականների արեան վատասերման: Նրանց ամենահուժկու եւ ամենագեղեցիկ զաւակները, ամենակորովի մարմնակազմ եւ իմացական ամենասուր կարողութիւն ունեցողները... վերցուեցին եւ դարձուեցին մասնաւոր գործիքներ՝ իրանց արիւնակիցների ստրկացման»* (Ֆրիման): Օսմանեան պատմութիւնը խորապէս ուսումնասիրած մի հեղինակութիւն (Իվրսլի) ասում է, որ օսմ. աշխարհակալութեան գլխաւոր ոյժը հանդիսանում էր Փոքր Ասիայի ոչ-թուրք ժողովուրդների զինուորականութիւնը. *«Թուրք ցեղից չէին մեծագոյն մասն այն զօրավարների, որոնք նշանաւոր հանդիսացան յաղթութիւնների կանխագոյն օրերին, այլ՝ իսլամացած յոյներ, սլաւներ, ալբանացիներ, իտալացիներ»:* Պրոֆ. Շըվիլն աւելացնում է. *«...Բացի սուլթանից, հազիւ թէ մի հատիկ իսլամածին մարդ գտնուէր նրանց շարքում, որոնք վարում էին կառավարութեան գործերը Սուլէյմանի ժամանակ: Նախկին քրիստոնեաներն էին շարժում սուրն ու մականը միանգամայն»:*

Նոյնն է ասում պրոֆ. Ուիլեամ Ռամսէյը. *«Գրեթէ մի՛շտ, քրիստոնեայ դաշնակիցների ոյժովն ու հարստութեամբ էր, որ թուրքը նուաճեց քրիստոնեաներին: Բուն իսկ իրանց եղբայրակիցների զէնքի եւ հնարագործութեան շնորհիւ էր, որ նուաճուեցին քրիստոնեաները: Ո՛չ թէ*

սարակինացիների կամ թուրքերի, այլ՝ յոյն եւ սլաւ արիւնով ռազմիկների առջեւ էր, որ ընկաւ Կ. Պոլիսը»: Նոյնն են ասում բոլորը, որոնք փորձել են լրջօրէն պատասխանել այն հարցին, թէ ինչո՞ւ Օսմանեան կայսրութիւնը չունեցաւ Ատիլայի, Ճենկիզ Խանի, Թիմուր Լանգի աշխարհակալութիւնների վախճանը, այսինքն՝ ինչո՞ւ դա երկարատեւ եղաւ: Պատմական այս երեւոյթի գաղտնիքը քրիստոնեաներին օգտագործելու դաժան, այլ իմաստուն այն քաղաքականութեան մէջ է, որում օսմանեան աշխարհակալները մնացին անմրցելի:

Օսմանեան պատմութեան քաջածանօթ բոլոր հեղինակները կայսրութեան անկումն էլ բացատրում են ցեղային գործօնների ներազդեցութեամբ: Նախ՝ հոգեբանութեամբ աստիճանաբար թուրքացան իսլամացած քրիստոնեաները, ապա՝ 1648 թուականից, վերջ տրուեց ենիչերիական գնդերը քրիստոնեայ երեխաներից կազմելու դրութեան: Բազմացել էր կայսրութեան իսլամ բնակչութիւնը եւ զինուորութիւնը հաւաքւում էր առաւելապէս թուրք եւ արաբ տարրերից, որով՝ ինչպէս Իվըրսլին է նկատում, *«բանակին պակասեց անցեալում յոյների եւ քրիստոնեայ այլ ցեղերի տուած ոգին»:*

Այստեղ ծագում է ցեղաբանական-հոգեգիտական շա՛տ կարեւոր մի հարց: Անկասկած, ոգու եւ արեան միջեւ գոյութիւն ունի բնական մի զուգահեռականութիւն, փոխադարձ ազդեցութիւնների մի օրէնք: Բայց եւ այնպէս, կենսաբանութիւնը, հոգեբանութիւնը, ժառանգաբանութիւնը դեռեւս լրիւ կերպով չեն բացատրել այն հարցը, թէ ինչո՞ւ արենախառնումի դէպքում տիրապետող են մնում մարմնական թէ հոգեւոր ստորին յատկանիշները, այսինքն՝ ինչո՞ւ, օրինակ, սպիտակ ցեղի եւ դեղինի կամ սեւի խառնուրդից առաջացած սերունդը մարմնական յատկանիշներով, մանաւանդ հոգեգծութեամբ աւելի դեղին է, սեւ, քան թէ սպիտակ: Շատերն են պրոֆ. Շըվիլի նման հարցնում. *«Կարո՞ղ է պատահել, արդեո՛ք, որ մի ժողովրդի նկարագիրն որոշելու խնդրում ունակութիւնները, գաղափարները վճռական աւելի՛ դեր ունենան, քան արիւնը, ցեղը... Օսմանցիք, որ ցեղային տեսակէտով եւ մարմնական յատկանիշներով հազիւ թէ կարող են թուրք կոչուել* (այնքա՛ն արիւնախառնուել են նրանք), *այնուամենայնիւ թուրք են կատարելապէս... թուրք են իրանց մտքերով»:* Եւ շատերն են իտալացի պատմաբան Ֆերերոյի հետ պատասխանում. *«...մարդու հոգեբանութիւնն իր խորքում նոյնն է մնում եւ նոյնիսկ, եթէ դարաշրջանից դարաշրջան մեծապէս փոխուի նրա մշակոյթը. դա չի փոխում նրա մտքերի հիմնական բնոյթը»:* Բայց մարդու ո՛չ միայն մտքերի, այլեւ հոգեգծերի բնոյթը փոխւում է այլասերումի միջոցով: Այլասերումն

ինքնին հնարաւոր է դառնում ա՛յն իրողութեամբ, որ դրան ենթակայ էակների մէջ սպառուած են իրանց նախկին ցեղի բարոյական թէ հոգեկան ոյժերը: Այլասերուածները պահում են միայն արեան խառնուածքը (տեմպերամենտ), իսկ հոգեգծութեամբ՝ նրանք ամբողջովին նուաճուում են ծուլող ցեղի, ազգի, ժողովրդի կողմից: Ոգին աւելի՛ է պահպանողական, քան արիւնը, բայց ինքնապահպանումի հնարաւորութիւն ունի միայն ազգային, ցեղային ձեւ ու բովանդակութիւն ստացած ոգին: Այլասերուածը կորցնում է ոգեպահական իր կարողութիւնը: Նրա մէջ գործող բնազդական ոյժերը մղում են նրան իր ինքնապաշտպանութիւնը պայմանաւորել ծուլող ժողովրդի հոգեբանութեան իւրացումով: Յայտնի է, որ կենսաբանական թէ հոգեբանական պատճառներով, ցեղերի արենախառնումով չի ազնուանում նրանցից նուազարժէքը, այլ՝ խաթարւում, վատասերւում է արժէքաւորը: Այսպէս՝ քրիստոնեայ ժողովուրդներից ստացած արիւնն ո՛չ թէ բարեխառնութիւն մտցրեց թուրքերի բնազդների աշխարհում, այլ՝ հոգեբանութեամբ թուրքացրեց ծուլուածներին: Աւելին. ուրացող սերունդների մէջ առանձնապէս շեշտւում է նուաճող ժողովրդի հոգեգծերն իւրացնելու եւ ցուցադրելու բռնազբօսիկ ճիգը, որ խաթարումի օրէնքով, աստիճանաբար յանգում է մոլեգնութեան: Այդ է պատճառը, որ, օրինակ, Կոնիայի շրջանի համեմատաբար զտարիւն մնացած նախկին սելջուկների օրուայ սերունդներն եղեռնաբաղձութեան մէջ աւելի՛ են կրաւորական, քան միւս շրջանների խառնածին, թաթարական տիպը գրեթէ կորցրած թուրքերը:

Առանց ըստ էութեան աւելի խորանալու հարցի մանրամասնութիւնների մէջ, մենք բաւարար հիմքեր ունենք եզրակացնելու, թէ արիւնն է նախապէս որոշում ոգու ճակատագիրը, բայց մի անգամ կաղապարուած ոգին ապրում եւ իշխում է տուեալ ժողովրդի մէջ, թէկուզ սա ամենայորդ արենախառնումով փոխած լինի մարմնական իր յատկանիշները:

Պղծումով ոճրագործելու հրճուանքը հնուց ի վեր յատուկ է մոնղոլ ցեղին եւ հետեւանք է նրա եղեռնաբաղձ ոգու անփոփոխելիութեանը. «Թիմուր Լանգը վայրենի իր ձիաւորների ոտքի տակ ոչնչացնել է տալիս վրացի պատանիների եւ երեխաների ամբողջ խմբեր: Սուլթան Ջալալէդդինը ԺԳ. դարում, հազարաւոր երեխաներ թափում է գետերը. նա ոչնչացնում է 100.000 վրացի: Վերցնել է տալիս Սիոնի տաճարի գմբէթը եւ բարձրանում նրա վրայ, որպէսզի հրճուի Թիֆլիսի բնակչութեան պատճառած չարչարանքների պատկերից» (Евгений Марковь, ''Очерки Кавказа'', 1887, էջ 395): Արտայայտութեան

իրանց ձեւերով, 19-րդ թէ 20-րդ դարերում տեղի ունեցած յունական, բուլղարական, հայկական, քրդական եւն. եղեռններն ոչնչով են տարբերւում պատմական անցեալում թուրքաթաթարների գործած նախճիրներից: Դրանք բոլորն էլ պարտուածների, խաբէութեամբ անձնատուր եղածների կամ դիմադրելու որեւէ հնարաւորութիւնից զրկուածների զանգուածային ոչնչացումներ են - զազրելի, գարշագործ տեսարաններ պղծումի, չարչարումի եւ արիւնարբումի: Պատմութիւնից յայտնի է, որ դեռ Տուղրիլ Բէկի, Ալփ Արսլանի օրերին սովորութիւն էր խմել զոհերի տաք արիւնը կամ նրանով բաղնիքներ առնել: Թիմուրն ողջ-ողջ թաղել էր տալիս մարդկանց եւ նրանց հողաթմբերի վրայ ձիարշաւային խրախճանքներ սարքում: Ռուսաստանում թաթարները գետին էին պառկեցնում տղամարդկանց եւ նրանց վրայ՝ հաւաքական բռնաբարման ենթարկում կանանց: Նրանք ապականում էին եկեղեցիները, գերեզմանոցների խաչքարերը, պղծում սրբերի, սրբուհիների պատկերները: Անիի մայր տաճարի գմբէթը խորտակելուց յետոյ Ալփ Արսլանը վերացնել տուեց նրա ճաճանչափայլ մեծ խաչը, որն իբրեւ մահմեդականների ոտից կոխան՝ զետեղուեց Նախիջեւանի մզկիթի դրան շեմին:

Պղծումով ոչնչացնելու բոլոր այս ձեւերը վերակրկնուեցին Հայկական եղեռնի օրերին: Շատ դէպքերում անգամ կանոնաւոր բանակի զինուորները ճեղքել են յղի կանանց որովայնները եւ ծնանելի երեխաներին ցցած իրանց սուինների ծայրը՝ խրախճանքներ են սարքել: Գանակոծումից կամ վէրքերից հոգեվարող ծնողների առաջ պղծումով սպանել են նրանց երեխաներին: Շատ վայրերում, ինչպէս Մանազկերտի, Արճէշի գիւղերում, երեխաներին ողջ-ողջ նետել են եռացող կաթսաների մէջ, ապա նրանց խաչուած դիակները դրել զարհուրանքից խելագար մայրերի առաջ, պահանջելով՝ կա՛մ իսլամն ընդունել, կա՛մ ուտել սեփական զաւակների եփած միսը: Գեղանի աղջիկներին, հարսներին, որոնք մերժել են ենթարկուել սպանիչների կրքերին կամ ընդունել իսլամը, նահատակել են աստիճանական անդամահատումով՝ քաշելով նրանց եղունգները, ատամները, մէկիկ-մէկիկ կտրելով մատները, ականջները, քիթը, շրթունքները, փորելով աչքերը: Զազրելի անարգանքների են ենթարկել մասնաւորապէս հոգեւորականներին, որոնցից շատերին խոշտանգելուց յետոյ, կիսամեռ կամ մեռեալ վիճակում՝ նաեւ խաչել են: Եկեղեցիները, վանքերը կործանելուց առաջ (եւ թանկարժէք առարկաները կողոպտելուց յետոյ), ապականել են: Գրքերն այրել են, որմնանկարների սրբերի աչքերը փորել են սուինով: Յիսուսի, Տիրամօր, սրբերի, սրբուհիների պատ-

կերներն ոչնչացրել են հրէշային պղծումներով – որպէս թէ իրական մարդկանց բռնաբարելիս, չարչարելիս եւ սպաննելիս լինեն: Այս բոլորն ո՛չ միայն 1915-ին՝ թուրքաց Հայաստանում, այլեւ հետագային՝ անգամ Կովկասում: Բագուի 1918թ. դէպքերի ականատեսները պատմում են, որ թուրքերը խմում էին մորթուած հայերի արիւնը, կամ ջախջախելով նրանց գանգերը՝ ուղեղները քսում էին իրանց լաթերին: Եւ, վերջապէս, նախորդ համաշխարհային պատերազմի օրերին ֆրանսիացի, անգլիացի, մասնաւորապէս յոյն սպաները, զինուորները զգացին, որ թուրքի ձեռք գերի ընկած մարդը չի կարող իր պատուով մեռնել, որ դա իր զոհերին չարչարում է պղծելով, սպանում է երկարատեւ խոշտանգումով եւ թաղում՝ ապականելով:

Արիական ցեղին է յատուկ հաւատը, թէ ստեղծագործ ոգին մահ չունի: Թուրքի ոգում անկորնչելի է միայն ոչնչացումի, եղեռնումի, պղծումի զգացումը: Դա կարող է պատմական եւ ո՛չ մի յիշողութիւն չունենալ Տուղրիլի, Ալփ Արսլանի, Թիմուրի, Ճենկիզի մասին, բայց բնազդների շղթայազերծման ժամանակ հարազատօրէն վերակրկնում է նրանց գործերը: Այս պարագան ինքնին մի ապացոյց է բնազդների, ոգու զօրաւոր ինքնապահպանութեան, ինչպէս նաեւ այն բանի, թէ քաղաքակրթական ձեւերի իւրացումով ստորնաբնազդ մի ցեղ չի կարող ընդունակ դառնալ նաեւ մշակութաստեղծումի եւ թէ արտաքին բոլոր կարգի ազդեցութիւնները - անգամ կրօնը, դաստիարակութիւնը - նպաստում են միայն ներքին ընդունակութիւնների զարգացման, բայց ո՛չ երբեք՝ փոխում նաեւ ոգու բնութիւնը: Այստեղ՝ բուն պատճառը Հայկական եղեռնի:

բ) Համախլամականութիւն - Այս ցնորքով տաճիկները բաւական ժամանակ կարողացան բարոյական ոյժ կեղծադրել Եւրոպայի առաջ եւ խաբել նրան: Դիւանագէտները մոռացել էին, որ թուրքաթաթարներն իսլամացել էին պատմական մի շրջանում, երբ քաղաքականապէս անհրաժեշտ էր դարձել շահագործել արաբական մարգարէի կրօնը: Նրանք քիչ էին զբաղւում ե՛ւ թուրքի հոգեբանութեամբ: Եւ, վերջապէս, լրջօրէն չէին դրել այն հարցը, թէ թուրքը բարոյական ի՞նչ արժէքներ է տուել իսլամին կամ ի՞նչ ազդեցութիւն ունի նրա վրայ եւ որպիսի՞ զգացումներով է կապուած նրան: Կեղծելում ճարպիկ՝ հարկ եղած դէպքում դա ցուցադրում է մոլեկրօնութիւն, բայց իրապէս անհաւատ է, զուրկ կրօնական էակ դառնալու որեւէ ընդունակութիւնից: Ուրիշների կրօնական սրբութիւնները պղծելով միայն դա կարողանում է համակուել մոլեռանդութեան մի հոգեվիճակով, որ ստանում է մի տեսակ բացասական կրօնականութեան, այսինքն՝ կրօնապղծութեան ձեւ: Դա

մահմեդական է դառնում, որպէսզի օգտուելով իսլամի ոյժերից՝ ոչնչացնի աւելի՛ խորքոտ, աւելի՛ յաւիտենականօրէն մի կրօն՝ քրիստոնէութիւնը: Իբրեւ մահմեդական՝ դա աւելի քրիստոնեաների կրօնին, Աստծուն, Խաչին, Աւետարանին է հայհոյում, քան իր իբրեւ թէ դաւանած Ալլահին, մարգարէին աղօթում:

Արարները, պարսիկներն իսլամական ճարտարապետութեան, արուեստի հետ՝ զարգացրել են հոգեւոր որոշ արժէքներ, կրօնա-բարոյական ըմբռնումներ, անգա՛մ՝ մի տեսակ բարեպաշտութիւն: Թուրքը մահմեդականութիւնից օգտուել է միայն քաղաքական հաշիւներով, քրիստոնեաների եկեղեցիները վերածել է մզկիթների կամ այդպիսիներ շինել է տուել նրանցից կողոպտած դրամներով, նրանց կործանուած տաճարների քարերով, նրանց վարպետների ձեռքով: Դա թուլակել է մի քանի արաբերէն, պարսկերէն խօսքեր, բացարձակապէս անհաղորդ է մնացել կրօնական ճշմարիտ ապրումի, որով՝ չի ունեցել ե՛ւ մշակութային կեանքի ներհոգեւոր զարգացում. եւ եթէ երբեմն նպաստել է իսլամի տարածումին, ապա դա կատարել է բացառապէս սրով: Այս դէպքում էլ դա աւելի ուրիշ կրօնների պատկանող ժողովուրդներ է ջարդել, քան թէ՝ արաբների նախընթացով, հաւատակիցներ շահել: Արաբները զէնքի իրանց յաջողութիւնները պսակում էին կրօնական յաղթանակով, այսինքն՝ քաջութիւնը ծառայեցնում էին վերացատիպ մի սկզբունքի: Թուրքը զուրկ է նման սկզբունքներից, որով ե՛ւ քաջութեան իսկական խանդից: Դա չունի հոգեկան վերացումի ընդունակութիւն, ո՛չ էլ կրօնական պաշտանքի եւ սրբութեան զգացում: Դա անատակ է կրօնական խորք դնել իր մտածումի մէջ, ուստի եւ՝ ծնունդ տալ բարոյագէտների: Այս կէտը հաստատում է, որ դա չունի նաեւ զինուորական ճշմարիտ ոգի, որովհետեւ սա ենթադրում է տեսլապաշտութիւն, առանց որի, ինչպէս բարոյագէտներ չեն կարող դիմագծուել, այդպես էլ՝ ռազմավարներ, զինուորական հանճարներ:

Թելադրուած քաղաքական հաշիւներից՝ եւրոպացի որոշ դիւանագէտներ, հոգով աղքատ պատմագէտներ տուրք են տուել մակերեսային դիտողութիւնների եւ հանել այն եզրակացութիւնը, թէ իբրեւ մարտիկ՝ թուրքն *«ասպետ»* է, իբրեւ մահմեդական՝ *«մոլեռանդ»*, *«մոլեկրօն»*: Նրանք չեն ուզեցել հասկանալ, որ ամէն ձի հեծնող ձիաւոր չէ, ո՛չ էլ եկեղեցի կամ մզկիթ մտնող ամէն մարդ՝ հաւատացեալ: Թուրքը, յաճա՛խ արդիւնաւոր ճակատամարտեր է մղել, յաղթանակներ շահել, բայց չի ծնել հերոսներ, դա դաւանել է իսլամը, բայց նրա մէջ չի դրել կրօնական խանդ ու խորք, այլ միայն յետդիմութեան, մշակութակործանումի, կողոպուտի, եղեռնաբաղձութեան ոգի:

Օսմանեան պետութեան կազմաւորման պատմութիւնն ինքնին գալիս է հաստատելու, որ թուրքն երբե՛ք չի եղել իսլամի հոգեւոր տէրը, նրա ճշմարիտ դրօշակիրը, ո՛չ էլ քրիստոնեաների ուղղակի յաղթականը, այլ՝ առաջինի բարոյական թերիներից, վերջինների մարդկային տկարութիւններից օգտուող մի մակաբոյծ: Թուրքերը Փոքր Ասիայում երեւան եկան պատմական այն շրջանին, երբ փլուզուել էր իսլամական միջնադարը եւ քայքայւում էր քրիստոնէականը: Նրանց սկզբնական յաջողութիւնը հետեւանք չէր իրանց ներքին ոյժերի զարգացման, այլ՝ յոյն ցեղի վատասերման: Ցեղային ամէն վատասերում, քաղաքական կամքի անդամալուծման հետ, բերում է ազգային յոռետեսութիւն: Այս յոռետեսութիւնը, ահա՛, միացած յոյն իշխանների ունայնամտութեան եւ կղերական դասի ամէն չափ կորցրած ագահութեան, խախտել էին Բիւզանդական կայսրութեան թէ քրիստոնէական կրօնի հիմքերը: Հարկերի ծանր բեռի տակ ճնշուած ժողովուրդը զրկուել էր ո՛չ միայն դիմադրական ոգուց, այլեւ փրկութեան հնարաւոր ելքը տեսնում էր հայրենի իշխանութիւնների խորտակման եւ հաւատափոխութեան մէջ: Վարպետ մարդկային տկարութիւնները չարաշահելու գործում՝ թուրքերն օգտուեցին նախ յոյն, ապա եւ սլաւ գիւղացիների հոգեկան անկումից: Կուտակուած ատելութիւնը եւ հաւատուրացութեան հոգեվիճակը սրանց դարձրեցին կատաղի, վրէժխնդիր մարտիկներ, որոնց քաջութեան թէ կազմակերպական ընդունակութեան շնորհիւ՝ թուրք անտաղանդ ժողովրդի դրօշի տակ ստեղծուեց զինուորական հուժկու մի պետութիւն: Իսլամական աշխարհը, յանձին Արաբիայի թէ Պարսկաստանի, բացարձակապէս անմասն մնաց այս շարժին, որով՝ սկզբից իսկ օսմանեան նուաճումները չունեցան կրօնական շարժառիթ կամ դրոշմ: Ընդհակառակն, Բալկաններում շահած յաղթանակներից մի դար յետոյ, օսմանցիք նոյն քրիստոնէածին իրանց զօրականներով եւ բանակներով յարձակուեցին Արաբիայի, Պարսկաստանի վրայ: Ո՛չ թէ կրօնական, այլ քաղաքական հմայքի նկատումներով նրանք խլեցին խալիֆայութիւնը: Իր բնոյթով դա այնպիսի մի քայլ էր, ինչպիսին եղել էր Կ. Պոլսի Ս. Սոֆիայի տաճարի վերածումը մզկիթի, որով խորհրդանշական մահահարուած էր տրուել քրիստոնէութեան: Այժմ, խալիֆայութեան թուրքացումով, բարոյական թէ իմացական սնանկութեան էր դատապարտւում ե՛ւ իսլամը: Արաբներն երբե՛ք չհաշտուեցին այդ նուաստացումին հետ. նրանք շա՛տ բան կորցրեցին իրանց պատմական արժէքներից թէ ստեղծագործական կարողութիւնից, բայց հոգեպէս չնուաճուեցին: Քաղաքականապէս էլ նրանք մնացին տեւական անհնազանդներ,

ապստամբներ: Բայց աւելի՛ մեծ, գրեթէ ճակատագրական եղաւ շիիտական Պարսկաստանի ընդդիմութիւնը: Որպէս Թուրանի հին թշնամին, արիական Իրանը թուրքերի դէմ մղեց երկարատեւ, արիւնահեղ պատերազմներ, եւ անուղղակիօրէն հանդիսացաւ մէկը գլխաւոր այն գործօններից, որոնք փրկեցին Եւրոպայի մշակոյթը կործանումից: Պատմական ամբողջ անցեալում Թուրքիան երբե՛ք չկարողացաւ ստեղծել կամ վարել համիսլամական ինչ-որ շարժում:

Այդ բոլորով հանդերձ, դա յաջողեց երկար ժամանակ չարաշահել իսլամի անունը: Իբրեւ նախնատիպ շահագործող, դա չօգտուեց իսլամի հոգեւոր ոյժերից, այլ միայն նրա արտաքին հմայքից, որ մասնաւորապէս եւրոպական դիւանագիտութեան աչքին ծառայեցրեց որպէս քաղաքական խայծ կամ խրտուիլակ: Սնասարսափն է տկարի ամենազօրաւոր զէնքը: Այդպիսի մի զէնք էր համիսլամականութիւնը՝ թուրքերի ձեռքում: Անգլիացիները շո՛ւտ հասկացան, որ ամէնից քիչ թուրքերն իրաւունք ունեն խօսել իսլամի անունից: Հնդիկ թէ արաբ մահմեդականների գործակցութեամբ էր, որ նրանք, նախորդ համաշխարհային պատերազմին, Պաղեստինում թէ Միջագետքում, խորտակեցին թուրքերին: Նոյն այդ դէպքերից յետոյ զօրավար Լուդենդորֆը փաստօրէն *«ցնորք»* յայտարարեց թուրքական համիսլամականութիւնը (անդ, էջ 136): Բայց դրանից յետոյ էլ Էնվէրը կարողացաւ Բագուի «արեւելեան ժողովուրդների համագումար»-ում (1920թ.) հանդէս գալ իբրեւ Մարոկկոյի, Ալժիրի, Հնդկաստանի եւ իսլամ ամբողջ աշխարհի «ներկայացուցիչ»-ը եւ մի պահ խաբել բոլշեւիկներին: Որպէս հոգեւոր մազոխականութեան մի արտայայտութիւնը՝ ռուսներին յատուկ է նաեւ քաղաքականութեան մէջ խաբուելու բաղձանքը, իսկ մասնաւորապէս եւրոպացի միջակութիւններին մի՛շտ էլ պակասել է մարդաճանաչողութեան ընդունակութիւնը: Ահա՛ թէ ինչո՞ւ եւրոպական դիւանագիտութիւնը, մղուած համիսլամականութեան սնասարսափից կամ քաղաքականապէս նրանցից օգտուելու ցնորքից, յաճախ, թուրքական զոհասեղանի վրայ է դրել Արեւելքի քրիստոնեաներին:

Բացարձակապէս անընդունակ իսլամն ոտքի հանելու եւրոպական ոյժերի, այսինքն՝ արտաքին քրիստոնեաների դէմ՝ թուրքերն անզօրութեան իրանց ամբողջ կատաղութիւնը թափում էին ներքին, հպատակ քրիստոնեաների գլխին: Կրօնական միութեան նշանաբանով, նրանք հրահրում էին մահմեդական մի քանի ցեղախմբերի – քիւրդերի, չերքէզների – մոլեռանդութիւնը մասնաւորապէս հայերի դէմ: Արեւելքի հասարակական պայմաններն այնպէս էին, որ այնտեղ

ազգային, քաղաքական թէ տնտեսական խնդիրներն ստանում էին կրօնական գունաւորում: Թուրքերն օգտւում էին հասարակական այդ մթնոլորտից: Բայց այստեղ հարց է ծագում, թէ ի՞նչ հաշիւներով, ռուսները, դեռեւս 19-րդ դարի կէսերից Կովկասի մահմեդական ցեղերին քշում էին դէպի թուրքաց Հայաստան, երբ դժուար չէր հասկանալ, որ սրանք, իբրեւ հալածականներ քրիստոնեայ մի պետութեան կողմից, պիտի վրէժխնդիր լինէին Թուրքիայի ներքին քրիստոնեաներից: Բնաւեր այս գաղթականները հող պէտք է փնտռէին, եւ հասկանալի է, որ դա հնարաւոր էր ստանալ միայն քրիստոնեաներից բռնագրաւելու ճանապարհով: Այս պարագան հաստատում է, որ Ռուսաստանը, դեռեւս Լոբանովից առաջ, հետապնդել է Հայաստանն առանց հայերի թողնելու ծրագիրը: Դեռեւս 1876թ. Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի հրատարակած զեկուցագրից պարզւում է, որ մահմեդականներն ամբողջովին կամ մասամբ խլել են 276 հայկական գիւղեր:

Աւելի կնճռոտ էր զուտ քրդական խնդիրը: Մասնաւորապէս օսմանցիների օժանդակութեամբ, քիւրդերը վաղուց էին ոտք դրել հայկական լեռների վրայ: Աւելի՛ մեծ նուաճումներ կատարեցին Խրիմի պատերազմի օրերին (1854թ.), երբ ռուսների դրդումով, քիւրդ ցեղապետ Եզդիշահարը լայնածաւալ եւ յաղթական ապստամբութիւն կազմակերպեց տաճիկների դէմ: Անգլիան եւ Ֆրանսիան Խրիմում ջարդեցին ռուսներին, որոնք հարկադրուեցին լքել Հայաստանում գրաւած ընդարձակ գաւառները՝ իրանց հետ տանելով մասնաւորապէս ռազմագիտօրէն նշանակալից մի քանի լեռների եւ լեռնավայրերի հայ բնակչութիւնը: Այսպիսով, նաե՛ւ կենտրոնական Հայաստանի լեռներն անցան քիւրդերի ձեռքը: Տաճիկները հասկանալով քրտական վտանգի մեծութիւնը՝ չկարողացան ընդդիմանալ այս գրաւումին: Նրանք որդեգրեցին սիրաշահումի քաղաքականութիւնը, որի շնորհիւ շատ քիւրդերի հրապուրեցին դէպի քաղաքները, ուր նրանք շուտով թուրքացան: Այսպէս, 19-րդ դարի վերջերին, Հայաստանի լեռների մեծ մասը քրդաբնակ էր, քաղաքները՝ կիսով չափ թուրքաբնակ: Լեռների եւ քաղաքների միջեւ համեմատաբար զուտ հայկական էր մնացել հովտական գիւղը: Քիւրդ-թուրքական զինակցութիւնը՝ հայերի դէմ, պայմանաւորուեց ո՛չ միայն կրօնական շարժառիթներով, այլեւ ա՛յն իրողութեամբ, որ ո՛չ քիւրդերն էին բաւարարւում լեռնական կեանքով, ո՛չ էլ քաղաքաբնակ թուրքերը հարկաւոր չափով աշխատունակութիւն ունէին՝ տնտեսապէս ինքնաբաւ դառնալու: Լեռներից քիւրդի, քաղաքներից՝ թուրքի աչքը յառած էր մնում հայկական գիւղի վրայ: Հակառակ կողմերից՝ նրանք տարածւում էին դէպի հայկական հովիտը: Այս

պարագան, նաեւ տնտեսական գետնի վրայ իսլամ երկու ժողովուրդների միջեւ ընկած հայերին դնում էր ընդհանուր թշնամու վիճակում:

Այնուամենայնիւ, քիւրդերը բոլորովին զուրկ չէին այն գիտակցութիւնից, որ հայերի ջնջումից յետոյ հերթը գալու է իրանց: Դեռեւս 80-ական թուականներին, երեւելի մի քիւրդ՝ Շամդինանի Շէյխ Ուբէյդուլլահը, իր նախագահութեամբ գումարուած ցեղապետների ժողովում բուռն կերպով ընդդիմանում էր թուրքերի կողմից կաշառուած ա՛յն շէյխերի դէմ, որոնք հայկական ընդհանուր մի ջարդ կազմակերպելու առաջարկութիւն էին բերել: Ուբէյդուլլահը հասկացնում եւ խստօրէն ազդարարում էր իր հայրենակիցներին, թէ տաճիկները քիւրդերին կը հանդուրժեն եւ կարեւորութիւն կը տան այնքան ժամանակ, որքան դեռ գոյութիւն ունեն հայերը: Դրանից շատ առաջ, Բեդիրխանի քրդական մեծ ապստամբութեան ժամանակ, թէ՛ դրանից յետոյ—հայ յեղափոխութեան եւ օսմանեան սահմանադրութեան շրջաններին—քիչ թիւ չէին կազմում այն քիւրդերը, որոնք ելքը տեսնում էին հայ-քրդական գործակցութեան մէջ: Իրողութիւն է, վերջապէս, որ մասնաւորապէս արիացեղ քիւրդերը, հակառակ իրանց մահմեդականութեան, զգացումով աւելի հայերին էին մօտ, քան թուրքերին, որոնց հանդէպ ունէին օրգանական զզուանք: Նրանք գիտակցում էին, որ իրանք արիներ են եւ ցեղակից հայերին: Երկիւղած էին դէպի հայերի կրօնը եւ քրիստոնէական սրբերի զօրութիւնը: Բռնաշէնի քիւրդերը նաեւ հայախօս էին: Յատկանշական է, անշո՛ւշտ, որ անխտիր բոլոր քիւրդերն իրանց խօսքի անկեղծութիւնը հաստատում էին, երդուելով *«Յիսուսի Աւետարանով, Մուհամմէդի Ղուրանով»:* Քրիստոնէութեան տրուած այս նախապատուութիւնը չափանշում է նրանց հասկացած կամ ապրած մահմեդականութեան արժէքը: Մզկիթներ գրեթէ չունէին նրանք: Հրաշքի միջոցով բուժուելու համար, նրանք դիմում էին հայ սրբավայրերը, խնդրում հայ հոգեւորականների աղօթքը: Հայերի թէ իրանց յարկերի տակ չէին քաշւում քրիստոնեաներից: Դրա հանդէպ՝ նրանց կիները խուսափում էին թուրքերի ներկայութիւնից:

Հայկական եղեռնի օրերին գտնուեցին բազմաթիւ քիւրդեր, որոնք փրկեցին իրանց բարեկամ հայերին: Ուրիշները, որոնք մասնակցեցին ջարդերին, մեռան խորին զղջումով: Տիգրանակերտի շրջանները փախած եւ սովամահութեան դատապարտուած քիւրդերն իրանց դժբախտութեան եւ տխուր վախճանի բնազանցական պատճառը տեսել են այն բանում, որ իրանք անգութ գործ են կատարել սպանելով արդար մարդկանց, ուստի եւ՝ պատուհասւում են Նախախնամութեան

կողմից: Կիսաթուրքացած մտաւորական մի քիւրդ, օսմանեան ազդեցիկ պետական գործիչներից Շէրիֆ փաշան, դատապարտում էր տաճիկներին, որ օգտուել են իր ցեղակիցների քաղաքական տգիտութիւնից եւ հեշտացրել Արեւելքի պանծալի դաստիարակ հայ ժողովրդի մահը:

Հայկական եղեռնի օրերին, նոյն Շէրիֆ փաշան բողոքի մի գրութիւն է հրատարակում «Ժուրնալ դը Ժընեւ»-ի էջերում, (18 սեպտ. 1915թ.) ուր, ի միջի այլոց, ասում է. *«Եթէ կայ մի ցեղ, որ իր հաւատարմութեամբ եւ ծառայութիւններով, որ երկրին մատուցել են նրա տաղանդաւոր պետական գործիչները եւ պաշտօնեաները, իր իմացականութեամբ, որ երեւան է եկել բոլոր մարզերում՝ առեւտրի, ճարտարարուեստի, գիտութեան եւ արուեստների մէջ... դա հայն է: Նրանք են, որ Թուրքիայում մտցրել են տպագրութիւնը եւ թատերական արուեստը: Անթիւ են նրանց բանաստեղծները, գրողները, մեծ ելեւմտագէտները... Շատերը նրանց մեծ հանճարներից... պատուի պիտի արժանանային արեւմտեան որեւէ երկրում: Հայ չէ՞ր օսմանեան սահմանադրութեան հիմնադիր Միդհատ փաշայի աշխատակից Օտեանը* (Գրիգոր Օտեանն է հեղինակն ու մշակողն այսպէս կոչուած «Միդհատեան» սահմանադրութեան):

...Եփրեմ Խանը՝ «Արեւելքի Գարիբալդին», դարձաւ հերոսը պարսկական սահմանադրութեան, որ նախապատրաստուած էր ուրիշ մի հայի՝ Մալքոմ Խանի կողմից... Չկայ լուսաւորեալ մի թուրք, որ չստորագրէ (անշո՛ւշտ, պիտի ստորագրէ, եթէ այդպիսին լինի)... *Լինչի խօսքերը. «Հայերը մասնաւոր ընդունակութիւն ունեն հանդիսանալու նոր քաղաքակրթութեան միջնորդը: Նրանք հարազատել են Արեւմուտքի բարձրագոյն իդէալները, եւ այնքան անխոնջօրէն ու կատարեալ կերպով իւրացնում են եւրոպական մշակոյթի բոլոր նուաճումները, որ այդ բանում ուրիշ եւ ո՛չ մի ազգ կարող է հաւասարուել նրանց»: Այժմ, ամենաանզգայ մարդու սիրտն իսկ արիւնւում է, երբ մտածում է, որ ամենաբարձր ձիրքերով պարգեւատրուած այս ժողովուրդը... գտնւում է պատմութիւնից անհետանալու կէտին: ...Ես իմ ցասումն եմ յայտնում զոհուած եւ մեռնող այս ազգի դահիճներին»:* Մատնացոյց անելով այդ դահիճներին՝ Շէրիֆ փաշան աւելացնում է. *«Ես ճանաչում եմ երիտասարդ թուրքերի սեւ հոգին»*: Նոյնպէս, դա ցաւով է յիշում, որ հակառակ *«յաճախակի իր զգուշացումներ»-ին*՝ հայ դաշնակցական կազմակերպութիւնը - սահմանադրութեան շրջանին - խաբուեց, գործակցեց եւ պաշտպանեց երիտասարդ թուրքերին - եւրոպականութեան դիմակ հագած մոնղոլահոգի այդ մարդասպաններին:

Այդ բոլորից յետոյ՝ հանելուկային է թւում, թէ ինչպէ՞ս եղաւ, որ հէնց քիւրդերը հանդիսացան հայաջնջումի ամենավտանգաւոր գործիքը՝ թուրքերի ձեռքին: Պատճառների մի մասը պէտք է վերագրել այդ ժողովրդի աւազակային հակումներին, քաղաքական անհեռատեսութեան եւ հոգեւոր թէ կրօնական խաւարին: Կիսավայրենի այդ ժողովուրդը թուրքերից տարբերւում է այն բանով, որ զօրաւոր մի ցնցումի ժամանակ ընդունակ է համակուել կրօնական վերացումով, մոլեգնելով անգամ ամենածիծաղելի, յիմարական նախապաշարումների մէջ: Հենց մեր դարի սկզբին՝ Քուֆրայի շէյխի Հազրաթն իրան յայտարարեց մի սուրբ, որ կանչուած է Աստծու կողմից, նրան ներկայանալ եւ բարեխօսել քիւրդ փրկութեան համար: Ամէն տեղ, քիւրդերը տասնեակ հազարների թափօրներով դիմաւորեցին իրանց սրբին: Նրանք հաչում էին ի նշան այն բանի, թէ իրանք Աստծու եւ նրա սուրբ շէյխի հաւատարիմ շներն են: Թուրքերը ռուսական ներշնչում, որով եւ՝ քաղաքական շարժառիթ տեսնելով այս ցոյցերի մէջ, Հազրաթի հետ բազմաթիւ քիւրդ կրօնաւորներ Կ. Պոլիս տանելով՝ կորցրեցին նրանց, տարածայնելով, որ նրանք *«երկինք թռան»*: Դրանից յետոյ էլ քիւրդերը կրօնական խորին յափշտակութեամբ հաչում էին եւ աղաղակում. *«Հազրաթը թռաւ, Հազրաթը թռաւ»* («Հազրաթ ֆռի, Հազրաթ ֆռի»):

Դժւարին գործ չէր, ուրեմն, շահագործել դիւրաբորբոք եւ խաւարամիտ այս ժողովուրդը, որքան էլ նրա մէջ բնազդական սէր լինէր դէպի հայութիւնը եւ խորշանք՝ թուրքերի նկատմամբ: Այդ բանը, սակայն, 1877-ին, 1895-ին թէ 1915-ին հնարաւոր է դարձել բացարձակապէս ռուսների դաւադիր քաղաքականութեան պատճառով: Ռուսներն են, որ զանազան մեքենայութիւններով քիւրդերին հանել են թուրքերի դէմ կամ հարկադրել, որ սրանք նետուեն թուրքական որոգայթների ցանցը: 1914թ. համաշխարհային պատերազմի սկզբին նրանք էին, որ քիւրդերին իբրեւ մահմեդականների հալածելով՝ կարելիութիւն ընծայեցին, որ նրանց մասնակցութեամբ, համիսլամական մանրանկարային մի շարժում կազմակերպեն հայերի դէմ: Այդ կապակցութեամբ, մանրամասնութիւններ կը տրուեն, երբ խօսք կը լինի ռուսական մեղսակցութեան մասին:

Ինչո՞ւ թուրքերը հայկական եղեռնը կապեցին իսլամի անուան: Այս հարցի պատասխանը կարող է տալ միայն հոգեգիտութիւնը: Ճիւաղագործութեան մէջ նրբացած բոլոր ցեղերն օժտուած են դիւային խորամանկութեամբ: Գիտակ իրանց բարոյական տկարութեան՝ նրանք ապրում են մտքի խարդախումի ոյժով եւ յաջողւում, յաղթում են մոլորանքի զէնքով: Ահա՛ մի քանիսն այն պատճառներից,

որ մղեցին տաճիկներին համիսլամական շարժում կեղծել՝ հայկական եղեռնի մէջ:

1) Մեղսակիցներ, ոճրակիցներ գտնել՝ թէ՛ գործի յաջողութեան, թէ՛ պատասխանատուութեան բաժանման նկատումով: Հայկական եղեռնին ականատես բոլոր վկաները յիշում են, որ ջարդերի թէ կողոպուտի ժամանակ թուրքերն ասում էին՝ *«մնացորդն էլ քիւրդերի, մնացորդի մնացորդն էլ՝ արաբների բաժինը»*: Բաժնեկից դարձնելով երկու այս ժողովուրդներին՝ թուրքերը ձգտում էին մի կողմից նրանց մէջ հրահրել իսլամական ոգին եւ համիսլամական շարժման պատրանք ստեղծել, միւս կողմից՝ նրանց սարսափեցնել քրիստոնեայ պետութիւնների վրէժխնդրութեամբ, արուեստականօրէն խորացնել նրանց մէջ վտանգուածութեան զգացումը եւ այդ ձեւով՝ քաղաքականապէս կապել իրանց:

2) Հոգեբանօրէն զինաթափել հայերին, հասկացնելով, թէ նրանց դէմ է ո՛չ միայն թուրք կառավարութիւնը, այլեւ՝ իսլամական ամբողջ աշխարհը: Աւելին. այս ուղղութեամբ քաղաքական շանտաժն հասել է ա՛յն աստիճանի, որ հայերին աշխատել են ներշնչել, թէ նրանք կատարելապէս լքուած, դաւադրուած եւ իսլամի գթութեանն են յանձնուած նաե՛ւ քրիստոնեայ աշխարհի կողմից: Էլ աւելին. Լեպսիուսը Կ. Պոլսում եղած օրերին հաստատագրել է եւ պատմում է. *«Չլսուած մի տեղեկութիւն, որ ես ստացայ երկրի ներսերից. մզկիթներում մոլլաները պատմել են մահմեդական ժողովրդին, թէ անգութ արարքները՝ հայերի դէմ՝ կատարուել են Գերմանիայի հրամանով* – (այդ տեղեկութեան) *դեսպանատունը* (գերմանական) *նախ հաւատ չընծայեց, մինչեւ որ ինքն էլ հաստատեց եւ Դռնից պահանջեց ամենախիստ հերքումը»* (անդ, X): Թուրքաց Հայաստանի զանազան շրջաններից վերապրող բոլոր հայերը վկայում են, որ հայ ժողովուրդը համակերպուել է տեղահանութեան, որովհետեւ միամտօրէն հաւատացել է թուրք պաշտօնեաների շատ քաղաքավարի եւ կարեկցական ձեւերով արած այն յայտարարութիւններին, թէ Գերմանիան է հրամայել իրանց շրջաններից հեռացնել հայերին եւ այսինչ կամ այնինչ վայրում յանձնել իրան: Մոլորանքը տեղ էր գտնում մտքերի մէջ շնորհիւ ցաւալի այն իրողութեան, որ հայ մտաւորականութիւնը ծանօթ էր գերման մի քանի հայասէր գրողների, ինչպէս Դր. Ռոհրբախի այն հայեացքներին, ըստ որոնց՝ հայերը պէտք է հեռացուէին ռուսական սահմանից, եւ, իբրեւ մշակութունակ ժողովուրդ՝ կենտրոնացուէին Բաղդադի երկաթգծի մարզում, այսինքն՝ հարաւային Հայաստան, Հայկական Միջագետք, Կիլիկիա: Է՛լ աւելի վատ, որ Կ. Պոլսի Հայոց

Պատրիարքարանն անգամ, խաբուելով թուրքերի «բարեմիտ խոստումներ»-ից, պաշտօնապէս հրահանգել էր ժողովրդին՝ *«չընդդիմանալ կառավարութեան կարգադրութիւններին»*:

Ահա՛ թէ ի՞նչ պայմաններում եւ ի՞նչ ձեւերով թուրքերը կարողացան համիսլամական «ջիհատ» բեմադրել՝ հայերի դէմ:

գ) Համաթուրանականութիւն. – Հէնց իսլամից օգտուելու անզօրութեան զգացումն էր, որ դեռ 19-րդ դարի վերջերին մղեց թուրքերին կրօնական ցնորքը փոխարինել ցեղայինով: Հայաստանն ընկնում է Թուրանի ճանապարհին: Նրա ոչնչացումն, ուրեմն, անհրաժեշտ էր համաթուրքական եւ ո՛չ թէ համիսլամական տեսակէտով: Արդէն թուրքերի հոգեւոր, բարոյական կապն իսլամի հետ այն աստիճան կեղծ ու մակերեսային էր, որ երբ հարց ծագեց խալիֆայութիւնը կրկին արաբներին վերադարձնելու մասին՝ նրանք ջնջեցին այդ հաստատութիւնը, հրաժարուեցին արաբական տառերից, բառերից, այսինքն՝ իսլամական իսկական աւանդութիւններից, մշակոյթից, եւ այս նահանջը հռչակեցին «բարենորոգում»: Որ այդ քայլն եւրոպական էութեան հաղորդուելու ճիգի արտայայտութիւն չէր, դա երեւում է այն փաստից, որ «մոդեռնացման» զուգահեռ՝ թուրքերը ձեւակերպեցին թուրանական ցեղային իրանց տեսիլքը, այսինքն՝ իդէալներով կապուեցին մոնղոլական իրանց նախօրօրան Կենտրոնական Ասիային: Շատ եւրոպացիների զարմացրեց թուրքերի յեղաշրջական կամքը: Բայց նրանք, որ պատճառագիտօրէն մօտեցան դէպքերին, հասկացան, որ կատարուածը հետեւանք էր ո՛չ թէ հոգեւոր նորոգումի պահանջի, այլ՝ քաղաքական նոր ցնորքների: Արաբներին կորցնելուց յետոյ թուրքերը նոր յենարան պէտք է փնտրէին Թուրանում: Դրա համար անհրաժեշտ էր դառնում թօթափել արաբական ամէն ազդեցութիւն եւ գտնել թաթարներին մօտենալու ելքեր: Թաթարները պատկանում են շիիտական դաւանութեան, որով՝ Պարսկաստանից նրանց զատելու համար, թուրքերը, նախ իրանք վար պիտի դնէին սիւննիականութեան դրօշը (ահա՛ խալիֆայութիւնը լքելու ուրիշ մի պատճառը): Նոյն թաթարների համար բոլշեւիկները ծրագրել եւ մշակում էին լատինատառ այբուբէն: Նման տառերով միայն թուրքերը պիտի կարողանային գրական կապ ստեղծել իրանց ցեղակիցների հետ (ահա՛ լատինագրութիւնն ընդունելու երկրորդ մի պատճառը): Հետաքրքրական է, անշո՛ւշտ, որ բոլշեւիկները, հասկանալով թուրքերի լատինագրութեան շարժառիթները, իրանց հպատակ թուրքաթաթարներին ընծայած լատինական տառերը հետագային փոխարինեցին սլաւականով: Քանի դեռ օսմանցիները համաթուրանական ցնորքը

չէին որդեգրել, նրանք չէին գործածում «թուրք» բառը եւ խորշում էին նրանից: «Բարենորոգումներ»-ի շրջանին էր, որ պաշտօնապէս լքուեց «օսմանցի» յորջորջումը եւ կիրարկուեան դրուեց «թուրք» անունը: «Բարենորոգումներ»-ից առաջ, իսլամն էր *«միակ ուղիղ հաւատ»-ը:* Դրանցից յետոյ, թուրք «պատմագէտներ»-ը հռչակեցին, թէ *«թուրքն է աշխարհի ամենահին մարդը»*, թէ *«թուրք էին Ադամն ու Եւան»*, թէ *«թուրքն է ամենահին քաղաքակրթութեան ստեղծիչը»*: Հասկանալի է, թէ քաղաքական ցնորքներն ի՛նչ ոճիրներ կարող են վիժել տալ մի ժողովրդի, որ հազիւ ծանօթացած բանականութեան «այբ»-ին, յանդգնութիւն ունի սպանելու աստիճան չարաշահել եւ ծաղրել գիտութիւնը:

Համաթուրանական քաղաքական ցնորքին զոհ գնաց հայ ժողովուրդը - արիական միակ զօրաւոր սեպը՝ ընկած Անատոլիայի եւ Թուրանի միջեւ: Հայկական եղեռնի օրերին էնվէրը, հասկացնելով, որ ինքը չի վախենում հայերի ոչնչացման հետեւանքներից, ասում է Լեպսիուսին. *«Թուրք ժողովուրդը 40 միլիոն է: Եթէ դա հաւաքուի մի պետութեան մէջ՝ Ասիայում մենք պիտի ստանանք այն նշանակութիւնը, ինչ որ Գերմանիան ունի Եւրոպայում»* (անդ. XV): Լեպսիուսն սքանչելիօրէն ծաղրում է *«մեծութեան հետք չկրող»* թուրք հրամանատարի *«մարդահամարային երեւակայութիւնը»* - լաւագոյն դէպքում 5-6 միլիոն թուրքերը, կիսավայրենի իրանց ցեղակիցների հետ, պիտի կազմեն մեծ մի պետութիւն եւ մշակութաստեղծ ժողովուրդների շարքում գրաւեն առաջնակարգ դիրք...: Բայց եւ այնպէս, այս ցնորքն էր, որ քաղաքականապէս անհրաժեշտ դարձրեց հայկական եղեռնը: Դա էր, որ մղեց թուրքերին զինակցութիւն, բարեկամութիւն կեղծել Գերմանիային, ապա՝ բոլշեւիկներին, Անգլիային: Որ Թուրքիայի զինակցութիւնը Գերմանիայի հետ՝ եղել է ո՛չ թէ պատերազմի գործում նրան օգնելու, այլ նրա հմայքն ու ոյժը համաթուրանական իր երազներին ծառայեցնելու նպատակով, այդ մասին վկայում է զօրավար Լուդենդորֆը. *«Փետրուարի վերջին,* (1918թ.) *թուրքերն սկսել էին արշաւանքը՝ Հայաստանում: ...Ապրիլի վերջին նրանք ստացան Բրեստի դաշինքով իրանց վիճակուած Կարսի եւ Բաթումի շրջանները: Բայց նրանք տրամադիր չէին կանգ առնել, այլ ձգտում էին աւելի՛ լայն ազդեցութիւն ձեռք բերել Կովկասում: Այս նպատակով նրանք ուժեղ քարոզչութիւն էին մղում Ադրբէյջանի մահմեդական բնակչութեան մէջ...: Ես կարող էի համաձայնել թուրքական քայլերին, եթէ դրանք նպաստէին կռուի ընդհանուր վարումին: Բայց նրանք պէտք չէ Թուրքիային հեռացնէին պատերազմական յատուկ իր խնդիրներից*

կամ Կովկասից դժուարացնէին մատակարարումը հում նիւթերի, որոնցից մենք շատ էական մի թեթեւացում էինք սպասում» (զօրավարն այստեղ ակնարկում է մասնաւորապէս Բագուին, ուր հայերը հարկադրուեցին երկարատեւ - գրեթէ մինչեւ արեւմտեան ճակատի խորտակման օրերը - դիմադրութիւն ցոյց տալ թուրք բանակին): ...*«Էնվէրը եւ թուրք կառավարութիւնը, սակայն, աւելի՛ քիչ էին մտածում պատերազմի մասին՝ Անգլիայի դէմ, քան համիսլամական իրանց նպատակների մասին՝ Կովկասում: ...Սրանով մի հակասութիւն էր մտնում մեր եւ Թուրքիայի նպատակների միջեւ»* (անդ, էջ 499-500):

Հաւատարմութեան զգացումից զուրկ եւ միայն կեղծումի ոյժով ապրող ժողովուրդները չեն կարող եւ ո՛չ մի դէպքում օրինապահ լինել բարեկամութեան մէջ: Զօրավար Լուդենդորֆը շարունակում է. *«Որ այդ բանում* (հում նիւթերի մատակարարման հարցում) *մենք չէինք կարող յենուել Թուրքիային՝ դա կրկին ապացուցուեց նրա վարմունքից, Բաթումում: Պատրաստ գտնուած բոլոր միջոցները նա իւրացրեց իր համար: Բագուի նաւթի վրայ այն դէպքում միայն մենք կարող էինք յոյս դնել, եթէ մենք ինքներս հոգայինք այդ մասին»* (անդ, էջ 530): Աւելին, որ Թուրքիան կատարելապէս խարդախ զինակից է եղել՝ դա երեւում է հետեւալ փաստից. *«Մենք զէնքեր տուեցինք այնտեղի* (Հիւս. Պարսկաստանի) *ցեղերին, որոնք ուզում էին միանալ տաճիկներին: Սրանք, սակայն, ոչինչ արեցին, չնայած որ բազմաթիւ զօրամասեր ունէին կանգնած Բաթումի եւ Կարսի շուրջ»* (անդ, էջ 531):

Այս բոլորով հանդերձ, զօրավար Լուդենդորֆը մեծահոգաբար թէ բարեմտօրէն ուզում է հաւատալ, որ Թուրքիայում գէթ մի հատիկ անկեղծ գերմանասէր է եղել, Էնվէ՛րը. *«Գերմանիայի հաւատարիմ բարեկամն էր նա»* (անդ, էջ 201):

Բայց ահա թէ ինչպէ՞ս է արժեցնում իր «հաւատարմութիւնը» նոյն Էնվէրը – մէկը բոլշեւիկների Բագուում բեմադրած «Արեւելեան ժողովուրդների համագումար»-ի գլխաւոր դերակատարներից, որ իր ճառում, ի միջի այլոց, ասում է. *«Ընկերնե՛ր, երբ Թուրքիան պատերազմին խառնուեց, ...մենք կռուեցինք Գերմանիայի կողքին...: Գերման իմպերիալիստները մեզ շահագործեցին աւազակային իրանց նպատակների համար...: Ընկերնե՛ր, ...ցաւում եմ, որ հարկադրուած եղանք կռուել գերման իմպերիալիզմի կողքին: Ես ատում եմ եւ անիծում գերման իմպերիալիստներին, որքան անգլիական»...* («Բագուի Արեւելեան ժողովուրդների համագումարը», բուլղարական թարգմ., էջ 54 - 55):

Ինչո՞ւմն է գաղտնիքը, որ թուրքերն այնքա՛ն վարպետօրէն կարո-

ղանում են մի վայրկեանում գերմանասիրութիւնից ցատկել մինչեւ ռուսասիրութիւնը, համիսլամականութիւնից մինչեւ համաթուրանականութիւնը, ատելախանձ հակաեւրոպականութիւնից մինչեւ սուտ եւրոպականութիւնը, փաշայական դիրքից, մտայնութիւնից մինչեւ պրոլետարական խեղկատակութիւնը: Ֆրանսիական պատմաբան Ժագ դը Մորգանն ասում է. *«Ո՛վ չի եղել Արեւելք կամ եղել է՝ առանց հասկանալու տեղական լեզուները, չի՛ կարող ճշգրիտ գաղափար կազմել, թէ մահմեդականն ի՞նչ զգացումներ է տածում քրիստոնեայի նկատմամբ: Պէտք է ապրած լինել այդ մարդկանց մէջ, պէտք է առանց կասկած հրաւիրելու լսել նրանց մտերիմ խօսակցութիւնը... Եւրոպացին կանոնաւոր շփման մէջ է միայն մեր կենցաղավարութեան սովոր մարդկանց, գէթ իրանց ներքին մտածումները ծածկելու վարժուածների հետ: Թւում է, անհաւատալի դիւրութեամբ ընտելանում են մեր սովորոյթներին եւ մեր ներկայութեան հետեւում են նրանց այնպիսի բնականութեամբ, որ կարծես բացարձակապէս անկեղծ լինեն. բայց հենց որ տուն են գնում, թօթափում են կեղծ եւրոպականութիւնը եւ կրկին դառնում միեւնոյն անխիղճ ու անգութ բարբարոսները...: Թուրքը... լինելով աւելի՛ ճարպիկ կեղծող, ...աւելի՛ լաւ է իւրացնում մեր ձեւերը»:* Սրանում՝ կեղծելու ճարպիկութեան մէջ է թուրքի ամենացայտուն հոգեգիծը: Սրանում է նրա քաղաքական ստազօրութեան գաղտնիքը: Սրանում է ե՛ւ նրա ա՛յն ընդունակութիւնը, որով դա կարողանում է եւրոպական հակամարտութիւնները, զինակցութիւնները լաւապէս օգտագործել՝ ասիական իր նպատակների համար:

դ) Եւրոպական գործօնը – Օսմանեան պատմութեան հմուտ մասնագէտներից Լորդ Իվըրսլին հաստատագրելով, որ Բալկանեան քրիստոնեաներն իրար աւելի էին ատում, քան որ վախենում էին թուրքերից եւ ատում նրանց, որ վեց դարերի ընթացքին միայն մի անգամ (1912-ին) միանալով՝ նրանք տաճիկներին դուրս քշեցին թերակղզուց, որ այդ միութեան քայքայումի հետեւանքով միայն սրանք կարողացան վերագրաւել արեւելեան Թրակիան, եզրակացնում է. *«Այս պարագան լուսաբանում է մեր պնդումը, թէ քրիստոնեայ պետութիւնների միութեան պակասն էր գլխաւոր մի պատճառը նրանց բոլորի... թուրքական լծի տակ գերի մնալուն»*:

Այս եզրակացութիւնը պէտք է ընդհանրացնել ա՛յն իմաստով, որ հենց եւրոպական մեծ ոյժերի փոխադարձ ատելութեան պատճառով էր, որ Կ. Պոլիսն ու նեղուցներն այնքան երկար ժամանակ մնացին տաճիկների ձեռքը – մի պարագայ, որ Եւրոպայում աւելի՛ հրահրուած

պահեց հակամարտութեան ոգին եւ սպանիչ եղաւ մասնաւորապէս Թուրքիայի քրիստոնեայ ժողովուրդների համար:

Մենք ծանօթացանք օսմանեան հին բանակների ցեղային բաղկացութեան. քրիստոնեաների յաղթանակները քրիստոնէածին զօրավարներն ու ենիչէրիական զօրագնդերն էին: Բալկանեան պատերազմին աշխարհը տեսաւ թուրքի ռազմական տարողութիւնը – խղճալի դիմադրութիւն, այն էլ՝ կրկին մասամբ թուրք բանակում ծառայող քրիստոնեայ զինուորների շնորհիւ: Համաշխարհային պատերազմի օրերին աւելի փայլուն չէին թուրք բանակի մարտական ձիրքերը: Այս առթիւ շա՛տ բան է ասում զօրավար Լուդենդորֆը եւ շա՛տ աւելին՝ հենց թուրք բանակի կազմակերպիչ զօրավար Լիման ֆօն Սանդերսը: Թուրքերի հետագայ յաջողութիւնները Հայաստանում եւ Փոքր Ասիայում՝ հետեւանք էին բացարձակապէս բոլշեւիկների զինակցութեան եւ անգլեւֆրանս-իտալական դաշնակցութեան բարոյական քայքայումին: Բոլշեւիկները եւ տաճիկները միասնաբար յարձակուեցին փոքրիկ եւ դեռ իր վէրքերը չդարմանած Հայաստանի վրայ, իսկ Դաշնակիցներից ոմանք քաղաքականապէս թէ ռազմամթերքով օգնեցին քեմալականներին՝ մասնաւորապէս յոյների եւ Կիլիկիայի հայերի դէմ: Չկայ լուրջ եւ ո՛չ մի ապացոյց, որ օսմանցիներն երբեւիցէ յաղթանակել են թուրք ազգի սեփական միջոցներով կամ քաջութեամբ: Նրանց ամբողջ արժէքն աշխարհագրական իրանց դիրքի մէջ է: Վոսփորը մի լար է Եւրոպայի եւ Ասիայի միջեւ: Ո՛վ նրան տիրում է ո՛չ թէ ոգու ճշմարիտ զօրութեամբ, այլ միայն մակաբոյծի բախտով, նա ճարտարում է քաղաքական լարախաղացութիւնը: Ընդհանրապէս, քաղաքական իրանց կշիռը նեղուցների տիրապետութեամբ պայմանաւորողներն ընդունակ են միայն սարդի ոստայններ հիւսել մարդկութեան համար:

Հնուց ի վեր թուրքերը փորձառութիւն ունէին, որ Եւրոպան քրիստոնեաների համար խօսել գիտի միայն, բայց երբե՛ք՝ գործել: Նրանք հասկացել էին նոյնպէս, որ քաղաքականութեան մէջ, դա վայրկեանին աւելի՛ է կարեւորութիւն տալիս, քան ամբողջ մի յաւիտենականութեան: Եւ վերջապէս, խորամանկութեան մէջ նրբացածներն աւելի լաւ են ըմբռնում մարդկային տկարութիւնները. թուրքերը վաղուց էին չափել Եւրոպայի բարոյական հասակը եւ մարսել բազմաթիւ «կատարուած իրողութիւններ»:

Թուրքերն ամէնից աւելի պէտք է վախենային ռուսներից, նախ այն պատճառով, որ սրանք գործում էին Հայաստանի ճակատում եւ երկրորդ, որ իբրեւ կրօնասէրի հռչակ հանած մարդիկ, ամէնից աւելի

նրանք կարող էին քրիստոնեաների ջարդին պատասխանել մահմեդականների ջարդով: Բայց եթէ ո՛չ աւելի առաջ, գէթ 1914/15-ի ձմրան, նրանք համոզուեցին, որ ռուս քաղաքականութիւնը բացարձակապէս տրամադիր չէ՝ սպանուած հայերի հաշիւը պահանջել մահմեդականներից: Գտնուեցին, անշո՛ւշտ, ռուս սպաներ, զինուորներ (յատկապէս կոզակներ), որոնք ցասումով եւ սարսուռով կանգնեցին մորթուած հայերի դիակոյտերի առաջ, կործանուած գիւղերի փլատակների միջից, լեռների ծերպերից, քարայրներից հաւաքեցին հրաշքով փրկուած երեխաներին, քրիստոնէական գթասիրութեամբ ցաւեցին որբի նրանց ճակատագիրը, եւ ցնցուած այդ զարհուրանքներից՝ շա՛տ յաճախ, վրէժխնդրաբար ոչնչացրին իրանց ձեռքն անցած թուրքերին, քիւրդերին: Բայց պաշտօնական Ռուսաստանը, յանձին իր հրամանատարութեան, ո՛չ միայն անկարեկիր մնաց, այլեւ՝ անուղղակիօրէն գործակցեց թուրքերին: Կենտրոնական իշխանութիւնն հակահայ իր տրամադրութիւնը մատնել էր արդէն Կովկասի հայ զինուորութիւնը (մօտ 200.000) քշելով դէպի աւստրեւգերման ճակատը, իսկ Հայաստանում գործող ոյժերի հրամանատարութիւնը յանձնել Եուդենիչի նման սեւհարիւրակային կամ Աբացիեւի նման մահմեդական զօրավարների: Քիչ կասկած կարող է լինել, թէ սրանք մութ կապեր են մշակել թուրք ջարդարարների հետ: Ձեռք չեն անցել վաւերագրեր: Բայց մեծ ոճրադաւերի հեղինակները չեն թողնում գրաւոր հետքեր. նրանց սեւ գործերը հասկացւում են իրերի, մասնաւորապէս խղճմտանքի տրամաբանութեամբ: Բացի Ալաշկերտի եւ Բասենի գաւառներից եւ Վանի նահանգից, ուր ապստամբ հայերն արդէն ջախջախել էին մահմեդականներին, ռուս բանակը մուտք չգործեց եւ ո՛չ մի շրջան, ուր քրիստոնեայ բնակչութիւնը դեռ տեղահանուած չէր կամ դիմադրում էր: Մի քանի կեղծ նահանջներով ռուս հրամանատարութիւնը կոտորել տուեց կամ գաղթի ճամբաներին մահացութեան դատապարտեց անգամ ազատագրուած շրջանների հայութեան մի մասը: Թերեւս մինչեւ յաւիտեան մութ մնայ, թէ ինչպէ՞ս եղաւ, որ ռուս բանակի թիկունքը գտնուած քրդերը կարողացան դիրք բռնել Բերկրիի շրջանի կիրճերում եւ կոտորել հազարաւոր հայ փախստականների:

Դաւի մութ ծալքերի վրայ լոյս են սփռում մասնաւորապէս հետեւեալ իրողութիւնները.

1) Դեռ թուրքերի հայկական տեղահանութեան ծրագրի գործադրումից առաջ, 1915թ. մարտին, Կովկասեան բանակի հրամանատար զօրավար Եուդենիչի առաջարկով, ռուս կառավարութիւնն արտօնում է Ալաշկերտի, Դիադինի, Բայազէդի շրջանների 100.000-ից

աւելի քիւրդերի տեղահանումը: Ռուսների գթութեան յանձնուած այս մարդիկ ենթարկուեցին այլազան տանջանքների, բռնաբարումի, կողոպտուեցին մինչեւ իրանց կաշին եւ քշուեցին դէպի թուրքական դիրքերը, այն էլ, խորհրդաւոր կերպով, բացառապէս հայկական գլխաւոր կենտրոն Տարօնի ուղղութեամբ: Ո՞ւր է տեսնուած, որ դեռ պատերազմի սկզբին, կռուող կողմերից մէկն իրան յանձնուած բնակչութիւնը բռնիօրէն քշի դէպի թշնամու թիկունքը: Այդ չէ՞ր նշանակում արուեստականօրէն քրդերին թուրքասիրութիւն պարտադրել կամ նրանց գրգռել դեռեւս թուրք բանակի թիկունքում գտնուած քրիստոնեաների դէմ: Եւ իրապէս, տաճիկները զինելով գազազած եւ սովատանջ այս ամբոխներին, արտօնեցին նրանց ուզած ձեւով ապրել Տարօնի հայկական գիւղերի հաշուին, նրանց պատմութիւններով բորբոքեցին տեղական մահմեդականների վրէժխնդրական ոգին եւ հող մշակեցին հայութեան դէմ հռչակելիք իրանց «ջհատ»-ի համար:

2) Դրա հանդէպ, ո՛չ միայն հայկական եղեռնից առաջ, այլեւ սրանից յետոյ, գրաւուած շրջանների թուրք տարրը չէր վախենում ռուսների վրէժխնդրութիւնից: Գրեթէ ամէն տեղ թուրքերը բաւական էին համարում աղուհացով դիմաւորել ռուսներին եւ հանգիստ կերպով նստել իրանց տեղը: Աւելին, 1916-ի փետրուարին, երբ գրաւուեց Կարինը, ռուս կառավարութիւնը թուրք տարրը (Կարինում քրդեր չկային) հայերի վրէժխնդրութիւնից պաշտպանելու պատրուակով, արգիլեց վերջինների մուտքն այնտեղ: Բաղէշում միայն (ուր ապաստանած իսլամ բնակչութիւնը 95%-ով բաղկանում էր քիւրդերից), ռուսական զօրքն որոշ մի մասնակցութիւն բերեց մահմեդականների զանգուածային ջարդին: Սա ապացոյց չէ՞ ռուս հրամանատարութեան խորհրդաւոր մի համաձայնութեան՝ թուրքերի հետ - դուք հայերին ջարդեցէ՛ք, ես ձեւական վրէժը կը լուծեմ քրդերից: Փոխվրէժի բոլոր գործերը թուրք տարրի դէմ՝ կատարուած հայերի թէ ռուս զինուորների ձեռքով, տեղի ունեցան «ապօրէն» կերպով, այսինքն՝ հակառակ հրամանատարութեան կամքի եւ նրանից գաղտնի: Կարինում եւ շրջակայքում ջարդեր եղան միայն 1917/18-ի ձմրան, երբ բոլշեւիկացած ռուս բանակը լքել էր հայաստանեան ռազմաբեմը:

3) Հայկական եղեռնից յետոյ ռուս իշխանութիւնն որոշում է թուրքաց Հայաստանի գրաւուած շրջանները կցել կայսրութեան: Այդ արդարացնում է այն պատրուակով, որ եղեռնի հետեւանքով նուազել է հայերի թիւը: Ահա՛ թէ ի՛նչ է գրում այդ մասին արտաքին գործոց նախարար Սազոնովը՝ Կովկասի նոր փոխարքայ Նիկոլայ Նիկոլա-

յեւիչին. *«Մեր զօրքերի ձեռքով գրեթէ ամբողջ Մեծ Հայքը գրաւելը եւ յառաջիկային նրա կցումը ռուսական կայսրութեան՝ հերթի են դնում այս աշխարհի ապագայ կազմակերպման հարցը: ...Խնդրի ամենամեծ դժուարութիւնն ու բարդութիւնը հայոց հարցի դնելն ու վճռելն է...: Ինչպէս յայտնի է, հայոց հարցի լուծման եղանակներն առաջադրող երկու հոսանքներ կան մեզանում. մէկը հայ ազգայնականների ձգտումն է՝ լիակատար ինքնավարութիւն ունենալու, Ռուսաստանի թեւարկութեան ներքոյ, 1913թ. մեր առաջարկած բարենորոգումների ոգով, իսկ միւսը* (այսինքն՝ Եուդենիչների), *որ սրան հակադիր է, հայերի քաղաքական նշանակութիւնը զերոյի է հասցնում եւ փորձում է նրանց տեղը դնել մահմեդականներին: Ինձ թւում է, որ հայոց հարցն առաջին թէ՛ երկրորդ ուղղութեամբ լուծել բոլորովին չի համապատասխանում Ռուսաստանի պետական շահերին... Ինչ վերաբերւում է հայերին լայն ինքնավարութիւն տալուն, պէտք չէ մոռանալ, որ Մեծ Հայքում... նրանք այժմ դժուար թէ կազմեն բնակչութեան նոյնիսկ 1/4 մասը»* (բացարձակապէս յերիւրածոյ. Հայաստանում տեղի էր ունեցել ժողովուրդների այնպիսի ահաւոր իրերասպանութիւն, որ հայերն ու մահմեդականներն ոչնչացել էին իրանց գրեթէ 3/4-ականով. աղէտը լրացրել էին գաղթը, սովը, որին զոհ էին գնացել մասնաւորապէս դէպի Տիգրանակերտ, Խարբերդ եւ աւելի հեռուներ փախած մահմեդականները: Այնպէս որ՝ Սազոնովի այդ ելոյթի օրերին - 1916թ. - գրաւուած շրջանների հայերից, տեղում թէ Երեւանում, ապրում էին 250.000 հոգի, որոնք Կովկաս ապաստանած 80.000 հին փախստականների, տարագիրների հետ՝ հասնում էին 330.000-ի: Սազոնովը հաշուի չի առնում նոյն այդ գրաւուած շրջաններից Ամերիկա եւ այլուր պանդխտող 100.000-ից աւելի հայերին: Վերջապէս, նա անտեսում է ճակատագրով թէ քաղաքական նպատակով հայերին կապուած 40.000 քրիստոնեայ ասորիներին եւ եզդիներին: Այդ բոլորի հանդէպ՝ բուն Մեծ Հայքի գրաւուած շրջաններում մնացել էին ընդամէնը 200 հազար մահմեդականներ, մեծ մասով՝ թուրքեր: Մեծ Հայքին չպատկանող ռուսագրաւ Պոնտոսում (Տրապիզոնի նահանգ) ոչնչացել էին հայերը, թէպէտեւ այս շրջանից էլ միայն Կովկասում ապրում էին 30.000 հին տարագիրներ: Պոնտոսի մահմեդական տարրը նոյն այն օրերին բաղկանում էր առաւելապէս լազերից: Ազատուել էր նաեւ խոշոր թիւ ներկայացնող քրիստոնեայ մի բնակչութիւն՝ յոյները): *«Այսպիսի պայմաններում*,- շարունակում է արտաքին գործերի նախարար Սազոնովը,- *հայերի ինքնավարութիւնը կ'ունենայ իրապէս այն անարդար հետեւանքը, որ փոքրամասնութիւնը կը*

ստրկացնի մեծամասնութիւն կազմող տարրը: Միաժամանակ, չի կարելի համաձայն լինել նաեւ այն կարծիքին, թէ հայկական տարրը պիտի զոհաբերուի մահմեդականին: ...Այս պիտի նշանակէր հարկադրել հայերին, որ իրանց հայացքները նախանձով դարձնեն դէպի արտասահմանեան իրանց հայրենակիցները (ակնարկում է Հայաստանի՝ Ֆրանսիային մնալիք շրջանի հայերին), *որոնց համար... ազատ զարգացումն ապահովուած կը լինի: Բացի դրանից, խնդրի այսպիսի լուծումը կարող է Ռուսաստանին անյարմար դրութեան մէջ դնել, որովհետեւ բոլոր պետութիւններից Ռուսաստանն էր, որ ամէնից եռանդով պաշտպանում էր թուրքաց Հայաստանում լայն բարենորոգումներ մտցնել»*: Ի՞նչ անել ուրեմն: Երեւոյթները փրկելու համար նախարարը թելադրում է. *«...Հայերին վերապահել դպրոցական եւ եկեղեցական ինքնուրոյնութեան, մայրենի լեզուից օգտուելու իրաւունք, նաեւ՝ քաղաքային եւ գիւղական ինքնավարութիւն»*, աւելացնելով անշուշտ, որ *«մահմեդականների նկատմամբ էլ պէտք է կիրառել նոյն այս սկզբունքները, որչափով այդ թոյլ են տալիս տեղական պայմաններն եւ նրանց մշակութային զարգացման աստիճանը»*:

Սա ռուսական արտաքին գործերի այն նախարարն է, որ 1912-ից մինչեւ 1914-ը աշխարհը զարմացրեց իր «հայասիրութեամբ», որ տաճիկներին պարտադրեց Հայաստանի բարենորոգման ծրագիրը եւ 1913թ. իր հրատարակած ռուս պաշտօնական «Նարնջագոյն» գրքով յայտարարեց. *«Պատրաստուած է հողը Թուրքիայի հայերի ապագայ անկախութեան»*:

Եթէ մարդկային խօսքն ու գործը հոգեբանութիւն ունեն, ապա արտգործնախարար Սազոնովի խօսքերից եւ գործերից պարզօրէն եզրակացւում է.

ա) 1912/14-ի բարենորոգումը պարտադրուած է թուրքերին՝ սրանց հայերի դէմ գրգռելու նպատակով:

բ) Խորապէս ցաւալի է, որ հայերն ի սպառ չեն ոչնչացել, որով՝ դեռ մնում է նրանց բարդ եւ դժուարալոյծ հարցը:

գ) Բայց ուրախալի է, որ հայերն այլեւս (իբր թէ) բացարձակ փոքրամասնութիւն են կազմում, որով՝ վերացել է նրանց անկախութիւն տալու ձեւական հիմքը:

դ) Ըստ էութեան, նա դէմ է նոյնիսկ մարդկային տարրական իրաւունքներ տալու գաղափարին. բայց վախենալով, որ ֆրանսիացիք աւելին զիջելով՝ իրանց կողմը կը շահեն հայերին, իսկ աշխարհի հասարակական կարծիքը պիտի դատապարտի Ռուսաստանին՝ քրիստո-

նեայ մի ժողովուրդ խաբելու եւ նրա նահատակութիւնը շահագործելու մէջ, նա հարկադրւում է դերասանական շարժուձեւերի դիմել եւ անիմաստ խօսքերով այնպիսի խաբկանք ստեղծել, որպէս թէ նոր մի բան է շնորհում հնագոյն մի մշակոյթի տէր եւ աշխարհի առաջնագոյն քրիստոնեայ ազգին - եկեղեցուց, դպրոցից, մայրենի լեզուից օգտուելու իրաւունք:

Բայց Սազոնովին դեռ կարելի է ազնիւ մարդ համարել, որովհետեւ իր այս ելոյթով նա անուղղակիօրէն թելադրում է Կովկասի փոխարքային՝ գէթ ձեւապէս մեղմել վայրագութիւնը սեւ այն ոյժերի, որոնք թուրքերի ձեռքով հայերին ջարդել տալուց առաջ յղացել եւ անօրինակ եղեռնից յետոյ՝ գործադրում էին այսպէս կոչուած *«եփրատեան կոզակութեան»* ծրագիրը, որի իրականացման նախապայմանը համարւում էր կենդանի մնացած հայերի՝ Հայաստանում վերաբնակուելու հնարաւորութիւնների խափանումը: Ահա՛ թէ ի՛նչ է գրում Կովկասեան բանակի հրամանատար Եուդենիչը փոխարքայ Վորոնցով-Դաշկովին. *«Զօրքերի ձիերին կեր հասցնելը չափազանց թանկ է նստում: Մինչդեռ շուտով... Ալաշկերտի հովտի դաշտային մասերը եւ լեռների ստորոտները կը ծածկուեն խոտով... Հայերը մտադիր են... գրաւել քիւրդերի եւ թուրքերի լքած հողերն իրանց փախստականներով: Այս մտադրութիւնն ես անընդունելի եմ համարում, որովհետեւ հայերի խլած հողերը պատերազմից յետոյ դժուար կը լինի ետ առնել կամ ապացուցել, որ իրանց չի պատկանում... Չափազանց ցանկալի համարելով սահմանամերձ վայրերը ռուսական տարրով բնակեցնել...անհրաժեշտ է թւում այժմ իսկ Դոնից եւ Կուբանից կանչել բանուորական ընկերակցութիւններ, վերոյիշեալ հովիտների խոտը քաղելու եւ հաւաքելու»...*

Կովկասեան բանակի հրամանատարի հ. 1, 482 պաշտօնական այս նամակը յատկանշօրէն գրուած է 5 ապրիլ 1915թ., այսինքն՝ հայկական հեռաւոր կենտրոն Զէյթունի տեղահանութիւնից (թուրքերի ձեռքով) եւ Ալաշկերտի քիւրդերին դէպի Տարօն քշելուց (ռուսների ձեռքով) մի քանի շաբաթ յետոյ, Վանի հայեւթուրք կռուից երկու օր, իսկ հայկական ընդհանուր տեղահանութեան հրահանգի գործադրումից մի քանի օր առաջ: Եուդենիչի այդ նամակի վրայ Կովկասի «հայասէր» փոխարքան՝ կոմս Վորոնցով-Դաշկովը մակագրել է. *«Համաձայն եմ»:* Այդ օրերին ո՛չ Կովկասի, ո՛չ էլ թուրքաց Հայաստանի հայութիւնը տեղեակ էր հեռաւոր Զէյթունի դէպքերին: Բայց կասկած չկայ, որ այդ մասին գիտէին ե՛ւ Վորոնցով-Դաշկովը, ե՛ւ Եուդենիչը: Ռուսների հակաքիւրդ եւ թուրքերի հակահայ հալածանքների միջեւ

կայ ներքին կապակցութիւն: Թուրքերը հայկական տեղահանութիւնն սկսում են Զէյթունից, որ գտնւում է Լեռնային Կիլիկիայում, այսինքն՝ Հայաստանի հեռաւոր, ծայրագոյն հարաւում: Ռուսները քիւրդերի հեռացումն սկսում են Ալաշկերտից, որ թուրքաց Հայաստանի հիւսիսային շրջանն է: Զոյգ տեղահանումները - արտաքուստ խոտորնակ, ներքուստ միանպատակ - գործադրուել են միաժամանակ: Տարբերութիւնը նրանում է միայն, որ թուրքերը Զէյթունի հայերին վարել են դէպի Միջագետքի անապատները եւ ոչնչացրել այնտեղ, իսկ ռուսներն Ալաշկերտի քիւրդերին քշել են դէպի դեռեւս թուրքերի ձեռքում գտնուող հայկական կենտրոնները, հայերի ոչնչացումը դիւրացնելու նպատակով:

Թէ ինչպէ՞ս էր գործադրւում «եփրատեան կոզակութեան» ծրագիրը՝ այդ մասին ռուս հասարակութիւնը գաղափար կազմեց 1917 թուին, Կերենսկու իշխանութեան օրոք, Ալաշկերտի քաղաքացիական կոմիսար Նիկոլենկոյի զեկուցումից. *«Ալաշկերտում աշխատում էին ոչնչացնել ամէն ինչ, որ հայկական է: Բնիկ հայերին չէին թողնում մշակել իրանց հողերը եւ նրանք ստիպուած էին գիշերանց կատարել երկրագործական իրանց աշխատանքները: Մեծ չարիք էին դարձել մանաւանդ զօրավար Եուդենիչի՝ Ռուսաստանից բերած գիւղատնտեսական ընկերակցութիւնները»...* Նիկոլենկօն մոռացել է կամ իբրեւ ռուս մարդ՝ ամաչել է խոստովանել, որ իշխանութեան գործ դրած ահաբեկչական միջոցները, յաճախ, յանգել են ե՛ւ սպանութիւնների: Այդ բոլորից յետոյ, մի՞թէ պարզ չէ, թէ ինչո՞ւ ռուս զօրքը Կարինը գրոհելու հրաման ստացաւ Հայաստանի գլխաւոր այս քաղաքի եւ շրջակայքի հոծ հայութեան տեղահանումից եւ ոչնչացումից յետոյ միայն, թէ ինչո՞ւ դա դանդաղում էր օգնութեան գնալ անգամ Վանին, թէ ինչո՞ւ 1915թ. ամրանն արգելուեց Տարօնի սահմանը հասած հայ կամաւորական գնդերին՝ օգնութեան հասնել լեռներում դեռեւս դիմադրող իրանց ազգակիցներին, եւ ընդհանուր նահանջի հրահանգը տրուեց այն իսկ վայրկեանին, երբ ռուս բանակի պաշտօնական հաղորդագրութիւնն ասում էր. *«Մուշում... դեռեւս եռում է հայկական ապստամբութիւնը: ...Բաղէշի շրջակայքում* (խօսքը Բաղէշից արեւմուտք գտնուող Քան լերան հաւաոր ողբերգութեան մասին է) *նոյնպէս եռում է հայկական ապստամբութիւնը»*:

Հարցը պարզ է. Յուդայի համբոյրով ռուս քաղաքականութիւնը թուրքերի ձեռքով խաչել էր տալիս խաբուած մի ազգ, քրիստոնէադրօշ մի ժողովուրդ: Ինչ որ անկարելի էր դարձել բացայայտ թշնամանքով, յաջողւում էր կեղծ բարեկամութեամբ: Հայերին մահմեդականների

լծից փրկելու նշանաբանով՝ իրականացւում էր Լոբանովի ծրագիրը. *«Հայաստան՝ առա՛նց հայերի»*:

Ի զուր էին բողոքում, քրիստոնէական կարեկցանք հայցում Էջմիածնի Կաթողիկոսարանը եւ Կովկասի հայ ազգային մարմինները: Հայերին քաղցր խօսքերով եւ մեծ հեռանկարներով թակարդը ձգած «հայասէր» փոխարքան, իր առաքելութիւնը յաջողութեամբ պսակելուց յետոյ, հրաժարուեց: Նրան յաջորդող Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը յայտնեց Կաթողիկոսին, թէ *«Ռուսաստանում հայկական հարց չկայ»* եւ թէ «Ռուսաստան» ասելով՝ ինքն հասկանում է ռուս բանակի կողմից գրաւուած բոլոր երկիրները, որով եւ՝ թուրքաց Հայաստանը: Հայութեան ցասումը խեղդւում էր ահաւոր հիասթափութեան մղձաւանջի տակ: Ընդհանուր հոգեվիճակն արտայայտում էր թուրքական ջարդերից հրաշքով ազատուած եւ Կովկաս հասած մի հայ, որ Ամերիկայում պանդխտող իր ազգականներին գրում էր. *«...Թւում է, թէ երկինքը փուլ է եկել մեր գլխին եւ մենք մնացել ենք տակը»*: Մամուլը թէպէտեւ թելադրում էր հաւատալ արդարութեան վերջին խօսքին, բայց եւ այնպէս, յաճախ, գրաքննութեան կողմից ճերմակ թողնուած սիւնակներով թէ այլաբանական պատկերներով, արտայայտում էր դաւադրուած մի ցեղի ցասումը: Թիֆլիսի հայ թերթերում ցնցող մի պատկեր էր զետեղում անգամ զուտ գեղարուեստական գրող Շիրվանզադէն, մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեամբ - երբ մենք կանգնած միլիոնաւոր մեր զոհերի խորհրդանշական դագաղի առաջ, լալիս ենք մեր գոյութեան ողջ ցաւի եւ ցասումի ոյժով, ահա՛, մի սրիկայ է մտնում մեր տունը եւ ասում՝ շո՛ւտ վերցրէք ձեր դագաղը եւ հեռացէ՛ք նաեւ տնից...

Սրտի տէր բազմաթիւ ռուս մտաւորականներ, գործիչներ բողոքում էին աշխարհի հնագոյն հայրենիքներից մէկը դաւադրօրէն զարկուած իր որդիներից խլելու անգութ այդ ծրագրի դէմ: Միլիւկովը պետական Դումայի ամբիոնից աղաղակում էր. *«Հայաստանի եւ հայերի ճակատագիրը թանկ է մեզ համար... Ցաւալի նշաններ կան, որ կրկնւում են բաներ, որոնք յիշեցնում են գալիցինեան տխրահռչակ դիւցազնութիւնը»...* Բարձրանում էին ձայներ. *«Եանուշկեւի՛չը, Եանուշկեւի՛չը»*: *«Այո՛»*, շարունակում էր Միլիւկովը, *«այս Եանուշկեւիչն է, այս Եանուշկեւիչի քաղաքականութիւնն է... դէպի հաւատարիմ եւ հին բարեկամ հայը»...*

Բայց այս բոլորի մէջ աւելի հայերին «սուրբ հոգով» մխիթարելու բարեմտութիւն կար, քան թէ իշխանութեան շահագործութիւնը սանձելու կամք:

* * *

Ի՞նչ արեցին Անգլիան եւ Ֆրանսիան: Հալածանքն ու կոտորածն սկսելուց շաբաթներ յետոյ միայն (24 մայիս 1915թ.) Դաշնակից պետութիւնները թուրք կառավարութեան ուղղեցին հաւաքական մի ազդարարութիւն, որում, ի միջի այլոց, ասւած էր. *«Ի տես Թուրքիայի նոր այս ոճիրների՝ ընդդէմ մարդկութեան եւ քաղաքակրթութեան, դաշնակից կառավարութիւնները հրապարակով յայտնում են, որ իրանք, յիշեալ ոճիրների համար, անձնապէս պատասխանատու պիտի նկատեն օսմանեան կառավարութեան բոլոր անդամներին, ինչպէս եւ նրա այն գործակալներին, որոնք խառնուել են նման կոտորածների»:...*

Ի՞նչ ազդեցութիւն կարող էր գործել այս սպառնալիքը՝ թուրք ղեկավարների վրայ, երբ դա լինում էր նաեւ Ռուսաստանի անունից, որի մութ ոյժերի ներքին մտքերին սքանչելիօրէն ծանօթ էին նրանք, երբ բոլորին եւ ո՛չ ոքի պատասխանատու դարձնելու հնարամտութեամբ, նրանք, ջարդերը կատարում էին օսմ. կայսրութեան մահմեդական բոլոր ժողովուրդների մասնակցութեամբ, երբ դեռեւս Աբդիւլ Համիդի օրերից, նրանք չափել ու կշռել էին եւրոպական ոյժերի մարդասիրական շարժուձեւերի արժէքն ու տարողութիւնը: Միայն մի բանից պիտի սարսափէին թուրքերը - անմիջական փոխվրէժից, ջարդին՝ ջարդով պատասխանելու սպառնալիքից: Բայց եղած յայտարարութեան մէջ չկար այդպիսի կէտ: Դաշնակիցները խօսում էին ինչ-որ գալիք դատաստանից, գիտնալով կամ առանց գիտնալու, որ ապագայի զգացումը թուրքի մէջ այնքա՛ն է աղօտ, որ նա ո՛չ ապառնի խոստումներից է շլանում, ո՛չ էլ նման սպառնալիքներից վախենում: Որպէս չոր ներկայապաշտ՝ դա մի՛շտ էլ համոզուած է, որ *«մինչեւ գարուն՝ կա՛մ էշը կը սատկի, կա՛մ իշուն տէրը»*: Դա չի մտածում իրերի սկզբի եւ վախճանի մասին, եւ հենց այդ պատճառով էլ քաղաքականապէս անսահմանօրէն գործնական է իմաստասիրող հայից:

Իբրեւ տաղանդաւոր ջարդարարներ՝ թուրքերն անմրցելի են յերիւրաբանութեան մէջ: Նրանք, ի հարկէ, պիտի չմնային Դաշնակիցների խօսքի տակ: Եւ իսկապէս, իբրեւ պատասխան, նրանք հրատարակում են երկար մի հակամեղադրական՝ Համաձայնական պետութիւնների հասցէին: Նրանք ասում են, որ այդ պետութիւնները գրգռել են հայ յեղափոխական մարմիններին եւ պատերազմի ժամանակ ապստամբութիւն յարուցել Թուրքիայում, որ իրանց իրաւունքն է ճնշել այդ շարժումը, որ հայերի ո՛չ մի կոտորած տեղի չի ունեցել, այլ՝ եղել են միայն տեղահանութիւններ, այն էլ միայն պատերազմական

գօտիներից: Ամէնից յատկանշական սուտը, սակայն, այն է, թէ հայերը, իբրեւ թէ ռուսների թոյլատուութեամբ, ջարդել են Կարսի շրջանի մահմեդականներին – մի յերիւրանք, որի վրայից ռուս կառավարութիւնը, շա՛տ խորհրդաւոր կերպով, անցաւ գրեթէ լուռ:

Շուտով, տաճիկները հասկացան, որ հայկական եղեռնը բաւականաչափ իւղ է քսում անգլեւֆրանսիական քարոզչութեան հացին, ուստի՝ որոշ իմաստով, ցանկալի է ե՛ւ նրանց համար:

Եւրոպական «լուսաւորեալ» ժողովրդապետութիւնը՝ կայսերապաշտութեան փայլուն այդ դիմակը, մի՛շտ էլ վարժ է խօսել քրիստոնէական կրօնի, բարոյականի անունից եւ մահմեդականների ձեռքով ջարդել տալ քրիստոնեաներին, խօսել սպիտակ ցեղի մշակոյթը, քաղաքակրթութիւնը պաշտպանելու մասին եւ ասիական դեղինների զինակցութեամբ կամ ափրիկեան սեւերից հաւաքած վարձկաններով պատերազմել իրար դէմ, խորտակել միմեանց մշակութային, քաղաքակրթական արժէքները: Անգլիան, Ֆրանսիան ցնցուեցին, անշո՛ւշտ, հայկական եղեռնից, բայց նրանք ցուցահանեցին ո՛չ թէ չարիքի դէմ մաքառելու, այլ՝ նրանից օգտուելու կամք: Լոնդոնի թէ Փարիզի կառավարութիւնների ձեռքում, հայկական նահատակութիւնը դարձաւ քարոզչութեան անփոխարինելի զէնք՝ Գերմանիայի դէմ: Նրանք գրգռում էին մասնաւորապէս Ամերիկայի հասարակական կարծիքը. *«Գերմանիան զինակցել է քրիստոնէութեան եւ քաղաքակրթութեան թշնամի բարբարոս թուրքին եւ ոչնչացնել է տալիս քրիստոնեայ ամենահին ժողովուրդը»*: Հայկական եղեռնին նուիրուած անգլիական «Կապոյտ գիրք»-ը, Կ. Պոլսի ամերիկեան դեսպան Մորգընթաուի հատորը, Լոնդոնի եւ Փարիզի մամուլը, գրողները ճգնում էին աւելի՛ Գերմանիային վարկաբեկել, քան թէ թուրքերին սանձելու մասին գործնական միջոցներ, ելքեր առաջադրել: Ֆրանսիական ծանօթ գրող Ռընէ Պինոն նոյնիսկ իր գրքոյկի խորագիրն ուղղում էր նա՛խ Գերմանիայի եւ ապա միայն Թուրքիայի դէմ*: Ո՛չ ոք էր խօսք անում իսկական մեղսակցի՝ Ռուսաստանի մասին, որովհետեւ վերջինը դաշնակից էր, այսինքն՝ «քրիստոնէական քաղաքակրթութեան պաշտպան»:

Թուրքերն հրճւում էին, որ եւրոպական մեծ ոյժերն իրար մեղադրելով՝ առ ոչինչ էին դարձնում իրանց սպառնալիքը՝ պատասխանատուութեան մասին: Նրանք քրիստոնեայ աշխարհի տկարութիւնը չափում էին նաեւ այն փաստով, որ դեռեւս չէզոք Ամերիկան փոխանակ

---

* *Rene Pinon,* ,,La suppression des Armeniens. Methode Allemande – Travail Turc", Paris, 1916.

սաստիչ միջոցներ ձեռք առնելու, բարոյախօսում էր միայն եւ պարզապէս խնդրում, որ հայերին ո՛չ թէ ջարդեն, այլ՝ յանձնեն իրան: Իտալիայում էլ միայն զարմանք կար անօրինակ բարբարոսութիւնների հանդէպ եւ անզօր ցասում: Այդ բոլորից յետոյ, ո՞վ կարեւորութիւն պիտի տար Զուիցերիայի եւ նման փոքրիկ երկիրների իսկապէս ցաւակցական արտայայտութիւններին:

Ջարդերը գրեթէ վերջացել էին, երբ լոյս տեսաւ թուրքական ինքնարդարացման գլուխ գործոցը՝ ընդարձակ մի գիրք, լեցուած ամբողջովին ծուռ մեկնուած սուտ ու շիտակ փաստերով: Թուրքական կարմիր այդ գրքում (,,Aspirations et Agissements Revolutionnaires des Comites Armeniens”... Կ. Պոլիս, 1917) դատապարտւում եւ ծաղրւում են ո՛չ միայն արդէն նահատակուած հայերի ազգային տեսիլքները, այլեւ՝ դաշնակից ոյժերի հայասիրական ելոյթները: Թուրքիայում համոզուած էին, որ Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի պետական գործիչների սպառնագին յայտարարութիւնները դատարկ խօսքեր են միայն: Լլոյդ Ջորջը «Խաղաղութեան Խորհրդաժողովի Յիշատակները» երկհատոր իր գրքում (լոյս տեսած 1939-ին) դառնօրէն գանգատւում է, որ *«Դաշնակիցները, միաձայնութեամբ, այն կարծիքին էին, թէ թոյլ չեն տալու թուրքերին՝ օգտուել իրանց ոճրագործութիւնների արդիւնքից»*, բայց նրանք *«դաւաճանեցին եւ զոհեցին Հայաստանը»* (էջ 836): Թուրքերն սկզբից գիտէին ա՛յն, ինչ անգամ Լլոյդ Ջորջը հետագային պէտք է հասկանար: Դաշնակիցներն ո՛չ միայն չուզեցին եւ չկարողացան փրկել հայ ազգը, այլեւ՝ ցուցահանեցին հայերի բնաջնջումը հեշտացնող, նրանց դիմադրական ոգին ջլատող ուղղակի եւ անուղղակի բազմազան միջամտութիւններ, ներշնչումներ, խուսափումներ:

Այդ տեսակէտով՝ մութ, դաւաճանական մի վաւերագիր է թողել ռուս կառավարութիւնը: Ահա՛ թէ ի՛նչ է գրում Կովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.-ին (2 սեպտ. 1914թ.) *«Նախարարների խորհրդի վերեւ բերուած հաւաստիացման շնորհիւ* (ակնարկում է վարչապետ Գորեմիկինի այն գրութեանը, որում ասուած է, թէ Ռուսաստանն հայկական խնդրում ո՛չ մի զիջում չի անելու Թուրքիային) *բոլորովին համոզուած լինելով Հայկական Խնդրի նպաստաւոր լուծման՝ ես պարտք եմ համարում այնուամենայնիւ նախազգուշացնել Ձեզ, որ...շա՛տ անցանկալի կը լինէր եւ նոյնիսկ վտանգաւոր որեւէ ապստամբութիւն առաջ բերել Թուրքիայի հայերի մէջ»*: Ռուս կառավարութիւնը գիտի, որ թուրքերը պատերազմի մտնելիս՝ պիտի ջարդեն հայերին, բայց լրջօրէն վախե-

նում է, որ սրանք կարող են դիմադրել եւ փրկել իրանց գոյութիւնը, ուստի՝ միջոցներ է ձեռք առնում նրանց հոգեբանօրէն զինաթափելու: Եւ նա հասաւ իր նպատակին. Թուրքիայի հայութիւնը մատնուեց սպանիչ անորոշութեան, անվճռականութեան, անկարելի դարձաւ ընդհանուր ապստամբութիւնը: Մնացեալն արդէն գիտենք:

Նոյն ջլատիչ դերը խաղաց եւ Ամերիկայի Կ. Պոլսի դեսպանատունը: Ի՞նչ արժէք ունի, որ դեսպան Մորգընթաուն լաւ դամբանական գրեց մեռնող հայերի մասին: Դէպքերի ընթացքը ցոյց է տալիս, որ այս գծով էլ Դաշնակիցները գործել են նոյն անդամալուծիչ ազդեցութիւնը: Ո՞վ ներշնչեց Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, թէ պէտք է մնալ օրինապահութեան սահմաններում եւ թելադրել Հայաստանի ժողովրդին՝ չընդդիմանալ թուրք կառավարութեան կարգադրութիւններին: Երբ տեղահանութիւնից առաջ (1915թ. մարտին) Զէյթունում սկսուեց կռիւը հայերի եւ թուրք զօրքի միջեւ, այնտեղ «խաղաղարար»-ի հանգամանքով ասպարէզ եկաւ ծանօթ հայասէր միսիոնար Դր. Շէփըրդը: Իրապէս հայասէր եւ բարեմիտ այդ մարդը կարո՞ղ էր առանց ամերիկեան դեսպանատան գիտութեան կամ հրահանգի՝ ստանձնել Զէյթունը,- Հայաստանի անյաղթ այդ միջնաբերդը,- զինաթափելու այնքա՛ն ծանր պատասխանատուութիւնը: Անկասկածօրէն, խաբուած էր Շէփըրդը, խաբուած էր թերեւս եւ՛ ամերիկեան դեսպանատունը, բայց ի՞նչպէս եղաւ, որ հենց աղէտի ընթացքին էլ Ամերիկան վճռական չեղաւ չարիքը դարմանելու գործում:

Երբ ջարդերը նոր էին սկսուել՝ Փարիզում, Լոնդոնում գտնուած հայ գործիչները դիմումներ կատարեցին, խնդրելով զօրք հանել Կիլիկիա կամ, առնուազն, զէնք տալ հայերին: Ի՞նչ արեցին զոյգ Դաշնակիցները, որոնք անկասկած հասկացել էին եւ՛ Ռուսաստանի հայադաւ քաղաքականութեան միտումները. ոչի՛նչ, բացարձակապէս ոչի՛նչ: Անգլիացիք ասացին, որ Դարդանելի գործողութիւններով կը փրկուեն եւ՛ հայերը, իսկ ֆրանսիացիք պատուի գործը կատարուած համարեցին, երբ Մուսա լերան 5.000 հայերին վերցնելով իրանց ռազմանաւերի վրայ՝ Եգիպտոս տեղափոխեցին:

Դրա հանդէպ՝ ի՛նչ «յուզումներ» հայկական եղեռնը՝ աշխարհացունց այդ ոճրադէպը՝ «քաղաքակրթական» իրանց պրոպագանդայի համար անփոխարելիօրէն թանկագին նիւթ ծառայեցնելու գործում, ի՛նչ կարեկցալից խոստումներ հայերին: Բրիանը գրում էր հայոց Կաթողիկոսին. *«Ձերդ Սրբութեան գեղեցիկ կերպով յայտնի են խորին այն վիշտը եւ յուզմունքը, որոնք բռնեցին ամբողջ Ֆրանսիան՝ քաղաքակիրթ ուրիշ ազգերի հետ, երբ տեղեկութիւններ ստացուեցին այն*

հալածանքների մասին, որոնց կրկին զոհ դարձան Թուրքիայի հայերը: Ամէն անգամ, երբ Ֆրանսիան հնարաւորութիւն է ունեցել... յայտնել է հայ ժողովրդի վերաբերմամբ սաստկագոյն իր վշտակցութիւնը: Հանրապետութեան կառավարութիւնը հոգում է այն մասին, որ օգնութեան գայ նրան եւ թեթեւացնի նրա տխուր ճակատագրի դաժանութիւնը: Չերդ Սրբութիւնը կարող է միանգամայն համոզուած լինել, որ Հանրապետութեան կառավարութիւնը, դաշնակից պետութիւնների միաբան համաձայնութեամբ, նոյն զգացումներով քայլեր կ'անի հայ ժողովրդի օրինական պահանջները բաւարարելու, հենց որ հանգամանքները կը թոյլատրեն այդ»: Պատասխանելով ծանօթ հայասէր ծերակուտական Լուի Մարտենի դիմումին, նոյն Բրիանը գրում է. *«...Ֆրանսիան, մի վայրկեան մոռանալով սեփական իր տանջանքները, միացել է այն համոզումին, որ Հայաստանի շարժումները տարածել են քաղաքակիրթ ազգերի մէջ: Իրաւունքի եւ արդարութեան զոհերին գութի իր վկայութիւնը տալու համար նա իր հայեացքը մի րոպէ հեռացրել է սեփական իր հողի վրայ... կատարուող ոճիրներից եւ զբաղուել է հայերի թշուառութիւններով: Նա եռանդով արձանագրեց երիտասարդ թուրքերի չար գործերը... մի ժողովրդի դէմ, որի միակ մեղքն է սիրահար լինել յառաջդիմութեան եւ քաղաքակրթութեան: ...Երբ հնչի պատժի ժամը, Ֆրանսիան չի մոռանայ հայ ազգի... ցաւերը եւ իր Դաշնակիցների համաձայնութեամբ, յատուկ միջոցներ ձեռք կ'առնի նրան երաշխաւորելու խաղաղութեան եւ յառաջդիմութեան մի գոյութիւն»*:

Լորդ Կրոմերը Լորդերի Պալատում յայտարարում էր. *«Այս պատերազմի նպատակներից մէկն է Հայաստանի ազատագրումը՝ թուրքական լծից»*:

Ասկիւտն ասում էր. *«Պատերազմից յետոյ, ազատագրման եւ պաշտպանութեան մի ժամանակաշրջան պիտի սկսուի հին այս ազգի համար»*:

Կլեմանսօն գրում էր. *«Ֆրանսիական Հանրապետութիւնը եւ անգլիական կառավարութիւնը հայերին դասել են այն ժողովուրդների կարգը, որոնք իրանք պիտի որոշեն իրանց բախտը՝ մարդկային արդարացի եւ սուրբ սկզբունքների համաձայն»*:

Բայց մարդկային խօսքերի ուղիղ իմաստը հասկացուում է գործերի միջոցով: «Պատժի ժամը» հնչելուց առաջ, այսինքն՝ այն օրերին, երբ Եփրատը դեռեւս հայկական դիակներ էր քշում, երբ հողը դեռեւս չէր ծծել եւ արեւը չէր շոգիացրել թափուած ամբողջ արիւնը՝ Բրիանի թէ Կլեմանսոյի Ֆրանսիան եւ Ռուսաստանը գաղտնի դաշնագրով (9

մարտ 1916թ.) իրանց միջեւ բաժանեցին Հայաստանը: Իսկ ի՞նչ եղաւ, երբ «հնչեց պատժի ժամը»: Մեծ աղմուկով անգլիացիները ձերբակալեցին եւ Մալթա հաւաքեցին գլխաւոր ջարդարարների մի մասը (մի քանի տասնեակ թուրք նախարարներ, նահանգապետեր), բայց ոճրադատ ատեանի փոխարէն՝ այնտեղ կազմեցին «Ինտելիճընթ Սերվիս»-ի դասընթացքներ: Թուրք գործիչները խոստովանեցին իրանց մեղքերը, զղջացին, որ խաբուել են՝ միանալով Գերմանիային, խոստացան յետ այսու ծառայել անգլիական նպատակներին, կարճ՝ դարձան «անգլիասէրներ», այսինքն՝ իրաւունք ստացան մարսել գործած ոճիրները եւ ազատ արձակուեցին: Եւ նրանք երախտապարտ մնացին Անգլիային, որովհետեւ հայկական եղեռնի գլխաւոր հեղինակներից միայն Մալթա տարուածները զերծ մնացին հայ ահաբեկիչների հետապնդումներից: Թալաաթը, Սաիդ Հալիմը, Բեհաէդդին Շաքիրը եւ նմանները տուժեցին այն փաստի պատճառով, որ կիսով չափ միայն ծանօթ էին անգլիական «արդարադատութեան» բնոյթին:

Այդ «արդարադատութիւն»-ը, ահա՛, ճգնելով գործուած եղեռնի բարոյական պատասխանատուութիւնը բարդել Գերմանիայի վրայ՝ յանդգնութիւն ներշնչեց Ֆերիդ փաշայի 1919թ. յուշագրով ոճրագործի յանցանքը պաշտօնապէս ընդունած թուրքերին, որ սրանք մեղադրեն ո՛չ միայն եւրոպական բոլոր պետութիւններին, այլեւ հենց իրանց զոհ հայերին:

Ռուսաստանի ահաւոր մեղսակցութիւնից եւ միւս Դաշնակիցների փարիսեցիական վարմունքից յետոյ յանցանքի ի՞նչ բաժին է մնում Գերմանիային: Դաշնակիցները ասում են, որ գերմանացիք, զինակցելով *«բարբարոս տաճիկներ»-ին,* բարոյապէս մասնակից դարձան հայկական եղեռնին: Բայց այստեղ ծագում են մի շարք հարցեր.

1) Ժամանակակից Եւրոպայում ո՞վ, ովքե՞ր են ստեղծել բարբարոսների, հակաքրիստոնէական, ոչ-արիական ոյժերի զինակցութեամբ քաղաքակրթութեան, քրիստոնէութեան, եւրոպական էութեան դէմ պատերազմելու նախընթացքը: Թողնենք քաղաքակրթութիւնը, եւրոպական էութիւնը. զուտ քրիստոնէական տեսակէտով, որքա՞ն նեռելի էր Խրիմի պատերազմը դեռ 1854-ին, երբ Անգլիան եւ Ֆրանսիան, միացած տաճիկներին, կռուեցին Ռուսիայի դէմ: Այնժամ «բարբարոս» չէի՞ն տաճիկները, այնժամ չտուժեցի՞ն Թուրքիայի ներքին քրիստոնեաները: Ովքե՞ր նախապէս հրահրեցին համիսլամական ոգին, ովքե՞ր դեղինների, սեւերի աջակցութեամբ այնքա՛ն յաճախ պատերազմներ մղեցին եւրոպական այս կամ այն ոյժերի դէմ եւ այդ այն օրերին, երբ գերմանացիք հպարտանում էին իմաստասիրական

մտածումի իրանց հանճարներով, իրանց մեծ բանաստեղծներով, իրանց գաղափարապաշտ բարոյագէտներով, իսկ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը՝ քաղաքական իրանց տիրակալութեամբ: Մի՞թէ պատմական իրողութիւն չէ, որ ժամանակակից Եւրոպայի մեծ ոյժերից Գերմանիան է ամէնից ուշ քաղաքականապէս հետաքրքրուել Արեւելքով: Դա չի՞ նշանակում, որ ամէնից քիչ էլ նա է պատասխանատու Արեւելքի քրիստոնեաների ողբերգութեան մէջ:

2) Անկասկած, տաճիկները շահագործեցին գերմանական ոյժի հմայքը: Բայց դրանք, մասնաւորապէս անցեալ դարի 60-ական թուականներից, քրիստոնեաների անվերջ կոտորածներ են սարքում: Գերմանիայի ազդեցութիւնը Թուրքիայում շեշտուեց 90-ական թուականների վերջից: Ովքե՞ր էին, ուրեմն, մինչեւ այդ հնարաւոր դարձնում քրիստոնեաների ջարդերը: Մենք տեսանք անգլիացի էլիոտները, Լայարդները, ռուս Լոբանովները, Նելիդովները: Ուրիշ ովքե՞ր էին սուլթանի հրահրիչները, խորհրդականները՝ բուլղարական թէ հայկական ջարդերի օրերին: Մենք տեսնում ենք ե՛ւ աւելի սարսափելին. հայկական Մեծ Եղեռնը սկսուեց 1915-ին, բայց նա շարունակուեց մինչեւ 1921 թուականը, այսինքն՝ Գերմանիայի պարտութիւնից մինչեւ երեք տարի յետոյ էլ: Ի՞նչ է հասկացւում սրանից: Դիցուք թէ 1915/18-ը գերմանացիք քաջալերեցին տաճիկներին, իսկ 1920թ. ջարդե՞րը՝ Կիլիկիայում եւ Հայաստանում, դրանից յետոյ յոյնեւհայ աղէ՞տը՝ Փոքր Ասիայում, երբ գերմանական ազդեցութեան ստուերն իսկ չէր մնացել Արեւելքում, երբ ո՛չ միայն հայերի, յոյների, այլեւ՝ թուրքերի եւ ամբողջ աշխարհի բախտը գտնւում էր Դաշնակիցների ձեռքում: Քրիստոնեաների կոտորածները Թուրքիայում սկսուել են գերմանական ազդեցութիւնից առաջ եւ շարունակուել սրանից յետոյ: Պատմական այս փաստից խղճմտանքի տրամաբանութիւնը կարող է ուրիշ շա՛տ եզրակացութիւններ հանել:

3) Անգլիական, ֆրանսիական թէ ամերիկեան պետական գործիչները, գրողները, հասարակական կարծիքը մեղադրում են գերմանացիներին, որ սրանք անկարեկիր մնացին հայկական ողբերգութեան հանդէպ, չմիջամտեցին, չսանձեցին թուրքերին: Ճշմարիտ չէ, որ այդ բանը չարեցին գերմանացիք, բայց ճշմարիտ է, որ նրանք չկարողացան վճռական լինել դէպի իրանց բարբարոս զինակիցը: Այդ սխալը պայմանաւորուեց այն բանով, որ գերմանացիքն էլ անծանօթ էին թուրքերի ներքին հաշիւներին, յետին նպատակներին: Հայկական եղեռնից յետոյ միայն նրանք հասկացան, որ թուրքերի զինակցութիւնը կամրջից անցնելու բարեկամութիւն է միայն: Անկեղծ եւ հաւատար-

մութիւնը գնահատող մարդիկ՝ նրանք թէպէտեւ երկար են ուսումնասիրում, բայց ամէնից շուտ էլ խաբւում են բարեկամութեան մէջ: Ուղիղ դատողութեան մէջ ուրիշ ո՛չ ոք է հաւասարւում նրանց, բայց հայերի նման, նրանց էլ յատուկ է շատ իմաստասիրողի մոլորանքը՝ եզրակացութեան խնդրում: Աւելի խորքի մարդ են նրանք, քան թէ ձեւակերպումի վարպետ, աւելի պատճառագէտ, քան թէ հետեւանքները կռահող: Ինչո՞ւ թուրքերը պիտի չկարողանային խաբել գերմանացիներին, երբ հայերին անգամ խաբեցին - այն հայերին, որոնք դարերով են ապրել նրանց հետ եւ պէտք է, որ ամէնից լաւ ճանաչած լինէին նրանց «սեւ հոգին», ինչպէս որակում է քիւրդ Շէրիֆ փաշան: Եղեռնից ազատուած մի հայ (Եփրատ Գազանճեան) գրում է ամերիկաբնակ իր եղբօր. *«Հիմա դու պիտի ասես՝ ինչո՞ւ ժողովուրդը չապստամբուեց: Որովհետեւ ժողովուրդը չգիտէր, որ այսպէս ամբողջը պիտի կոտորեն, որովհետեւ աշխարհի ստեղծումից ի վեր այսպէս բան չէր պատահել»…*: Երբ մինչեւ Մեծ Եղեռնը մի քանի ջարդեր ապրած, թուրքը վաղուց ճանաչող հայ ժողովուրդն է զոհ գնում իր այդ մոլորանքին, ինչո՞ւ եւ ինչպէ՞ս սպասել, որ գերմանացիները գուշակէին ամէն բան: Տաճիկները, անշո՛ւշտ, զինակցական պայմաններ ունէին Գերմանիայի հետ, բայց դա չի նշանակում, որ վերջինը կարող էր խառնուել նրանց ներքին գործերին: Այդ իրաւունքը, հետագային, ճակատագրի կողմից տրուեց յաղթական Դաշնակիցներին: Ի՞նչ արեցին սրանք. հայանպաստ ճառեր եւ հայաղէտ, թուրքանպաստ գործեր: Ինչ վերաբերում է կարեկցութեան, միջամտութեան, սանձումին՝ հայկական աղբիւրներն իսկ հաստատում են, որ այդ բաներում գերման սպաները չեն զլացել եռանդուն փորձեր կատարել, յաճախ անյուսօրէն տառապալից ապրումներով, ճիգերով: Նոյնն են արել գերման միսիոնարները, ուսուցիչները, որոնք իրանց հաւատակիցները մահմեդական ոսոխների սրից ազատելու գործում նուազ ջանքեր չեն թափել, քան՝ Հայաստանում գործող ամերիկացի իրանց պաշտօնակիցները: Նրանք կազմակերպել են նաեւ բողոքի գործը՝ Գերմանիայում: Եթէ Դաշնակիցների պարլամենտներում խռովալից ցոյցեր եղան, ապա՝ լուռ չմնաց ե՛ւ գերմանական Ռայխստագը: Եթէ անգլիական, ֆրանսիական, ամերիկեան քաղաքական, զինուորական, գրական գործիչները դատապարտութեան կամ դառնութեան խօսքեր ուղղեցին թուրք ոճրագործների հասցէին, ապա այդ բաներում նրանցից ետ չմնացին ե՛ւ գերման նախարարները, հրամանատարները, գիտնականները: Միայն մի բանում գերմանացիք ետ մնացին Դաշնակիցներից. սուտ յոյսերով հայերին խաբելու գործում:

4) Փաստ է, որ պատերազմի ժամանակ Թուրքիան իրան նետեց Գերմանիայի գիրկը, իսկ հայերին՝ Դաշնակիցների: Անգլիացիները, որոնք ամէնից աւելի ծանօթ էին Արեւելքի բոլոր առեղծուածներին, որով եւ՝ հայ-թուրքական կնճռի ծալքերին, չէին կարող չնախընմբռնել, որ թուրքերն այդ արուեստականութիւնը կատարում են հայերին ջնջելու նպատակով: Նրանք սքանչելիօրէն ծանօթ էին նաեւ ռուսների հակահայ քաղաքականութեան եւ ունէին պատմական փորձառութիւնը, թէ առանց նրանց լուռ կամ յայտնի մասնակցութեան՝ թուրքերն ո՛չ կը յանդգնեն, ո՛չ էլ կը յաջողուեն ոչնչացնել հայերին: Եւ վերջապէս, եւրոպական բոլոր ազգերից ամէնից աւելի նրանք են տուել երեւելի, բարձր դիրքի տէր հայասէրներ - Բայրոն, Գլադստոն, Լլոյդ Ջորջ, Լորդ Բրայս, Լինչ եւ շա՛տ ուրիշներ: Դա ասել է՝ որ անգլիացիները վայելում էին հայերի վստահութիւնը եւ համակրանքը: Բայց նրանք ո՛չ միայն չօգնեցին, այլեւ չզգուշացրեցին հայերին ո՛չ տաճիկներից, ո՛չ էլ ռուսներից: Դիցուք թէ՝ սկզբում խաբուեցին. բայց չէ՞ որ դէպքերի ընթացքին նրանք տեսան ո՛չ միայն թուրքերի ոճիրները, այլեւ՝ իրանց դաշնակցի դաւադիր գործերը: Ինչո՞ւ չփորձեցին սանձել գէթ ռուսական մութ ոյժերին: Ինչո՞ւ միայն Գերմանիայից էին պահանջում այդպիսի քայլ՝ թուրքերի նկատմամբ, երբ գիտէին, որ դա համազօր պիտի լինէր գերմանեւթուրք զինակցութեան խզումին: Անշո՛ւշտ, խղճմտանքի այդպիսի յաղթանակ, ոգու այդպիսի բարձր մի թռիչք, պատմութեան թէ յաւիտենականի առաջ, պիտի արժենար քաղաքական թէ ռազմական հազար յաջողութիւն: Բայց ուրիշից գերմարդկային անձնուիրութիւն պահանջողը պարտաւոր է՝ նա՛խ օրինակ տալ: Անգլիան չասեց Գերմանիային. բարեկա՛մ, երկուքս էլ կռւում ենք որպէս թէ քաղաքակրթութեան, մարդկայնական բարձր նպատակների համար, բայց մեր զինակիցները հասարակ ոճրագործներ են, հրաժարուենք նրանցից, ես՝ Ռուսաստանից, դու՝ Թուրքիայից: Այժմ էլ, նման շարժուձեւով կարելի պիտի լինէր կանխել Եւրոպայի նոր աղէտը, փրկել քրիստոնէութեան, արիական ցեղի հոգեւոր, բարոյական միութիւնը: Բայց մենք արդէն բարոյախօսում ենք, իսկ բարոյախօսութիւնն ո՛չ մի ներգործութիւն չունի այնտեղ, ուր քաղաքական սադրանքներն են կառավարում մարդկանց ճակատագիրը:

5) Թուրքիայում ոչնչացուեց քրիստոնեայ մի ժողովուրդ, որ միաժամանակ եւրոպական իդէալների դրօշակիրն էր Արեւելքում: Հայերի գոյութեան հարցը, ուրեմն, պէտք է հաւասարապէս շահագրգռէր Եւրոպայի բոլոր ազգերին: Բայց դրանում ամէնից աւելի նախանձախնդիր պէտք է լինէր մասնաւորապէս Գերմանիան, որովհետեւ

Արեւելքի ժողովուրդներից հայերի հետ է միայն, որ նա կնքել է զէնքի առաջին եղբայրակցութիւնը եւ պահել երկար ժամանակ, որովհետեւ Արեւելքում եւ Արեւմուտքում չկայ երկրորդ օրինակը, որ երկու ազգեր ոգով, արիւնով, պատմական նպատակով այնքա՛ն մօտիկ լինեն իրար, որքան հայն ու գերմանը: Դիցուք թէ՝ Ֆրիդրիխ Բարբարոսայի օրերը մոռացուել էին: Բայց գերմանացիները մի՞թէ չէին նկատել, որ այն օրերից, երբ իրանք Թուրքիայում դիրքեր գրաւեցին՝ ռուսներն աւելի՛ դաժանեցրին հակահայ իրանց քաղաքականութիւնը: Մի՞թէ չէին հասկացել, որ մտածումի թէ մշակութային-հոգեւոր արժէքների տեսակէտով՝ հայերը մինչեւ վերջ մնացին գերմանասէր, որ այնքան ժամանակ, որքան նրանք յոյս ունէին, թէ Գերմանիան կարող է քաղաքական ազդեցութիւն շահել Արեւելքում՝ նաեւ քաղաքականապէս նրանք գերմանահակ էին: Աւելին. հայերը կատարել են ամէն փորձ, որպէսզի հնարաւոր դարձնեն Գերմանիայի քաղաքական ազդեցութեան թափանցումը Արեւելք: Որպէս վաւերագիր՝ մենք բաւարար ենք համարում բերել պատմական հետեւեալ մի քանի փաստերը.

ա) Շա՛տ հին ժամանակներից մնացել է եւ սերնդից սերունդ մինչեւ մեր օրերն աւանդուել Դ. դարի հայոց ամենահռչակուած Հայրապետներից Ներսէս Մեծի անուան կապուած մի գուշակութիւն: Ժ. դարի հայ մատենագիրներից Մովսէս Երէցի գրքում ասուած է, որ մեծ Հայրապետը գուշակել է, թէ հայերը պիտի ենթարկուեն Արեւելքից եկած խժաբարոյ եւ վայրագօրէն դաժան մի ազգի լծին, բայց յետոյ Արեւմուտքից պիտի գան քաջակորով հռովմէացիները կամ ֆրանքները կամ արմանք (որ ասել է՝ ալամանք, այսինքն՝ գերմաններ) եւ վերականգնեն հայոց անկախութիւնը:

Որտեղի՞ց է վերցրել Մովսէս Երէցն այս պատմութիւնը, խաչակիրների արշաւանքի՞ն է վերաբերւում դա, որով՝ յետոյ է մուծուել նրա մատեանում, յայտնի չէ: Բայց պատմութիւնից ծանօթ է, որ Դ. դարում, Ներսէս Մեծի բարոյական հրամանատարութեան տակ, հայ հողի վրայ, Ձիրաւի դաշտում, հեթանոս Պարսկաստանի դէմ մղուեց քրիստոնէութեան համար յաղթական մի ճակատամարտ, որի վարիչներն էին հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնեանը, բիւզանդական զօրավար Տերենտիանոսը եւ ալամանաց իշխան Վոգեմարը: Անհաւանական չէ, որ արիաշունչ մեծ Հայրապետը, տեսնելով քրիստոնեայ գերմանացիների նուիրումը, քաջութիւնը եւ հարազատութիւնը՝ նրանց արժանի դարձնէր հայոց տեւական համակրանքին եւ այդ առիթով թողնէր կտակի արժէք ունեցող մի գուշակութիւն: Յամենայն դէպս՝ դարերով հայերի կողմից գուրգուրանքով եւ յոյսով աւանդուած այս պատմու-

թիւնն ինքնին անառարկելի վկայութիւն է նրանց խորին գերմանասիրութեան մասին:

բ) ԺԷ. դարի վերջերին եւ ԺԸ.-ի սկիզբներին, երբ Եւրոպայում սուր կերպով դրուած էր Հայաստանն իսլամական լծից ազատագրելու հարցը՝ հայերը ապագայ իրանց թագաւորութեան գահն առաջարկեցին ո՛չ այլ ոքի, քան՝ գերման իշխան Եոհան Վիլհելմին:

գ) ԺԸ. դարի վերջերին, երբ հենց գերմանացիների առաջարկով Հայաստանը վերականգնելու գործը վստահուած էր Ռուսաստանին եւ Կատարինէ Բ. կայսրուհին իշխան Պոտեմկինին նշանակում էր թեկնածու Ռուսաստանի թեւարկութեան տակ կազմուելիք թագաւորութեան՝ հայերը մշակում են մի դաշնագրութիւն եւ առաջարկում ռուսներին՝ ստորագրել: Այդ դաշնագրութիւնը, խմբագրուած հայոց Կաթողիկոսարանի, հայ իշխանների ցանկութեամբ եւ Յովսէփ Արքեպ. Արղութեանի ձեռքով, բաղկանում է երկու մասից եւ 38 յօդուածներից: Բ. մասի 20-րդ յօդուածում ասուած է. *«Եթէ թիւրիմացութիւն կամ տարակարծութիւն պատահի երկու ազգերի՝ ռուսաց եւ հայոց պետութիւնների միջեւ..., երկու կողմերն էլ պարտաւոր են իրանց գանգատներն ուղղել ամենայն փառքի արժանի Հռովմի, այսինքն՝ Գերմանիայի կայսեր եւ ենթարկուել նրա պատասխանին»*:

դ) Անթիւ են փաստերը, որ հետագային էլ եւ մինչեւ այժմ հայ խորհողութիւնը չի հրաժարուել աւանդութիւնից, որ հայ մտածումն ամենահարազատ կերպով հետեւում է գերման իմաստասէրների գաղափարապաշտական դպրոցին, որ հայ բարձր մտաւորականութիւնը, դեռեւս Դորպատի օրերից, անդուլ փորձեր է անում իր ժողովրդի վերածնութեան գործը կազմակերպել գերմանական յղացումների ազդեցութեան տակ:

Բայց թողնե՛նք այդ բոլորը: Մի՞թէ գերմանացիները հենց Հայկական եղեռնի նախօրէին չէին տեսել, որ իրանց տնտեսական թէ մշակութային կապերը՝ Թուրքիայի հետ, գտնւում էին առաւելապէս հայերի ձեռքում եւ հնարաւոր էին դարձել մասնաւորապէս նրանց շնորհիւ: Ամբողջ Արեւելքում հող էր գտել անգլեւամերիկեան, ֆրանսիական ազդեցութիւնը, բայց մի՞թէ կարելի էր չնկատել ե՛ւ գերման նորաբաց դպրոցների, որբանոցների ցանցը՝ Հայաստանի զանազան կողմերում եւ՝ այդ փաստից չեզրակացնել, որ միայն հայերի միջոցով հնարաւոր է ամուր եւ տեւական մի խարիսխ ապահովել Առաջաւոր Ասիայում: Լեպսիուսը բերում է բազմաթիւ փաստեր, որոնցից պարզօրէն հասկացւում է, թէ հայերին կոտորելով՝ թուրքերը նպատակադիր էին ազատուել ո՛չ միայն եւրոպական այս կամ այն ոյժի, այլ ընդ-

հանրապէս Եւրոպայի, որով եւ՝ Գերմանիայի ազդեցութիւնից: Վերջապէս, գերմանացիները ծանօթ էին, եթէ ո՛չ թուրքերի յետին մտքերին, գէթ՝ նրանց «ընդունակութիւններ»-ին: Զօրավար Լուդենդորֆը, որ շեշտում է, թէ հայերի կոտորածով Թուրքիան զրկուեց շինարար տարրից, մի տեղ խօսում է Կովկասի հում նիւթերի շահագործման հարցին կապուած թուրքական ցնորքի մասին եւ եզրակացնում. *«Որ դրանից օգուտ չկար գերմանական ռազմատնտեսութեան՝ այդ գիտէր ամէն ոք, որ ծանօթ էր թուրքերի գործ վարելու ընդունակութեան»* (անդ, էջ 500): Ո՛չ միայն պատմական յաւիտենականի, այլեւ պատերազմական վայրկեանի նկատումով իսկ՝ Գերմանիան շահ չունէր թուրքի նման ամէն տեսակէտով անընդունակ եւ կասկածելի մի զինակցի ձեռքով ջարդել տալ մշակութակիր եւ շինարար հայ ժողովուրդը:

Բայց եւ այնպէս, փաստ է, որ Գերմանիան էլ, ի վնաս իր իսկ հեռաւոր շահերի, թերացաւ հայ ժողովուրդը պատմութեան մեծագոյն եղեռնից փրկելու գործում:

Ինչպէ՞ս հնարաւոր դարձաւ ո՛չ մի արդարացում չունեցող այդ սխալը: Տասնամեակներից ի վեր (հայկական եղեռնից առաջ թէ մանաւանդ դրանից յետոյ) Գերմանիայում թէ հայկական շրջանակներում որոշ մարդիկ մութ աշխատանք են տանում: Ստայօդ լուրեր են տարածում նրանք՝ ձգտելով Գերմանիայում հայերին սեւացնել, վերջինների մօտ՝ գերմանացիներին: Ովքե՞ր են դրանք: Այլ մի առիթով մատնանշելով մութ այդ ոյժերին, Լորդ Բրայսն ասում է. *«...Բախտախնդիրներ, ոմանք ֆրանսիական, անգլիական, աւստրիական կամ գերմանական ազգութեան պատկանող, բայց մեծ մասով՝ առանց որեւէ մասնաւոր ազդեցութեան, լեվանտէններ, Թուրքիայի հաշուին վճարուած բախտախնդիրներ, որոնք սովորութիւն ունեն մտնել եւրոպական քաղաքականութեան մութ ճամբաները»...* (Viscount Bryce, ,,Contemporary Review", 1918-ի դեկտեմբերի թիւը): Ահա՛, Բրայսի որակումով այդ «վատշուէր արարածներ»-ն են, որ տարածում են հրեաների, թուրքական ծառայութեան մէջ գտնուած ազատ-որմնադրականների կողմից հայերի մասին թխուած առասպելները, որոնց երբեմն զոհ են դառնում անգամ գիտութեան մարդիկ: Բոլոր այդ նախապաշարումները հող գտան շնորհիւ տխուր ա՛յն իրողութեան, որ նախահիթլերեան Գերմանիայում զօրաւոր էր ոչ-արիական, հակաքրիստոնէական մութ տարրերի տնտեսական եւ քաղաքական ազդեցութիւնը: Հայերի համար աննպաստ տրամադրութիւնները պայմանաւորուեցին նաեւ այն բանով, որ նրանք, յանձին իրանց ընկերային

տիրող կազմակերպութիւնների, բնազդական թէ իմացական խորշանքով ժխտողական դիրք բռնեցին մարքսական նիւթապաշտական ուսմունքի դէմ, որով եւ՝ արժանացան ինչպէս ռուսական, վրացական, այդպէս էլ՝ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի պաղ վերաբերմունքին: Խորքով գաղափարապաշտ, բնութեամբ ներամփոփ ժողովուրդ՝ նրանք տկար գտնուեցին նաեւ քաղաքական պրոպագանդի գործում, ուստի եւ՝ չկարողացան յաղթահարել իրանց թշնամիների սադրանքները: Նոյնանման հոգեգծերի շնորհիւ, հաճախ, քաղաքականապէս տուժել են ե՛ւ իրանք՝ գերմանացիները: Եւ ահա ճակատագրի ամենադառն հեգնանքը. արիական ցեղի թշնամիների սադրանքերով Մեծ Գերմանիայում մոլորանք ստեղծուեց փոքրացած, բայց հնահռչակ մի ազգի հանդէպ, որի նման հարազատ զինակից ո՛չ ունեցել են, ո՛չ էլ կ'ունենան գերմանացիները Արեւելքում:

* * *

Փակում ենք խօսքը Հայկական Եղեռնի պատճառների մասին: Ոճիրը հնարաւոր դարձաւ թուրք ազգի եղեռնաբաղձ ոգու պատճառով: Լրացուցիչ շարժառիթներ էին թուրքերի համաթուրանական ցնորքը եւ նրանց ձգտումը՝ ազատուելու Եւրոպայի քաղաքական ազդեցութիւնից: Եւրոպական մեծ ոյժերից եւ ո՛չ մէկն է անմեղ: Ոճրակից է ռուս քաղաքականութիւնը: Նահատակների արիւնը կեղծ կարեկցանքով բարոյապէս շահագործելու տեսակէտով, մեղսակից են միւս Դաշնակիցները, ձեռնապահութեամբ՝ հայութեան թշնամիների կողմից մոլորանքի մատնուած գերման որոշ տարրերը: Կատարուածից չարաչար կերպով տուժեցին հայերը: Քաղաքակրթապէս վտանգուեց Եւրոպայի դիրքն Արեւելքում: Վատթարագոյն նախընթաց ստեղծուեց քաղաքական պատմութեան մէջ, թէ կարելի է ազգերի ոչնչացումով հայրենիքներ խլել: Ժամանակաւորապէս օգտուեցին թուրքերը եւ հակաարիական, հակաքրիստոնէական մութ բոլոր ոյժերը: Անիրաւութեան ամբիոնից, հայոց նահատակութեան առիթով, կեղծ դամբանականներ կարդացին Դաշնակիցները եւ քաղաքական իրանց յաղթանակի մէջ բարոյապէս աւելի քան տկարանալով՝ արդարացրին ոճիրը, ճանաչելով դահիճների ստեղծած «կատարուած իրողութիւն»-ը: Յաւիտենականի ճանապարհին, սակայն, միայն արդարների արիւնով գծուած նշանաքարն է մնում անխախտ:

«ԼՈԶԱՆ»-Ը

Եղեռնուած հայութեան արիւնը դեռեւս չցամաքած, Ռուսաստանում, 1917թ. փետրուարի վերջին, պատահեց աշխարհացունց դէպք: Խորտակուած գերմանական երկաթեայ բռունցքի հարուածներից՝ ռուսները փրկութեան ելքը տեսան ցարական իշխանութեան վերացման մէջ: Ռուսական զէնքը յաղթական էր միայն Հայաստանի ճակատում – հետեւանք ո՛չ միայն թուրքերի տկարութեան, այլեւ՝ սրանց դէմ վրէժի խանդով լցուած հայերի գերազանց նուիրումին եւ քաջութեան: Գերմանական ճակատում ռուսները մղում էին քաղաքական պատերազմ, Հայաստանում նրանք ունէին ցեղային խռովքով բռնուած մի դաշնակից, որ կռւում էր անօրինակ իր ողբերգութեան ոյժով: Անցնող Ռուսաստանն ո՛չ այդ դաշնակցի նահատակութիւնը հաշուի առաւ, ո՛չ իրաւունքները: Խորապէս հիասթափուած՝ հայերը թերահաւատութեամբ դիմաւորեցին յեղաշրջումը, թէպէտեւ նոր Ռուսաստանը ձգտում էր դիմագծուել որպէս մարդկայնական բարձր սկզբունքների մի առաքեալ: Սկզբում իշխանութեան գլուխ կանգնեց սոց. յեղափոխականների կուսակցութիւնը՝ գաղափարապաշտների մեծագոյն հոսանքը՝ ռուս իրականութեան մէջ: Իբրեւ հետեւանք աւելի գաղափարապաշտօրէն երանգաւորուած երկարամատեան իր աշխարհայեցողութեան՝ այս կազմակերպութիւնն էլ երկար պայքար էր մղել մարքսական միարմատական նիւթապաշտութեան դէմ, ուստի եւ՝ բարեկամական սերտ կապերի մէջ էր հայերի հետ եւ իւրացրել էր սրանց ազգային դատը: Կերենսկու հետ՝ կառավարութեան մէջ յայտնի դէմք էր նաեւ Միլիւկովը, որ թէ՛ ռուսական քաղաքական շահերի, թէ՛ հայասիրական նկատումներով՝ մարդկայնական բարձր գործ էր համարում Հայաստանի վերականգնումը: Նոր կառավարութեան, սակայն, պակասում էր վճռականութիւնը: Որպէս այլազան կուսակցութիւնների իրաւախոհութեամբ կազմուած մի մարմին՝ դա զուրկ էր գաղափարական միատարրութիւնից, նպատակի ընդհանրութիւնից, որով եւ՝ ազատօրէն գործելու ներքին վստահութիւնից: Թէպէտեւ գործակից իշխանութեան՝ սոցիալ-դեմոկրատները շարունակում էին խորացնել «տեսաբանական» երկուութիւնը, իսկ բոլշեւիկները ձգտում էին քաղաքական յեղաշրջումը վերածել ընկերայինի: Նոր Ռուսաստանը պառակտուած էր ներքուստ: Կերենսկին առաջնորդում էր գաղափարներով, բոլշեւիկները յենւում էին յոգնած,

բարոյալքուած զանգուածների պարտուողական տրամադրութիւնների վրայ: Ժողովուրդների հոգեւոր տեղատուութեան պահերին՝ նիւթապաշտներն աւելի՛ են հնարամիտ դառնում եւ վճռական: Հին աշխարհում անգլիացիներն էին հպարտանքով իրանց ոյժի գաղտնիքը տեսնում այն բանում, որ հասարակական իրանց կեանքի մեծ թէ փոքր խնդիրներում սուրբն էլ նոյնքան է վճռական, որքան սինլքորը: Ռուսներն անընդունակ չեն ծնունդ տալ գաղափարի սրբերի, բայց սրանց մի՛շտ էլ յատուկ է կրաւորականութիւնը: Շնորհիւ քաղաքականապէս անստեղծագործ այդ հոգեգծի՝ ռուսական գաղափարապաշտութիւնը շուտով բոլոր դիրքերը պիտի յանձնէր փոքրաթիւ բոլշեւիկներին: Հոկտեմբերեան յեղաշրջումը (1917թ.) գալիս էր հաստատելու, թէ պարտութիւնը, դժբախտութիւնը, տառապանքը քիչ դէպքերում միայն կարող են ազնիւ պտուղ հասունացնել: Մեծամասնականութեան յաղթանակը հետեւանք էր ռուս ազգի քաղաքական ոգու անկման եւ նրա գործերը պիտի կրէին բարոյական մահափորձերի բնոյթ: Այդ բոլորը ճակատագրականօրէն տխուր անդրադարձումներ պիտի ունենային դարերով իմաստի, բարոյական արժէքների դրօշի տակ պայքարած եւ էութեամբ խորապէս գաղափարապաշտ հայ նահատակ ազգի դատի վրայ: Նրա առաջ բացւում էր մաքառումների եւ յուսախաբութիւնների նոր, բայց կրկին արիւնոտ մի ճամբայ՝ «Լոզան»-ի ճամբան:

ՌՈՒՍԱԿԱՆ ՓԼՈՒԶՄԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Կերենսկու իշխանութեան օրօք թւում էր, թէ ծլում են հայ ազգի նոր կեանքի յոյսերը: Ռուսական ժամանակաւոր կառավարութեան մարտ 9-ի (1917թ.) որոշումով կազմուեց Անդրկովկասեան Առանձին Կոմիտէն («ՕԶԱԿոմ»): Բայց հայերին խանդավառեց ապրիլ 26-ի որոշումը, որով թուրքաց Հայաստանը զատւում էր Կովկասի վարչական թէ ռազմական շրջագծից եւ իբրեւ աշխարհագրական թէ քաղաքական առանձին միաւոր՝ անմիջականօրէն ենթարկւում կենտրոնական իշխանութեան: Նշանակուեց Հայաստանի ընդհանուր կոմիսար: Քաղաքացիական իշխանութիւնը փաստօրէն անցաւ հայերի ձեռքը: Սկսուեց երկիրը վերաբնակեցնելու տենդոտ աշխատանք: Ռուս կառավարութիւնը մտածում էր թուրքաց Հայաստանին ապահովել ինքնավարութիւն: Մինչեւ հաշտութեան խորհրդաժողովի գումարումը՝ ռուս զօրքը պէտք է մնար Հայաստան, հայերին մենակ չթողնելու նկատումով: Կառավարութիւնը յատուկ կարգադրութիւններ արեց, որ-

պէսզի Ռուսաստանում գտնուած հայ զինուորութիւնը Հայաստան տեղափոխուի: Յուլիսին արտօնուեց կազմել հայկական առանձին գնդեր, որոնց թիւը շուտով հասաւ 8-ի: Աւելի ուշ, դեկտեմբերին, կարգադրուեց ստեղծել հայկական զօրամարմին (կորպուս), որի հրամանատար նշանակուեց զօրավար Նազարբէգեանը:

Բայց մինչ այդ՝ դէպքերն արդէն ստացել էին տխուր ընթացք: Ձեռք բերելով իշխանութիւնը՝ բոլշեւիկները դէպի տուն հրաւիրեցին ռուս բանակը, որի քայքայումն սկսուեց դեռեւս հոկտեմբեր 20-ից: Դրա հանդէպ՝ խանգարուեց հայկական ոյժերի Ռուսաստանից Կովկաս տեղափոխելու գործը: Հայերին վիճակուեց փոքրաթիւ, դեռեւս կիսակազմակերպ իրանց ոյժերով բռնել մի ճակատ, որ Սեւ ծովից տարածւում էր մինչեւ Երզնկա, այստեղից՝ Մուշի եւ Բաղէշի մօտերով անցնում Վանի շրջանը եւ հասնում պարսկական սահմանագլուխը – մօտաւորապէս 600 քլմ. երկայնքով մի գիծ, որի վրայ թէ անմիջական թիկունքում ռուսները պահում էին շուրջ 400.000 զինուոր: Բոլշեւիկները տկարի իրանց դասալքումն արդարացրին այն խօսքով, թէ ճանաչելով Հայաստանի ինքնորոշման իրաւունքը՝ թոյլատրելի չեն համարում այդ երկիրը պահել ռուսական գրաւման տակ: Իրականում, գեղեցիկ այս խօսքով, նրանք թառամած մի ծաղկեփունջ էին դնում հայ ժողովրդի դագաղին:

Ռուսաստանից փաստապէս կտրուեց եւ Կովկասը, ուր նոյեմբեր 27-ին կազմուեց նոր՝ «ՕԶաԿոմ»-ին փոխարինող կառավարութիւն, այսպէս կոչուած «Անդրկովկասեան Կոմիսարիատ»-ը: Կայսրութեան փլուզումն երեւան հանեց Կովկասի ժողովուրդների ազգային նպատակների սուր հակամարտութիւնը: Մահմեդականները՝ տարուած Թուրքիան Կովկասում տեսնելու երազից, պատրաստւում էին թիկունքից զարկել հայերին: Սրանք իրանց մահն էին տեսնում թուրքական առաջխաղացման մէջ, ուստի՝ ձգտում էին մի կողմից թուրքաց Հայաստանի դիրքերը պահել, միւս կողմից՝ Կովկասի մահմեդականներին սանձել: Օգտուելով հայերի եւ մահմեդականների խոր այս հակամարտութիւնից՝ վրացիք ղեկավար դիրք ձեռք բերեցին Անդրկովկասի կառավարութեան մէջ: Ի դժբախտութիւն Կովկասի քրիստոնէութեան ընդհանուր դատի՝ հայերն ու վրացիները չկարողացան անկեղծ համագործակցութեան ելք գտնել: Վրաց սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխները ճառեր էին խօսում «*գերման իմպերիալիզմի*» դէմ, բայց գործակցում էին թաթարների հետ: Նրանք հայերի հետ էին այն չափով, որքան յոյս ունէին, թէ սրանք պիտի յաջողուեն կասեցնել թուրքական արշաւը: Այլապէս, նրանք մտահոգ էին Անդրկովկասեան

նաւի խորտակման դէպքում՝ փրկել վրացական մակոյկը: Հայերն ու վրացիները գործեցին ճակատագրական երկրորդ սխալը, որ Երզնկայի զինադադարից (5 դեկտ. 1917թ.) անմիջապէս յետոյ չդիմեցին Գերմանիայի միջամտութեան կամ օգնութեան: Թուրքերն օգտագործեցին այս զինադադարը քայքայուած իրանց ոյժերը վերակազմելով եւ հայկական թիկունքում մահմեդականների ապստամբութիւններ հրահրելով:

Ռուսական բանակի քայքայումից եւ տաճիկների սերմանած համաթուրանական գրգռութիւններից յետոյ՝ Անդրկովկասի մահմեդականների ընդվզումն անխուսափելի էր: Անդրկովկասում նրանք կազմում էին փոքրամասնութիւն, բայց առանձին-առանձին վերցրած՝ գերազանցում էին քրիստոնեայ հայերին եւ վրացիներին: Աւելի վատ, որ երկու այս ժողովուրդներն ընդունակ չեղան օգտուել անցեալի լաւ դասերից եւ բարոյական իրանց միութիւնը վերածել քաղաքական գործակցութեան: Վրաստանում մարքսականութիւնն ստացել էր ազգային դաւանանքի բնոյթ: Նիւթապաշտութեան է յատուկ ներկայից օգտուելու ճարպիկութիւնը, բայց նաեւ հեռաւորի, յաւիտենականի անտեսումը: Վրացիք զգում էին, թերեւս, որ առանց զօրաւոր Հայաստանի, ինչպէս անցեալում, այդպէս էլ ապագային՝ չի կարող լինել Վրաստան: Բայց որպէս սոց. դեմոկրատներ՝ նրանք առաջին գծի վրայ էին դնում ներկայի շահագրգռութիւնները: Վրաստանում իշխում էր հայկական դրամատիրութիւնը, ազգագրօրէն էլ առաւելապէս հայկական էին Թիֆլիս քաղաքն եւ հարաւային գաւառները: Այս իրողութիւններն առիթ էին ծառայում, որ մարքսական վրացիներն հակասութիւններ, անհերդաշնակութիւններ տեսնեն եւ հայերի ազգային, տնտեսական թէ քաղաքական շահերի միջեւ: Այս հաշիւները նրանց աչքում փոքրացնում էին տաճկական վտանգի ծաւալը: Նրանք մտածում էին նոյնպէս, որ բարեկամական կապեր պահելով թաթարների հետ՝ տաճկական ներխուժումի դէպքում, փրկուելու են ոչնչացումից: Ուստի՝ հայ-թաթարական լարուածութեան հանդէպ նրանք բռնեցին «չէզոք»-ի, անզօր «հաշտարար»-ի դիրք, գիտնալով հանդերձ, որ դրանով նպաստում են Անդրկովկասի քայքայման եւ թուրքերի առաջխաղացման:

Բայց մահմեդականների խռովութիւնները հեշտացան մասնաւորապէս ռուսների շնորհիւ: Դէպի տուն վերադարձող բարոյալքուած, ամբոխացած սպաներն ու զինուորները չնչին գներով թէ ձրիապէս մեծ քանակութեամբ զէնք եւ ռազմամթերք մատակարարեցին մահմեդականներին, որոնք սպառազինուելով՝ իրանց խժդժութիւնների առաջին

փորձերը կատարեցին հենց ռուսների գլխին: Նրանք վտանգեցին հաղորդակցութեան մի քանի կարեւոր գծերը, շատ տեղերում պաշարեցին գնացքները, զինաթափեցին ռուս զօրախմբերին եւ շատ դէպքերում էլ՝ զազրելի պղծումներով, տանջանքներով ոչնչացրին նրանց: Յունուար 8-10-ը (1918թ.) զանգուածային ահաւոր եղեռնագործութիւն տեղի ունեցաւ Շամքորի կայարանում, ուր կանգ էին առել ռուս զինուորներով, կանանցով, երեխաներով բեռնաւորուած բազմաթիւ գնացքներ: Սկզբում՝ ռուսները դիմադրեցին, բայց ամէն կողմից պաշարուած (կողոպուտից բաժին ստանալու յոյսով՝ թիկունքից զարկեցին նաեւ վրացիք), անյոյս եւ անօգնական, նրանք հաւատացին զինաթափութեամբ փրկել իրանց կեանքը եւ յանձնուեցին ճակատագրին: Թաթարները, սակայն, բառի իսկական իմաստով մերկացրին նրանց, ենթարկեցին ընդհանուր անարգանքի եւ ոչնչացրին՝ մորթելով: Հազարաւոր այս անբախտների դառն վախճանից ցնցուեցին Անդրկովկասի քրիստոնեաները: Հայերը չէին կարող մարսել քրիստոնեայ մի ազգի խորտակուած զաւակների անարգալից այս նահատակութիւնը՝ թաթարների ձեռքով: Քննադատութեան եւ բողոքի ձայներ բարձրացան ե՛ւ Վրաստանում, ուր Զուղելիին կատարուած ոճրագործութեան մասին ասում էր. *«Ինչ-որ զարշելի բան էր տեղի ունենում»*: Նա մեղադրում էր վրաց սոց. դեմոկրատիայի գլխաւոր առաջնորդներից Ռամիշուիլուն, որ Աբխազաւայի նման մարդկանց միջոցով, վրացիներին յանցակից էր դարձրել զազրելի մի ոճիրի:

Շամքորի յաջողութիւնը թեւաւորեց մահմեդականներին եւ աւելի բարդացրեց նրանց եւ հայերի արդէն լարուած յարաբերութիւնները: Շարժումներն ստացան տարերային բնոյթ, եւ, յունուարի կէսերից, Անդրկովկասի մի ծայրից միւսը բռնկուեց հայ-թաթարական կատարեալ մի պատերազմ: Բոլոր նշաններից երեւում էր, որ մահմեդականներին խնդիր էր տրուած վտանգել այն գծերը, որոնցով հայերը կարող էին զօրք հասցնել թուրքաց Հայաստան: Նրանք կտրեցին Մակու-Շախթախտ, Զուլֆա-Երեւան, Բագու-Թիֆլիս գծերը: Լարուած դրութիւն ամէն տեղ եւ բուռն կռիւներ Նախիջեւանում, Շարուրում, Սուրմալուում, Կողբում, Զանգիբասարում, Բորչալիում, Կարսի շրջանում, Շամախիում, Նուխիում, Բագւում եւն. եւն.: Երեւանի նահանգում թաթարներին գործակցում էին ե՛ւ քիւրդերը: Ձերծ զինուորագրութիւնից՝ մահմեդականներն ունէին մարդկային մեծ պահեստ եւ տասնեակ հազարաւոր կռուողներ էին ոտքի հանել: Բայց եւ այնպէս, հայերը կարողացան ջախջախել թուով գերազանց թշնամուն, իսլամ բնակչութիւնից մաքրել մի քանի գաւառներ եւ բանալ հաղորդակ-

ցութեան գծերը: Շարուրի շրջանում, Սադարակ գիւղի մօտ, նրանք փրկեցին նաեւ մահմեդականների կողմից պաշարուած եւ օրհասօրէն դիմադրող ռուսական մեծ մի զօրամաս (Կուբանեան 2-րդ զօրաբաժինը), որին սպառնում էր Շամքորի տխուր ճակատագիրը:

ԹՈՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ

Այս բոլորը, սակայն, կատարուեց ի վնաս թուրքաց Հայաստանի պաշտպանութեան գործի: Երկու ամիս տեւեց Անդրկովկասի մահմեդականների յաղթահարումը (Բագւում նրանք խորտակուեցին մարտին), մինչդեռ ապստամբութեան առաջին իսկ օրերից տաճկական բանակը թուրքաց Հայաստանում անցել էր ռազմական գործողութիւնների: Հայերը չկարողացան ճակատներ հասցնել իրանց իրական ոյժերի ո՛չ իսկ մէկ տասներորդականը (մօտ 100.000 զինուոր մնացել էր Ռուսաստան: Երեւանի գրեթէ ամբողջ զօրքը զբաղուած էր թիկունքի խռովութիւնները սանձելու գործով. Բագւում սպասում էին 12.000 հայ զինուորներ, մինչդեռ թուրքաց Հայաստանի ընդարձակ ճակատի վրայ գործում էին հազիւ 15-20 հազար կռուողներ): Հոգեբանական տխուր ներգործութիւն էր արել ե՛ւ ռուսական բանակի քայքայումը, մանաւանդ բացարձակ, անյոյս մենակութիւնը:

Տաճիկները յարձակումի անցան Ախլաթի, Վանի, Երզնկայի եւ Բաբերդի ուղղութիւններով: Ախլաթի գծի վրայ, յունուարի կէսերից մինչեւ փետրուար 27-ը (Կարինի անկման օրը), Սմբատի զօրախմբերը կատաղի դիմադրութեամբ յետ մղեցին թշնամու բոլոր յարձակումները: Վանի ուղղութեամբ էլ թուրքերը չունեցան յաջողութիւն: Բայց հայերից տասնապատիկ ոյժերով նրանք գրոհեցին Երզնկան, ուր Մուրադը, մի շարք կատաղի հակայարձակումներից յետոյ, յունուար 31-ին հարկադրուեց դիմել նահանջի: Երկրորդ անգամն էր, որ դաժան ճակատագիրն ոգու եւ զէնքի այս հսկային պարտադրում էր ոդիսական արկածներով լի մի նահանջ (1915թ. հայկական Մեծ Եղեռնից յետոյ, Մուրադը փոքրաթիւ իր կռուողներով Սեբաստիայի լեռներից իջաւ Սամսոնի մօտերը եւ այստեղից Սեւ ծովի վրայով հասաւ Բաթում): Բարձր Հայքի սաստկաշունչ ձմրան, Երզնկայից մինչեւ Կարին, նա պէտք է կտրէր 170 քլմ. ամայացած մի տարածութիւն, պիտի անցնէր Դերսիմի քիւրդերի կողմից բռնուած Շողանի ահարկու կիրճերից՝ իր հետ տանելով թուրքական սրից նորոգ ազատուած, տանջահար եւ ուժասպառ հազարաւոր կանանց եւ երեխաների մի բազմութիւն: Մաքառելով բնութեան արհաւիրքների, ինչպէս եւ թիկունքից թէ կողե-

րից անդադար յարձակումներ գործող թշնամու դէմ՝ 12 օրից նա հասաւ Կարին: Ժողովրդի մեծ մասը եւ զօրքի 40%-ը ծանրապէս վնասուել էին ցրտահարումից եւ ձմէթից: Փետրուար 3-ին ընկաւ ե՛ւ Բաբերդը, որի գաղթականութիւնը նոյնպէս բարոյալքիչ մի վիճակով թափուեց Կարին: Բայց այս բոլորը դեռ ոչինչ. հրամանատար Անդրանիկն ապաւինած առասպելական իր քաջութեան եւ հմայքին՝ հաւատում էր տաճիկներին ջախջախել Կարինի ամրութիւնների առջեւ: Եւ իրո՛ք, իրան յատուկ մի շարք խիզախ հակայարձակումներով, որոնց ընթացքին սուրը քաշած խոյանում էր զօրքի առջեւից, նա կարողացաւ կոտրել տաճիկների յարձակողական թափը: Բայց շուտով տարածուեցին աղիտաւոր, հոգեքանդ լուրեր: Հայաստանի անկախութիւնը յարգելու պատրուակով ռուս բանակը քայքայած եւ հայերին մենակութեան ողբերգութեան մատնած բոլշեւիկները, հեռաւոր Բրեստ-Լիտովսկում, իրաւունք էին համարել ո՛չ միայն Թուրքիայի հայկական նահանգները, այլեւ՝ Կարսը, Արդահանը եւ Բաթումը զիջել տաճիկներին: Նոյնքան բարոյալքիչ էր ե՛ւ Թիֆլիսի հայ թէ վրացի քաղաքագէտների կեցուածքը: Փոխանակ ժողովրդին կռուի մղելու՝ նրանք (մասնաւորապէս վրացիները) դերասանական ճառեր էին ասում փետրուար 10-ից բացուած Անդրկովկասի պարլամենտում («Սէյմ»): Սէյմի փետր. 16-ի նիստում, թաթար իրանց պաշտօնակիցների, այսինքն՝ Թուրքիայի գործակալների մասնակցութեամբ, նրանք մշակեցին հաշտութեան պայմանները - Անդրկովկասը բաւարարւում է 1914թ. ռուս եւ թուրք սահմանագծով, իսկ թուրքաց Հայաստանի համար պահանջւում է *«ինքնավարութիւն՝ օսմանեան պետականութեան շրջանակներում»*:

Երկու որոշումներն էլ (Բրեստի թէ Սէյմի) ծառայում էին հայկական դիմադրութիւնը հոգեբանօրէն կազմալուծելու գործին: Ճնշող էր մանաւանդ Բրեստը: Հզօրների անիրաւութիւնը բարոյալքում է փոքր ժողովուրդներին, որքան էլ սրանք հայրենիքի եւ արդարութեան համար քաջաբար մեռնել գիտենան: Փետրուար 22-ից Կարինի հայկական ոյժերի դառնութիւնն աստիճանաբար վերածւում էր հոգեկան ծանր տագնապի եւ յանգում խոր յուսալքումի: Սպաներից շատերը տրամաբանում էին՝ Ռուսաստանը կործանուած, բոլշեւիկները՝ դաւաճան, Անգլիան եւ Ֆրանսիան՝ հեռու կամ անտարբեր, Գերմանիան՝ տաճիկների զինակից, իսլամական ամբողջ շրջապատը՝ թշնամի, մեր ոյժերը՝ փոքրաթիւ եւ ցրուած: Մտածելով այդպէս, նրանք յանգում էին տխուր եզրակացութեան՝ աշխարհում յաղթում է զօրաւորը, բայց առանց զինակիցների՝ ոչի՛նչ է նոյնիսկ ամենազօրաւորը: Առանց այն

էլ Կարինի հայկական ոյժերը չնչին էին՝ մի քանի հազար միայն: Օգնութեան յոյս չկար անգամ Երեւանից, որովհետեւ այդ օրերին թաթարական խռովութիւնները հասել էին ծայրագոյն կէտին: Այդ պայմաններում զուր պէտք է անցնէին զօրավար Անդրանիկի հերոսական ճիգերը. նրա դիւցազնական ոգին կորցրել էր նախկին վարակչականութիւնը: Վերջին օրերին Կարինի հռչակաւոր ամրոցներից գործում էին միայն մի քանի մարտկոցներ: Իսկ Անդրանիկի օրհասօրէն խելայեղ հակայարձակումներին՝ մասնակցում էին միայն մի քանի հարիւր կտրիճներ: Փետր. 27-ին (մարտ 12) ընկաւ Կարինը: Հայ զօրքի հետ՝ տասնեակ հազարաւոր գաղթականներ ուղղուեցին դէպի Սարիղամիշ: Հրահանգ տրուեց լքել ե՛ւ Ախլաթի ճակատը, ուր հայ զէնքը մնացել էր յաղթական: Օրերի տաժանելի ճամբորդութեամբ, ձիւնադէզ լեռներից եւ կիրճերից անցնելով՝ Ալաշկերտ հաւաքուեցին Ախլաթի, Խնուսի, Բուլանուխի, Մանազկերտի ոյժերը եւ տասնեակ հազար գաղթականները: Մարտ 18-ին լքուեց ե՛ւ թուրքաց Հայաստանի այն օրերի ամենաշէն այդ հովիտը: Գաղթի հսկայական կարաւանները կրկին բռնեցին Արարատեան աշխարհի ճամբան: Վասպուրականի հայկական զօրամասերը, սակայն, անգլիական ոյժերին միանալու նպատակով, վերցրած քրիստոնեայ բնակչութիւնը (հայ եւ ասորի), ուղղուեցին դէպի Պարսկաստան: Հաւատացած, որ հասնելով անգլիացիներին՝ արագացնել կտան օգնութիւնը Հայաստանին, նրանք կտրեցին ահագին տարածութիւններ, յաղթահարեցին բոլոր դժուարութիւնները, վտանգները, շա՛տ յաճախ ծանր կռիւներով մաքրեցին իրանց ճամբան եւ մահմեդական ծովի միջից՝ հասան Միջագետք: Անգլիացիները, թերեւս, հիացան նրանց քաջութեամբ կամ գնահատեցին նրանց նուիրումը, բայց օգնութեան չեկան Հայաստանին:

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ «ՃԱԿԱՏ»

Կարինի անկումը խանդավառեց տաճիկներին, թէպէտեւ հայկական թիկունքում ճնշուել էր իսլամական ապստամբութիւնը: Զուր անցան Սէյմի ճիգերը՝ հաշտութիւն կնքելու: Անդրկովկասի պատուիրակութիւնը, վրացի Չխենկելիի նախագահութեամբ, Տրապիզոն ժամանեց փետրուար 23-ին: Տաճկական պատուիրակութիւնը, սակայն, ներկայացաւ միայն փետր. 27-ին, այսինքն՝ շատ հասկանալի պատճառներով, Կարինի անկման օրը: Խորհրդաժողովը պաշտօնապէս բացուեց մարտ 1-ին: Տաճիկները պահանջեցին Բրեստ-Լիտովսկի դաշնագրով իրանց զիջուած Կարսի, Արդահանի եւ Բաթումի շրջանները:

Անդրկովկասցիները, այսինքն՝ հայերն ու վրացիները մերժեցին, որով՝ բանակցութիւններն արդիւնք չունեցան եւ հայ-թուրքական պատերազմը շարունակուեց: Սարիղամիշի մօտերը 20 օր անընդհատ մղւում էին կատաղի կռիւներ: Երկուստեք հասնում էին նոր ոյժեր: Զօրավար Նազարբէգեանը, սակայն, ծրագրել էր վճռական ճակատամարտ տալ Կարսում: Վրացիները պէտք է պաշտպանէին Բաթումը: Մարտ 31-ին Սէյմը ռազմաշունչ կոչ ուղղեց Անդրկովկասի ժողովուրդներին. *«Հնչել է ժամը…: Մեզանից պահանջում էին ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, որ կնքուել է առանց Անդրկովկասի ժողովուրդների գիտութեան, մի դաշնագիր, որ այժմ Ռուսաստանում չի ճանաչում ո՛չ մի մարդ, որի համար թանկ է հայրենի երկրի ազատութիւնն ու պատիւը: Մեզանից պահանջում են մեր լաւագոյն բերդը՝ Կարսը եւ մեր ամենալաւ նաւահանգիստը՝ Բաթումը: Թուրքերի նպատակն է… խեղդել եւ ստրկացնել Անդրկովկասը:… Կանգնեցնել նրանց՝ կարող ենք միայն զէնքի ոյժով… Ի զէ՛ն, դէպի՛ ճակատ ամէնքդ»…*

Հայերն ընդունում էին, որ Կարսում ամէն ինչ ամուր է: Եւ իսկապէս, բերդի ռազմատեխնիքն սքանչելի էր, զօրքի տրամադրութիւնը՝ բարձր, զինուորական պատկառելի ձիրքերի տէր հրամանատար Նազարբէգեանը՝ վճռական: Վրացի գործիչներն էլ խանդավառ էին թւում, անգամ Ժորդանիան, զինուորական տարազ հագած, եռանդով անցնում էր Թիֆլիսի փողոցներից: Բայց այս բոլորը տեւեց միայն կէս ցերեկ եւ մի գիշեր: Ապրիլ 1-ին, առանց որեւէ դիմադրութեան, վրացիները Բաթումն յանձնել էին տաճիկներին, որոնք ոտքի հանելով Աջարիայի եւ Ախլցխայի վրացացեղ մահմեդականներին՝ շտապ կերպով առաջանում էին դէպի Աբաս-Թուման, անգամ Օզուրգետի: Յայտնի էր, որ վրացիները չէին ուզում կամ չէին կարող կռուել: Միայն Չոլոքի մօտ նրանք յաջող մի դիմադրութիւն ցոյց տուին: Տխուր այդ պայմաններում վրաց գործիչներին մնում էր կրկին հագնել դիւանագէտի տարազը եւ թուրքերի պահանջներին ընդառաջելով՝ փրկել Վրաստանը: Թուրքերի համար էականը Կարսի յանձնումն էր: Առաջանալով դէպի Վրաստանի կենտրոնները՝ նրանք ձգտում էին վրացիներին հաշտութեան մղել, հայերին ի սպառ կղզիացնելու եւ նրանց թիկունքը հիւսիսից վտանգելու նպատակով: Եւ իսկապէս, վրացիներին այլեւս չէր հետաքրքրում ո՛չ Անդրկովկասի միութիւնը, ո՛չ հայերի ճակատագիրը, ո՛չ էլ այն փաստը, որ Կարսում հայ զօրքը կռւում էր հերոսաբար եւ մասնաւորապէս Մազրայի մօտ ջախջախիչ հարուածներ էր հասցրել տաճիկներին: Դէպքերի տրամաբանութիւնից եզրակացւում է, որ թուրքերի սպառնալիքի տակ՝ վրացիները մղուեցին

իրանց փրկութիւնը տեսնել Կարսի յանձնումի գործում տաճիկներին նպաստելու մէջ: Ապրիլ 10-ին Անդրկովկասի կառավարութեան անունից հրահանգներ են հասնում Կարս՝ պարպել բերդաքաղաքը եւ անցնել Բրեստի դաշնագրով որոշուած սահմանագիծը: Երկու ամբողջ օր զուր են անցնում զօրավար Նազարբէգեանի փորձերը՝ կապուելու կառավարութեան հայ անդամների հետ: Ապրիլ 12-ին նա դատարկեց Կարսը: Ալեքսանդրապոլից միայն Զօր. Նազարբէգեանը կարողացաւ կապուել Թիֆլիսի հայ ղեկավարների հետ եւ հասկանալ, որ ինքը զոհ է դարձել վրացիների նիւթած նենգադաւ խաղին: Ահաւոր էր հայերի դառնութիւնը, ցասումը եւ բարոյալքումը: Խզուեց հայ-վրացական բարեկամութիւնը: Բայց վրացիների համար դա արժէք չունէր այլեւս. նրանք ապահովուել էին թուրքական վտանգից:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԵԱՆ ՅՈՅՍԸ

Մայիս 11-ին Բաթումում բացուեց հաշտութեան խորհրդաժողովը, որին մասնակցեց եւ գերմանական մի պատուիրակութիւն՝ զօրավար ֆօն Լոսովի գլխաւորութեամբ: Առաջին իսկ վայրկեանից պարզուեց, որ տաճիկներն իրանցն են համարում Կովկասի մահմեդական շրջանները, վրացիներին զիջում են միայն մարդկային պարզ գոյութեան իրաւունքը, իսկ հայերին կամենում են միայն մի բան՝ ոչնչացնում: Մայիս 12-ին Զօր. ֆօն Լոսովը հեռագրում է Բերլին. *«Թուրքերի ամէն չափ ու սահման անցած պահանջները...աղաղակող կերպով խախտում են Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը եւ նպատակ ունեն բնաջնջել հայերին՝ Անդրկովկասում: Այսօր երեկոյեան թուրքերը վերջնագիր ներկայացրին, որ թոյլ տրուի իրանց զօրքերին Ալեքսանդրապոլի վրայով Ջուլֆա անցնել եւ այդ մասին ոչինչ յայտնեցին ինձ: Ես բողոքեցի նման ընթացքի դէմ»*: Այդ վերջնագիրն երեւի տրուել էր Բաթում գտնուող Անդրկովկասեան պատուիրակութեան: Ալեքսանդրապոլի հայկական ոյժերի հրամանատարութիւնը միայն մայիս 15-ին թուրքերից ստացաւ թուրքերէն լեզուով մի գրութիւն, որի թարգմանութիւնը կատարելու ժամին՝ արդէն սկսուել էր յարձակումը: Անակնկալի եկած հայ զօրքը նահանջեց: Խորտակումն ու յուսալքումը կատարեալ էին: Հարիւր հազարաւոր գաղթականներ թափուեցին Արարատեան դաշտ եւ Փամպակի կիրճեր: Օայր տուեց սովը: Հայ ժողովուրդը դատապարտուած էր մահուան:

Մայիս 19-ին ֆօն Լոսովն առաջարկեց իր միջամտութիւնը, վրացիքն ու հայերն ընդառաջեցին ուրախութեամբ. թաթարները հա-

մակերպուեցին դժկամօրէն: Մայիս 22-ին հայերը պաշտօնական դիմում արեցին Զօր. ֆօն Լոսովին՝ խնդրելով Գերմանիայի հովանաւորութիւնը: Բայց թուրքերը բացարձակապէս ընդդիմացան Գերմանիայի միջամտութեան: Վրացիներից նրանք պահանջում էին յայտարարել իրանց երկրի անկախութիւնը: Նոյնը պէտք է անէին թաթարները: Անդրկովկասի ձեւական միութիւնը քայքայելով՝ նրանք ձգտում էին կղզիացնել եւ ոչնչացնել հայերին: Մայիս 25-ին ֆօն Լոսովն յայտնեց, թէ իր ստացած տեղեկութիւններից երեւում է, որ Անդրկովկասի Հանրապետութիւնը գտնվում է քայքայման ընթացքում, որով՝ ինքը հեռանալու է Բաթումից: Գերմանացիները յաջողել էին թուրքերի ճիրաններից փրկել միայն Վրաստանը: Ֆօն Լոսովը հեռացաւ վրացիների հետ՝ իր նաւում տեղ տալով նաեւ հայ պատուիրակներին, որոնք Բերլին գնալով պիտի խնդրէին Գերմանիայի միջամտութիւնը: Մայիս 26-ին՝ վրացիք, մայիս 27-ին՝ թաթարները յայտարարեցին իրանց անկախութիւնը: Հայաստանում մղւում էր մահու եւ կեանքի օրհասական կռիւ:

ՄԱՅԻՍԵԱՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԸ

Պարսկաստանում անգլիացիների դէմ ճակատ բանալու պատրուակով թուրքերը մի գծով շարժւում էին դէպի Երեւան, միւսով՝ դէպի Թիֆլիս-Գանձակ երկաթուղագիծը: Հայերն ու ֆօն Լոսովն սկզբից իսկ գիտէին, իսկ բոլոր գերմանացիները հետագային համոզուեցին, որ նրանց միակ նպատակը հայերի ոչնչացումն էր եւ ո՛չ թէ ինչ-որ ճակատի կազմակերպում անգլիացիների դէմ: Մայիս 20-ին թուրք առաջապահներն երեւացին Սարդարաբադի մօտերը: Վտանգուած էր էջմիածինը, քրիստոնէութեան առաջին տաճարը եւ հայ ազգի հոգեւոր-բարոյական կեանքի դարաւոր խորհրդանշանը: Ղօղանջում էին զանգերը: Նման ցնցող ահակոչ դարերից ի վեր չէր լսուել անգամ արիւնների աշխարհ Հայաստանում: Հայոց Կաթողիկոսը հսկում էր կատարում: Երբ Հայրապետական թափօրը տաճարից դուրս գալով ուղղւում էր դէպի Վեհարան՝ հազարաւոր բազմութիւնը լսում էր Գարեգին Եպիսկոպոսի ճառը, եւ նրա հետ՝ մոլեգնօրէն աղաղակում. *«Դէպի՛ նոր Աւարայր»* (Ե. դարի հայոց կրօնական մեծ պատերազմի թատերավայրը): Նոյնն էր կատարւում ե՛ւ Դիլիջանի եկեղեցու բակում, ուր ծերունի զօրավար Նազարբէգեանը խեղդող արցունքով մարտի հրաւէր էր կարդում իր բանակին եւ Գ. Նժդեհը ցնցող իր ճառով բորբոքում էր հայ զօրքի խանդը:

Սկսւում էր հայոց անօրինակ օրհասականը: Արարատեան բանակի հրամանատար Զօր. Սիլիկեանն իր ոյժերը բաժանելով 2 մասի՝ Աբարանի ճակատի ղեկավարութիւնը յանձնեց Դրոյին: Սարդարաբադում մայիս 21-22-ը մղուեցին հետախուզական կռիւներ: Մայիս 23-ին հայերն անցան յարձակումի: Թուրքերը դիմադրում էին կատաղիօրէն, յաճախ անցնելով հակայարձակումի: Յաջորդ օրը, սակայն, նրանք կատարելապէս ջախջախուեցին: Հայերը կրնկակոխ հետապնդում էին խուճապօրէն փախչող թշնամուն, խլելով բազմաթիւ զոհեր: Մայիս 23-ից կատաղի եւ հայերի համար յաջող կռիւներ մղուեցին եւ Աբարանի ճակատում, ուր թշնամին մի քանի օր դիմադրելուց յետոյ՝ դիմեց անկարգ փախուստի:

Արիւնահեղ ճակատամարտ մղուեց Փամպակի կիրճում, Ղարաքլիսի մօտերը, ուր Զօր. Նազարբէգեանի հրամանով, Գ. Նժդեհի զօրամասը, մայիս 24-ին, սկսեց կռիւը, որ յաջորդ օրը, նոր ոյժերի ժամանելով, վերածուեց ընդհանուր յարձակումի: Թուրքերը, ջարդուած, նահանջեցին դէպի Համամլու: Չորս օր քաջութեան պանծալի գործեր կատարուեցին այդտեղ: Հայ զօրքն անընդհատ գրոհում էր թուով գերազանց թշնամու դիրքերը: Թիկունքից սպասւում էր Անդրանիկի հարուածը, որ դժբախտաբար, ինչ-որ թիւրիմացութեամբ, տեղի չունեցաւ, եւ թուրք զօրքն ո՛չ միայն փրկուեց վերջնական ոչնչացումից, այլեւ մայիս 27-ի կէսօրին անցաւ հակայարձակումի, վերագրաւելով իր մի քանի դիրքերը: Փամպակի կիրճում թափուած էին մօտ 5000 դիակներ, 2000-ը՝ հայկական, 3000-ը՝ թուրքական:

Արարատեան ճակատի հայկական ոյժերը մօտենում էին Ալեքսանդրապոլին: Զօր. Սիլիկեանը փորձում էր սեպ անցկացնել Կարսի եւ Ալեքսանդրապոլի միջեւ՝ պաշարելու եւ վերջնօրէն ջախջախելու թշնամին: Մայիս 28-ի առաւօտեան, Սարդարաբադի եւ Աբարանի հայկական զօրաշղթաները տարերային թափով հալածում էին ջարդուած թշնամուն: Այդ օրուայ հայկական հրամանատարութեան հաղորդագրութիւնն ասում է. *«Թուրքերը ջարդուած են եւ նահանջում են հապճեպով: Նրանց զօրամասերը բաժանուած են երեք խմբերի...: Մեր զօրքերը քայլափոխ հետապնդում են նրանց: Ոգեւորութիւնն աներեւակայելի է»:...*

ՅՈՒՆԻՍ 4-Ը ԵՒ ԻՐ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐԸ

Բայց ի՞նչ եղաւ: Թիֆլիսի հայ քաղաքագէտները, անտեղեակ ռազմաճակատի կացութեան, ընդունեցին թուրքերի առաջարկած հաշտութիւնն եւ կրկին մեկնեցին Բաթում: Մայիս 28-ին, կէսօրուան մօտերը, թուրք բանագնացներն սպիտակ դրօշով կանգնեցին հայկական զօրասիւների առաջ եւ յայտնեցին կնքուած հաշտութեան մասին: Ընդհանուր հրամանատար Զօր. Նազարբէգեանը հրամայեց դադարեցնել ռազմական գործողութիւնները: Զօրքը պահանջում էր մերժել հաշտութիւնը: Զօր. Սիլիկեանը մայիս 29-ին հրատարակեց մի կոչ. *«Հայե՛ր, մեր քաջարի զօրքերի հերոսական գործունէութիւնը շարունակւում է եւ թուրք զօրքերը նահանջում են: Մենք պէտք է յետառնենք Ալեքսանդրապոլը, որ այնպէս նենգօրէն գրաւեցին թուրքերը... եւ ապա միայն նրանց հետ բանակցութեան մէջ մտնենք: ...Մի՞թէ հեշտ ու հանգիստ սրտով պէտք է թշնամուն տանք մեր հայրենի հողերը»...* Ժողովուրդն էլ պահանջում էր շարունակել կռիւը: Երեւանում եղան ցոյցեր: Բայց երկրի վարիչ Արամն էլ հակուեց հաշտութեան գաղափարին:

Յունիս 4-ին Բաթումում ստորագրուեց հայ-թուրքական հաշտութեան դաշնագիրը: Հայկական պատուիրակութիւնը կատարել էր սպանիչ զիջումներ: Թուրքերին էին յանձնուել Ալեքսանդրապոլից դէպի Պարսկաստան թէ դէպի Թիֆլիս-Բագու տանող երկաթուղագծերը: Հայաստանի համար գծուել էին գերեզմանային սահմաններ (ընդամէնը 12.000 քառ. քլմ.): Հասկանալի է, որ այդ սահմաններից դուրս մնացած հայկական ընդարձակ շրջանների բնակչութեան կեանքն «օրինապէս» մատնուած էր թուրքական վտանգին: Հայկական հանրապետութեան կառավարութիւնն յանձնառու էր եղել *«գործ դնել բոլոր ջանքերը Բագուից հեռացնելու հայկական ոյժերը»*: Դաշնագիրն ստորագրելուց, այսինքն՝ մահուան օղակը վիզն անցկացնելուց յետոյ միայն, հայ պատուիրակները Վեհիբ փաշայից իմացել էին, որ հայ զօրքը 22-23-ը կռուել է հերոսաբար: Ահա՛ թէ ի՞նչ չարիքներ են հասնում մի ազգի, որի քաղաքականութիւնը սեփական հայրենիքից դուրս է վարւում:

Հաշտութեան պայմաններն որքան ցասում, նոյնքան էլ յուսալքում առաջացրին Հայաստանում թէ Անդրկովկասի հայկական շրջաններում: Բոլորը գիտակցում էին, որ հայութիւնը դատապարտուած է ոչնչացման: Փոքրացած Հայաստանի ճամբաների վրայ դեգերում էին մօտ կէս միլիոն գաղթականներ: Ուրիշ երկու հարիւր հազար հայեր

ապաստանել էին Վրաստանին մնացած հայաբնակ շրջաններում: Սովը զոհեր էր խլում արդէն: Ամառն իր հետ բերելու էր համաճարակներ: Ամէն ոք զգում էր, որ տաճիկները Կովկասում եւ Պարսկաստանում ամրանալուց յետոյ՝ ի սպառ պիտի ջնջեն հայութիւնը: Ուստի՝ կարելի չէր նրանց հանգիստ թողնել: Բագուի հայկական ոյժերը յունիս 5-ին, այսինքն՝ Բաթումի դաշնագրի կնքման երկրորդ օրը, անցան յարձակման: Անդրանիկն էլ յայտարարելով, թէ իր համար ընդունելի չէ թուրքերի հետ կնքուած որեւէ հաշտութիւն, դուրս եկաւ հայկական հանրապետութեան սահմաններից եւ 4000 զինուորներով ուղղուեց դէպի Պարսկաստան: Նա էլ, Վանի հայկական ոյժերի նախընթացով, նպատակ ունէր միանալ անգլիացիներին եւ Պարսկաստանում ճակատ բանալ տաճիկների դէմ: Բայց նրա շարժը դանդաղեց, գործողութիւնները դժուարացան, որովհետեւ նրան հետեւեց տասնեակ հազարաւոր կանանցից, երեխաներից եւ մի քանի հազար զինուած տղամարդկանցից բաղկացած մի ամբոխ: Յունիսի կէսերին նա Ջուլֆայից մտաւ պարսկական հող եւ բռնեց Խոյ-Սալմաստ-Ուրմիա ուղղութիւնը: Մահմեդական բնակչութիւնը սկզբում նրան ընդունեց աղուհացով: Բայց Խոյի մօտերը փոխուեց վերաբերմունքը: Տաճիկները մտել էին այդ քաղաքը եւ անխնայ կերպով ոչնչացրել Սայդաւար հայ մեծ գիւղի բնակչութիւնը: Սայդաւարի մօտից թուրքական ոյժերն սկսեցին դիմադրել, բայց ջարդուելով՝ նահանջեցին Խոյի պարիսպներից ներս: Հայերը գրոհեցին ըստ բաւական լաւ ամրացուած քաղաքը: Բայց Անդրանիկը շուտով հասկացաւ, որ ինքը կարող է առաջ շարժուել միայն իրան հետեւող գաղթականութիւնը ջարդել տալու գնով: Ուստի, նա վերադարձաւ Ջուլֆա-Նախիջեւանի շրջանը, ուր շուտով հասան ե՛ւ տաճկական ոյժերը, որոնց միացաւ տեղական մահմեդականութիւնը: Նախիջեւանում մղուեցին կատաղի կռիւներ: Կործանուեցին թաթարական մի շարք գիւղեր: Ի վերջոյ, ճակատագիրն այստեղ էլ հարուածեց հայ հերոսին: Ցայր տուեց ժանտախտը, որ միայն մի քանի օրուայ ընթացքին նրա զօրքից խլեց մօտ 800 ընտիր կռուողներ: Մնում էր մի ելք՝ քաշուել դէպի Սիւնեաց զովասուն լեռնավայրը: Տեղական հոծ հայութիւնը (միւս գաղթականների հետ՝ մօտ 100.000) թափուեց Սիւնիք: Հայկական աղքատ լեռնավայրում եւս սկսուեց սովը: Գեղուայ ձորում թաթարները կոտորեցին գաղթականական մեծ մի կարաւան: Իբրեւ փոխվրէժ՝ Անդրանիկը ոչնչացրեց իր ճանապարհին ընկած թաթարական գիւղերը:

ԲԱԳՈՒ

Հետեւանքներով Հայաստանի համար բախտորոշ եղաւ Բագուի շարժումը: Սկզբում դա կրում էր մի տեսակ համաքրիստոնէական բնոյթ, յիշեցնելով խաչակրաց արշաւանքը՝ մանրանկարային չափով: Զօրամասերը կազմուած էին առաւելապէս հայերից. կարեւոր թիւ էին ներկայացնում եւ ռուսները. մարտիկների փոքր մի մասը ծագում էր արեւելեան թէ եւրոպական քրիստոնեայ զանազան ազգութիւններից: Սանձուել էին եւ կուսակցական հակամարտութիւնները: Իշխանութիւնը ձեւապէս գտնւում էր բոլշեւիկների ձեռքում, Ստեփան Շահումեանի գլխաւորութեամբ: Շարժման գլխաւոր ազդակը, սակայն, հայ ազգայնականութիւնն էր եւ ոգին՝ հայ յեղափոխութեան առաքեալներից Ռոստոմը (Ստեփան Զօրեան): Զուտ հայկական զօրամասերին հրամանատարում էր Համազասպը: Կռուի դրօշը բարձրացրած հայերի նպատակն էր փրկել Հայաստանը, գէթ դժուարացնել նրա ոչնչացումը թուրքերի կողմից: Բոլշեւիկները ձգտում էին վերականգնել ռուսական իշխանութիւնը Անդրկովկասում կամ առնուազն՝ պաշտպանել Բագուի նաւթահանքերը: Քրիստոնեաների դէմ էնվէրի եղբայրը՝ Նուրի փաշան, կազմակերպած էր այսպէս կոչուած *«Իսլամական Բանակ»-ը,* բաղկացած տաճկական զօրամասերից եւ ազերի թաթարներից: Այդ «բանակ»-ը հաշւում էր 30.000 կռուողներ եւ ի վիճակի էր օժտուել նորանոր ոյժերով: Դրա հանդէպ՝ բագուեցիները կարող էին իրական օգնութիւն ստանալ Գանձակ, այսինքն՝ հայկական շրջանները հասնելուց յետոյ միայն: Բայց այդ դէպքում պիտի վերսկսուէր պատերազմը՝ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ: Ի՞նչ ելք կարող էր ունենալ դա, եթէ եւրոպական որեւէ ոյժ գործնականապէս չնպաստէր հայերին: Հայերը պատրաստ էին քաղաքը եւ նաւթահանքերը յանձնել գերմանացիներին, պայմանով, որ սրանք երաշխաւորեն Հայաստանի գոյութիւնը: Բագուի Հայ Ազգ. Խորհուրդը պատուիրակներ ուղարկեց Բերլին, Մոսկուա, Պարսկաստան: Բերլին գնալիք հայ պատուիրակին բոլշեւիկները վար դրեցին Մոսկուայում: Իրանք՝ բոլշեւիկները, միայն թղթէ խոստումներ կատարեցին, իսկ անգլիացիները՝ Պարսկաստան հասած հայ պատուիրակին յուսադրեցին «շուտափոյթ օգնութեամբ»:

Յունիս 5-ին Բագուի ոյժերը կանգնած էին Շամախիի շրջանում: Մինչ այդ, նրանք վարել էին մի քանի յաղթական կռիւներ: Զախջախել էին Բագուի թաթարութիւնը, ջարդել եւ քշել էին սրանց օգնութեան եկած մահմեդական լեռնականներին, գրաւել էին Շամախին եւ այդ

շրջանը մաքրել հայկական քաղաքամասն ու 25 գիւղերը կործանած թաթարներից:

Անցնելով յարձակման՝ Բագուի ոյժերը ծանր հարուած հասցրին «Իսլամական Բանակ»-ին՝ որին դաժան կերպով հալածելով՝ յուլիս 27-ին մտան Գէոքչայի հայկական շրջանը: Նրանք կտրել էին, ուրեմն, Բագու-Գանձակ գծի մօտ 2/3-ականը: Թուրքաթաթար «բանակ»-ը հոգեվարում էր. նրան սպառնում էր վերջնական ոչնչացումը: Ե՛ւս մի քայլ դէպի Գանձակ եւ դժուար պիտի չլինէր ոտքի հանել Ղարաբաղի հայկական զօրաւոր թիկունքը: Բայց առաջխաղացում տեղի չունեցաւ: Բնական (զօրքի մի մասն ընկել էր անջուր եւ արեւակէզ անապատում) թէ ներքին մութ պատճառներով, տկարացաւ ռուս տարրի ոգին: Տարւում էր ինչ-որ կազմալուծիչ աշխատանք: Հետագայ դէպքերն եկան հաստատելու, որ Գերմանիայի պարտութեան նախօրեակին՝ թուրքերը փնտռել են Մոսկուայի բարեկամութիւնը: Միւս կողմից, անգլիացիներն էին սպառնում Բագուին: Բոլշեւիկները, անշո՛ւշտ, նախամեծար պիտի համարէին Բագուն ժամանակաւորապէս տկար տաճիկներին տալ, քան թէ վտանգաւոր Անգլիային: Այդպիսի դէպքում, տաճիկները, Գերմանիայի պարտութիւնից յետոյ, պիտի հարկադրուէին նետուել բոլշեւիկեան քաղաքականութեան ուռկանը: Եւ ահա՛ հեռանկարնե՛ր... իսլամը բրիտ. կայսրութեան դէմ: Բոլշեւիկները, անշո՛ւշտ, միջոցներ ունէին զանազան ձեւերով բարոյալքելու, թունաւորելու Բագուի ռուս զօրամասերը: Մութ այս աշխատանքներով պիտի բացատրել այն իրողութիւնը, որ հակառակ ամենալաւ հեռանկարների, Բագուի զօրամասերի ռուս տարրը, փոխանակ դէպի Գանձակ առաջանալու, համակուեց նահանջողական տրամադրութեամբ: Մի բան գիտէին ե՛ւ տաճիկները, որոնք ծանր կորուստներ կրելով հանդերձ՝ չէին լքում Բագուն նուաճելու երազը եւ հապճեպով վերակազմում էին իրանց բանակը: Դաւի մութ ծալքերի վրայ որոշ լոյս են սփռում մասնաւորապէս հետեւեալ իրողութիւնները.

1) Ստալինը, Լենինի անունից, գրում է Բագուի իշխանութեան պետ, հայ բոլշեւիկ Շահումեանին. *«Ձեր յաջողութիւններն ուրախացնում են մեզ, բայց մենք կը կամենայինք, որ գերմանացիների հետ բարդութիւններ ունենալուց խուսափելու համար, դուք, Գանձակից աւելի հեռու չգնայիք»*, այսինքն՝ *«չմտնէք Վրաստան, որի անկախութիւնը ճանաչել են գերմանացիք»* (ի՞նչ «Վրաստան», երբ Գանձակից սկսւում է հայկական լեռնավայրը, ի՞նչ «գերմանացիք», երբ բագուեցիք իրանք էին ձգտում քաղաքն յանձնել գերմանացիներին, երբ նրանց կռիւն ուղղուած էր բացառապէս տաճիկների դէմ):

2) Յուլիս 28-ին, խաբէութեամբ (թշնամու թիկունքն անցնելու պատրուակով), ճակատը լքեց եւ իր զօրամասով դէպի Դերբենդ փախաւ գնդ. Բիչերախովը, որ յուլիս 5-ին Պարսկաստանից Բագու էր հասել եւ սկզբում յաջող կռիւներ մղել տաճիկների դէմ:

3) Նոյն յուլիս 28-ին թուրքական հրամանատարութիւնը դիմեց Բագուի իշխանութեան եւ Հայոց Ազգ. Խորհուրդին՝ պահանջելով քաղաքի յանձնումը:

4) Օգտուելով Բիչերախովի փախուստով ստեղծուած շփոթից, բոլշեւիկները յուլիս 27-ից գաղտնիօրէն նաւեր փոխադրեցին ինչ որ հնարաւոր էր, յուլիս 29-ի գիշերը գումարուած «Բանուորական խորհուրդ»-ի (Բագուի այն օրերի «պարլամենտ»-ը) նիստում առաջարկեցին քաղաքը յանձնել տաճիկներին եւ յուլիս 30-ին հեռացան:

Իրազեկ Բագուի ոյժերի թիկունքում կատարուած ջլատիչ աշխատանքին՝ «իսլամական բանակ»-ը, յուլիս 26-ից կանգնած Բագուի առաջ, սաստկօրէն ռմբակոծում էր քրիստոնեաների թաղամասերը եւ յանդգնօրէն առաջ խաղում: Հարուստ քաղաքի կողոպուտից բաժին ստանալու տենչը նորանոր զինուած խուժաններ էր մատակարարել «իսլամական բանակ»-ին: Դաւադրուած եւ մենակութեան դատապարտուած հայերին մնում էր մի ելք՝ օրհասական դիմադրութիւնը: Նոր վարչութիւնը՝ *«Բագուի Դիկտատուրա»-ն,* մերժեց քաղաքը յանձնելու տաճիկների նոր առաջարկը: Օգոստ. 2-ից թշնամին անցաւ յարձակումի: Հայերը դիմադրում էին հերոսաբար, յաճախ գործելով մոլեգին հակայարձակումներ: Իրար ետեւից ընկնում էին քաջութեան գրքում պանծալի անուն թողած մարտիկներ՝ Սեբաստացի Մուրատը, Սերգօն եւ հարիւրաւորներ: Քառապատկօրէն ծանր էին, սակայն, թշնամու կորուստները: Հայկական կրակը մահ ու աւեր էր սփռում: Թուրքական յարձակուող զօրախմբերը պաշարւում էին եւ ոչնչացւում: Արիւնոտ նախճիրն անընդհատ շարունակուեց մինչեւ օգոստոս 5-ի լուսաբացը, երբ թշնամին փորձեց գրոհել քաղաքը: Մինչեւ ժամը 10-ը մղուեց կատաղի, խառնուրդաձեւ ճակատամարտ, որի ընթացքին հայկական մի զօրամաս կարողացաւ անցնել թշնամու թիկունքը: Թողած 1.000-ից աւելի դիակներ, բազմաթիւ վիրաւորներ, մեծ քանակութեամբ հրազէններ եւ ռազմամթերք՝ թուրքերը դիմեցին փախուստի, մատնուելով կորստաբեր հետապնդումի: «Իսլամական Բանակ»-ը ցրուեց:

Բագուն փրկուած էր: Օրը հայերի համար եղաւ ո՛չ միայն յաղթաբեր, այլեւ՝ յուսաբեր: Պարսկաստանից Բագու հասան անգլիական ոյժեր: Բայց երկար չտեւեց խանդավառութիւնը: Աւետաբերը՝

գնդ. Ստոկսը, յայտնել էր, թէ գալու են 5.000 զինուորներ, այնինչ մինչեւ օգոստոս 19-ը Բագու եկան միայն 2.700-ը: Պարզուեց նաեւ, որ անգլիական այս զօրամասի հրամանատար Զօր. Դանստերվիլը տրամադիր չէ մասնակցել որեւէ առաջխաղացման՝ դէպի Հայաստան: Նրա նպատակն էր պաշտպանել Բագուի նաւթը:

Մինչ այդ՝ վերակազմուեցին թուրքական ոյժերը եւ օգոստոս 29-ին կրկին մօտեցան Բագուին: Յարձակումն սկսուեց հենց անգլիացիների բռնած ճակատամասի դէմ: Ուժեղ մի կրակով՝ անգլիացիները ցրեցին թուրքերին: Յաջորդ օրը կռիւը տարածուեց ամբողջ ճակատի վրայ. թուրքերը կրկին յետ մղուեցին: Սեպտ. 1-ին Զօր. Դանստերվիլն յայտնեց, թէ դրութիւնն անյոյս է, եւ ինքը պէտք է հեռանայ, իսկ հայերը պէտք է բանակցութեան անցնեն՝ քաղաքը տաճիկներին յանձնելու: «Դիկտատուրա»-ն մերժեց՝ սպառնալով թնդանօթային կրակի բռնել հեռանալ փորձող անգլիական նաւերը: Զօր. Դանստերվիլը փաստօրէն ընկաւ գերու վիճակում, թէպէտեւ համաձայնուեց շարունակել «փրկչի» իր պարտականութիւնը: Հայերը գործեցին ճակատագրական սխալը, որ չընդառաջեցին մեկնումի նրա ցանկութեան: Նրանք չհասկացան, անշո՛ւշտ, որ Բագուի պաշտպանութիւնն անգլիացիների համար անհրաժեշտ էր մինչեւ սեպտեմբերի 1-ը, այսինքն՝ այնքան ժամանակ, որքան Գերմանիայի պարտութիւնը դեռ եւս ապահովուած չէր եւ կարող էր ենթադրուել, թէ նա օգտուելու է նաւթից: Նրանք չանդրադարձան, որ Անգլիան էլ հեռանկարներ ունի թուրքերի նկատմամբ, որ Բագուն նրանց տալով միայն հնարաւոր է բոլշեւիկների դէմ կազմել թուրանական ճակատ: Թերեւս շուկայի մանր հաշիւներով էլ անգլիացիները ցանկալի պիտի չհամարէին Բագուն թողնել ձեռներէց հայերին, որոնք արդէն նաւթաշխարհի գլխաւոր սեփականատէրերն էին, բաժնետէրերը եւ ձեռնարկուները. աւելի՛ վատ, որ Հայաստանում էլ (Վանի շրջան) հարուստ նաւթահանքեր կային, իսկ Մոսուլի մենաշնորհը պատկանում էր մի հայի:

Ընթերցողին ենք թողնում խորհրդածել հետեւեալ իրողութիւնների մասին.

1) Այդ օրերին արդէն սպառուած եւ մասնակի հաշտութեան ելքեր փնտրող թուրքերն խորհրդաւոր կերպով աշխոյժ էին միայն Բագուի ճակատի վրայ:

2) Զօր. Դանստերվիլը մինչեւ վերջ մերժեց ներդաշնակութիւն ստեղծել ռազմավարութեան մէջ, կռուեց անջատօրէն եւ կարողացաւ առանց զգալի ցնցումների, դանդաղօրէն նահանջել անընդհատ:

3) Թուրքերն անգլիացիների հետքերով թափանցեցին Բագու:

4) Կռուի ամբողջ ընթացքին միայն յոռետեսութիւն սերմանելով՝ սեպտ. 14-ին անգլիացիները լքեցին դիրքերը, խուժելով դէպի իրանց նաւերը: Երբ հայերն առաջարկեցին 3 օր եւս սպասել մինչեւ կը տեղափոխուի ժողովուրդը՝ Զօր. Դանստերվիլն ասաց. *«Սպիտակ դրօշ բարձրացրէ՛ք»*:

Հասկանալի է, որ անկարելի պիտի լինէր յաղթահարել խուճապը: Ժողովուրդը թափուեց նաւահանգիստ, ուր, սակայն, չկային բաւարար թուով նաւեր: Կռիւը տեղափոխուած էր քաղաք: Ոտքի ելած էր ե՛ւ տեղական իսլամութիւնը: Հայկական զօրամասերը պաշարուած էին ներսից եւ դրսից: Դիմադրութիւնն օրհասական էր: Եղան գերմարդկային խոյանքներ: Հարիւրաւոր անձնուէրներ մեռան դիրքերի վրայ: Սեպտ. 15-ին ընկաւ Բագուն: Զարդն ու կողոպուտը շարունակուեցին 3 օր անընդհատ: Աղէտն հայերին արժեց մօտ 30.000 մարդկային կորուստ: Կողոպուտն եղաւ մօտ կէս միլիարդ դոլար:

ՊԱՐՏՔ ԵՒ «ՀԱՏՈՒՑՈՒՄ»

Այդ օրերին Լոնդոնում լուրեր էին տարածւում, թէ հայերը, դաւաճանելով անգլիացիներին, գաղտնի բանակցութիւններով Բագուն յանձնել են տաճիկներին: Իրօ՛ք որ լաւագոյն է ասիական բարբարոսների ձեռքով մեռնել, քան թէ զրպարտուել անաստուած եւրոպացիների կողմից: Հոկտեմբեր 23-24-ին միայն անգլիական պարլամենտն զբաղուեց «մոլորանք»-ը ցրելու գործով: Լորդ Ռոբերտ Սեսիլն յայտարարեց, թէ *«Բագուի յանձնումն եղել է Զօր. Դանստերվիլի համաձայնութեամբ»* (եւ ո՞չ դաւաճանութեամբ): Ո՛չ ոք է հետաքրքրւում թափուած հայկական արիւնով: Պատգամաւորներից մըստր Հոգը հարցնում է. *«Կարո՞ղ է ազնիւ Լորդը տեղեկութիւն տալ մեզ Բագուի ոյժերի փրկութեան մասին»*:

Լորդ Սեսիլ. *«Հայկակա՞ն, թէ՞ անգլիական ոյժերի»*:

Մըստր Հոգ. *«Անգլիակա՛ն»*:

Լորդ Սեսիլ. *«Անգլիական ոյժերը փրկուած են»*:

Բայց եւ այնպէս, ուրիշ մի պատգամաւոր հետաքրքրուել էր ե՛ւ այն հարցով, թէ հայերի ողբերգութիւնից ի՞նչ են շահել Անգլիան եւ իր դաշնակիցները:

Մըստր Բլիս. *«Արդեո՞ք փաստ է, որ հայերն անձնուէր ծառայութիւն մատուցեցին Դաշնակիցների դատին՝ Թուրքիայի դէմ մղուած կռուի ընթացքին»*:

Լորդ Սեսիլ. *«Անկասկածօրէն՝ Դաշնակիցների դատն ահագին պարտք ունի հայերին, շնորհիւ սրանց գործունէութեան»*:

Մնում էր հատուցանել այդ պարտքը:

Մեծ ազգերի քաղաքական բարոյականի տեսակէտով ամէնից աւելի չափանշական է այն խնդիրը, թէ նրանք ինչպէ՞ս են հատուցում փոքր իրանց զինակիցների, դաշնակիցների, բարեկամների արեան պարտքը: Չկա՛յ որեւէ լուրջ անգլիացի, ամերիկացի թէ ֆրանսիացի, որ չընդունէ, թէ համաշխարհային նախորդ պատերազմին հայերը հանդիսացան մէկը գլխաւոր այն ոյժերից, որոնք օսմանեան պետութիւնը մատնեցին պարտութեան: Հայ-թուրքական կռիւն երկուստեք խլեց 3,200.000 զոհեր: Այդ թիւն չափանշում է մղուած պայքարի ծաւալը եւ կործանարար հետեւանքները՝ կողմերի համար: Բայց հայերը վճռական դեր խաղացին նաեւ պատերազմի ընդհանուր ելքի տեսակէտով ճակատագրական մի քանի դէպքերում:

Լորդ Բրայսը վկայում է. *«Հայերը ռուսական բանակի սիրտն էին եւ 1914/15 նրանք վտարեցին տաճիկներին Հայաստանի հիւսիսարեւելքից, եւ երբ 1917-ի յեղափոխութիւնից յետոյ լքուեցին ռուսներից՝ նրանք շարունակեցին կռիւը... Հայերը հիանալիօրէն պատերազմեցին Երեւանի եւ Բագուի շուրջ»*:

Բերլինի ամերիկեան դեսպան Ջէյմս Ջերարդն ասում է. *«Ամերիկացիները պէտք է մի վայրկեան կանգ առնեն եւ մտածեն, թէ ի՞նչ կը լինէր պատերազմի ելքն ու տեւողութիւնը, եթէ թուրքերն 8 ամիս առաջ հասնէին Բագու: Եւ նրանք աւելի՛ կանուխ պիտի հասնէին, եթէ հայերը չդիմադրէին»...*

Անկասկած, կենտրոնական պետութիւնների պարտութեան գլխաւոր պատճառներից մէկը հանդիսացաւ վառելանիւթի պակասը, որ չյաղթահարուեց շնորհիւ այն բանի, որ նրանց զինակից թուրքերը ձգտեցին հայերին ոչնչացնելու միջոցով տիրանալ Բագուին:

Պաղեստինի թուրքական ճակատի խորտակումը, որով ե՛ւ վերջնական պարտութիւնը բացատրւում է նաեւ այն իրողութեամբ, որ թուրքերն իրանց մի քանի զօրաբաժինները Կովկաս ուղարկեցին՝ հայերի դէմ կռուելու: Այդ պատերազմը, որ հայ եւ մահմեդական ժողովուրդներին արժեց 300.000-ական մարդկային զոհեր, սպառիչ եղաւ նաեւ արդէն տկարացած թուրքերի համար:

Ո՛չ միայն այդ, այլեւ հենց Պաղեստինում գործող Հայկական Լեգեոնին վիճակուեց ամենավճռական դերը՝ թուրքերի համար վերջնօրէն ջախջախիչ Արարայի ճակատամարտում: Հայկական այդ Լեգեոնին պատկանող 2000 մարտիկներն էին, որ բախտորոշ ճակա-

տամարտի ամենատագնապալից վայրկեանին՝ *«Վրէ՛ժ, վրէ՛ժ»* աղաղակելով՝ սուսերամերկ նետուեցին թուրքական դիրքերի վրայ, ճեղքելով ճակատը: Հիացած հայ մարտիկների նման խոյանքներով՝ Դաշնակից ոյժերի Պաղեստինի հրամանատար, անգլիական զօրավար Ալեմբին 10 սեպտ. 1918թ. հեռագրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի քաղաքական պատուիրակ Պօղոս Նուբար փաշային. *«Հպարտ եմ հրամանատարութեանս տակ հայկական մի զօրամաս ունենալու համար: Նա կռուեց փայլուն կերպով եւ մեծ բաժին ունեցաւ յաղթանակի մէջ»*:

Կիլիկիայի ֆրանսիական կոմիսար գնդ. Բրեմոնը, խօսելով *«համաշխարհային պատերազմի մէջ լաւ անուն շահած»* նոյն այդ Հայկական Լեգեոնի մասին, ասում է. *«Վեհանձն Ֆրանսիան հպարտօրէն պիտի յիշէ, ու պատիւ ունեցաւ վստահել Հայաստանի որդիներին, որոնք իրանց խանդագին մասնակցութիւնը բերին սուինամարտերին»:*

Այդ բոլորից յետոյ, ինչպէ՞ս պէտք էր վարուել ոճրագործ մի թշնամու (այս դէպքում՝ թուրքերի) եւ իր անօրինակ ողբերգութեան ոյժով քաջութիւններ գործած, ընդհանուր յաղթանակին այնքա՛ն նպաստած մի դաշնակցի (այս դէպքում՝ հայերի) հետ:

Բոլշեւիկները վաղուց, իսկ անգլիացիներն առնուազն սեպտ. սկզբին, այսինքն՝ Բագուն խորհրդաւոր կերպով լքելու օրերին գիտէին, որ թուրքերը սպառուած են եւ պատրաստ դաւաճանելու Գերմանիային: Բայց թո՛ղ մի ֆրանսիացի* պատմէ, թէ ինչպէ՞ս կնքուեց Մուդրոսի զինադադարը. *«Հոկտ. 15-ին (1918թ.) Զօր. Թաուզէնտը* (անգլիացի), *որ 1916-ից գերի էր տաճիկների մօտ, իր միջամտութիւնն է առաջարկում Իզզէտ փաշային՝ զինադադարի պայմանների համար, պայմանով, որ Թուրքիան խզէ բոլոր իր կապերը Գերմանիայի հետ: Իզզէտը համաձայնւում է (եթէ Մեծն Բրիտանիան պատրաստ լինի հովանաւորել Թուրքիային)» (էջ 584):* Ընդուվէնը շարունակում է. *«Չնայած որ արդէն հոկտեմբերի սկզբին ֆրանսիական ծովակալ Գորշէն յանձն էր առել մշակել զինադադարի մի ծրագիր եւ դա ներկայացրել էր ֆրանսիական կառավարութեան եւ իր զինակիցներին՝ անգլիական ծովակալ Կալթորպն էր, որ Մուդրոսում ընդունեց Զօր. Թաուզէնտի բերած տաճկական առաջարկը: Լոնդոնի կառավարութիւնը լիազօրում է Կալթորպին՝ վարել բանակցութիւնները: Ֆրանսիական կառավարութիւնը բողոքում է... Բայց անգլիական կառավա-*

* *Pierre Renouvin.* ,, La Guerre Mondiale".

րութիւնն այդ հաշուի չառաւ: ...Հոկտ. 30-ին համաձայնութիւնն արդէն մշակուած էր, չնայած որ ֆրանսիական կառավարութիւնը պահանջել էր... սպասել Դաշնակիցների համաձայնութեան: Արդէն կատարուած փաստի առաջ՝ Ֆրանսիան տեղի է տալիս եւ հոկտ. 31-ին հաստատում է զինադադարի պայմանները» (էջ 592):

Ուրեմն, Անգլիան հատուցել էր Լորդ Սեսիլի ասած *«ահագին պարտքը»* հայերին, ստանձնելով Թուրքիայի հովանաւորութիւնը: Դժբախտ Հայաստանում, սակայն, ո՛չ ոք էր ենթադրում բարոյական այդպիսի զարհուրանք: Ո՛չ ոք էր անդրադառնում նաեւ, թէ ինչո՞ւ զինադադարի պայմանագրում Հայաստանի վերաբերեալ կէտը (24-րդը) մութն էր, երկդիմի. *«Եթէ անկարգութիւններ ծագեն Հայաստանի վեց նահանգներում՝ դաշնակիցներն իրաւունք ունեն գրաւել նրանց որեւէ մասը»*: Անգլիացիները շատ լաւ գիտէին, որ այդ օրերին վեց նահանգները գերեզմանոց են միայն եւ հայկական մնացորդները՝ նրանց սահմաններից դուրս: Հայերը անտեղեակ էին, անշո՛ւշտ, թէ ի՞նչ են խօսել կամ ի՞նչ բաներ իրար զիջել եւ խոստացել անգլիացիներն ու թուրքերը: Նրանք փորձառութիւն ունէին այն մասին, թէ՝ երբ տաճիկը գաղտնաբանում է եւրոպացու հետ՝ գերեզմանը հայի համար փորուած է այլեւս: Բայց նրանք չէին կարող հաւատալ, որ Մեծ Եղեռնից յետոյ էլ դեռեւս գտնուելու է եւրոպական որեւէ պետութիւն, որ թոյլ տայ իրան սակարկութեան նիւթ դարձնել քրիստոնեաների ծովացած արիւնը: Նրանք սպասում էին յաղթական անգլիացիների ժամանումին, սպասում էին հաւատացած, որ մեծ զինակիցը բաժանում է իրանց երկու միլիոն մեռելների ցաւը եւ գալիս է իբրեւ ճշմարիտ ազատարար:

ԱՌԱՋԻՆ «ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆ»

Անգլիացիները Կովկաս մտան Բագուի վրայով եւ այն վայրկեանին, երբ հայ-թուրքական կռուի ծանրութեան կենտրոնը տեղափոխուած էր Արցախ-Սիւնիքում (Ղարաբաղ-Զանգեզուր): Բագուի անկումից յետոյ տաճիկներն իրանց ոյժերն ուղղել էին հայկական նշանաւոր այս լեռնավայրի դէմ եւ ոչնչացրել Ղարաղշլաղ մեծ գիւղը: Համոզուած, որ նոյն ճակատագիրն է սպասում զինաթափուած Շուշի քաղաքին եւ ամբողջ շրջանին՝ ղարաբաղցիները հարկադրուել էին դիմել կռուի: Մսմնա գիւղի մօտ, հոկտեմբեր 18-ին, չարաչար կերպով պարտուելով՝ տաճիկները փախել էին, հայերին թողնելով իրանց թնդանօթները եւ մեծ քանակութեամբ ռազմամթերք: Պարտութեան

մատնելով Զանգեզուրի վրայ յարձակուած թուրքերին՝ Անդրանիկը շարժուել էր դէպի Ղարաբաղ: Նոյեմբերի կէսին նրա զօրամասն առաջանում էր դէպի Շուշի: Բագուից հասել էր անգլիական զօրավար Թոմսընի հրահանգը՝ դադարեցնել կռիւը: Անդրանիկը տեղի էր տուել՝ քաշուելով Զանգեզուր: Դրանից յետոյ, սակայն, թաթարները ջարդել էին Ղարաբաղի Հարար, Սպիտակաշէն եւ Պետրոսաշէն հայկական գիւղերը:

Ի՞նչ էր կատարւում: Դեկտեմբերի սկզբին Ղարաբաղի կենտրոն Շուշի հասաւ անգլիական զինուորական առաքելութիւնը եւ առաջարկեց հայերին՝ ենթարկուել Ադրբեջանի իշխանութեան: Ղարաբաղն Հայաստանի նշանաւոր այն լեռնավայրն է, որ անկախ է եղել անգամ ռուսների Կովկաս իջնելուց առաջ՝ պարսիկների տիրապետութեան շրջանին, որ մինչեւ այժմ պահում է հայկական իր դիմագծութիւնը եւ այդ ո՛չ միայն մշակութապէս, այլեւ նոյնիսկ ազգագրօրէն: Ըստ 1917թ. ռուսական վիճակագրութեան՝ հայերը կազմում էին Ղարաբաղի բնակչութեան 70%-ը, մահմեդականները՝ 27%-ը, ռուսներն ու այլ քրիստոնեաները՝ 3%-ը: Երբ այդպիսի մի շրջան է տրւում թուրքաթաթարներին՝ այլեւս ի՞նչ խօսք թուրքաց Հայաստանի մասին: Հակառակ որ Շուշիում հայերը բողոքի ցոյցեր արեցին, գնդ. Շատելվորտը զրահապատ ինքնաշարժերով մտաւ Գորիս եւ պահանջեց, որ Սիւնիքն էլ ենթարկուի Ադրբեջանին: Իրօ՛ք որ գլխի պտոյտ պատճառող բարոյական զարհուրանք: Տեղական ուրիշ երեւելիների հետ, Շատելվորտի առաջ կանգնեց հայ մի ծերունի (Ղազար Պարոնեան) եւ խաբուած իր ժողովրդի բարոյական ցասումով ասաց. *«Ձեր տառապած զինակցին ազատութի՞ւն, մեր անթիւ նահատակների վրդովուած հոգիներին անդորրութի՞ւն, ձեզ վստահող ազգին արդարութի՞ւն բերելու եկաք, թէ՞ աշխարհում անիրաւութիւն եւ անբարոյականութիւն տարածելու»*: Գորիսցիները զինուած ցոյց կատարեցին եւ ձերբակալելու սպառնալիքով՝ պահանջեցին անգլիացիներից՝ հեռանալ: Բայց եւ այնպէս, անգլ. հրամանատարութիւնը չհրաժարուեց Ղարաբաղ-Զանգեզուրը *«ժամանակաւորապէս»* Ադրբեջանի իշխանութեան ենթարկելու ծրագրից: Ընդհ. նահանգապետ նշանակուեց թաթար մի ջարդարար (Սուլթանով), որին լիազօրութիւն տրուեց *«մինչեւ հաշտութեան խորհրդաժողովի որոշումը»* պահպանել *«օրէնքն ու կարգը»* այդ շրջաններում: Անգլիացիների օժանդակութեամբ կազմակերպուեցին եւ զինուեցին «ադրբեջանեան» գնդերը՝ բաղկացած թուրքական բանակի սպաներից, զինուորներից եւ տեղացի թաթարներից: Շուշիում հաստատուեց անգլ. մի զօրամաս, որին խնդիր

տրուեց՝ կարելի դարձնել թուրքաթաթար ոյժերի Ղարաբաղ մտնելը եւ ամրանալը:

Ուրիշ շրջաններում էլ դէպքերն ընթանում էին ի վնաս հայութեան: Արտաքին գործոց նախարար Սիրական Տիգրանեանը Հայաստանի Հանրապետութեան Փարիզի պատուիրակութեան 6 մարտ 1919թ. հաղորդում է. *«Թուրքերը տեսան, որ բաւական է ցուցադրել որեւէ բողոք հայերի դէմ... եւ Անգլիան իսկոյն եւեթ հանդէս կը գայ զսպելու, կասեցնելու մեր կառավարութեան ամէն մի ներգործական քայլն ու ծրագիրը:... Մեր զօրամասերն առաջ էին ընթանում դէպի Շարուր, Նախիջեւան, Ջուլֆա՝ օսմանեան զօրքերի դատարկած այդ վայրերը գրաւելու...: Բայց վրայ հասաւ անգլ. կապիտան Լոտէնը, անցաւ Նախիջեւան... եւ իր զեկուցման հետեւանքով նշանակուեց Նախիջեւանի բրիտ. զօրական նահանգապետ եւ փոխ. գնդապետ. յետոյ եկաւ Երեւան պահանջելու, որ մեր զօրքերը յետ քաշուեն նոյնիսկ Դաւալուից... Ուրեմն, Շարուրն ու Նախիջեւանն էլ մեր ձեռքից գնաց (թո՛ղ ժամանակաւորապէս), դառաւ բրիտ. զօրական նահանգապետութիւն (Կարսի օրինակով)...: Նոյն խաղը խաղալու լուրջ պատրաստութիւններ են տեսնում թուրքերն այժմ Սուրմալուում...: Ղարաբաղը բրիտ. հովանաւորութեան տակ Ադրբեջանի ընդհանուր նահանգապետութեան մէջ է գցում: Ախալցխան, Ախալքալաքը... թրքութեան ձեռքն են անցել... վրացի զօրքերի պարտութեամբ: Այսպիսով, Անդրկովկասի թրքութիւնը բրիտ. զօրահրամանատարութեան օրով աւելի նպաստաւոր պայմանների մէջ է գտնւում, քան... օսմանեան... գրաւման ժամանակ: Ամէն կողմից մեզ շրջապատել է թուրքական վտանգը..., եւ մենք ոչինչ գրաւական եւ վստահութիւն չունենք, թէ անգլ. զօրահրամանատարութիւնը ցանկութիւն եւ կարօտութիւն ունի մեզ փրկելու այդ վտանգից: Բրիտ. զօրահրամանատարութիւնն արգելեց մեզ գրաւել Հայաստանում որոշ կարեւոր վայրեր, կարեւոր թէ՛ ռազմագիտական, թէ՛ ռազմամթերքի (Կարսի պահեստները) տեսակէտով. այդ բոլորը մնաց թուրքերի ձեռին. մեր քայլերն ու ընթացքը կաշկանդուած են, թուրքերին՝ ազատ, մեզ օգնող չկայ, թուրքերին՝ աջակից են եւ ղեկավար...»:*

Մինչեւ ապրիլ ամիս (1919թ.) անգլիացիք իրանց ամենանուիրուած զինակից հայերին պահեցին թուրքերի գծած մահուան օղակում: Քաղաքականապէս անբարեացկամ՝ նրանք անկարեկիր էին նաեւ դէպի անծայրածիր թշուառութեան մէջ մեռնող հայ ժողովուրդը: Մինչեւ նրանց գալը, սովից եւ սրա հետեւանքով տարածուած ժանտախտային համաճարակներից մեռել էին 50.000, նրանց աչքի առաջ,

մեռան եւս 130.000 մարդիկ: Գաղթականներով ծանրաբեռնուած փոքրիկ երկիրը իր զաւակների ձեռքով մշակուած գաւառների ամբարներից եւ Երեւան-Ջուլֆա-Թաւրիզ երկաթուղագծից՝ ո՛չ անմիջական շրջապատից կարող էր կենսամթերք հայթայթել, ո՛չ էլ Պարսկաստանից: Հազարաւոր երեխաներ, խելագար իրանց ապրած զարհուրանքներից կամ իրանց ծնողների կորստեան ցաւից, փախչում էին մարդկային խնամքից: Ամենայուսահատական պայմաններում էին նաեւ 50.000 այն որբերը, որոնք, կենտրոնացուած որբանոցներում, մխիթարւում էին իրանց ուսուցիչների արցունքներով: Հայաստանը, Ահարոնեանի որակումով, դարձել էր *«այրիների եւ որբերի աշխարհ»*: Վտանգուած էր հայ ազգի վերջին մնացորդների գոյութիւնը: Ցնցուած ամենասեւ հեռապատկերից, վարչապետ Քաջազնունին թողեց իր պաշտօնը՝ արտասահման մեկնելու եւ այնտեղից մեռնող ժողովրդին օգնութիւն փութացնելու նպատակով: Հաւատա՞լ, բայց իրողութիւն է, որ փետր. 15-ից մինչեւ ապրիլ 16-ը՝ բրիտանական զօրահրամանատարութիւնը մերժեց նրան ճամբորդելու արտօնութիւն տալ, որով եւ՝ ուշացրեց Ամերիկայի բարերար օգնութիւնը:

Փակելով փրկութեան բոլոր դռները հայ ժողովրդի առաջ՝ Անդրկովկասի բրիտ. զօրահրամանատարութիւնը պարզապէս հասկացնում էր հայերին՝ կա՛մ Ղարաբաղ-Զանգեզուրը կը զիջէք Ադրբեջանին, կա՛մ կը մեռնէք սովից:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՐԵԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Բայց ինչո՞ւ այս վերաբերմունքն աղէտուած, այն էլ «դաշնակից» մի ազգի հանդէպ, երբ անգլիացիք գիտէին մանաւանդ, որ դա նախընտրում է մեռնել, քան թէ պատմական իր գաւառները յանձնել թշնամուն: Հայ մտաւորականներից շատերն ասում էին, թէ անգլ. զինուորականութիւնը մի՛շտ էլ եղել է *«իսլամասէր»*, իսկ քաղաքական ղեկավարութիւնը՝ *«քրիստոնեասէր»*: Հաւատացած, որ Լոնդոնում գիտեն, թէ Հայաստանի տկարացումը համազօր է Կովկասում բրիտ. միակ ապահով խարիսխի խորտակման, նրանք մխիթարւում էին, թէ եղածը թիւրիմացութիւն է, եւ թէ վերջին խօսքը պատկանելու է «քրիստոնեասէր» քաղաքական ղեկավարութեան: Աւելի՛ հիմնաւոր բացատրութիւն էր տալիս արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանեանը. *«Անգլիացին չի հաւատում հայերին, աւանդաբար սրանց համարելով անուղղայ ռուսասէր: Սա է, որ տրամադրում է բրիտ. զօրահրամանատարութեան՝ չնպաստել մեր ոյժերի կազմակերպ-*

ման եւ զօրեղացման թրքութեան դէմ... որովհետեւ թուրքն է նրա աչքում ամենավստահելի պատուարը Ռուսիայի դէմ»...

Զօրաւորների սխալներից տուժում են նրանց տկար բարեկամները: Բայց եւ այնպէս, կեանքը ցոյց տուեց, որ սխալուած էին անգլիացիները: Բնազդական անհաւատարմութեան ոյժով միայն քաղաքական դաւերի մէջ ճարպիկ՝ թուրքաթաթարները, իրո՛ք, կարողացել էին խաբել թէ՛ բոլշեւիկներին, թէ՛ հռչակաւոր դիւանագէտների հայրենիք Անգլիայի զինուորականներին: Էնվէրը պատրաստւում էր բոլշեւիկների դրամներով եւ զէնքերով Թուրքեստանում իսլամական ոյժեր կազմակերպել, որպէս թէ Անգլիայի դէմ (հետագային Էնվէրը յարձակուեց բոլշեւիկների վրայ՝ կորցնելով կռիւը եւ սեփական կեանքը): Կ. Պոլսի սուլթանական կառավարութիւնը յանձնուել էր Անգլիայի գթութեան եւ չտեսնուած հաւատարմութիւն էր կեղծում, ձեռքի տակից օգնելով քեմալական շարժման: Քեմալը բոլշեւիկների «հաւատարիմ» զինակիցն էր, բայց առիթ չէր փախցնում ներշնչել անգլիացիներին, թէ պատուար է ստեղծում բոլշեւիզմի դէմ: Միւս կողմից, նա ձգտում էր Թուրքիայի աւարը Դաշնակիցների միջեւ կռուախնձոր դարձնելով՝ սրանց բաժանել միմեանցից: Բագուի թաթարական կառավարութիւնը թունդ «հակաբոլշեւիկ» էր, մի թելով՝ Քեմալին, միւսով՝ Էնվէրին կապուած:

Հայերն հասկանում էին այս խաղերի իմաստը, բայց նրանց խօսքը կշիռ չունէր անգլիացիների մօտ: Որքա՛ն աւելի ծառայած պիտի լինէին սրանք ճշմարտութեան թէ իրանց հաշիւներին, եթէ զօր. Թոմսընի եւ սրա բոլոր սպաների փոխարէն, մի հատ Ջէյմս Մորիէր, այսինքն՝ խորաթափանց մի հոգեգէտ ուղարկէին Արեւելք: Եթէ անգլիացին պատրաստուած հոգեբան չէ՝ ապա պիտի ընդունել, որ դա ամենատգէտ մարդն է աշխարհում: Ջէյմս Մորիէրը հանճարաւոր կերպով տուել է արեւելեան Դոն Կիխոտ Հաջի Բաբայի տիպը: Անհաւատարմութեան, մանր կեղծիքների եւ սնասարսափների այդ հերոսը ներկայացնում է ո՛չ թէ հարազատ պարսիկը, այլ՝ պարսկացած թաթարը: Սրա ոգին է, որ այնքա՛ն սքանչելիօրէն լուսանկարել է Ջէյմս Մորիէրը, թէպէտեւ քիչ է խօսել այն մասին, թէ ինչպէ՞ս է մուրում թաթարը: Դա իր բարերարին մօտենում է գթաշարժ ընկրկումներով: Օրհնութիւններ եւ փառաբանութիւններ է շռայլում ողորմութիւնն ստանալուց առաջ: Մերժուելիս՝ հեռանում է դանդաղօրէն օրօրուելով, յոյսի վերջին աղաչանքը շրթունքների վրայ, հայհոյանքը՝ լեզուի տակ, ոխը՝ սրտում: Սովորական չափով ստանալիս՝ խոյս է տալիս աճապարանքով, հայեացքը կախ, անշնորհակալ, որպէս թէ մի անիրաւութեան դէմ՝

գանգատելու վճռով գնալիս լինի: Սպասածից աւելին կորզելիս՝ դա մի քանի քայլ է անում, ապա կանգնում՝ բռնելով կէս սպառնական, կէս զարմացական դիրք՝ անորոշ բաղձանքներ եւ ժանտակնճիռներ դէմքի վրայ: Պարսկական Ատրպատականի Խէյրաբադ գիւղում շատերն են երեւի հանդիպել թաթար նիզակաւոր մի մուրացկանի, որ անցորդներին ընդունում էր որպէս հին բարեկամների, անէծքներ, լուտանքներ, սպառնալիքներ ուղղում նրանց երեւելի եւ աներեւոյթ թշնամիների հասցէին: Անշո՛ւշտ, այդ գիւղով անցնում էին ե՛ւ միմեանց թշնամի մարդիկ, որով՝ ի բացակայութեան հայհոյւում էին ե՛ւ մէկը ե՛ւ միւսը, իսկ խորամանկ մուրացկանը նուէր ստանում էր երկուսից էլ:

Նոյնն է թուրքաթաթար ցեղի վարքագիծը ե՛ւ քաղաքականութեան մէջ: Նրան է յատուկ երկդիմութեամբ մոլորանք ստեղծելու, ինչպէս նաեւ անտրամաբանական խօսքերով պարզամտութիւն, համակրանք եւ դիմադարձութիւն կեղծելու արուեստը, որով, յաճախ յաջողում է ուրիշների ներհակական տրամադրութիւնները ծառայեցնել անմիջական իր նպատակներին: Սուտ երդումի անմրցելի վարպետն է դա: Արտաքուստ անչափելիօրէն մակերեսային՝ թւում է, թէ նրա համար գոյութիւն չունի իմաստի որեւէ կապակցութիւն՝ պատճառի եւ հետեւանքի միջեւ: Սովմա գիւղում (Թաւրիզ - Ղազուին ճամբին) մեզ հանդիպել է մի թաթար (Իրզա Կուլի) որ գիտէր նաեւ բարձր բաների մասին. *«Ես սոսիալ եմ* (այսինքն՝ սոցիալիստ), *որովհետեւ Տոլստոյի մահուան տարին գտնւում էի Բագու»*: Աւելի զարգացած մի թուրք՝ սպայ, քաղաքական գործիչ եւ գրավաճառ Իսմայիլ էֆէնդին՝ 1926թ., Անգորայի «անկախութեան ատեան»-ի առաջ, վկայում էր. *«Կարաբեքիր Քեազիմ փաշան իր բանակով կատարելապէս դէպի համայնավարութիւն էր գնում: Հասան Կալէի բաղնիքում զինուորներն ու սպաները միասին էին լուացւում»...* Իսկ յետո՞յ. *«Կարաբեքիրն արդէն այնպիսի նահանջ էր արել համայնավարութիւնից, որ դուք անգամ պիտի զարմանայիք»*: Ծիծաղելին բաղնիքի ջրով թուրքերի համայնավար մկրտուելը չէ, այլ ա՛յն, որ բոլշեւիկները թէ անգլիացիք չկարողացան ըմբռնել, որ նրանց «ռուսասիրութեան» եւ «անգլիասիրութեան» միջեւ այնքան տարբերութիւն կայ, որքան բաղնիքում խմբովին կամ առանձնապէս լուացուելու: Այսպիսի միջոցներով է թուրքը դիմահակութիւն կամ դիմադարձութիւն կեղծում: Այդպէս է մի՛շտ եւ այսօր: Ո՞ր ազգն է ընդունակ յղանալ եւ ներկայ պայմաններում, թէկուզ ամենակարճ ժամանակով, արժեցնել Անգորայի քաղաքական գործիչների օրուայ բանաձեւը. *«Ռուսիային երախտապարտ ենք, Անգլիային՝ զինակից,*

Գերմանիային՝ բարեկամ»... որ ասել է՝ բոլորի հետ ենք եւ ո՛չ ոքի, որովհետեւ չգիտենք՝ ո՞վ է յաղթելու:

Երկդիմութեան մէջ անմրցելիօրէն ճկուն՝ թուրքը մշտարթուն է «բարեկամներ»-ի տկարութիւնից, զինակցի պարտութիւնից, մրցորդների շահերի հակամարտութիւնից եւ ամէն պատեհութիւնից օգտուելու գործում: Բայց եւ այնպէս տկարի կեղծիքն այն դէպքում է ազդում, երբ զօրաւորին պակասում է մտածումի բարոյականը: Անդրկովկասի անգլ. զօրահրամանատարութիւնն ենթադրում էր, թէ միայն թուրքաթաթարները կարող են Արեւելքում թումբ կազմել Ռուսաստանի դէմ: Նա չէր անդրադառնում, որ համայնավարութիւնը, լինելով «հրէական յղացում եւ մոնղոլական գործ» (Զոմբարտ) կամ չոր նիւթապաշտական շարժում՝ շատ գծերով մերձենում է իսլամական զգայապաշտութեան եւ ամէնից աւելի մատչելի է վերացումից, գաղափարական ապրումից զուրկ թուրքաթաթարներին: Անգլիացիների «թմբային» այդ ցնորքն օգտագործելով միայն տաճիկները կարող էին դուրս գալ քաղաքական իրերի բարդ խառնուրդից: Նրանք տեսնում էին, որ Ֆրանսիան Կիլիկիա է մտցրել Հայկական Լեգեոնը, եւ այնտեղ վերաբնակեցնելով Մեծ Եղեռնից վերազատուած մի քանի հարիւր հազար հայեր՝ սպառնում է ստեղծել մեծ Հայաստան: Տեսնում էին՝ Հայաստանի վերականգնումի գաղափարը մեծ ժողովրդականութիւն է վայելում Եւրոպայում, առաւել չափով՝ Ամերիկայում, եւ որ վերջապէս, Անգլիայում իսկ դեռեւս իշխում է հայասէր Լլոյդ Ջորջը: Նրանք գիտէին նոյնպէս, որ Իտալիան, դժգոհ Մուդրոսի անգլեւթուրք գաղտնաբանութիւններից, առիթներ է փնտռում հարաւարեւմտեան Անատոլիայում նուաճումներ անել: Վերջապէս, Փոքր Ասիայում խմորւում էր ե՛ւ յունական հարցը: Այդ բոլորով հանդերձ, նրանք գիտէին, որ Անգլիայում ամէն ինչ պայմանական է, որ Անգլիան «քրիստոնեասէր» է, երբ Թուրքիան եւրոպական այլ մի ոյժի զինակիցն է ու «իսլամասէր» է, երբ ձգտում է կասեցնել իր մրցորդների շարժը դէպի Արեւելք: Նրանք հասկանում էին, որ այդ օրերին Անգլիան ամէնից աւելի անհանգստանում է բոլշեւիկներից: Ուստի, մնում էր թունդ հակաբոլշեւիզմ կեղծելով՝ շահել անգլիացիների վստահութիւնը, սրանց օժանդակութեամբ ազերի թաթարներին հայերի դէմ գործիք ծառայեցնելով՝ «խռովութիւններ»-ը Կովկասում կենտրոնացնել եւ թուրքաց Հայաստանը զերծ պահել գրաւման այն սպառնալիքից, որ բխում էր Մուդրոսի զինադադարային պայմանների 24-րդ կէտից: Աւելին, նոյն այդ նպատակով, տաճիկները յաջողեցին Կովկասում սերմանել անգամ հայ-վրացական թշնամանք: Հայկական Ախալքալաք գաւառը դատարկելիս՝ նրանք

հնարաւոր դարձրին, որ կանխելով հայերին՝ վրացական զօրամասերը գրաւեն այդ վայրը: Այս մեքենայութեամբ, տաճիկներն օգտուեցին հայ թէ վրացի ղեկավարների քաղաքական անհեռատեսութիւնից, եւ անգլիացիների աչքի առջեւ իրար զարկել տուին երկու ժողովուրդներ, որոնք դարերով միասին ապրել, տառապել եւ պայքարել էին որպէս կրօնական ուխտի թէ քաղաքական ճակատագրի եղբայրներ:

Անգլիացիները չէին ուզում հասկանալ, որ տաճիկները միմեանց դէմ լարելով Կովկասի ժողովուրդներին՝ յետին հաշուով ծառայում են բոլշեւիկներին, հարթում նրանց տիրապետութեան ուղին: Եւ, իսկապէս, ի՞նչ եղաւ այդ դաւերի հետեւանքը: Անդրկովկասի ժողովուրդներից ո՛չ մէկը կարողացաւ հասկացողութեան եզր գտնել միւսի հետ: Հայերն ու թաթարներն անխնայօրէն ջարդեցին իրար: Յարձակուողները թաթարներն էին, որոնք վայելում էին անգլիացիների օժանդակութիւնը եւ ղեկավարւում թուրք սպաներից: Գործը կազմակերպուած էր թաթարական վարպետութեամբ: Չարաշահւում էր սովատանջ Հայաստանի դժբախտութիւնը եւ անգլիացիների այն նախապաշարումը, թէ հայերն «անուղղայ ռուսասէր» են: Երեւանի ադրբեջանեան դեսպան Խան Թեքինսկին ապրիլ 22-ին (1919թ.) գաղտնագրում է իր կառավարութեան. *«Հացի բացակայութեան պատճառով Հայաստանը չի կարող ապրել ինքնուրոյն կեանքով»* (ահա՛ թէ ինչո՞ւ անգլ. հրամանատարութիւնը զլանում էր անգամ «վիզա» տալ Քաջազնունուն): Մայիս 10-ին (1919թ.) նոյն դեսպանը գրում *է. «Բոլշեւիկների կողմից Բագուին վտանգ սպառնալը պատրուակ բռնելով՝ խնդրեցէք անգլիացիներին, որ* (Հայաստանին վերադարձուած) *Կարսի թնդանօթները փոխադրեն Բագու»* (Դենիկինեան ոյժերի խնդրանքով, անգլիացիներն այդ թնդանօթները յանձնեցին նրանց): Նոյն տարուայ յունիս 4-ին Խան Թեքինսկին առաջարկում է. *«Որեւէ պատճառ բռնելով՝ յետաձգեցէ՛ք Հայաստանի երկաթուղիների համար նաւթ ուղարկելը»*: Տեղեակ այս բոլորին, անգլիացիներն ո՛չ միայն չէին միջամտում, այլեւ՝ անվերջ պահանջում էին, որ հայերն իրանց երկրի բախտորոշ դիրք Ղարաբաղը զիջեն Ադրբեջանին: Օգտուելով անգլիացիների հակահայ այս տրամադրութիւններից՝ ադրբեջանական նախարար Ուսուպբեգովը յանդգնում էր անգամ «Չորսերի Խորհուրդ»-ի կողմից Հայաստանի կոմիսար նշանակուած եւ հայանպաստ մեծ ծրագիրներով Կովկաս մտած ամերիկացի Հասկելի տեղակալ գնդ. Ռէյնին ասել. *«Պէտք է ոչնչացնել հայ ապստամբների անիշխանական բոլշեւիկեան հրոսախմբերը»*, այսինքն՝ Ղարաբաղ-Զանգեզուրի հայ բնակչութիւնը: Եւ, իսկապէս, մինչդեռ Լլոյդ Ջորջն ու Ուիլսոնը Մեծ Հայաստանի ծրագիրներ

էին մշակում, Անդրկովկասի անգլ. հրամանատարութիւնը քաջալերում էր թուրքաթաթար շարժումները Հայաստանին յանձնուած Կարսի, Շարուր-Նախիջեւանի շրջաններում եւ հայկական արիւն թափել տալիս Ղարաբաղում: Նրա օժանդակութեամբ կենտրոնացումներ կատարած ադրբեջանեան զօրքը յունիս 4-ին (1919թ.) յարձակուեց Շուշի քաղաքի բնակչութեան վրայ: Սկզբում լուռ հանդիսատես՝ անգլիական զօրամասի պետ Մակ Մեզենը միջամտեց, երբ օրհասօրէն դիմադրող հայերն իրանց դիրքերից քշեցին թուրքաթաթարներին: Ի գործադրումն կնքուած «զինադադար»-ի՝ անգլ. զինուորները պէտք է գրաւէին կռուող կողմերի դիրքերը: Բայց նրանք բռնեցին միայն հայերի դիրքերը եւ թաթարներին հնարաւորութիւն ընծայեցին՝ կոտորել կամ աւերել Ղայրալիքինդ, Կրկըժան եւ Փահլիւլ հայկական գիւղերը: Ի զուր էին բողոքում Ղարաբաղի հայերը, Հայաստանի կառավարութիւնը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վերջինը, դիմելով անգլ. զօրավար Քորիին, գրում էր. *«Մենք համոզուած ենք* (պէտք է ասուէր՝ «էինք»), *որ դաշնակիցների հովանաւորութեան շնորհիւ՝ մեր հօտի համար հասել է փրկութիւնն երկար տանջանքներից եւ չարչարանքներից: Բայց եւ այնպէս, Ղարաբաղում հոսում է անմեղ արիւնը կանանց, երեխաների եւ նրանց հերոսական պաշտպանների»...* Չազդեց անգամ անգլ. զօրահրամանատարութեան կողմից որպէս քննիչ Ղարաբաղ ուղարկուած գնդ. Գլադերբերգի զեկուցագիրը, որով նա, հաստատելով, թէ արիւնոտ դէպքերի պատասխանատուն Սուլթանովն է (այսինքն՝ Ադրբեջանը), պահանջում էր նրա հեռացումը եւ պատժուելը: Անգլիական զօրահրամանատարութեան համար Ադրբեջանը մնաց *«օրէնքի եւ կարգի»* պահապանը՝ արիւնլուայ Ղարաբաղում: Յաջորդ գարնան (1920թ.) ի սպառ կործանուեց Շուշի քաղաքը, որի բնակիչներից 3.000 կանայք եւ երեխաներ սրի քաշուեցին: Ցցի վրայ առած նահատակ Վահան եպիսկոպոսի գլուխը՝ թաթար զօրքն ու ամբոխը խրախճանքներ սարքեցին Ղարաբաղի հռչակաւոր մայրաքաղաքի՝ դիակներով ծածկուած փողոցներում: Նոյն բախտին արժանացաւ եւ Ասկերանում հերոսի մահով ընկած Դալի Ղազարի՝ քաջութեան աննման այդ ասպետի գլուխը: Ղարաբաղում կործանուեցին նաեւ 25 հայկական գիւղեր: Հայոց պատմութեան հնագոյն օրերից հռչակուած Գողթն գաւառը զրկուեց մշակոյթի գլխաւոր իր վառարան Ագուլիսից, որի բնակիչները նոյնպէս սրի քաշուեցին: Շարուրի ապստամբ թուրքաթաթարներն ոչնչացրին այդ շրջանի հայկական վեց գիւղերը:

Բայց այդ բոլորը մահացուօրէն ծանր հետեւանքներ ունեցան եւ

Ադրբեջանի համար: Դիւցազնական կռիւների մէջ թրծուած Զանգեզուրի հայերը, որոնք դեռեւս 1918 թուից մի քանի անգամ ջախջախել էին տաճկաթաթարական յարձակումները, 1919թ. օգոստոս ամսից օժտուելով Գ. Նժդեհի հմուտ եւ խանդավառող հրամանատարութեամբ՝ ոչնչացուցիչ հարուածներով խորտակեցին Ադրբեջանի զինուորական ոյժերը, կործանեցին 200 թաթարական գիւղեր եւ 1920թ. ապրիլ 13-ին հայաստանեան զօրքերի հետ՝ մտան Ղարաբաղ: Այդ պայմաններում Ադրբեջանը նախընտրեց գործադրել տաճիկների ցանկութիւնը: Ապրիլ 28-ին (1920թ.) նա կամովին խորհրդայնացաւ՝ ապաւինելով ռուսական «Կարմիր Բանակ»-ի օգնութեան:

ԹՈՒՐՔ ԵՒ ԲՈԼՇԵՒԻԿ ԶԻՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Կոյր գործիք տաճիկների ձեռքում՝ Ադրբեջանը, վերջ ի վերջոյ, պիտի ունենար տխուր վախճան: Որ տաճիկները հայկական նահանգներն իրանց պահելու նպատակով խաբել, դաւադրել եւ զոհ էին դարձրել իրանց ցեղակից թաթարներին՝ դա երեւում է ապրիլ 15-ին (1920թ.) Կարինում կնքուած թուրք-ադրբեջանեան գաղտնի դաշինքից: Իր համար մահավճռական այդ «դաշինք»-ի յօդ. 5-րդով Ադրբեջանը յանձն է առնում ծառայել Խ. Ռուսիայի եւ անատոլիական Թուրքիայի մերձեցման եւ ի պահանջել հարկին՝ *«յարել այդ միութեան»:* Յօդ. 7-րդով կողմերը *«վճռականօրէն խոստանում»* են, որ *«երբ Հայաստանը յարձակում գործի Ադրբեջանի վրայ, եւ… երբ Թուրքիայի արեւելեան շրջանները տրուեն…Հայաստանին, …պաշտպանել միմեանց շահերը եւ գործել իբրեւ միացած բանակ»*: Յօդ. 7-րդը դրուել է միայն նրա համար, որպէսզի տաճիկներն օրինականացնեն յօդ. 5-րդի իրագործումը: Նրանք օգնութեան չհասան տագնապուած Ադրբեջանին, իսկ սրա քաղաքական վարիչները հեռատեսութիւն չունեցան հասկացողութեան եզր փնտրելու իրանց դրացի հայերի հետ: Օգտուելով ադրբեջանցիների քաղաքական տհասութիւնից՝ Կարինի փոխադարձ օգնութեան «դաշինք»-ը թուրքերի կողմից ստորագրող Կարաբեքիր Քեազիմը գրում էր. *«Մեր, Ադրբեջանի եւ բոլշեւիկների միջեւ կնքուած պայմանների հիման վրայ, մեր սպաները, բժիշկները եւ պաշտօնեաները մեծ թուով գնացել են Ադրբեջան* (նրանք այնտեղ գաղտնի աշխատանքներով հող էին մշակում՝ բոլշեւիկեան թափանցումը հեշտացնելու համար): *«Բոլշեւիկները մեզ առաջարկեցին անյապաղ պատերազմական գործողութիւններ սկսել հայերի դէմ՝ Հայաստանի սահմանների վրայ եւ ֆրանսիացիների (իրականում՝ կրկին*

հայերի) դէմ՝ Կիլիկիայում: Բոլշեւիկների կազմակերպած իսլամական «Կանաչ Բանակ»-ն Էնվէրի, Նուրիի եւ Խալիլի ղեկավարութեամբ պէտք է... մտնի Բագու: Ադրբեջանեան զօրքերը պէտք է ցոյց տան կեղծ-խաբեպատիր դիմադրութիւն, որպէսզի կարողանան իրանց արդարացնել դաշնակիցների առաջ» (Ադրբեջանի գերեզմանը փորելուց յետոյ իսկ թուրքերն հարկ են տեսել դերասանական մի խաղ թելադրել իրանց զոհին. եւ այդ ո՛չ թէ նրա համար, որ ադրբեջանցիները դաշնակիցների առաջ արդարանան, այլ որ վերջինները շարունակեն մոլորանքի մէջ մնալ ռուս եւ թուրք զինակցութեան խնդրում): Դրանից յետոյ Քեազիմ Կարաբեքիր փաշան գալիս է բուն խնդրին - Ադրբեջանում կենտրոնացած բոլշեւիկ եւ թուրք *«զօրքերը պէտք է... Անատոլիայի թուրք զօրքերի հետ... ռազմական գործողութիւններ սկսեն Հայաստանի դէմ»:* Հարցը պարզ է. բոլշեւիկների օգնութեամբ Հայաստանը խորտակելու նպատակով տաճիկները վաճառքի են հանել ադրբեջանցիների կաշին: Կատարուել է «իսլամասիրական» սակարկութիւն - Բագուն՝ ռուսներին, հայկական նահանգները՝ տաճիկներին, ստրկութիւնը՝ թաթարներին: Աղէտից յետոյ միայն ադրբեջանեան որոշ գործիչներ անդրադարձան, որ թուրք «եղբայրներ»-ի ձեռքով նետուել են կարմիր թակարդը: Թիֆլիս ապաստանած ադրբեջանեան գործիչ Հասան Աղայեւը 13 յունիսին (1920թ.) դառն գանգատներով Էնվէրին ուղղած իր նամակում, ի միջի այլոց, ասում է, թէ իրանք խաբուած են, թէ Ղարաբաղ-Զանգեզուրի հայերի մղած կռիւները պատճառ դարձան Ադրբեջանի կործանման, թէ իրանց բանակն այն աստիճան սպառուած էր, որ ռուսական ամբողջ սահմանագծի վրայ միայն 300 զինուոր էր մնացել... Այդ բոլորից յետոյ Աղայեւն ողբում է, որ խորհրդայնացած Ադրբեջանում կրկին հայերն են իշխում: Դեռ այդ վիճակում էլ «իսլամական» նախապաշարումը, նեղսրտութիւնը թոյլ չեն տալիս աղայեւներին անդրադառնալ, որ ինչպէս թուրքերն էին իրանց խաբել, այդպէս էլ ռուսները՝ Բագուում հաւաքուած հայ բոլշեւիկներին:

Բոլշեւիկ եւ թուրք զինակցութիւնն ունէր նա՛խ ոգեկան իր պատճառները. բոլշեւիզմն ռուս մարդու մէջ եղած ասիական տարերքի շարժն էր, իսկ տաճիկներն, ամէն տեսակէտով, ասիական ժողովուրդ են: Բոլշեւիկների կողմից սնուցւում էր ե՛ւ ընկերային ցնորք՝ տաճիկների միջոցով շարժման մէջ դնել իսլամը եւ դաշնակիցների դէմ յարդարել ո՛չ միայն ասիական, այլեւ՝ հակաքրիստոնէական ճակատը: Այս երազով խանդավառուելու առանձին հիմքեր ունէր բնազդներով սեմական իր էութեան կապուած հրեայ տարրը, որ ղեկավար դեր էր

խաղում Գ. Միջազգայնականում: Քաղաքական շարժառիթը զուտ ռուսական էր եւ պայմանաւորուած Թուրքիայի բաժանման խնդրով - բոլշեւիկներն էլ հին ռուսների նման մտածում էին՝ «Կ. Պոլիսը, Նեղուցները, Հայկական Բարձրաւանդակը եթէ ո՛չ մեզ, ապա եւ ո՛չ մի եւրոպական ոյժի»: Այդ մտածումի պատճառով, Նիկոլայ Ա.-ն, 1830-ական թուականներին եգիպտացի Իբրահիմ փաշայի խորտակիչ հարուածներից փրկել էր սուլթանների պետութիւնը: Կրկին ենթակայ Ռուսաստանի համար անշահ մի բաժանումի վտանգին, Թուրքիան դիմել էր բոլշեւիկների օգնութեան: Սրանց «տեսաբանութեամբ», ռուս եւ թուրք զինակցութիւնն ուղղուած էր եւրոպական կայսերապաշտութեան, թուրքական հաշուով՝ Փոքր Ասիա մտած յոյների, մանաւանդ վեց նահանգներին սպառնացող հայերի դէմ: Բոլշեւիկները խօսում էին Հայաստանն «եւրոպական գիշատիչ կայսերապաշտութեան ճիրաններից փրկելու» մասին: Նրանք այնպէս էին ձեւացնում՝ որպէս թէ ընդունում են հայկական պահանջների արդարացիութիւնը եւ ջանք չեն խնայելու իրականացնել դրանք: Հիասթափուած Անգլիայից եւ քաղաքական մտածումով մի՛շտ միեւնոյն վիպապաշտները, Ռուսաստանում ապրող հայ բոլշեւիկները վառ երազներ էին հիւսում: Հայկական կառավարութեան հետ բանակցող Չիչերինն ու Կարախանը Ռուսաստանի միջնորդութիւնն էին առաջարկում թուրքաց Հայաստանի հարցը տաճիկների հետ «խաղաղօրէն» լուծելու խնդրում: Հայաստանում, սակայն, հասկանում էին, որ բոլշեւիկ եւ թուրք զինակցութիւնն ուղղուած է Ռուսաստանի դարաւոր զոհ հայ ժողովրդի ազգային տեսիլքների դէմ: Բոլշեւիկեան այդ դաւաճանութիւնը համարւում էր մէկը պատմութեան ամենասեւ այն գործերից, որոնք յատկանշում են հոգեկան ամենախոր անկումը, որին երբեւիցէ ենթարկուել է ռուս ազգը: Դրանով, բոլշեւիզմը, հայ ժողովրդի աչքին, առյաւէտ կնքել էր բարոյական իր մահկանացուն: Ցնծուած այդ բոլորից, քաղաքական իրապաշտութիւնը բարոյական սկզբունքներին ստորադասող հայ ժողովուրդը պատրաստուեց անհաւասար կռուի: Հայերը տեսնում էին, որ կրկին մենակ են՝ ճակատագրօրէն, բայց նրանց նահատակութեան մեծ ցաւը՝ միացած ազգային նուիրական տեսիլքի խորտակման հեռապատկերին՝ նախընտրելի էր դարձնում մահը: Եւ մինչդեռ Մոսկուայում բանակցութիւններ էին տարւում՝ Հայաստանում մղւում էր ողբերգօրէն օրհասական կռիւը:

ՊԱՅՔԱՐ ԹՈՒՐՔ ԵՒ ԲՈԼՇԵՒԻԿ ՃԱԿԱՏԻ ԴԷՄ

Մայիսի սկզբներին (1920թ.) Ադրբեջան մտած խորհրդային 11-րդ բանակն երեւաց Հայաստանի սահմաններին: Միաժամանակ, բոլշեւիկները ներքին խռովութիւններ յարուցեցին երկրի ներսում: Այս շարժումները ճզմուեցին, եւ ռուսական բանակի առաջխաղացումը կասեցուեց հենց սահմանագծի վրայ: Յունիս 19-ից մինչեւ յուլիս 25-ը մաքրուեցին թաթարական մի քանի շրջաններ (Զանգիբասար, Վեդի, Շարուր, Աղբաբա եւն.): Իսլամ բնակչութիւնը տեղահանուեց եւ սրա հետ գործող տաճկական զօրախմբերն ոչնչացան կամ փախան դէպի Թուրքիա եւ Պարսկաստան, ռազմադաշտերում թողնելով նաեւ թնդանօթներ, գնդացիրներ: Յունիս 18-21, Օլթիի մօտ, ջարդուեցին ե՛ւ Խալիլ բէյի հրամանատարութեամբ գործող տաճկական զօրքերը: Զանգեզուրում հերոսական կռիւներ էին մղւում Կարմիր Բանակի եւ սրա դրօշի տակ գործող թուրքաթաթարական զօրամասերի դէմ (բոլշեւիկները Սիբիրից բերել էին եւ հայերի դէմ հանել նաեւ թուրք այն զինուորներին, որոնք ցարական բանակի կողմից 1914-17-ը գերի էին վերցուել ռուս-թուրքական ռազմաբեմերից):

Ծանր կռիւ էր տանում փոքրիկ Հայաստանը հսկայ Ռուսաստանի եւ իսլամական իր շրջապատի դէմ: Մահմեդական դրացիներից բարեացակամ չէզոքութիւն էր պահում միայն Պարսկաստանը, որ վտանգուած արդէն Ռաշտ եւ Էնզէլի ներխուժած բոլշեւիկներից, փրկութեան իր յոյսը կապել էր Հայաստանի, մասնաւորապէս սահմանակից Զանգեզուրի դիմադրութեան: Քրիստոնեայ Վրաստանը նախընտրել էր ապաւինել ինքնախաբէութեան՝ «բարեկամական» դաշինք կնքելով Ռուսաստանի հետ, թէպէտեւ զգում էր, որ Հայաստանի անկումից յետոյ կեանք չունի ե՛ւ ինքը: Եւրոպայից իրական ե՛ւ ո՛չ մի օգնութիւն: Անգլիացիները բոլշեւիզմի դէմ գործում էին «անուղղակի» ճակատով, այսինքն՝ ռուսական քաղաքացիական կռուի մէջ հակաբոլշեւիկ ոյժերին (Դենիկին, Վրանգէլ եւն.) քաջալերելով: Տեսնելով, որ իրերը Ռուսաստանում դասաւորւում են ի նպաստ բոլշեւիկների, նրանք, «բանակի ծախքերը կրճատելու» պատրուակով, իրանց զօրամասերը վաղուց արդէն քաշել էին ե՛ւ Անդրկովկասից (բողոքելով իր հայրենակիցների դէմ, թէ Հայաստանի լքումը պատմութեան բարոյական դատավճռին է յանձնելու Դաշնակիցներին՝ հայկական բանակի ծառայութեան մէջ մնաւ միայն մի հատիկ գաղափարական անգլիացի երիտասարդ սպայ Օլիվըր Բոլդուինը, որդին անգլիական հետագայ վարչապետ Բոլդուինի): Հակառակ անյոյս այդ դրութեան, անհաւա-

սար կռիւը, մայիսի սկիզբներից մինչեւ սեպտեմբերի վերջերը, ընթացաւ ի նպաստ հայ զէնքի: Ապաւինած իր դատի արդարութեան գաղափարին, հայ ժողովուրդը մաքառում էր կրօնական ապրումի հասնող խանդով եւ նուիրումով: Նա լարել էր վերջին իր ոյժերը եւ կրում էր ծանր կորուստներ: Զոհերի մէջ էին մտաւորական թէ մարտական լաւագոյն դէմքեր: Բոլշեւիկները չխնայեցին անգամ աղաւնահոգի եւ սրբակենցաղ մի իդէալիստի՝ իմաստասէր Վահան Խորէնուն: Եւ հայ ժողովուրդը բարոյական ամենախոր ցասումով հարցնում էր. ի՞նչ է տարբերութիւնը բոլշեւիկների եւ Սիամանթոյի, Վարուժանի նման բանաստեղծական հանճարներ մորթոտումով ոչնչացնող թուրքերի միջեւ:

ՍԵՒՐԸ–ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Ադրբեջանի խորհրդայնացումը, ռուսեւթուրք զինակցութեան մերկացումը եւ հայերի մղած հերոսական կռիւները պիտի գային համոզելու անգլիացիներին, թէ ոչինչ է եղել թաթարների ռազմական տարողութիւնը, ցնորք՝ իսլամին կապուած «թմբային» ծրագիրը, խաբէութիւն՝ տաճիկների անգլիասիրական քաղաքականութիւնը, նաեւ սխալ՝ երկու տարուայ հայավնաս իրանց ընթացքը: Առանց հրապարակով խոստովանելու, նրանք զգում էին, որ երկամեայ իրանց «հովանաւորութիւն»-ը տխուր հետքեր է թողել Անդրկովկասում: Նրանք քայքայել էին Ղարաբաղի ռազմահռչակ հայութիւնը՝ վտանգելով Հայաստանի ինքնապաշտպանութեան գործը: Նրանց անհեռատես եւ անգութ վարմունքի պատճառով՝ սովն ու հայ-թաթարական նոր կոտորածները հայ ազգից խլել էին 150.000 յաւելեալ զոհեր – մի բան, որ նոյնպէս պակասեցրել էր արդէն փոքրիկ երկրի դիմադրական կարողութիւնը: Հայկական նահանգները, Կարին բերդաքաղաքի հետ, մնացել էին տաճիկների ձեռքը, որով՝ նաեւ ռազմագիտօրէն վտանգուած էր Հայաստանը: Ձգձգելով Հայաստանի սահմանների որոշման հարցը, անհնար էր դարձուել հայկական ներգաղթը, որով՝ ազգի մեծ մասը շարունակում էր հեռու ապրել իր հայրենիքի սահմաններից եւ նրա պաշտպանութեան տեսակէտով՝ մնալ մեռեալ տարր: Թուրքաթաթարական վտանգի տեւական սպառնալիքի տակ պահելով Հայաստանը, մասամբ եւ Վրաստանը, անգլիացիները պատճառ էին դարձել նոյնպէս, որ այս երկիրներում որոշ հող գտնի բոլշեւիզմը: Մասնաւորապէս Ռուսաստանում ապրող հայերը սկսել էին մտածել, թէ Դաշնակիցներից խաբուած եւ դաւադրուած հայութիւնը ռուսների

օգնութեամբ կարող է կրկին տիրանալ պատմական իր հողերին կամ գտնել հնարաւոր ազատութիւնը: Այդ մտածումը հեշտացրել էր նրանց բոլշեւիկացումը: Շատ ուշ միայն այդ դժբախտները (ոմանք՝ անկումի օրէնքով խաթարման ծայրակէտին հասած) պիտի հասկանային, որ փախչելով «աղուէսից»՝ ընկել են արջի թաթերի տակ: Եւ վերջապէս, միմեանց դէմ լարուած կամ անհաշտ պահելով Անդրկովկասի ժողովուրդներին, դաշնակիցները վերացրել էին արտաքին թշնամիների՝ ռուսների թէ թուրքերի դէմ ընդհանուր ճակատ կազմելու հոգեկան թէ քաղաքական բոլոր կարելիութիւնները:

Այդ պայմաններում անգլիացիներին մնում էր գէթ բարոյական մխիթարութեամբ քաւել երկու տարուայ հակահայ իրանց քաղաքականութեան մեղքերը: Նրանք պարտքով մի քիչ ռազմամթերք տուեցին հայերին եւ քաղցր խօսքերով ահագին սին յոյսեր: Ներբողականներ էին ուղղւում հայկական բանակի հասցէին: Իրերի այդ դարձի շնորհիւ Անգլիայում եւ Ամերիկայում տիրապետեց Լլոյդ Ջորջի եւ Ուիլսոնի մտածումը՝ Հայկական Հարցի լուծման խնդրում: Ճշմարիտ է, որ պետական երկու այս գործիչները մինչեւ վերջ մնացին Հայաստանի վերականգնումի գաղափարի համոզուած պաշտպաններ, բայց նրանք դա անհրաժեշտ էին համարում աւելի բարոյական, քան թէ քաղաքական տեսակէտով: Հենց դրանով էլ իրանց երկրներում թէ Դաշնակիցների մօտ՝ նրանք տկարացնում էին Հայկական Դատը: Նրանք մոռանում էին, որ ապրում են քաղաքական շահագրգռութիւնների մէջ կրքոտած մի աշխարհում: Դեռեւս 1919թ. յունուար 30-ին նախագահ Ուիլսոնի առաջարկով հաշտութեան խորհրդաժողովն որոշեց ազատագրել Հայաստանը, դնելով նրան մեծ պետութիւններից մէկի հոգատարութեան ներքոյ: Բայց շատ շուտով պարզուեց, որ Դաշնակիցներից ո՛չ միայն Ֆրանսիան եւ Իտալիան, այլ մասամբ ե՛ւ Անգլիան, առ ի մարդկային ձեւակերպութիւն միայն ձայնակցել էին Ամերիկայի նախագահին: Մարտ 20-ին (1919թ.), Ուիլսոնի պահանջով, չորս պետութիւնները համաձայնուեցին խառն մի յանձնախումբ ուղարկել Մերձաւոր Արեւելք՝ քննելու Օսմանեան կայսրութեան սահմաններում ստեղծուելիք նոր երկրների դրութիւնը: Բայց ներկայացուցիչներ նշանակեց միայն Ամերիկան: Իտալիան եւ Ֆրանսիան անտարբեր մնացին, իսկ Անգլիայում Լլոյդ Ջորջի դէմ ճակատ էր արդէն խմորւում: Ամերիկեան ներկայացուցիչներ Քինգն ու Քրէյնը ամրան գնացին Պոլիս, եւ կատարած ուսումնասիրութիւններից եկան այն եզրակացութեան, թէ Օսմ. կայսրութիւնից պէտք է կազմել նոր երեք պետութիւն «Հայաստան», «Թուրքիա», «Պոլիս» եւ թէ դրանց բոլորի հոգատա-

րութիւնը պէտք է յանձնել Ամերիկային: Նոյն ամրան, Մերձ. Արեւելք ուղարկուեց ամերիկեան երկրորդ եւ շատ աւելի բազմամարդ մի յանձնախումբ՝ զօր. Հարբորդի նախագահութեամբ: Այս յանձնախումբը Կ. Պոլսի, Անատոլիայի, Կիլիկիայի եւ Հիւս. Սիրիայի վրայով անցաւ Հայաստան: Հարբորդի տեսակէտն այն էր, որ Հայաստանը, Անդրկովկասը, Անատոլիան, Կ. Պոլիսը եւ Թրակիան դրուեն Ամերիկայի հոգատարութեան տակ: Պարզ էր, որ հակառակ Ուիլսոնի գաղափարապաշտութեան, ամերիկեան քաղաքագէտները Հայաստանը փրկելու պատրուակով ձգտում էին նուաճել Առաջաւոր Ասիան եւ Նեղուցները: Այս միտումները Հայաստանի համար ունեցան աղիտաւոր հետեւանքներ: Նրանց պատճառով էր մասնաւորապէս, որ բոլշեւիկները յարեցին թուրքերին հովանաւորելու մտքին: Ամերիկեան թափանցումն Առաջ. Ասիայում խափանելու համար Մոսկուայում կրկնակի եւս անհրաժեշտ համարուեց ոչնչացնել եւրոպական թէ ամերիկեան միջամտութեան առիթներ ստեղծող կամ արդարացնող Հայաստանը: Այսպէս, Ուիլսոնի եւ Լլոյդ Ջորջի գաղափարապաշտութիւնը եւ սրա քաղաքական շահագործումն անգլեւամերիկեան աշխարհակալատենչ տարրերի կողմից՝ պատճառ դարձան, որ ռուս-թուրանական ասիականութիւնն աւելի՛ վճռականօրէն հանդէս գայ հայ ժողովրդի դէմ: Ի՞նչ պէտք է անէր Եւրոպան, երբ Հայաստանը մահու եւ կեանքի կռիւ էր մղում թուրքի եւ բոլշեւիկի վայրագութեան դէմ: Որքան լսել ենք, Ռումանիան է միայն այդ օրերին առաջարկ բերել եւ պատրաստակամութիւն յայտնել զինուած օգնութիւն հասցնելու Հայաստանին: Եւրոպական դիւանագիտութիւնը, սակայն, բաւարար համարեց հանդիսաւոր մի շարժուձեւով, թղթի վրայ, բարոյական հատուցում անել նահատակութեան իր ցաւի ոյժով պայքարող հայ ազգին: Սեւրում, օգոստոս 10-ին (1920թ.) հաշտութեան դաշն կնքուեց Դաշնակիցների եւ «պաշտօնական» Տաճկաստանի (Կ. Պոլսի կառավարութիւն) միջեւ: Այդ դաշնագրի Ջ. հատուածը, բաղկացած 6 յօդուածներից (88-93), յատկացուած է Հայաստանին: «Ազատութեան ճանապարհ»-ի վրայ նահատակուած իր ազգի տառապանքի, վշտի եւ յոյսի մեծ երգիչ Ահարոնեանին վիճակուեց վաղանցիկ երջանկութիւնը՝ հայկական պետութեան անունից ստորագրել այն վաւերաթուղթը, որով աշխարհն հայերին էր զիջում իրանց հայրենիքի մի մասը: Յօդ. 88-ն ասում է. *«Թուրքիան յայտարարում է, ինչպէս որ այդ արել են արդէն Դաշնակից պետութիւնները, թէ ինքը ճանաչում է Հայաստանն իբրեւ ազատ եւ անկախ պետութիւն»*: Յօդ. 89-ով *«Թուրքիան, Հայաստանը եւ դաշնադիր միւս բարձր կողմերը համաձայնւում են Ամերիկայի Մ. Նահանգների նախագահի*

իրաւարար վճռին յանձնել սահմանագծումը՝ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ՝ Կարինի, Տրապիզոնի, Վանի եւ Բաղէշի նահանգներում»...: Նախագահ Ուիլսոնը գծեց հայ-թուրքական սահմանը: Դա սկսում է Սեւ ծովից (Կիրասոնից արեւելք), իջնում դէպի հարաւ՝ մինչեւ Եփրատի ծունկը (Պինդանի մօտ), հակուելով դէպի արեւելք՝ Մնձուրի (Դերսիմ) լեռնաշղթայի վրայով մօտենում է Բիւրակնին, այստեղից կրկին ուղղուելով դէպի հարաւ՝ կտրում է Արածանին (Գենջի մօտ), ապա Հայկական Տաւրոսի հետ աղեղւում է դէպի արեւելք եւ յանգում պարսկական սահմանագծին (Պանամերիկ գիւղի մօտ): Սրանով՝ հայկական նահանգներից Հայաստանին տրւում էր շուրջ 100.000 քառ. քլմ. տարածութեամբ հող (Տարօնի, Բարձր Հայքի, Վասպուրականի պատմական շրջանները եւ Սեւ ծովի առաջաւորասիական գլխաւոր նաւահանգիստ Տրապիզոնը): Մեծ Հայքի արեւելեան մասից հայերի ձեռքում էր արդէն 56 հազար. քառ. քլմ. տարածութիւն (Երեւանի նահանգը, Կարսի վիճակը, գաւառներ Թիֆլիսի եւ Գանձակի նահանգներից): Այստեղ, աշխարհագրօրէն, պատմականօրէն թէ ազգագրապէս Հայաստանին պատկանող մի քանի գաւառներ (Ղարաբաղ, Լեռնային Գանձակ, Ախալքալաք, Նախիջեւանի մի մասը եւն.) շուրջ 18.000 քառ. քլմ. տարածութեամբ եւ 480.000 հայ, 160.000 թուրքաթաթար, 10.000 վրացի բնակչութեամբ՝ վիճելի էին մնում Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ: Այդ կապակցութեամբ՝ Սեւրի դաշնագրի 92-րդ յօդուածն ասում էր. *«Հայաստանի սահմաններն Ադրբեջանի եւ Վրաստանի հետ համապատասխան կերպով կ'որոշուեն շահագրգռուած պետութիւնների ընդհանուր համաձայնութեամբ»* այլապէս՝ խնդիրը լուծուելու է *«Դաշնակից գլխաւոր պետութիւնների կողմից»:* Այսպիսով, Հայաստանն ունենալու էր մօտ 170.000 քառ. քլմ. տարածութիւն եւ այն օրերի տուեալներով՝ մօտ 4 միլիոն բնակիչ (հայեր՝ 2.500.000, թուրքաթաթարներ՝ 600.000, քիւրդեր՝ 300.000, յոյներ՝ 200.000, եզիդներ՝ 120.000, ասորիներ՝ 120.000, լազեր, վրացիք, չէրքէզներ, ռուսներ՝ 100.000): Հայերից 1 միլիոնը, եզիդների եւ ասորիների մեծ մասը ներգաղթելու էին: Այդպիսի մի Հայաստան կրօնապէս կրելու էր քրիստոնէական, ցեղօրէն՝ արիական դրոշմ: Քրիստոնեայ էին 2.850.000 մարդիկ, մահմեդական՝ 970.000, աղանդաւոր՝ 120.000: Արիացեղ էին համարւում 3.140.000 մարդիկ, մոնղոլացեղ՝ 600.000, մնացեալը պատկանում էր կովկասեան ցեղերին եւ սեմախօս ժողովուրդներին:

Սեւրի դաշնագրով ջուր էր ընկնում հայերի դարաւոր ձգտումը՝ վերականգնելու Հայաստանը պատմական իր սահմաններում: Այդ

պահանջով էին Եւրոպային ներկայացել հայկական զոյգ պատուիրակութիւնները (ազգայինը՝ Պօղոս Նուբար փաշայի եւ հանրապետականը՝ Ահարոնեանի գլխաւորութեամբ): Մեծ Եղեռնից յետոյ շա՛տ բան էր փոխուել եւ հենց «Թան»-ը դիտել էր տալիս, որ հայերի ծրագիրը գործնական չէ, այլ միայն՝ «հայկական կայսրութիւն»-ը վերականգնելու անյոյս մի երազ: Այնքա՛ն տառապանքներից եւ անօրինակ նահատակութիւնից յետոյ դժուար էր հաշտուել այդ «երազ»-ի խորտակման փաստին: Հակառակ այնքան «վճռական» յայտարարութիւններին, քաղաքական Եւրոպան կիսով չափ արդարացրել էր տաճիկների ոճիրը: Նրանց էր թողնուել ո՛չ միայն ամբողջ Փոքր Հայքը, այլեւ հենց Մեծ Հայքի մի մասը (Խարբերդի եւ Տիգրանակերտի նահանգները եւ մի քանի գաւառներ Բաղէշի, անգամ՝ Վանի նահանգներից): Հայ ազգի թուական նուազման հետեւանքով բարդանում էր նաեւ թղթի վրայ արուածի նուաճման խնդիրը: Եւրոպայում խօսում էին ամերիկեան հոգատարութեան մասին: Ֆրանսիան դեռեւս հետապնդում էր Կիլիկիայում երկրորդ Հայաստան ստեղծելու ծրագիրը: Բայց եւ այնպէս, ո՛չ ոք էր տրամադիր գործնականօրէն շօշափել Հայաստանը թուրքաբոլշեւիկ զինակցութեան սպառնալիքի դէմ պաշտպանելու կամ հայերին ռազմապէս օգնելու հարցը:

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Հին Եւրոպայի շատ տկարութիւնները, խաբէութիւնները, ուրացումները պայմանաւորուում էին այն բանով, որ դա անընդունակ էր պատուի քարով կշռել իր խօսքերի, գործերի, իր «այո» եւ «ոչ»-ի արժէքը: Հնուց ի վեր ստեղծուել էր ա՛յն համոզումը, թէ Հայկական Հարցի լուծումն ենթադրում է բարոյական բարձր կեցուածք: Սեւրում, Դաշնակից դիւանագէտներն ուզեցին հասկացնել, թէ իրանք զուրկ չեն այդ բանից: Մի քանի օր յետոյ, սակայն, զգալի էր դառնում, որ Սեւրն եղել է հոգեհանգստեան մի արարողութիւն («յարգա՛նք նահատակ հայերի յիշատակին, մխիթարութի՛ւն ողջերին»): Դա յիշեցնում էր նաեւ դիմակահանդիսային մի ցոյց (միմեանց դաւաճանելուց առաջ՝ Դաշնակիցները հարկ էին համարել զինուել կեղծ բարեմտութեամբ):

Դաշնադիր ժողովին նախագահել էր ֆրանսիացի Միլլերանը, բայց թուրքական աւարից առիւծի բաժինն ընկել էր Անգլիային: Միլլերանը նաեւ հին ընկերվարական էր եւ «հայասէր»՝ դեռեւս աբդիւլ-համիդեան սարսափների օրերից, բայց փոքրանալիք Թուր-

քիայում պատերազմից առաջ ներդրուած կէս միլիարդ դոլար ֆրանսիական դրամագլխի արդիւնաւորումը դարձել էր կասկածելի: Կիլիկիան մնացել էր Ամերիկայի հովանաւորութեան տակ զարգանալիք Մեծ Հայաստանի եւ անգլիական Կիպրոսի միջեւ: Ինչ որ Իտալիան էր երազել՝ ստացել էր Յունաստանը: Առաջաւոր Ասիան եւ նեղուցների դռները փաստօրէն անցնում էին անգլեւսաքսոնների ձեռքը: Մուդրոսի զինադադարի օրերից ստեղծուած կասկածի մթնոլորտը դառնում էր աւելի՛ ճնշող: Թուրք պատուիրակները վաւերաթուղթն ստորագրել էին ջղային փութկոտութիւն բռնազբօսելով, բայց հանգիստ կերպով էլ նստել էին տեղները: Նրանք վարուել էին այնպէս, ինչպէս վայել է մի երկրի դիւանագէտներին, որ հնուց ի վեր վարժուել է իր գոյութեան գաղտնիքը տեսնել եւրոպական ոյժերի հակամարտութեան մէջ: Նրանք գիտէին, թերեւս, որ հանդիսավայրում Դաշնակիցներն անձնիւր իրար են խաբում, հաւաքաբար՝ հայերին եւ յոյներին: Յամենայնդէպս, պատմութիւնը շուտով պիտի գար հաստատագրելու, թէ Սեւրում *ծեւապէս* էր դաշինք կնքուել Տաճկաստանի հետ, *խորքով՝* ի սպառ քայքայուել էր Դաշնակիցների բարոյական միութիւնը: Մի անգամ եւս տաճկական աւարն առիթ էր ծառայել Եւրոպայի պառակտման, նրա քաղաքական բարքերի անկման:

Քննադատութեան ձայներն, առաջին անգամ, արձագանգ գտան ֆրանսիական մամուլում՝ *«անիրաւուե՛լ է Տաճկաստան»-ը* (փոխանակ ասելու, թէ խաբուել է Ֆրանսիան): Բացուել էր այլեւս նոր մոլորանքի եւ կեղծիքի ճամբան: Անգլիական հեռանկարներից սարսափած՝ Ֆրանսիան նախամեծար էր համարում, թէկուզ հայերի հաշուին, փրկել Թուրքիան: Սեւրի դաշնադրութիւնից 3 շաբաթ յետոյ Ֆրանքլէն Բույոնը գնաց Անգորա (ֆրանսիացիք իրանց ինակից անգլիացիներին խաբեցին, թէ նա *«գնացել է անձնական իր գործերով»*): Քեմալականները, անշո՛ւշտ, անմիջապէս խոստացան, որ ամբողջ եւ անգլեւամերիկեան ազդեցութիւնից զերծ մնալիք մի Թուրքիայում, Ֆրանսիան պիտի ապահովի ո՛չ միայն հին իր ներդրումները, այլեւ՝ նոր շահաստանները...: Նրանք, շուտով, 200 միլիոն ֆր. ֆրանկի նոր վարկ (ռազմամթերք) ստացան, աշխուժացան, գօտեպնդուեցին եւ յարձակուեցին հայերի եւ յոյների վրայ: Ֆրանսիայի օրինակին հետեւեց Իտալիան, մտածելով, որ լաւագոյն է Եգէականի փոքր-ասիական ափերը տաճիկներին վերադարձնել, քան՝ յոյներին թողնել:

ՀԱԿԱՍԵՐ–ԲԱԳՈՒԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հենց այն օրերին, երբ Ֆրանքլէն Բույոնը գտնուում էր Անգորայում, թուրքեւբոլշեւիկ զինակցութիւնը Բագւում բեմադրեց ձեւով «միջազգային», խորքով՝ հակահայ մի ցոյց: Խօսքը Բագուի «Արեւելեան Ժողովուրդների Համագումար»-ի մասին է: Չկար, թերե՛ւս, ուղղակի կապ Ֆրանքլէն Բույոնի եւ Զինովիեւի միջեւ, ներհակասական էին նաեւ ֆրանս-ռուսական շահերը, բայց աշխարհում գոյութիւն ունի «անուղղակի» կապերի կենտրոնը, միաժամանակ՝ հակասութիւններից «ներդաշնակ» արդիւնքներ քաղող ազատ-որմնադրականութիւնը - Թուրքիայի ամբողջականութեան հին այդ պաշտպանը:

Ի՞նչ կատարուեց Բագւում:

*«Համագումարը բացւում է 1 սեպտեմբերին»** (1920թ.) եւ տեւում է մինչեւ 8 սեպտեմբեր: *«Մասնակցում են 1891 ներկայացուցիչներ, որոնցից 1273-ը՝ բոլշեւիկ»*: Այնտեղ են *«37 ազգերի ներկայացուցիչներ»*, որոնցից 235-ը՝ թուրք, 192-ը՝ պարսիկ եւ ֆարս, 157-ը՝ հայ (մոլորեալներ եւ դաւաճաններ, որոնք դէպքերից յետոյ միայն հասկացան, որ գործիք են դարձել իրանց հայրենիքը կործանողների ձեռքին, շատերը հետագային գնդակահարուեցին «Չեկա»-յի զնդաններում, որովհետեւ պահանջեցին դաւադրուած Հայաստանի սահմանների ընդլայնումը), 104-ը՝ ռուս, 100-ը՝ վրացի, մնացեալը՝ եւրոպական եւ ասիական զանազան ազգերից: Թէ ո՞ր աստիճան շինծու էր համագումարը, դա երեւում է, օրինակ, հետեւեալ փաստերից. չէչէնները տուել են 82 ներկայացուցիչ, Չինաստանը՝ 14, լեզգիները՝ 25, իսկ Հնդկաստանը՝ 8:

Զինովիեւ (նախագահ). *«Ընկերնե՛ր, դուք գիտէք, որ խորհրդային կառավարութիւնն օգնում է Քեմալին...: Մենք ո՛չ մի վայրկեան չենք մոռանայ, որ Քեմալի վարած շարժումը համայնավարական չէ... Ինքը՝ Քեմալն ասում է, որ Խալիֆի եւ Սուլթանի անձնաւորութիւնը սուրբ է և անձեռնմխելի... Այս օրերս հարցրի ազատական խաւին պատկանող թուրք երեւելի մի գործչի, թէ ի՞նչ է հասկանում թուրք գիւղացին «բոլշեւիզմ» բառից... Ասաց՝ «Հասկանում է մէկը, որ ուզում է պայքարել Անգլիայի դէմ եւ օգնել մեզ»: Երկրորդ մի հարց էլ տուի. «Բայց ինչո՞ւ թուրք հասարակ գիւղացին չի հասկանում, որ բոլշեւիկը դէմ է ո՛չ միայն Անգլիային, այլեւ ընդհանրապէս հարուստներին, ինչպէս ռուսական, նոյնպէս՝ տաճկական... Այդ գործիչը չպատասխանեց... եւ*

* Բոլոր մէջբերումներն առնուած են համագումարի արձանագրութիւններից:

այդպիսով ուզեց մտածել, որ գիւղացին չի հասկանում այդ բանը»: Այդ բոլորով հանդերձ՝ Զինովիեւը շարունակում է. *«Բանուորը պէտք է ասի... «Ես պիտի օգնեմ այսօրուայ Թուրքիայի ազգայնական ժողովրդական շարժման... եւ ոտքի հանեմ ընկճուած թուրք... գիւղացին, ամբողջ Արեւելքի ճնշուածները... Կրկնում եմ՝ մեր առջեւն է անգլեւֆրանսիական դրամատէրերի դէմ սրբազան պատերազմ հռչակելու խնդիրը... Ի՞նչ կացութիւն ստեղծած էր* (դա) *Թուրքիայում... Ի՞նչ է կացութիւնը Հայաստանում, որ երէկ համաձայնական կառավարութիւններն ուզում էին պաշտպանել եւ այսօր ո՛չ ոք է ուզում»...* (էականն այստեղ բոլշեւիկ Զինովիեւի ժեզուիտաբանութիւնը չէ, այլ նրա ազատ-որմնադրային իրազեկութիւնը՝ Դաշնակիցների բարոյական քայքայման մասին՝ Սեւրից 20 օր յետոյ):

Ռադէկ. *«...Հրապարակ նետուեց Անգլիայի նախարար Գլադստոնի հին նշանաբանը՝ պատառոտել Թուրքիայի մարմինը... Ընկերնե՛ր, եթէ հարցնենք՝ անգլիացիները, ֆրանսիացիները, ամերիկացիներն ինչպէ՞ս ազատեցին հայերին, որոնց տասնեակ տարիներ անդադար կռուի էին մղում թուրքերի եւ քիւրդերի դէմ, որոնց խոստանում էին ազատութիւն... Եթէ հարցնենք ինչպէ՞ս պաշտպանեցին Հայաստանի իրաւունքները... Ի պատասխան ես մէջբերումներ պիտի անեմ... Ֆրանսիացիները լքած են Մարաշը եւ 20.000 հայեր թողած են Քեմալի բանակի առաջ, որ հայերին Ֆրանսիայի հետ Թուրքիայի թշնամիներ համարելով՝ նրանցից ո՛չ մի հոգի ողջ չի թողել»... Հայաստանի Հանրապետութիւնը ատելութեամբ տոգորուած է ռուսական բոլշեւիզմի դէմ»* (ուզում է ասել, որ Հայաստանում էլ նոր ջարդեր անհրաժեշտ են):

Էնվեր. *«...Այսօրուան համագումարը նոր ոյժեր է ընծայում Կարմիր Բանակին, որ արիւն է թափում ճնշուածները, ինչպէս նաեւ թուրքական մարտիկները պաշտպանելու համար:... Ընկերնե՛ր, մենք դէմ ենք պատերազմին... Որպէսզի յաւիտենական խաղաղութիւն ունենանք՝ մենք քայլում ենք Գ. Միջազգայնականի հետ... Ընկերնե՛ր, մենք ուզում ենք աշխատաւորների երջանկութիւնը... Ընկերնե՛ր, յայտարարում եմ, որ Մարոքի, Ալժիրի, Տունիսի, Տրիպոլիտանիայի, Եգիպտոսի, Արաբիայի, Հնդկաստանի յեղափոխական կազմակերպութիւնների դաշնակցութիւնը, որ ինձ ուղարկել է իբր իր ներկայացուցիչը, այս ուղղութեամբ լիովին համաձայն է ձեզ»...* (բոլշեւիկները գիտեն, որ գոյութիւն չունեն նման կազմակերպութիւններ, բայց լուռ են, որովհետեւ ստախօսութեան եւ ոճրաբաղձութեան մէջ հոգեկից են էնվէրներին):

Իբրահիմ Թալի (Անգորայի ներկայացուցիչ). *«Ընկերնե՛ր... Արեւ-*

մտեան դրամատէրերն որոշեցին զինաթափ թուրք գիւղացու դէմ հանել իրանց օգնականները, յոյն վենիզելոսականները՝ արեւմուտքից եւ հայ դաշնակցականները՝ արեւելքից: Թուրք գիւղացին գիտէր, որ կայսերապաշտները եւ իրանց օգնականները, ուր էլ որ գտնուեն, գործում են կրակով, սրով եւ ռումբով... Ընկերնե՛ր, անատոլիական գիւղացիները..., մնացած՝ այս ոճրագործների միջեւ..., ուրախութեամբ դարձան դէպի միջազգային յեղափոխութիւնը..., որ ազատութիւն եւ երջանկութիւն պիտի բերի ամբողջ մարդկութեան, եւ նրանք հաւատում են, որ իրանց ճակատագիրը կապուած է Գ. Միջազգայնականի ճակատագրին... Կեցցէ՛ յեղափոխական Ռուսաստանը» (թուրքերն են արդէն ապացուցել, որ դիւանագիտութեան աղը կեղծաւորութիւն է):

Ջոն Ռիտ (ամերիկեան «բանուորութեան» ներկայացուցիչ). *«...Բացի սնամէջ յայտարարութիւններից, ուրիշ ի՞նչ արեց Ամերիկան հայերի համար: ...1915թ. Կ. Պոլիս էի եւ գիտեմ, որ միսիոնարները հրաժարուեցին լրջօրէն բողոքել գազանութիւնների դէմ, որովհետեւ Թուրքիայում ինչքեր ունէին եւ չէին ուզում իրանց յարաբերութիւնները խզել կամ աւերել թուրքերի հետ»* (դատապարտելով իր հայրենակից միսիոնարների այդ թերացումը՝ ամերիկացի կարմիր այս խաչագողն, այնուամենայնիւ, անպատշաճ չի համարում, որ ինքը ժողովի նստած 1915թ. *գազանութիւնների* հեղինակ եւ գործադրիչ էնվէրի հետ՝ նոր ոճիրներ է վիժել տալիս հայ ժողովրդի գլխին):

Բելա Կուն (բանաձեւող). *«Արեւելեան ժողովուրդների Համագումարի նախագահութիւնը միաձայնութեամբ որոշեց ձեզ ներկայացնել հետեւեալ բանաձեւը.*

1. Համագումարն իր համակրանքն է յայտնում թուրք բոլոր մարտիկներին, որոնք պայքարում են... համաշխարհային կայսերապաշտութեան դէմ...

2. Առաջարկել Թուրքիայի եւ ամբողջ Արեւելքի աշխատաւոր զանգուածին՝ օժանդակել թուրքական համազգային յեղափոխական շարժման»...

Զինովիեւ (նախագահ). *«Այստեղ յաճախ է խօսւում Հայաստանի մասին: Միացեալ Հայաստանն գոյութիւն չունի: Կայ բանուորագիւղացիական Հայաստանը, որին ձեռք ենք երկարում, եւ անիծեալ, ջարդարար, դաշնակցական, բուրժուական Հայաստանը...* (փոթորկալից ծափեր):

Համագումարը փակւում էր: Թուրք եւ բոլշեւիկ զինակցութիւնն անցնում էր յարձակողական պատերազմի՝ Հայաստանի դէմ:

Նիւթապաշտութիւնը սնուցիչն է ո՛չ միայն մտաւոր անաստուա-

ծութեան, այլեւ՝ սրտի այնպիսի ստորնացման, որին ենթակայ էակն անասնանում է՝ ամէն տեսակէտով: Մտաւորապէս այլասերուած՝ հայ բոլշեւիկները չէին կարող թափանցել այն պատճառներին, որոնք հրէական ոգու միջնորդութեամբ՝ զինակցութեան էին մղել մոնղոլածին Լենինի կազմակերպութիւնը եւ թուրքականութիւնը: Բարոյապէս կոյր՝ նրանք չզարհուրեցին անգամ իրանց ցեղի դահիճ էնվէրի ներկայութիւնից: Նրանք իբրեւ թէ հաւատացած էին, որ պայքարն ուղղուած է Դաշնակիցների եւ ո՛չ թէ հայ ազգի գոյութեան եւ նրա Հայրենիքի ապագայի դէմ: Դեռեւս Բագուի համագումարից մի տարի առաջ հայ բոլշեւիկ մի «տեսաբան» խանդավառօրէն գրում էր. *«Տաճկաստանում պիտի ստեղծուի խորհրդային իշխանութիւն: ...Բանուորագիւղացիական Արաբիան, Արմենիան եւ Սիրիան պիտի կապուեն... Խորհրդային Մեծ Ռուսաստանի եւ համայն Եւրոպայի խորհրդային հանրապետութիւնների հետ: Եւ այդ կապը կը զօրացնի Արմենիայի ներքին կորովն ու ոյժը»**: Իսկապէս որ չկայ աւելի վտանգաւոր զառանցանք, քան ցեղօրէն այլասերուած մարդու երազը՝ իր ժողովրդի երջանկութեան մասին:

Այս երազը Բագւում դաւաճանութեան մուր քսեց հայ բոլշեւիկների ճակատին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԿՆԱՂԷՏՈՒՄԸ

Քաջութեան պտղաւորած յաջողութիւնն է յաղթանակ: Բայց պատմութեան մէջ, յաճախ, յաղթանակ է շահում վախկոտի խորամանկութիւնը: Այդ դէպքում է, որ գերազանցօրէն ողբերգական խորք է ստանում հերոսի պարտութիւնը, իսկ շահուած յաղթանակը միայն անբարոյացնում է մարդկութիւնը:

Արեւելքում յաղթում է նա, ո՛վ զօրաւոր յենարաններ ունի Արեւմուտքում: Եւրոպական ոգու ստորնացման պատճառով էր, որ թուրքեւբոլշեւիկ զինակցութիւնը Հայաստանում շահեց արիւնոտ իր յաղթանակը: Մինչեւ Ֆրանսիայի դաւաճանութիւնը՝ «քեմալական շարժում»-ը կրում էր խրտուիլակային նկարագիր: Ահա՛ թէ ի՞նչ էր պատմում ինքը՝ Մուստաֆա Քեմալը. *«Բոլշեւիկներն իրանց ծրագիրներն իրականացնելու համար թուրք ժողովրդի մեծ օգտակարութիւնը գնահատելով՝ մեր աջակցութեան դիմեցին. նրանց առաջին ձեռնարկն եղաւ 10-րդ եւ 11-րդ զօրաբանակները կովկասեան ճակատ ուղար-*

* *Ա. Կարինեան,* «Հայաստանի Ապագան», Մոսկուա, 1919թ.:

կել... Շնորհիւ մեր ընծայած դիւրութիւնների..., ադրբեջանցիները մեծ հաճոյքով դիմաւորեցին այդ զօրամասերին»... Բայց ճիշդ այն միջոցներին բոլշեւիկները սկսեցին պարտուել լեհական ճակատի վրայ եւ ստիպուեցին իրանց ոյժերի մեծ մասն ուղարկել լեհական ճակատ... Հայերը (դրանից) *օգուտ քաղելով, յունիսին Օլթիի եւ Զանգեզուրի ուղղութեամբ ռազմական գործողութիւնների ձեռնարկեցին: ...Հայերը յաջողեցին գրաւել Օլթիի ածխահանքերը, որովհետեւ մեր ոյժերը... անբաւարար էին... Օգոստոսի սկիզբներին հայերը զրահապատների միջոցով յաջողեցին գրաւել մինչեւ Զուլֆա երկաթուղագիծը... Մեր զինուորները, թուով մեծ բանակի առջեւ չճզմուելու համար, յետ քաշուելու հրաման ստացան»*: Պարզ է, որ թուրքերն իրանց յոյսը դրել են ո՛չ թէ սեփական ոյժերի, այլ՝ արտաքին աջակցութեան վրայ: Օգոստ. 16-ին (1920թ.), թուրքական արեւելեան բանակի հրամանատար Կարաբեքիրը գրում էր. *«Բոլշեւիկեան բանակը գտնւում է իր թշնամիներին քայքայելու եւ բնաջնջելու շրջանում... Մեր դաշնակից բոլշեւիկներն անընդհատ զէնք եւ ռազմամթերք են մատակարարում մեզ: Կարող ենք վստահ լինել, որ վատ օրերը մեզ համար անցել են արդէն»*: Սրանք, սակայն, մխիթարութիւններ էին լոկ: Իրականում, թուրքաբոլշեւիկ զինակցութիւնը ջախջախուած էր Հայաստանում, եւ թուրքերը նոր խանդ կարող էին ստանալ երրորդ մի ոյժից: Քեմալականութիւնը վերակենդանացաւ Ֆրանսիայի օժանդակութեամբ: Բագուի համագումարում Զինովիեւը սեպտ. 7-ին հռչակեց բոլշեւիկ-իսլամական «ջիհատ»-ը Հայաստանի դէմ: Այդ օր պարզուած էր արդէն կացութիւնը: Գործնականապէս Թուրքիայի հետ են՝ Ֆրանսիան եւ Իտալիան: Խօսքով միայն Հայաստանի հետ են՝ Անգլիան եւ Ամերիկան: Դաշնակիցների պառակտումը խանդավառում էր ո՛չ միայն տաճիկներին, այլեւ՝ բոլշեւիկներին: Ռադէկն իր ճառով ապացուցում էր, որ Անգլիան տրամադիր չէ զինուորապէս օգնել հայերին: Ուստի, փոքրիկ Հայաստանը, հակառակ որ *«կռուի արուեստին տիրապետող գայլեր ունի»*, ի վերջոյ, պիտի ճզմուի ռուսեւթուրք զինակցութեան մսային ճնշման տակ: Սեպտ. 9-ից թուրքերն արեւմուտքից, բոլշեւիկներն արեւելքից՝ սկսեցին յարձակողական ցոյցեր:

Բոլշեւիկները շարունակում էին կիրարկել ե՛ւ պրոպագանդայի իրանց զէնքերը – սպառնալիք եւ շոյանք: Երկու ուղղութեամբ էլ զազրելի վաւերագրեր են թողել նրանք, պատմութեան համար: Բոլշեւիկեան 28-րդ զօրաբաժնի պետ Նեստորովսկին իր ստորադրեալներին ուղղած հրամանագրում ասում է. *«...Խուսափել մարդասիրական ամեն տեսակ միջոցներից եւ դաժան լինել ապստամբ բնակչու-*

թեան հանդէպ, որպէսզի նա զգայ բանուորական բռունցքի թափը: Դիմադրողներին գերի չվերցնել եւ կենդանի բաց չթողնել ո՛չ մէկին... Ապստամբներին ոչնչացնելով եւ նրանց ամբողջ կայքը գրաւելով միայն կը հասնենք խաղաղութեան: Եթէ հանգամանքներն ստիպեն՝ աւերել ամբողջ գիւղերը, յիշելով, որ աններողամտութիւնն ու դաժանութիւնը, մանաւանդ Կովկասում, հասցնում են լաւ հետեւանքի: Գրաւուած գիւղերում սովից ապահովել զօրամասերը, ապստամբների հաշուին»: Նեստորովսկին գործում էր Զանգեզուրում, Նժդեհի դէմ: Այստեղ, կռիւները վերջացան հայ զէնքի փայլուն յաղթանակով: Կենտրոնանալով Արեւիքի լեռնավայրում՝ Զանգեզուրի փոքրաթիւ, բայց քաջագործութիւններով թշնամուն սարսափ եւ զարմանք պատճառող ոյժերն ոչնչացրին 3 ճակատներով 40 օր անդադար յարձակուող բոլշեւիկ եւ թուրք զօրամասերը: Վերջնականապէս պարտուած՝ բոլշեւիկները լքեցին Զանգեզուրը զէնքով նուաճելու յոյսը: Ամբողջ կռիւների ընթացքին թշնամին թողել էր 15.000 սպանուած, 7.000 գերի, 200 գնդացիր, 7 թնդանօթ, 10.000 հրացան, մեծ քանակութեամբ ռազմամթերք եւ իր հետ տարել զարհուրանքների մղձաւանջը: Զանգեզուրը հռչակուեց *«առասպելական հերոսների, երկաթեայ լեռների աշխարհ»:* Յաղթանակը ցնծութեամբ ընդունուեց ո՛չ միայն Հայաստանում, այլեւ՝ Պարսկաստանում, ուր երախտագիտօրէն յիշում էին, թէ Եփրեմից յետոյ, ընդամէնը մի տասնամեակի ընթացքին, երկրորդ անգամն է, ինչ հայերը զօրաւոր թումբ են ստեղծում ռուսական ներխուժման դէմ:

Դրա հանդէպ՝ դէպքերը Հայաստանի համար ողբերգական բնոյթ ստացան Կարսի ճակատում, ուր մինչեւ հոկտեմբերի վերջերը, հայ զօրքը կռւում էր նոյնպէս հերոսաբար: Հրամանատարութիւնը տոգորուած էր լաւատեսութեամբ, թէ շուտով պաշարուելու է թշնամին: Եւ իսկապէս, Սմբատի զօրամասը, Արդահանի կողմից, յաջող եւ լայն թիկնանցք էր կատարում դէպի Օլթի: Միւս կողմից, Իգդիրի շրջանում, հոկտ. 20-26-ը մղուած արիւնոտ ճակատամարտում ջարդուել եւ դէպի Բայազէդ էր փախել թուրքական բանակի աջ թեւը:

Հայկական դիւանագիտութիւնը, սակայն, գործել էր աղիտաւոր մի սխալ: Ստորագնահատելով բոլշեւիկեան քարոզչութեան վտանգը՝ նա միամտօրէն ընդունել էր ռուսների առաջարկած զինադադարը, թէպէտեւ հայկական լաւագոյն գնդերը հարկադրուած էին սպասել խորհրդային սահմանագծի վրայ, իսկ Զանգեզուրում շարունակւում էր կատաղի կռիւը: Ճակատագրական երկրորդ մի սխալ թոյլ էր տուել զինուորական նախարարութիւնը, որ ելնելով այն տեսակէտից, թէ

կռիւը թուրքերի դէմ սրբազան է ամէն հայի համար՝ Կարսի զօրագնդերում տեղ էր տուել Վրաստանից թէ ուրիշ կողմերից իբրեւ կամաւոր եկած բոլոր հայերին, քիչ մտահոգուելով այն մասին, թէ նրանց շարքերում կարող են եւ բոլշեւիկեան գործակալներ լինել: Երեւանում հաստատուած խորհրդային ներկայացուցչութիւնը թիկունքում տանում էր դաւադիր աշխատանք: Դեռեւս հոկտ. 2-ին, Շահնալար գիւղի մօտ (Ալեքսանդրապոլ-Կարս գծի վրայ) բոլշեւիկները խորտակեցին զինուորատար մի գնացք: Բայց խափանարարութիւնից աւելի վտանգաւոր էր նրանց շոյիչ պրոպագանդը: Ի սպառ չազատուած ռուսական «դարաւոր բարեկամութեան» նախապաշարումից՝ հայ զինուորութեան մի մասը (թէպէտեւ փոքրաթիւ) աստիճանաբար տարւում էր շլացուցիչ խոստումներից: Բոլշեւիկներն ասում էին. *«Խորհրդային Ռուսաստանի պայքարը Հայաստանի դէմ չէ, այլ՝ դաշնակիցների, որոնք միշտ էլ ջարդել են տուել հայերին եւ դաւաճանաբար լքել: Հայաստանի խորհրդայնացումով՝ խորհրդայնանալու է եւ Տաճկաստանը, որ Ռուսաստանի զինակիցն է: Խորհրդային Ադրբեջանն որոշել է Հայաստանին զիջել Ղարաբաղը: Նոյնպէս պէտք է վարուի խորհրդային Տաճկաստանը՝ հայկական նահանգների խնդրում: Տաճիկներն արդէն համաձայնուել են Ռուսաստանի միջնորդութեամբ լուծել վիճելի հարցերն իրանց եւ հայերի միջեւ: Այդ պայմաններում ի՞նչ իմաստ ունի կռիւը, երբ եկողներն ո՛չ թէ նախկին ջարդարար թուրքերն են, այլ կարմիր զինուորները»*: Միամիտների դաւաճանութիւնն իր սնունդն ստանում է օձի լեզուով, աղուէսի փաղաքշանքով հրամցուած թոյնից: Իբրեւ հրէական յղացում՝ մեծամասնականութիւնն օժտուած էր ծպտումի անգերազանցելի վարպետութեամբ: Իշխողի դերում դաժանօրէն անհանդուրժող՝ բոլշեւիկը սողունօրէն համբերատար է պրոպագանդի մէջ: Այդ տեսակէտով, յատկանշական դէպք էր պատահել Թիֆլիսում, ուր հայերը, հոկտ. 6-ին, բողոքի հսկայական ցոյց էին սարքել թուրք եւ բոլշեւիկ զինակցութեան դէմ: Տասնեակ հազարաւոր մարդկանց բազմութիւնը հսկայական թափօրներով անցել էր բոլոր պետութիւնների ներկայացուցչատները: Ցոյցին մասնակցել էին եւ վրացիք: Տեղական հայ գործիչների հետ ցասմնալից ճառ էր խօսել եւ վրաց ազգային պահակազօրի պետ Ջուղելին: Խորհրդային ներկայացուցչութեան առաջ ամբոխը թշնամական ցոյցեր էր արել. *«Կորչի՛ թաթարածին Լենինի եւ հրեաների դահճապետութիւնը». «դուք յեղափոխականներ չէք, այլ գռեհիկ աւազակներ, մարդասպաններ», «դուք հոգեզաւակներն էք Չինկիզների, Թիմուրների եւ գործակիցներ էնվէրների»...*

Կորիւն Ղազազեանը սպանիչ խօսքերով ցնցող ճառ էր ասել եւ բարոյական մենամարտի հրաւիրել «ճնշուածների պաշտպան» պետութեան ներկայացուցչին... *«հարիւր հազարաւոր անմեղ կեանքերի դահիճ էնվէր փաշաներին... ձեռք էր մեկնում եւ յեղափոխական կարմիր դրօշակով քօղարկւում... Ապագայ պատմութիւնը... կասէ իր խօսքը ձեր այսօրուայ կատարած զազիր գործի համար»*... Եւ այնուամենայնիւ խորհրդային ներկայացուցիչ Ստարկը դուրս էր եկել պատշգամբ եւ հանդարտօրէն մարսելով ամբողջ անարգանքը, պայթեցնող համբերութեամբ խօսել էր. *«Դուք ուզում էք իմանալ մեր վերաբերմունքը դէպի Հայաստանի սահմաններում կատարուող դէպքե՞րը* (ձայներ՝ «ձեր վերաբերմունքը գիտենք, խօսեցէ՛ք ձեր սեւ արարքների մասին»): *...Ռուսաստանի բանուորագիւղացիական հանրապետութիւնը սկզբից իսկ վճռեց ճանաչել ազգերի ինքնորոշումը* (ձայներ՝ «այդ խօսքով էր, իսկ գործո՞վ») *...ճանաչեցինք Էստոնիայի, Լեհաստանի, Ֆինլանդիայի անկախութիւնը* (ձայներ՝ «բայց ձեր ատամները ջարդելուց յետոյ») *...ճանաչեցինք Վրաստանի անկախութիւնը. ճանաչեցինք, ճանաչում ենք ու պիտի ճանաչենք Հայաստանի անկախութիւնը, քանի որ այդպէս է կամենում հայ աշխատաւոր ժողովուրդը... բազմաթիւ ճակատներում թափուած արեան մեղքը մերը չէ...* (ձայներ՝ «մեղքը ձե՛րն է՝ բոլշեւիկների՛նդ, աւազակնե՛ր») *...Մեզ համար թանկ են հայ աշխատաւոր զանգուածների շահերը* (ձայներ՝ «սո՛ւտ է, մի՛ վիրաւորէք այդ ժողովրդին»): *...Բայց հայ ժողովուրդը ցանկանո՞ւմ է լինել մեզ հետ* (ձայներ՝ «հայ ժողովուրդն էնվէր չէ») *...Երկու ամիս առաջ մենք մեր միջնորդութիւնն առաջարկեցինք Հայաստանին եւ Տաճկաստանին: Հայաստանը մինչեւ այսօր չի պատասխանել, իսկ Տաճկաստանը համաձայնուեց* («կորչիք»-ներ): Ամաչե՞լ, խրատուե՞լ էր խորհրդային ներկայացուցիչը: Սուտն իբրեւ քաղաքական զէնք գործածողը բարոյապէս թքուելով էլ յաջողում է զինաթափել խստաբարոյ իր հակառակորդին: Մնաց որ՝ բոլշեւիկների պրոպագանդի դաշնակիցների վերաբերեալ մասը համապատասխանում էր իրականութեան: Մեծ Ռուսաստանի եւ արեան թշնամի Տաճկաստանի միջեւ հայ ժողովուրդը դատապարտուած էր բացարձակ, անյոյս մենակութեան: Դաշնակիցները դիւանագիտական իրանց ներկայացուցիչներն անգամ քաշել էին Երեւանից: Ֆրանսիան պաղ կերպով զգացնում էր արդէն, որ ինքը թուրքանպաստ դարձ է կատարել: Անգլիական ներկայացուցիչ Ստոկսը «ցաւով» յայտնում էր, թէ իր կառավարութիւնը *«չի կարող օգնել Հայաստանին»* եւ խորհուրդ էր տալիս *«իբրեւ նուազագոյն չարիք»* հասկացողութեան եզր գտնել

բոլշեւիկների հետ: Լքումի այս փաստը խորացնում էր յոռետեսութիւնը՝ հայերի մէջ եւ ջուր լեցնում բոլշեւիկեան պրոպագանդի ջրաղացին: Այդ պայմաններում Վրաստանն էլ կորցնում էր վճռական յանդգնութիւնը, թէպէտեւ ընդհանուր վտանգը մոռացնել էր տուել ճակատագրով երկու ազգերի միջեւ ծագած անցաւոր թիւրիմացութիւնները: Հայաստանի մղած անհաւասար կռիւը մեծ խռովք էր առաջացրել հարեւան երկրում: Վրաց մամուլը մերկացնում էր թուրք եւ բոլշեւիկ զինակցութիւնը եւ կոչ ուղղում կանգնել Հայաստանի կողքին, ընդհանուր վտանգի դէմ. *«Մենք չէինք կարծում, որ բոլշեւիկներն այն աստիճան կստորանային, որ ձեռք մեկնէին իրանց գազանութիւնների մէջ սարսափելիօրէն մերկացած Քեմալներին... Այսօր ռուսական կայսերապաշտութեան մերկանալը եւ Թուրքիային բարեկամանալն անվիճելի փաստ է* («Էրթոբա»): *«Ընդհանուր վտանգը թելադրում է Հայաստանին եւ Վրաստանին լարել բոլոր եռանդն եւ պահպանել ազգային ազատութիւնը... Դաւադիր թշնամին վռնդելու համար՝ մենք զինուորական դաշինք պէտք է կնքենք»* («Սաքարթելօ»): *«Հայաստանի դժբախտութիւնը, մեր՝ Վրաստանի դժբախտութիւնն է»* («Սախալխօ Սաքմէ»)...

Բայց եւ այնպէս, մենակութիւնն օրից օր դառնում էր ճնշող, պատերազմի ընդհանուր ելքը՝ անյոյս, բոլշեւիկեան պրոպագանդը՝ ծաւալուն: Կրած ծանր կորուստների հետեւանքով՝ քաջութեան հռչակ հանած Ա. գնդում տեղ էին գրաւել զանազան անփորձ կամ կասկածելի տարրերից բաղկացած զինուորներ: Դեռեւս հոկտ. 28-ին այդ գունդը նախկին իր կազմով արիւնահեղ կռիւ էր մղել Վիզինի մօտ: Հոկտ. 30-ի առաւօտ, ընդամէնը մի օրուայ ընթացքին վերալրացուած գունդը՝ ստացաւ յարձակման հրաման: Մօտեցած այլեւս թշնամու դիրքերին՝ զինուորների մեծ մասը մերժեց հետեւել իր հրամանատարին: Ջուր անցան բազմաթիւ կռիւներում հերոսացած գնդ. Մազմանեանի հրամանները եւ յորդորները: Բոլշեւիկացած զինուորների վրայ չազդեց անգամ իրանց հրամանատարի յուսահատական բողոքը (գնդ. Մազմանեանն ի տես երբեմնի պանծալի իր գնդի խայտառակ այս տեղատուութեան՝ իր զինուորների աչքի առաջ, ատրճանակի երկու հարուածով ցրեց իր գանգը): Օգտուելով այդ դրութիւնից՝ դաւադիր զինուորները փախան՝ ստեղծելով արուեստական խուճապ: Սպաներից մի քանիսը նոյնպէս գործեցին ինքնասպանութիւն, իսկ զինուորների մի մասն ոչնչացաւ յուսահատական կռուի մէջ: Թշնամին՝ դաւադիրների ետեւից մտաւ Կարս: Անակնկալի եկած զօրքի եւ ժողովրդի մի մասը փախաւ: Ուրիշ զօրամասեր ազդուած սարսափելի

իրարանցումից՝ լքեցին դիրքերը: Ոմանք էլ բացարձակապէս անտեղեակ՝ մնացին բերդերում: Գերի ընկան երկու զօրավարներ (Արարատեան եւ Փիրումեան), սպայակոյտի պետը, 40 սպաներ (տասնեակ սպաներ գործել էին ինքնասպանութիւն), 3-4 հազար զինուոր, մօտ 70.000 ժողովուրդ: Դաւադիր բոլշեւիկները եւ իրանց մոլորանքի զոհերը՝ ընդամէնը 6-7 հարիւր հոգի, կարմիր դրօշ բարձրացրած՝ դիմաւորեցին «տաճիկ յեղափոխական զինուորներ»-ին: Բայց թէ ի՞նչ պատահեց դրանից յետոյ, թողնե՛նք, որ պատմեն իրանք՝ դաւաճանները: Բագուի «Կոմունիստ» թերթը, իր թիւ 42-ում գրում էր. *«...մինչեւ թուրքական զօրքերի մտնելը՝ հայկական զօրքերը խորը համոզուած էին, որ Կարսի վրայ յարձակուող զօրքերը բոլշեւիկներն են, որի պատճառով եւ նրանք դիմադրութիւն ցոյց չտուին... Այդպիսի կարծիքի էր եւ Կարս քաղաքի աշխատաւոր ժողովուրդը, որ բացարձակապէս համոզուած էր, որ կարմիր դրօշակի տակ յարձակւում է կարմիր Տաճկաստանի յեղափոխական բանակը: Բայց քաղաք թափուած այդ զօրքերը չխնայեցին ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին... Հինգ օրուայ ընթացքին՝ արիւնառուշտ զինուորները եւ քիւրտերը գործադրեցին իրանց գազանութիւնները, որոնք վեր են մարդու երեւակայութիւնից... Չէին խնայում նոյնիսկ կոմունիստներին, որոնք իրանց կոմունիստ լինելն ապացուցող վկաներ էին ներկայացնում... Սարսափելի կոտորածներին յաջորդեցին խմբական ձերբակալութիւններ... Ոտքից գլուխ մերկացնելով՝ նրանց ուղարկում էին Կարին... Ուղարկուածները ցրտահար էին լինում եւ մեռնում քաղցից ու տանջանքից: Միեւնոյն ժամանակ սկսել էր թուրք գաղթականների շարժումը՝ դէպի Կարսի շրջանը... Տաճկական հրամանատարութիւնն աշխատում է Կարսի շրջանը թրքացնել»...*

Հայրենիքի կործանման եւ 20.000 ազգակիցների արեան պատճառ դարձող հայ բոլշեւիկներն իրանց այս ելոյթով ուզում են հասկացնել «ընկերներ» Լենինին, Տրոցկուն, Զինովիեւին, թէ իրանք խաբուել են, թէ Հայաստանին եղած խոստումները միայն որոգայթ են եղել, թէ թուրք եւ բոլշեւիկ զինակցութեան շնորհիւ՝ հայութեան համար կորած են ո՛չ միայն հայկական նահանգները, այլեւ Կարսի շրջանը, թէ կարմիր դրօշի տակ էլ տաճիկը մնացել է նոյն հայակեր հրէշը: Բայց ինչի՞ կարող էին ծառայել նման տրտունջները, բողոքները: Պատմութեան մէջ ամենաանարժէք բանը դաւաճանի հիասթափութիւնն է, չարագործութիւնից յետոյ:

Կարսի անկումով որոշուել էր ո՛չ միայն ազգայնական, այլեւ խորհրդայնանալիք Հայաստանի ճակատագիրը: Աղէտն երեւան էր

հանել ո՛չ միայն հայ բոլշեւիկների քաղաքական թանձր տգիտութիւնը եւ դաւաճանական ուղին, այլեւ ազգայնական ղեկավարութեան անձեռնահասութիւնը: Ինչպէ՞ս էին կարողացել բոլշեւիկները թափանցել Կարս, պրոպագանդ, դաւադիր աշխատանք տանել եւ ամէնից անբացատրելին՝ համախմբուել մի գնդի մէջ: Ինչպէ՞ս էր կարողացել այդ գունդը խուճապն անյաղթահարելի չափերի հասցնել: Հասկանալի է, որ տկար է եղել կազմակերպութիւնը: Աւելի վատ, որ հետագայ յուսահատական կռիւները եւ փետր. 18-ի մեծ ապստամբութիւնը յայտնօրէն ապացուցեցին, որ մեծամասնականութիւնը հող չէր գտել հայ իրականութեան մէջ: Յանցանքն, ուրեմն, քաջաբար կռուող եւ միւս ճակատներում 100, Կարսում 95 %-ով հայրենի ուխտին հաւատարիմ զօրքինը չէր, այլ քաղաքական ղեկավարութեան, զինուորական նախարարութեան, Կարսի բերդային հրամանատարութեան: Աղէտին կարելի է տալ ե՛ւ պատմական-հոգեբանական ընդհանուր բացատրութիւններ. 7 տարուայ արիւնոտ պատերազմները՝ մի՛շտ էլ անհաւասար ոյժերի դէմ, ջարդերից մնացած յիշողութիւնները, ժողովրդի սակաւաթուութիւնը եւ ցրուածութիւնը (Հայաստանում այն օրերին ապրում էին 1 միլիոնից քիչ աւելի հայեր), աշխարհից լքուած լինելու սպանիչ զգացումը, Ռուսաստանի եւ Թուրքիայի դէմ միաժամանակ տարուած կռուի անյուսալի ելքը:

Տխուր այս մտածումները փակում էին նոր խոյանքների կարելիութիւնը: Դեկտ. 2-ին Ալեքսանդրապոլում (թուրքերի հետ) եւ Երեւանում (ռուսների հետ) կնքուեցին սպանիչ երկու համաձայնագրեր: Հայաստանը բաժանւում էր Խորհրդ. Միութեան եւ Թուրքիայի միջեւ: Բոլշեւիկները խոստանում էին ընդլայնել խորհրդայնացուող Հայաստանի սահմանները: Այնքան արիւն թափելուց յետոյ հայ ժողովուրդն այժմ լալիս էր ե՛ւ մեռած իր երազների վրայ: Մնում էր մի յոյս. Զանգեզուրում դեռեւս փողփողում էր ազատութեան դրօշը:

ՓԵՏՐՈՒԱՐ 18

Ձեռք բերելով երկրի իշխանութիւնը՝ բոլշեւիկները փորձում էին դաւադրուած հայ ժողովրդին մխիթարել սուտ խոստումներով: Նրանք սարքում էին «յաղթական» միտինգներ, որոնց մասնակցում էր 50, լաւագոյն դէպքում 100 հոգինոց «զանգուած»-ը (բաղկացած առաւելապէս Բագուից եկածներից): Այդ խեղկատակութիւնները յիշեցնում էին մեռելների պարը՝ անապատում: Կողք կողքի ապրում էին ներհակական երկու աշխարհներ. հայ ժողովուրդը՝ որ հայրենիքի կործա-

նումն էր սգում եւ բոլշեւիկները՝ որոնք ցնծում էին «պրոլետարիատ»-ի յաղթանակով: Ռազմա-քաղաքականապէս պարտուած՝ հայ ժողովուրդը չէր ուզում հաշտուել նաեւ ոգեկան-բարոյական պարտութեան մտքին: Դեռեւս դեկտ. 6-ին Երեւանում գումարուած մի մեծ ժողովում տրուեց ապստամբութեան ազդանշանը: Խելագար հալածանքները, բանտարկութիւնները (6000), գնդակահարութիւնները (50), որակաւոր հայ սպաների (1.500) աքսորը, վայրենի կողոպուտը չէին կարող փոխել իրերի դրութիւնը: Հայաստանում իշխում էր ապստամբական ոգին:

Այդ պայմաններում տեղի չէր կարող տալ Զանգեզուրը, որ Տաթեւի Ա. համագումարում (25 դեկտ. 1920թ.) իրան հռչակել էր ինքնավար եւ իր պայքարի առաջնորդ զօր. Նժդեհին՝ սպարապետ: Բոլշեւիկներն իրար ետեւից կոչեր, դիմումներ էին անում Զանգեզուրին՝ վար դնել զէնքը եւ միանալ մայր հայրենիք Խ. Հայաստանին: Նրանք յայտարարում էին, որ Զանգեզուրը, Ղարաբաղը, Նախիջեւանը զիջուած են Հայաստանին: Նրանք աւելացնում էին, որ զիջուելու է նաեւ Կարսը, բայց *«Զանգեզուրի Խ. Հայաստան չճանաչելը խանգարում է այդ գործը»*: Կարմիր բանակի *«ռազմա-յեղափոխական»* կոմիսարներից Հեկկերը զօր. Նժդեհին ուղղած իր նամակում (15 փետր. 1921թ.) դեռեւս յամառօրէն կրկնում էր նախորդ դիմողների, բանակցողների խօսքերը. *«...Դուք մեղադրում էք մեզ Կարսը... գրաւելու խնդրում իբրեւ թուրքերի արշաւանքին օժանդակող (եւ մինչեւ իսկ նախաձեռնող)... թիւրիմացութեան մէջ էք: ...Մանաւանդ հայերի նկատմամբ եղել ենք զգոյշ, գիտակցելով, թէ որքա՛ն տառապանք է կրել այդ ժողովուրդը: ...Մենք շտապեցինք կրճատել տաճիկների ազդեցութեան շրջանը եւ Մոսկուայի ռուս-տաճկական խորհրդաժողովի պայմաններից մէկն եւս Կարսի շրջանի մաքրումն է... Ձեր շարժումը թուլացնում է Խ. Հայաստանի դիրքը՝ իր հողը պաշտպանելու խնդրում»...* Տեսնւում է, որ շոյիչ այս սպառնալիքներով բոլշեւիկները կատարում են բարոյական շահատակութիւն: Օգտագործելով Հայաստանի դժբախտութիւնը՝ նրանք ձգտում են Զանգեզուրը մղել զինաթափումի եւ նրանով վերականգնել այդտեղ նսեմացած զէնքի պատիւը: Զանգեզուրը, սակայն, յամառօրէն պահանջում է երկու բան. 1. տաճիկների հեռացումը հայկական հողերից, 2. վերացում Հայաստանում տարուած հակահայ հալածանքների:

Փոխադարձ ատելութիւնը եւ կասկածանքն աւելի էր զօրաւոր, քան հասկացողութեան յանգելու ցանկութիւնը: Եւ այն Ղարաբաղը, որ իբրեւ թէ զիջուել էր Խ. Հայաստանին՝ դեկտ. 29-ին (1920թ.) հարկա-

դրուեց զէնքի դիմել բոլշեւիկեան գազանութիւնների դէմ: Անհաւասարօրէն ծանր կռիւներ մղուեցին մինչեւ մարտ. 8-ը (1921թ.), երբ փետրուարի վերջերին Զանգեզուրից հասած հայկական ոյժերի օգնութեամբ ղարաբաղցիները ջարդեցին եւ վերջնական փախուստի մատնեցին իրանց «կարմիր բարերար»-ին: Փետրուար 12-ին ջարդուեցին նաեւ Գողթանի վրայ յարձակուած թուրքեւբոլշեւիկ ոյժերը: Նոյն օրերին՝ Խ. Հայաստանում սկսւում էր արդէն ապստամբական կռիւը: Ամէն կողմից ճնշելով եւ փախուստի մատնելով բոլշեւիկներին՝ ապստամբները փետր. 18-ի լուսաբացին (ժամը 4-ին) պաշարեցին մայրաքաղաք Երեւանը, որ նոյնպէս բարձրացրեց կռուի դրօշը: Մինչեւ ժամը 8-ը փողոցներում մղուեց քաոսային եւ արիւնահեղ գուպար: Ամէն կարգի հրազէնների որոտին ընկերանում էին որբանոցներից բարձրացած սարսռօրէն յուզիչ ձայներ: Գրեթէ ամբողջովին թուրքաց հայաստանցի՝ տասնեակ հազարաւոր որբերն երգում էին «Մեր Հայրենիք»-ը եւ խելայեղօրէն աղաղակում. *«Կեցցէ Միացեալ եւ Անկախ Հայաստանը»:* Նրանք գիտէին, որ շարժումն իրանց հայրերի կտակի եւ երազի դահիճների դէմ է: Ապստամբները կռւում էին կատաղութեան լացով: Մեծամասնականութիւնը տեղի տուեց հայ ոգու տարերային այս շարժի առաջ: Թշնամու մնացորդները զրահապատ գնացքի պաշտպանութեան տակ՝ փախան դէպի Շարուր, որ բոլշեւիկեան տիրապետութեան օրերին կրկին դարձել էր թրքաբնակ:

Չորս օրուայ կատաղի կռիւներով վերագրաւուած էր Հայաստանի մեծ մասը: Հայկական այս մեծ ապստամբութիւնը զուգադիպել էր Վրաստանի վրայ բոլշեւիկների յարձակմանը: Ճակատագիրը կամեցել էր, որ գէթ վերջին ժամին, հայեւվրացի ժողովուրդները միասին կռուեն ընդհանուր թշնամու դէմ: Բայց երկու բանակները չկարողացան միանալ: Մի քանի օրից ընկաւ Թիֆլիսը, եւ վրացական զօրքերը նահանջեցին հայկական սահմաններից հեռու: Հայերն էլ չկարողացան արագ թափով գրաւել Փամբակ-Լոռու շրջանը եւ թիկունքից զրկել Վրաստանը նուաճող բոլշեւիկեան բանակին: Նրանք ապստամբուել էին իրանց ոգու ոյժով, բայց զուրկ էին յարձակողական պատերազմ վարելու տնտեսական թէ ռազմամթերային կարելիութիւնից: Փետրուար 18-ի ապստամբութիւնը քայքայուած մի երկրի վերջին ճիգն էր: Երկրում բացուել էր երեք ռազմաճակատ, որոնց վրայ ժողովուրդը կռւում էր՝ ապաւինած միայն բարոյական իր ոյժերին:

Վրաստանի անկումից յետոյ բոլորովին անյոյս էր դառնում հայերի ապստամբական կռուի ելքը: Նուիրուածների շարքերից խլուած էին բազմաթիւ զոհեր: Աւերուած եւ կողոպտուած երկրում սովը կրկին ցոյց

էր տալիս իր ժանիքները: Սպառուում էր ե՛ւ ռազմամթերքը: Թշնամին հասցնում էր նորանոր ոյժեր: Մարտի վերջերին հիւսիսային երկու ճակատներում էլ (Աբարան եւ Ախտա) զգալի էր արդէն մեծաթիւ բանակի ճնշումը: Հայկական ոյժերն աստիճանաբար նահանջում էին դէպի Երեւան եւ Էջմիածին: Փախչում էր ե՛ւ գիւղական ազգաբնակչութիւնը: Հայաստանի ճամբաները կրկին բռնուած էին գաղթականներով: Դէպի Շարուր նահանջած բոլշեւիկները թէպէտեւ սպառուած էին, բայց քաջալերուած վերահաս օգնութիւնից՝ շարունակում էին յամառ դիմադրութիւնը: Թիֆլիսից խ. իշխանութիւնն ուղարկել էր մի պատուիրակութիւն (հայոց երեւելի բանաստեղծ Թումանեանի գլխաւորութեամբ), որ ապստամբներին ներում եւ Հայաստանի համար «լաւ ապագայ» խոստանալով՝ առաջարկում էր վար դնել զէնքը: Ապրիլ 2-ին հայկական ոյժերը քաշուեցին լեռները՝ Արագած եւ Գառնիի շրջան: Արագածում հաւաքուածները մի քանի օրուայ թեթեւ, բայց այլեւս անիմաստ կռիւներից յետոյ ցրուեցին: Ապրիլ 4-5-ին Գառնիի ոյժերը ծանր կորուստներով յետ մղեցին թշնամու յարձակումը: Բայց այստեղ էլ կռուի շարունակումն համարւում էր անիմաստ: Ուստի՝ զինուորների մի մասին եւ ժողովրդին թելադրուեց ցրուել գիւղերը, իսկ իբրեւ պատասխանատու նկատուած տարրերը (12.000 մտաւորականներ, մարտական առաջնորդներ, ուսանողներ) բռնեցին Զանգեզուրի ճամբան: Նրանք պիտի անցնէին ձիւնապատ լեռների կածաններով եւ 15 օրուայ տաժանելի ճամբորդութեամբ հասնէին Սիւնեաց հռչակաւոր աշխարհը:

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԱՆԿՈՒՄԸ

Իբրեւ ողբերգական դէպք՝ փետրուար 18-ը չէր կարող քաղաքական արդիւնքներ տալ: Հայ ոգին գործել էր հերոսական, բայց անհեռանկար մի թռիչք: Փետր. 17-ի երեկոյեան Փարաքարի մօտ գերի ընկած բոլշեւիկ մի մտաւորական (Պապովեան) ասում էր. *«Այսպիսի պայմաններում ազգերից եւ ո՛չ մէկն է ընդունակ ապստամբութիւն խիզախել: Իբրեւ մարդ՝ զարմանում եմ, իբրեւ բոլշեւիկ դատապարտում եմ, իբրեւ հայ՝ հպարտ եմ»*: Եւ իսկապէս, փետր. 18-ի խոյանքը մէկն է ոգու մեծ հրաշքներից: Հայերն ապստամբել էին անհնարին պայմաններում, առա՛նց վերջնական յաղթանակի յոյսի, առա՛նց քաղաքականապէս աւելին շահելու հաւատի: Նրանց վարել էր բարոյական ցասումը: Փետր. 18-ը զինուած բողոք էր՝ ազգային նուիրական յոյսերը խորտակած մեծամասնականութեան դէմ: Իբրեւ ոգու տարե-

ռային շարժ՝ դէպքը զարմանք էր առաջացրել եւ Մոսկուայում: Լենինն իբրեւ թէ դատապարտում էր իր գործակալներին, որ հայ տանջուած ժողովուրդը կրկին մղել են յուսահատական կռուի: Բայց կարեկցական նման խօսքերի տակ թաքնուած էին դեռեւս 1903-ից, 1905-ից իր հակահայութեամբ ծանօթ բոլշեւիկ ղեկավարի ծուռ հաշիւները: Բոլշեւիկների ամենացայտուն ընդունակութիւնն այն բանում է, որ մտածելով հրեայի պէս եւ գործելով թաթարի պէս՝ կարողանում են խօսել նաեւ ռուսի պէս: Լեզուով բարձր մարդկայնականութիւն կեղծելով՝ նրանք իրականացնում են մոլորանք եւ ոճիր սփռող իրանց ծրագիրները: Փետրուար 18-ի դէպքը ո՛չ թէ դարձի պիտի բերէր բոլշեւիկներին, այլ աւելի՛ պիտի խստացնէր նրանց հակահայ ոգին: Տեսնելով, որ Անդրկովկասի ժողովուրդներից հայերն են միայն երկար եւ յամառ դիմադրութիւն ցոյց տալիս Խ. Ռուսաստանին՝ նրանք մղուեցին այդ ազգի համար ստեղծել այնպիսի մի դրութիւն, որում նա ո՛չ իր դրացիների հետ հասկացուելու հնարաւորութիւն ունենայ, ո՛չ տաճկական սպառնալիքից զերծ մնայ, ո՛չ էլ նուազագոյն չափով լայն մի երկրում կենտրոնանալ կարողանայ: Ուստի՝ փետր. 18-ից յետոյ վերջ գտան ո՛չ միայն Կարսը, Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու խօսքերը, այլեւ Երեւանի գաւառներից Սուրմալուն տրուեց Թուրքիային, Նախիջեւանը՝ Ադրբեջանին: Հայերի ազգային երազներն ընդմիշտ խորտակելու նպատակով՝ նրանք Խ. Հայաստանն այնպէս սեղմեցին, որ սա եւ ո՛չ մի կէտով սահմանակից չլինի Թուրքիային թողնուած հայկական նահանգներին: Նրանք տաճիկներին յանձնեցին հայ ազգի համար պատմականօրէն նուիրական գրեթէ բոլոր վայրերը, անգամ Երեւանի առաջ կանգնած Արարատ լեռը՝ հայ ցեղի եւ հայրենիքի յաւիտենական այդ խորհրդանշանը: Թո՛ղ հայերի առաջ փակ մնայ Վասպուրականի, Տարօնի, Բարձր Հայքի հորիզոնը, թո՛ղ հեռուից միայն տեսնեն Արարատը, իսկ մի քանի քայլի վրայ՝ թո՛ղ դիտեն, թէ թուրքերն ինչպէ՞ս են վերակործանում հայոց պատմական փառքերի ոստան Անին, Ախուրեանի միւս ափին: Այսպէս միայն կարելի է շղթայակապել եւ տանջել իր հայրենապրումի մէջ գերբնականութիւն դնող մի ազգի հոգին:

Այս դաժանութիւններն ողբերգականութեան շեշտ էին դրել անգամ հայ բոլշեւիկների ձայնի վրայ: Այդ ձայնով էլ նրանք խօսում էին Զանգեզուրի հետ, որ ապրիլ 27-ին, Տաթեւի Բ. համագումարում, իրան յայտարարել էր «Լեռնահայաստան», եւ որոշել շարունակել կռիւը: Ռուսական զօրամասերը, սակայն, տրամադիր չէին յարձակուել Զանգեզուրի դէմ, եւ Մոսկուան պահանջում էր, որ Խ. Հա-

յաստանն ինքը հաշուեյարդարէ խնդիրը: Այնուամենայնիւ, յունիսի կէսերին բռնկուեցին մի քանի ուժեղ կռիւներ: Գնդեվազի մօտ, յունիս 16-ին ջարդուեցին բոլշեւիկները՝ թողնելով 800 գերի, թնդանօթներ եւ ռազմաւար: Զանգեզուրի ոյժերը մտան Դարալագեազի գաւառը, որտեղի բոլշեւիկեան զօրամասը (կազմուած հայերից) անձնատուր եղաւ, առանց դիմադրութեան: Այդ պայմաններում Երեւանի հայկական (խորհրդային) կառավարութիւնը դիմեց բանակցութիւնների: Նրա պատուիրակներն ասում էին. *«Բովանդակ Ռուսաստանը խ. իշխանութեան ձեռքում է այլեւս: Աշխարհից լքուած հայութիւնը մենակի իր ողբերգութեամբ չի կարող կռուով պայմաններ թելադրել Ռուսաստանին: Հայաստանը տնտեսապէս կործանուած է. ժողովուրդը յոգնած տարիների անհաւասար պատերազմից: Կորցրինք շատ բան, կորցնում ենք եւ մնացածը: Զիջեցէ՛ք. թերեւս կարողանանք դրանով որոշ բաներ վերափրկել»*: Լեռնահայաստանը տեղի տուեց: Յուլիս 15-ին (1921թ.) նրա հռչակուած վաշտերն ենթարկուեցին զօրացրումի: Ղեկավար տարրն անցաւ Պարսկաստան: Տարիների խանդագին պայքարի քաղաքական արդիւնքն ա՛յն եղաւ, որ Զանգեզուրը կցուեց Խ. Հայաստանին: Բարոյապէս հայերը կարող էին մխիթարուել այն բանով, որ Սիւնեաց խրոխտ լեռնավայրում իրենց զէնքը մնացել էր անպարտելի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՐԱՐԸ

Կտրուած աշխարհից՝ Հայաստանում քիչ բան գիտէին հեռաւոր Կիլիկիայի անցքերի մասին: Ըստ Պօղոս Նուբարի հետ 1916-ին կնքած համաձայնութեան՝ Ֆրանսիան յանձառու էր եղել, այնտեղ, իր հովանաւորութեան տակ վերականգնել հայկական պետութիւնը: Մինչեւ 1920թ. ամառը, թւում էր, թէ Ֆրանսիան ազնուաբար է վարւում իր խոստման հանդէպ: Դեռեւս 1919թ. մայիսին Կիլիկիայի մարզպան գնդ. Բրեմոնը յայտարարում էր. *«...Պիտի կազմուի Հայաստանը... Դաշնակիցներս շատ երկար մտածեցինք այդ մասին: Մեր ցանկութիւնն է, որ հայերը տէր դառնան իրանց երկրին... մենք պիտի առաջնորդենք նրանց, մինչեւ որ աճեն եւ զօրանան... այնժամ մնանք բարով պիտի ասենք եւ հեռանանք: ...Հին Հայաստանը Արաքսի հովտի երկայնքին էր. նոր Հայաստանն էլ պիտի մեծանայ. հայ ազգն ընդունակ, զարգացած եւ աչքի զարկող մի տարր է... Չի անցնելու երկար ժամանակ եւ Հայաստանը պիտի տարածուի դէպի Կասպից ծով, որ կարեւոր մի դուռ է այդ երկրի համար. պիտի չանց-*

նեն մի քանի տասնեակ տարիներ եւ ահա՛ նա պիտի տարածուի դէպի հարաւ, շա՛տ հարաւ»:

Այդ այն օրերին էր, երբ Անգլիան Կովկասում հետապնդում էր թուրքական «թումբ» ստեղծելու քաղաքականութիւնը եւ անհանգստանում էր ո՛չ միայն ռուսական վտանգից, այլեւ այն բանից, որ Կիպրոսի հանդիպակաց զոյգ ափերը (սիրիական եւ կիլիկեան) անցնում են ֆրանսիական ազդեցութեան տակ, երբ Մոսկուան եւ Լոնդոնն իրար խաճաճեւող հաշիւներով, բայց եւ իրար լրացնող ներշնչումներով՝ յարութիւն էին տալիս թուրքական դիակին, երբ ոչնչութիւնից ձեւաւորւում, ոյժ էր դառնում քեմալականութիւնը եւ խորհրդաւոր յանդգնութեամբ ծրագիրներ մշակում ֆրանսիական Կիլիկիայի դէմ: Ձգտելով Կիպրոսի շրջագծից հեռացնել, գէթ նուազագոյնի իջեցնել ֆրանսիական ազդեցութիւնը՝ Անգլիան թուրքերին պիտի վերադարձնել տար ո՛չ միայն Կիլիկիան (1919-21թթ.), այլեւ Ալեքսանդրետի սանջակը (1938-39-ին): Անգլիան միշտ էլ չարաշահել է իր զինակիցների միամտութիւնը կամ տկարութիւնները, իսկ Ֆրանսիան չի խորշել զօրաւոր իր մրցորդների գործիքները կաշառով զինաթափելու մտքից: Սեւրից յետոյ Ֆրանսիան, ի հեճուկս Անգլիայի, որոշեց դառնալ Թուրքիայի բարերարը: Եւ այդ օրուանից Կիլիկիայի հայութեան նկատմամբ նա կատարեց աւելի՛ ապերախտ դեր, քան բոլշեւիկները՝ Հայաստանի:

Դաւաճանումի առիթը տուեց Լոնդոնը: Երկար նախապատրաստութիւնից յետոյ, 1920թ. ապրիլին, Լորդ Քըրզընը յայտարարեց, թէ Կիլիկիան պէտք է վերադարձնել թուրքերին, որովհետեւ *«նրանք են կազմում մեծամասնութիւնը»*: Կիլիկիայի քրիստոնեաները՝ հայեր, յոյներ, ասորիներ, խալդեաններ, յակոբեաններ, հաւաքական բողոք ուղղեցին դաշնակիցների «Գերագոյն Խորհուրդ»-ին: Դեռեւս անծանօթ այն ճշմարտութեան, թէ «մեծամասնութիւն», «փոքրամասնութիւն» եւ նման հասկացողութիւնները լոկ բառախաղեր են, մոլորանքի զէնքեր եւրոպական դիւանագիտութեան ձեռքում՝ նրանք, վիճակագրական մանրամասն տուեալներով ապացուցում էին, թէ սխալւում է Լորդ Քըրզընը, թէ Կիլիկիան ո՛չ միայն անցեալով, այլեւ օրուայ ազգագրական վիճակով գերազանցօրէն հայկական է: Ապա նրանք սրտայոյզ խօսքերով կոչ էին ուղղում Արեւմուտքի իրանց հզօր հաւատակիցների մարդկայնութեան. *«Կիլիկիայում վերապրող 275.000 քրիստոնեաների անունով, մեր նահատակների անունով, մեր հերոսների՝ որոնք այս օրերին Զէյթունի, Հաճընի, Վէյկիի, Հուրնիէի մէջ կռւում են թուրքական հորդաների դէմ, նմանապէս մեր այն մարտիկ-*

ների անունով, որոնք Սիսում եւ էքբէյում ֆրանսիական քաջ զօրքերի կողքին՝ յաղթականօրէն դիմադրում են... ջերմապէս խնդրում ենք եւ պահանջում... որ Կիլիկիան ազատէք թուրք տիրապետութեան սոսկալի մղձաւանջից, որի շարունակութիւնը պիտի յաւերժացնէ անցեալի աղէտները եւ մահուան պիտի դատապարտէ մի ժողովուրդ, որ այնքան երկար ժամանակ տառապած է իր ազատութեան համար»... Ի՞նչ արդիւնք կարող էին տալ նման դիմումները, երբ թուրքական յարձակումները Կիլիկիայի դէմ՝ սկսուել էին մի կողմից՝ Մոսկուայի քաջալերանքով, պահանջով, օգնութեամբ, միւս կողմից՝ Անգլիայի արտ. գործերի նախարարի ազդանշանով:

Սկզբում կռւում էին ֆրանսիացիները, բայց Ֆրանքլէն Բույոնի Անգորա կատարած այցելութիւնից յետոյ նրանք ո՛չ միայն բռնեցին չէզօք հանդիսատեսի դիրք, այլեւ աստիճանաբար անդամալուծեցին հայկական դիմադրութիւնը:

Կիլիկիան աշխարհի միակ այն անկիւնն է, ուր խաչակիրների շարժումը դեռեւս ապրող աւանդութիւնների հետքեր էր պահում: Տաւրոսեան նրա լեռնամասում դիւցազնական հին ոգու հետ՝ պատուով խնամւում էր ե՛ւ վտանգուածների համար արքուն մնալու առաքինութիւնը: Այժմ այնտեղից էին բարձրանում օգնութեան կանչեր. *«Հաճնը պաշարուած, Զէյթունը պաշարուած, Սիսը պաշարուած, Քեսապը պաշարուած, Մարաշն անօգնական, Այնթապի ճակատագիրն անստոյգ, Բիլեզրիքը կոտորուած, Հաչքերքը կոտորուած, Գիւլաբեքը կոտորուած, Գիւզուլուքը կոտորուած»...* Այս կանչերն անարձագանգ կորչում էին շահամարտ մի աշխարհի ժխորի մէջ: Արդե՞օք եւրոպացին յանկարծական մի ոստումո՞վ է վայրենութիւնից անցել քաղաքակրթութեան: Յամենայն դէպս, նրա ոգին հակասատենչ է եւ գործերը, շա՛տ յաճախ, զուրկ խղճմտանքի տրամաբանութեան կնիքից: Հայկական բարեպաշտութիւնը թոյլ չէր տալիս մտածել, թէ բարոյական հակասութիւններն են վարում Ֆրանսիայի քաղաքական խորհողութիւնը, թէ քրիստոնեաների պաշտպանի հռչակ հանած մի պետութիւն ընդունակ է դաւել սարսափների անապատներից վերահաւաքուած մի ժողովրդի գոյութեան դէմ: Կ. Պոլսի հայոց պատրիարք Զաւէն արք.-ը, հայկական զոյգ պատուիրակութիւնները Փարիզում դիմումներ են անում Միլերանին, Բրիանին: Ֆրանսիայի համար վարկաբեկիչ եւ վնասակար այդ լքումից ազդուել եւ բողոքում են նաեւ պատուախնդիր բազմաթիւ ֆրանսիացիներ՝ գրողներ, գիտնականներ, հասարակական գործիչներ, զինուորականներ: Դժգոհ է անգամ զին. նախարարը: Բայց անպարտելի է Ֆրանքլէն Բույոնի թիկունքում կանգնած դրա-

մատէրերի դասը: Միլըրանն ասում է, որ Կիլիկիան խաղաղեցնելու համար 100.000 զինուոր է պէտք («ո՞վ է հոգալու ծախքերը»), իսկ Բրիանը մխիթարում է հայերին, թէ թուրքերի համար պատմութեան «պատժի ժամը» հետագային կրկին հնչելու է: Իրականում նրանք անզօր էին վարագոյրի ետեւ գործող հակահայ սեւ ոյժի՝ Ռուսաստանում «պրոլետարիատ»-ի, Ֆրանսիայում՝ «բուրժուազիա»-ի, ամէն տեղ եւ մանաւանդ Անգլիայում՝ «մասոնութեան» դրօշի տակ աշխարհի դաւերի մեքենան լարող հրէութեան դէմ:

Ադանայում սարսափելի խռովք կայ հայերի մէջ՝ դիմումներ, բողոքներ, յուսահատական ցոյցեր: Ֆրանսիական իշխանութիւնն ո՛չ միայն չի օգնում պաշարեալներին, այլեւ հալածում է Կիլիկիայի դաշտամասի հայերին, որոնք սրտառուչ ճիգեր են թափում՝ իրանց ցեղակիցների փրկութեան համար:

Երեւելի մի անձնաւորութիւն՝ գիտնական պատրիարք Եղիշէ արք. Դուրեանը, 1920թ. ամառնավերջին, Զմիւռնիայից հեռագրում է. *«Կիլիկիայի հայոց կացութիւնը ծայր աստիճան տագնապալի է: Թուրք հրոսախմբերի պահանջով՝ ֆրանսիական իշխանութիւնները սկսած են տեղահանել Կիլիկիայի հայութիւնը: Ադանայի Ազգ. Միութեան աքսորուած անդամները 900 տեղահանեալներով Զմիւռնիա հասան... Կիլիկիայի հայկական թերթերը դադրեցուած են: Սիսին եւ Հաճնին օգնութեան գնացող հայկական խմբերը զինաթափուած են: Զօր. Գուրօ հաստատած է թուրքական մի վարչութիւն: Հայ բնակչութիւնն աշխատում է ամէն գնով դիմադրել թուրքական տիրապետութեան վերահաստատումին»...* Բայց տեղի ունեցաւ ամենավրդովեցուցիչը: Սեպտեմբերին գնդ. Բրեմոնը հրաման ստացաւ զինաթափել եւ ցրել Ֆրանսիային այնքա՛ն ծառայութիւններ մատուցած եւ իր քաջագործութիւններով հռչակուած Հայկական Լեգեոնը, որ արտօնութիւն էր խնդրել օգնութեան գնալու պաշարուած ցեղակիցներին: Անզէն վիճակում Լեգեոնը կանչուեց տխուր մի զօրահանդէսի: Գնդ. Բրեմոնն ասաց հրաժեշտի խօսքը. *«Սպանե՛ր, ենթասպանե՛ր, տասնապետնե՛ր եւ լեգեոնականնե՛ր, ձեզանից բաժանուելու նախօրեակին խորին իմ երախտագիտութիւնն եմ յայտնում ձեզ՝ պանծալի ձեր ծառայութիւնների համար... Ձեր քաջութեան եւ կորովի անջնջելի յիշատակները պիտի պահեմ սրտիս մէջ... Քա՛ջ լեգեոնականներ... ձեր ընտանեկան յարկերին երջանկութիւն եւ ձեր սիրելի հայրենիքին բարգաւաճում կը մաղթեմ»...* Հայ լեգեոնականների ընտանեկան յարկերն յանձնուել են կործանիչ թշնամու սրին եւ հրին, ծախուել է նրանց հայրենիքը եւ դեռ «երջանկութիւն եւ բարգաւաճում» են մաղթում նրանց: Դաւաճանելիս

անգամ՝ Ֆրանսիացին ընդունակ է քաղցր յոյսերով եւ խօսքերով մխիթարել իր հին բարեկամներին, երախտաւորներին: Այդ է պատճառը, երեւի, որ տառապեալների համար Ֆրանսիան մնում է սիրելի: Մարդկութիւնը հոգեպէս բարձրացնող առաքինութիւնների որպիսի՛ ասպետ պիտի դառնար այդ ազգը, եթէ վարձատրել գիտնար, ինչպէս գնահատում է եւ գործել՝ ինչպէս խօսում է:

Ֆրանսիացիների անմարդկային այս վերաբերմունքից յետոյ էլ հայ լեգեոնականները յուսահատական ճիգեր թափեցին օգնելու տագնապեալ ցեղակիցներին: Դրանք, սակայն, չարդիւնաւորեցին՝ լիապէս: Գաղտնօրէն զինուած խմբերից շատերը բռնուեցին եւ աքսորուեցին՝ իրանց հետ տանելով ապերախտուածի հիասթափութեան եւ վտանգուած հարազատներին օգնելու իրաւունքից զրկուածի անզօր ցասման տանջանքը: Բայց եւ այնպէս, մի քանի վայրեր ստացան որոշ օգնութիւն եւ ամէնից էականը՝ լուսաբանուեցին, թէ Ֆրանսիան լքել է հայկական իր քաղաքականութիւնը, որով հասկացան, թէ պէտք չէ փախցնել վտանգուած իրանց դիրքերից հեռանալու առիթը: Բացարձակապէս անօգնական մնաց Հաճնը, որի մահաբեր պաշարումը տեւեց 220 օր: Հաճնը Կիլիկեան Տաւրոսի երկրորդ Զէյթունն էր: Այստեղ էլ, դաժանօրէն խրոխտ ժայռերի տակ՝ մարդիկ սնւում էին նախահայրերի դիւցազնական ոգով: Իր հզօրութեան օրերին իսկ՝ Թուրքիան զիջողութիւններով միայն կարողանում էր ձեւական մի հպատակութիւն հանդուրժել տալ լեռների այս իշխաններին: Հաճնն էլ 1915-ին հաշտուել էր տարագրուելու ճակատագրին, որովհետեւ նրան համոզել էին, թէ այդ է պահանջում Թուրքիայի ընդհանուր հայութեան շահը: Նա էլ զոհ էր դարձել աւանդօրէն խորին իր ազգասիրութեան: Այժմ, խորտակուել էր ե՛ւ նրա անպարտելի ոյժը (1915-ին տեղահանուած 25.000 բնակիչներից վերապրում էին 8.000, իսկ շրջակայ գիւղերից՝ միայն 2.000 հոգի): Բայց հին արծուաբոյնի բեկորներն էլ կարողացան կատարել գործեր, որոնք աշխարհի ամենաբարձր հիացմունքին պէտք է արժանանային, եթէ դա կորցրած չլինէր ասպետութեան պատուով ապրելու առաքինութիւնը: Հաճնեցիները ունէին սակաւաթիւ տղամարդիկ, միայն մի քանի հարիւր հրացան, անբաւարար ռազմամթերք, եւ մաքառում էին նաեւ սովի դէմ: Յաճա՛խ նրանք ջարդեցին թշնամու բազմաթիւ հրոսախմբերը, բայց անտեղեակ Ֆրանքլէն Բույոնների դաւերին եւ խորապէս համոզուած, թէ «վեհանձն Ֆրանսիան» ի վերջոյ հասցնելու է փրկարար իր օգնութիւնը՝ չօգտուեցին նահանջը կարելի դարձնող իրանց յաջողութիւններից: Հայը մի՛շտ էլ զոհ է դարձել եւրոպացու ազնւութեան մասին սնուցած միամիտ իր

հաւատին: Հաճնեցիներն աստիճանաբար սպառուեցին սովից կամ ընկան ամենակատաղի գրոհների մէջ: Նրանք մեռան՝ առանց պարտուելու: Մեռան դիւցազնօրէն:

Քստմնելի դէպք պատահեց Մարաշում, ուր ֆրանսիացիները քաղաքի մի մասն անակնկալօրէն յանձնեցին թուրքերին եւ անտարբերօրէն հանդիսատես դարձան 3.000 հայերի սրածումին: Եկեղեցում կենտրոնացածներից 1.400 հոգի, գիշերանց, ուղղուեցին դէպի ֆրանսիական դիրքերը: Նրանք հասան «փրկութեան» կայանը, բայց ընդունուեցին գնդացրային կրակով: Դիակնացան 400 դժբախտներ: Ոճիրը վերագրուեց թիւրիմացութեան եւ սենեգալեան զինուորներին: Լքուեց անգամ Այնթապը, ուր հայկական քաջութիւնը հրաշքներ էր գործում ի փառս Ֆրանսիայի:

Ֆրանքլէն Բույոնը 1921թ. երկրորդ անգամ այցելեց Անգորա եւ վերադարձաւ համոզելու, թէ հայերը պէտք է վար դնեն զէնքը եւ ենթարկուեն թուրքական իշխանութեան: Կիլիկիան նուիրուել էր թուրքերին, իսկ հայ ժողովուրդը՝ նրանց սրին: Շա՛տ ֆրանսիացիների հետ ե՛ւ վարչապետ Բրիանը հասկացաւ, թէ դա լինելու է Ֆրանսիան պատմութեան առաջ սեւացնող մի չարագործութիւն: Հայերը տեղափոխուեցին Սիրիա: Դառնօրէն հիասթափ՝ շատերը հեռացան ե՛ւ այստեղից: Զուր էին անցել նրանց հերոսական մաքառումները, նրանց 20-25 հազար յաւելեալ զոհերի արիւնը: Կորցրած ամէն ինչ՝ նրանք օտարութեան մէջ պիտի ապրէին իբրեւ խորտակուած յոյսերի, խաբուածների, շահագործուածների եւ լքուածների մի ժողովուրդ: Նրանց միակ ոյժն ու մխիթարութիւնը մնում էր յաւիտենականութեան չափ խոր եւ զօրաւոր հայրենատենչութիւնը:

Հայաստանի եւ Կիլիկիայի աղէտները կնքել էին նաեւ յոյների փոքր-ասիական պայքարի ճակատագիրը: Եւրոպական ոյժերի հակամարտութիւնները սրուել էին մասնաւորապէս այդ ձեռնարկի առիթով: Սակարիայի յաղթական ճակատամարտով յոյներն ապացուցել էին, որ ոգով թէ ռազմական կորովով գերազանցում են տաճիկներին, որով՝ կարող են վերանուաճել ամբողջ Փոքր Ասիան: Այդ հեռանկարը գրգռում էր ե՛ւ բոլշեւիկներին, ե՛ւ ֆրանսիացիներին, ե՛ւ իտալացիներին: Աստիճանաբար զգալի էր դառնում, որ դժուար պիտի լինի միայն անգլիացիների «բարոյական» օժանդակութեամբ յաղթահարել Քեմալի խրտուիլակային շարժման թիկունքում կանգնած մեծ ոյժերը: Այդպէս լինելով հանդերձ՝ յոյները չուզեցին կամ չկարողացան հասկացուել Իտալիայի հետ: Քաղաքական մեծամոլութիւնն աստիճանաբար վերածուեց յոռետեսութեան, իսկ սա՝ պարտուողականութեան:

Արտաքին յարաբերութիւնների աննպաստ դասաւորումն ունեցաւ ներքին տխուր անդրադարձումներ: Կուսակցականացաւ բանակը, իսկ զօրավարների փառասիրական նախանձը լրացրեց կազմալուծումը: Այդ պայմաններում յունական բանակը պիտի չկարողանար տոկալ Եւրոպայի ձեռնասուն թուրքերի իրապէս ոչինչ ոյժերի յարձակման: Համակուած աղէտուելու հոգեվիճակով՝ յոյները կրեցին չարաչար պարտութիւն: Նրանց հետ աղէտուեցին աքսորանքից ծանրագոյն կորուստներով նոր վերադարձած արեւմտեան Փոքր Ասիայի եւ Թրակիայի հայերը: Զմիւռնիայի նաւահանգիստում դաշնակից պետութիւնների նաւերը զլացան ապաստան տալ մակոյկներով թէ լողով իրանց մօտեցող քրիստոնեաներին: Եղան անգամ փրկութիւն հայցող դժբախտներին եռացեալ ջրի սրսկումով վտարելու դէպքեր: Հետագային՝ յունական մամուլը բողոքի ձայն բարձրացրեց, թէ ինչ որ եւրոպացիներ թուրքերից գնել եւ ճարտարարուեստի կարիքների համար նաւերով փոխադրում են Փոքր Ասիայում նահատակուած քրիստոնեաների ոսկորները… Հայաստանի հետ նաեւ Փոքր Ասիան ու Արեւելեան Թրակիան դատարկուեցին քրիստոնեայ տարրից: Ինչ որ չէր յաջողուել բարբարոսութեան, իսլամի հզօրութեան դարերին՝ կատարուեց քաղաքակիրթ եւ քրիստոնեայ Եւրոպայի տիրակալութեան օրոք, նրա մեծ ոյժերի աչքի առաջ, նրանց հակամարտութիւնների շնորհիւ, նրանց մեղսակցութեամբ:

* * *

Այդ բոլորից յետոյ՝ Լոզանում բացուեց նոր հաշուեսեղան: Թուրքերը բազմեցին պատուի աթոռին: Հայերը տեղ չստացան նոյնիսկ դատապարտեալների շարքում:

Լոզան էր հաւաքուել հայասէրների մի բազմութիւն, Եւրոպայի գրեթէ բոլոր երկիրներից: Նրանք բերել էին միլիոնաւոր ստորագրութիւններով դիմումներ: Բարոյական Եւրոպան քաղաքականի առաջ՝ խնդրում էր խնայել մեծագոյն անարգանքը՝ քրիստոնէութեան եւ քաղաքակրթութեան: Գիտութեան եւ հասարակական խղճմտանքի անթիւ մարդիկ (Գերմանիայից, Անգլիայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Ամերիկայից, Զուիցերիայից, Բելգիայից, Սկանդինաւեան երկիրներից եւն., եւն.) ցնցող խօսքերով յիշեցնում էին հզօրներին, թէ Հայաստանի ոչնչացումն ապագայ սերունդների կողմից պիտի ընդունուի իբրեւ ամենատխուր փաստը՝ ներկայ մարդկութեան բարոյական սնանկութեան:

«Ազդուած» այդ դիմումներից՝ Լորդ Քըրզընը հասկացրեց տաճիկ-

ներին, որ եթէ Մոսուլի խնդրում զիջող չլինեն՝ վերայարուցուելու է Հայկական հարցը: Սպառնագին շեշտով նա հարցրեց թուրք պատուիրակներին. *«ո՞ւր են, ի՞նչ եղան հայերը. ինքնասպանութի՞ւն գործեցին նրանք»*: Տիրոջ եւ Կայէնի խօսակցութիւնը յիշեցնող այս թատերականութիւնից յետոյ թուրքերը հրաժարուեցին Մոսուլից: Բայց եւ այնպէս, Լորդ Քըրզընն անհրաժեշտ համարեց բաւարարութիւն տալ ե՛ւ քրիստոնեայ աշխարհի հասարակական կարծիքին. *«Հայկական եղեռնը քաղաքակրթութեան մեծագոյն խայտառակութիւնն է»*: Դրանով նա հասկացրեց, որ քաղաքակրթութեան խայտառակումից յետոյ դիւանագիտութիւնը չէ, որ պիտի ամաչէ խայտառակ գործերից:

Յուլիս 24-ին (1923թ.) ստորագրուեց Լոզանի դաշնագիրը: Այնպէս էր բանաձեւուել դա, որպէս թէ ո՛չ հայ եղած լինի աշխարհում, ո՛չ Հայկական հարց, ո՛չ էլ Հայաստան:

Լոզանում եւրոպական դիւանագիտութիւնը քաղաքական, հայերը՝ բարոյական տապանաքար դրեցին միմեանց վրայ: Հայկական զոյգ պատուիրակութիւնները՝ գլխաւորութեամբ Ահարոնեանի եւ օսմանեան կայսրութեան արտ. գործերի երբեմնի նախարար Գաբրիէլ Նորատունկեանի՝ բողոքեցին խաբուածի, շահագործուածի, հիասթափուածի լեզուով: Խարխափելով իրանց ցեղի դարաւոր երազների փլատակներում՝ նրանք մարդկային տանջանքի բովանդակ ոյժով նզովեցին ճակատագիրը, որ դատաւորի իրաւունք է տուել Եւրոպային: Բարոյական մեռելաստանում՝ դիւանագէտները դեռեւս աշխոյժ էին ձեւացնում: Հագած կարեկցողի դիմակը՝ նրանցից ոմանք խօսում էին ինչ-որ ապագայ արդարութեան մասին եւ իրանց զոհերին մխիթարում ա՛յն բանով, թէ աշխարհի կարելիութիւնների դուռը փակուած չէ ընդմիշտ: Ահարոնեանը յայտարարեց, թէ հայ ազգը շարունակելու է հայրենատիրումի իր պայքարը՝ մինչեւ որ կը գան արդար ժամանակներ եւ մարդկօրէն աւելի՛ ազնիւ մի աշխարհ: Դրանով նա ասել ուզեց, թէ անսպառ է իր ցեղի կորովը եւ թէ Եւրոպայի օրուայ հզօրներին պակասում է գոյութիւնը տեւականացնող բարոյական խանդը:

Հայերն ու եւրոպացի հայասէրները հեռացան համոզուած, որ Եւրոպան տառապում է բարոյական փտախտով:

Այլեւս ֆաշական շնչի տակ՝ Իտալիան քննադատական դիրք բռնեց հին Եւրոպայի եւ նրա գործերի հանդէպ:

Ֆրանսիան, մենաշնորհներ ապահովելու յոյսով, շարունակում էր շոյել թուրքերին:

Ամերիկան չմասնակցեց դաշնաժողովին, բայց մի քանի օր յետոյ

(օգոստ. 6-ին) Ուշիում թուրքերի հետ կնքեց բարեկամութեան առանձին դաշինք:

Չիչերինը յայտարարեց, թէ *«Խ. Ռուսաստանի ուրուականն էր սաւառնում Լոզանի կանաչ սեղանի վրայ եւ հենց դա էր, որ խանգարում էր մեծ պետութիւններին յարձակուել եւ ճզմել փոքրիկ Թուրքիան»*:

Անգլիան պահեց խորհրդաւոր լռութիւն, ինչ որ նշան էր Լոզանում հիմք դրուած անգլեւթուրք գաղտնի մի զինակցութեան:

Թուրքերն ասացին. *«Ջարդից յետոյ մի աղօթք արեցինք Ալլահին եւ արդարացանք»*:

* * *

Լոզանից յետոյ՝ ոգեկան ոյժերի գերմարդկային լարումով միայն հայ ազգը պիտի կարողանար յաղթահարել պատմական իր գոյութիւնը կասկածելի դարձնող իրական պայմանների պատճառած սպանիչ յոռետեսութիւնից:

Հայութեան 2/3-ականն ընկել էր խորհրդային սահմաններում, ենթակայ մասնաւոր թշնամանքի: Հալածւում եւ իբրեւ «հակայեղափոխական» ոչնչացւում էին բոլոր նրանք, որոնք խօսում, բողոքում կամ դիմումներ էին անում Խ. Հայաստանի սահմանների ընդլայնման համար: Հայաստանի ռուսագրաւ մասում ազգագրօրէն հայկական էր մնացել 50.000 քռ. քլմ. տարածութիւն, որից միայն 30.000-ն էր տրուել Խ. Հայաստանին: Պայքարն այդ անհիրաւութեան դէմ՝ անթիւ զոհեր պիտի խլէր ո՛չ միայն ազգայնական, այլեւ բոլշեւիկ հայերից: Մահ էր սպառնում մասնաւորապէս նրանց, որոնք իրապէս կամ ենթադրաբար դեռեւս երազներ, յոյսեր էին սնուցում Թուրքաց Հայաստանի վերաբերեալ: Իբրեւ երախտագիտութեան տուրք հանդէպ իրանց ամենամեծ փրկարարի՝ թուրքերը նոյնիսկ բացատրութիւն խնդրեցին Մոսկուայից այն բանի համար, որ թոյլ է տալիս Խ. Հայաստանին՝ պետական զինանշան դարձնել իրանց սահմաններում գտնուող Արարատ լերան պատկերը: Մոսկուան իսկ ծաղրելու եւ տրորելու ձեւով, սրամտօրէն պատասխանեց բարեկամ թուրքերին. *«Լուսինն էլ ձե՛ր երկրի սահմաններից դուրս է, բայց եւ ձեր դրօշի վրայ»*: Դրանով նա հասկացրեց, որ Արարատը հայերի համար մի «լուսին» է միայն, այսինքն՝ անհասանելի: Բայց եւ այնպէս, Խ. Հայաստանի բոլշեւիկ բանաստեղծներն երգեցին. *«ես իմ Մասիս սա՛ռն եմ սիրում»* եւ իրար ետեւից հարիւրներով կացնահարուեցին «չեկա»-ի նկուղներում: Նրանք

երգեցին նաեւ հեռաւոր Տաւրոսում մոռացուած հերոսների աշխարհ Սասունը, հնութեան իրանց փառքի կոթողները, հանճարները: Մի օր էլ Մոսկուան թոյլ տուեց Երեւանում կանգնեցնել «Սասունցի Դաւիթ»-ի արձանը եւ «Իզվեստիա» պաշտօնաթերթում հայերին հռչակեց. *«մեծ ազգ», «մէկն աշխարհի ամենատաղանդաւոր ժողովուրդներից», «մեծ հանճարներ եւ հերոսներ ծնած ցեղ»* եւն., եւն.: Հասկանալի էր, որ պատերազմն էր մօտենում:

Հոգեկան ահաւոր տագնապներ ապրեց գաղութներում ցրուած, աշխարհից աշխարհ դեգերող տարագրութիւնը, որ կազմում էր հայ ժողովրդի 1/3-ականը: Դառնութեան արհամարհանքով դա մերժեց Չիչերինի առաջարկը՝ թուրքերին թողնուած Հայաստանի փոխարէն՝ հող ստանալ Կուբանում: Դա հասկացրեց բոլորին, թէ իր կեանքը միայն Մասիսի ստուերի տակ կարող է աճել եւ թէ ինքն աշխարհում է օտար. թուրքն ու բոլշեւիկը՝ Հայաստանում: Մինչ այդ՝ դա նախընտրեց մնալ իբրեւ հայրենի կարօտով տոչորուող պանդխտութիւն: Մի ծայրը Պարսկաստան՝ հայ տարագրութեան բեկորները ցրուեցին մինչեւ Հարաւ. Ամերիկա: Նրանք իրանց հետ կրում էին աղքատութիւնը, որ սակայն, մոռացուում էր հայրենաբաղձութեան այրող ցաւի, զարհուրելի խորտակումների յիշողութեան եւ հպարտութեան առաջ: Աշխատունակ եւ ստեղծագործ մարդիկ՝ նրանք հիւրընկալ երկիրներում գնահատուեցին իբրեւ լաւ արհեստաւորներ, որակաւոր բանուորներ: Յաղթահարելով ապրուստի դժուարութիւնները՝ նրանք գերմարդկային ճիգեր թափեցին խնամելու ազգային ոգին: Հաստատեցին դպրոցներ, եկեղեցիներ, մամուլ եւ այդ բոլորը ծառայեցրին իրանց ուխտին: Ցրուածութիւնը նրանց պարտադրեց յաւելեալ զոհողութիւններ (յաճախ մի քանի տասնեակ ընտանիքներից բաղկացած գաղութները հարկադրուեցին կառուցել եկեղեցի ու դպրոց, հազիւ 1 միլիոն տարագրութիւնը պահեց մօտ 20 օրաթերթ, 30-ի չափ շաբաթաթերթեր, 60 մեծ կամ փոքր պարբերականներ, մատենադարաններ, ընթերցարաններ, բարեգործական զանազան հաստատութիւններ՝ որբանոցներ, հիւանդանոցներ, ուսանողական տներ, ձրի սեղանատներ, աղքատախնամ մարմիններ եւն., եւն.): Նրանք իրանց խրճիթների պատերից կախեցին Հայաստանի քարտէսը եւ պատկերներ, որոնք պատմում են հայրենի փառքերի թէ սոսկումների մասին: Իրանց զաւակներին սովորեցրին հայրերի լեզուն եւ պանդխտի երգեր: Մեռնելիս՝ տագնապեցին այն բանի համար, որ չեն թաղուում հայ հողում: Կտակեցին իրանց հարազատներին, որ երկիր վերադառնալիս՝ չմոռանան տանել ե՛ւ իրանց աճիւնները: Այդ բոլորով՝ նրանք

հոգեգծեցին այն ճամբան, որ հային յաւիտենօրէն քաշում է դէպի Հայաստան: Հայ տարագրութիւնն եղաւ եւ շարունակում է մնալ հայրենի կարօտի անօրինակ ողբերգութիւն:

Եւրոպացիներից նրանք, որ ճշմարտապէս ծանօթ էին հայ հոգեգծութեան եւ տառապանքի մեծութեան՝ շարունակեցին բարձրացնել բողոքի ձայներ: Մտաւորական մի ընտրանի անյուսօրէն մաքառեց Հայաստանը դաւաճանութեան զոհ դարձնելու մտքի դէմ: Նա պահանջում էր հայրենակարօտ այդ ժողովրդի համար, գէթ, ազգային մի տուն հիմնել՝ պատմական իր հայրենիքի հորիզոնների մօտերը: Ամերիկայում զօրաւոր պայքար էր մղւում Ուշիի դաշինքի դէմ, որ ծերակոյտը բարոյական նկատումներով չեղեալ նկատեց (1927թ.), չնայած որ գործնականապէս դա ո՛չ մի անդրադարձում ունեցաւ հայկական ճակատագրի վրայ: Զուր անցան ամերիկեան հայասէրների յոյսերը՝ կապուած Սմիտին, որ նախագահական թեկնածուի իր յայտագիր կէտերից մին դարձել էր Հայաստանի վերականգնումը:

Յուսահատութեան վերջին մի ճիգով, Նանսէնը, «Ազգերի Դաշնակցութեան» կողմից, գնաց Խ. Հայաստան՝ թերեւս կարելի լինի ճահիճները չորացնել, անապատներն ոռոգել եւ հայրենաբաղձութիւնից տառապող հայկական բեկորների մի մասը տեղափոխել այնտեղ: Ասկուիտն ու Բոլդուինը բաց նամակ ուղղեցին վարչապետ Մակդոնալդին, առաջարկելով թուրքերի Բերլին տեղափոխած եւ հայկական կողոպուտ նկատուած 5 միլիոն ոսկին յատկացնել հայերի տեղաւորման կարիքներին՝ իբրեւ դոյզն հատուցում տառապած այդ ազգին: Հայ մամուլն այդ ելոյթը համարեց վիրաւորիչ կարեկցանք: Նա գրում էր, որ իբրեւ կողոպուտ թուրքերին, բոլշեւիկներին միլիարդների հարստութիւն թողած հայ ժողովուրդը նիւթական փշրանքների կարեւորութիւն չի ընծայում, որ դա արեան եւ հայրենիքի դատ ունի միայն:

Մոսկուան այդ դրամն ստանալու, արտասահմանի հայ հարուստներից նորանոր գումարներ կորզելու, ինչպէս եւ հայ տարագրութեան հայրենաբաղձութիւնն օգտագործելով՝ նրան բոլշեւիկացնելու նպատակով՝ նիւթեց «հայկական ներգաղթ»-ի խայծը:

Ի լրումն աստուածային կատակերգութեան՝ դաշնակիցները 5 միլիոն ոսկին բաժանեցին իրանց միջեւ, իսկ Մոսկուան արտասահմանի հայերից քաշած միլիոնների փոխարէն՝ տարագրութեան մի մասն իրապէս բոլշեւիկացրեց, ներգաղթեցրեց 30 հազար, «չեկա»-ի նկուղներում կամ աքսորավայրերում ոչնչացրեց 40-50 հազար, Խ. Հայաստանից արտագաղթումի մղեց 200-300 հազար մարդկանց:

Մինչդեռ գաղութներում բորբոքւում էր պայքարն ազգայնական եւ բոլշեւիկասէր հայերի միջեւ՝ երկրից հասնում էին զարհուրանքի ճիչեր: Մի քանի յուսահատ պոռթկումներ խեղդուեցին արեան մէջ: Նահատակութեան պսակ ստացաւ անգամ Ամենայն Հայոց Հայրապետը՝ Խորէն Ա. աստուածակրօն եւ հայրենանուէր Կաթողիկոսը: Հակառակ այդ բոլորի՝ գաղութներում անխախտ մնաց երկիր վերադառնալու, իսկ Խ. Հայաստանում՝ հայրենիքի սահմաններն ընդլայնելու կամքը: Դոլենսը մի ժամանակ ասում էր. *«հայերն անկախութեան ցաւ ունեն»*: Այժմ նրանք ունեն հայրենադարձումի եւ ազգահաւաքումի ցաւ: Նրանց դժբախտութեան պատճառների, ինչպէս եւ ճակատագիրը փոխելու մասին խօսւում է դեռեւս: Հին դիւանագէտներն անգամ, յաճախ, զգալի են դարձնում, որ անպատիւ գործ է կատարուել Լոզանում: Նախկին դաշնակիցների գործիչները միմեանց են մեղադրում եւ բոլորը միասին՝ Խ. Ռուսաստանին: Լլոյդ Ջորջը *«Խաղաղութեան Խորհրդաժողովի Յիշատակները»* գրքում ամբաստանում է բոլորին.

ա) Անգլիային՝ որ դեռեւս 1878թ. Բերլինի վեհաժողովում *«չարաշուք կերպով միջամտեց ի նպաստ թուրքերի»* (անդ, էջ 811):

բ) Ֆրանսիային եւ Իտալիային՝ որոնց մէջ *«մենաշնորհներ որսալու գործը մեռցրել էր ամէն գաղափարականութիւն»* (անդ, էջ 470):

գ) Ամերիկային՝ որ դանդաղ շարժւեց եւ *«ուշացրեց Թուրքիայի հաշտութեան դաշնագիրը»* (անդ, էջ 917):

դ) Բոլշեւիկներին՝ որոնք իսպառ ապականեցին քաղաքական բարքերը եւ իրանց *«յեղափոխութեամբ մի հարուած հասցրին Հայկական դատին»*:

Լլոյդ Ջորջը շեշտում է, որ Լոզանում գործուած անիրաւութեան համար՝ եւրոպական դիւանագիտութիւնը պատասխանատու է մնում պատմութեան առաջ: Նա թելադրում է ամօթանքի մղձաւանջից ազատել Եւրոպայի խղճմտանքը. *«Առաջին իսկ պատեհութեամբ պարտաւոր ենք բարոյապէս դարմանել այդ սխալը, որ գործեցինք»* (անդ, էջ 811):

Իր այս առաջարկութեամբ՝ Լլոյդ Ջորջն անուղղակիօրէն շօշափում է ո՛չ միայն քաղաքական վերաքննութեան, այլեւ բարոյական վերանորոգման հարցը: Նա ծանօթ է իր ժամանակակիցների հոգեւոր թերիներին եւ գիտէ, թէ՝ հին իր մտքերին, կուռքերին, նպատակներին ծառայող մի Եւրոպա յաւերժօրէն անընդունակ է *«բարոյապէս դարմանել»* քաղաքական իր սխալները: Եւ իրապէս, ի՞նչ կարելի է սպասել մի աշխարհից, որ ամբողջ կէս դար շահագործում է հայկական նահատակութիւնը՝ պատրանքների, սոսկումների, հիասթափութիւնների

մեծ այդ ողբերգութիւնը, բայց որ ամաչելու չափ պատուախնդիր չէ, երբ մերկանում է իբրեւ ջարդարարների օգնական, գործակից, բարերար: Եւրոպական ոգու անկման տեսակէտով՝ չափանշական է ո՛չ միայն «Լոզան»-ը, այլեւ Լլոյդ Ջորջի բերած այն փաստը, թէ մինչդեռ դաշնակից գործիչներից ոմանք «Վերսայլ»-ն իսկ քիչ էին համարում Գերմանիային, ուրիշները՝ մերժում էին տաճիկներին վտարել Կ. Պոլսից (անդ, էջ 491): «Վերսայլ»-ն ուղղուած էր «մեծ թշնամի» Գերմանիայի դէմ, Լոզանը՝ «փոքր դաշնակից» Հայաստանի: Ինչո՞ւմն է այս հակասութեան իմաստը: Դա նրանումն է, որ Եւրոպայում Գերմանն է ցայտունօրէն ոգու ժողովուրդ, Առաջավոր Ասիայում՝ Հայը: Հին Եւրոպան ոգու թշնամի էր, որովհետեւ նրա քաղաքական ղեկավարութիւնը գտնւում էր ազատ որմնադրութեան ձեռքում: Դա ո՛չ իր ծոցում ապրող հանճարակիր ազգերի հանդէպ կարող էր արդար լինել, ո՛չ էլ իր սահմաններից դուրս գտնուած ցեղակիցների, հաւատակիցների: Բայց դա չէր կարող նաեւ խուսափել ճակատագրի, պատմութեան դատաստանից: Ահա՛ վերաքննական տագնապները, ահա՛ գերմանական, իտալական մեծ ցեղաշարժերը, ահա՛ ներկայ պատերազմը, որ իր խորքում մի ընդվզում է հին Եւրոպայի անառաքինութիւնների, մասնաւորապէս նրա անսիրտ առօրեապաշտութեան, նախանձավառ նիւթադաւանութեան դէմ, որոնք ջնջել էին յաւիտենազգացութեան, որով եւ՝ պատմական պատասխանատուութեան, բարոյական հեռատեսութեան կնիքը նրա խօսքերից, գործերից, նպատակներից: Դա մի աշխարհ էր, որ սոնքում էր իր ոգեպաշտութեամբ, մշակոյթով, քրիստոնէութեամբ, բարեպաշտութեամբ, քաղաքական կորովով, բայց որ ապրում էր հոգեւոր աղքատութեան մէջ, իր քաղաքակրթութիւնը վերածել էր իմաստի թովչանքից զուրկ, պաղ ձեռարուեստի, իր խղճմտանքի բանալին յանձնել էր հակաքրիստոնէական ազատորմնադրականներին, դիւանագիտութեան միջոցով առիւծի իր կարողութիւնները ծառայեցնում էր աղւիսային գործերի: Քաղաքականապէս զօրաւոր՝ դա կարօտ էր բարոյական ինքնափրկութեան: Խորապէս եսական եւ վայրկենապաշտ՝ դա ո՛չ Յիսուսին էր հետեւում, ո՛չ Նիցշէին, այսինքն՝ ո՛չ «մերձաւոր»-ի հանդէպ էր սէր սնուցանում, ո՛չ «հեռաւոր»-ի, ո՛չ հասարակական խղճմտանքով էր արթուն, ո՛չ ժամանակի հետ բարոյապէս կատարելագործուելու տեսակէտով նախանձախնդիր: Դա մոռացել էր, որ քաղաքական զօրութիւնն այնչափ իմաստ եւ արժէք ունի, որչափ ծառայում է ցեղօրէն յաւիտենականին: Այդ էր պատճառը, որ դա անկարելիր էր դէպի արեան եւ ոգու իր եղբայրները, անասնօրէն բուք՝ դէպի մարդկային տառապանքը, որով եւ՝ իսպառ

զուրկ փրկչական կամքից: Հին Եւրոպա՞ն. դա անկում էր զօրութեան մէջ, վայրենացում՝ քաղաքակրթութեան մէջ: Այդպէս էր հին Եւրոպան գլխաւորաբար այն պատճառով, որ կորցրել էր ցեղօրէն ապրելու խանդը, որով՝ սրտի մշակոյթ ստեղծելու կարողութիւնը, առհասարակ բարոյական ներուժականութիւնը: Ո՛ւր բացակայում է ցեղային ապրումը, որով եւ՝ յաւիտենազգացութիւնը, այնտեղ մարդկային ճակատագիրը խաղալիք է դառնում մանր նախանձներ, սադրանքներ արուեստող ոյժերի ձեռքին: Ձնջեցէ՛ք ազատ-որմնադրութիւնը, բացէ՛ք անգլեւգերման ազգերի առաջ իրանց յաւիտենական անցեալի եւ յաւիտենական գալիքի խորհուրդները եւ պիտի տեսնէք, որ նրանք իրանց աւելի երջանիկ պիտի զգան եղբայրօրէն խաղաղութեան լուծը տանելիս, քան թէ պատերազմում միմեանցից արիւնոտ յաղթանակներ խլելիս: Ցեղն է միայն հոգենորոգիչ, բարոյանորոգիչ. դա է նաեւ ճշմարտօրէն հաշտարար եւ արդարադատ: Արիական ոգու վերարծարծումով միայն Եւրոպան կարող է ստանալ յաւիտենատեսի, բարոյապաշտի, առհասարակ սրտի մարդու իր դէմքը, որով՝ զգայուն լինել դէպի ճակատագիրը եւ արդար՝ մերձաւոր թէ հեռաւոր էակիցների հանդէպ:

Այդպիսի մի Եւրոպա միայն կարող է հասկանալ արիական նախադիրք Հայաստանի դարաւոր պայքարի իմաստը եւ ջնջել Լոզանում կատարուած դաւաճանութեան մուրը՝ իր ճակատից:

ԻՄԱՍՏԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Հայն այն ժողովուրդներից է, որոնք դեռեւս հնագոյն ժամանակներից օժտուած են պատճառախուզական իմացականութեամբ: Նախաքրիստոնէական շրջանի տիեզերածնական նրա դիցաբանութիւնից մնացած փշրանքները հաստատում են, որ դա իմաստապաշտ ժողովուրդ է: Նրա համար խորհուրդն աւելի է թովչական, քան երեւոյթը: Դասական յոյնը, ինչպէս Պղատոնն է նկատում, իմաստասիրում էր երեւոյթների պատճառած զարմանքից: Հին հայը խանդ էր դնում գոյութիւնն իմաստաւորող ոյժերին հաղորդակցելու ձգտումի մէջ: Նա աւելի դիտող էր, սա՝ աւելի ապրող: Նա ձգտում էր մտքի կաղապարումներով սահմանել քաոսը, սա՝ իմաստը տեսնում էր անհունի մէջ: Նրա *«ողբերգութիւնը ծնունդ էր առնում երաժշտութեան ոգուց»* (Նիցշէ), սրան՝ տիեզերական տանջանքից. *«երկնքի, երկրի, ծովի ցաւից»*:

Քրիստոնէութիւնը կրօնական խորք տուեց իմաստապաշտութեան: Հայը հանդիսացաւ իր էութեան համապատասխանող այդ կրօնի առաջին որդեգրողը եւ մէկը նրա գլխաւոր տարածիչներից:

Գրական կեանքն Հայաստանում սկսուել է Քրիստոսից առնուազն երկու դար առաջ: Մեզ, սակայն, հասել են միայն քրիստոնեայ մատենագիրների երկերը՝ սկսած Ե. դարից (հների գրական թողօնից փրկուած են մօտ 20.000 ձեռագիր հատորներ): Ե. թէ հետագայ դարերի հայ իմաստասէրների, բանաստեղծների, պատմագիրների երկերը հաստատում են, որ նրանց հեղինակներն իմաստի ողբերգութեան մարդիկ են, շատերը՝ տաղանդներ, հանճարներ: Յատկանշական է, որ քրիստոնէութեան ամենախորաթափանց աստուածաբաններից եւ իր դարի (Ժ.) ամենամեծ մտածող-բանաստեղծ Գրիգոր Նարեկացին հայահամբաւ իր երկին տուել է *«Մատեան ողբերգութեան»* անունը եւ նրանում դրել մարդկային երեւակայութիւնն ահաբեկող մի տքնութիւն՝ սրտի լեզուով իմաստների եւ անիմանալի խորհուրդների Աստծո հետ խօսելու համար:

Հայը մտածում է *«սրտի խորհուրդ»-ով* եւ ապրում *«իմաստի զգայարանք»-ով:* Նա իմաստի ողբերգութեան էակ է: Իմաստապաշտ եւ ընդունակ հոգեկան զօրաւոր կենտրոնացման՝ հայը նաեւ նպատակային հրամայականի մարդ է: Իր ցեղի այդ հոգեգծութիւնն է տալիս բանաստեղծ Սիամանթօն, երբ ասում է. *«...նպատակը տկարութիւն չի*

ճանչնար»: Այստե՛ղ է գաղտնիքն այն բանի, որ այս ազգը, հակառակ իր ապրած գերմարդկային սոսկումների, ո՛չ տարրալուծւում է, ո՛չ էլ հրաժարւում իր հայրենիքը վերականգնելու գաղափարից:

Նպատակը կենսաբանական մի պատրանք է, որով մարդիկ ձգտում են մոռացութեան տալ իրանց կեանքի անիմաստութիւնը: Բայց դրանով հաստատւում է միաժամանակ, թէ իմաստն է կեանքի ամենաբարձր յղացումը:

Մեր ժամանակներում Նիցշէն էր իր իմաստի ամենամեծ մտածողը: Զարմանալի է, թերեւս, որ նա բացարձակապէս անծանօթ լինելով հայ Նարեկացուն՝ ոճով թէ տենչանքի մոլեգնութեամբ՝ յիշեցնում է նրան: Նարեկացին իմաստը տեսնում էր գերբնականում, Նիցշէն՝ բնականում: Այդպէս լինելով հանդերձ՝ երկուսն էլ հաւասարապէս խանդատենդ յաւիտենապաշտներ են: Իմաստն է մտքի, ոգու, նպատակի յաւիտենացուցիչը:

Ցաւերից ամենայայրողը, հաճոյքներից ամենաթովիչը նրանք են, որոնք որեւէ ձեւով առնչակից են յաւիտենականութեան: Այս տեսակէտով՝ կեանքի ամենածանր ապրումն իմաստի ողբերգութիւնն է:

Իմաստի ողբերգութիւնն էլ հասունանում է հակասութեան օրէնքով: Հին աշխարհը Սողոմոնին հռչակեց «իմաստուն», բայց ամէնից աւելի հիացաւ նրա *«ունայնութի՛ւն ունայնութեանց»* բացականչութեամբ: Բիւզանդիոնն էլ իմաստութիւնը դաւանում է «սուրբ». յոյնեւհայ կառուցողական հանճարի տքնութեամբ կոթողւում է Ս. Իմաստութեան երկնակամար տաճարը, որի բացման ժամանակ Յուստինիանոս կայսրն արդար հպարտանքով ասաց. *«Սողոմո՛ն, ես յաղթեցի քեզ»*: Բայց քրիստոնեայ աշխարհը դեռեւս ամօթանքի ցաւով չապրեց իր սնանկութիւնը, չնայած որ մօտ 500 տարի է, ինչ այդ տաճարում մոլլաները ծաղրում են Աւետարանի իմաստը:

Նպատակի դէմ գործում են ճակատագրի կոյր ոյժերը: Քաղաքակրթութիւնն առարկայացումն է մշակութաստեղծ ժողովուրդների ոգու, բայց նրա արդիւնքներն սպանումի զէնք են դառնում ե՛ւ բարբարոսների ձեռքում: Գիտութիւնը հնարաւոր է դառնում իմացական եւ բարոյական կարողութիւնների զարգացումով, բայց նրա յաջողութիւնները, յաճախ, նեղացնում են ոգու սահմանները, փոքրացնում սիրտը: Պետութիւնները ձգտում են զարգացնել ժողովուրդների ստեղծագործական կարողութիւնները, կազմակերպել ազգային ոգու ինքնայայտնութեան եւ ընկերային երջանկութեան գործը, բայց հենց Նարեկացին է նկատում, որ նրանք *«աւելի մահացումն են արւեստաւորում, քան կենսագործումը»*: Գաղափարներն արժէք են ստանում ընդհանրանա-

լով, բայց նրանք կորցնում են իրանց նրբութիւնը եւ վեհութիւնը, երբ յաղթանակ են շահում վերածուելով հասարակական խօսքի, աշխարհայեցողութեան, կազմակերպութեան, գործի: Առանց բարոյական բարձր ըմբռնումների չի հոգեգծւում իմաստալից եւ ո՛չ մի նպատակ, բայց պատմական իրերի յորձանքին ամէնից աւելի զոհ են դառնում կեանքի ամենաքնքոյշ յոյսերը: Հերոսական ոգին է յաղթահարիչը ճակատագրի, բայց չկայ ճշմարիտ հերոս, որին վիճակուած չլինի ողբերգութիւնը: Մի խօսքով՝ կեանքի անբանական ոյժերը գործում են իմաստի դէմ եւ հենց ոգու եւ քաոսի, բարոյականի եւ զգացումների, յաւիտենական երազների եւ անցաւոր իրականութեան մաքառումից, պայքարից է ծնունդ առնում իմաստի ողբերգութիւնը:

Իբրեւ իմաստի ողբերգութեան ժողովուրդ՝ հայը չէր կարող զերծ մնալ ճակատագրի ամենադաժան հալածանքից: Բայց հայկական աղէտը կրկնակիօրէն ողբերգական դարձաւ ա՛յն տեսակէտով, որ նրա հասունացուցիչ գլխաւոր գործօններից մին հանդիսացաւ հենց Եւրոպան: Հայերի եւ արեւմտեան պետութիւնների յարաբերութիւնները կնքուեցին եւ ժամանակի հակասականութեամբ: Մինչդեռ նրանք իմաստ էին որոնում Եւրոպայի վերաբերմունքի եւ գործերի մէջ՝ սա մտածում, ապրում, ղեկավարւում էր «իրական շահեր»-ով: Նրանք չէին անդրադառնում, որ դա այն Եւրոպան է, որ իր հնարած առաջին թնդանօթը տրամադրեց թուրքերին, որպէսզի սրանք աւելի՛ հեշտ կերպով գրաւեն քրիստոնէութեան պանծալի ոստան Կ. Պոլիսը: Նրանք սիրում էին Եւրոպան, ինչպէս տառապեալը՝ որ սիրում է յոյսը: Կործանարար այս նախապաշարումը սնւում էր այդ ազգի պատմական յիշողութեամբ (հայերը դարաւոր պայքար էին մղել Եւրոպայի պաշտպանութեան համար), արիական զգացումով (նրանք եւրոպացիներին ընդունում էին որպէս ցեղակիցներ), քրիստոնէական ամենախոր ապրումով (կրօնը նրանց աչքին ունէր բարոյական ամենաբարձր կապի նշանակութիւն), հաւատարմութեամբ (որ թոյլ չէր տալիս մտածել, թէ աշխարհում էակիցը կարող է էակցի հանդէպ ապերախտ լինել):

Հայերի պատմութեան ծանօթ ամէն մարդ հասկանում է, որ նրանք բարոյական իրաւունք ունէին գաղափարական վերաբերմունք եւ օգնութիւն սպասել Եւրոպայից եւ դրանով էլ արդարացնել քաղաքական նրանց վիպապաշտութիւնը, միամտութիւնը:

Իսկապէս, ովքե՞ր են եւ ի՞նչ են հայերը:

Ինչպէս բոլոր ժողովուրդների, այդպէս էլ հայերի ցեղային ծագման, նկարագրի, պատմական դերի եւ արժէքների մասին կան այլազան տեսակէտներ եւ կարծիքներ: Գրեթէ լուրջ բոլոր գիտնականները,

մասնաւորապէս պատմաբաններ, բանասէրներ, իմաստասէրներ (ինչպէս Կանտը) հիանում են ռազմակորով, իմացական, գաղափարապաշտ, հայրենասէր եւ կրօնական ուխտի մէջ անխախտ այդ ազգի առաքինութիւններով: Մոլորանքի մէջ են նրանք, որոնք բոլորովին ծանօթ չեն հայերի անցեալին, պատմական դերին, մշակութային արժէքներին, գրականութեան կամ դիպուածական ծանօթութիւններ են հաւաքել մակերեսային ուսումնասիրութիւններից: Գիտութիւնից դուրս կայ քարոզչական բաւական մեծ գրականութիւն. 1) եւրոպացի կրօնական գործիչների, բարոյագէտների, գեղարուեստական գրողների, որոնք ձգտում են քաղաքական աշխարհի կարեկցական ուշադրութիւնը հրաւիրել տառապեալ իրանց հաւատակիցների վրայ եւ 2) մոլորուած կամ դրամով գրչի իրանց պարկեշտութիւնը ծախած լրագրողների, տաղանդազուրկ վիպագիրների, հայկական աղէտից յետոյ Թուրքիայով անցած ճամբորդագիրների, որոնք անխնայ կերպով սեւացնում են այդ ժողովուրդը: Այս վերջինները կարողանում են, երբեմն, մոլորեցնել գիտութեան այն մարդկանց, որոնք հմտօրէն ծանօթ չեն հայոց անցեալին եւ արժէքներին, բայց իրանց մասնագիտութեան բերումով հարկադրուած են մի բան ասել նրանց մասին: Իբրեւ օրինակ յիշենք բազմահատոր եւ բազմաթիւ աշխատակիցների (շատերը կարող գիտնականներ) մասնակցութեամբ խմբագրուած մի հրատարակութիւն,* որում հայերի կամ Հայաստանի վերաբերեալ տեղ են գտել հետեւեալ կարգի անհեթեթութիւններ. *«Հայերն անմարտունակ ժողովուրդ են»* (ապացո՞յց. թերեւս այն, որ բիւզանդական գրեթէ բոլոր մեծ կայսրերն ու զօրավարները հայեր էին), *«Ղարաբաղը բնակուած է առաւելապէս մահմեդական, բայց հայախօս ժողովուրդով»* (իրականութեան հետք չկրող եւ անիմաստ յերիւրանքի հաւասար խօսք): Ուրիշ գրքերում հայերը մերթ ներկայացւում են իբրեւ առեւտրականների մի ժողովուրդ եւ նմանեցւում հրեաներին, չնայած որ նրանք՝ հնուց ի վեր հռչակուած են իբրեւ ձիաբոյծներ, խաշնապահներ, երկրագործներ, կառուցողական վարպետներ, արհեստաւորներ: Սրանք բոլորն այնքան են անհեթեթ, որքան կարող են լինել, օրինա՛կ, հետեւալները. «Անգլիացիք, գերմանացիք, շուէտացիք, նորուեգացիները պատկանում են մոնգոլական ցեղին, մահմեդական են, զբաղւում են բամպակամշակութեամբ եւ խօսում են արաբերէն»: Անհեթեթութիւնների սնուցիչն Արեւելքում առաւելապէս տգիտութիւնն է, Եւրո-

* ,,Handbuch der geographischen Wissenschaff".

պայում՝ նաեւ դիտաւորութիւնը: Պարսկաստանում հանդիպում էք պարզամիտ գիւղացիների, որոնք ասում են. *«Անգլիացին էլ մի տեսակ հայ է, ֆրանկն էլ, գերմանացին էլ»*: Անհեթեթութեան աղբիւրն այստեղ կրօնական նախապաշարումն է. մահմեդականի աչքին քրիստոնեայ ամբողջ աշխարհը պատկերւում է իբրեւ մի ազգութիւն: Քաղաքական կամ տնտեսական հաշիւներով նիւթուած անհեթեթութիւնները, սակայն, պտուղ են մտքի սատանայութեան: Դրանք շփոթ են ստեղծում ազգերի յարաբերությունների մէջ, մոլորանքի են մատնում գրողներին եւ սրանց միջոցով ընթերցողներին, որով՝ բացի քաղաքական թիւրիմացութիւններ սփռելուց՝ արժէքազրկում են ե՛ւ գրականութիւնը, ինչպէս եւ հասարակութիւնն ուղիղ ծանօթութիւններով զարգացնելու եւ ուղղամտօրէն լուսաբանելու գործը:

Մոլորանք է ստեղծում ե՛ւ պակասաւոր ուսումնասիրութիւնը: Ֆօն Լուշանը շա՛տ մեծ ցեղաբան էր, բայց նրա հետազօտութիւններն էլ զերծ չմնացին միակողմանիութիւններից, սխալներից, որովհետեւ դրանք տարուեցին մեծ մասամբ ուրիշների ձեռքով (ինչպէս Հալէպի հայ բժիշկներից Ալթունեանի) եւ առաւելապէս Հայկական Բարձրաւանդակից դուրս (Փոքր Ասիայում, Սիրիայում): Հալէպում կատարուած զննութիւններից եզրակացուել է, թէ հայերի մէջ աննշան (8) տոկոս է կազմում շիկահեր եւ կապտաչեայ, այսինքն՝ արիական տարրը: Բայց Հալէպը սիրիական միջավայր է, բացի այդ՝ այնտեղ մեծ թիւ է կազմում ե՛ւ տեղացի քրիստոնեայ բնակչութիւնը, ինչ որ հնարաւոր է դարձնում արենախառնումն ի վնաս հայկական փոքրաթիւ գաղութի: Տարբեր էր պատկերը բուն Հայաստանում, մանաւանդ կենտրոնական մարզում, ուր խարտեաշները կազմում էին աչքառու փոքրամասնութիւն, որոշ գաւառներում, գիւղախմբերում՝ անգամ ճնշող մեծամասնութիւն: Այնթապում, սիրիական սահմանի վրայ, գտնուել է մի հայ, որի քիթն ու կերպարանը յիշեցնում են հետիտական դիմանկարները: Հարեւանցիօրէն նրան մօտեցող քթեր աւելի հազուադէպ են հայերի մօտ, քան դինարեան ցեղին պատկանող ուրիշ ժողովուրդների: Բայց ահա՛, այնթապցի այդ հայը հռչակուել է հայկական ցեղի տիպար իբրեւ թէ ապացուցուել է, որ հայերն հետիտների յետնորդներն են (Ենսէնը փորձեց անգամ հետիտական արձանագրութիւնները կարդալ եւ մեկնաբանել հայերէնի օգնութեամբ, բայց յետոյ պարզուեց, որ հետիտերէնն այնքան առնչութիւն ունի հայերէնի հետ, որքան հնդկաեւրոպական միւս լեզուների):

Անկասկածօրէն, ինչպէս հետիտների մեծ քաղաքակրթութիւնը, այդպէս էլ նրանց արիւնը զօրաւոր հետքեր են թողել բովանդակ

Առաջաւոր Ասիայում: Նրանք կամ նրանց յետնորդները ձուլուել են հայերի, յոյների, քիւրդերի, պարսիկների, սիրիացիների, արաբների, հրեաների, թուրքերի մէջ: Այդ ցեղի յատկանիշներն աւելի ցայտուն երեւան են գալիս Փոքր Ասիայում, Սիրիայում որպէս կրօնական աղանդներ ինքնամփոփուած փոքրիկ խմբակցութիւնների մէջ՝ կըզըլբաշ, եզիտի, անսարիէ, թահթաջի, լիկիացի, դրուզ, մարոնիդ եւն: Նրան տրուել են «հայատիպ» (armenoid), «նախահայկական», «ալարոդեան», «կապադովկեան», «փոքր-ասիական», «առաջաւոր ասիական» անունները: Այս բազմութիւնն ինքնին մատնում է, թէ ուսումնասիրութեան արդիւնքները դեռեւս հաստատադրոշմ չեն: Գիտնականներից ոմանք նրան նոյնացնում են ալպեան-դինարեանին, ուրիշները (ինչպէս Գիւնտերը) դրանց համարում են քոյր ցեղեր, փորձելով, սակայն, նշանագրել մարմնական յատկանիշների մազաթելային, հոգեգծերի՝ անհուն տարբերութիւններ: Թէ ինչպե՞ս է հնարաւոր ոգու եւ արեան այլանդակօրէն անհամաչափ նման փոխազդեցութիւնը՝ այդ մասին չենք հանդիպել գիտնական որեւէ լուրջ բացատրութեան: Գիւնտերն «առաջաւոր ասիական» ցեղին վերագրում է հոգեկան մի շարք ստորին գծեր (անգթութիւն, նպատակամիջոցների անխտրականութիւն եւն.): Այնինչ, պատմութիւնից յայտնի է, որ հետիտները մէկն են հին աշխարհի ամենափայլուն ձիրքերով եւ առաքինութիւններով օժտուած ժողովուրդներից: Նրանք խօսում էին հնդկաեւրոպական լեզուով եւ մշակութաստեղծ նուաճողներ էին: Քրիստոնէութեան նախաշրջանին հետիտների ամենահարազատ յետնորդներն ապրում էին Կապադովկիայում, որ համբաւուած էր իբրեւ սրտի մշակոյթին նուիրուած մի երկիր: Կապադովկիացիները ձուլուեցին հայերին եւ յոյներին: Նրանք առաջնակարգ դեր խաղացին քրիստոնէական ոգին, գաղափարաբանութիւնը, բարոյականը մշակելու եւ հիմնաւորելու գործում: Կապադովկիայից դուրս եկան ամենաերեւելի աստուածաբանները, բարոյագէտներ, քարոզիչներ: Այստեղ ծագում է լուրջ մի հարց՝ ինչո՞ւ հային ձուլուած կամ կապուած կապադովկիացին տալիս է Ս. Բարսեղ, յոյնին՝ Ոսկեբերան, գերմանացուն՝ Ուլֆիլիա, իսկ հրեային՝ թերեւս Յուդա եւ թուրքին՝ լաւագոյն դէպքում միայն Հոջա Նասրէդդին: Ասել է՝ «առաջաւոր ասիական» ցեղի (հետիտների թէ նրանց յետնորդների) ձուլումը կամ հոգեկցումը արիներին (հայ, յոյն, գոթացի) տուել է դրական, սեմարմատ հրեաներին եւ մոնգոլ թուրքերին՝ բացասական արդիւնք: Ասել է՝ «առաջաւոր ասիական» ցեղը խորքով ալպեան-դինարեան է, որովհետեւ սրա եւ արիների արենախառնումը կամ հոգեձուլումն են ընծայում ամենաբարձր արդիւնքներ:

Մենք տեսանք արդէն, թէ ինչպէ՛ս է ազնիւը ստորինի մէջ կլանւում, երբ անէակից, արիւնով թէ ոգով հեռաւոր ցեղերն են արենախառնւում, եւ թէ նման դէպքերում ստորինը շահում է ազնիւի մարմնական որոշ յատկանիշները (սկզբում՝ տխեղծօրէն), բայց մի՛շտ էլ նրան տալիս է իր հոգեգծերը, այն էլ աւելի խաթարուած վիճակում: Ահա՛ թէ ինչո՞ւ հրեաներին, թուրքերին պէտք չէ չափել իրանց ստացած «առաջաւոր ասիական», «դինարեան», «արիական» կերպարաններով եւ շփոթել այս ցեղերի հարազատ զաւակներին: Բոլոր դէպքերում՝ նրանք ոգով մնում են սեմական, մոնգոլական:

Հայերին մակերեսայնօրէն ծանօթ կամ բոլորովին անծանօթ մի քանի հեղինակներ նրանց համարում են «առաջաւոր ասիական» ցեղին պատկանող ժողովուրդ եւ դրանից էլ հանում են գիտնականօրէն անհեթեթ եզրակացութիւնը, թէ նրանք ցեղակից են հրեաներին: Հրեաների երակներում հոսում է նաեւ «դինարեան», «արիական», «արեւմտական» արիւն, բայց ո՛չ ոք է այդ պատճառով նրանց ցեղակից համարում նաեւ գերմանացիներին, անգլիացիներին, իտալացիներին, ֆրանսիացիներին: Հայերն հրեաներից տարբերւում են հոգեկան բոլոր այն գծերով, որոնք եւ կնքում են արիական եւ ոչ-արիական աշխարհազգացողութիւն ունեցող ժողովուրդների մարդկային խորքը: Աւելին. ազգերից եւ ո՛չ մէկն է այնպիսի պայքար մղել սեմական էութեան դէմ, որպէս հայը: Այս ազգի աւանդական պատմութիւնն սկսւում է Հայկի եւ Բէլի պատերազմով, որ խորհրդանշում է արիական եւ սեմական էութիւնների յաւիտենական հակասութիւնը, հակամարտութիւնը: Այդ կռիւը դարերով շարունակւում է հայկական եւ սեմական դիւցազների միջեւ՝ Արամ եւ Նինոս-Բարշամ, Արա եւ Շամիրամ, Վահագն եւ Բարշամ, միջին դարում՝ Սասունցի Դաւիթ եւ Մսրայ Մելիք: Հայերը տասնեակ դարերի կռիւ են մղել պարսիկների դէմ, բայց դիւցազներգել են այն դէպքերը, որոնք կապուած են հայ-սեմական ոգիների հակամարտութեան: Հայոց պատմահայր Մովսէս Խորենացին սեմական աստուածներին տալիս է *«ապականիչ»* որակումը: Նա աւանդում է, թէ «Նինոսը ձգտում էր Հայկայ սերնդից կտրել ամէն ճէտ» եւ պանծացնում է ո՛չ միայն աւանդութեան հայ դիւցազներին, որոնք սատակիչ հարուածներ են տուել սեմական աստուածներին, հերոսներին, այլեւ Տիգրան կայսեր, որ «ատում էր հրեաներին» եւ ձգտում ոչնչացնել նրանց: Նա բերում է նաեւ հայոց Աբգար թագաւորին վերագրուած նամակներ, որոնցով կոչ է ուղղում Տիբերիոս կայսեր եւ պարսից թագաւորին՝ ընդհանուր հալածանք սկսել հրեաների դէմ եւ ջնջել նրանց աշխարհից: Հին դարերի ուրիշ նշանաւոր հայ մի

պատմագիր (Սեբէոսը) նոյնպէս կատաղի պայքար է քարոզում հրեաների դէմ: Աւելորդ պիտի լինէր այստեղ խօսել քրիստոնէական կրօնի աղբիւրների, նրա յղացուցիչ գործօնների եւ ծագման պատճառների մասին: Էապէս, այդ կրօնը մի տեսակ իմացա-բարոյական համադրութիւն է արիական եւ ալպեան («առաջաւոր ասիակա՞ն») ցեղերի հոգեւոր տքնութեան: Նրանում միացած են արիականի միտքը եւ ալպիականի սիրտը: Դա բարձրագոյն արդիւնքն է երկու այս ցեղերի ոգու եւ արեան միութեան, միաժամանակ նրանց կազմակերպուած հոգեւոր ամենահուժկու շարժումը սեմական (հրէական) էութեան դէմ: Եւրոպացի գիտնականները սիրում են տրամաբանել պատճառագիտօրէն, բայց նրանցից քչերն են անդրադարձել այն խնդրին, թէ ինչո՞ւ քրիստոնէութիւնն առաջին անգամ Հայաստանում հռչակուեց պետական, ազգային կրօն: Այս մի հատիկ փաստն ինքնին բաւական է ապացուցելու, որ հայերը մէկն են աշխարհի ամենաարիատիպ եւ արիազգաց ազգերից: Եւրոպացիներից քչերն են ծանօթ հայոց ցայտունօրէն արիական դիցաբանութեան, դիւցազներին, դիւցազներգութեան, պատմութեան (վերջերս միայն Անգլիայում պահանջ դրուեց թարգմանել հայոց հին գրականութիւնը եւ այդ այն տեսակէտով, թէ առանց դրան կարելի չէ լրիւ եւ ճշգրիտ գաղափար կազմել Հին Աշխարհի, մասնաւորապէս Առաջաւոր Ասիայի պատմական դէպքերի եւ արժէքների մասին): Լուրջ մի ուսումնասիրութիւն երեւան պիտի հանէր մի շարք արժէքներ եւ գծեր՝ հետաքրքրական եւ ուսանելի համաարիական տեսակէտով: Դա պիտի ընծայէր, օրինա՛կ, ամենափայլուն պատկերումն այն մասին, թէ ինչպէ՞ս է պահակում եւ կռւում մենակութեան ողբերգութեան դատապարտուած, բայց եւ նուիրումի, սրբութեան, հերոսականութեան խանդով բռնուած արին, որի հզօրաշունչ ներկայացուցիչներն են Մամիկոնեան սպարապետները (Դ.-ից Ը. դար): Դա պիտի պարզէր նաեւ, թէ ինչպիսի՛ հակադրութիւններ են հայն ու հրեան որպէս առաքելական կամքի եւ նպատակի ներկայացուցիչներ: Հրեան իր հետ Եւրոպա բերեց ասիական ոգին, հայն Ասիա տարաւ եւրոպական էութիւնը: Նա ձգտեց տնտեսապէս նուաճել Եւրոպան, հայն Ասիայի դէմ տարաւ ցեղա-մշակութային պայքար: Նա Ասիայից եկաւ որպէս հալածական, ուստի՝ բերեց նեղսրտութիւն եւ ատելութեան ոգի, սա՝ Ասիա գնաց իբրեւ նուաճող, իբրեւ մարտիկ եւ դիրքապահ:

Որտեղի՞ց են գնացել հայերը:

Լեզուաբաններն իբրեւ հայերէնի կազմաւորման միջավայր՝ մատնանշում են Կարպատների մարզը, Դանուբի ձախ ափերը: Մնացեալը

լրացնում է պատմութեան հայր Հերոդոտը (Ե. դար. Ք.-ից ա.): Նա ասում է, որ հայերը փռիւգացիների հետ Թեսալիայից անցել են Թրակիա եւ այստեղից Փոքր Ասիայի վրայով՝ Հայկական Բարձրաւանդակ: Այս տուեալներից եզրակացւում է, որ հայերը Դանուբի հոսանքի հետ՝ իջել են դէպի Բալկաններ եւ շարժուել դէպի հետագայ իրանց հայրենիքը: Այս տեսակէտով՝ նրանք ներկայացնում են եւրոպական արիականութեան առաջին կազմակերպուած շարժը՝ դէպի Արեւելք: Գրաւելով Հայկական Բարձրաւանդակը՝ հայերը պատմական պարտականութիւն էին ստանձնում հիմնելու եւ պաշտպանելու եւրոպական արիականութեան նախադիրքը՝ Առաջաւոր Ասիայում: Այդպիսով՝ ճակատագիրն ու միջավայրը նրանց դարձնում էին առաջամարտիկներ:

Հայաստանը մէկն է Հին Աշխարհի ռազմագիտական ամենաբախտորոշող դիրքերից: Դա հսկայակարկառ բնական մի բերդ է՝ ցցուած Կենտր. Ասիայից դէպի Եւրոպա եւ Ափրիկէ տանող կարճագոյն ճանապարհների վրայ: Նրա շուրջն էին հին քաղաքակրթութեան նշանաւոր բոլոր հնոցները: Հաստատուելով այդ դիրքի վրայ՝ հայերն իրարից բաժան էին պահում մոնգոլների եւ սեմականների աշխարհները, ինչպէս նաեւ թումբ բարձրացնում ասիական տարերքի աւերիչ յորձանքների դէմ՝ դէպի Արեւմուտք: Նրանց թիկունքում աճեց դասական Հելլադայի մեծ քաղաքակրթութիւնը, որ հետագային իմացապէս թեւաւորեց եւրոպական մարդկութիւնը: Աւելի ուշ նրանք նոյն դերը խաղացին Բիւզանդիոնի նկատմամբ, որի թիկունքում աստիճանաբար կազմակերպուեցին քրիստոնեայ Եւրոպայի ոյժերը: Ազգային գետնի վրայ թշնամի արիական, բայց ասիական ոգու կրող Պարսկաստանին՝ հայերը, յաճախ, դարձան նրա անփոխարինելի զինակիցները՝ մոնգոլների դէմ, որով եւ՝ մէկը գլխաւոր այն գործօններից, որոնք աւելի քան մի հազարամեակով ուշացրին մոնգոլների եւ սեմականների միութիւնը եւ դրանով սահմանափակեցին Եւրոպայի արիա-ալպիական ցեղերին սպառնացող ամենամահացուցիչ վտանգը:

Հայերի քաղաքական կեանքի կազմաւորումը՝ Հայկական Բարձրաւանդակի վրայ, սկսուեց Է. դարից (Ք.-ից ա.): Նրանք քշեցին այդ երկրի բնիկներին, որոնցից խալտ-ուրարտացիները եւ մուսասիրցիք տէր էին բարձր քաղաքակրթութեան: Հաւանաբար, նրանք մասնակցեցին արիական ընդհանուր այն գրոհներին, որոնց զոհ գնացին Նինուէն եւ Բաբելոնը: Հետագային (Զ. դարի վերջերին, Ք.-ից ա.) նրանց տեսնում ենք դաժան պայքարի մէջ՝ Աքեմենեանների պարսկական հսկայ պետութեան դէմ: Հենց այս կռիւների առիթով է, որ Դարեհը

գրաւոր առաջին վկայութիւնն է թողել հայերի մասին, Բիսիտունի քարաժայռի վրայ (520թ. Ք.-ից ա.): Մօտ երկու դար Հայաստանը մնում է Աքեմենեան պետութեան ընդհանուր դրօշի տակ, վարելով կիսաանկախ եւ կիսաըմբոստ մի կեանք: Հերոդոտը պատմում է Քսերքսեսի բանակի հայ զինուորների մասին, որոնք կրում էին իրանց ցեղակից փռիւգիացիների տարազն ու զէնքերը: Յոյն պատմագիր, իմաստասէր եւ զօրավար Քսենոփոնը Հայաստանի վրայով նահանջելիս (401թ. Ք.-ից ա.) նկարագրում է հայերի փարթամ կեանքը եւ պանծացնում նրանց հիւրասիրութիւնը:

Հայաստանին նոր ճակատագիր բերեց Աղեքսանդր Մեծի արշաւանքը: Արեւմտեան ոգին եւ հելլենական քաղաքակրթութիւնը թարմացրին նրան: Շուտով դա երեւան հանեց պատմաստեղծական հուժկու կամք եւ բռնեց մեծ պետութիւն կազմելու ուղին: Արտաշէս Ա.-ն (190-161 Ք.-ից ա.) միացրեց Հայաստանը՝ հայ ազգային մի պետութեան դրօշի տակ: Նրա յաջորդներից Տիգրան Մեծի օրով (95 - 55 Ք.-ից ա.) Հայաստանն արդէն Ասիայի ամենազօրաւոր քաղաքական ոյժն է եւ Հռովմի ախոյեանը: Երկար կեանք չունեցաւ, սակայն, հայկական այս կայսրութիւնը: Հռովմի եւ Հայաստանի բախումների հետեւանքով ուժեղացաւ Պարթեւների Պարսկաստանը: Քրիստոնէական թուականութեան Ա. դարին՝ Հայաստանն այլեւս կռուախնձոր է արիական պարթեւների եւ Հռովմի միջեւ: Դաժան եւ աշխարհակործան պատերազմը տեւեց աւելի քան կէս դար: Պառակտուեց ե՛ւ հայ քաղաքական ոգին, ստեղծուեցին ներքին կուսակցութիւններ՝ ազգայնական, պարթեւասիրական եւ հռովմէասիրական, Ներոնի օրով (66թ. Ք.-ից յետոյ) երեք կողմերն էլ կատարելապէս յոգնած՝ գտան հաշտութեան հետաքրքրական ելք՝ Հայաստանի թագաւորը նշանակւում է Պարթեւ արքայական տնից, թագն ստանում է Հռովմի կայսրից եւ փաստօրէն՝ հայանում է: Այսպէս հիմք դրուեց հայ Արշակունիների հարստութեան, որ թագաւորեց 362 տարի (66 - 428 Ք.-ից յ.): Մինչեւ պարսկական Պարթեւների խորտակումը (226թ. Ք.-ից յ.) Հայաստանն ապրեց համեմատաբար խաղաղ մի շրջան: Դաժան եւ մոլեկրօն Սասանեանները գրաւելով Պարթեւների գահը՝ կատաղի պայքար բացին մի կողմից Հայաստանի, միւս՝ Հռովմի դէմ: Դարեր պիտի տեւէր ահարկու այդ գուպարը: Նրա ամենասուր մի վայրկեանին էր, ահա՛, որ հայերն որդեգրեցին հոգեւոր այն զէնքը, որին հետագային պիտի ապաւինէր ամբողջ Եւրոպան: Նրանք Գ. դարի վերջին կամ Դ.-ի սկզբին (287 - 305) պետական կրօն հռչակեցին քրիստոնէութիւնը: Հոգեւոր յղութիւնը Հայաստանում ընծայել էր մի քանի հրաշափառ պտուղներ՝ կրօնական եւ

ազգային խանդով բռնուած ժողովուրդ, Տրդատ Գ. թագաւորի հուժկու եւ խորհրդաւոր անձնաւորութիւնը, քրիստոնէական կրօնի հրաշունչ առաքեալ Ս. Գրիգոր Լուսաւորիչը եւ Մամիկոնեան նախարարների դիւցազնական սերունդը: Յենուած այդ ոյժերին՝ Հայաստանը փաստօրէն պայքարի դրօշ էր բարձրացնում ո՛չ միայն Պարսկաստանի եւ Հռովմի, այլեւ բովանդակ հին աշխարհի դէմ: Աշխարհակալ երկու մեծ պետութիւններին մնում էր կամ ոչնչացնել Հայաստանը, կամ ռազմագիտօրէն բախտորոշ նրա դիրքը հակառակորդի դէմ օգտագործելու նպատակով՝ ընդունել նոր կրօնը: Առաջին ուղին բռնեց Պարսկաստանը, երկրորդին՝ հակուեց Հռովմը, որի քրիստոնեայ համայնքները վճռականութեան խանդ ստացան Հայաստանի յեղաշրջումից եւ Մաքսիմինոս Գայա կայսեր հայկական բանակից կրած պարտութիւնից (311թ.):

Հռովմէական կայսրութեան քրիստոնէացումով՝ հայ-հռովմէական զինակցութիւնը սասանեան Պարսկաստանի դէմ՝ պսակուեց կրօնական ուխտով: Արեւելք տեղափոխուեց նաեւ Եւրոպայի ծանրութեան կենտրոնը: Կազմուեց Բիւզանդական քրիստոնեայ մեծ կայսրութիւնը: Բայց եւ այնպէս, ո՛չ Սասանեանները խորտակուեցին, ո՛չ էլ Հայաստանի քաղաքական ճակատագիրը փոխուեց: Շուտով Արեւմուտքն երեւան հանեց տկարութեան, լքումի, անգամ դաւաճանումի ոգի: Հենց Դ. դարի «երեսնամեայ պատերազմ»-ին (355-385թթ.) դա աւելի դաւաճանեց, քան թէ օգնեց հայերին: Միայն մի անգամ (371թ.) կայսերական բանակները Տրայիանոս կոմսի եւ ալամանաց իշխան Վագոմարի գլխաւորութեամբ՝ քրիստոնէական սրտառուչ խանդով կռուեցին հայ հողի վրայ: Այդ պայմաններում, Հայաստանը չէր կարող փրկուել, եթէ անգամ Մամիկոնեան Մուշեղի նման մեծագործ սպարապետներ եւ Սասանեան ամենագոռոզ արքաներից Շապուհի նախանձն իսկ շարժող քաջամարտիկ զօրք ունենար: Հայաստանը բաժանուեց Պարսկաստանի եւ Հռովմի միջեւ, թէպէտեւ հայ թագաւորների իշխանութեան տակ (385թ.): Անկարելի է անցնել հայոց պատմութեան Դ. դարի վրայից, առանց յիշելու Ս. Ներսէս Մեծ հայրապետի գործերը: Ճակատամարտերում բարոյական հրամանատար՝ զարմանալի այս անձնաւորութիւնը մէկն է միաժամանակ պատմութեան ամենափայլուն բարեգործներից: Իբրեւ գթութեան մարդ՝ քրիստոնէութեան հետագայ սրբերից եւ իշխաններից նրան կարող են հաւասարուել Ս. Ֆրանցիսը միայն եւ Բագրատունի հայոց թագաւոր Աշոտ Ողորմածը: Իր կազմակերպական ոգով, սակայն, պատմութեան բարեգործների շարքում նա մնում է եզակի: Ներսէս Մեծը բովանդակ Հայաստանը ցանցապատեց

բարեգործական հաստատութիւններով: Նա հիմնեց 2000-ի չափ հիւանդանոցներ, որբանոցներ, այրիանոցներ, ծերանոցներ, հիւրանոցներ, արհեստանոցներ, անգամ կացարան-աշխատանոցներ՝ գրողների, գիտնականների համար: Սնունդի հետ՝ այդ հիմնարկութիւններում մարդիկ գտնում էին բժշկական խնամք, դաստիարակութիւն եւ իրանց ընդունակութիւնները զարգացնելու հնարաւորութիւն: Ներսէս Մեծը պատմութեան երեւելի այն դէմքն է, որ առաջինս զգացել է հասարակական կեանքը ներցեղային բարոյականի սկզբունքով կազմակերպելու եւ վարելու անհրաժեշտութիւնը:

Ներսէս Մեծի գործը պահանջադրում էր հայ ազգային գրի եւ գրականութեան ստեղծումը (կամ վերաստեղծումը): Այդ փառքը վիճակուեց նրա յաջորդ Ս. Սահակ հայրապետին եւ սրա գիտնական գործակից Ս. Մեսրոպին: Քաջալերուած հայոց Վռամշապուհ թագաւորից՝ նրանք յօրինեցին հայկական նոր տառեր, թարգմանեցին Ս. Գիրքը, ստեղծեցին դպրոցական մի ցանց եւ հասցրին աշակերտներ, որոնց ստեղծագործ հանճարի կնիքը դեռ մինչեւ այսօր մնում է հայ գրականութեան վրայ: Մեսրոպը Մամիկոնեան մի սպայ էր, որ յետոյ նախընտրեց նուիրուել հոգեւոր կոչումի եւ գրականութեան: Դա իր ժամանակի իմացական ամենափայլուն հանճարն է՝ մտաւորական տքնութեան մի հսկայ, Թէոդոս Բ.-ից (Բիւզանդ. կայսր) արդարապէս *«ակումիտ»* հռչակուած: Դա նաեւ ազգերի հոգեւոր անկախութեան երեւելի մի ախոյեանն է՝ յօրինող ո՛չ միայն հայկական, այլեւ վրացական, թերեւս նաեւ՝ գոթական տառերի (Վիեննայի Մխիթարեան բանասէրներից Հ. Ն. Ակինեանը գտնում է, որ ալանների կամ գոթերի տառերի յօրինիչն ո՛չ թէ Ուլֆիլիան է, այլ Մեսրոպը):

Հայկական տառերի գիւտը տեղի ունեցաւ Ե. դարի սկզբին (406-412թթ.): Այդ ժամանակից հայը դարձաւ նաեւ մշակոյթի տարածիչ: Նա զարկ տուեց իմացական կեանքի զարգացման եւ դարերի ընթացքին ստեղծեց նշանակալից մի գրականութիւն (իմաստասիրական, պատմագրական, աստուածաբանական, գիտական, բանաստեղծական): Նա ազգայնացրեց նաեւ իր եկեղեցին եւ դրանով ապահովեց հոգեւոր, բարոյական թէ մտաւորական իր կեանքի անկախութիւնը: Բայց նա շարունակեց ե՛ւ դաժան կռիւը՝ Սասանեանների դէմ: Այդ կռիւներից մէկի (451թ.) յիշատակը մինչեւ այսօր դեռ տօնւում է հայ եկեղեցու եւ ժողովրդի կողմից: Նրա ղեկավար Մամիկոնեան Վարդան սպարապետը դաւանւում է իբրեւ հայ եկեղեցու լուսապսակ սուրբը եւ հայ ցեղի ոգին խորհրդանշող ազգային հերոսը:

Վարդանից յետոյ էլ հայ-պարսկական կռիւները շարունակուեցին

գրեթէ երկու դար: Հայաստանը ծնունդ տուեց մասնակի եւ կազմալուծիչ կռուի հանճարեղ վարիչների (Վահան, Վարդան Բ., Վարդան Գ. եւ այլ Մամիկոնեաններ): Իրանց դիւցազնաշունչ ցեղի փայլուն ներկայացուցիչներ՝ սրանք անվերջ Հայաստան քաշեցին եւ իրար ետեւից ոչնչացրին պարսկական բանակները: Սասանեան հզօրութիւնը սպառուեց Հայաստանի լեռներում:

Իբրեւ արիահոգի առաջամարտիկներ՝ հայերն աստիճանաբար իրանց վրայ վերցրին ե՛ւ քրիստոնեայ մեծ կայսրութեան ղեկավարութեան եւ պաշտպանութեան գործը: Բիւզանդիոնի ծառայութեան մեջ էին նրանց հռչակաւոր հեծելազօրի գնդերը, երեւելի զօրավարները, Մամիկոնեան կամ միւս նախարարական տներից: Ոյժերի այս ցրումից տուժում էր Հայաստանի ինքնապաշտպանութեան գործը, բայց հայերը չէին կարող լքել համաքրիստոնէական պայքարի ճակատը: Քրիստոնեայ աշխարհի բոլոր մեծ տագնապաժամերին՝ Բիւզանդիոնն իր ճակատագիրն յանձնեց հայ կայսրերին, զօրավարներին, որոնք ղեկավարեցին նրան մասնաւորապէս Զ. դարի վերջերից մինչեւ ԺԱ. դարի սկզբներին: Մաւրիկիոս եւ Հերակլ կայսր-զօրավարները հայաստանեան գնդերի հետ՝ վերջնօրէն խորտակիչ հարուածներ հասցրին սասանեան Պարսկաստանին: Լեւոն Իսրաւրացին, Վասիլ Ա.-ն, Յովհաննէս Չմշկիկը կանգնեցրին կամ յետ վանեցին իսլամական շարժը: Հայազգի այս կայսրերին է վերաբերւում Պրոֆ. Կարլ Ռոթի որակումը. *«ոյժի հանճարեղ մարդիկ, գերազանց սպարապետներ»*: Բիւզանդական պատմութեան մասնագէտներից Բըսըլն ասում է. *«Միմիայն Հայաստանի լեռներում էր գտնւում Բիւզանդիոնի սիրտը, կորովը եւ քաղաքականութիւնը»*: Բիւզանդիոնում *«ամենազօրաւոր ազդեցութիւն են գործում հեռակայ այս երկրի սովորոյթներն եւ հաւատալիքները»*: Հայերի՛ց էր, որ նա ստացաւ *«ռազմական զօրաւոր եւ յարձակողական ոգին»*: Խօսելով 717թ. Կ. Պոլսի առաջ կանգնած արաբական ոյժերը ջախջախող Լեւոն Իսրաւրացու եւ իր որդի Կոստանդին Ե. կայսեր պատմական դերի մասին՝ պրոֆ. Բըսըլը շարունակում է. *«Անկասկած, սա Բիւզանդիոնի եւ հաւանաբար Եւրոպայի պատմութեան ամենատագնապալից շրջանն էր... Երկու այս կայսրերը, որոնք վեր են բարձրանում ժամանակակից ուրիշ կայսրերի եւ անձնաւորութիւնների ցածագոյն մակարդակից, եօթ դարով յետաձգեցին իսլամի յաղթական մուտքը՝ Կ. Պոլիս... Բիւզանդիոնը՝ Եւրոպայի դռների առաջ կանգնող այդ պահակը, երբեք լաւագոյն կերպով կամ աւելի հաւատարմաբար չկատարեց պարտականութիւնը... եւ դրա համար պէտք է շնորհակալ լինենք Լեւոնի եւ իր որդու լեռնական*

արի ոգուն»: Դա յաւերժօրէն արիական հայ ոգին է, որ դարերի անդուլ տքնութեամբ ճակատագրի պարտականութիւն համարեց ծառայել Եւրոպայի փրկութեան գործին եւ իբրեւ երախտագիտութեան տուրք՝ մի օր էլ խաչուեց նրա ձեռքով:

Խորտակուելով Հայաստանի եւ հայավար Բիւզանդիոնի հարուածներից՝ սասանեան Պարսկաստանն ընկաւ արաբական իսլամի կրունկների տակ: Ճակատագրի դառն վճիռներից է, թերեւս, որ մերձաւոր թէ հեռաւոր ցեղակիցների պայքարից շահում է ընդհանուր թշնամին: Սասանեանները թէպէտեւ ասիական ոգի էին կրում, բայց արիներ էին: Այժմ, դիակի վրայ միմեանց ձեռք էին երկարում սեմական եւ մոնգոլական աշխարհները: Ոգով թէ արիւնով խաթարւում էր Իրանը, փաստօրէն դառնալով ոչ-արիական աշխարհ, թէպէտեւ պակաս չեղան ինքնութիւնը փրկելու ճիգեր:

Հայ-պարսկական դարաւոր պատերազմները սպառել էին ե՛ւ Հայաստանի ոյժերը: Միւս կողմից՝ արաբներն սպառնում էին ո՛չ միայն բիւզանդական կայսրութեան ասիական եւ ափրիկեան մասերին, այլեւ դեռեւս իր ոյժերը լիապէս չկազմակերպած Եւրոպային: Հայկական հեծելազօրը կռւում էր Փոքր Ասիայից մինչեւ Եգիպտոս: Բուն Հայաստանը մնացել էր առանց բաւարար ոյժերի: Հենց առաջին ընդհարումին (640թ.) Մամիկոնեան Տիրանն արաբական բանակի դէմ դուրս եկաւ փոքրաթիւ ոյժերով: Նրա ամբողջ փառքն այն եղաւ, որ իր ցեղին վայել դիւցազնականով ընկաւ ռազմադաշտում: Ոչնչացուցիչ հարուած ստացաւ Հայաստանը. կործանուեց մայրաքաղաք Դուինը, հողին հաւասարուեցին բազմաթիւ տաճարներ՝ հայկական ճարտարապետութեան հրաշալիքներ: Բայց եւ այնպէս արաբները չկարողացան հանգիստ նստել Հայաստանում. յաճախ նրանք ջարդուեցին եւ վտարուեցին երկրից՝ Լեւոն Իսրաւրացու, Մուշեղ Մամիկոնեանի եւ այլոց ձեռքով: Արդիւնք չտուեց անգամ այն զիջումը, որով արաբները հրաժարւում էին Հայաստանում իսլամը տարածելու եւ մզկիթներ հաստատելու փորձից: Յամառ այս պայքարների հետեւանքն այն եղաւ, որ 859թ. Բաղդադն հարկադրուեց ճանաչել Հայաստանի թագաւորութիւնը: Հայոց գահը վիճակուեց Բագրատունեաց հնահռչակ նախարարական տան, որ երեւան հանեց կազմակերպական եւ մշակութաստեղծական բարձր ոգի: Մայրաքաղաք Անին հռչակուեց իբրեւ «Արեւելքի մարգարիտ»: Դա հոյակապ տաճարների, պալատների, գեղակառոյց պարիսպների նշանաւոր այն քաղաքն է, որի աւերակների առաջ կանգնած ամէն հայ թէ քրիստոնեայ մարդ չի կարող բողոքի ձայն չբարձրացնել դէպի երկինք. *«Աստուած ի՛մ, ինչո՞ւ թողե-*

ցիր քեզ պաշտող ազգը»: Ահաւոր կռիւներ մղեց ե՛ւ Բագրատունիների Հայաստանը՝ արաբների եւ սելջուկների դէմ: Բայց դաւաճանի խորտակիչ հարուածը նրան հասցրեց հայկական ոգին կորցրած եւ յունական սնոտիապաշտ կղերի ձեռքին գործիք դարձած Բիւզանդիոնը եւ դրանով էլ փորեց իր գերեզմանը: Կոստանդին Մոնոմախոս կայսրը (1042-1054թթ.) խաբէութեամբ Կ. Պոլիս հրաւիրեց եւ արքայավայել ընդունելութիւնից յետոյ՝ կալանաւորելու սպառնալիքով պահանջեց Գագիկ Բ. Բագրատունուն՝ հրաժարուել հայկական թագից եւ Անին յանձնել Բիւզանդիոնին: Հայոց երիտասարդ եւ քաջ թագաւորն ունեցաւ ողբերգական վախճան (նախ՝ աքսորուեց, ապա՝ դաւաճանաբար սպանուեց): Հայաստանը մատնուեց քաոսային յուսալքումի եւ ցասման: Այդ վիճակից օգտուեցին սելջուկները, որոնք 1064թ. պաշարեցին Անին: Հայերն անպատրաստ՝ ցոյց տուին միայն օրհասական դիմադրութիւն եւ ընկան իրանց շքեղ մայրաքաղաքի փլատակների տակ: Յոյն փչացած հոգեւորականութեան նենգադաւ խաղերի շնորհիւ՝ ոչնչացաւ քրիստոնէական քաղաքակրթութեան ամենափառաւոր կոթողը: Անիի հետ կործանուեց եւ Բիւզանդիոնի դարաւոր առաջադիրքը՝ հայկական բերդը, որի հովանու տակ այլասերուած յոյն տարրն անարժանաբար իրան երեւակայում էր աշխարհի առաջնորդ: Բացուեց թուրքերի ճամբան՝ դէպի Պոլիս ու Եւրոպա:

Բայց եւ այնպէս Հայաստանի որդիները կրկին իրանց վրայ վերցրին քրիստոնէութեան համար ճակատագրական մի դիրքի պահակութիւնը: Հարիւր հազարաւոր հայեր Ռուբէն իշխանի առաջնորդութեամբ ուղղուեցին դէպի Կիլիկիա: Տաւրոսի լեռների վրայ, Երուսաղէմի եւ Բիւզանդիոնի միջեւ, նրանք բարձրացրին խաչի դրօշը (1080թ.): Շուտով պատմութիւնն եկաւ հաստատելու, որ այստեղ էլ բնազդը նրանց առաջնորդել էր իրանց ցեղի առաքելական կամքի գծով: Նախախնամութիւնը Բիւզանդիոնի բարոյական անկման զուգահեռեց Եւրոպայի քրիստոնէութեան ոյժի յորձանումը: Սկսուեց խաչակիրների արշաւանքը, որի ամենաապահով խարիսխը հանդիսացաւ հայկական Կիլիկիան: Խաչակիրների առաջին թափորը՝ յոգնած, սպառուած եւ սովատանջ՝ Կիլիկիա նետուեց 1098թ.: Հայերը խաչի եւրոպացի զինուորներին ընդունեցին իբրեւ կարօտավառ եղբայրների: Սրանք աւելին գտան Հայաստանում, քան հարազատ տանը: Այդպէս ե՛ւ յաջորդ թափորները, որոնք Հայաստան էին հասնում դառնացած յոյների չկամութիւնից, թշնամանքից: Թէ ի՞նչ կատարեցին հայերը՝ այդ մասին գաղափար են տալիս Գրիգոր ԺԳ. Պապի «Էկկլեզիա ռոմանա» կոնդակի հետեւեալ խօսքերը. *«…հայ ազգի ուրիշ արժա-*

նիքների մէջ կայ մէկը, որ վսեմ է եւ առանձնապէս յիշատակելի. դա այն է, որ երբ քրիստոնեայ իշխաններն ու բանակները գնում էին Ս. Երկիրն ազատելու՝ ո՛չ մի ազգ եւ ո՛չ մի ժողովուրդ այնպիսի յօժարութեամբ եւ եռանդով օգնութեան չհասաւ խաչի զինուորներին, ինչպէս հայերը: Նրանք հայթայթեցին զօրք, զէնք, ձիեր, ռոճիկ, պաշար, խորհուրդ եւ ամէն կարգի նպաստներով սրբազան այդ պատերազմներում զօրավիգ եղան խաչակիրներին՝ իրանց բոլոր ոյժերով, ամենամեծ արիութեամբ ու հաւատարմութեամբ»…

Խոր եղան մասնաւորապէս հայեւգերման կապերը, որոնք պսակուեցին զէնքի եղբայրութեան ուխտով: Հայաստանում մեռած (Կալիկադնոս գետում խեղդամահ) Ֆրիդրիխ Բարբարոսա (Շիկամօրուս) կայսրը եւ իր որդին՝ Հայնրիխ Զ.-ն Կիլիկիայի հայկական իշխանութիւնը բարձրացրին թագաւորութեան: Ռուբինեան իշխան Լեւոն Ա.-ն իր թագն ստացաւ Հայնրիխ Զ.-ից (1198թ.): Գերմանական կայսրութիւնն յանձնառու էր լինում հովանաւորել Հայոց թագաւորութիւնը: Լեւոնի եւ յաջորդների նուիրական երազն եղաւ վերափրկել բուն հայրենիքում թշնամի լծի տակ տանջուող ազգը: Այդ յոյսի իրականացումը կախուած էր Երուսաղէմի պայքարի վերջնական ելքից:

Բայց Եւրոպան նահանջեց Արեւելքից եւ հայ ժողովրդին կրկին վիճակուեց մենակի դիւցազնական պայքարը՝ իսլամի դէմ: Անթիւ են Կիլիկիայի մղած կռիւները: Անհաւատալի առասպելներ են թւում նրա երկաթավառ ասպետների հերոսական գործերը: Այն օրերի Եւրոպան ցնցուեց հայոց այդ դիւցազնամարտից, բայց անզօր գտնուեց օգնութիւն խիզախելու: Կիլիկիան ընկաւ 1375թ.: Տաւրոսում թէ Հայաստանի լեռներում, սակայն, կենդանի մնացին հայ ոգին եւ քրիստոնէութիւնը: Այդ ազգի զարմանալի կորովով պիտի բացատրել, որ դա ո՛չ միայն կարողացաւ նուիրուածի պատուով խնամել դարեր անընդհատ սրով հալածուող իր քրիստոնէութիւնը, այլեւ, ինչպէս Մարկովն է նկատում՝ *«իշխեց քաղաքականապէս իրան նուաճողների վրայ»*: Պատմական իր առաքելութեան տեսակէտով ամէնից յատկանշականն այն է, որ դա նորանոր միջոցներ գտաւ նպաստելու Հայաստանի վերափրկութեան թէ Եւրոպայի պաշտպանութեան գործին: Այդ միջոցներից էր անգամ առեւտրական նրա կազմակերպութիւնը, որի կարաւանների հետքերով Եւրոպայի մտաւորական, բարոյական եւ քաղաքական ազդեցութիւնը թափանցում, հող էր գտնում Արեւելքում: Եւրոպայում հայերը հաստատում էին լուսաւորութեան վառարաններ (վանքեր, դպրոցներ, տպարաններ) եւ մտաւորականներ, գրականութիւն հասցնում Հայաստանին: Իբրեւ դեսպաններ, հիւպատոսներ, թարգմաններ՝ նրանք

Արեւելքում յաջողապէս ներկայացնում եւ պաշտպանում էին եւրոպական պետութիւնների շահերը: Առեւտրական, մտաւորական թէ դիւանագէտ՝ նրանք մնում էին հաւատի մարդիկ եւ նուիրումով ծառայում քրիստոնէական մշակոյթին: Օտարութեան մէջ նրանք յօրինում էին պանդուխտի տխուր երգեր, հոգեղինացնում էին իրանց հայրենիքը եւ ամէն ինչ զոհում նրա փրկութեան երազին: Դրսում հարստացածներն իրանց գանձը, երկրում տառապող գիւղացիներն ու հովիւները՝ զինական իրանց օգնութիւնը մշտապատրաստօրէն տրամադրում էին քրիստոնէութեան ընդհանուր դատին: Հնդկաստանում երեւան եկան մեծատուններ, որոնք հարստացել էին Հայաստանը գնելու կամ նրա փրկութեան համար պայքարող քրիստոնեայ որեւէ պետութեան օգնելու նպատակով: Եւրոպայի մեծ տագնապաժամին (16-18-րդ դարեր) այսինքն՝ այն օրերին, երբ թուրքերը ծեծում էին նրա դռները եւ սպառնում նրա գոյութեան՝ հայերը զինակցեցին պարսիկներին: Նրանք հանդիսացան մէկը գլխաւոր այն գործօններից, որոնց շնորհիւ Պարսկաստանում տիրապետեց Սաֆեանների հզօր արքայատունը եւ դարաւոր պայքար մղեց թուրքերի դէմ՝ տկարացնելով սրանց յարձակողական թափը Եւրոպայում: Մեծ այդ ճակատամարտերը մղուեցին Հայաստանում, որի քաղաքները 200 տարուայ ընթացքին կործանուեցին գրեթէ 100 անգամ: Բայց եւ այնպէս, հայերը պարսիկներին անդադար կռիւ հրաւիրեցին օսմանցիների դէմ եւ դրամով թէ զինապէս՝ օգնեցին նրանց: Երբ մտածում ենք, որ այդ հրաւիրողների գլուխը միշտ կանգնած են եղել հայոց հայրապետները (ինչպէս Մելքեսեդեկ Կաթողիկոսը Շահ Աբասի օրերին) ապա, հասկացւում է, որ նրանք իրանց երկիրը կործանելու գնով ձգտում էին փրկել արեւմտեան քիրստոնէութիւնը, թիկունքից հարուածելով թուրքերին: Դա աւելի է հասկանալի դառնում այն իրողութեամբ, որ նոյն օրերին (մասնաւորապէս 1679-ից) հայերը քաղաքական սերտ կապեր էին մշակում գերման իշխանութիւնների հետ: Իսկապէս, ի՞նչ էր մնալու Եւրոպայից, եթէ մահու եւ կեանքի պայքարի այն օրերին Սաֆեան Պարսկաստանն երկրորդ ճակատ չբանար տաճիկների դէմ: Առանց հայերի հնարաւոր պիտի դառնա՞ր դա. յամենայնդէպս նրանց ազդեցութիւնն այնքան մեծ էր ո՛չ միայն Սաֆեան արքաների, այլեւ Նադիրի վրայ, որ վերջինն իրան շահ հռչակելիս՝ իր սուրն օրհնել եւ մէջքին կապել տուեց հայոց Աբրահամ Կաթողիկոսի ձեռամբ: Բայց Պարսկաստանից անջատ էլ հայերն երկար եւ դաժան կռիւներ մղեցին օսմանցիների դէմ՝ կռիւներ, որոնք Դաւիթ Բէգի օրօք (1722-28թթ.) հայկական խրոխտ լեռնավայր Ղարաբաղում պսակուեցին անկախութիւն պարգեւող յաղթանակ-

ներով: Ինչե՞ր չարեց այդ ազգը սեփական ոյժերով, Բիւզանդիոնի, անգամ Պարսկաստանի միջոցով՝ փրկելու Եւրոպան, սրա քրիստոնէութիւնը, քաղաքակրթութիւնը: Խօսելով նրա կատարած պատմական դերի մասին՝ ցեղաբանութեան ուսուցչապետ Հետտընը բացականչում է. *«Հայերը հպարտ լինելու որքա՜ն իրաւունք ունեն»...* բայց այդ «իրաւունքը» միայն կսկիծ, սոսկում եւ հիասթափութիւն պատճառեց նրանց: Եւրոպայի դարաւոր առաջամարտիկները խաչուեցին եւրոպական ոյժերի ձեռքով:

* * *

«Հին դարերի ցաւերը շալակած՝ յամրօրէն հառաչելով անցանք արեան ծովերով, համբերութեան դասեր առնելով լեռներից»... հրաշքով եղեռնազերծ մի հայի այս խօսքերը բնութագրում են ոգեկան այն կորովն ու տոկունութիւնը, որոնցով այս ազգը կարողացաւ իմաստ դնել ե՛ւ իր նահատակութեան վշտի մէջ:

Ինչո՞ւմն է նրա ոյժի գաղտնիքը:

Հնարաւոր չէ այս հատորում համգամանօրէն տալ հայերի ցեղագծերը, հոգեբանութիւնը: Մտածումով, յղացումով, կառուցողական ոճով, լեզուով եւ ռազմական կորովով արիական՝ հայերն իրանց աշխարհապրումով ալպիական են: Այդ պատճառով անհունօրէն խոր է նրանց նուիրումի զգացումը, զօրաւոր՝ տոկալու կամքը, անխախտ՝ համոզումը, իմաստալից՝ ստեղծագործական երկունքը, խիզախ՝ մարտական ոգին եւ խանդալից՝ հայրենասիրութիւնը: Այս ոյժերն են, որ պահում են լուսատենչ այդ ազգը, որ հայրենիքում յաւիտենականութեան խորհուրդներով է ապրում, օտարութեան մէջ՝ հայրենաբաղձութեան տանջանքով: Բայց հայն իրան զօրաւոր է զգում ե՛ւ իր արժէքներով: Բարոյապէս կորովատու եւ իմաստի խանդով ճակատագիրը կառավարող արժէքներ են դրանք:

Երբ ասում եմ, որ հայն իր առաջին հայրապետին տուել է «Լուսավորիչ» տիտղոսը, զգում եմ, որ դա ո՛չ միայն իբրեւ կրօնական էակ մտածելիս, այլեւ մեռնելիս՝ իր ճակատը քսում է երկնքին:

Երբ Տրդատի սրի խորհուրդն եմ վերծանում՝ հասկանում եմ, որ յաւիտենականին ծառայող զօրութիւնն է միայն բարոյական:

Երբ Ներսէս Մեծն եմ պատկերում՝ ընդունում եմ, որ գթութեան կանթեղն է լուսաւորում հայ մարդի շինարարական ոգին:

Երբ Մամիկոնեանների ռազմաբարոյականի մասին եմ մտածում՝ իմ առջեւ հրեղէն ասպետի նման կանգնում է Վարդանը՝ աւետարանը

տպուած ուղեղում, խաչը՝ սրտում եւ յաւիտենականութիւնը՝ աչքերի մէջ, սուրը՝ ձեռքին:

Երբ Նարեկն եմ կարդում՝ հաւատում եմ, որ հայօրէն ապրող ամէն էակ արժանի է յաւիտենականութեան գիրքը կրծքին դրած՝ խօսել Աստծո հետ:

Երբ Շնորհալու շարականներն եմ լսում՝ համոզւում եմ, որ երկինքն ու երկիրն իրար կապուած են իմաստի ձայնով:

Երբ «Տարօն» եմ ասում՝ ինձ թւում է, թէ լեռներում ապրող գերբնական ոգիներն են գծում հանճարի եւ հերոսութեան հորիզոնները:

Երբ հարց եմ տալիս՝ «ջարդերով կը վերջանա՞յ այդ ազգը», իմ մէջ խօսում է Եղիշէի ուրուականը՝ մահ չունեն այն ազգերը, որոնք գիտեն աւելի՛ եւ աւելի՛ իմաստ դնել մահուան մէջ:

Մահ չունեն մասնաւորաբար նրանք, որոնք զարհուրանքներ իսկ ապրելիս՝ մնում են ոգեպահ:

Դժուար է հաւատալ, թէ մարդկային բնութիւնն ընդունակ է Դեր-Զօրում իսկ դեռ ոգի խնամել, բայց հայոց նորագոյն պատմութիւնն ասում է. *«Անապատում, իրանց հայրերի եւ մայրերի դիակների շուրջ դեգերող հայ անտէր որբերը կեանքի անիմանալի խորհուրդների ոյժով կառչած մնացին ցեղի Աստծուն եւ իրանց հարազատների արիւնը ծծած աւազների վրայ գրեցին, իրար սովորեցրին հայկական լոյսի խորհրդանշան այբուբենը»*:

Մահ չունի այս ցեղը:

Մահուան արժանի է նրա դահիճների հովանաւոր հին Եւրոպան:

Հայկական հարցին եւ արժէքներին նուիրուած այս աշխատութեան Բ. հատորում շօշափուելու են հետեւեալ խնդիրները. *Հայապանն իբրեւ բնութիւն եւ խորհուրդ, հայոց ցեղային ծագումը, նրանց հոգեբանութիւնը, պատմական արժէքները, արիադիմարեան հայերի եւ ցեղակից ժողովուրդների հոգեգծային, աշխարհազգացողական եւ արժեստեղծական յատկանիշների եւ ֆիրքերի համեմատականը, արմենները եւ գերմանները, հայոց ցեղային շարժումը եւն.:*

Հ. Ա.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ (կենսագրական ակնարկ) 5

ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ
(«Խռովք»-ի առաջադրութիւնները) 11

ՈՒԺԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ 17

ՑԵՂԸ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԻԲՐ ԱՆԲԱՆԱԿԱՆ ՈՅԺԵՐ 22

ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՑԵՂԻ ՄԱՍԻՆ 26

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ . . . 32

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ԿԵՐՊԱՏՈՒ ԳՈՐԾՕՆՆԵՐԸ
ԵՒ ԿԵՐՊԱՐԱՆԸ 36

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ԲՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ 41

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԸ 49

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԻ ՊԱՅՔԱՐԸ 55

ՎՏԱՆԳԻ ԳԻԾԸ 59

ՎՏԱՆԳ ԵՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ 61

ՑԵՂԸ ՄԻԱՅՆ ԿԱՐՈՂ Է ՓՈԽԵԼ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԸ 63

ՀԱՅԿԱԿԱՆ ՈԳՈՒ ՈՒԺԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ 65

ՀԱՅՈՑ ԳՐԱՒՈՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ 68

ՀԱՅՈՑ ՆԱՒԱՍԱՐԴԱԿԱՆԸ 78

ՏԱՐՕՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ,
ՑԵՂԱԿՐՕՆՈՒԹԻՒՆ 84

ՏԱՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ 92

ԴԱՐՁ ԴԷՊԻ ՈԳԻՆ 99

ԵԼՔԻ ԿԱՄՔ 106

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ 110

ԻՐԻՑՈՒԿ ՄԵՌԵԼՆԵՐԸ ՎԿԱՅ 113
ՀԱՅ ԵՒ ԳԵՐՄԱՆ ՈԳՈՒ ԷԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ 117
Գ. ՆԺԴԵՀԻ «ՑԵՂԻ ՈԳՈՒ ՇԱՐԺԸ» (մի փոքրիկ մեկնաբանութիւն) . 123
Գ. ՆԺԴԵՀԻ «ՑԵՂԸ ԵՒ ԻՐ ՏԱԿԱՆՔԸ» (խորհրդածութիւններ) 128
ՄԵՐ ՕՐԵՐԻ ՏԱԳՆԱՊԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 136
ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ 140
ՀԱՅՈՑ ՄԱՅԻՍ 28-Ը 159
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՅԻՄՆԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ 162
ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆԻ՝ ՄՈՐՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻ ՆԱՄԱԿ 166
ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 169

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐԻԱԿԱՆ ՆԱԽԱԴԻՐՔ ԱՌԱՋԱՒՈՐ ԱՍԻԱՅՈՒՄ 179
Զօր. Նժդեհ. *Խոովիչ ճշմարտութիւնների մի գիրք* 180
ՀԱՅ ՀԵՐՈՍԱԿԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ 185
ՀԻՆ ԵՒՐՈՊԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ 190
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՂԵՌՆԸ 255
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 273
«ԼՈԶԱՆ»-Ը 322
ԻՄԱՍՏԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ 391